Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ԼՈՒՍԱԼՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԼԵՌՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԷՈՒՄՈՊԱՏԵԼԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹԿԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ՝

www.freebooks.do.am

ՀԱՐՀԱՎԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

Հ. Մ. ՊՈՊՈՎՅԱՆ

ՍԱՎԱՍՈՒՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հ. ՄԿՊՈՅԱՆ



ԱԼԱՄԻՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1985

ԳՄԴ 63. 3 (2Հ)
Պ 797

Հրատարակվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի
նոր պատմության բաժնի երաշխավորությամբ

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր
Ա. ՀԱՄԲԱՐՅԱՆ

Պողոսյան Հ. Մ.

Պ 707 Սասունի պատմություն (1750—1918)/Խմբ.՝ Ա. Համբարձյան.— Եր.։ Հայաստան, 1985.— 360 էջ։

Աշխատությունը նվիրված է Սասունի պատմությանը սկսած 1750-ից մինչև 1918 թվականները։ Նրանում առանձնակի ուշադրության է արժանացել լեռնագավառի ժողովրդի թուրքական ինքնակալության դեմ մղված հերոսական պայքարը, Սասունի հատվածի սոցիալ-տնտեսական հարաբերությունները։ Խիստ քննադատության է ենթարկված Սասունի լեռնականների ազատագրական շարժումների նկատմամբ եվրոպական պետությունների երկդիմի քաղաքականությունը, լուսաբանված է նաև 1915—1916 թթ. թուրքական զավթիչների դեմ մղված հերոսամարտերի պատմությունը։ Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար։

Պ $\frac{0505040000}{701\ (01)\ 85}$ 70—85

ԳՄԴ 63.3 (2Հ)

© «Հայաստան» հրատարակչություն, 1985

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնակալության դեմ և Սասունի լեռնական հատվածի հերոսական պոռթկումների պատմության ուսումնասիրությունը սկսվել է անցյալ դարի վերջին քառորդից և այդ հերոսապատումների առանձին դրվագների մասին գրվել են մի շարք ուսումնասիրություններ, իսկ հայ պարբերական մամուլում՝ բազմաթիվ հոդվածներ։

Հայկական լեռնաշխարհում սովետական կարգերի հաստատումից հետո սովետահայ պատմաբանները անդրադարձան այդ պրոբլեմի առանձին հարցերին՝ ստեղծելով մարքսիստական մեթոդաբանությամբ գրված մի շարք աշխատություններ։ Սակայն Սասունի հայ հատվածի 1750—1918 թթ. ժամանակաշրջանի անցուդարձերը, ժողովրդի սոցիալ-տնտեսական հարաբերությունները և թուրքական բռնակալության դեմ նրա մղած հերոսական պայքարը ցարդ չի ամփոփվել հատուկ ուսումնասիրության մեջ։

Սույն աշխատությունը ընդգրկում է Սասունի և Մուշի հերոսական հատվածի ամբողջական պատմությունը սկսած XVIII դարի երկրորդ կեսից մինչև 1918 թվականը։ Աշխատությունը գրելիս օգտագործել ենք մարքսիզմ-լենինիզմի կլասիկների երկերը, մեզ մոտ և արտաքսում լույս տեսած աշխատությունները, հայ պարբերական մամուլը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մ. Մաշտոցի անվան դիտահետազոտական ինստիտուտի (մատենադարան) ձեռագրերը և արխիվային վավերագրերը, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, ՀՍՍՀ կենտրոնական, Վրացական ՍՍՀ կենտ-

ռնական և ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվների նյութերը։

Գրքում իր տեղն են գրավել XVIII դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժումները բռնբռնող Հովսեփ Էմինի մտահղացումները Վրաստանի Հերակլ թագավորի և Ռուսաստանի օգնությամբ հայ-վրացական-քրդական-ասորական ժողովուրդների միացյալ ուժերով թուրքական բռնակալությունից ազատագրվելու և միացյալ անկախ պետություն ստեղծելու հարցը։ Առանձին ուշադրություն է դարձվել հատկապես Սասունի 1894 թ. հերոսական-ապստամբության և 1904 թ. ինքնապաշտպանական կռիվների վրա, որի ժամանակ լեռնագավառի ժողովուրդը գերլսչված ջանքերի գնով պաշտպանում էր իր հայրենի լեռներն ու գյուղերը օսմանյան բանակի և քրդական համիդիե զորագնդերի հարձակումներից։ Աշխատությունը գրելիս մեր առջև հառնում էին հայկական լեռնաշխարհում գործող հայդուկները՝ իրենց համարձակ գործերով և սխրագործություններով։ Հատկապես ընդգծված է հասարակ ժողովրդին պաշտպանելու նրանց ջանքերը, որոնք կատարվում էին առանց ժողովրդի ազգային պատկանելությունը հաշվի առնելու։

Առանձնակի շեշտված է 1915 թ. երիտասարդ թուրքերի կողմից Մշո դաշտում կազմակերպված ցեղասպանությունը և Մշո դաշտի, Մուշ քաղաքի ու Սասունի լեռնականների հերոսական ինքնապաշտպանական կռիվները։ Աշխատության մեջ ընդգծված է հայ ժողովրդի արևմտյան հատվածի ռուսական կողմնորոշումը և արևելահայերի՝ օսմանյան գեհենի մեջ ապրող իրենց տառապած հղբայրներին ցույց տրված օգնությունը։

Սասունի այդ ժամանակաշրջանի պատմությունը մենք շարադրել ենք հայ ժողովրդի համազգային շարժումների պատմությունից չկտրված, որպես նրա անհրաժեշտ և բաղկացուցիչ մասը։

Գլուխ առաջին

ՄՈՒՇԸ ԵՎ ՍԱՍՈՒՆԸ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

(1750—1860 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ)

XVIII դարի առաջին կեսին երբեմնի հզոր Օսմանյան կայսրությունը անկում էր ապրում։ Այդ պրոցեսի կանխման կապակցությամբ սուլթանների ձեռք առած միջոցառումները ապարդյուն անցան։

Կայսրությունը կախման մեջ ընկավ նաև եվրոպական պետություններից։ Սակայն թուրքական ռազմավարական սիստեմը շարունակում էր գոյատևել և իր կրնկի տակ պահել բազմաթիվ ժողովուրդների, այդ թվում նաև հայերին։ Նրանք բոլորը մաքառում էին իրենց ազատության համար, բայց անհավասար կռիվներում պարտվում։

Հայերի վիճակը ծանրանում էր նաև նրանով, որ նրանց մի շարք հատվածներ ընկած էին քրդական ցեղապետների տիրապետության տակ։ Այդպիսի կացության մեջ էր գտնվում տարոնահայությունը։

XVIII դարի 50-ական թվականներին Տարոնի բնակչությունը հիմնականում բաղկացած էր հայերից։ Այդ ժամանակաշրջանում թուրքական ռազմաֆեոդալական սիստեմի ազդեցությունը Մշո դաշտի, հատկապես Սասունի բնակիչների վրա խիստ թեթև էր, թուրքական բնակչություն կար միայն Մուշ և Բիթլիս քաղաքներում, որը և տեղի հայ բնակչության համեմատությամբ չնչին փոքրամասնություն էր կազմում։

Տարոնը գտնվում էր Էրզրումի էյալեթի կամ Էրմանիստանի մեջ, որի գլուխը կանգնած էր Էրզրումի փաշան։ Սակայն իրականում Տարոնի տերն ու տիրակալը քրդական Ալեդին փաշան էր, որի իշխանությունը տարածվում էր Մուշի, Բուլանըխի, Խնուսի,

Վարդոյի և Կենճի հայ և քուրդ բնակչության վրա և հարկերը կենտրոնանում էին այդ ավատապետի ձեռքում։ Տարոնի և նրա մեջ մտնող Սասունի քուրդ փաշաները այդ ժամանակ անհամեմատ տանելի վերաբերմունք ունեին իրենց ենթակայության տակ գտնվող հայերի նկատմամբ, պաշտպանում էին նրանց քրդական այլ ցեղերի հարձակումներից, հովանավորում էին այնտեղ եղած արհեստավորներին և առևտրականներին։

Ալեդին փաշայի այդ քաղաքականությունը պատահական չէր, քանի որ քրդերի ճնշող մեծամասնությունն ապրում էր կիսաքոչվորական կյանքով, իսկ հայերը նստակյաց էին։ Եվ բնական է, որ այդ իշխանավորներին անհրաժեշտ էր ունենալ հողը մշակող, հնձող, բերք ստացող մշակներ, միաժամանակ արհեստավոր և առևտրով զբաղվող մի ժողովուրդ, որը մեծ օգուտներ էր բերում քրդական վերնախավին։ Շատ դեպքերում, հանուն այդ ժողովրդի հպատակեցման պայքար էր գնում քրդական տարբեր ցեղերի միջև։ Ելնելով ֆեոդալական ժամանակաշրջանում հողի մշակներ ունենալու այդ ձգտումից, Ալեդին փաշան և նրան շրջապատող քուրդ վերնախավը հայերի նկատմամբ վարում էին նուրբ, շոյող քաղաքականություն և շատ դեպքերում հովանավորում էին նրանց։ Դեպի հայ բնակչությունն ունեցած այս վերաբերմունքը հասցրեց նրան, որ շուտով Մուշի դաշտում ավելի շատացավ հայ բնակիչների թիվը։ Քրդական վերնախավի առանձին ներկայացուցիչներ հովանավորում էին նաև հայ իշխանական տների բեկորներին։ Ըստ Ղ. Ինճիճյանի, Մշո քուրդ Ալեդին փաշան սկսեց ուժեղանալ XVIII դարի 40-ական թվականներից և այնքան հզոր էր, որ «ինքն դնէր և փոփոխեր... զխանս Բաղիշոյ», իր տրամադրության տակ ուներ 70 հազար զինվոր ուժեր և «զանձս բազումս» ու «շինեաց զբերդն Լիզ, և զանառիկ բերդն Ոսպնբլուր կամ Մերճեմեք Գալեսի...»[1]։

XVIII դարում Տարոնում ուսումնական և գիտական կյանքը բոլորովին չէր մարել, այն կայծկլտում էր Մշո ս. Կարապետ վանքի կամարների տակ։ Վանքը այդ ժամանակ մեծ համարում ուներ և այնտեղ նստած եպիսկոպոսը հանդիսանում էր Տարոն աշխարհի հոգևոր առաջնորդը։ Այդ վանահայրը գլխավորում էր Տարոնի հայ հատվածի հոգևոր, իսկ երբեմն էլ նաև աշխարհիկ

---

1 Ղ. Ինճիճյան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն առաջին, հատ Ա, Վենետիկ, 1806, էջ 184—185։

գործերը։ Ս. Կարապետ վանքը, ինչպես նաև մնացած վանքերը, օսմանյան պետության մեջ որպես ֆեոդալական հոգևոր հաստատություններ կառավարության կողմից ստացել էին որոշ արտոնություններ։

Այդ ժամանակ Սասունում դեռևս պահպանվել էին հայկական ֆեոդալական իշխանական տների մնացորդները։ Լեռնապատվառի իշխանները ոչ ոքի չէին տվել իրենց արտոնություններն ու իրավունքները և իրենց ժողովրդի հետ ապրում էին կիսանկախ վիճակում, ինչպես Զեյթունի, Ճապաղջուրի, Մոկսի, Շատախի և այլ վայրերում պահպանված հայկական իշխանական տների բեկորները։ Գյուղացիներն այդ վայրերում ապրում էին գյուղական համայնքներով, որոնց ղեկավարները կոչվում էին ռես կամ տանուտեր և անօրինում էին իրենց համայնքի գործերը։ Սկսած XVII դարի սկզբից Սասունի բնակիչներն ունեին կիսանկախության մասին մի հրովարտակ, որը 1605 թ. նրանց տվել էր Ավդալ Ամիրան։ Մինչ այդ, քուրդ ավատապետը Սասունի բնակիչներին իրեն ենթարկելու նպատակով իր ուժերով արշավել էր լեռնականների վրա, սակայն երկար մաքառելուց հետո պարտություն էր կրել սասունցիներից։ Հեռանալով Սասունի լեռներից, նա ստիպված հատուկ հրովարտակով ճանաչեց Սասունի կիսանկախությունը[1]

Սկսած XVIII դարի 50-ական թվականներից Տարոնի հայ և քուրդ ժողովրդահատվածների մոտ ծայր առավ թուրքական տիրապետության լուծը թոթափելու մի ձգտում, որը և գլխավորում էր Ալեդին փաշան։ Այդ շարժմանը ակտիվ մասնակցում էր նաև ս. Կարապետ վանքի վանահայր Հովնան եպիսկոպոսը, որը Հովսեփ Էմինի ամենաջերմ հավատարիմներից էր։ Հայ ազատագրական շարժման ակտիվ գործիչներից մեկի՝ Հ. Էմինի մահվանցումներում Տարոնը և նրա մի մասը կազմող Սասունը գրավում էին իրենց ուրույն տեղը։ Հովնան եպիսկոպոսի մասին Մ. Չամչյանի «Հայոց պատմություն» աշխատության 3-րդ հատորում ասված է, որ նա հանդիսացել է Էջմիածնի կաթողիկոսության թեկնածու։ 1763 թ. մահացավ Էջմիածնի Հակոբ Շամախեցի կաթողիկոսը, որին փոխարինեց և 17 տարի պաշտոնավարեց Սիմեոն Երևանցին։ Նոր գահակալը Երևանի ծնունդ էր և իր սկզբնական կրթությունը ստացել էր Էջմիածնում, որտեղ

---

1 «Մուրճ», № 11—12, 1894, էջ 1652։

էլ զբաղվել էր ուսուցչությամբ։ Ըստ Մ. Չամչյանի, Հ. Շամախեցի կաթողիկոսի մահից հետո սկսվեց պայքարը կաթողիկոսական աթոռի համար և «ոմանք ասէին ընտրել զՅոնան վարդապետ Ամդեցի՝ զառաջնորդն Վանից սուրբ Կարապետին»[1]։ Ի՞նչի մասին է խոսում այս քաղվածքը, որ Հովնան Ամդեցի վարդապետը այն ժամանակ Մշո ս. Կարապետ վանքի վանահայրն էր և նրան ոմանք պահանջեցին ընտրել Էջմիածնի կաթողիկոս։ Այնուհետև Չամչյանը նշում է, որ կաթողիկոսական աթոռի համար կային նաև ուրիշ թեկնածուներ էլ, բայց անցավ Ս. Երևանցին, սակայն «առանց հաւանութեան մեծամեծացն Կոստանդնուպոլսոյ»[2]։ Այս նշանակում է նաև, որ չնայած կաթողիկոսը մինչև իր գահին անցնելը եղել էր Կոստանդնուպոլսում, և այնտեղ նրան ինչ-որ չափով գիտեին, սակայն օսմանյան մայրաքաղաքի հայ մեծամեծների մեծ մասը դեմ էր նրա կաթողիկոս դառնալուն։ Կոստանդնուպոլսում իհարկե համաձայնվեցին նրա ընտրության հետ «թեպետ բազումք ոչ կամէին»[3]։

Կաթողիկոսական գահի համար մղվող պայքարում, ինչպես ասացինք, արդեն Երևանցու հակառակորդն էր նաև Մշո ս. Կարապետ վանքի վանահայր Հովնանը։ Ընտրությունների ընթացքում Երևանցին և նրա կողմնակիցները մտածեցին շարքից հանել կաթողիկոսական գահի թեկնածու Հովնանին, իսկ երբ Երևանցին արդեն նստել էր կաթողիկոսական աթոռին, սկսեցին նրան այնպես ասատել և խայտառակել, որ երբեք չմտածի կաթողիկոս դառնալու մասին։ Գ. Ալանյանցի «Դիւան հայոց պատմութեան» բազմահատոր հրատարակության Ա և Բ գրքերում տպագրված է Սիմեոն Երևանցու հիշատակարանը, որի մի գլուխը կոչվում է «Յաղագս մերկացուցանելոյ ի շնորհաց զՅօնան, չարադնաց գէտս Գլակայ վանից ս. Կարապետի եւ անարժան գործոց նորին»[4]։ Այս հիշատակարանում Հովնանին Ս. Երևանցին բնութագրում է որպես մի մարդու, որի մեջ «լցան չարիք և դաչմացան մեղք» և որը մի «չարագնաց» էր։

Բացի վերևում ասված հիշատակարանից, Սիմեոն Երևանցին Հովնանին ուանաղրեց գրելով. «Բանադրանաց թուղթ, չարաչար

---

1 Միքայել Չամչյան, Պատմութիւն հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 871։

2 Նույն տեղը, էջ 872։

3 Նույն տեղը։

4 Դիւան հայոց պատմութեան, գիրք Բ, Թիֆլիս, 1893, էջ 226։

նպովից և անլուծ կապանաց, և մերկացուցց զնա 'ի զնորհէ և 'ի կարգէ քահանայութեան և եպիսկոպոսութեան, և մերժեալ հերչնաց զնա ի սուրբ հօտէն քրիստոսականս»[1]։

Հարկ է նշել, որ վեհի և Հովնանի հարաբերությունների վատացմանը նպաստել է նաև այն փաստը, որ 1763 թ. ամռանը կաթողիկոսը այցելեց Արևմտյան Հայաստանի Ուշքիլիսեյի վանքը, որը Մուշից այնքան էլ հեռու չէր։ Իմանալով այդ մասին Հովնանը չներկայացավ նրան։ 1764 թ. Էջմիածնի աթոռակալին արդեն հայտնի էին Հովսեփ Էմինի, Հերակլի, Մախսուտ Բեկի և Հովնանի մտադրությունները։ Հովնանին Հ. Էմինից հեռու պահելու նպատակով Երևանցին նրան իր մոտ հրավիրեց, որը չներկայացավ։ Ջեռնոցը արդեն նետված էր և երկու հոգևորականների միջև պայքարը շարունակվեց ավելի ուժգնությամբ։ Հովնանը Արևմտյան Հայաստանում, ինչպես նաև Կոստանդնուպոլսում հեղինակություն ունեցող հոգևորական էր։ Էջմիածնի կաթողիկոսը նույնպես գրագետ և գործունյա մարդ էր, սակայն մի հանգամանք նրան վանում էր ս. Կարապետ վանքի վանահորից։ Հովնանը հայ ազատագրական շարժման այն ժամանակվա ամենախոշոր դեմքերից մեկի՝ Հովսեփ Էմինի, գաղափարների ջերմ ջատագովն էր, իսկ կաթողիկոսը դեմ էր ազատագրական շարժումներին։ Այս երկուսի միջև, փաստորեն, գոյություն ուներ մի վիհ, մի անջրպետ։ Հովսեփ Էմինը և կաթողիկոսը գլխավորում էին հայ ժողովրդի միջև եղած երկու հոսանքների տարբեր թևերը։ Հայացքներով տարբեր հոգևորականի սքեմի տակ պատսպարված այս երկու հոգևոր գործիչներից մեկը՝ խանդավառված էր Հովսեփ Էմինով և նրա ազատագրական գաղափարներով, գործում էր քուրդ իշխանի հետ միասին և ցանկանում էր հայ, քուրդ և ասորի ժողովուրդներին ազատագրել թուրքական լծից, միավորվելով վրացիների և նրանց թագավոր Հերակլի հետ, իսկ մյուսը՝ կաթողիկոսը, գտնում էր, որ ազգի ուժերը քիչ են և հեռու էր պահում իրեն նրանցից։ Ինչպես տեսնում ենք երկու վանքերի կամարների տակ գտնվող այս հոգևորականները տարբեր հայացքներ ունեին ազատագրական շարժման նկատմամբ և այդ շարժման երկնակամարում իրար հետ ճախրել չէին կարող։ Հայացքների այս տարբերությունն էլ տանում էր նրանց իրար դեմ մաքառելու ճանապարհը։ Սիմեոն կաթողիկոս Երևանցին սկսեց

---

1 Գիտան հայոց պատմութեան, գիրք Բ, Թիֆլիս, 1893, էջ 226։

գործի դնել Հովնանի նկատմամբ իր իշխանությունն ու կաթողիկոսական հեղինակությունը։ Նա բանադրեց Հովնան եպիսկոպոսին, մի միջոց, որ շատ ընդունված էր ինչպես միջնադարում, այնպես էլ նրա ժամանակներում։ Կաթողիկոսը Հովնանի մասին սկսեց թղթեր գրել, որոնցից մեկում ասված է. «... Իսկ դու պրզծաշուրթդ զմեզ ի բնէ անտի ի հոտեալ բերանդ առեալ վատաբանես և վայրիվերոյ հաջաս անդադար բանիւ ի մէջ քոյապիսեաց և գրով՝ աստ և անդ և այնքան համաբձակեալ մինչ զի յաթոռս և յայրս բարեկամս մեր ևս գրես անհեթեթ գրչաւդ, իմաստնամերկ բանիւդ՝ զքեզ արդարացուցանելով և զմեզ մեղադրելիս և դատապարտելիս ցուցանելով...»[1]։ Բերված քաղվածքից պարզ երևում է, որ Հովնանը վատաբանող խոսքեր էր ասել Երևանցու հասցեին և որը հասել էր կաթողիկոսին, որից հետո նա նամակներ է գրել Երևանցուն և ցանկացել է արդարացնել իրեն։

Սակայն ինչպիսի՞ այլ մեղադրանքներ էր առաջադրում Էջմիածնի գահակալը իր հակառակորդին, ի՞նչ հարցերի մեջ էր նրան մեղադրում։ Գլակա վանքի վանահայր Հովնանի նկատմամբ եղած բանադրանքը անեծքներով լեցուն մի վավերագիր է, որի մեջ Հովնանը։ որակավորվում է որպես իժի ծնունդ, սատանայի գործակից, որը նպատակ ունի քանդել հայ եկեղեցին և վարկաբեկել ազգին։ Սակայն ի՞նչ փաստեր ուներ այդ մեղադրանքներն առաջադրող կաթողիկոսը, մեղադրաթուղթը այդ մասին ոչինչ չի հավաստում։ Իր բանադրանքի մեջ նա Հովնանին անվանում է տերության հանդեպ ըմբոստ, կեղեքիչ քռնակալ, մի մարդ, որը դարձել է անհավատների գործակիցը։ Այս վերջին խոսքերն ասելով նա ի նկատի ուներ քուրդ Մախմուտ Բեկին։ Ըմբոստ է տերության հանդեպ որտահայությունը վերաբերում էր Օսմանյան կայսրությանը, քանի .ր Հովնանը և նրա գլխավորած ս. Կարապետ վանքն ու նրա հոգևոր ոլորտի մեջ մտնող տարածությունները գտնվում էին Օսմանյան կայսրության սահմաններում։ Սակայն ինչո՞ւ էր այդքան անհանգստացած Էջմիածնի աթոռակալը, չէ որ նրա աթոռանիստը Արարատյան աշխարհի հետ գտնվում էր Պարսկաստանի տիրապետության տակ, իսկ վերջինիս և Թուրքիայի հարաբերություններն էլ այնքան լավ ու բարի դրացիական չէին։ Այդ մասին արդեն մենք ասացինք վերևում. իր հակառակորդին վարկաբեկելու և շարքից հանելու համար

---

[1] Иоаннисян А. Р. Иосиф Эмин, Е., 1945, стр. 232.

կաթողիկոսը չէր խորշում հայկական բառարանում եղած վատաբանող բառերի հսկայական պաշարի օգտագործումից։

Այժմ կոնկրետ ասենք այն մասին, թե ինչի՞ մեջ էր մեղադրում Հովնանին Ամենայն հայոց քահանայապետը։ Առաջին, Հովնանը չէր պայքարում Տարոն թափանցող կաթոլիկության դեմ, նրանց ներկայացուցիչների հետ ապրում էր խաղաղ կյանքով, վրեժխնդիր չէր կաթոլիկների նկատմամբ և աղանդավորներից շատերին ինքն էր ձեռնադրել քահանա։ Ահա մեղադրանքի այդ կտորը. «Քանզի ինքն յայտնապէս առնէր զ'ախթարմայութիւն եւ հետեւողացն նոյն չար աղանդոյ՝ թուլլատրէր և ո՛չ լինէր վրեժխնդիր. մինչ մեծ մասն այնմ գաւառի փոխեցան 'ի նոյն աղանդ.եւ բաչումս 'ի նոցանէ ձեռնադրեաց ի քահանայութիւն»[1]։

Իհարկե, այդ հարցում հայոց քահանայապետը ճիշտ չէր, թե այդ տարիներին Տարոնի հայ բնակիչների մեծ մասը արդեն կաթոլիկություն էր ընդունել, քանի որ նույնիսկ XX դարի սկզբներին Մշո դաշտի մի քանի գյուղերում միայն կաթոլիկներ կային։ Մյուս մեղադրանքն այն էր, որ Հովնանը իր նվիրակներին ուղարկում է Պարսկաստանի և Թուրքիայի զանազան կողմերը, նույնիսկ Ռուսաստան, նրանց միջոցով դրամ է հավաքում ու փոխանակ այն հատկացնելու վանքի կարիքներին, տալիս է Մշո կառավարիչ քուրդ բեկին։ Կաթողիկոսի մեղադրանքներից մեզ հայտնի է դառնում, որ բեկը այդ գումարներով և իր ունեցած միջոցներով բերդեր է կառուցել և «որ և էհան գ'դրաման վասն նորին շինել զբերդ և զբովանդակ ծախսն ինքն նա»[2]։

Երևանի մատենադարանի №2912 ձեռագիրը ավելի շատ մանրամասնություններ է պարունակում իր մեջ։ Այստեղ Հովնանին կաթողիկոսի կողմից առաջադրված մեղադրանքների մասին ասված է. «Խաբես զժողովուրդն Աստծոյ, առնուս ի նոցանէ անիրաւութեամբ և ճնշելով յանուն սրբոյ Կարապետի Քրիստոսի և վատնես չարաչար և անառակաբար ի կորուստ քոյդ կորուսեալ հոգոյդ և տուողացն։ Ով մոլեգնեալ դև, մտածե՞ս արդէօք, թէ ու՞ր մսխես զոր արիւնախառն ճմլես՝ զորմէ արգելում զգրիչս։ Կոյր թուչուն և գիշերաշրջիկ հղկիկդ, դու զրկեցեալ գոլով ի լուսոյ և զայլս կոյր համարես, գիտե՞ս թէ ու՞ր շրջիս և զինչ գործես,

---

1 Դիւան Հայոց պատմութեան, հատ Բ, էջ 227։

2 Նույն տեղը, էջ 228։

զ՞ի է քեզ ով անիծեալ և խանգարիչ տանս Հայոց՝ զրկել և կոզոպտել զժողովուրդն Հայոց յանուն տանն սոցա, զտունն սոցա աւիրեալ զտունս այլոցն շինել»[1]։

Հովնանը մեղադրվում էր նաև այն բանում, որ իր հույսը աստծո հետ կապելու փոխարեն, կապում է մարդ արարածի՝ այսինքն Մախսուտ Բեկի հետ, և դրանից զայրացած կաթողիկոսը ավելի շատ մեղադրական խոսքեր է ասում Հովնանի հասցեին։ Իր աշխատության մեջ Ա. Ռ. Հովհաննիսյանը հենվելով արխիվային մի վավերագրի վրա, նշում է, որ Մախսուտ Բեկը և Հովնանը այդ գումարների մի մասը օգտագործում էին օսմանյան արքունիքից արտոնագրող հրամանագրեր ստանալու և բերդեր կառուցելու համար։ Եվ քանի որ նրանց ունեցած գումարները չէին բավականացնում ստիպված օգտագործում էին հայկական եկեղեցիների թանկագին սպասքները. «Ըզկեանս վանիցն կեղեքէր և անխնայ տայր պիղծ բռնաւորին տեղւոյն Մախսուտ Բեկ կոչեցելոյն, որով զորանայր պիղծն և բազմիցս ապստամբէր ի թագաւորէն օսմանցոց։ Ուստի և յամենայնում ամի ելաներ յարքունուստ հրաման ի վերայ փաշային ի վերայ Կարնոյ փաշային և այլոց, գնալ զօրու ի վերայ նորա և զգլուխն հատանել և զբերդն աւերել»[2]։

Ալեդին տան ժառանգորդը՝ Մախսուտ Բեկը բերդեր էր կառուցում։ Բավական է նշել, որ 1741 թ. Մշո դաշտի հայերի միջոցով նա մի այնպիսի ամրակուռ բերդ էր կառուցել, որ երբ թուրքերը հետագայում այն գրավեցին և ցանկացան կործանել, հարկ եղավ քառասուն օր տրամադրել 15.000 մարդ[3]։ Սակայն, շարունակենք թվարկել կաթողիկոսի Հովնանին առաջադրված բազմաթիվ մեղադրանքների շարքը։ Մյուս հարցն այն էր, որ Հովնանը ինքնագլուխ, առանց Էջմիածնի աթոռակալին հարցնելու, փոխում էր նրա կողմից նշանակված վանական առաջնորդներին, իսկ Հակոբ Շամախեցու ժամանակ համոզելով կաթողիկոսին, անհիմն կերպով փոխել էր նվիրակներին։ Էջմիածնի համար նվիրատվության գումարներից գնել էր 30 գոմեշ, որոնք նիհար էին, իսկ իր իրավասության տակ գտնվող ուխտավորներին չէր թողնում Էջմիածին ուխտի գնան։ Հովնանը իր պաշտոնա-

---

1 Ա. Ռ. Հովհաննիսյանի նշվ. աշխ., էջ 153։

2 Նույն տեղը, էջ 154։

3 Հայ ժողովրդի պատմություն, հատ. 4, Ե., 1972, էջ 204։

վարության տասնհինգ տարիների ընթացքում եղած մուտքերից ոչ մի անգամ գումար չէր ուղարկել Մայր աթոռին։ Ս. Կարապետ վանքի վանահայրը իր կոնդակները գրում էր այնպիսի ծաղկավոր թղթերի վրա, որոնք ավելի մեծ էին ու շքեղ, քան Էջմիածնի կաթողիկոսի գրածները։ Ըստ կաթողիկոսի, Հովնանը փառքի էր ձգտում, ցանկություն ուներ դառնալ Էջմիածնի կաթողիկոս։ Այնուհետև կաթողիկոսի ընտրությունից հետո Հովնանը ոչ բանավոր և ոչ գրավոր չի հայտնել իր հնազանդությունը Երևանցուն, պետ ավելին, ինչպես Հովնանը, այնպես էլ Կոստանդնուպոլսում ս. Կարապետ վանքի ներկայացուցիչը անընդհատ վատաբանում են կաթողիկոսին։ Նորընտիր կաթողիկոսը ամեն կերպ ցանկանում էր Հովնանին հնազանդեցնելու համար Էջմիածին բերել, սակայն նրա ջանքերը իզուր անցան, քանի որ համառ տարոնցին այդ մասին լսել անգամ չէր ցանկանում։ Եվ ահա, այսքանից հետո Սիմեոն կաթողիկոսը գրեց վերևում ասված իր հայտնի բանադրանքի թուղթը, որը ուղարկեց Արևմտյան Հայաստան և պահանջեց ընթերցել ամեն տեղ։ Այս նշանակում է, որ նա ցանկանում էր շարքից հանել Հովնանին, իսկ դրանով նա Արևմտյան Հայաստանում իր դեմ դժգոհություն էր առաջացնում։ Կաթողիկոսի այս արարքի մասին սկսեցին բողոքել Մախսուտ Բեկը և Վանի Իսագու աղան։ Շուտով Էջմիածինը ստանում է Վանի ժողովրդի բողոք-նամակը, որի տակ ստորագրել էր Իսագու աղան։ Կաթողիկոսի բանադրանքի թուղթը չընդունեցին նաև Կարինի բնակիչները, որոնք չթույլատրեցին, որ Էջմիածնի ներկայացուցիչը այն կարդա եկեղեցիներում[1]։

Այս փաստերը խոսում են այն մասին, որ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի շուրջը սկսեցին ամպեր կուտակվել, քանի որ Մշո ս. Կարապետ վանքը Արևմտյան Հայաստանի ամենանշանավոր և հինավուրց վանքն էր, որի հոգևոր ենթակայության ոլորտը հին ժամանակներից սկսած հասնում էր մինչև Կարին։ Շատ բնական է, որ կաթողիկոսը պետք է մտածեր տեղի տալու մասին, մանավանդ Արևմտյան Հայաստանի և Թուրքիայում եղած հայաբնակ վայրերի ու օսմանյան պետության մայրաքաղաքում ապրող հայերի թիվը շատ անգամ գերազանցում էր Արևելյան Հայաստանի և Անդրկովկասի սահմաններում ապրող հայերի թվին։

Հայտնի է, որ XVIII դարի սկզբներին Անդրկովկասում և

---

1 Տե՛ս Ա. Ռ. Հովհաննիսյանի նշվ. աշխ., էջ 233։

Ռուսաստանում, իսկ դրանից էլ առաջ Եվրոպայում, գործում էր պատմական մի անձնավորություն՝ Իսրայել Օրին, որն իր մահկանացուն կնքեց 1711 թ. Աստրախանում։ Դրանից հետո հրապարակի վրա էին Ղարաբաղի և Սյունիքի ազատագրական շարժման այնպիսի հերոսներ, ինչպիսիք էին Ավան Յուզբաշին, Եսայի Հասան Ջալալյանը, Դավիթ Բեկը և Մխիթար Սպարապետը, որոնք ստեղծեցին անկախ հայ իշխանություններ և հանդիսացան ազատագրված Սյունիքի և Ղարաբաղի կառավարիչները։ Ցավով նշենք, որ 1730-ական թվականներին այդ իշխանություններն արդեն չկային և ազատագրական շարժման կայծերը մայր հայրենիքի նշված հատվածներում ժամանակավորապես մարեցին։ Այսպիսով, Արևելյան Հայաստանում ազատագրական շարժումը կաթողիկոսի արգելակող ջանքերի շնորհիվ անհրաժեշտ ծավալում չէր ունենալու, մնում էր այդ շարժման կենտրոնը ունենալ Մշո դաշտը, որտեղ և փոխադրվեց այն։ Պատմական այս ժամանակաշրջանում հայ ժողովրդի հնագույն օրրաններից մեկին՝ Տարոնին, էր վիճակված լինելու հայ ազատագրական շարժման դրոշակակիրը, քանի որ այնտեղ ստեղծվել էին այդ շարժման համար նպաստավոր պայմաններ։ Ամենագլխավորն այն էր, որ Տարոնի ղեկավարներ Մախսուտ Բեկը և Հովնանը միավորել էին հայ և քուրդ ժողովուրդներին, բանակցում էին սասրիների ղեկավարների հետ և ցանկանում էին Վրաստանի Հերակլ թագավորի օգնությամբ հանդես գալ թուրքական բռնակալության դեմ։ Հովնան եպիսկոպոսի կրոնական ազդեցության ոլորտը, այսպիսով դարձավ Հովսեփ Էմինի ամենավստահելի վայրը։

Հովնան եպիսկոպոսի մասին եղած տեղեկություններն ասում են, որ նա Ամիգի դաշտի Կպնե գյուղից էր, որ ընկնում էր Հարավային Սասունի մեջ։ Պահպանված այլ տեղեկությունների համաձայն նա ծնվել էր Մշո դաշտի Կեմիկ գյուղում, որն է այս տեղեկություններից ճիշտը, դժվար է ասել։ Հաստատ է սակայն, որ նա իր կրթությունը ստացել էր Բաղեշի Ամրդոլու դպրոցում, որն այդ ժամանակ Արևմտյան Հայաստանի ամենահռչակված ուսումնական հաստատությունն էր։ Հովնանը գրագետ անձնավորություն էր, նրան է վերագրվում պահպանված և մեզ հասած մի բանաստեղծություն։ Նա բնատուր խելքի տեր էր, ուներ հռետորական լավ շնորհք։ Եռանդուն այդ անձնավորությունը անընդհատ շրջել էր Տարոնի, Վանի, Կարինի հայկական շրջանները, ջանալով իր ժողովրդի մեջ ցանել ազատագրական շարժման

սիրմերը։ Նա շատ ջերմ հարաբերությունների մեջ էր քրդերի հետ, նրան հաջողվել էր թափանցել ասորական բնակավայրերը և նրանց հաղորդել ազատագրական շարժման գաղափարները։ Նրա նվիրակները հասնում էին Ռուսաստանի հայ գաղթավայրերը և նույնիսկ Մոսկվա։

Հովնանի գործունեության երկու տասնյակ տարիներն իզուր չանցան։ Նրա և իր կողմնակիցների ջանքերով Տարոնի ժողովրդի մոտ միս ու արյուն դարձավ ազատագրական պայքարի միջոցով օսմանյան տիրապետությունից ազատագրվելու գաղափարը, երկու ժողովուրդների և հատկապես քրդերի հետ նույն հողի վրա կողք կողքի խաղաղ ապրելու և իրար հետ համագործակցելու խնդիրը։

Հովնանը հիանալի գիտեր Մշո, Էրզրումի, Վանի և Դիարբեքիրի ամբողջ վայրերի հայ և քուրդ ժողովուրդների միջև եղած անցյալը, և որ ամենակարևորն է, հասկացել է քրդական աշիրեթապետների և քուրդ ժողովրդի օսմանյան պետության նկատմամբ ունեցած պայքարի միջոցով ազատագրվելու տրամադրությունները։ Այս հանգամանքը, ինչպես արդեն ասվեց, նրան մոտեցրել էր Տարոնի Մախսուտ Բեկի հետ, որը թշնամաբար տրամադրված լինելով թուրքական բռնակալական սիստեմի նկատմամբ, միաժամանակ նորմալ հարաբերությունների մեջ էր Տարոնի հայ հատվածի հետ։ Օսմանյան տիրապետողների նկատմամբ ունեցած այս երկուստեք արհամարհանքը ջերմացնում էր հայ-քրդական հարաբերությունները։ Հովնանը շատ լավ էր հասկացել, որ Մախսուտ Բեկը այն ուժն է, որի հետ միավորվելով հնարավոր կլիներ բռունցք դնենալ թուրքական պետության դեմ։ Այս էր Հովնանի մտածելակերպը։ Երկու այս գործիչների հայացքները միավորված, միախառնված էին իրար հետ, միավորելով նաև նրանց գործելակերպը։ Շատ բնական է, երբ հայ և քուրդ ժողովուրդները տեսնում էին այս գործիչների միասնությունը ավելի էին ամրապնդում իրենց բարեկամությունը։ Շատ հարցեր Տարոնի վանահայրը լուծում էր դրամի միջոցով և Մախսուտ Բեկի հետ թուրքական փաշաներից ոմանց հանել էր տալիս իրենց պաշտոններից։ Հովնանը փաշաների մասին տեղեկացնում էր Կոստանդնուպոլսի հայ մեծանուն ամիրաներին, որոնց միջամտությամբ էլ ստացվում էին նրանց ազատման ֆիրմանները (հրամանները)։

1750—70-ական թվականներին նպաստավոր պայմաններ կային հայ, քուրդ և ասորի ժողովուրդների մերձեցման և ազատագրական շարժումները ծավալելու տեսակետից։ Թուրքական երբեմնի հզոր կայսրությունն այդ ժամանակաշրջանում ավելի էր թուլացել։ Անկախության համար պայքարի էին ելել Եգիպտոսը, Հունաստանը և Բալկանյան մյուս երկրները։ Այս պայքարի ընդհանուր հորիզոնի վրա քրդական ցեղերը նույնպես ձգտում էին անկախության։ Վաղուց հրապարակի վրա էին քուրդ բանաստեղծ Ահմեդ Հանիի ստեղծագործությունները, որոնց մեջ նա քրդական ցեղերին միություն և անկախություն էր քարոզում։ Քրդական Ալեդին փաշայի ցեղի ազդեցությունը տարածվում էր Դիարբեքիրի, Բիթլիսի վրա մինչև Վան։ Ազատագրական շարժումը ծավալելու ճանապարհին Մախսուտ Բեկին և Հովնանին ոգևորում էր նաև Հերակլի գլխավորած անկախ Վրաստանը։ Դեռևս 1760 թ. սկզբներին Կախեթիայի Հերակլ թագավորը Թեյմուրազի մահվանից հետո իրեն միացրեց Քարթլին, որով էլ Արևելյան Վրաստանը դարձավ անկախ մի պետություն[1]։ Վերը նշված փաստը, ինչպես նաև 1760 և 1763 թվականներին Էմինի կովկասյան երկնակամարում երևալը հույսեր էին ներշնչում Մախսուտ Բեկին և Հովնանին՝ տենդագին աշխատանք ծավալելու հայերի, քրդերի և ասորիների մեջ ու վրաց Հերակլ թագավորի գլխավորությամբ անջատվելու Թուրքիայից։ Հովսեփ Էմինի նպատակն էր միավորել հայերին, վրացիներին, քրդերին ու ասորիներին ու կազմակերպել հայ-վրացական և քրդական պետություն։ Հովսեփ Էմինի նախահայրերը գաղթել էին Հայաստանից և հաստատվել Համադան քաղաքում, որտեղ էլ նա ծնվեց 1726 թվականին։ Շատ չանցած նրանց ընտանիքը տեղափոխվում է Բաղդատ, ապա երբ նա տասնութ տարեկան էր, գնում է Բասրա և այնտեղից էլ Կալկաթա, որտեղ նրա հայրը զբաղվում էր առևտրական գործերով։ Այդտեղ Էմինը հաճախում է անգլիական դպրոց և 1751 թ., հոր կամքին հակառակ, որը ցանկանում էր որդուն հոգևորական կամ առևտրական դարձնել, իր ընկերոջ՝ Ջան Մասեյի հետ թողնում է հայրական տունը և անցնում է Լոնդոն։ Շուրջ տասը տարիների ընթացքում, տառապանքների և տանջանքների գնով, Էմինին հաջողվում է զինվորական կրթություն ստանալ։ Այնուհետև նա իր առաջ խնդիր է դնում մեկնել

---

1 Տե՛ս История Грузии, часть I, Тбилиси, 1946, էջ 410։

Հայաստան, կյանքը նվիրելով հայրենիքի ազատագրությանը և ազատել իր հայրենիքը թուրքական և պարսկական բռնակալությունների լծից։

Անգլիական պետության մայրաքաղաքում գտնվող հնդկական նրիտասարդը միշտ մտածել է, «իսկ եթե չհաջողիմ գործ գտնել, որոշած եմ սովամահ մեռնիլ՝ մարդու նման, քան թե մուրալու դիմել»[1]։ Էմինի հայրը Հնդկաստանից Լոնդոն է ուղարկում 500 ռուփի՝ պայմանով, որ այն կտրվի որդուն, եթե նա վերադառնա Կալկաթա։ Էմինը մերժում է հոր առաջադրած այդ պայմանը, ուրեմն և գումարը։ Այնուհետև իր հուշերի մեջ նա գրում է. «Բացարձակապես հոժար կամքովս՝ ես իմ ետև ձգած եմ յաստ հանգստավետ կյանք մը, հանձնառու ըլլալով այս խոնարհ վիճակին։ Եվ զղջացած չեմ ատոր համար»[2]։ Իր նամակներում Էմինը միաժամանակ նշում է, որ Անգլիա է եկել ոչ թե բնդհանրապես ուսում ստանալու համար, այլ տիրապետելու պատերազմի արվեստին, որն առանձնապես պետք է իր ժողովրդին։ Հորն ուղարկած նամակներից մեկում նա գրում է. «Ես եկա աշխարհ ճանաչելու և կարենալ կատարյալ ծառան կոչվելու՝ զառնուկ ու անհովիվ իմ հայ ազգին»[3]։ Էմինի հայրը որդուն գրած նամակներից մեկի մեջ խորհուրդ է տալիս Էմինին. «Մեկ կարևոր կետի մեջ իմաստությամբ շարժած ես. ատով՝ բոլոր լեռնականները, Հայաստանի ամբողջ բնակչության հետ, պիտի իմանան թե դուն ձեռնարկած ես պարկեշտ ծրագրի մը իրագործմանն»[4]։

Մեր կարծիքով, լեռնականներ ասելով Էմինի հայրը անպայման նկատի ուներ ոչ միայն Ղարաբաղի և այլ տեղերի լեռնաբնակ հայերին, այլև Սասունի լեռնականներին։ Վրաստանի Հերակլ թագավորին գրած նամակներում Էմինը նրան համարում է Վրաստանի և Հայաստանի թագավոր և ցանկություն է հայտնում գնալ նրա մոտ «իբր եվրոպական սպա, ծառայելու ձեզ, իմ համեստ կարողություններու ներած չափով, և վարժեցնելու ձեր զորքերը կռվելու եվրոպացիներու նման, որոնք ինչ-

---

1 Հ. Էմինի կյանքն ու արկածները, թարգմանեց Հ. Խաչմանյան, Պեյրութ, 1958, էջ 42։

2 Նույն տեղը, էջ 71։

3 Նույն տեղը, էջ 116։

4 Նույն տեղը, էջ 124։

պես քաջ հայտնի է ձեր վեհափառության, գիտեն քիչ հոգիով շատերու հաղթել»[1]։

Անգլիայի մայրաքաղաք ժամանած երիտասարդը մի այգում պատահաբար հանդիպում է մտավորական Էդմոնդ Բըրքին, որը նրան ծանոթացնում է լորդ Նորտումբերլենդի հետ, որին էլ հայ երիտասարդը պատմում է իր հայրենիքի ծանր վիճակի և իր նպատակների մասին։ Լորդը դրանից հետո դառնում է Էմինի հովանավորը։ Այնուհետև նա ծանոթանում է Էլիզավետա Ռոբինզոնի հետ, կրթված ու հարուստ մի կին, որի տանը կազմակերպված երեկոներին իր ժամանակն էր անցկացնում Լոնդոնի առաջավոր մտավորականությունը։ Շուտով Էմինն ընդունվում է Վուլվիչի թագավորական ռազմական ակադեմիան և տասներեք ամիս սովորելուց հետո մեկնում է յոթնամյա պատերազմի ռազմաճակատ ու մասնակցում է տասնութ տարբեր կռիվների և Հասթենբերգի ճակատամարտին։

Դրանից հետո Էմինը սկսում է նամակներ գրել Կալկաթայի հայերին, վրաց Հերակլ թագավորին, հայտնելով այն միտքը, որ անհրաժեշտ է միավորել ժողովուրդների ուժերը և պայքարի ելնել թուրքական բռնակալության դեմ։ 1758 թ. Էմինի հանդիպումը անգլիական մինիստրներից մեկի՝ Վիլյամ Պիտի հետ, նրան բերեց այն եզրակացության, որ անգլիական կառավարությունը ոչ միայն չի մտածում, այլև բոլորովին էլ շահագրգռված չէ հայ ժողովրդի ազատագրության հարցով։ Հիասթափված անգլիական կառավարության այդ վերաբերմունքից, 1759 թ. Էմինը Ալեքսանդրիայից անցավ Հալեպ, որտեղից շարունակեց իր ճանապարհը դեպի Էրզրում, ապա անցավ Խնուս և Բայազետի վրայով՝ Էջմիածին։

Հետաքրքրական է Էմինի ճանապարհորդության ընթացքում Ջինիս հայկական գյուղում նրա զրույցը հայ գյուղացիների հետ։ Երբ նա գյուղի բնակիչներին ասում է, թե ինչո՞ւ ազատ չեք, նրան պատասխանում են. «Պարոն, մեր ազատությունը անդիի աշխարհքն է»։ Էմինը իմացավ այստեղ, որ նրանց այդպես են ասել եկեղեցու սուրբ հայրերը, որոնք ամեն անգամ նրանց ասում էին. «Հայ ազգը մահմեդականներուն հպատակ եղած է աշխարհի ստեղծվելեն ի վեր, և այդպես էլ պետք է մնա մինչև հարության օրը»։ Էմինը գրպանից հանում է Մ. Խորենացու գիրքը, նրանից

---

[1] Հ. Էմինի հուշերը..., էջ 126։

կտորներ է ընթերցում և ապա ասում. «Բանավոր էակ մը չպիտի հանդուրժեր, որ ուրիշի գերի ըլլար, չպիտի ուզեր նույնիսկ, որ իր կրոնակիցները փորձեին բռնանալ իր վրա։

Աստված բոլորը հավասար ստեղծած է, որպեսզի պատշաճ օրենքներով կառավարվին, նույն արդարությամբ, թե հարուստ և թի աղքատը, ցուցնելով թե ամեն մարդ ունի արժանապատվության զգացում, առանց որու անասունեն տարբեր պիտի չըլլար»[1]։

Ճանապարհորդության ընթացքում, Լոնդոնում կրթված հրնդկահայ երիտասարդը եկավ այն եզրակացության, որ Հայաստանը օսմանյան և պարսկական բռնակալություններից կարելի է ազատագրել Վրաստանի հետ համագործակցելով, միայն Ռուսաստանի օգնությամբ։ Լոնդոն վերադառնալուց հետո Էմինը անցավ Ռիգա, ապա Դորպատ, այնտեղից էլ Պետերբուրգ, որտեղ և հանդիպումներ ունեցավ Վրաստանի թագավոր Թեյմուրազի հետ։ 1762 թ. մարտին Էմինը դուրս գալով մայրաքաղաքից, անցնում է Մոսկվա, ապա Աստրախան, որտեղից նամակներ է գրում Ղարաբաղի մելիքներին և Հերակլ թագավորին։ Որոշ ժամանակ անց Էմինը Թիֆլիսում էր, որտեղ և 1764 թ. մարտ ամսին հանդիպում է ունենում վրաց թագավորի հետ։ Թիֆլիս մեկնելու ճանապարհին Հովսեփ Էմինին սկսեցին միանալ հայ կամավորներ, որոնց թիվը հասավ 800-ի և նա սրիպված եղավ ցրել նրանց։ Շուտով նա Հերակլին առաջարկում է իր պլանը, այն է՝ բաց անել դպրոցներ, հատկապես ռազմական դպրոցներ և կրթել երիտասարդությանը։ Էմինը առաջարկեց Հերակլին վերցնել վեց հազար ձիավոր և տասը հազար հետևակ ջարժվել դեպի Բայազետ, ապա Էրզրում, Բենսեն, Բիթլիս, Սասուն, որտեղ ձեզ կմիանան չորս հազար հայեր, այնուհետև բարունակաբար նրան կմիանային այնքան զինված մարդիկ, որ բանակի թիվը կհասներ քառասուն հազարի[2]։ Իր նամակներից մեկում Հովնանը Էմինին գրում է, թե իր նախապատրաստած ուժերը ինչ ազգերի պետք է պատկանեն։ «Գալով կովողներուն,— ասում է նա,— գիտցեք, որ վեց օրվան ճամբա կտրելե վերջ՝ ձեզ պիտի գիմավորեն 40.000 մարտիկներ։ Ասորիներ ու եզդի քուրտեր նմանապես պատրաստ են միանալու մեզ»[3]։ Դեռևս Մոսկ-

---

1 Հ. Էմինի հուշերը..., էջ 156—157։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 259։

3 Նույն տեղը, էջ 267։

վայում եղած ժամանակ էմինը հանդիպում է Մշո ս. Կարապետ վանքի նվիրակ Սուքիասին և իր փոքրիկ ջոկատի անդամներից մեկին՝ Սիմոնին ուղարկում է Հովնանի մոտ, որը հետագայում հավատացնում էր Հովսեփ էմինին, որ եթե նրան հաջողվի հիսուն վրացիների հետ հասնել Մշո դաշտ, ապա ամեն ինչ կընթանա իր ճանապարհով և նա կհասնի հաջողության, բայց այդ քայլին պետք է դիմել միայն ունենալով վրացական թագավոր «Հերակլիոսի համաձայնությունը, որպեսզի թուրքեր գիտնային, թե իշխանը բարեկամ էր էմինի. արքեպիսկոպոսը կը շեշտեր, թե առանց Հերակլիոսի անվան ու աջակցության կարելի չէր հաջողացնել այդ ձեռնարկը»[1]։

Իր նամակներում էմինը հասկացնում էր Հովնանին, որ ինքը դրամ չունի, աղքատ է, սակայն Տարոնի հոգևոր առաջնորդը հավատացնում էր, որ նրա շուրջը հավաքված մարդիկ «պատրաստ էին կրկին երդվելու, որ իր հրամանին տակ ծառայեն տասը տարի, առանց վճարման ակնակալության»[2]:

Այժմ հարց է առաջ գալիս, թե Անգլիայից երկու անգամ տարբեր ճանապարհներով Անդրկովկաս եկած Հովսեփ էմինը ազատագրական իր պլանը-մշակելիս առհասարակ ումի՞ց պետք է օգնական ուժեր ստանար և ո՞ւմ վրա էր դնում իր հուսը՝ Մեր կարծիքով, ամենից առաջ վրացական թագավոր Հերակլի, որի երկրում էլ իջևանել էր, և Ղարաբաղի հայ մելիքների մոտ գտնվող ռազմական ուժերի վրա։ Սակայն այս Արևելյան Հայաստանում, Ղարաբաղում և Վրաստանում, իսկ Արևմտյան Հայաստանո՞ւմ։ Մեր ուսումնասիրությունները մեզ բերել են այն եզրակացության, որ էմինը հուսադրվել էր օգնական ուժեր ստանալ Մշո ս. Կարապետի վանահայր Հովնանից և վերջապես Հովնանի միջոցով Վանի, Ալաշկերտի, Բայազետի և այլ վայրերի հայերից՝ Հովնանը իր մարդիկ ուներ Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի հայաբնակ վայրերում որոնք նրան տալիս էին մանրամասն տեղեկություններ հայ ժողովրդի այդ հատվածների վերաբերյալ։ Նրանք նույնիսկ միացյալ ապստամբության գործը կազմակերպելու համար Մշո առաջնորդին նյութական օգնություն էին ուղարկում։ Այստեղից առաջանում է մի ուրիշ հարց։ Գիտե՞ր արդյոք Հերակլ թագավորը Հովնանի մասին։ Իր մեմուարների

---

1 Հ. էմինի հուշերը..., էջ 245։

2 Նույն տեղը, էջ 246։

մեր էմինը գրում է, որ Հովնանի յուրաքանչյուր նամակի մասին նա ծանոթացնում էր Վրաստանի թագավորին։ Ոչ մի կասկած լինել չի կարող, որ ապստամբության իր մտահղացումներն ի մի բերելիս էմինը պետք է հաշվի առներ ինչպես վրացական, այնպես էլ Արևելյան և Արևմտյան Հայաստանում եղած ուժերը։ Էմինի նման կրթված մի անձնավորություն և զինվորական, որը եղել էր Եվրոպայում, Հնդկաստանում, Պարսկաստանում, Ռուսաստանում և Թուրքիայում, անհնարին է, որ առանց հաշվի առնելու առկա ուժերը, որևէ գործունեություն ձեռնարկեր։ Վերջապես Մշո ս. Կարապետ վանքի վանահայր Հովնանը իր կազմակերպած զինված ուժերի մասին հաղորդելիս, իր հաշիվներում լավ կարող չմոցնել Սասունի բարձրաբերձ լեռներում գտնվող լեռնականներին։ Եթե XIX դարի վերջին տասնամյակներում Սասունում կային զուտ հայկական բնակչությամբ 115 գյուղեր, ապա ինչ՞ու չենք կարող մտածել, որ էմինի ժամանակներում այնտեղ նույնքան կամ ավելի բնակչություն կար, մանավանդ այդ տարիներին սասունցիները ավելի համախմբված էին և քրդական ցեղերը դեռևս չէին թափանցել Սասունի ցածրանիստ գյուղերը։

Ինչպես Հովսեփ էմինի, այնպես էլ Հովնանի մասին տեղեկությունների ենք հանդիպում նաև այն նամակների մեջ, որոնք Էջմիածնի կաթողիկոսը գրել է Հերակլ թագավորին։ Իր նամակներում հայոց քահանայապետը համոզում էր վրաց թագավորին ազատվել Եվրոպայից ժամանած և Վրաստանում գտնվող այդ ոչ հաճելի պրինցի ներկայությունից և նրան ուղարկել այնտեղ, որտեղից եկել է։ Հերակլ թագավորին գրած նամակներից մեկում Սիմեոն Երևանցին գրում է. «Դարձեալ և զայս առանձին ծանիցէ տէրութիւնդ զի այդ մեր պարոնին (խոսքը էմինի մասին է— Հ. Գ.) մէկ երկու մարդ ունի, որը միշտ գան յայս կողմանս և համարձակ և բացարերան խոսեն զբանս անպատշաճս, զորս լուեալ հայք և տաճիկք ոմանք ծաղր առնեն և ոմանք սրեն դիղոյս ի վերայ մեր։ Յայս միջոցիս մէկ մահտեսի Գրիգոր մի ունի, եկն Լիլանան և աստ լրբարար խոսելով կռուեալ է ընդ խանի մարդկանցն, նոքա ևս գանեալ էին զնա և մերկացուցեալ և զոր ինչ պրանս ունէր առեալ էին և տարեալ խանին և այլոց ցույց տուեալ։ Բ գիր էր ունեցեալ՝ մէկն ի դմանէ և մէկն ի տէրութենէդ ստ սուրբ Կարապետու առաջնորդ Յոհան վարդապետն գրեցեալ

(ընդգծումը մերն է— Հ. Պ.) զորս տեսին ամենեքեան— և առ մեզ ևս բերին և տեսաք որ քո կնիքն էր յոյժ զարմացաք»[1]

Ինչպես երևում է այս վավերագրի ընթերցումից, Հերակլ թագավորի նամակներից մեկը, որն ուղղված է եղել Մշո ս. Կարապետ վանքի վանահայր Հովնանին, հայտնաբերվել է Մահտեսի Գրիգորին խուզարկելու ժամանակ։ Այստեղից էլ եզրակացություն, որ Հերակլը անպայման ստացել է վանահոր նամակները և ինքն էլ նրան նամակներ է գրել։ Այս փաստը նշանակում է նաև, որ վրաց Հերակլ թագավորը շատ հույսեր էր կապում Հովնան եպիսկոպոսի հետ։ Եվ, ահա, երբ Հերակլի Հովնանին գրված նամակները ընկել էին Երևանի խանի մարդկանց ձեռքը, կաթողիկոսը շտապել էր նամակով տեղեկացնել այդ մասին վրաց թագավորին։ Ոչ մի կասկած լինել չի կարող, որ կաթողիկոսը այդ նամակը գրել է Էմինից ազատվելու և նախապատրաստվող ազատագրական շարժումը կանխելու նպատակով։

Անկասկած, Հերակլի վրա պետք է որ ազդեր հայոց քահանայապետի նամակը, որտեղ վատաբանվում էին ամենից առաջ Էմինը և ապա նրա համախոհ Հովնանը։ Իր հուշերի մեջ Էմինը նշում է, որ ստանալով կաթողիկոսի նամակը, վրաց թագավորը հրավիրում է տեղի ազդեցիկ հայերի ներկայացուցիչների հավաք, որոնք չեն պաշտպանում Էմինին, ընդհակառակը, միանում են կաթողիկոսին։ Այս դեպքից հետո Էմինի մոտ են գալիս տասներեք հոգի «քուրդիստանյան հայեր», որոնք բերել էին նրան Հովնանի նոր նամակը և ազատագրական պայքարի համար ծախսվելիք անհրաժեշտ գումար։ Սակայն դեպքերը այլ ընթացք ստացան։ Շուտով Հերակլը տեղեկացավ, որ թուրքերը այլևս չեն հարձակվելու Վրաստանի վրա։ Ահա հենց այդ ժամանակից էլ սկսվեց Էմինի և Հերակլի հարաբերությունների սառելու պրոցեսը։ Այս պահից հետո նրան պետք չէր ոչ Անգլիայից ժամանած Էմինը և ոչ էլ Հովնան եպիսկոպոսը։ Շուտով Հերակլը Էմինին առաջարկեց թողնել Վրաստանի սահմանները։

Մուշից եկած տասներեք հայերի բերած նամակի մեջ Հովնանը գրում էր, որ ուղարկում է մելիք Ստեփանին և նրա հետ անհրաժեշտ գումար, «որպեսզի կարենաք ճամբորդական ձեր փոքր ծաղքերը հոգալ և որքան կարելի է շուտ մեզ մոտ հաս-

---

1 Ա. Ռ. Հովհաննիսյանի նշվ. աշխ., էջ 169։

նիս[1]։ Այս տեղեկությունը հավաստում է այն մասին, որ խրոխտ տարոնցին գիտեր դեպի Էմինը Հերակլի ունեցած վերաբերմունքի մասին և նրան հանգստացնելու նպատակով հրավիրում է Մուշ, ասելով. «Հոգ մի՛ ընեք, սակայն եթե միության թշնամիները արդելք հանդիսանան ու թույլ չտան, որ ան հավանի ձեր խնդրանքին»[2]։ Այստեղից երևում է, որ Հովնանին քաջ հայտնի էր հայոց կաթողիկոսի գործողությունները և Վրաստանի Հերակլ թագավորի տատանումները։ Այնուհետև Տարոնի հոգևոր առաջնորդը գրում էր. «Ստացած եմ ձեր նամակները, ուր հիշած եք յարատևիր գործունեությունը այն գայլերուն, որոնք արտաքնապես մեր փրկչին աշակերտները ըլլալ կը ձևացնեն, բայց որ միշտ ալ գործիք ծառայած են՝ մեր անմեղ ազգի անկման, անհավատներու ձեռքին խաղալիք դառնալով»[3]։

Գործունյա Հովնանն այնուհետև հայտնում է, որ ինքը շահագրգռել է Հովսեփ Էմինով հետաքրքրվող շատ ազգեցիկ հայերի, որոնք արդեն ունեն այն տրամադրությունը, ինչ ունի Էմինը։ Նա ծանոթացրել է Կոստանդնուպոլսի, Զմյուռնիայի, Կեսարիայի, Թոքատի, Էրզրումի, Դիարբեքիրի, Վանի և այլ տեղերի ազդեցիկ հայերին Էմինի գաղափարների հետ և ստացել է նրանց Էմինին համախոհ լինելու համաձայնությունը։ «Թուրքերն այն չեն, ինչ որ էին հաբյուր տարի առաջ,— գրում էր նա իր նամակում,— անոնք ամեն ինչ պետք է լքեն առանց կռվելու։ Կրնաք ապահով ըլլալ, թե դժվար չըլլա գրավել իրենց քաղաքները, քանի որ ասոնք ամրացված չեն։

Ասոնց մտքերու մեջ արմատ ձգած է նախապաշարյալ մարդարեություն մը, թե Իրենց վերհապետությունն իր վախճանին հասած է, թե իրենց կռվիլը՝ քրիստոնյաներու դեմ, անօգուտ պիտի ըլլա»[4]։

Հովնանը հավատացնում էր Հ. Էմինին, որ այն օրվանից, երբ նա Անգլիայից եկել է Անգրկովկաս, յուրաքանչյուր հայ ողամարդ թելով Չրա «ալստյան Վանքն. ջենքը ձեռքին սպասում է կռվի նետվելու համար տնունիկ ՝իներ պատրաստ են կռվելու, բավական է, որ Հերակլիոս Վանձն առնե ձեր կողքին կանգ-

---

[1] Հ. Էմինի հուշերը...՝ էջ 266։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը, էջ 267։

[4] Նույն տեղը։

նիլ»[1]։ Տարոնի հոգևոր հովիվը հաստատապես ասում է նաև, որ եթե Հովսեփ էմինը կտրի իր հույսը Հերակլ թագավորից, ապա պետք չի վհատվել։ Հովնանը հաղորդում է նրան, ասելով. «Շարունակեցեք ձեր գործը՝ ձեր ամբողջ կատաղությամբը. ո՛չ մեկ վտանգ վախեցեք»[2]։

Վրաստանի սահմանները թողնելուց հետո էմինն անցնում է լեռնականների մոտ, որտեղ լեռնականներից կազմակերպում է տասներկու հազարանոց մի բանակ։ 1765 թ. Բրագունում էմինը ս. Կարապետ վանքի նվիրակ Սուքիասի միջոցով ստանում է Հովնանի նոր նամակը և 646 թուման գումար, որը հավաքել էին Թուսաստանի հայերը։ Էմինը հրաժարվում է ընդունել այն։ Այնուհետև նա անցնում է Ղարաբաղի մելիքների մոտ։ Էջմիածնի գահակալը, որ հետևում էր էմինի բոլոր քայլերին, որոշում է այստեղ ևս հանգիստ չտալ նրան և մի նամակով հայտնում է Գանձասարի կաթողիկոսին և Ղարաբաղի մելիքներին, որպեսզի նրանք հեռու մնան էմինից։ Այսքանից հետո նրան մնում էր թողնել Ղարաբաղի սահմանները։

Շուտով սկսում են վատանալ թուրք-վրացական հարաբերությունները։ Նրանց երկինքը մթագնում է և խոավում է այն մասին, որ թուրքական բանակը պետք է արշավի դեպի Վրաստան։ Հերակլը այս անգամ Արևմտյան Հայաստան է ուղարկում Տեր-Գարրիելին։ Թագավորի նպատակն էր լավ ուսումնասիրել, թե ինչ է կատարվում Թուրքիայում, ապա պարզել թե Մուշի ժողովուրդը, ս. Կարապետ վանքի վանահայրը, Թուրքիայի Վրաստանի վրա հարձակվելու դեպքում, հաստատակամություն ունե՞ն միացյալ ուժերով պայքար մղելու թուրքերի դեմ։ Հերակլը Տեր-Գարրիելին Արևմտյան Հայաստան ուղարկելիս խնդրում է հայոց կաթողիկոսին՝ նրան մի կոնդակ տալ այն մասին, որ իբր թե այդ քահանան այստեղ է մեկնում իր կիսատ թողած եկեղեցին կառուցելու համար միջոցներ հավաքելու։

Ազատագրական շարժման ծավալման այս հուսավոր տարիներին ժողովուրդներին իրար մերձեցնելու և իր ժողովրդին զինելու նպատակով Հովնանը անում էր ամեն ինչ Տարոնում եղած ուժերի վիճակի մասին տեղեկություններ ստանալու նպատակով։ Հովսեփ էմինը իր համախոհ Սիմեոնին ուղարկում է Տարոն,

---

[1] Հ. Էմինի հուշերը..., էջ 268։

[2] Նույն տեղը։

որը ուսումնասիրելով իրադրությունը հայտնում է Էմինին և նրա միջոցով էլ Հերակլին, որ տեղի հայությունը պատրաստ է կռվելու թուրքերի դեմ, եթե Վրաստանի թագավորն իր ուժերով արյուսի դեպի Մուշ։

Սակայն շուտով նորից սառում են Հերակլի և Էմինի հարաբերությունները։ Էմինի մոտ ցանկություն է առաջանում գնալ Մուշ, բայց Մուշից եկածները հասկացնում են նրան, որ առանց Հերակլի կամքի այդ վայրերում երևալը անհնարին է։ Խոսելով Հերակլի և Սիմեոն Երևանցի կաթողիկոսի դեպի ազատագրական յարժումները բռնած դիրքի մասին, Էմինը իր հուշերում գրում է, որ Վրաստանի Հերակլ թագավորը Սիմեոն կաթողիկոսի հետ միասին պատճառ եղան իր ձեռնարկության ձախողմանը[1]։

Սիմեոն կաթողիկոսի բաղձանքը կատարված էր։ Հերակլը իսկել էր իր կապերը Էմինի հետ, իսկ երբ նա անցավ Ղարաբաղ, կաթողիկոսը ցանկացավ ուժեղ հարված հասցնել Հովնանին, բանտարկեց նրան, որի մասին արդեն ասվեց։ Շատ ափսոս, որ Հովնանի նամակները չեն պահպանվել, որոնք կարող էին մեր առաջ բացել Տարոնի ազատագրական շարժման ծալքերը և շատ բան հայտնի կլիներ այդ տարիներին այնտեղ տեղի ունեցած իրադարձությունների մասին։ Անդրկովկասից հեռանալուց հետո Հ. Էմինը մեկնեց Հնդկաստան և այստեղ եղած ժամանակ չէր կորցրում իր կապերը Լոնդոնի իր բարեկամների և հատկապես Էդմոնդ Բրքի հետ, որի 1779 թ. մարտի 29-ին Լոնդոնից գրած նամակներից մեկը պահպանվել է և հետագայում հրատարակվել է մամուլում։ Այդ նամակում Էմինի բարեկամը գրում է.«Իսկ դուք, սիրելի բարեկամ, շատ տեղ փորձանքներու հանդիպեր եք, հիմա որ ծերացաք, պետք է քիչ մը հանգչիք։ Ուրախ եմ, որ բարի հոր մը բնությանական հաճույքը և մաքուր խղճմտանքի մը մխիթարությունը տնտրեցիք և գտաք»[2], այնուհետև նա գրում է, որ ձեր բարեկամ լորդ Նորտումբերլնգը մահացավ և «դուք շատ մը ապնվական մտածմունքներու ետև եղաք ու չհասաք»[3]։

Այս իրադարձություններից հետո Հովնանը ստիպված գնաց Էջմիածին, իսկ կաթողիկոսը այդ համարելով դարձի գալ, վերացրեց բանադրանքը։ Կաթողիկոսի հիշատակարանում, որի մասին

---

1 Տե՛ս Հ. Էմինի հուշերը..., էջ 331։

2 «Մասյաց աղավնի», 1856, սեպտեմբեր, էջ 271։

3 Նույն տեղը։

մենք խոսեցինք իր տեղում, գրված է, որ հայոց վեհապետը նրան ընդունեց «գորովագութ սիրով... և ներելով ներեաց ամենից նորին յանցանց»[1]։

Հիշատակարանից մենք տեղեկանում ենք, որ հայոց քահանայապետը մի նամակ է գրում նաև Մուշ Մախսուտ Բեկին, որի մեջ նա ակնարկում է Տարոնի կառավարչին, որ չնայած նա չի խնդրել Հովնանին ներելու մասին, սակայն ներում է. «Թուղթ ես գրեցաւ առ Մախսուտ Բեկն Մշու վասն այսր, թէ ահա արձակեալ զնա յզեցաք վասն իսաղ աղային և օճաղլուացն, թէպէտ դու ո՛չ էիր գրեալ զգիրն»[2]։ Եվ կաթողիկոսը իր մոտ ներում խընդրելու եկած իր հակառակորդին նշանակում է էջմիածնի կողմից Վանի նվիրակ։

Սիմեոն կաթողիկոսի գրած գրություններից մեկում նշվում է, որ Հովնանը երկու ցանկություն է ունեցել՝ «Մի՛ զի վասն ոչ գալստեան իւրոյ ի սուրբ Աթոռս, ներեսցե։ Եւ երկրորդ՝ զի մի չարախօսացն ի իւրոց լուեալ ի վերայ իւր զայրացի»[3]։ Իմանալով ս. Կարապետ վանքի վանահոր ցանկությունը, կաթողիկոսը նրան պատասխանում է. «Զի ո՛չ զգալդ քո կամիմ ասէ, և ոչ չարախօսացն քոց լսեմ»[4]։ Սակայն ինչ էր ցանկանում հայոց քահանայապետը։ Ամենից առաջ նրա ցանկությունն էր, որպեսզի Հովնանը ենթարկվի իրեն և ապա նվիրակի միջոցով էջմիածնին հասցնի համապատասխան տուրքը և նվիրատվությունները «Եւ երբ տացես ասէ զնուիրակութիւնդ, սիրելի ես լինելոց ասէ մեզ»[5]։ Հենց այս հատվածից հետո, նորից տեղեկություն կա այն մասին, որ կաթողիկոսը համապատասխան գրություն է գրել Տարոնի Մախսուտ Բեկին։

1765 թ. Մուշ է ժամանում Տեր-Գաբրիելը, որը ուսումնասիրելով տեղի վիճակը, անցնում է Վան, ապա Սալմաստ, Խոյ, ծանոթանում է ասորական ուժերի հետ և վերադառնում Վրաստան։ Տեր-Գաբրիելը տեղեկացնում է Հերակլ թագավորին, որ նշված վայրերի հայերը, քրդերը, ասորիները կազմ ու պատրաստ սպասում են առիթի՝ ապստամբություն բարձրացնելու համար։ Նա ապա ավելացնում է, որ Մուշում Հովնանը գնել ու պահեստա-

---

1 Դիւան Հայոց պատմութեան, գիրք Բ, էջ 286։

2 Նույն տեղը, էջ 290։

3 Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ը, Թիֆլիս, 1908, էջ 286։

4 Նույն տեղը, էջ 287։

5 Նույն տեղը։

վորել է 8000 զենք, և բավական է, որ Հերակլի բանակը մեկնի Վան, Մշո դաշտ, երեք ժողովուրդների զինված ուժերը ապրստամբելով կմիանան նրա բանակին։ Ոչ մի կասկած լինել չի կարող, որ ինչպես Հովնանին, այնպես էլ նրան հովանավորող Մախսուտ Բեկին, ինչպես նաև ասորիների առաջնորդներին հայտնի էր, որ թուրքական պետությունը նախկինը չէ, այն թուլացել է, սրված են ռուս-թուրքական հարաբերությունները և Ռուսաստանը ցանկանում է դեպի Անդրկովկաս արշավել, հարվածներ հասցնելով ինչպես Պարսկաստանին, այնպես էլ Թուրքիային։ Նրանք գիտեին նաև, որ Ռուսական կայսրությունը սկսել էր մոտենալ Ղրիմը ու Սև ծովի ափերը գրավելու մասին, որն այդ ժամանակ գտնվում էր թուրքական տիրապետության տակ։

Այժմ անցնենք Հովնանի նկատմամբ հայոց կաթողիկոսի բանադրանքի հետ կապված մի քանի այլ հարցերի։ Չնայած այդ բանադրանքը վերացված էր, սակայն Սիմեոն կաթողիկոսը շարունակում էր Հովնանին հալածել։ Ներքին կարգով նա աշխատում էր երկպառակություններ առաջացնել ս. Կարապետ վանքի միաբանների միջև, հոգևորականների մի մասին հանել Հովնանի դեմ։ Կաթողիկոսը միաժամանակ հովանավորում էր Տարոնի այն ուժերին, որոնք դեմ էին Հովնանի գործունեությանը։ Թուրքական կառավարությունը նույնպես նիրհի մեջ չէր, այն ևս իր մարդկանց միջոցով ուսումնասիրում էր ինչպես Վրաստանում, այնպես էլ Տարոնի քուրդ և հայ հատվածների միջև տեղի ունեցող մերձեցման պրոցեսը։ Կառավարության տեսադաշտում էր նաև հայերի և քրդերի հետ ասորիների միավորման խնդիրը։ Վերջապես թուրքական կառավարությունը եկավ այն-եզրակացության, որ անհրաժեշտ է դիմել ամեն հնարավոր միջոցների, մերձեցման այդ պրոցեսը կանխելու համար և որոշեց ուժի միջոցով ճնշել երեք ժողովուրդների միջև եղած հակաթուրքական տրամադրությունները։ Օսմանյան բանակները շուտով (1766 թ. ամռանը) շարժվեցին Մուշ։ Բանակի հրամանատարությանը առաջադրված էր Մախսուտ Բեկի կառուցած բերդերը քանդել և կտրել նրա գլուխը։ Չենք կասկածում, որ թուրքական կառավարությունը հայ և քուրդ ժողովուրդների մերձեցման մասին առատ նյութեր ունենալու հետ միասին, ծանոթ էր նաև Հովնանի դեմ Հայոց կաթողիկոսի գրած բանադրանքին, որտեղ Հովնանը մեղադրվում էր ազգավնաս գործունեության և օսմանյան կառավարության նկատմամբ ունեցած թշնամական վերաբերմունքի մեջ։ Կաթողի-

կոսը բանադրանքի թղթով, ինչ խոսք, հարված էր հասցնում իր հակառակորդին՝ Հովնանին և կամա թե ակամա դրանով կովանները էր տալիս օսմանյան կառավարությանը և միաժամանակ Մախսուտ Բեկին շարքից հանելու նպատակ ուներ։ Ստացվում էր այնպես, որ կառավարությունը հարված էր հասցնում Մախսուտ Բեկին, իսկ կաթողիկոսը՝ Հովնանին։ Թե կառավարության և թե կաթողիկոսի հարվածները նշանակում էին նաև, որ հարված էր ստանում տարիների ընթացքում երեք ժողովուրդների միացյալ ապստամբությունը նախապատրաստելու և սկսելու փայփայված գործը։

Շուտով երեք փաշաների գլխավորությամբ օսմանյան բանակը սկսում է իր արշավանքը դեպի Մուշ։ Մախսուտ Բեկի ուժերը կատաղի պայքար են մղում այդ բանակի դեմ, պահպանելով բերդերը։ Այլ վիճակ ապրեց Հովնանը։ Բանակի հրամանատարությունը մի ջոկատ է ուղարկում Մշո ս. Կարապետ վանքը, Հովնանին կալանավորելու և Կոստանդնուպոլիս տանելու համար, սակայն վանքի վանահայրը իմանալով այդ մասին, հեռանում է այնտեղից դեպի Բալու, իսկ միաբանությունը ժամանակավորապես ցրվում է։ Հովնանի դեմ գործում է ոչ միայն թուրքական ջոկատը, այլև հայոց կաթողիկոսը, որը մինչև թուրքերի հարձակումը վանքի միաբանությունը բաժանել էր երկու մասի, Հովնանի հակառակորդ Պետրոս վարդապետին նշանակել էր վանահայր և առաջարկել էր Կոստանդնուպոլսի հայ պատրիարքին նրան հաստատել։ Հովնանը ստիպված նամակ է գրում կաթողիկոսին, որպեսզի նա օգնի իրեն Բ. Դռան և պատրիարքարանի միջոցով կարգավորելու վանքի գործերը։ Այս գործում աշխատանք է տանում նաև Մախսուտ Բեկը, որը ստիպում է միաբանության երկու կողմերին էլ գրել նամակ Ամենայն հայոց կաթողիկոսին Հովնանին կրկին յուր պաշտոնին վերահաստատելու մասին։ Գրիգոր Բասմաճյան պատրիարքի խորհրդով Հովնանը մեկնում է Կոստանդնուպոլիս։ Հայոց կաթողիկոսը ավելորդ գլխացավանքից ազատվելու նպատակով խնդրում է այս անգամ պատրիարքին և իշխանություններին օսմանյան կառավարության միջոցով նորից Հովնանին հաստատել վանահայրության պաշտոնին։ Եվ այսպիսով, Հովնանը նորից ստանձնում է ս. Կարապետ վանքի վանահոր պաշտոնը։

Հարկ է նշել, որ Տարոնը 1768 թ. կդառնար օսմանյան զորքերի արշավանքի ուղղությամբ, եթե նույն թվականին չսկսվեր ռուս-

Թուրքական պատերազմը։ Եղած տեղեկությունների համաձայն, Հովնանը 1768—70 թվականներին Տարոնում էր, ապա անցնում է Կոստանդնուպոլիս։ 1770—80 թթ. նորից Տարոնում էր, որպես վանքի վանահայր։

1768—74 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հայկական հատվածներում, Արևելյան և Արևմտյան Հայաստանի հայերի մոտ այն հույսը կար, որ ռուսական զորքերը, գրավելով Անդրկովկասը, հնարավոր է, որ արշավեն դեպի Վան, դեպի Մուշ։ Այս հույսը մեծ ոգևորություն էր առաջացրել Մշո ս. Կարապետ վանքի վանահայր Հովնանի մոտ, բայց այն ի դերև եղավ։

Այսպիսով, Հերակլի գլխավորությամբ նախատեսվող արշավանքը չկայացավ, իսկ Վրաստանում գտնվող ռուսական զորամասը շատ փոքր էր և ուներ ընդամենը 3767 զինվոր[1], որը և որոշող դեր չէր կարող կատարել ապագա պատերազմում։

1780-ական թվականների սկզբից արդեն Տարոնում հրապարակի վրա չէին ոչ Մախսուտ Բեկը և ոչ էլ Հովնան եպիսկոպոսը։ Հովնանին փոխարինում է Աստվածատուր Նշեցին (Մոտկանի Նիշ գյուղից), իսկ Մախսուտ Բեկին՝ Մուրադ փաշան, սրանք էլ շարունակում են իրենց նախնիների սկսած հայ-քրդական բարյացակամ հարաբերությունները։ 1784 թ. երկրաշարժի պատճառով քանդվեց ս. Կարապետ վանքը և նրա միաբաններից 32 հոգի մնացին փլատակների տակ։ Մուրադ փաշայի օգնությամբ Աստվածատուր Նշեցին վերանորոգում է վանքը։ «Այս մեծ շինությունը գլուխ բերելու համար Աստվածատուր վանահայրը ժողովարարության նպատակով կը պտտի Սասունի բոլոր գավառները և մեծ եկամուտ կբերի վանքին»[2]։

Այդ ժամանակ էր, որ Բայազետի փաշան ցանկացավ արշավել դեպի Տարոն։ Մուրադ փաշան զորքի գլուխ անցած հակառակորդին դիմավորեց Ալաշկերտի մոտ, ջախջախեց նրա ուժերին, աղատելով Տարոնի հայությանը և քրդությանը արշավանքի սարսափներից։ Միաժամանակ նա շարունակում էր երկու ժողովուրդների միջև խաղաղությունը պահպանելու և նույն հողի վրա հաշտ ապրելու իր նախորդների քաղաքականությունը։

---

1 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հատոր 4, էջ 217։

2 Պատմություն Տարոնի աշխարհի, պատմագրեց Կ. Սասունի Պեյրութ, 1956, էջ 167։

Նշենք, սակայն, որ Աստվածատուր Նշեցու և Մուրադ փաշայի միջև 90-ական թվականներին սկսվում են սառը հարաբերություններ և վանքի ունեցած պարտքի դիմաց 1793 թ. Նշեցուն տանում են էրզրում և բանտարկում։ Հենց նույն թվականին Ա. Նշեցուն հաջորդում է Աղբեղ վանահայրը, որը մեծ ջանքերի գնով կարողանում է վճարել վանքի 300 քիսա պարտքը (մի քիսան 500 ղուրուշ է) և պաշտոնավարում է ս. Կարապետ վանքում մինչև 1807 թվականը։

Մատենադարանում է գտնվում Մուշի Մուրադ փաշայի նամակը ուղարկված Դանիել սրբազանին (կաթողիկոսին), որի վրա մի այլ ձեռագրով գրված է. «Առ Դանիել սրբազանն Մուրադ փաշայի գիրն է վասն Աղպեղին ամբաստանութիւն»։ Այս նամակի մեջ ամբաստանելով Աղբեղին, նա խնդրում է նրա փոխարեն նշանակել Էջմիածին գործուղված Մշո ս. Կարապետ վանքի երկու վարդապետներից մեկին։ Ահա այդ նամակի տեքստը.

«Ի Մուրատ փաշայէն շատ սերով բարև իմ. տօստ և բարեկամ Դանիէլ մեծի խալիֆայիտ՝ հարցանեմ զքաղցրիկ խաթրիկդ, ի բարին և զկնի հարցմանն ապա մալում լինի հրամանույդ՝ գարնանէ, որ զձեզ տեսա՝ շատ սիրեցի և զքոյ խասուրաթ կու քաշէի. և այժմ լսեցի որ քոյ խնգիրքդ կատարէ ավելի շատ ուրախացա և երկու Յովաննէս վարդապետին իզին ադին մեզանէ և եկին առ քեզ. զայս գիրս գրեցի քեզ որ մեր սէր և մուհապեթ միշտ հետ միմեանց լինի. որպես որ կու գան վարդապետք թող խօսին, ինչ-որ խօսին սբ. Կարապետու համար ականջ անես երկուսն էլ սուտ խօսող մարդիկ չէն, և քոյ ծառայքն էն թե կամիս որ ձեր վանքն շեն մնայ՝ և անցեն օլին զրոյցքն է բարձուի յաշխարհէն. յայս երկու վարդապետաց որ եկին զմինն անես առաջնորդ սուրբ Կարապետու Քերմանով և կոնտակով՝ քո գրով և իշխանաց արդովն և յղես որ գան. և ինձ գիր մը գրես իշխանաց մօհրովն ևս լինի որ Յակոբ վարդապետեն հիսապ տեսնամ, և ինչպես կամիք՝ այնպես անեմ, ապականեց զվանքի անունն զմեր անուն. զվարդապետաց անուն և զերկրիս ահա այսպես իմանաս՝ և կատարես. և զքաղցը հաղարդ՝ սուրբ Յովհաննէս վարդապետից վրա պահես։

Ողջ լեր։ (Ստորագրություն չկա, կնիք)» [1]

---

1 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 11, վավ. 245։

Փաստաթղթի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Մուշի փաշաները զբաղվում էին ոչ միայն վանահայրերին փոխելու և այդպես պաշտոնում իրենց ուզած մարդկանց նշանակելու հարցով, այլև հենց իրենց պաշտոնը ձեռք բերելու համար միջնորդում էին Կոստանդնուպոլսի պատրիարքին հայ ազդեցիկ ամիրաների և անգամ Ամենայն հայոց կաթողիկոսի առջև, որպեսզի կարողանային սուլթանական արքունիքից ձեռք բերել փաշային տվյալ պաշտոնին նշանակելու մասին ֆերմանը։ Այսպես, Կաթողիկոսական դիվանում պահպանված է Ամենայն հայոց կաթողիկոսի գրությունը պատրիարքին այն մասին, որ Մուրադ փաշան մահացել է և խնդրում է օգնել նրա եղբորը Յուսուֆ բեկին փաշա նշանակելու գործում։ 1808 թ. Դանիել կաթողիկոսը Կոստանդնուպոլսի պատրիարքին գրում է. «Այլ այժմ շեյխ Հաճի բեկն առ մեզ զգիր էր մատուցել 'ի ձեռն սոյն այս գրաբեր Հաճի Հասան անուն Դավրեշի, որով յայտնէ զվճար կենաց Մուրատ փաշայ եղբօր իւրեանց և մեր հարազատ բարեկամին և վասն փոխանորդին՝ 'ի տեղի նորայ իւրեանց փոքր եղբայր Իւսուֆ բեկի ընտրումն 'ի հարկանէ բնակչաց կողմանցն Մշո երկրի...»[1] Պարզ տաած, խնդրում են միջնորդել օսմանյան պաշտոնավորների առջև, որպեսզի Մուրադի փոխարեն նշանակվի նրա եղբայր Յուսուֆը։ Յուսուֆին փաշա կարգելու նպատակով այդպիսի մի գրություն է գրել էջմիածնի գահակալը նաև Կոստանդնուպոլսի Աղնավուրյան Կարապետ ամիրային։

Այս վավերագրերը խոսում են այն մասին, որ քրդական վերնախավը այդ ժամանակ օգտագործում էր փաշայության աստիճանին հասնելու համար հայ հոգևոր երկու կենտրոններին՝ Կոստանդնուպոլսի պատրիարքին և Ամենայն հայոց կաթողիկոսին և Կոստանդնուպոլսի ազդեցիկ ամիրաներին, նախօրոք վերցնելով Մուշի հայ մեծամեծների կնիքներով և ստորագրություններով թղթեր։ Այդ տարիներին, ինչ խոսք, թուրքական իշխանությունները դեռևս Տարոնում ամուր չէին և արքունիքը հաճախ գումար ստանալով գնում էր այդպիսի գործարքների, իսկ Տարոնի քրդական իշխանության վերացումից հետո քրդական վերնախավից փաշա կարգելու մասին այլևս այդպիսի միջնորդություններ չեղան։ Սակայն XIX դարի սկզբներին արդեն դիպի վատը գնացին հայ-քրդական հարաբերությունները և

---

1 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 19, վավ. 193, թ. 7։

ակսվեցին ուժեղանալ թուրքական փաշաների և քրդական բեկերի անձարձակությունները ու հարստահարությունները։ 1812 թ. Մշո ս. Կարապետ վանքից Ամենայն հայոց կաթողիկոսին Ղուկիանոս աբեղան գրում է, որ Մկրտիչ վարդապետը ցանկանում էր էջմիածին գալ, «բայց իշխող երկրիս՝ այս է փաշայն, ո՛չ կամեցաւ ասելով մնասցէ յաւուրս գարնայնոյ ապա երթիցէս մեծաւ խնդութեամբ հանդերձ իշխանօք երկրիս»[1]։ Այնուհետև նույն նամակում քրդական հրոսակների թալանի մասին արդեն նշվում են հետևյալ տողերը. «Ի զօրաց մարաց անհնարին դառնութեամբ կողոպտեցան կողմանքս այսոքիկ 'ի բազմահոյլ հրոսակաց և ճինից և աւարառուաց, ունայնացեալ յամենայն վայելչութիւնից և դատարկացեալ յամենայն շարժուն և անշարժուն հարկաւոր պիտոից և կապել յետին աղքատութեան կապ յուստի առա այս վախճան անհնարին գոլ վայրեանէած ելանէլ 'ի վանացս և մտանել 'ի գործ ինչ ժողովարարութիւն[2]։

Մի այլ վավերագրերում, որ գրված է 1813թ. մարտի 1-ին Մշո ս. Կարապետ վանքից Կարին Ներսես վարդապետին ժողովրդի կրած տառապանքների մասին, նշում է. «'Ի ձեռն դանազանից նեղութիւնից 'ի վերայ հասելոց, և բազմակերպ վշտօք տարագիր լեալ դեգերողաց բնակողացն մերում յերկրի. յորում գրեթէ ոչ մնաց երբեք տեղիս՝ շինութիւն. միանգամայն 'ի հեծեծ լաղօրաց ամայացավ յերկիրս Մշու. և անողորմ ազգքն մարաց և այլասեռից բնաւին ո՛չ թողին շինութենէ նշմարս»[3]։ Այնուհետև նշվում է նույն վավերագրում վերնախավի ժողովրդի նկատմամբ պահանջների վերջ չունենալու մասին ասելով. «Մանավանդ թե գայլաբարոյ իշխողաց պահանջումն որ սակաւ բանիւ ոչ յադենան»[4]։

Այս բոլորին եթե ավելացնենք նաև հայ եկեղեցականների մի մասի ժողովրդից շորթելու վերաբերմունքը, պարզ է, որ անտանելի էր դառնում ժողովրդի կյանքը։

Մատենադարանում է գտնվում Եփրեմ կաթողիկոսի շրջաբերականը Բայազետի, Վանի, Մուշի եկեղեցականներին այն մասին, որ կան եկեղեցականներ, որոնք «բռնութեամբ կամ կաշա-

---

1 Մատենադարան, Կաթ. ,իվան, թղթ. 23, վավ. 32, թ. 1։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը, թղթ. 24, վավ. 16։

4 Նույն տեղը։

ոչ յանդգնեցի զգործն զայն գործել, այսինքն յափշտակել պվիճակս այլոց»[1]։ Վերը նշված վայրերում այդ ժամանակ կային պատարիկաշրջիկ հոգևորականներ, որոնք խաբում էին միամիտ ժողովրդին, խախտում էին գոյություն ունեցող եկեղեցական կարգ ու կանոնը։ Իր շրջաբերականի մեջ Ամենայն Հայոց Հայրապետը այդպիսի հոգևորականներին անվանում է «սուտ առաքեալք, մշակք նենգաւորք»[2] և ապա բերում է «հռչակաւոր անպպտամն այն քեալ Ղուկաս կոչեցեալ ամենադատապարտ եպիսկոպոսն Աղթամարու՝ որ գոլով ինքն եպս. Աղթամարու և ձեռնադրեալ ի վերայ վանից կամ միոյ ուրուք վիճակի նորա»[3] խոսում է այն մասին, որ նա փողի միջոցով անօրինական օծումներ է կատարում։ Թևավոր խոսքով ժողովրդի ծանր վիճակի մասին ժողովուրդը այդ ժամանակ ասել է. «Մեր երկրի խեր գացեր շատ մնացեր է»[4]։

Հովնանի գործունեության մասին հետագայում եղան նաև բայասական կարծիքներ, ոմանք ցանկացան առհասարակ ժխտել Հայ ազատագրական շարժման այս ակտիվ գործիչներից մեկի տարած աշխատանքը։ Այսպես, Հովնանի մասին գրելով Մ. Օրմանյանը գտնում է, որ նա ամդեցի է և Սիմեոն Երևանցի կաթողիկոսը նրան անվանում է այն հոգևորականներից, «որոնք զանազան դիտումներե մղուած հռոմեականության մեջ իրենց դյուրություններ գտնել կարծեցին»։ Ելնելով կաթողիկոսի բանադրանքի թղթից, նա Հովնանին համարում է մի հափշտակիչ, որը «մինչև իսկ հոգևոր տեր (ընդգծումը հեղինակինն է։— Հ. Պ.) կոչում առնելու և հայրապետական ձևեր գործածելու հանդգնած էր»[5]։

Հովնանը, ըստ նրա «առաջնորդներ կը փոփոխեր, ուխտավորներ կը կողոպտեր, հայրապետական կոնդակներ կը գրեր, և շնորհներ բաշխելու կը հանդգներ, եկեղեցական գանձեր և հարստություններ կը գրավեր, նվիրակներ կը ղրկեր ամեն կողմ, ս. Կարապետի անունը կը շահագործեր, և Ալայատին Պեյզատե Մախսուտ պեյ Տերեպեյին (ընդգծումը մերն է։— Հ. Պ.) կամ

---

1 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 24, վավ. 96, թ. 1։

2 Նույն տեղը, թ. 3։

3 Նույն տեղը, թ. 4։

4 Նույն տեղը, թղթ. 185, վավ. 48։

5 Ազգապատում, գրեց Մ. Օրմանյան, Բ հատոր, մասն Գ, Զէյթուն, 1960, էջ 3084։

տեղական բռնապետը իրեն շահերուն մասնակից ընելով»[1]։ Ունե՞ր ուրիշ վավերագրեր և փաստեր Մ. Օրմանյանը, բացի Սիմեոն Երևանցու բանադրանքի թղթից և հիշատակարանից։ Մեր կարծիքով հայ եկեղեցու հոգևոր հայրերից ամենանշանավորներից մեկը ոչ մի փաստ չուներ Հովնանին այդպիսի մեղադրանքներ տալու համար, նրա ձեռքի տակ են եղել կաթողիկոսի գրած նամակները և բանադրանքի թուղթը։ Վերը բերված քաղվածքը խոսում է այն մասին, որ Մ. Օրմանյանը հալած յուղի տեղ է ընդունում Սիմեոն Երևանցու Հովնանին տրված «մեղադրանքները» և կրկնում է Սիմեոն Երևանցուն, առանց քննադատական մոտեցում ունենալու տվյալ խնդրին։ Բազմավաստակ պատմաբան Արշակ Ալպոյաճյանը նույնպես ոչ մի հիմք չունենալով Հովնանին անվանեց խաչագող և երազատես[2]։

Այսպիսով, XVIII դարի երկրորդ կեսին հայ, քուրդ, ասորի ժողովուրդների ցանկությունները ազատագրական պայքարի միջոցով թուրքական տիրապետությունը տապալելու և Վրաստանի օգնությամբ անկախ պետություն ստեղծելու մասին, չիրականացավ և նորից այդ ժողովուրդները մնացին օսմանյան ռազմավատատիրական պետության տիրապետության տակ։

---

[1] Ազգապատում, գրեց Մ. Օրմանյան, Բ հատոր, մասն Գ, Գէյրութ, 1960, էջ 3064։

[2] Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն Եւրոպիոյ Հայոց, Գահիրէ, 1952, էջ 1068։

Գլուխ երկրորդ

ՄՈՒՇԸ ԵՎ ՍԱՍՈՒՆԸ ԹԱՆԶԻՄԱԹԻ ԷՊՈԽԱՅՈՒՄ

XIX դարի սկզբին Հայաստանի տերիտորիան շարունակում էր բաժանված մնալ երկու պետությունների՝ Օսմանյան Թուրքիայի և Պարսկաստանի միջև։ Հայկական պարից դեպի հարավ ընկած Արևմտյան Հայաստանը գտնվում էր Թուրքական կայսրության, իսկ Արևելյան Հայաստանը՝ Պարսկաստանի տիրապետության տակ։ Այդ ժամանակ Մուշի սանջակի մեջ մտնում էր նաև Սասունը։

XIX դարում հայ-քրդական հարաբերությունները Տարոնի աշխարհում այլևս նախկինը չէին, դրանք սկսել էին սառել։ 1807 թ. սկզբից Մշո ս. Կարապետ վանքի վանահայր Հակոբը չկնաղանդվեց Ալեդին տան Յուսուֆ փաշային, որը բռնությամբ և հոխորտանքով ցանկանում էր վանքից հարկ հավաքել և ընծաներ ստանալ։ Չհասնելով նպատակին, նա կազմակերպեց այդ վանահոր սպանությունը, որ և շատ վատ ազդեց Տարոնի հայ հատվածի վրա։ Դրանից հետո վանահորը փոխարինեց Պետրոս Կուրավցին, որը Մուշի առաջնորդը և ս. Կարապետ վանքի վանահայրն էր։ Նրա ժամանակ քրդական Հասնանցի աշիրեթը Ալեդին տան ներկայացուցիչների հետ միասին սկսեցին ավելի հարստահարել և ճնշել Մշո դաշտի հայ հատվածին։ Նրանք «տարուան երեք եղանակներուն՝ գարուն, ամառ և աշուն, պանոնք իրենց հաշուոյն աշխատացնէլէ զկնի՝ ձմեռն այլ խշլայ գրութեամբ իրենց բոլոր անասուններ՝ ձի, ոչխար, տաւար կը ցրուէին անոնց վրայ պահելու մինչեւ գարնան և եթէ այդ անասուններէն մէկ սատկէր ժողովուրդ պարտական կըլլար անոր վոխարեն երկու հատ վճարել և գոհացնել»[1]։

[1] *Մատենադարան, ձեռ. № 5900, թ. 516—518 կամ Գաւազանագիրք յաղորդութիւնք վանահարց ուխտիս ս. Կարապետի Տարօնոյ, Երուսաղեմ, 1912, էջ 100։*

Այս մի անտանելի դրություն էր ստեղծում Տարոնի հայ հատվածի համար։ Այնուամենայնիվ, Պետրոս Կուրավցին կարողացավ օսմանյան կառավարության միջոցով վերացնել ղշլայի դրությունը և Տարոնի ժողովուրդը ազատվեց այդ ծանր բեռից։ Ալեդին և Մախսուտ բեկերի հաջորդների ժամանակ երկու ժողովուրդների միջև հրապարակ եկավ իրար չվստահելու վիճակ, որը տարավ դեպի երկու ժողովուրդների հարաբերությունների սառեցմանը և ապա ավելի ու ավելի բարդացմանը։ Այս հարցում վճռական դեր էր ստանձնել օսմանյան կառավարությունը, որն արդեն ուժեղացրել էր հայ և քուրդ ժողովուրդներին իրար դեմ հանելու իր քաղաքականությունը։

Մատենադարանում գտնվող Կարապետ վարդապետ Լուսարյանի «Պատմութիւն սրբոյ Հովհաննու Կարապետի և հաղորդութիւնք վանահարց ուխտին Տարօնոյ սուրբ Կարապետի Մշոյ» աշխատության մեջ հետաքրքրական փաստեր կան Պետրոս Կուրավցու մասին, որի ժամանակ «Մշո աշխարհը կը կառավարվեր Ալետին պեկի տուն ըսված թուրք միապետական փաշաներով (ընդգծումը մերն է։— Հ. Պ.). Հասանանցի աշիրեթ մեկ կողմեն և Ալետին պեկի տուն մյուս կողմեն, լեցվան Մշո դաշտը»[1]։ Թուրք միապետական փաշաներ արտահայտությունը, անկասկած, ասում է այն մասին, որ Ալեդին տան փաշաները իսլամը ընդունելուց հետո իրենց թուրքեր էին համարում։ Մուշ քաղաքում կային այդպիսի քուրդ և հայ ընտանիքներ էլ։ Ձեռագրի մեջ նշվում է նաև այն մասին, թե ինչպես վերևում ասված վանահայրը կարողացավ թուրքական կառավարության միջոցով վերացնել կշլակությունը։

Մատենադարանում է գտնվում Պետրոս Կուրավցու նամակը գրված 1814 թ. Հովակիմ Լազարյանին, որի մեջ նշված է այն ծանր կացության մասին, որ գտնվում էր այդ ժամանակ Մշո ժողովուրդը և սուրբ Կարապետ վանքը, որը «իբրև սեփական գերի է ի ձեռս նոցա, առ որ և ընդ մեծագումար պարտուք հեծէ հանապազ նոյն հրաշալի սուրբ վանքն»[2]։ Այսքանից հետո Կուրավցին խնդրում է Լազարյանին, օգնել վանքը այդ վիճակից հանելու գործում։

XIX դարի առաջին քառորդին Տարոնը կանգնած էր պաբս-

---

[1] Մատենադարան, ձեռ. № 5900, թ. 516—18։

[2] Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գ. 11, վավ. 298

կական արշավանքի վտանգի առջև։ 1822 թ. պարսկական բանակները Աբաս Միրզայի գլխավորությամբ արշավեցին դեպի Բուլանըխ, Խնուս, Վարդո և գրավելով այդ շրջանները, անցան Մյո դաշտ։ Այս ծանր օրերին Մուշի և Սասունի քուրդ և հայ բնակիչները հավաքվեցին Մուշ և սկսեցին կազմակերպել իրենց քաղաքի պաշտպանությունը[1]։ Շուտով քաղաքի պաշտպանների մեջքն անցան երկու պարսիկ խաներ, որոնց նրանք սպառնացին սպանել։ Լսելով այդ մասին, պարսկական շահը ստիպված եղավ այնտեղ ուղարկել Սելիմ փաշային և հասկացրեց Մուշի պաշտպաններին, որ եթե նրանք ազատ-արձակեն գերի ընկած խաներին, ապա կռիվը կդադարի, կտիրի խաղաղություն։ Մուշի պաշտպանները այդպես էլ արեցին, կռիվը դադարեց և պարսկական ուժերը հեռացան Տարոնից։

Մատենադարանում գտնվող Վանի Քոլոզ (Հովհաննես Ամիրգասյան) վարդապետի «Տեսարան դիպուածոց Վասպուրականի» ձեռագիր պատմական պոեմում նշվում է 1822 թ. պարսկական բանակի դեպի Վասպուրական, ապա Տարոն կատարած արշավանքի մասին։ Պոեմի տողերից երևում է, որ այդ արշավանքի ժամանակ շատերը «Անկան 'ի Վան 'ի Տոսպ յայն ժայռն ամրակուռ», սակայն պարսիկները վերցնում էին նաև գերիներ և գերվելիս շատերը բազմաթիվ գավառներից, որոնց թվում նաև «Խոռխոռունիք Աղիովիտ, Տարօն, Արճեշ, Բզնունիք, Անձևացիք, Կաղանովիտ Արևմաստան և Աղբակ եւ Հայկաձոր և ուր կոխեցին ոտք որմզդեան դժնդակ»[2]։

XIX դարի առաջին տասնամյակների հայ ժողովրդի արևմտահայ հատվածի տնտեսական ծանր վիճակը պատկերացնելու համար շատ հետաքրքրական է Կոստանդնուպոլսի Պողոս Ակրիանապոլսեցի պատրիարքի 1821 թ. ապրիլի 27-ի շրջաբերականը, ուղղված գավառների առաջնորդներին, որի մեջ ասված է. «Առաքեցաք առ քեզ կոնդակս եւ գիրս, զգուշացնել զբոլոր ժողովուրդս վիճակի ձերոյ, զի մի ոք ընդ ապստամբացն լինելով կամակից ի մահ մատնեսցեն անխնայ համայն ընտանեօք, ընդ նմին եւ ազգս մեր առաջին տերութեան վատահամբաւ երեւեսցի...»[3]։

---

1 Տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, հատ. Ժ, էջ 516։

2 Մատենադարան, ձեռ. № 9424, թ 118։

3 Լ. Զորմիսյան, Համապատկեր արեւմտահայոց մեկ դարու պատմութեան, Բ հատոր, Գէյրութ, 1974, էջ 91։

Այդ շրջաբերականում Կոստանդնուպոլսի հայ հոգևոր պետը, հորդորում էր իր ժողովրդին չմասնակցել կայսրության դեմ սկսվող ոչ մի ընդվզումի։ Շրջաբերականի մասին տեղյակ պահվեց թուրքական կայսրության տերիտորիայում և Արևմտյան Հայաստանում ապրող բոլոր հայերին։ Այստեղ, ինչ խոսք, կա մի կարևոր հանգամանք ևս, այն է, որ պատրիարքը պահանջում էր իր հոտի հովիվներից և անդամներից վայելուչ վերաբերմունք ունենալ մնացած ազգությունների նկատմամբ, իսկ վերջում կոչում էր հնազանդություն գտնելով, որ «մեն ոայա եմ, պարտիմ տերութեան հնազանդիլ եւ այլազգաց ամենեցուն եւ յարաժամ պղծիլ կենաց արքային մերոյ...»[1]։

Լ. Զորմիսյանն ինչ-որ չափով իրավացի է, երբ գտնում է, որ Վասպուրականում և Մուշում մինչև 1860-ական թվականները ազատագրական շարժման մեծ ճիգեր չեն եղել, բացի Սասունի լեռնաշխարհում ծվարած գյուղերից, որոնք երկար դարերու վարժությունը ստացած էին կիսանկախ կյանքի մը և միշտ մերժած քուրդ աշիրեթներու հարկատվությունը և նույնիսկ պետության անմիջական և ուղղակի հսկողությունը...»[2]։

1821—28 թթ. Ալեդին փաշայի տան մեջ սկսեցին երկպառակությունները, որը և բացասական ազդեցություն էր ունենում քուրդ և հայ ժողովուրդների հարաբերությունների վրա։ Խնդիրը նրանում էր, որ այս տան շառավիղներից ոմանք, ունենալով համապատասխան զինված ուժեր, սկսում էին հայ գյուղերի մելիքների և տանուտերերի պաշտոնները վաճառել։ Գործը հասավ նրան, որ վանականներից ոմանք այդ բեկերից կաշառքի միջոցով սկսեցին վանական պաշտոններ ստանալ։

1828 թ. Տարոնի քրդական մասի ղեկավարն էր Էմին փաշան, Ալեդին տան Յուսուֆի որդիներից մեկը։ Թուրքական կառավարությունը սատիպեց նրան ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հավաքել իր անկազմակերպ ուժերը, արշավել դեպի Շիրակ և կռվել ռուսական բանակի դեմ։ Ինչպես հայտնի է, այդ ժամանակ ռուսական զորքերը ազատագրել էին Արևելյան Հայաստանը և Պարսկաստանի հետ կնքվել էր Թուրքմենչայի պայմանագիրը, որով էլ Արևելյան Հայաստանը անցավ Ռուսաստանի տիրապետության տակ։ Դրանից հետո սկսվեց ռուս-թուրքական

---

1 Լ. Զորմիսյանի նշվ. աշխ., էջ 92։

2 Նույն տեղը, էջ 142։

պատերազմը։ Էմին փաշան քրդական իր ուժերի հետ միասին գնաց դեպի Աբփաշայ՝ դիմակայելու ռուսական առաջխաղացմանը։ Հենց առաջին հանդիպման ժամանակ քրդական այդ անկազմակերպ և կռվի համար ոչ պիտանի ուժերը ջախջախվեցին և նրա մնացորդները խուճապահար թողնելով պատերազմի դաշտը, թաքցին վերադառնալ իրենց տները։ Ճանապարհին ռուսական բանակից հարված ստացած քրդական ուժերի մնացորդները սկսեցին թալանել հայկական գյուղերը։ Այս բոլորը ուղղված էր հայ ժողովրդի դեմ և կատարվում էր թուրք վերնախավի հրահրմամբ, քանի որ հայ ժողովրդի արևմտահայ հատվածը ուրախությամբ էր ընդունում ռուսական առաջխաղացումը, որը նպաստելու էր նրա համար բնաջնջումից ազատվելու հնարավորություն։ Սակայն այդ ժամանակ շատ բան չհասկացան քուրդ վերնախավի ներկայացուցիչները, որոնք չունեին արդեն Ալեդին և Մուխսուտ բեկերի և ս. Կարապետ վանքի վանահայր Հովնանի ժամանակ եղած ազատագրական գաղափարները։

Այսպիսով, հայ և քուրդ ժողովուրդների հարաբերությունների երկնակամարը գնալով ավելի ու ավելի էր մթագնում ու կամաց-կամաց ստանում էր տխուր կերպարանք։ Այդ կատարվում էր ոչ թե միանգամից, այլ դանդաղ և այս հարաբերությունները բարելավվելու ոչ մի հույս չէին ներշնչում։ Շուտով սկսեց սկսվեր երկու ժողովուրդների միջև մի մեծ անջրպետի՝ խորխորատի առաջացումը, որը և քանի գնար պետք է խորանար և հեռացներ իրարից դարերով կողք կողքի ապրած ժողովուրդներին։ Ճիշտ է նկատել ուսումնասիրողներից մեկը գրելով. «Հետագային քուրտերն ալ հայերու պես պիտի կոտորվեին, բնաջնջվեին և տեղահանվեին։ Անոնց խելքն ալ իրենց գլուխը պիտի գար, պիտի զղջային, հայության պիտի գործակցեին, սակայն շատ ուշ, երբ երկու ազգերն ալ բնաշխարհին մեջ այլևս գոյություն չունեին»[1]։

Մեր ձեռքի տակ է Մշո ս. Կարապետ վանքի վանահայր Պետրոս վարդապետի նամակը գրված 1825 թ. մարտի 22-ին, որի մեջ նկարագրվում է այն դժվարին վիճակի մասին, որի մեջ ապրում էր Տարոնի հայ հատվածը իր հայրենիքում։ Այդ ժողովուրդը, ինչպես երևում է նամակի տողերից, գտնվում է «ի ձեռն այս գազանաբարոյ մարաց մեծաց և փոքունց զի 'ի ձեռն

---

1 Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 178։

բազմաւորակի չ. բահնար անորէնութիւնից իւրեանց՝ զմեզ ի յետին փչումն շնչուն հասուցին»[1]։ Թէ ինչ չափերի է հասել քուրդ բեկերի հարստահարութիւնները, այդ մասին խեղճ հոգևորականը գրում է. «Ավա՜ղ աւուր ծննդեան իմոյ, երանի թե չէի ծնել բնաւին, զի ո՛չ տեսանեի զայսպիսի օր սգոյ և ողբերգանաց. և չէր դիպել անձն իմ յանզերծանելի արիւնռուշտ դառնութիւնս»[2]։

Արխիվային վավերագրերը թերթելիս երևում է, որ Պետրոս վարդապետը հաճելի մարդ չի եղել Մուշի քուրդ փաշայի համար, ուստի նա ցանկացել է Մշո ս. Կարապետ վանքի վանահայրը լինի իր ուզած մարդը և ինչպես երևում է 1827թ. ապրիլի 1-ին Մուշից ստացված մի այլ նամակից, փաշային հաջողվում է իր հոգևոր պաշտոնից հանել Պետրոս վարդապետին և նրա փոխարեն նշանակել Վարդան եպիսկոպոսին, որը և այդ նամակի տակ ստորագրել է որպես «օրինաւոր առաջնորդի սրբոյ Կարապետի վանից Վարդան խոնարհ եպիսկոպոս»[3]։ Միաժամանակ այդ նամակից երևում է, որ Կոստանդնուպոլսի պատրիարքը իր մոտ է հրավիրել Կուրավցի Պետրոսին և ազատել է նրան՝ վերջ տալով փաշայի և նրա միջև եղած վեճերին։ Այդ նամակի մեջ այնուհետև Վարդան եպիսկոպոսը գրում է. «Միաբանութիւնք միահամուռ իշխանօք խորհուրդ արարէլ 'ի միջի իւրեանց վերստին ընտրեցին զմեզ 'ի տեղս Պետրոս վարդապետի առաջնորդ. Սորանոր ծանուցանել բդեշխին տեղւոյս և նա առաջնորդական փառօք առաքեաց զմեզ 'ի սուրբ փանս»[4]։ Այս արդեն նշանակում է, որ փաշան ամեն ինչի գնով հասնում էր նրան, որ հրապարակից հեռանա Պետրոսը։

Մի ուրիշ վավերագրից երևում է, որ Մուշի փաշան Վարդան Եպիսկոպոսին առանց ֆերմանի բերել է տվել Բաղեշից։ Այս կապակցությամբ մի այլ վավերագրի մեջ կարդում ենք. «Տավլաթլու Ապտրահման փաշայ աֆանդիս քորք հաքած վախդրն վալինամ սարասքար աֆանդիս իւրեան բանպեհ արաւ որ Մուշ գալուրդ Գորաւցի Պետրոս վարդապետն վանքեն վերուս սապրխ Վարդան վարդապետն Պիթլիզու բերել տաս դնես վանքն Ճավապրն գա-

---

1 Մատենադարան, Կարապետ արքեպիսկոպոսի արխիվ, թղթ. 163, գ. վավ 963։

2 Նույն տեղը, վավ 967։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը։

յուն կուղղրկեմ իւր Ֆերմանն բերել կուտամ»[1]։ Եվ այդպես էլ կատարվում է փաշայի կամքը. Պետրոս Կուրավցին հեռացվում է վանքից և ուղարկվում է ս. Հովհաննու վանքը, նրա փոխարեն նշանակվում է Վարդանը։ Բազմաթիվ վավերագրերը հավաստում են այն մասին, որ սանջակների և վիլայեթների փաշաները ինչպես ցանկացել, այնպես էլ վարվել են հայ հոգևոր պետերի հետ և աշխատել են այնտեղ այնպիսի հոգևորականներ ունենալ, որոնք նրանց ենթարկվեն և նրանց միջոցով յուրացնեն վանքերից և եկեղեցիներից ստացված գումարները։ Վարդան եպիսկոպոսի նամակներից մեկում, որը գրված է 1827թ. մայիսի 16-ին Կարապետ արքեպիսկոպոսին, կարդում ենք. «Փաշայի որդի Աւտրահման՝ երկրիս ներկայ փաշայն կոչեաց և երբեր զմեզ 'ի Բաղեշոյ առ ինքն՝ յասելն թե, սրբազան պատրիարգն զ Կուրաւրի Պետրոս վարդապետն խնդրեալէ. գնա՛յ դու առ այժմ 'ի սուրբ Կարապետ, և նիստ անդր ի վեքիլութիւն. մինչև տեսցուք թէ առ ուր եղերի բան։ Եւ մեր ակամայ կամօք յանձնառու եղեալ՝ և եկեալ նստեցաք, և սպասեմք հրամանաց սրբազան պատրիարգի հօրն մերոյ, և յարգո, ամիրայիցն։

Գիտե սրբութիւն ձեր, զի նախկին սրբազան պատրիարգի հարն մերոյ Պօղոս Արքեպիսկոպոսն զ Հասան դալայի վանքն եւ մեզ. բայց Սելիմ փաշայն ոչ ետ մեզ թոյլ գնալ։ Զի՞նչ հնար, զի 'ի ծածուկ փախչիլ ոչ կարեմ. և հրամանաւ ելանել երկրես՝ ոչ թողուն»[2]։ Այս և մի շարք այլ վավերագրերում ս. Կարապետ վանքի վանահայրի պաշտոնը անվանվում է վեքիլություն (առաջնորդ)։ Եվ ինչպես երևում է, փաշան չի կարողացել ստանալ Ֆերմանը և նոր վանահայր Վարգանը ընկել է ծանր վիճակի մեջ։ Պարզ ասած, հոգևոր պաշտոնները երկրում եղած անիշխանության պատճառով դարձել էին առ ու ծախի առարկա և խաղալիք քրդական փաշաների ձեռքում։ Ուսումնասիրությունից պարզվում է, որ քրդական բեկերն, այնուհետև նրանց փոխարինող թուրքական փաշաները դրամական շահ ստանալու նպատակով վաճառում էին վանքերի վանահայրերի պաշտոնները։ Երևանի մատենադարանում պահպանված Ամենայն հայոց կաթողիկոսին ուղղված մի այլ վավերագրում՝ գրված 1815 թ. հունիսին, որի տակ կան 30 կնիքներ և ստորագրություններ, ասված է այն

---

1 Կարապետ արքեպ. արխիվ, թղթ. 163 գ, վավ. 967 II։

2 Նույն տեղը, վավ. 967 III։

մասին, որ ս. Հովհաննու վանքի վանահայր զիարեթցի Հովհաննես վարդապետը ցանկացել է փաշային կաշառք տալու միջոցով Կոստանդնուպոլսի ամիրաների օգնությամբ զավթել ս. Կարապետ վանքի վանահայր Վարդանի պաշտոնը։ Այդ վավերագրում կարդում ենք. «Քանզի Յոհաննես վարդապետն գնաց փաշա Աֆանգնուս խոսաց թե Վարդան վարդապետն հանե զիս ս. Կարապետի առաջնորդ որա քեզի տարին յիսուն քիսա (25.000 զուրուշ։— Հ. Պ.) սդակ կուտամ բացի Ղանունի զատի մը եռեալ իրաւանցդ և տասն քիսայ (5000 զուրուշ) քահեային խոստացաւ տալ ամենայն տարի...»[1]։

1828—29 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Տարոնի հայ գյուղերը ոչ միայն կողոպտվեցին, այլև թուրքական կառավարության հակառուսական և հակահայկական քաղաքականությունը հասցրեց նրան, որ քրդական զինված ուժերը 1829 թ. հունիսի 29-ին պաշարեցին ս. Կարապետ վանքը ու կողոպտեցին։ Պահպանված տեղեկությունները խոսում են այն մասին, որ վանքի միաբանները զենքը ձեռքին դիմադրություն էին ցույց տալիս քրդական հարձակմանը. «Եվ ահա սասունցի Ղազար վարդապետ, քաջասիրտ լինելով կամեցավ թվանքով զարնել անոնց երևելի Մահմտ անունով քրտին. բայց մյուսներ խորհուրդ չտվին, անոնց թշնամություն չդրգռելու համար. ուստի Սասունցին դիտմամբ նշանելով ձիու տռնախին (սմբակին) զարկեց»[2]։

Մշո ս. Կարապետ գարավոր վանքը անգթաբար թալանվեց, տարան նրա ունեցած անասունները, թանկագին զգեստներն ու սպասքները և այն վերածվեց ավերակի. Վանքի բակում դրված էին թանով լի մեծ պղինձներ։ Քրդական զինված ուժերը ներխուժելով այնտեղ, հանեցին մագաղաթյա ձեռագրերը և լցնելով թանի պղինձների մեջ, փչացրին։ Ս. Կարապետ վանքը թալանելուց հետո նրանք պաշարեցին Մատնավանքը, բայց սկզբում գրավել չկարողացան, որովհետև շրջակա հայ գյուղերի բնակիչները զենքը ձեռքներին, քաջությամբ պաշտպանեցին այն։ Շուտով սկսվում է օրհասական կռիվը վանքի պաշտպանների և քրդական զինված ուժերի միջև, վերջիններիս հաջողվում է պարսպի վրա անցք բացել և ներխուժել վանք։ Պաշտպաններից շատերը զենքը ձեռքին ընկան այս մարտում, որից հետո Մատնավանքը թալանվեց։

---

1 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 243, վավ. 154։

2 Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 179—180։

Մշո ս. Կարապետ վանքը թալանելու պատմությունը պահպանվել է Սասունի Հեթինք գյուղի բնակիչ Սիմեոն Դավթյանի սրտագրության մեջ։ Խոսելով վերը նշված դեպքի մասին, նա գրում է, որ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ «ան նոյն տարին ռուսը առավ Կարին, ու մարացիք (քրդերը,— Հ. Պ.) նայեցան թե իրենք պիտի զրկվին Հայաստան երկրեն, սկսան հարձակվիլ հայոց վրա, ու կողոպտեցին շատ գեղեր և վանքեր, Մշո ս. Կարապետ վանքն ալ մտան և շարաշար թալլեցին»[1]։

Ս. Դավթյանի վկայությամբ հաջորդ տարին «սաստիկ սով եղավ Մշո երկրին մեջ, և շատ մարդիկ փախան ռուսի երկիր և ուրիշ տեղեր գնացին, ոմանք Ճամբուն մեջ, ոմանք տուներուն մեջ կը մեռնեին, հաց ունեցողները զիշեր կեփեին, որ հոտ չիլլե»[2]։

Ջնայած կատարվածին, ինչպես այդ ժամանակ, այնպես էլ հետագայում Մուշում, Խնուսում և այլուր կային շատ մարդիկ, որոնք ցանկանում էին լավացնել հայ-քրդական հարաբերությունները։ Խնուսի Արոս գյուղացի Հրաչյա Տեր-Ղևոնդյանը, լավատեսությամբ էր նայում հայ-քրդական հարաբերությունների բարելավման հարցին։ Նա կազմել էր քրդերեն այբբենարան և քերականություն (հայատառ). «Հետաքրքրական աշխատություն մն, որուն բովանդակությունը վերցված է զուտ քրդական կյանքեն։ Ուրախալի է, որ այս և ապագայի լույս ընծայվելիք նման գրքեր, պիտի աջակցին մեր դրացի քուրդ ժողովրդին մեջ ուսումն ու կրթությունը տարածելու և քաղաքակրթության Ճամբուն մեջ պնելու զանոնք»[3]։

Առաջավոր մտավորականությունը ամեն ինչ էր անում հայ-քրդական հարաբերությունների բարելավման համար։ Այս նույն Դավթյանը գրում է. «Ի Ջմյուռնիա ամերիկացի քարոզիչներ գտա և հետս ավետարան ալ ունեի, որ Երուսաղեմին մեջը ուրիշ մշեցի վրդպ-ի մի օգնությունով մարաց լեզուն թարգմանած էին»[4]։ Լույս տեսավ այդ գիրքը, թե ոչ, չգիտենք։ Սակայն հայ ժողովրդի մտավորականության առաջավոր մասի այդ ձգտումները ձեռնտու չէին օսմանյան կառավարողներին և քրդական աշիրեթների պետավորներին ու շեյխերին, որոնք դեմ էին երկու ժողովուրդ-

---

1 Ս. Մելիքյան, Ծղիշ, Հարք-Խնուս, Անթիլաս-Լիբանան, 1964, էջ 188։

2 Նույն տեղը, էջ 190։

3 Նույն տեղը, էջ 35։

4 Նույն տեղը, էջ 193։

ների մերձեցմանը։ Ս. Դավթյանից էլ առաջ Տիգրանակերտի Ծնունդ Մշո ս. Կարապետ դպրոցի շրջանավարտ Մ. Տիգրանյանը 1845 թ. հրատարակեց քրդերեն ավետարան, իսկ 1858 թ. հայատառ քրդական առաջին այբբենարանը։ Նրա հաշվումների համաձայն Քուրդիստանում 1860-ական թվականներին ապրում էին 20 հազար տուն հայեր, որոնց զգալի մասը այդ ժամանակ հեռացել էր մայրենի լեզվից, քրդերն էր խոսում ասելով ԱՀ ֆլամը կամ ԱՄ ֆլամը (ես հայ եմ, մենք հայ ենք)[1]։ Քուրդիստանի հայերի հոգևոր հովիվ Մ. Տիգրանյանը գրում է նաև այն մասին, որ օսմանյան կառավարությունը XIX դարի 30-ական թվականներից սկսած զինվորական ուժով սկսեց վերացնել քրդական իշխանությունները։ Նրա գրած այդ գիրքը հայերեն և հայատառ քրդերեն է։ Այս հայ ժողովրդի համառոտ պատմությունն է, հայերենից քրդերենի թարգմանած, որտեղ պատմության շարադրանքը հասցրած է մինչև Աբգար թագավորը[2]։ 1845 թ. Մ Տիգրանյանը այցելեց Մուշ, որտեղ նրան ինչ-ինչ պատճառներով 80 օր բանտարկեցին։ Նա բանտարկության օրերին «Ավետարանը հայերեն ի քուրտ լեզու թարգմանեց քուրտիստանցւոց համար, որը և տպվեցավ վերջը»[3]։

Թուրքական կառավարությունը ամեն գնով ցանկանում էր խանգարել երևու ժողովուրդների մերձեցմանը։ Անհրաժեշտ էր ստեղծել ուժերի հավասարակշռություն, հարկավոր էր շեղել քրդական իշխանավորներին և կրոնական պետերին թուրքական կառավարության դեմ պայքարելու ձգտումից և ուղղել հայերի դեմ, որը և, դժբախտաբար, նրանց հաջողվում էր։

Հայտնի է, որ 1839 թ. սուլթան Աբդուլ Մեջիդը Գյուլխանեում տերության բարձրաստիճան պաշտոնյաների, կրոնավորների և օտար պետությունների դեսպանների ներկայությամբ հռչակեց Մուստաֆա Ռեշիդ փաշայի հանձնաժողովի կազմած Հաթը Շերիֆը (հրովարտակ), որը և մեծ աղմուկ հանած փաստաթուղթ էր, որի մեջ դրվում էր Օսմանյան կայսրության մեջ ապրող բոլոր հպատակների, այդ թվում նաև հայերի, ունեցվածքի և պատվի ապահովության հարցը։ Երկրում կարգավորվելու էր

1 Տե՛ս Հայելի գործոց և աշխատութեանց Մկրտիչ վարդապետի Տիգրանյան, Կոստանդնուպոլիս, 1864, էջ 32։

2 Տե՛ս Լապտեր լուսատու յորինեալ ի տէր Մկրտիչ եպիսկոպոսէ Տիգրանեան, Կոստանդնուպոլիս, 1868, էջ 5, 7։

3 Նույն տեղը, էջ 12։

կինոորական ծառայության խնդիրը, հարկերի բաշխումը, բոլոր հպատակները օրենքի առջև հավասար էին հայտարարվում։ Ելնելով վերը նշված հրովարտակից, հայերը սկսեցին բողոքել կենտրոնական կառավարությանը գավառներում եղած քրդական հարստահարությունների դեմ։ Ստանալով այդ բողոքները, Թուրքական կառավարությունը սկսում էր միջամտել այդ գործին և այդ քայլով երկու բան էր շահում։ Ամենից առաջ զսպում էր իր համար ոչ հաճելի քրդական առանձին վերնախավի ներկայացուցիչների սանձարձակությունները, որոնք չէին ենթարկվում կենտրոնական կառավարությանը։ Մյուսն այն էր, որ ենթարկելով քրդական ցեղերին, միաժամանակ նրանց հասկացնում էր, որ այդ հպատակեցման հարցում կառավարությունը մեղք չունի, քանի որ այդ կատարվում է հայերի բողոքներից ելնելով, և այս հանգամանքը, ինչ խոսք, ավելի ու ավելի էր սրում հայ-քրդական հարաբերությունները, մի բան, որը շատ ձեռնտու էր Թուրքական կառավարությանը։

Ինչպես ասվեց, Մշո Ալեդին փաշայի տունը արդեն նախկինը չէր և թուլացել էր, և նրա անդամները նախկին միաձույլ տնդամները չէին, որոնց միջև կային երկպառակություններ։ 1840-ական թվականներին ուժեղացել էին Ջիզիր-Բոհթանի Բեկիր խան բեկը, Վանի Ավդալ բեկը և Խարզանի Սայիդ բեկը, որոնք համախմբում էին իրենց ուժերը Թուրքական կառավարության դեմ ապստամբություն բարձրացնելու և անկախություն ձեռք բերելու համար։ Ապագա պայքարում նրանք նպատակ ունեին միավորել իրենց հետ նաև հայ հատվածներին, ինչպես այդ շատ հաջող կերպով արել էին Մշո Ալեդին և Մախսուտ բեկերը։ Սակայն հայերի մեծ մասը այդ ուժերի հետ չէին միավորվում, քանի որ քրդական ցեղերը սիստեմատիկաբար կողոպտում էին հայկական գյուղերը։ Այս հանգամանքը հայերի մեծ մասին վանում էր քրդերից։ Հայերը ստիպված դիմում էին Կոստանդնուպոլսի պատրիարքին, որը իր հերթին բողոքում էր Բ. Դռանը։ Ա. Պերպերյանի «Հայոց պատմություն» աշխատության մեջ պահպանվել է հետևյալ տեղեկությունը. «Բնակիչք Վանայ ոչ կարելով այլևս տոկալ անըմբեր տառապանաց՝ զոր հասունացնեն Մարք 'ի վերայ նոցա, որոշեալ են ի միջի իւրեանց խոյս տալ ընտանեօք հանդերձ եւ գաղթել 'ի Ռուսաստան»[1]։

---

1 Ա. Պերպերյան, Պատմություն հայոց, Կոստանդնուպոլիս, 1871, էջ 322։

Թուրքական կառավարությունը, միջամտելով հայ-քրդական հարաբերություններին, ամենից առաջ նպատակ ուներ քրդերի միջոցով հաշվեհարդար տեսնել հայ խազազ բնակչության հետ, ճզմել և չարքից հանել քրդական անհնազանդ բեկերին և դրանով էլ միաժամանակ ոտրաշահել հայերին։ Ըստ Ա. Պերպերյանի, օսմանյան կառավարությունը 1849 թ Օսման փաշայի գլխավորությամբ մի բանակ ուղարկեց դեպի Վան՝ քրդական ապստամբությունը ճնշելու համար, որը հարձակման անցավ ապստամբների դեմ։ Քրդական անյազմակերպ ուժերը չկարողացան դիմանալ նրա ճնշմանը և ստիպված տեղի տալով՝ ենթարկվեցին։

Կոստանդնուպոլսի այդ ժամանակաշրջանի հայ պատրիարքների մեծ մասը աշխատում էր իր ժողովրդին անպայման ենթարկել օսմանյան կառավարությանը և միջին դիծ տանել հայ ժողովրդի և Բ. Դռան միջև։ Շատ դեպքերում ելնելով Բ. Դռան ճնշումից, նրանք այնպիսի կոնդակներ էին հրապարակում, որոնք ոչ միայն չէին օգնում, այլև ավելի էին վատացնում հայ-քրդական հարաբերությունները։ Վերը նշված քրդական ապըստամբերության ճնշումից առաջ Մատթեոս պատրիարքը, քաղաքականությունից հեռու մի անձնավորություն, առանց խորանալու իր քայլի հետևանքների մեջ, հայերի և քրդերի հարաբերությունների բարդացման գործում իր մի կոնդակով կոչ արեց Տիգրանակերտի, Բաղեշի, Բալուի, Կարինի և Վանի բնակիչներին «յամենայնի օգնական լիցին և ծառայեսցեն արքունի բանակին, և զհաւատարմութիւն իւրեանց ցուցցեն իրօք առաջին արքայի»[1]։ Ա. Պերպերյանի գրքում եղած տվյալների համաձայն «ժողովեցան Հայք Վասպուրական աշխարհին, և մարտ եղեալ յարձակեցան ի վերայ Ճեզիրէ նահանգին, ուր որջացեալ ամրացեալ կային յանառիկ վայրս գլխաւորք բարբարոսաց, և այնչափ ի նեղ արկին զՊեռէրխան պէյ նոցա»[2]։

XIX դարի առաջին կեսին քրդական ազատագրական շարժումների մասին հետաքրքրական տեղեկությունների ենք հանդիպում թուրք պատմաբան Ահմեդ Լութֆի աշխատության մեջ։ Այդ պատմարանը գրել է «Թարիխի Լութֆի» ութհատորանոց աշխատությունը, որը և ընդգրկում է Օսմանյան Թուրքիայի

---

1 Ա. Պերպերյան, նշվ. աշխ., էջ 322։

2 Նույն տեղը։

1823—1876 թթ. պատմություն։ Առաջին հատորում պատմաբանը տեղեկություններ է հաղորդում 1820 թ. Սելիմ փաշայի գլխավորությամբ Մուշի քրդերի ապստամբության մասին, ասելով. «Օսմանի որ էրզրումի էյալեթին ենթակա Մուշի սանջակի մյութասարիֆ Սելիմ փաշան պետությանը հակառակ գործ էր կատարում, անհրաժեշտ համարվեց նրան զսպել, և էյալեթի կենտրոնից զինվորական ուժեր ուղարկվեցին նրա դեմ, իսկ Սելիմ փաշան անկարող լինելով դիմադրություն ցույց տալ, փախավ և ապաստանեց աշիրեթների շրջանում»[1]։

Իր գրքի ութերորդ հատորում Լութֆին ավելի հանգամանորեն կանգ է առել Բեդիրխան բեյի և խան Մահմուդի ապստամբության հետ կապված մի շարք հարցերի վրա։ Ըստ նրա, ապստամբ բեկը «գրավել էր Մոսուլի վիլայեթին կցված Ջիզրեի գավառի կավառապետությունն ու շրջանը և բոլորովին անուշադրության էր մատնում Բարձրագույն Դռան բազմաթիվ խրատներն ու նախազգուշացումները»[2]։ Ինչ խոսք, Բեդիրխան բեկը խրատներ ստանալու կարիք չուներ, նա պարզապես քրդական մի շարք ցեղերի գլուխ անցած, անկախության էր ձգտում, որի մասին չի քանկանում նշել պատմաբանը։ Օսմանյան կառավարությունը չէր կարող այդ հարցը թողնել ինքնահոսի, և ինչպես ասվեց, արդեն սուլթանի հրամանով Օսման փաշայի զորքերը ճնշեցին քրդական ապստամբությունը։ Ինչպես նշում է պատմաբանը, Բեդիրխան բեկի ուժերը մի շարք մարտեր վարեցին և բեկը իր համագործակից Մահմուդ խանի հետ միասին ամրացավ Ուտակ բերդում և սկսեց պաշտպանվել։ Ըստ Լութֆիի «նրանց ապաստանած բերդը խիստ ամրակուռ էր և բերդի վրա հարձակումը շատ դժվար։ Նրանք (ապստամբները) փակվեցին բերդում, և հարձակվող փադիշահական բանակի վրա քարեր էին թափում և մեկ-մեկ էլ հրացան և թնդանոթ էին արձակում։ Եվ այսպես դիմադրության չորրորդ օրը բեկը բերդից իբրև թե «ամանան կանչելով խնդրեց դադարեցնել պատերազմական կրակը»[2]։

Ապստամբությունից հետո Բեդիրխան բեկը գտնվում էր Կոստանդնուպոլսում։ Նրան ներկայացրին թագավորին, որը, ինչպես նշում է պատմաբանը, «մեծահոդի» գտնվելով, ներեց նրան,

---

1 Հայկական ՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտ, Թուրքական աղբյուրներ, հատոր Դ, Ե., 1972, էջ 12—13։

2 Նույն տեղը, էջ 64։

3 Նույն տեղը, էջ 65։

որից հետո աքսորվեց Կրետե կղզի։ Այս ապստամբությունը ճնշելուց հետո Հնքյարում սկսվեց Նուրի բեյի (ազգությամբ քուրդ) ընդվզումը, որը վերացնելուց հետո օսմանյան կառավարությունը ստեղծեց Հնքյարի էյալեթը։ Հարկ է նշել, որ Մուշի քրդերը այս անգամ չմասնակցեցին քրդական ապստամբությանը։ Շատ շուտով Մուշից վերացավ քրդական փաշայությունը։ «Այս դեպքերը մեծ հույս կը ներշնչեին հայության, որ կը կարծեր թե պիտի ազատի քրդական բռնակալություններեն և ազատ շունչ պիտի քաշեն։ Բայց քրդական վարչության տեղ կուգար օսմանյան բանակը և վարչությունը, ավելի բռնակալ և ավելի կեղեքիչ»[1]։

Մուշ-Սասունում ժողովրդի առաջին ընդվզումը քրդական վերնախավի դեմ սկսվեց Տարոնի այն ժամանակվա առաջնորդ Պետրոս եպիսկոպոս Ավրանցու ժամանակ (1828—50թթ.), որը օգտագործելով թուրք-քրդական հակամարտությունները, կառավարական ուժերի միջոցով հասավ նրան, որ կարողացավ քրդական անհնազանդ և կողոպտիչ ուժերի մի մասին հեռացնել Մշո դաշտից։

Ինչպես ասվեց, օսմանյան կառավարությունը այդ տարիներին սկսել էր քրդական անհնազանդ դերեբեյական (հովատատեր) ավագանու հպատակեցումը, նպատակ ունենալով թուլացնել նրանց։ Հայ որոշ հատվածներ քրդական բեգերի ճնշումից ազատվելու նպատակով դգնում էին կառավարությանը, հույս ունենալով, որ քրդական դերեբեյությունների վերացումը և թուրքական իշխանությունների հաստատումը կմեղմացնի հայկական գյուղերում եղած հարստահարությունները։ 1850 թ. օսմանյան կառավարությունը աքսորեց Մուշի Ալեդին տան Շերիֆ փաշային, որով, փաստորեն, վերջ տվեց Մուշի քրդական փաշայությանը, որը վասալական կախման մեջ էր կենտրոնական կառավարությունից։ Այդ փաշայության վերացումից հետո նրան փոխարինելու եկան թուրքական իշխանությունները, իրենց բանակով, կառավարչական պաշտոնյաներով և ոստիկաններով։ Սակայն, դրանից հետո հայ-քրդական հարաբերությունները բոլորովին էլ չլավացան և ավելի ու ավելի սրվեցին այն պատճառով, որ հայերից շատերը չմասնակցեցին քրդական ապստամբությանը, իսկ ոմանք նույնիսկ մասնակցեցին նրա ճնշմանը։ Վերջապես որոշ ժամանականց թուրքական պաշտոնյաների և կառավարության վարած

---

1 Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 190։

գաղաքականության շնորհիվ էլ ավելի պետք է սրվեին երկու հարևան ժողովուրդների հարաբերությունները։

Հայ-քրդական հարաբերությունները վատթար վիճակի հասան հատկապես XIX դարի երկրորդ կեսին։ Այդ ոչ միայն Մուրում և Սասունում, այլև Վանում, Տիգրանակերտում և այլուր։ Այդ բոլորի հրահրողը օսմանյան կառավարությունն էր։ Մ. Տիգրանյանի մոտ կան մանրամասն տեղեկություններ Տիգրանակերտի և Սասունի XIX դարի առաջին կեսի մի շարք իրադարձությունների վերաբերյալ։ Տիգրանակերտն այդ ժամանակ ուներ 2500 տուն քրիստոնյա, որից 1800-ը հայ-լուսավորչականներ, մնացածը՝ հայ-կաթոլիկներ, ասորիներ, ասորի-կաթոլիկներ, հույներ, հույն-կաթոլիկներ, բողոքականներ և այլն[1]։

Մ. Տիգրանյանի մի գրքից երևում է, որ 1846 թ. Հաճի Քեչեշ թուրքը հարձակվում է Սասունի վրա, սպանում երկու քահանայի և յոթ աշխարհականների։ Սասունի գավառի խաչատուր քահանան նրա դեմ դատ սկսեց և շահեց, քանի որ թուրքական կառավարությունը այդ ժամանակ արշավանք էր սկսել քրդական պերճությունների վերացման համար և ուզում էր, որ հայերը յուսային նրանց դաշնակիցներ։ 1847 թ., ասված է այդ աղբյուրում, Սասունում Պշար անունով մի քուրդ աղա, թուրքական պետության դեմ ապստամբելով, շատ տարիներ թույլ չէր տալիս, որպեսզի պետական հարկերը մտնեն Տիգրանակերտի արքունի գանձարանը[2]։

Վերը նշված արտահայտություններից երևում է, որ քրդական իշխանությունները անպայման Սասունի մի մասի հարկերը իրենք էին գանձում և թուրքական կառավարությունը նրանց հետ առնչություն չուներ։ Այս պատճառով էլ կառավարությունը Պշար աղային ճնշելու նպատակով զորք ուղարկեց չորս թնդանոթներով։ Զորահրամանատար խայրեդին փաշան ապստամբի մոտ ուղարկեց Մ. Տիգրանյանին մի քանի քուրդ պետերի հետ, որոնք եկան Սասնո Մատին Առաքելո վանքը, կանչեցին նրան, որը տիկնալ երկաբ վանքը, քսան զույգ քաջ սպարազինեալ հաստատուն, և երկայնահասակ այր թիկնապահներով, որոց ահեն

---

1 Տե՛ս Հայելի գործոց և աշխատութեանց..., էջ 5։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 33—34։

մարդ կը սարսափեր»[1]։ Սրանից հետո Գշարը մի շարք այլ քուրդ աղաների հետ գնաց Տիգրանակերտ, հպատակվեց կառավարությանը։

Մ. Տիգրանյանի աշխատության մեջ տեղեկություններ կան Սասունի գյուղերի մի մասի բնակչության թվի մասին. այսպես, այդ ժամանակ Սասունի Ահարոն (Ահրոնք) գյուղն ուներ 50, Գեղերվանքը՝ 80, Հնձքարը՝ 40, Էյուբը՝15, Շուղեքը՝ 10, Բասուրը՝ 10, Կրեմորին՝ 10 տուն հայեր։ Խիանք գավառի մասին ասված է, որ այնտեղ Փառկա գյուղն ուներ 150, Հեղինը՝ 60, Սաղտունը՝ 60. Արսրկը՝ 30, Արդկոնքը՝ 15, Իշխնձորը՝ 15, Ընկուղակը՝ 30 տուն հայեր[2]։

Թուրքական տիրապետությունից առաջ Ամիդում գտնվող Ալի Բունար գյուղի բնակիչները թեև երեք տարբեր ժողովուրդներից էին բաղկացած, «սակայն եղբայրաբար կապրեին քով քովի՝ թվով 40—50 ընտանիք»[3]։ Չնայած ճնշումը կար, սակայն դեռևս կառավարությունը այն չէր հասցրել ատելության և թշնամության։

Ամիդում «քրիստոնյա լինելին բնորոշելու համար կապույտ կտավե հանդերձներ պետք էին հագնել և գլուխին ալ սև փաթթոց մը կապեին։ Քիլեեին շուրջ՝ որպեսզի մուսուլմանն Կնավուրին մազերը չտեսնա։ Կեավուրին յուր գլխու մազերն ցույց տալ սարտոր թեան և թուրքն այպանելու ապացույց էր, որուն մահմեդականն չէր կրնար հանդուրժել»[4]։

Սակայն Ամիդից ոչ հեռու քրդական մի ցեղ ասպատակում էր շրջապատը և չէր ենթարկվում օսմանյան կառավարությանը։ Ցեղի զինված ուժերը սպանում և կողոպտում էին հայկական բնակչությանը։ Նրանց շեյխը եկել էր Եգիպտոսից, սկզբնական շրջանում ապրել էր տրուզների մոտ (տյուրզիններ), ապա անցել էր Ամիդ, չմոռանալով, իհարկե, նախկին բնակավայրում ունեցած իր շեյխ Իսմայիլ անունը Ամիդում գարձնել շեյխ Սուլեյման։ Այս շեյխը քարոզում էր, որ «եթե անհավատ մը, կեավուր մը սպաննեն իրենց վարձքն յոթ հուրիներ պիտի լինի Մուհամմատի դրախտին մեջ, իսկ եթե իրենք սպանվին անհավատ մը, նահատակ կը լինին և ճեննեդին մեջ Մուհամմատին աջ կողմը պիտի

---

1 Հայերի գործոց և աշխատութեանց..., էջ 34։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 57—58։

3 Տիգրան Մկուեղ, Ամիտայի արձագանքները, 1950, էջ 64։

4 Նույն տեղը։

նատին, վայելելով մշտնջենական իրախճանք և 40 ճուրիներ, իրենց միշտ պիտի ծառայեն»[1]։

Քրդական վերնախավի և հոգևոր պետերի այս պրոպագանդան, անշուշտ դուր էր գալիս օսմանյան կառավարությանը, որը ոչ մի քայլի չէր դիմում նրանց զսպելու համար։ Անգրագետ, քաղաքականությունից հեռու քուրդ վերնախավի և հասարակ մարդկանց համար Շեյխ Սուլեյմանի քարոզները անպայման իրենց նշանակությունը պետք է ունենային, և շատերը սկսեցին հավատալ նրա դուրջը։

* *
*

Ջնայած հայ ժողովրդի ծանր վիճակին, սկսած 1850-ական թվականներից Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ վայրերում սկսվում է լուսավորական մի շրջան։ Մի՝ շարք վայրերում իրար ետևից բացվում են դպրոցներ։ Լուսավորական այդ շարժումը սկսվում էր կայսրության մայրաքաղաքից, որտեղ դեռևս շատ հին ժամանակներից սկսած ապրում էր մեծ թվով հայություն։ Թուրքիայի տիրապետության տակ գտնվող նահանգներում և Արևմտյան Հայաստանում կար 3 միլիոն 100 հազար բնակիչ[2]։ Միայն կայսրության մայրաքաղաքում այդ տարիներին գործում էին տղաների 30 դպրոց 4500 աշակերտներով և աղջիկների 15 դպրոց 2000 աշակերտուհիներով։

1828թ. Հակոբ Թոփուզյանը Կոստանդնուպոլսից Մուշ է գալիս և ս. Կարապետ վանքում հիմնում է դպրոց ու այդտեղ է մնում մինչև 1833 թվականը և «բազում աշակերտս ուսուցաներ»[3]։ Սակայն մինչև 1850-ական թվականները Տարոնում շատ քիչ դպրոցներ կային։ Կաթողիկոսական դիվանում պահպանված մի վավերագրում, որի տակ կան Մուշի 70 երևելիների ստորագրություններն ու կնիքները, Արարատյան աշխարհի և Էջմիածնի պատասխանությունը պարսկական լծից ողջունելուց հետո կաթողիկոսին հաղորդում են այն մասին, որ «նախքան քան ամ ասաջ բոլոր երկիր մեր էր ապստամբ արքայեն օսմանյան», որի պատճառով մանուկները կրթություն չէին ստանում և ուսանում էին «ի կրթություն զինուցն»։ Ուսման համար եղած անբարե-

[1] Ցիգրան Մկունի, Ամիտայի արձագանքները, 1950, էջ 73։
[2] Տե՛ս А. Худабашев, Обозрение Армении, СПБ, 1859, էջ 399.
[3] Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 121, վավ. 81։

նպաստ պայմանները տվել էին իր անբարի պտուղները, «որք են գողութիւնք, սպանութիւնք, յափշտակութիւնք, ավազակութիւնք ընկեր»[1] և այլ չարիքները։ Եվ ահա Կոստանդնուպոլսից եկած ուժերը, երբ հպատակեցրին քրդական իշխանություններին, «բարձան ի մէջ զենք, սուր հրացանք ամեն նմայ անբարի հետևանք» ուստի ըստ նրանց՝ ժողովրդի մեջ սկսեց ցանկություն առաջանալ դեպի արհեստը և ուսումը և «արդ սակաւ ինչ գործնական արհեստք ծագկեցան ի մէջ մեր, բայց յընթերցմանց և գիտութիւնից զուրկ բոլորովին»[2]։ Ուստի և խնդրում են օգնել իրենց դպրոցներ բաց անելու գործում։

1850—60-ական թվականներին Մուշի մեջ բացվեցին երեք դպրոցներ՝ ս. Մարիներ, Վերին և Զորո թաղերում։ Այդ տարիներին Մուշում և դաշտի գյուղերում ստեղծվեցին «Մուշեղյան», «Խորենյան», «Հայրենասիրաց» ընկերությունները։ 1862—63թթ. Մշո Ջրիկ գյուղում ստեղծվեց «Ներսիսյան», Մուշում մինչ այդ 1855թ. «Բարեսիրաց» և 1856թ. «Թարգմանչաց» ընկերությունները։ Այս վերջինս հետագայում 1879թ. մի դպրոց բաց արեց Սասունի Սեմալ գյուղում։

1850թ. առաջ Մշո Առաքելոց վանքում կար մի վարժարան։ Այդ տարիներին մի դպրոց բացվեց ս. Կարապետ վանքում, իսկ 1856թ. Առաքելոց վանքում կառուցվեց վարժարանի նոր շենք իր ննջասենյակներով։ 1858 թ. բացվեց ս. Հովհաննա վանքի վարժարանը, իսկ 1861թ.՝ Ցրոնք գյուղի դպրոցը։ Այդ ժամանակաշրջանում դպրոցներ բացվեցին դաշտի Ջիարեթ, Ավրան և այլ գյուղերում, որոնց մասին տեղեկություններ կան «Արծուիկ Տարօնոյ» պարբերականի էջերում։ Այս ուսումնական հաստատությունների բացման գործում մեծ աշխատանք տարան Մ. Խրիմյանը և Գ. Սրվանձտյանը։ Վերջինս Մշո դաշտի Վերին և Ներքևի Բուլանըխներում, Մանազկերտի, Վարդոյի և այլ վայրերի գյուղերում բաց արեց 25-ից ավելի դպրոցներ, որտեղ սովորում էին հարյուրավոր աշակերտներ։ Այս, իհարկե, մի նոր երևույթ էր այն ժամանակվա պայմաններում։

1880թ. Կոստանդնուպոլսում սկսեց գործել Տարոնի հայոց միացյալ ընկերությունը, որն իր մեջ էր միավորում մինչ այդ ստեղծված բոլոր ընկերությունները։ 1880թ. Կոստանդնուպոլսի

---

1 Մատենագարան, Կաթ. դիվան. թղթ. 121, վավ. 81։

2 Նույն տեղը։

արվեստասիրաց ընկերության ջանքերով Մշո Առաքելոց վանքում բացվեց երկրագործական վարժարան, որը, ցավոք, շատ կարճ կյանք ունեցավ։

Երևանի մատենադարանում է գտնվում Ղևոնդ Փիրղալեմյանի ձեռագիր հուշերը, որը կոչվում է «Ճանապարհորդութիւն տոսպցի Մ. Ս. Նահապետին 1860 ապրիլ հինգին Վարագայ 'ի Վանս Կոփա, հրամանաւ Խրիմեան ազգասեր բարեբնեայ 'ի հայրապետութեան Տ. Տ. Մատթէոսի առաջնոյ»[1]։ Այս չափածո աշխատության մեջ շատ հետաքրքրական փաստեր կան Մուշ քաղաքի և նրա շրջակա գյուղերի ժողովրդի տնտեսական և կուլտուրական վիճակի մասին։ Այդ ճանապարհորդությունը սկսվել է 1860 թ. ապրիլի 5-ին և Փիրղալեմյանը (Նահապետը) նստում է իր Կապուտիկ ձին և սկսում է իր երթը, որի ընթացքում ականատես է լինում քրդական թալանին։ Քրդական վերնախավի սանձարձակությունների մասին հեղինակը գրում է.

Ինչո՞ւ շատ հեղ այս ճամբարներ
Դարան գործէն դաժան քրդեր.
Կը բռնեն անմեղ ուղեւորներ
Լոպկեալ չլտին ոտեն, ի վեր[2]։

Այս հուշերի երկրորդ մասը կոչվում է «Ճանապարհորդություն Կոփա ի Մուշ»։ Հեղինակը լինելով Յոնճալու գյուղում նշում է, որ այնտեղ ապրում են 50 տուն հայեր, որոնց ղեկավարն էր Մելիք Եչին

Մելիք Եչեն գեղի իշխան
է այր ընտիր և պատվական,
Չի յուր ծախյուք մի վարժարան
Բացեր է որ տղայք կարդան[3]։

Մելիքը շատ ունևոր էր։ Նրա մասին հեղինակը ասում է, որ նա «փարթամ և ճոխ է այս Մելիք, որուն պես պերճ Մուշ Տարոն չիր», նա կարողացել էր այնպես անել, որ «հայ ու տաճիկ, քուրդ, ասորին տեսեր կը գովեն սեր հարգ սորին»[4]։ Մելիքը շատ սնուցումներ ուներ, շատ արորներ ու գութան, և «քանի մշակ, քանի վարձկան»։ Այս նաև նշանակում է, որ այդ մելիքը ունեցել

---

[1] Մատենադարան, ձեռագիր, № 8711։

[2] Նույն տեղը, էջ 5։

[3] Նույն տեղը, էջ 44։

[4] Նույն տեղը, էջ 45։

է ոչ միայն մշտական վարձված մշակներ, այլև ժամանակավոր վարձված աշխատողներ։ Ճանապարհին հասնում է Ապլպուհաբ գյուղը, որը և տեսնում է շատ վատ վիճակում, քանի որ նրա բնակիչները հավանաբար՝ 1853—56 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո «փախան մեջ ռուսուն»[1]։ Հեղինակը տվյալներ է բերում նաև Մշո դաշտի Ցրոնք գյուղի մասին։ Այդտեղ այն ժամանակ ապրում էին 50—60 ընտանիք հայեր և գյուղացիները զբաղվում էին հողագործությամբ և անասնապահությամբ։ Նրանք ունեին կավեր և ձիեր պատվական։ Գյուղի բնակիչներին Ղ. Փիրղալեմյանը անվանում է «Ցրոնից քաջ հայեր»։

Հեղինակը արժեքավոր տեղեկություններ ունի Մատնավանքի մասին, որտեղ 1860թ. կային 20 հոգի, որոնցից մեկը վանահայր, մի քանի դպիրներ, իսկ «մյուսներն են մշակ հովիվք»[2]։ Անցնելով Ավրան և Կուրապ գյուղերը, Ղ. Փիրղալեմյանը հասնում է Մուշ, որի բնակիչներն ըստ նրա «ունին բաղում ոստին այգի, որոնց գինին է անվանի»[3]։ Գյուղաքաղաքը այդ ժամանակ ունեցել է 2000 հայ և տաճիկ ընտանիք։ Քաղաքի մոտ եղած գետակների վրա տասից ավելի ջրաղացներ էին աշխատում։ Մուշը 1860թ. ուներ 400-ի չափ խանութներ և երկու նորաշեն խաներ։ Ժողովուրդը այդտեղ զբաղվում էր կտավագործությամբ, դարբիններ էին, պայտառներ, դերձակ, սափրիչ, կոշկակար, գինեպան և այլն[4]։

Սակայն Մուշի ժողովուրդը իր նախկին վիճակը չուներ այլևս, այնտեղ զրկանք և բռնություն կար և տիրում էր անարդարություն։ Տեղի ինչպես բդեշխը, այնպես էլ մոլլան և մյուդիրները «Սուտ ճշմարտեն 'ի սեր ոսկուն»։ Եվ Մուշում

Խիստ բարբարոս այլազգիներ,
Որ կքնեղեն անտեր ձայներ,
Չկա արդար դատաստաններ,
Որ դուրս հանեն իրավունք, մեր[5]։

Հեղինակը խիստ քննադատության է ենթարկում Մուշի հայ հոգևորականներին ասելով, որ այնտեղ չկա «մի քաջ հովիվ» և

---

1 Մատենադարան, ձեռ. № 8711, էջ 51։

2 Նույն տեղը, էջ 57։

3 Նույն տեղը, էջ 60։

4 Տե՛ս նույն տեղը, էջ 61։

5 Նույն տեղը, էջ 62։

այդ հոգևորականները «լեալ են ծառա որովայնիս և «զեխութեանց մեջ ընկղմեր են...»[1]

Այս ճանապարհորդական նյութերից երևում է նաև, որ գյուղական տանուտերերին նաև անվանում էին իշխաններ, Հունան գյուղի տանուտերին անվանում են «ազնիվ իշխան ուս Պողոս պատվական»։ Մուշի սանջակի և նրա մեջ մտնող Սասունի կյանքի ամենահետաքրքրական շրջաններից մեկը պետք է համարել Խրիմյան Հայրիկի վանահայրության շրջանը։ Այդ հայրենասեր եկեղեցականը Վարագից Մշո ս. Կարապետ վանքը փոխադրեց տպարան և սկսեց հրատարակել «Արծուիկ Տարօնոյ» պարբերականը։ Դա մի նոր երևույթ էր Հայկական լեռնաշխարհի այս մասում։ Մ. Խրիմյանի հետ աշխատում էր նրա աշակերտ Գ. Սրվանձտյանը, որը և թերթի խմբագիրն էր։ Խրիմյանի և Գ. Սրվանձտյանի լուսավորական գործունեությունը իրենց դիմ էր հանում Մուշում հավաքված հետադեմ հոգևոր և աշխարհական ուժերին, որոնք թշնամաբար էին ընդունում նրանց քարոզած գաղափարները։

Սակայն անձնուրաց այդ գործիչները շարունակում էին իրենց հեղաբեկող գաղափարների պրոպագանդան, աշխատում էին ամրապնդել այնտեղ գոյություն ունեցող միությունները ու ընկերությունները և ստեղծել նորերը, որոնք միայն ու միայն ժողովրդին լուսավորելու նպատակ ունեին։ Այս կապակցությամբ «Արծուիկ Տարօնոյն» գրում էր. «Այսօր Մշոյ մեջ ուսումնարաններ կան, այսօր Մշոյ մեջ հայոց մանկտիք գրել կարդալ կուսանին, այսօր Մշոյ մեջ ընկերություններ կան,— Խորենյան ընկերութիւն, հայրենասիրաց ընկերութիւն, Մուշեղեան ընկերութիւն և թարգմանչաց ընկերութիւն»[2]։

Մ. Խրիմյանը Մուշ հասավ 1862թ. օգոստոսի 30-ին, որ նրա դեմ սկսեց գործել ս. Կարապետ վանքի վանահոր պաշտոնին ձգտող Մամբրե Մամիկոնյան վարդապետը, որին միացավ Բաղեշի փաշան, որոնք սկսեցին Մ. Խրիմյանի մասին ասել, որ նա «իբրև գրգռիչ ժողովրդեան թելադրե զժողովուրդն պահանջել 'ի Խրիմյանե զթեթևութիւն յարկացն արժանի»[3]։ Սրանց էմիանում նաև Մուշի փաշան, որը ըստ Ե. Տեկանցի ասել է. «Ես լինելով նախ կուսակալ Վանայ և ապա Կարնոյ ի վաղուց անուն

---

1 Մատենադարան, ձեռ. № 8711, էջ 63։

2 «Արծուիկ Տարօնոյ», 1863, № 1։

3 Մատենադարան, ձեռ. № 4177, թ. 44։

գիտեմ, թէ Խրիմյան չէ հավատարիմ տերութեան, նա խրովութիւն սերմանեաց 'ի Վան, որ տեւ մինչև յայսօր ժամանակին»[1]։ Այնուհետև վանականները բողոքում են Տեկանցին, նշելով, որ Գ. Աղվանյան եպիսկոպոսը «այպանեն զմեզ արհամարեն, անպատվեն զմեզ, գող, յափշտակող, յիմար անվանեն զմեզ», իսկ երիտասարդները ասում էին Գ. Աղվանյանի մասին, որ նա իրենց անվանում է «շնացող, անպիտան, անհավատարիմ կոչեն զմեզ. և մահու չափ վիրավորեն զսերը մեր»[2]։ Վերը բերված քաղվածքներն ասում են այն մասին, որ Խրիմյանի դեմ միավորվել էին տեղի հայ և թուրք տարրերը, օգտագործելով նաև այն հանգամանքը, որ Գ. Աղվանյանը երբեմն հոգևորականների երեսին ասում էր նրանց տգետ և ընչաքաղց լինելու մասին։

Հետագեմ հոգևորականները և Մուշի ավագանու առանձին ներկայացուցիչները «Մշո թուրք լաւվարչին մատնության գիր մը կուտան, ամբաստանելով Խրիմյանը որպես ճարկերու վճարումը արգելող մը, զրգռիչ մը, և ժողովուրդը ապստամբության հրադրող մը»[3]։

Սակայն նրանք ինչու՞ էին այսպես վարվում Մ. Խրիմյանի հետ։ Թանը նրանում է, որ Տարոնի այն ժամանակվա հոգևորականների, մելիքների ու ազդեցիկ խավի մեջ մեծ թիվ էին կազմում հետագեմ, խավարամիտ ու ընչաքաղց տարրեր, որոնք, ինչպես ցանկանում, այնպես էլ վարվում էին եկեղեցական հաստատությունների հետ։ Նրանց նկատմամբ կարգ ու կանոն էր սահմանել Մ. Խրիմյանը, որը սուլթանի հրովարտակով նշանակված էր Տարոնի առաջնորդ և Գլակա վանքի վանահայր։ 1862թ. Խրիմյանը Գլակա վանքը տպագրական մեքենաներ բերելու հետ միասին, բաց է անում նաև ժառանգավորաց վարժարանը։ Բայց միջոցներ չկային ինչպես տպարանը, այնպես էլ դպրոցը պահելու համար։ Նոր վանահայրը, սակայն, գտավ այդ միջոցները։ Նա անմիջապես պարզեց, որ վանքը շատ եկամուտներ ուներ, որը «անխնա կերպով կը շռայլվեին կամ կը յուրացվեին տգետ և շահամոլ վանականներու կողմե»[4]։

---

1 Մատենադարան, ձեռ. № 4177, թ. 54։

2 Նույն տեղը, թ. 51։

3 Երուանդ Տէր Մկրտիչեան, Գանձեր Վանպուրականի, հ. առաջին, Պոլիս, 1966, էջ 176։

4 Հայկ Ասեմյան, Հայոց հայրիկ, նուագող վշտից հայրենեաց հայոց, առաջին հատոր, Թավրիզ, 1929, էջ 831։

Այդ եկամուտները ի մի բերելով, Մ. Խրիմյանը սկսեց օգտագործել դրանք իր նպատակին։ Նա ուներ Վարագա վանքի փորձը, իսկ Գլակա վանքում ստեղծեց մի խորհուրդ, որին անվանեց տնտեսական և նրա ձեռքը հանձնեց վանքի եկամուտների տնօրինությունը։ Դրանով պահվեց տպարանն ու վարժարանը և ժամանակավորապես վերջ տրվեց վանականների մի մասի վանքի ունեցվածքը հափշտակելու անհագուրդ ձգտումներին։

Մ. Խրիմյանը ձիով շրջում էր Տարոնի գավառներն ու գյուղերը, որտեղ ակամայից նրա առաջ բացվում էր այն ծանր վիճակը, որի մեջ գտնվում էր աշխատավոր գյուղացիությունը։ Տարոնի աշխարհի ժողովուրդը ստիպված կամա թե ակամա համակերպվում էր այդ զարհուրելի կյանքին և մի կերպ «կը տաներ ամեն տեսակ տանջանքներն ու չարիքները։ Պետական հարկահավաք, ոստիկան, պաշտոնիա, քուրդ ցեղապետներ, բեկեր, աղաներ և ավազակներն անարգել ու սանձարձակ կերպով կը մտնեին հայ գյուղերը և վայրագություններ կը գործեին»[1]։

Մ. Խրիմյանը հասցնում էր մտնել ամեն տեղ, ուսումնասիրել տարոնահայության անագորույն վիճակը, ականատես լինել «եղչուկի դառն ու՞ անտանելի կյանքին և «կը տեսներ կիսամերկ և ոտաբոբիկ մայրեր և զավակներ, ամոթխած կույսերն ու հարսները, տանջված դեմքով ծերունիներն ու երիտասարդները, որոնք սիրով կընդունեին այդ անկոչ հյուրը և կը պատմեին իրենց ահավոր կյանքի սև ու արյունոտ պատմությունները»[2]։

Շրջագայությունների ժամանակ Մ. Խրիմյանի առջև բացվում էր մի տխուր տեսարան. նա տեսնում էր, թե հայերին ինչպիսի դաժան մեթոդներով էին կեղեքում ոչ միայն քուրդ վերնախավի և օսմանյան կառավարության ներկայացուցիչները, այլև հայ վաշխառուներն ու մեծավորները՝ ներքին ցեցերը։ Տարոնի հոգեվոր հովիվը, տեսնելով իր ժողովրդի ծանր վիճակը, իրար ետևից մի քանի տեղեկագրեր ուղարկեց Կոստանդնուպոլիս պատրիարքին և ազգային ժողովին, որոնց մեջ սրտաճմլիկ տողերով նկարագրում էր իր ժողովրդի՝ Տարոնի հատվածի, ծանր ու թափծոտ կյանքը։

Երևանի գրականության և արվեստի թանգարանի արխիվում Գ. Սրվանձտյանի ֆոնդում է գտնվում 1863թ. Մ. Խրիմյանի

---

1 Հայկ Աճեմյանի նշվ. աշխ., էջ 333։

2 Նույն տեղը, էջ 334։

ձեռագրով գրված մի դիմում-զեկուցագիր՝ ուղղված թուրք մի բարձր պաշտոնյայի, որի մեջ Մշո հոգևոր հովիվը «Մշո երկրի զրկյալ և հարստահարյալ անտերունչ» ժողովրդի անունից խնդրում է նրան խորանալ Մշո երկրում տեղի ունեցող երևույթների մեջ։ Մ. Խրիմյանը նշում է, որ «օսմանյան հզոր տերության ընդհանուր կառավարչության տակ չի կա երկիր մի Մշո երկրին պես շահաբեր և արդյունավոր և միանգամայն տերության գանձին ավազանը լեցնող առատ աղբյուր մի»[1]։ Սակայն այդ ժողովուրդը թշվառ է ու խեղճ և հեռու թանզիմաթով նախատեսվող բարեգործություններից։ Գյուղացիներն այստեղ ապրում են ավելի վատ, քան քսան տարի առաջ, երբ «ապստամբ պեյերը կիշխեին մեկ-մեկ գավառի մի վրա տիրապետելով. ժողովուրդն այն ատեն իրենց ստրուկ և գերի էր, որչափ ուզեին կըճնշեին և կը կեղեքեին, չկար փրկիչ մի, որ ազատեր զիրենք»[2]։ Այնուհետև նա նշում էր, որ օսմանյան կառավարությունը թեև վերացրեց քրդական դերեբեյությունները, բայց և այնպես, այժմ Մշո երկիրը «իշխողները և տիրապետողներն ավիրել են, որք կամ բռնությամբ կամ քաղաքականության տակ ծածկված գաղտնի եղանակներով անմիջապես կիշխեն ժողովրդին վրա և այս անիրավության մեջ անչափ անհոգ և աներկյուղ են, դիտեն, թե իրենց վրա նկատող աչք չի կա»[3]։ Տարոնի հոգևոր հովիվը նշում էր, որ այդ հարստահարողները հաշվի չեն առնում կառավարության կողմից արձակված Հաթթը Հումայունը (հրովարտակը)։ Ինչքան ասես ոճիրներ, գողություն, իսկ դատաստանական ատյանները «անիրավ կաշառակերությամբ կպղծվեն»[4]։ Կողոպտվում և պղծվում են հայկական եկեղեցիները, սակայն կողոպտողներին ղսպող չկա և այս իրադրության մեջ Մշո ժողովուրդը համբերում է և եթե այդ բոլորը չարգելվի, ապա «գարուն գալուն պես Մշո աշխարհ պիտի քանդվի։ Երկրի մի շինություն և հաստատություն ժողովուրդն է, տերության վաստակ հարստություն և փառք ժողովուրդն է, մանավանդ այն գեղաբնակ երկրագործ աշխատասեր և հավատարիմ ժողովուրդ, ահա այսպիսի ժողովուրդ մի թող պիտի տա Մուշ։ Թող պիտի տա իր մայրենի տուն դաշտ, կալված

---

1 ՀՍՍՀ գրականության և արվեստի թանգարանի արխիվ (այսուհետև ԳԱԹ), Գ. Սրվանձտյանի ֆոնդ, վավ. Մ 4/5։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը։

և ազարակ մի՛այն յուր խեղճ ընտանյաց ձեռք բռնելով պիտի դիմեն օտար աշխարհ, հուսալով թե կարող է գտնել դյուր ապաստարան մի։ Ճնշյալ և անճարակ ժողովրդի վերջին ճիգ և հույս միախչելն է միայն, ով կարող է մեղադրել զիրենք»[1]։

Նշելով ժողովրդի ծանր վիճակը, Մ. Խրիմյանն ասում է, որ դրա պատճառներից մեկը քրդական ցեղերի վերնախավի, նրանց Թոռունների վայրագություններն են։ Թոռուններին նախորդ փաշան բանտարկեց և տարավ Կարին, սակայն շատ չանցած նրանք կաշառքով ազատվեցին բանտից և վերադարձան «Մշո երկիրը, որչափ տուժեր են, անոր կրկնապատիկը գիտեն ժողովել։ Ինչու՞ չ՝, իրենց ճորտերը կհամարվին, ո՞չ միայն գեղացի Մշո ժողովուրդն, այլ նույնիսկ իրենց համարյուն ազգը, որոնք ցած ստրկությամբ միշտ իբրև գերի և արծաթագին ծառայեն Թոռուններուն ձեռք»[2]։ Միաժամանակ նա նշում է, որ պետությանը Թոռունները պետք չեն նաև պատերազմի ժամանակ. «Այս փորձը Արևելյան պատերազմի ատենը հայտնի տեսնվեցավ Կարսին Պայազիտի բանակներու մեջ քսան հազարեն ավելի հեծելազոր լուրթեր կային, ի՞նչ նշանավոր քաջություն գործեցին, իրենց սրտին մեջ տերության և հայրենյաց համար կռվելու անձնվիրություն ան նպատակ չի կար, իրենց նպատակը միայն բանակին կոպոպուտն էր, սոսկ թնդանոթներու ձայն բավական եղավ իրենց սհաթեկ ընել։ Խուճապելով իրար անցան թող տվին թշնամյաց կրակին առաջ տերության կանոնավոր զորաց բանակը իրենք պնպի փախուստ դարձան»[3]։

Մշո դաշտի մյուս հարստահարիչները Քոչար կոչված քրդական ցեղերն են, որոնք գարնան հետ միասին գալիս են դեպի Մշո արոտավայրերը և թալանում ժողովրդին, որի առջև աչք են փակում Մշո կառավարական պաշտոնյաները, քանի որ նրանք «հարկ եղած ատենը գիտեն Մշո կառավարության աչքը կապել, որ զիրենք չի տեսնա և ասով ամեն կերպ հարստահարությունները անկասկած և ազատարար գործեն»[4]։

Ժողովրդի թշվառության մյուս պատճառը տասանորդ տուրքի վարձակալներն են, որոնք «հողագործի ցանած բերքերեն, ինչ

---

1 ԳԱԹ-ի արխիվ, Գ. Սրվանձտյանի ֆոնդ, վավ. № 4/5։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը։

սերմ որ կլինի յուրաքանչյուր տեսակն իր տասանորդը. ստանա բերքերը չափած ատենը թե հատեղեն և թե խոտ»[1]։ Սակայն վարձակալը խոտը հաշվում է, բայց չի վերցնում, այն թողնում է գյուղացու մոտ մինչև ձմռան օրերին, նրանից ոչ թե խոտ, այլ դրամ է պահանջում. «Խեղճ գյուղացին այս զրկանաց համար որո՞ւ պիտի բողոքի, մանավանդ երբ տասանորդողն Մշո կառավարության անդամներեն մեկն է»[2]։ Այնուհետև խոսելով գյուղացիների ծանր տնտեսական վիճակի մասին, Մ. Խրիմյանը գտնում է, որ բերքի տեղը դրամ չպիտի գանձվի և վերջապես «պետք չէ մոռնալ նաև այդ վարձակալներու ծառայից հասցրած զրկանքները, որք հնձոց և կալի ժամանակները գյուղերու մեջ նստելով, որչափ կծանրանան խեղճ գյուղացոց վրա իրենք իրենց ձիերով մեկտեղ։ Ոչխարաց տուրք ժողովող վարձակալաց վարմունքը, Մշո կառավարության դռնեն այլ և այլ գործոց համար գեղեր գնացող ծառայից վարմունքը, ասոնք առհասարակ սահմանված օրենքին դեմ հակառակ վարվելով ձիոց և իրենց կերակուրներն պետք է որ ձրի լինին։ Թող այս գատապարտ բեռն՝ հայհոյանք զրկանք և լլկանք ևս վերա բարդելով»[3]։

Մյուս հարցը, որը բարձրացնում էր Մշո աշխարհի հոգևոր հովիվը, այն է, որ գյուղերից մեծ քանակությամբ մարդիկ ընտանիքներով հեռացել են, սակայն նրանց տուրքերը պահանջում են մնացյալներից. «Խայրետին փաշայի օրեն մինչև ցարդ քանիքանի անգամ գեղացվոց կողմեն բողոք տրվեցավ, թե Բարձրագույն Դռնեն և թե Կարնո կուսակալաց կողմեն ազգու հրամանագիրերը ղրկվեցան 'ի Մուշ, բայց մինչև ցարդ նորա գործադրության համար անփույթ եղած է Մշո կառավարությունը, դեռ այդ ողորմելի գեղացիները գնացող գաղթականաց ծանր բեռանց տակ կրճնշվին, մինչդեռ իրենք իրենց չքավորութենեն իրենց բաժին տուրքը կարող չեն վճարել։ Ինչպես կարելի է և ինչ իրավունք է ուրիշի բաժին ինկած տուրքն ևս վճարել»[4]։

Վերջին պատճառը հարստահարության Մշո կառավարությունն է, քանի որ ամենուրեք ապստամբ տիրապետողները՝ քուրդ բեկերն ու աղաները այնպես են վարվում ժողովրդի հետ,

---

1 ԳԱԹ-ի արխիվ, Գ. Սրվանձտյանի ֆոնդ, վավ. № 4/ա։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը։

ինչպես առաջ՝ Մշո մեջ, ըստ Մ. Խրիմյանի, ցավալի վիճակի մեջ են ոչ միայն հայերը, այլև մահմեդականները, «որոնցմե չատերը ալուր պարենից անգամ կարոտ ըլլալով կը տառապին չարաչար»[1]։

Ահա այսպիսի վիճակում էր Մշո երկրի ժողովուրդը։ Այդ մասին շատ ու շատ էջեր է թողել նաև Գ. Սրվանձտյանը։ Այսպես, 1868 թ. նա լինելով Ճապաղջուրի Կվարս գյուղում, նկատեց, որ գյուղացիությունը «սաստիկ նեղություն կկրե Պոկուլնա բրդերեն ու Ավտալ աղայեն. գրեթե ամեն տարի պատերազմ կրնեն իրարու հետ, թեպետ Կվարսցիք ալ փոխադարձ հարվածներ կուտան թշնամաց, վասնզի քաջ են»[2]։

Գ. Սրվանձտյանը գրում է նաև այն մասին, որ այդ նույն Ավդալ աղան «առանց թափու ընելու՝ Ավտալ այնքան հողի տեր է, ուրիշ գեղացիներ կը բերե իր հողի մեջ իրենց լուծքով վարել կուտա. իրենց սերմով ցանել կուտա, իրենք կքաղին, կկալսին, երբ ցորեն պատրաստ կը լինի Ավտալ կուգա եղած արդյանց կեսն ինքն կառնու իբրև հողին վարձք կեսը կմնա գյուղացոց։ Եվ իրեն առված բաժնի տասանորդն ալ գյուղացիին վճարել կուտա և ինչ որ տեսնե և հայոց քով որ իրեն հաճոյից ու պիտանի լինի կխլե տանի, գնացող եկողներեն ալ ինչ տեսնա ու սիրտն ուզե՝ կառնե»[3]։

Մ. Խրիմյանը միաժամանակ սկսեց իր աշխատանքը նաև քրդական ցեղերի մեջ։ Նա համոզում էր մի շարք քուրդ ցեղապետների քրդերի համար դպրոցներ բացել, դրա դիմաց խոստանում էր նրանց տալ հայատառ քրդերեն դասագրքեր և ուսուցիչներ։ Քրդական ցեղապետների մի մասը համաձայնվում էր Մ. Խրիմյանի այս առաջարկի հետ, սակայն, նրա առաջին քայլերը հանդիպում էին քուրդ կրոնավորների կատաղի դիմադրությանը։ Այս խնդիրը ձեռնտու չէր նաև օսմանյան կառավարողներին, քանի որ նրանք չէին ցանկանում, որպեսզի քրդերի մեջ լուսավորություն տարածվի, որովհետև նրանք տանում էին մուսուլմանական կրոնը օգտագործելու միջոցով քրդերին ձուլելու և նրանց հայերի դեմ լարելու ու երկու ժողովուրդների մերձեցումը անհնարին դարձնելու քաղաքականություն։

---

1 ԳԱԹ-ի արխիվ, Գ. Սրվանձտյանի ֆոնդ, վավ. № 1/12։

2 Նույն տեղը, վավ. № 1—12, էջ 8։

3 Նույն տեղը, էջ 3։

Մ. Խրիմյանը անմիջապես նկատեց, որ Տարոնի մեջ պանդղխությունը նույնպես չարիք էր, որին լավ ծանոթացել էր իր հայրենիքում՝ Վասպուրականում։ Նա սկսեց աշխատանք տանել այդ չարիքի դեմ։

Այդ տարիներին «Արծուիկ Տարօնոյ» թերթի հետ միասին Տարոնում փաստորեն սկսվում էր լուսավորական մի շարժում, որը պետք է տարածվեր ու թափանցեր Տարոնի գյուղերը։ Թերթը տպագրվում էր ամիսը երկու անգամ։ Ժողովրդին հասկանալի աշխարհիկ լեզվով տպագրված նրա համարները մատչելի էին բոլոր ընթերցողներին։

Եթե Մ. Խրիմյանի գործունեությունը լավ ընդունվում էր ժողովրդի կողմից, որոնք նրան Հայրիկ էին կոչում, ապա այն դիմադրության հանդիպեց Մուշի առանձին երևելիների և հոգևորականների կողմից, որոնք սկսեցին բողոքել Մուշի փաշային, որ նրա բաց արած տպարանը և հրատարակած «Արծուիկ Տարօնոյն» հակակառավարական գործունեություն է ծավալում։ Մուշի թուրք կառավարիչը ելնելով այդ բողոքներից, կնքել է տալիս տպարանը։ Մ. Խրիմյանին հաջողվում է համոզել, ինչպես թուրք պաշտոնյային, այնպես էլ Մուշի երևելիներին և տպարանը սկսում է եռանդուն գործունեությունը։ Տարոնի «Արծվիկը» շատ հոդվածներ էր տպագրում ժողովրդի տառապանքների մասին, միաժամանակ նրա էջերում երևում էին Տարոնի ժողովրդական գողտրիկ երգերը։ «Արծվիկը» ընդամենը գոյություն ունեցավ մեկուկես տարի՝ 1863 թ. ապրիլից մինչև 1864 թ. օգոստոսի 15-ը։

Կամաց-կամաց Մ. Խրիմյանի դեմ ավելի սովարացան նրա թշնամիները, որոնք սկսեցին գրել դիմումներ Կոստանդնուպոլսի կենտրոնական կառավարությանը և պատրիարքին, պահանջեցին փակել թերթը և պատասխանատվության ենթարկել Մ. Խրիմյանին։ Նրա հակառակորդները Մ. Խրիմյանի և Գ. Սրբվանձտյանի լուսավորական աշխատանքները համարում էին պետության դեմ կազմակերպվող ժողովրդական ըմբոստություններ։ Նրանք չարախոսում էին այն մասին, որ իբր թե այդ գործիչները ոտնահարում են ազգային սահմանադրությամբ սահմանված կարգ ու կանոնը, վարկաբեկում են հայ հոգևորականներին և այլն։

Մ. Խրիմյանի ժամանակ Մշո ս. Կարապետ վանքը, ինչպես ասված է Հ. Առաքելյանի արխիվում գտնված «Խրիմյանի կյանքը և գործունեությունը» ձեռագիր աշխատության մեջ, ուներ երեք

ապարակ կամ 1500 արոտավայրի չափ հող[1], 5 հազար ոչխար, 500 գոմեշ, եզ, կով, 60 ձի և ջորի։ Այս վանքի վիճակում կար 180 գյուղ, 27.000 ծուխ, բացի Մուշ քաղաքի բնակիչներից։ Յուրաքանչյուր ծուխ վանքին պետք է տար մեկ չափ ցորեն, 2 հոխա կարագ, 2 հոխա պանիր և մեկ ոչխար։ Այսպիսով, վանքը տարեկան ստանում էր 27.000 չափ ցորեն, 54.000 հոխա կարագ, յուղ, 54.000 հոխա պանիր և 27.000 ոչխար[2]։ Ինչ խոսք, վանքը մեծ եկամուտներ ուներ նաև նվիրատվությունից և այս հսկայական միջոցների մի զգալի մասը մտնում էր առանձին վանականների և աղաների գրպանը։ Մ. Խրիմյանը վանքում կարգ ու կանոն հաստատեց, և սկսեց հալածել հափշտակիչներին և նրանց համախոհներին։

Մ. Խրիմյանը հավաքված այդ միջոցներով պահում էր ժառանգավորաց դպրոցը և սկսեց տպարանում հրատարակել «Արծուիկ Տարօնոյ» պարբերականը, գրքեր, ստեղծեց վանական ժողով, թանգարան։ Նրա առաջնորդության տարիներին Տարոնի մի շարք գյուղերում բացվեցին դպրոցներ, ապա՝ հրապարակ եկան մի շարք ընկերություններ։

Սակայն Մ. Խրիմյանի հակառակորդները սկսեցին ավելի ու ավելի լարվել նրա դեմ, նոր ամբաստանագրեր գրեցին կառավարությանը, որի մեջ մեղադրում էին նրան, որ նա Կոստանդնուպոլսի սահմանադրականների խորհրդով «գաղտնի նպատակ ունի հայերը գրգռելու» և իր լրագրի մեջ «տերության հակառակ բաներ է քարոզում ու ապստամբեցնում ժողովուրդը»[3]։

«Արծուիկ Տարօնոյի» մասին եղած այդ ամբաստանագիրը պալատից ուղարկվեց Հայոց պատրիարքին։ Ստեղծվեց հանձնաժողով և Թերթի մինչև այդ լույս տեսած 14 համարները հանձնվեցին Սեթյան Հովհաննես վարդապետին, որը մանրամասն ուսումնասիրելով այն, զեկուցեց հանձնաժողովին։ 1863 թ. դեկտեմբերի 4-ին, ինչպես նշված է հանձնաժողովի մեզ հասած արձանագրության մեջ, Փափազյան Գևորգ աղայի տանը տեղի ունեցավ նիստը, որը նշեց, որ Մ. Խրիմյանը շաբաթաթերթը հրատարակել է «հասարակաց կրթության պաշտոնատունեն իր

---

1 ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆոնդ, վավ. № 182, էջ 11։

2 Բաղեշի վիլայեթում մեկ հոխան հավասար էր 3 1/4 կրվանքայի, իսկ մեկ չափը՝ 4 փթի։ Տե՛ս Ա. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), Երևան, 1965, էջ 309։

3 ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆոնդ, վավ. № 182, էջ 11։

ձեռքն ունեցած արտոնագրին զորությամբ»[1] և վերջապես ժողովրդին կառավարության դեմ գրգռելու ապստամբության մասին հանձնաժողովը գրեց, «թե Արծուիկին հայ ժողովրդյան համար գերի է ըսելը իր մեջեն իր վրա բռնացող անձերուն և քուրդերուն ձեռքը գերի է ըսել կուզե և ուշադրություն գոչելը ժողովրդին լուսավորելովը այն ազգատյաց և դավաճան հայերուն ձեռքեն ազատել կհասկընա՝ ինչպես անոր հոդվածներն ուշի ուշով կարդացողը կըտեսնե»[2]։

Մ. Խրիմյանը 1864 թ. գնաց Կոստանդնուպոլիս։ Պատրիարքարանի կողմից Մուշ ուղարկված հանձնաժողովը ժխտեց նրա մասին եղած մեղադրանքները։ 1865 թ. Մ. Խրիմյանը նորից Տարոնում էր և շարունակում էր իր հայրենանվեր գործունեությունը։ Սակայն Խրիմյանի հակառակորդները ինչպես Վասպուրականում, այնպես էլ Տարոնում միավորվեցին և նրանց հաջողվեց հետագայում շարքից հանել մեծ ջանքերի գնով լույս աշխարհ եկած «Արծուի Վասպուրական» և «Արծուիկ Տարօնոյ» պարբերականները։ Մ. Խրիմյանը ստիպված այս անգամ էլ նորից գնաց Կոստանդնուպոլիս, որտեղ գրեց իր «Մարգարիտ արքայութեան երկնից» աշխատությունը, որը և հրատարակվեց 1866 թ։ Վերջապես Մ. Խրիմյանին հաջողվում է Կոստանդնուպոլսի պատրիարքարանում ապացուցել իր գործունեության տեղին լինելը և նրա դեմ բողոքով վեց վարդապետները աքսորվեցին Մուշից։ Մ. Խրիմյանը նորից վերադառնում է Մուշ իր պաշտոնին և ջերմ ընդունելություն է գտնում ժողովրդի կողմից։

Գնահատելով Մ. Խրիմյանի հայրենանվեր գործունեությունը, հարկ է նշել նաև, որ նա հանդիսացավ այն մտավորականը, որը սկիզբ դրեց մի երևույթի, որի ժամանակ ժողովուրդը պետք է բողոքեր գավառներում տեղի ունեցող անիրավությունների դեմ։ Եվ սկսվեցին Արևմտյան Հայաստանի բոլոր գավառներից մեծ քանակությամբ նամակներ և տեղեկագրեր գնալ Կոստանդնուպոլիս գավառահայության ահավոր վիճակի և հարստահարությունների մասին։ Այսպես, իրար հետևից 500-ից ավելի տեղեկագրեր հասան հայոց պատրիարքարան, որ Մ. Խրիմյանը իր պատրիարքության ժամանակ պահանջեց քննարկման դնել։ Ստեղծվեց քննիչ մի հանձնաժողով, որի կազմած տեղեկագիրը

---

1 ԳԱԹ-ի արխիվ, Գ. Սրվանձտյանի ֆոնդ, վավ. 46/5

2 Նույն տեղը։

ներկայացվեց կառավարությանը՝ խնդրելով միջոցներ ձեռնարկել կարգավորելու գավառներում գտնվող հայերի անտանելի վիճակը։

Համառոտակի կանգ առնենք «Արծուիկ Տարօնոյ» թերթի գաղափարների ու նպատակների վրա։ Նրա առաջաբաններից մեկում գրված է. «Քո ճանապարհ՝ ճշմարտություն լինի, քո հղանակ՝ բարեխառն խոհեմություն, քո ընթացք՝ զգուշություն, քո շունչ՝ ազատություն, քո բարբառ՝ հայրենասիրություն»[1]։ Այսպես, ուրեմն, հենց առաջաբանում թերթը քարոզում էր Օսմանյան կայսրության դաժան պայմաններում ճշմարտություն, ազատություն, հայրենասիրություն։ Այս առաջաբանը գրել է Գ. Սրվանձտյանը։ Չենք կարող չնշել, որ այս առաջաբանի և թերթի գաղափարների քարոզը միայն Տարոնի ժողովրդի համար չէր, քանի որ Իննակնյան վանքի պարիսպներից թերթը թռչում էր դեպի Հայաստանի մյուս վայրերը, անցնում էր սահմանագծերը, մտնում Արևելյան Հայաստան, Կովկասի փոխարքայության կենտրոն՝ Թիֆլիս, Պարսկաստան, Կոստանդնուպոլիս, Կիլիկիա, Ռուսաստանի հայաբնակ վայրերը և շատ այլ տեղեր։

Դիմելով թերթին, հայրենասեր Մ. Խրիմյանը ակամայից բացականչում էր. «Ո՜հ, դու ծնար, զեռ Հայաստան ի ցավս կը հեծե. քո ծնողի անդրանիկ համբույր շրթանց՝ կայտառ երեսներդ տաք-տաք արցունքով թրջեցին թաց-թաց»[2]։ Գրելով այդ խոսքերը Մ. Խրիմյանը և Գ. Սրվանձտյանը նկատի ունեին այն տառապանքները, որ կրում էր հայ ժողովուրդը Արևմտյան Հայաստանում և Օսմանյան Թուրքիայի հայաբնակ վայրերում։ Իր էջերում «Արծուիկը» քարոզում էր բողոքել ընդդեմ անիրավությունների և հարստահարությունների։ Թերթում ամեն ինչ գրվում էր հասարակ ժողովրդին հասկանալի լեզվով, այդ հոդվածները նմանվում էին Սասնա սարերից դեպի Մշո դաշտը հոսող աննման ու վճիտ աղբյուրների և գետակների մաքուր ջրին, նրանք հասկանալի էին բոլորին, նրանց մեջ ջերմ շունչ կար ու շիտակություն։ Գավառահայության ազգային ճնշումներն ու հարստահարություններն այնտեղ լուսաբանվում էին ինչպես որ կար, իսկ նրանց կատարողները դատապարտվում էին։

XIX դարի երկրորդ կեսին ուժեղացավ գավառներում ժողովրդի

---

1 «Արծուիկ Տարօնոյ», 1 ապրիլի, 1863։

2 Նույն տեղը, էջ 2։

կյանքը մաշող, նրան մասերի բաժանող, հայկական նահապետական տները տղամարդկանցից զրկելու մի չարիք, որը դեռևս շատ հին ժամանակներից ստացել էր ղարիբություն կամ պանդխտություն անունը, իսկ հետագայում գնալով ավելի ու ավելի մեծ չափերի հասավ։ Հայ ժողովրդի ուժերի ջլատող այդ երևույթը առաջացավ ճնշումներից, հարստահարություններից, անտանելի հարկերի ծանր բեռից։ «Արծուիկ Տարօնոյն» սկսեց իր մարտը նաև այդ երևույթի դեմ։ 1863 թ. իր համարներից մեկում թերթը նշում է, որ Վարդենիսի շրջանից 865 երիտասարդներ բռնեցին պանդխտության ուղին, սրանք առաջին մասսայական տեղափոխություններն էին, որոնց և հետագայում հետևեցին հարյուրավորներ ու հազարավորներ։ Նրանցից շատերը չէին վերադառնում իրենց ընտանիքների գիրկը և հարազատների կարոտը սրտում մեռնում էին օտարության մեջ։ Թե ինչպիսի կարոտով էին սպասում պանդուխտներին նրանց հարազատները, երևում է պանդուխտին իր կնոջ կողմից ուղարկված հետևյալ սրտաճմլիկ նամակից։ Մշեցի գեղջկուհին, անգրագետ լինելով այն գրել է տվել ուրիշին, դնելով իր զգացմունքները այդ նամակի մեջ. «Սա՛րգիս, քու սիրտ երկա՞թ էր, թե քար, կրակ չըկե՞ր քու ներս, ձյան կտո՞ր դրեր էին հոն, և ո՞ր դրավ պաղը մեջ քու սրտին, որ օր գիշերով, թողեցիր կորար սարերու ետև, դու գիտե՞ս ի՞նչ սև ու մուր քաշեցինք, չուր այն թուղթն եկավ»[1]։

Հայ հեղափոխական դեմոկրատ Մ. Նալբանդյանն իր «Ազգային թշվառություն» գործի մեջ, խոսելով արևմտահայերի անագորույն վիճակի մասին, գրում է. «Մենք սարսափում ենք, երբ աչք ենք ձգում այն անշքացած, անապատացած աշխարհի վրա, ուր երբեմն փողփողում էր Արշակունյաց հաղթակիր դրոշակը, ուր այժմ մեր խեղճ, անտեր և անօգնական ժողովուրդը միլիոնավոր բազմությամբ թշվառության հարստահարության և հուսահատության մինչև հնարավոր ծայրը հասած, փոխանակ արտասուքի, արյուն է քամում աչքերից, երբ լաց է լինում, և ուր, դարձյալ հայակերպ և գիշերադեմ վամպիրները տակավին չեն կշտանում անմեղ զոհի— խե՞ղճ ժողովրդի— արյունը ծծելուց»[2]։

---

[1] Յարոնի աշխարհ, Գեղամ Տեր-Կարապետյան, Պատկերներ ու պատմվածքներ, Փարիզ, 1931, էջ 79։

[2] Մ. Նալբանդյան, Երկ, հատ. երրորդ, Երևան, 1940, էջ 103։

Հեղափոխական մեծ դեմոկրատը միաժամանակ անդրադառնում է Մուշի ժողովրդի նյութական ծանր վիճակին ու բերում է Մուշի ժողովրդական բանահյուսությունից մի կտոր, որը տպագրվել էր Հ. Սրվանձյանի «Մեղու» պարբերականում.

Մամի՜կ, պատառ մը հա՜ց...
— Հոգցա՛, հի՞նչ տեղից քըզ հացիկ ճարեմ...
Մերիկդ թաղես, վա՜հ, անոթի ես ..[1]

Այնուհետև մշեցի մայրը դիմում է արագիլին, հանդիմանելով նրան, որ նա թափ տվեց իր թևերը և քնից արթնացրեց իր Մոսո որդուն։ Մայրը թռչունին ասում է, թե նրա ձագուկները կուշտ են, անոթի չեն, բայց իր տղան անոթի է և հաց է ուզում։

Շատ տխուր ու սրտաճմլիկ է պանդուխտ տղային ուղարկած մոր նամակը, որի մեջ նա գրում է որդուն, որ նա քսաներկու բարեագիր է ուղարկել, սակայն նրա կողմից պատասխան չի ստացել և մայրը տխուր վիճակում անեծքի և խղճմտանքի խոսքերով դիմում է որդուն ասելով. «Մկրո, անդատաստան զավակ, էս էլ քսաներկու բարեագիր եղավ կուղարկեմ, ամմեկ թուղթ հինգ նստերէ վրես հարյուր ղուրուշից էվել. դու հարիր փարայի բարև մը խնայեցիր։ Գելե՞րն են տարեր քո սիրտ։ Իսկի միտքդ չի՞ գար ծծած կաթդ։ Հապա իմ սպիտակ վարսը, որ էն սև ու սուգ գիշեր թափեցի ու փաթթեցի ոտքերնունդ»[2]։

Խեղճ մայրը տղային հիշեցնում է ոչ թե հարսի, այլ իր ծյունանման մազերի մասին, հիշեցնում է որդուն նրա կյանքի շատ ու շատ դրվագներ և խնդրում է, որպեսզի մի նամակ ուղարկի իրեն։ Իր նամակի մեջ նա գրում է. «Ա՛ռ իմ մազեր, Աստծոց տիլա՜կ կընեմ, որ քու մոր մազը գութ բերե քո սրտին, ռամ բերե քո հոգիին, ելնաս, դառնաս քու պապուդ օճախը, ու վառես քու ճրագիկը։ Տնով տեղով, դուռ ու գրկիցով կաչքենք քո ճամբա՛։ Արի՛, զավակս, արի, աստվորը փուչ է, արի՛։ Ինձի մացեռ է ափ մը արև, արի որ իմ արևս տամ քեզի։ Ճահիլ կողակից ունիս մատղաշ քու աղբեր, որ գիշեր ու ցորեկ՝ ի սար և ի սուրբ, աղաչանք կենին, կու ճամբեն կաչքեն։ Ճամբախնուդ ղուրպան Մկրո, որ էս թղթիկս էլ՝ ետև ականջի չը թալես։ Լուսնակի լուսով, արևու շողով ինձի ճուղապ մը հասցնես, թե՝ մա՛միկս, ես ուզ

1 Մ. Նալբանդյան, *Երկ*, հատ. 3-րդ, Երևան, 1940, էջ 109։

2 *Տարոնի աշխարհ*, էջ 177։

եմ, ոտոք-ձեռոք, աչոք-լուսոք, ու հունկուց ետք, եկնաս ի Ճամբան»[1]։

Սկսած 1863 թ. Մուշում արդեն եկեղեցական առաջնորդներ էին նստում, մինչ այդ Մշո ս. Կարապետի վանահայրերը միաժամանակ կատարում էին Մշո առաջնորդության պաշտոնը։ Մ. Երիմյանը հանդիսանում էր ս. Կարապետ և Վարագա վանքերի վանահայրը, իսկ վանքում գործող Ժառանգավորաց վարժարանը հանդիսանում էր վանքի վանահոր ամենօրյա մտահոգության առարկան։ Այդ ժամանակ վարժարանում ուսանում էր ընդամենը 33 աշակերտ։ Վարժարանը հանդիսանում էր Մշո դաշտի և Սասունի այդ ժամանակվա ամենամեծ կրթական օջախը, որի աշխատանքները իր պատշաճ բարձրության վրա դնելու համար ոչ մի ջանք չէր խնայում նաև Գ. Սրվանձտյանը։

Երբ մենք թերթում ենք Տարոնի այդ ժամանակաշրջանի մասին գրված աշխատությունները, ժամանակի պարբերական մամուլը, արխիվային վավերագրերը, մեր առջև ամենից առաջ վեր են հառնում ցավալի և աղետալի մի շարք երևույթներ։ Այդ Մշո դաշտի ժողովրդի մոտ կատարված հարստահարություններն էին, բռնությունները, սպանությունները, ժողովրդի ունեցվածքի թալանը, կանանց և աղջիկների առևանգումները և այլն։ Այս բոլորը կատարվում էին քրդական ցեղերի ու թուրքական պաշտոնյաների կողմից։ Եթե քուրդ բեկը կամ աղան, օգտվելով երկրում եղած անիշխանությունից, կեղեքում էր ու թալանում ժողովրդին, ապա թուրքական իշխանավորները, ունենալով պետության կողմից տրված պաշտոն, ավելի վատթար էին վարվում։ Թուրքական պաշտոնյաները ժողովրդի կողմից առաջ քաշած հարցերը լուծում էին միայն կաշառակերության միջոցով, առանց որի յոլա գնալ չէին կարող։ Տարոնի հայությունը սկսեց դիմել Կոստանդնուպոլսի կենտրոնական կառավարությանը կարծելով, որ նա միջոցներ կձեռնարկի այդ վիճակին վերջ դնելու համար, սակայն մայրաքաղաքում նստած պաշտոնյաները ավելի վատթար կաշառակերներ էին, քան գավառներում եղածները։

1862 թ. օգոստոսին Տավրոսյան լեռների վրա գտնվող Զեյթուն գավառակում սկսվեց նրա բնակիչների հերոսական ապստամբությունը, որը և վերջացավ լեռնականների հաղթանակով, որին անմիջապես հաջորդեցին հուզումները Մշո հայ գյուղերում։

---

[1] Տարոնի աշխարհ, էջ 178։

1869 թ. մինչև 1895 թ. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքը թուրքական կառավարություն է ուղարկել մի քանի հարյուր խնդրագրեր (թագրիր) Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ վայրերում հայ ժողովրդի ծանր վիճակի մասին[1]։ Այս խնդրագրերում բերված են Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ վայրերում տեղի ունեցած հարստահարությունների փաստեր։ Սակայն թուրքական կառավարությունը այդ երևույթները կանխելու նպատակով ոչ մի միջոցի չդիմեց։

Թուրքական վերադաս իշխանությունների ներկայացուցիչները առերես խոստումներ էին անում պատրիարքին ժողովրդի նկատմամբ եղած վայրագություններին վերջ տալու մասին, սակայն ժողովրդի վիճակը մնում էր նույնը։

Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահպանվել է 1867 թ. վերջին Երեմիա Տեկանցի (Տեր Սարգսենց) դիմումը ուղղված Ամենայն հայոց կաթողիկոսին, որի մեջ նա նշում է, որ Մշո աշխարհում հայերը գտնվում են ադետաղի դրության մեջ և «չարչարանաց մեջ կը հեծեծեն»։ Քուրդ հրոսակները թալանել են ս. Հովհաննես վանքը և այնտեղից տարել են «սրբազան ամանիներ, հաղվագյուտ մասունքներ, խաչեր, ավետարաններ, ընտիր-ընտիր հնություններ, առհասարակ ավար տարեր են։ Այս վանից ամբողջ հարստության գումարը կը հաշվեն մինչև երկու հազար քիսայի (մեկ միլիոն ղուրուշ; մեկ քիսան՝ 500 ղուրուշ է։— Հ. Պ.), իսկ նվիրական մասունքներու արժեքը ո՞վ կարի գնահատել»[2]։

Որոշ ժամանակ անց Մուշի և Վասպուրականի ժողովրդի հարստահարությունների մասին 1869 թ. Կոստանդնուպոլսի հոգևորական դասի 126 ներկայացուցիչների ստորագրությամբ կաթողիկոսը ստանում է մի զեկուցագիր, որի մեջ նշվում է, որ Մշո և Վասպուրականի ժողովուրդը հարստահարվում է, ժողովուրդը գտնվում է շատ ծանր վիճակում։ «Վեհափառ Տեր,— գրում են նրանք,— որ հիշյալ գավառներուն մեջ մեր ստացվածները կը հափշտակվին, մեր տունները, վանքերն ու եկեղեցիները կը կողոպտվին, մեր կանայք ու աղջկունք կը բռնաբարվին, մեր

---

1 Մ. Դ. Եկրսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնակալության դեմ, Երևան, էջ 486։

2 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 303, վավ. 998։

ազգայինք, եկեղեցական և աշխարհական կը խողխողվին շարա-
շար»[1]։

Եվ այսպես, իրար ետևից շարունակվում են Կոստանդնու-
պոլսի հայ պատրիարքի թագրիրները դեպի օսմանյան արքու-
նիքը, սակայն, ինչպես ասացինք, դրությունը մնում էր ան-
փոփոխ։ Ստեղծված իրավիճակը արդեն ստիպում էր արևմտա-
հայերին զինվել և զենքով պաշտպանել իրենց պատիվը։ Այդ-
պես էր մտածում թե՛ պատրիարքը և թե՛ ժամանակի հայ
մտավորականությունը։ Մ. Խրիմյանին նվիրած իր մի բանաս-
տեղծության մեջ վաղամեռիկ բանաստեղծ Պետրոս Դուրյանը
19-ամյա հասակում գրում էր.

Մեր պատիվը ու քուրդը կուզենք
Եվ կամ նրա զենքին դեմ զենք[2]։

Ելնելով արևմտահայերի համար ստեղծված ծանր վիճակից,
նույն կոչը «Ղարիբ մշեցին» բանաստեղծության մեջ անում էր
նաև Ռ. Պատկանյանը, որը զենք էր խնդրում ազգից մշեցի
ճամփորդի անունից.

Ես մշեցի ճամփորդ եմ հեռու տեղերեն,
Ձեզ շատ բարև բերեր եմ հայի գեղերեն.
Ախպերքո ինձ ղրկեցին դեպի էս կուման —
(Մ'ի վախենաք, չուզեմ ձեր մանեթն ու թուման)
Վարագա Սուրբ Խաչեն բերել եմ ձեզ լուր.
Խղճացե՛ք հայ ազգիս, տվեք մեկ մեկ թուր[3]։

Ելնելով տեղերից ստացված բողոքներից, ազգային ժողով-
նելից մեկը կազմեց մի հանձնաժողով, որը և հանձնարարու-
թյուն ստացավ զբաղվել դավառահայության «կրած ճարստա-
ճարությանց պատճառները քննարկելու, և դարմանը խորհելու»[4]
հարցերով։

Հանձնաժողովը սկսեց աշխատել 1870 թ. վերջերից և ունե-
ցավ 23 նիստ։ Պատրիարք Մ. Խրիմյանը մինչև այդ քննարկում-
ները ուղարկել էր բոլոր առաջնորդներին մի շրջաբերական,
որի մեջ նրանցից պահանջում էր. «Ա. ի՞նչ են իրենց վիճակի

---

1 Մատենադարան, Կաթ. դիվան թղթ. 203, վավ. 965։

2 Պ. Դուրյան, Երկեր, Հայպետհրատ, Երևան, 1947, էջ 21։

3 Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հատ. առաջին, Երևան, 1963, էջ 109։

4 Ատենագրութիւնք երեսփոխանական ընդհանուր ժողովոյ, Կ. Պոլիս, 1874, էջ 468։

ցավերը, հարստահարությունները, և անոնց պատճառները (տուրքի, ասկեր պետելիյեյի, ճանապարհի շինության, քրտերու, պեյերու, մուլթեզիմներու, ծանր-ծանր վաշխառուներու երեսե, և այլ զանազան ցավեր, որոնք ձեզի ծանոթ են)։ Բ. Ի՞նչ տեսակ դարման կրնա մտածվիլ ասոնց առջևն առնելու համար»[1]։

Դեռևս 1870 թ. երեսփոխանական ժողովներից մեկի ժամանակ նոյեմբերի 21-ին Երեմիա Տեկանցը գավառների հարստահարությունները բաժանում էր երկու մասի՝ ներքին և արտաքին, այսինքն՝ հարստահարություններ, որոնք կատարվել էին կառավարական պաշտոնյաների, քուրդ բեկերի և աղաների կողմից և հարստահարություններ, որոնք կատարվել էին հայ վաշխառուների կողմից։ Այդ կապակցությամբ Կ. Պոլիս երեսփոխանական ժողովի արձանագրության մեջ գրված է. «Մեր գավառական հայ եղբայրք գլխավորապես երկու կերպ հարստահարության ենթակա եղած են, ներքին և արտաքին, ներքին հարստահարիչք մեր մեջ բնակելու են, իսկ արտաքինքն՝ օտարաց մեջ»[2]։ (Ընդգծումը մերն է,— Հ. Պ.)։

Այնուհետև խոսելով հայ վաշխառուների և այլ հարստահարողների մասին նա նշում է. «Գավառաց երկրորդ տեսակ ներքին հարստահարողք դարձյալ մեր մեջ են, անունով հայ են, հավատանե քրիստոնյա են, բայց շատ անգամ օտար և արտաքին բռնավորներեն ավելի վնասակար, ավելի դավաճան են ազգին և հայրենյաց։ Թերևս դիտեք, թե այսօր գավառաց մեջ այնպիսի բռնավոր հայեր ունինք, որոց եղեռն և բռնություն ավելի վնասակար են ազգին, քան զՎասակին. սոյն հրեշ բռնավորները գոգ թե գիշեր ցորեկ բան գործ արած են ազգ մատնել, անմեղներ զրպարտել, աղքատ ժողովուրդն կեղեքել և հարստահարել, աշխարհ խառնել տակն ու վրա առնել...»[3]։

Հարստահարությունները տեղի էին ունենում նաև Քրդաստանում, որտեղ եղած հայ գյուղերի շինականների ծանր վիճակի մասին տեղեկություններ կան Մկրտիչ Տիգրանյանի 1864 թ. լույս տեսած մի աշխատության մեջ։ Խոսելով այնտեղ ապրող հայերի մասին, գրքի հեղինակը գրում է. «Քրտիսթանու քուրտ մահմեդականները Շեհվի օրինոք ըլլալուն համար, քրիստոն-

---

1 Ատենագրութիւնք երեսփոխանական ընդհանուր ժողովոյ, Կ. Պոլիս, էջ 468—469։

2 Նույն տեղը, էջ 152։

3 Նույն տեղը, էջ 154։

ներից կարդալու և աղոթք ընելու ձայնը իրենց ականջին հասնելը շատ մեծ մեղք համարվելուն համար, մինչև անգամ եկեղեցեաց լուսամուտ շինելը արգելված էր. անոր համար մինչև հիմա եկեղեցիները ո՛չ լուսամուտ ունեն և ո՛չ պատուհան. միայն մեկ փոքր դուռ ունի, թեև կես ավուր արևին ներս մտնասնե, լույս չես կարող տեսնել»[1]։

Այս գրքից իմանում ենք նաև, որ քրդական բեյերը հաճախ իրար դեմ էին կռվում և գնում էին նրան, որ «անխտիր քրիստոնեից և մահմեդականներուն զենք վերցնելու հրաման տրված էր, և մանավանդ քաջ պատերազմող անձի մը ավելի շատ մեծ պատիվ կուտային, երբոր քաջապես կը պատերազմեր. ասոր համար ամեն մարդ տղայութենե կսկսեր զենքի հետ զբաղիլ»[2]։ Այստեղից երևում է նաև որ քրդական շատ աշիրեթների մոտ հայերը նույնպես զինված էին և մասնակցում էին կռիվներին։ Մ. Տիգրանյանի այս գիրքը հավաստի տվյալներ ունի իր մեջ նաև հայ եկեղեցիների կողմից բնակչությունից գանձվող հարկերի մասին։ Այսպես, Քրդստանում գործող հայ եկեղեցիները գյուղացիներից գանձում էին մեծ քանակությամբ հարկեր՝ «մարտ ամսոյն հավկիթ, ապրիլին մատաղ, մայիսին յուղ, հունիսին խոտ, հուլիս և օգոստոսին ցորեան և գարի, սեպտեմբերին իաղողի շիրա, հոկտեմբերին բամպակ, նոյեմբերին սավառ և ժեծած և բոլոր ապրցու, դեկտեմբերին՝ հունվարին՝ փետրվարին՝ տարեկան պտղին...»[3]։

Սակայն դառնանք կազմած տեղեկագրին։ Իր ժողովրդի վիճակը լավ հասկացող Մ. Խրիմյանը շրջաբերականի մեջ միաժամանակ պահանջում էր ճիշտ տեղեկություններ տալ։ Հանձնարարված էր հանձնաժողովին նայել պատրիարքարանում քսան տարիների ընթացքում դավառներից ստացված բոլոր տեղեկագրերը։ Հանձնաժողովը այդ բոլոր վավերագրերը ուսումնասիրելիս պարզեց, որ սրբոնի տուրքերը նշանակելիս զեղծումներ են կատարվում։ Այսպես, գավառներում զինվորական տուրքը (ասկեր պեսելյե) պահանջվում էր նաև անհայտացողներից, դաղթողներից և երբեմն էլ մեռելներից։ Այդ տուրքը հարկադրողները նախատեսում էին նաև յուրաքանչյուր արուի և զառամյալի համար և գյուղացիները այնքան պարտք ունեին, որ «ո՛չ թե

1 Մ. Տիգրանյան, Հայելի գործոց և աշխատութեանց, էջ 2։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը, էջ 3—4։

ունեցածնիս, այլ զավակներիս-ալ ծախենք, չպիտի կրնանք հատուցանել»[1]։

Այնուհետև ասվում էր կալվածների և վաստակի տուրքի մասին, որն այնքան շատ է, որ շատ տեղերում «տրոց հավաքման համար աղքատին անհրաժեշտ կահկարասիքն ու գործիքը բոնի ծախելու, և զանոնք բանտարկելու խստություններ ի գործ կը դրվին»[2]։ Պարզվեց, որ կառավարական պաշտոնյաները հարկերը դնում էին այնքան, որքան իրենք էին ցանկանում, այս կապակցությամբ տեղեկագրում գրված է. «Այսչափ ցորեն կամ բամբակ կուտա այս արտը, այսչափ դրամ պիտի տաս կըսեն (դրամ կառնեն և ոչ բերքին տեսակեն, և այն ալ պղինձ դրամ չեն առներ), եթե բերքի տերը դժկամակի տալ մյուլթեզիմը ալ ավելի կը հակառակի, և բերքը երեսի վրա կը թողու (զի մինչև տասանորդը չառնվի, բերքը իր շտեմարանը չբարձվիր), որ կրնա ջատ վնասներու ենթակա ըլլալ. ապա առջի ուզած տասանորդին կրկնապատիկը կը պահանջե ու կառնե»[3]։

Խեղճ գյուղացին հարկերը հավաքելու ընթացքում պարտավոր էր կերակրել մյուլթեզիմին ու նրա հետ եղածներին այնքան ժամանակ, որքան որ նրանք գտնվում էին գյուղում՝ «երբեմն ալ կը ծեծվին և երբեմն ալ կանանց պատիվն կարատավորվի»[4]։ Այնուհետև տեղեկագիրը հավաստում է այն մասին, որ «Շահնալի կամ յոլչեկ հագկը ըսված արգելյալ տուրք մը ալ կա, որ բերքին 1/6-ն է, երբեմն ալ ավելի. զոր հողագործը եթե չտա, Շահնան շատ վնասներ կը հասցնե անոր»[5]։ Տեղեկագիրը միաժամանակ նշում էր, որ կառավարությունը սանջակների կենտրոններում հաստատել էր այսպես կոչված «Մանեֆիի ումումյե սանդուղը» կոչված բանկային բաժանմունքներ, որոնք գյուղացիներին պետք է ուտելիք կամ սերմ տային, այս կապակցությամբ հարկեր էին հավաքվում, սակայն իրականում այդ բաժանմունքները գյուղացիներին ոչ մի օգնություն ցույց չէին տալիս։ Տեղեկագրում փաստեր էր բերվում նաև կառավարական պաշտոնյաների կողմից կեղծումներ, պաշտոնական չարաշահումներ կատարելու մասին, որի պատճառով էլ գյուղերում

---

1 Ատենագրութիւն ..., էջ 469։

2 Նույն տեղը, էջ 470։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը։

5 Նույն տեղը, էջ

«ոչ կնիկ մարդիկ կրնան դուրս ելնել, ոչ մանկունք ի գպրոց երթալ, ոչ հայտնի ուրախություն մը ընել, կամ մեռել մը թաղել առանց անարգություն կրելու...»[1]։

Ժողովուրդը գանգատվում էր նաև այն բանից որ պահանջվում էր կատարել մեծ քանակությամբ պարհակներ, մարդիկ պետք է աշխատեին արքունական շինությունների, չերքեզների և պետական զորքերի փոխադրության համար։ Շատ տեղերում բռնագրավվում էին աղգային կալվածքները և գյուղացիների հողերը։ Կարինի և Կարսի բերդերը ամրացնելու համար աշխատավորները այնտեղ էին գալիս 70-ից մինչև հարյուր ժամ հեռավորությունից։ Պետությունը պարտավոր էր այնտեղ աշխատելու համար նրանց վճարել, սակայն չէին վճարում և նույնիսկ ստիպում էին նրանց «թնդանոթները փոխանակ անասնոց լծել և քաշել տալու՝ երբեմն մարդոց քաշել կուտան»[2]։ Կառավարական պաշտոնյաները խոստանում էին խեղճերին աշխատացնել չորս օր, սակայն աշխատացնում էին 10—20 օր։ Այնուհետև քաղաքներում և գյուղերում բռնի հավատափոխություն էր կատարվում. «Թե՝ կանայք և անչափահաս մանկունք բռնի մահմեդականության դարձնելու ջանքերն՝ որ մոլեռանդից ձեռոք կըլան, շատ անգամ կառավարության անդամոց կողմե կողմնակցություն կը գտնեն, և այս ալ բավական աղետ մը եղած է ժողովրդյան»[3]։

Կար մի հարկ ևս թերեքեի անունով, երբ մեկը մեռնում էր, ղադիները գնում էին նրա տուն և նրա ընտանիքից հարկ էին պահանջում, անկախ նրանից, թե ում էր կտակել նա իր ունեցվածքը։ Ամենասարսափելին՝ ոչ մահմեդականի վկայությունը չէր ընդունվում «գյուղի մեջ, շուկայի մեջ, տան մեջ, ուր որ ըլլա, ոչ մահմեդական մը կը ծեծվի, կը նախատվի և այլն»[4]։

Վերը նշված բոլոր փաստերը, ինչ խոսք, ամփոփվեց պատրիարքարանում, քննարկվեց և արդյունքների մասին գրվեց համապատասխան ղեկուցագիր կառավարությանը, սակայն գրությունը տեղերում մնաց նույնը, հայ ժողովուրդը բացի խոստումներից, ոչինչ չստացավ և թուրքական բռնակալական իրականության պայմաններում ոչինչ էլ ստանալ չէր կարող։

---

1 Ատենագրութիւնք..., էջ 471։

2 Նույն տեղը, էջ 472։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը, էջ 473։

Չնայած XIX դարի 60-ական թվականներին Տարոնում բացվեցին զգալի թվով դպրոցներ, այնուհանդերձ Մուշը և նրա շրջակա գավառները կրթական տեսակետից գտնվում էին անմիջիթար վիճակում, իսկ Սասունում ավելի վատթար վիճակ գոյություն ուներ։ Մուշում և Սասունում դպրոցներ բացելը, ժողովրդի զավակներին կրթելը բռնությունների և հարստահարությունների այդ ժամանակաշրջանում դառնում էր հրամայողական պահանջ։ Միաժամանակ անհրաժեշտ էր ժողովրդի միջից վերացնել մահմեդականներից հայերին փոխանցված զալանը։ Աղջկա հայրը աղջկան ամուսնացնելու համար փեսայի ընտանիքից գումար էր պահանջում, և քանի որ տղաներից շատ շատերի ընտանիքները անհրաժեշտ քանակի գումար չդնեին, ուստի և ամուսնությունը դառնում էր դժվարին գործ, իսկ շատ դեպքերում էլ՝ անհնարին։

Մշո դաշտի գյուղերի և քաղաքի ժողովրդի հարստահարությունների մասին Ամենայն հայոց կաթողիկոսի դիվանում, ժամանակի պարբերական մամուլի էջերում պահպանվել են բազմաթիվ փաստեր և վկայություններ, որտեղ նկարագրված է Տարոնի ժողովրդի անտանելի վիճակը։ Նշվում էր, որ հասարանցի ցեղերը հարստահարում են Մշո դաշտի ժողովրդին, մոտկանցի աշիրեթները թալանեցին Սասունի ս. Աղբերիկ վանքը, իսկ թուրք պաշտոնյաները Մուշի գյուղերում իրենց սանձարձակ էին պահում։ 1868 թ. սեպտեմբերի 19-ին կողոպտվեց ս. Հովհաննու վանքը։ Այդ հարստահարությունների և կողոպուտների մասին եղած փաստերը հետագայում հրատարակվեցին Կ. Աղանյանցի «Դիվան հայոց պատմության» գրքաշարի 10-րդ կրքում։ Այս երևույթները չլսված ու չտեսնված էին Մուշի ամբողջ պատմության մեջ։ Երբեք Մշո ժողովուրդը այնքան դառը վիճակում չէր եղել, ինչպես այդ ժամանակ։ Բնականաբար պետք է մտածել ժողովրդին այդ ծանր վիճակից դուրս բերելու մասին։ Մի շարք տեղերում հայերի մի մասը մահմեդականություն էր ընդունում, սակայն Տարոնի ժողովրդի ճնշող մեծամասնությունը չէր հավատափոխվում, այլ խիզախորեն դիմադրում էր։ Մուշի ժողովուրդը բողոքում էր քուրդ հարստահարողների արարքների դեմ, իսկ օսմանյան կառավարությունը չէր լսում։ Նա մտածում էր թուլացնել քուրդ ցեղապետների ուժերը և ենթարկել իրեն։

1862 թ. աշնանը Բիթլիսում քրդական ցեղերը ապստամբել

էին թուրքական իշխանությունների դեմ, հարձակվել էին բանտի վրա և ազատել քաղաքական բանտարկյալներին։ Թուրքական կառավարության հրամանով 1863 թ. Էրզրումից Իսմայիլ բեյի գլխավորությամբ դեպի Մուշ շարժվեց թուրքական մի զորաբանակ, որը և սկսեց քրդական ցեղերի ղեկավարներից շատերի բանտարկությունները։ Թուրքական կառավարության կարգադրությամբ վերը նշված զորահրամանատարը գալիս էր այդ անհնազանդ քրդական ուժերին ճնշելու, նրանց ղեկավարներին բանտարկելու նպատակով։ Նրա առջև խնդիր էր դրված այդ միջոցով սաստել քրդական ցեղերին և ամրապնդել այդ տարածքում թուրքական իշխանությունը։ Կատարելով իր առջև դրված խնդիրը, Բաղեշից հասնելով Մուշ, Իսմայիլ բեյը այնտեղից անցավ Սասունի Մոտկան և Խութ գավառները։ Ինչպես երևում է «Արծվիկի» 1863 թ. համարներից մեկի մի հոդվածից, նրա նպատակը միայն քրդական ցեղերի ղսպելն ու հպատակեցումը չի եղել, այլև շարունակել օսմանյան կառավարության քրդերին թուրքացնելու քաղաքականությունը։

Ելնելով իրենց ծանր վիճակից և տեսնելով կառավարության անտարբերությունը, Տարոնի, Վասպուրականի և այլ վայրերի հայ բնակիչները միաժամանակ մտածում էին քրդական ցեղերի հետ լեզու գտնելու, նրանց հետ խաղաղ ապրելու և նույնիսկ բարեկամական հարաբերությունների համար կամուրջ գցելու մասին։ Այդ տեսակետից հետաքրքրական է Գ. Նորատունկյանի նամակը Գ. Սրվանձտյանին, որի մեջ նա ասում է. «Հայոց համար ամենակարևոր խնդիրը կընկատեմ քուրտերու հետ ծանոթանալու և հարաբերություններ հաստատելու միջոցներ գտնելն[1]...» Իր նամակում այս մտավորականը միաժամանակ գտնում է, որ քրդերի դեմ կառավարությանն ուղղված հայերի գանգատները շատ դեպքերում ավելի են սրում երկու ժողովուրդների միջև առանց այն էլ լարված հարաբերությունները և ամեն անգամ չէ, որ օգուտ է բերում հայ ժողովրդին, «ինչ որ ալ լինի, այն համոզումն ունիմ,— գրում է նա,—որ լավ քաղաքականություն չեմք ըլլար անդադար քրթաց դեմ գանգատելով ու զմնզ շարունակ անոնց հարաբերություններեն հեռու պահելով»[2]։

Սակայն թուրքական կառավարությունը ամեն գնով ցան-

---

1 Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԳ էջ 345—346։

2 Նույն տեղը։

կանում էր իրար դեմ հանել երկու ժողովուրդներին, որոնց լավ հարաբերությունները ձեռնտու չէր թուրք իշխողներին, որոնք, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, ցանկանում էին ստանալ քրդերի մասին հայերի գանգատները և այդ պատրվակ դարձնելով, հրապարակից հանել իրենց համար ոչ ցանկալի քրդական վերնախավի ներկայացուցիչներին և դրանով ավելի թունավորել երկու ժողովուրդների հարաբերությունները։ Հարկ է նշել, որ թուրքերը 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո կնքած ինչպես Սան Ստեֆանոյի, այնպես էլ Բեռլինի պայմանագրերի 16-րդ և 61-րդ հոդվածներում հայկական գավառներում եղած հարստահարությունները և բռնությունները վերագրում էին ոչ թե օսմանյան կառավարությանը, նրա պաշտոնյաներին, թուրք կալվածատերերին, այլ միայն քրդերին և չերքեզներին։ Այդ երկու հոդվածները ընթերցելիս մարդ ակամայից իրեն հարց է տալիս՝ միթե՞ թուրքական կառավարությունը հայերին չի հարստահարել։ Սակայն թուրք կառավարողները միշտ էլ ցանկություն են ունեցել հրաժարվել հայերի նկատմամբ ունեցած իրենց վերաբերմունքից, ազատ պահել իրենց այդ գործից, ձեռքերը լվանալով մի կողմ քաշվել։

Եթե 1830—50-ական թվականներին թուրքական պետությունը քրդական դերեբեյներին հպատակեցնելու նպատակով նրանց վրա ուժ էր գործադրում, ապա 80-ականից սկսած կառավարությունը սկսեց քրդերի վերնախավին սիրաշահելու քաղաքականությունը։ Թուրքական կառավարության 1830 թ. սկսած բռնությունները քրդերի նկատմամբ տասնյակ տարիների ընթացքում հասցրեց նրան, որ վերջիններս արդեն ենթարկվել էին օսմանյան կառավարությանը։ 1877—78 թվականներին միջազգային դիվանագիտության առջև իր ամբողջ հասակով կանգնեց հայկական հարցը և հարկավոր էր այս անգամ սիրաշահել քրդերին ընդդեմ հայերի և ինչո՞ւ։ XIX դարի ընթացքում մեկը մյուսի ետևից պայթեցին 1804 թ. սերբիական, ապա 1821 թ. Հունաստանի ապստամբությունները։ 40-ական թվականներին օսմանյան ռեժիմի դեմ վեր խոյացան քրդերը, որոնց հպատակեցրեցին թուրքական զինված ուժերը։ 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, անջատվեցին որպես անկախ պետություններ բալկանյան ժողովուրդները։ Թուրքական պետությունը շատ էր վախենում հայ-քրդական միավորումից։ Ուստի կառավարությունը որոշեց իրար դեմ հանել երկու ժողո-

վուրդներին, ամեն գնով նրանց կովացնել և ինչպես հայկական, այնպես էլ քրդական հարցը դուրս բերել ասպարեզից։

Չի կարել չնշել, որ երկու ժողովուրդների, ինչպես հայերի, այնպես էլ քրդերի մոտ կային մարդիկ, որոնք հայ-քրդական բարեկամություն էին քարոզում։ Հենց ինքը՝ Մ. Խրիմյանը հայ-քրդական նորմալ հարաբերությունների կողմնակից էր և թշնամական տրամադրություններ չէր սերմանում հայերի մեջ ընդդեմ քրդերի ու ցանկանում էր ամեն գնով մեղմացնել երկու ժողովուրդների միջև գոյություն ունեցող լարված հարաբերությունները։ Մշո գյուղում գործել է Հակոբ Սարկավագ անունով մի հոգևորական, որը շեյխի տարաղ հագած շրջում էր քրդական շրջանները և հայ-քրդական բարեկամության մասին քարոզներ կարդում[1]։

Սարկավարդը ծնվել է Մշո դաշտի Հորկնոց գյուղում։ Սկզբնական կրթությունը գյուղում, ապա ս. Կարապետ վանքի ժառանգավորաց դպրոցում ստանալուց հետո մեկնում է Կ. Պոլիս և այնտեղ սովորում է թուրքերեն և արաբերեն լեզուները, այնպես որ «գուրանը գոց ըրած էր»[2]։ Ապա վերադառնում է գյուղ և աշխատում է գյուղի ս. Կարապետ, Ալաշկերտի Ուլ Քիլիսեի (ս. Հովհաննես) վանքերում ուսուցիչ։ 1880 թ. նա Կ. Պոլսում էր և մի զեկուցագիր է գրում թուրքական կառավարությանը, որի մեջ ցույց է տալիս տարոնահայության ծանր վիճակը և քանի որ այն գրված էր «խիստ ոճով» նա ձերբակալվում է, ապա պատրիարքի միջնորդությամբ ազատվում է բանտից և գալիս Մուշ[3]։ Այնուհետև սկսում է հայ-քրդական միություն և բարեկամություն քարոզել քրդական աշիրեթների մեջ և, քանի որ Կարինում այդ ժամանակ հրացաններ էին պատրաստվում, «Հակոբ հանձն կառնե այդ հրացաններն հայ-թայթել ցեղապետներուն, կամ էրզրումեն վարպետ բերել, որ-Սասունի երկաթի հետ՝ Տերսիմեն ալ ավելի կարծր երկաթ իսառնելով հրացան շինե»[4]։

Քրդական ցեղապետների հետ միասին պատրաստվում են դիմումներ՝ ուղղված կենտրոնական կառավարությանը Մշո

---

1 Տե՛ս Զոր. Անդրանիկ և իր պատերազմները, Դ. Պոլիս, 1920, էջ 164։

2 «Հաքազատ ազատություն Ճարոնոց», հեղինակներ Սարգիս եւ Միսակ Բդեեան, Գահիրե, 1962, էջ 70։

3 Նույն տեղը, էջ 71։

4 Նույն տեղը։

Թուրք իշխանավորների դեմ, որոնք ընկնում են Մուշի Թուրքական փաշայի ձեռքը, որը նրան բանտարկում է։ Սարկավագը 1884 թ. կաշառքի միջոցով ազատվում է Տարոնը թողնելու պայմանով։ Ապա անցնում է Կարին, որտեղ խաչատուր Կերեկցյանի և այլոց հետ հիմնում է «Հայ հեղափոխական ընկերություն» կազմակերպությունը, սկսում է կապեր հաստատել Տերսիմի քուրդ աշիրեթների հետ։

Ինչ էր քրդերենի հիանալի գիտակ Հակոբ Գալֆա Սարկավագի և նրա կողմնակիցների նպատակը, այդ մասին «Հարապատ պատմություն Տարոնո» գրքում ասված է.

«ա. — Պաշտոնեությունը ընտրել տեղական ուժերեն։

բ. — Աշարը (հացահատիկներու տասանորդի տուրքը) դրամով վճարել իբր կալվածատուրք, և ժողովուրդը ինք ստանձներ այդ գանձումի գործը,

գ. — Գյուղերու մեջ հաստատել հյուրանոցներ և թույլ չտալ, որ զապթիեները բեռ դառնան գյուղացիներուն վրա և այլն և այլն»[1]։

Սարկավագի մասին հնարավոր եղավ քաղել նաև հետևյալ տեղեկությունները։ 1890 թ., երբ Կուկունյանը Թիֆլիս եկավ իր խումբը կազմակերպելու, նրան միացավ այնտեղ գտնվող Հասորը, որ «մեծ-մեծ խոստումներ էր տված և հավատացրած էր Կուկունյանը, թե Տարոնի մեջ հազարավոր զինված քաջեր կազմ ու պատրաստ իրենց են սպասում...[2]» Սակայն նրանց միջև վեճեր են սկսվում և Կուկունյանը նրան իբրև դավաճանի սպանում է, բայց իրականում «Սարկավագը իհարկե դավաճան չէր, նրա արյունը իբրև արատ մնաց Կուկունյանի խղճի վրա, որ մինչև մահ տանջվում էր»[3]։

Տեղեկություն կա նաև այն մասին, որ երբ 1890 թ. Սարգիս Կուկունյանը գտնվում է Թիֆլիսում, հանդիպեց Սարկավագին, որը Կուկունյանի, Կոստանդին Լիսինյանի, Ռուբեն Հովհաննիսյանի հետ ինչ-որ «գաղտնի ընկերության կողմից բանակցել է դրանց հետ և համոզել զինված խմբով սահմանն անցնել...»[4]։

Ըստ Մ. Վարանդյանի Հակոբ Սարկավագի և զեյթունցի Հ.

---

1 Հարապատ պատմություն Տարոնո, էջ 74։

2 Դիան Հ. Ե. Դաշնակցութեան, հ. առաջին, Պոսթոն, 1934, էջ 13։

3 Նույն տեղը։

4 Ա. Նարեան, Դրվագներ Հ. Ե. դաշնակցութեան գործունեութենից, Ա տասնամեակ, 1917, Բոստոն, էջ 84։

Զագրյանի քարոզները մեծ ազդեցություն ունեցան Պետերբուրգում սովորող հայ ուսանողների վրա։ Մ. Վարանդյանը գրում է, որ Սարկավագը «տաքգլուխ արկածախնդիր» մի տիպ էր, որը կովկասցիներից «խոշոր գումարներ հավաքեց ասպատակային խումբեր կազմելու համար»[1] և հավատացնում էր ամենքին, որ թուրքահայերը պատրաստ են կռվի ելնելու համար, սակայն փաստեր չի բերում այդ մեղադրանքների կապակցությամբ և չի կարողանում արդարացնել Հակոբի սպանությունը ասելով, որ նրա սպանությունը «դժվար է արդարացնել»[2]։

Ս. Կուկունյանը և Սարկավագը Արևմտյան Հայաստան անցնելու մասին ունեցել են տարբեր կարծիքներ։ Կուկունյանը ցանկանում էր անցնել Ալաշկերտ և տեղի բնակիչներին հանել թուրքական իշխանությունների դեմ։ Սակայն Սարկավագը առաջարկում էր անցնել Կ. Պոլիս, ապա Եվրոպա, պրոպագանդել քրդերին մերձենալու հարցը, զենք հայթայթել «առաջ բերելով միացյալ ճակատ ապահովելու, որուն շնորհիվ հնարավորություն պետք է ստեղծվեր դիմադրել թուրքին և ավելի հաջող ու ապահով պայմաններ ստեղծել»[3]։

Մամուլում տպագրված մի հոդվածից երևում է, որ Հակոբ Սարկավագի հետ Կուկունյանը ծանոթացել է Թիֆլիսում Գրիգոր Արծրունու միջոցով, որը խորհուրդ է տալիս նրան վերցնել իր խմբի մեջ որպես Արևմտյան Հայաստանի ժողովրդի կյանքին գիտակ մարդու, միաժամանակ կասկած է հայտնում նրա բարեհուսության վրա[4]։

Հայ ժողովրդի հերոս Անդրանիկը նույնպես ցանկանում էր հայ-քրդական հարաբերությունների բարելավում։ Նա գտնում էր, որ չնայած սուլթանական կառավարությունը անընդհատ քրդերին ուղղում է հայերի դեմ, սակայն պետք է քրդերի հետ համագործակցելու ճանապարհ գտնել։ «Քուրդերու մեջ,— ասում է Անդրանիկը,— կան անհատներ, որոնք բարիք կընեն մեզի, ան՝ալ շա՛տ գաղտնի։ Ասոնք ալ կառավարութենեն ցավ տեսած են, կամ հայրերն են աքսորված կամ ջոջ պապերնին։ Կան նաև անհատներ, որոնք գիտակցության եկած են. կը տեսնան կառա-

---

1 Միքայել Վարանդյան, Հ. Ս. դաշնակցության պատմություն, առ։ ին հատոր, Պարիզ, 1932, էջ 69։

2 Նույն տեղը, էջ 87։

3 Հարազատ պատմություն Տարոնի, էջ 76։

4 Տե՛ս Դիտան, դաշնակցության, հատ. երկրորդ, էջ 14

վարության արած գազանությունները և կը մտածեն իրենց ապագան, ուստի կընեն մեզի մասնավոր բարիքներ, բայց շատ վախով և զգուշությամբ»[1]։

Անդրանիկը հավատ ուներ դեպի հայ-քրդական միությունը և այդ կապակցությամբ հասկացնում էր հայ հատվածներին, որ այդ բարեկամությունը կսկսվի երկրից սուլթանական գազանային ռեժիմի վերացման հետ միասին։ «Այս բոլոր ցեղերը (քրդական։— Հ. Պ.),— գրում է Անդրանիկը,— այն ժամանակ կմիանան մեզի հետ, երբ սուլթանական գազանային ռեժիմը երկրեն վերանա. և շա՛տ շուտով պիտի միանան ու մեզի հետ երկիրը պաշտպանեն ապագա թշնամիներու դեմ։ Այսօր մենք մենակ ենք, իբրև կռվող, և կը տանջվինք անոնց ձեռքը. վաղն ալ երբ երկիրը մեր աշխատանքով և արյունով բարեփոխվի, պիտի միանան մեզի և հավասար իրավունքի տեր դառնան, ինչպես իրենք ալ կըսեն»[2]։

Չենք կարող չնշել, որ քրդական ցեղապետների մեջ կային առանձին մարդիկ, որոնք թուրք կառավարության չէին հավատում, նրանց խային էին անվանում, ցանկանում էին բարեկամական հարաբերություններ ստեղծել հայերի հետ, սակայն նրանք չէին կարողանում շեղել կառավարության նպատակը և հայ-քրդական հարաբերությունների վիճակը քանի գնում, այնքան ավելի էր սրվում։ Իսլամական մոլեռանդությունը ստիպում էր առանձին քրդական ցեղերի վերնախավին կույր գործիք դառնալ կառավարության ձեռքին և աննպատակ կռվի նետվել անմեղ հայ բնակիչների դեմ, առանց հասկանալու, թե ինչու են այդ քայլին դիմում։ Անկասկած այս պայքարը պետք է վերջանար և վերջացավ երկու ժողովուրդների համար էլ ոչ ցանկալի արդյունքով։ Այդ բանը հետագայում հասկացան հատկապես քրդերը, սակայն ուշ էր։

Այսպիսով, XIX դարի երեք քառորդներում Տարոնի և Սասունի հայ հատվածը ենթարկվում էր անլուր տառապանքների։ Դրությունից դուրս գալու համար նա ստիպված բռնեց ազատագրական պայքարի ուղին։

1 Զոր. Անդրանիկ և իր պատերազմները ..., էջ 164։

2 Նույն տեղը, էջ 165

Գլուխ երրորդ

ՍԱՍՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Տավրոսյան լեռնաշղթայի մեջ են մտնում Սիմ, Սև սար կամ Սասունի լեռները, որոնք 60—70 կմ լայնություն և 100 կմ երկարություն ունեն և շրջապատում են Մշո դաշտը։ Սասունի լեռնագագաթներն են Անդոքը, Գեբին, Տարկոշը, Կուրտրկը, Միրինկատարը, Ծծմկաքիթը, Քանը՝ և Սև սար լեռները և այլ գագաթներ։ Այստեղ է գտնվում Սասունցի Դավիթ էպոսից մեզ հայտնի Ծովասարը, Մարաթուքը, իսկ սրանց մոտիկ վեր են խոյանում Մոտկանի, Տալվորիկի և Բսանաց լեռները։

Մ. Չամչյանը Սասունի սահմանների մասին նշում է. «Սասուն կամ Սասնոյ երկիր. գաւառ մեծ յաշխարհին Աղձնեաց՝ տարածեալ, 'ի սահմանայ Սիմ լերին մինչ 'ի գաւառն մեծ յաշխարհին Աղձնեաց՝ տարածեալ 'ի սահմանաց Սիմ լերին մինչ 'ի գաւառն Հաշտենից և Տարոնոյ, ունելով յինքեան և զՇատախ գաւառ և զմասն ինչ Տուրուբերանոյ»[1]։

Արևմտյան Հայաստանի Բյուրակնյան կամ Բինգյոլի լեռներից սկիզբ են առնում Մուրադ (Արածանի) և Արաքս գետերը։ Հազարավոր աղբյուրների, գետակների և լճակների սկզբնավորման վայր է Բինգյոլը։ Հազարանուն բյուրավետ ծաղիկների, կանաչների և ծաղկաստանների մի ամբողջ աշխարհ է այն, որի նմանը չկա ամբողջ Հայկական լեռնաշխարհում։ Բյուրակնյան լեռները գտնվում են ծովի մակերևույթից մոտ 4 հազար մետր բարձրության վրա և նրա գագաթները

---

1 Մ. Չամչյան, *Պատմութիւն հայոց*, հ. Գ, *ժամանակագրություն*, 1784, էջ 182։

պատած են հավերժական ձյունով։ Այդ լեռների շրջապատում է գտնվում պատմական Հարք կամ Խնուս գավառը, որտեղից և Սրմանց գագաթից սկզբնավորվում է մայր Արաքսը։ Այդ լեռները իրենց մեջ են ընդգրկում Վարդոյի, Խնուսի, Շուշարի և Թեքմանի շրջանները, իսկ «Սասունի լեռները վիհափառ բարձունքներ ունին. պարող լեռնաշղթաները զիրար կը խաչաձևեն։ Անդունդներն ու խորխորատները գլխու պտույտ կուտան։ Գեղեցիկ է Սասուն, բայց է նաև ահատեսիլ և սարսրռազդեցիկ»[1]։

Բյուրակնյան լեռները ոչ միայն վեհ գագաթներ ու լեռնահովիտներ ունեն, այլև աննման ալպյան արոտավայրեր։ Թուրք պատմաբան Էվլիա Չելեբին իր գրքում այդ լեռների մասին գրում է. «Այստեղ կան դեղին, կարմիր և գորշ ցինկի հանքեր, որոնց բնական հոտից մարդու քիթը բռնվում է։ Սուրմաջիները հավաքում են այս ցինկերը և ովքեր ցանկանում են գեղեցկացնել իրենց աչքերը՝ սուրմա են քսում։ Աստծո հրամանով տեսողության ուժը ավելանում է։ Հայտնի են այստեղի յոթանասունութսուն թերթավոր հունական մուշկը, սպիտակ, կապույտ մաղավոր հակինթը, հիացինտը, սյունբուլը, քառասուն-հիսուն տեսակի քսանական թերթ ունեցող մուշկը, կարմիր և սպիտակագույն տեսակ-տեսակ մանուշակը, ռեհանը, շեփորուկը, բազմատեսակ վարդերը և նունուֆարը։ Պտուղներից այստեղ Արաբկիրի թթի մեծության ելակներ կան։ Մի խոսքով, բժիշկներին ու գիտնականներին պետքական բույսերն ու ծաղիկներն այստեղ այնքան շատ-են, նրանց հաշիվը միայն բարձրյալ Աստված գիտե»[2]։

Հայկական հին ավանդության համաձայն Հայկ Նահապետը Նեմրութ սարի մոտ սպանեց Ասորեստանից դեպի Հայկական լեռնաշխարհը արշավող Բելին (Ներբրովթին), որի անունով էլ այս սարը կոչվեց Նեմրութ։ Այդ լեռը ընկած է Մշո դաշտի և Վանա լճի մեջտեղում և մի կողմից իր հայացքը հառել է Մշո ընդարձակ դաշտին, իսկ մյուս կողմով նայում է Վանա լճին։ XIX դարի 80-ական թվականների սկզբին Մշո դաշտում կային 100—110 զուտ հայկական և մոտ մի տասնյակ քրդական գյուղեր։ Ծարոնը այդ ժամանակ բաժանված էր երկու մասի՝ Մուշ

---

[1] Եղիշե Տ. Մելիքյան, *Հարք— Խնուս*, էջ 8։

[2] *Թուրքական աղբյուրներ*, Գ. Էվլիա Չելեբի, Ե., 1967, էջ 173։

և Ջուխուր։ Ըստ Մ. Միրախորյանի Մուշը այդ ժամանակ ուներ 2500 տուն բնակիչ, որից 1000-ը հայ, իսկ մնացածը՝ «քրդատուճիկներ»։ Մուշը վաճառականական և արհեստավորական քաղաք էր, սակայն ժողովրդի մի մասն այդտեղ զբաղվում էր նաև երկրագործությամբ և անասնապահությամբ։ Վաճառականներն ունեին 200 կրպակ[1]։ Ըստ Ղ. Ալիշանի, Մուշի բնակիչներն արտադրում էին «մեղր, գազպէ, ծխախոտ, չամիչ, գինի և այլն։ Բնակիչք իբրև 8000. յորմ 700 տունք են հայոց արևելեաց և հոռոմէականաց և հինգ եկեղեցիք։ Եւ 'ի 100-ի չափ գիւղորայս Մշոյ են իբրև 12.000 ոգիք հայք»[2]։

Բինգյոլը կամ Բյուրակնյան լեռները հազարավոր լճակների, աղբյուրների կուտակման մի վայր է, որտեղից դուրս են հոսում անուշ ջրերով արագավազ գետակներ։ Այդ վերամբարձ լեռները պատած են բուրումնավետ, անմման ծաղիկներով։ Այնտեղ զմայլելի մարգագետիններ կան։ Գարունը շատ խոտառատ է և մշտաթարմ կանաչը իշխում է այստեղ։ Այդ է պատճառը, որ ձյունը հալվելուց հետո այդ ծաղկավետ լեռները մագնիսի նման դեպի իրենց են ձգում անասունների հոտերին, որոնք կուշտ արոտ էին գտնում կենանար ու հեքիաթային այդ վայրում։

Գ. Սրվանձտյանը, որ բազմիցս եղել է Բինգյոլում, գովելով նրա գերբնական գեղեցկությունը, ասում է. «Ջրարբի մարգեր, ամենադալար բանջարներ և խոտեր իրենց արմատներով, ուտելու, բուժելու գույն-գույն ներկելու կը գործածեն. յուր վայրի կենդանիները՝ առյուծ և վագր չեն, այլ եղնիկ և այծամն»[3]։

Բինգյոլի մասին ժողովրդի մոտ պահպանվել են շատ-ու շատ ավանդություններ, որոնք անցել են սերնդեսերունդ,. դրանցից մեկում ասված է հետևյալը։ Մի հովիվ իր ոչխարի հոտն էր արածացնում Բինգյոլի լեռների վրա։ Մի օր նա հանդիպում է զարմանահրաշ մի երևույթի։ Երեք հիվանդ, վիրավոր և ծերացած օձեր պոկում են մի աղբյուրի մոտ գտնվող ծաղիկների թերթունքները, ուտում, ապա հապշտապ մտնում կողքի ակնակիտ և զուլալ աղբյուրի մեջ։ Լողանալուց հետո նրանք դուրս են

Նկարագրական ուղեւորություն ի հայաբնակ գաւառս արեւելեան Տաճկաստանի, մասն Ա, Կ. Պոլիս, 1984, էջ 40։

[2] Ղ. Հ. Ալիշան, Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ, 1856, էջ 45։

[3] Գ. Սրվանձտյան, Երկեր, հատոր 1-ին, Ե., 1978, էջ 65։

գալիս այնտեղից առողջացած, գեղեցկացած, երիտասարդացած և արագ հեռանում են։ Այս դեպքը տեսնելուց հետո հովիվը զարմանքից ապշում է։ Նրա ցեղապետը հիվանդ է լինում ու նա իր տեսածը պատմում է նրան, որի մոտ ցանկություն է առաջանում առողջանալու նպատակով Բինգյոլ գնալ, լողանալ այդ աղբյուրի մեջ և ապաքինվել ցավերից։ Սակայն, ով զարմանք, նրան Բինգյոլի այդ վայրը առաջնորդող քուրդ հովիվը չի գտնում այն, քանի որ Բյուրակնյան լեռների վրա աղբյուրներն անթիվ են։ Չգտնելով աղբյուրը, որին և ժողովուրդը անվանում է կյանքի աղբյուր, միամիտ խաշնարածը ակամայից ասում է.

«Բինգյոլ հեզար գյոլ, ազ չի՞ զանըմ ֆիժան գյոլ»— Բյուրակն, հազար ակն, ես ինչ գիտեմ, ո՞ր այն ակն[1]։

Մոտավորապես նույն ավանդությունը պահպանվել է թուրք պատմաբան Էլվիա Չելեբիի մոտ։ «Մի որսորդ թռչուն է որսացել,— գրում է նա,— մորթել և լվացել է այդ լճում, թռչունը կենդանացել է և լճի մեջ ընկղմվելով՝ կորել է»[2] և իբրև թե այդ թռչունի թռիչքից հետո նրա վրայից թափված ջրի յուրաքանչյուր կաթիլից առաջացել է մի-մի լիճ, որից հետո հազար լիճ, որոնցից մեկը միայն կյանքի լիճն է, որը և կյանք է պարգևում մարդուն և կենդանիներին։ Բայց այստեղ եղած լճերի բազմության պատճառով հասարակ մահկանացուներից և ոչ մեկը չգիտե այդ լճի տեղը։

Ավանդություններ կան նաև Մշո Մեղրագետի մասին։ Մշեցիները հաստատապես համոզված էին, որ իրենց գետը սկզբնավորվում է Նեմրութից։ Ըստ այդ ավանդության մի հովիվ այդ սարի գագաթին պատահաբար լճի մեջ է գցում իր մահակը և չի կարողանում հանել։ Որոշ ժամանակ անց հովիվը իր կորցրած մահակը տեսնում է մի ուրիշի մոտ և հարցնում անծանոթին, թե որտեղից է այդ փայտը։ Գեղջուկը պատասխանում է, որ փայտը գտել է Մեղրագետի ափից[3]։ Այստեղից էլ մշեցիների մոտ այն խոսակցությունը, թե Մեղրագետը սկզբնավորվում է Նեմրութ սարից։ Ականատեսը Մեղրագետի ակի մասին գրում է. «Այս ակը արևու շրջանակի պես բոլորակ ավազան մըն է, ինչպես կրակի վրա եռման ջրի կաթսա մը, որ հայրյուր հազար պղպը-

---

1 Գ. Սրվանձտյան, հատ. Ա, էջ 66—67։
Էլվիա Չելեբի նշվ. աշխ., էջ 173։
2 Սրվանձտյան, հատ. Ա, էջ 50։

ջակներով կեռա, այնպես դուրս կը՝ պխպխկա այս պայծառ ու հստակ ջուրը յուր խորանդր հատակեն, հորմե սրսուռ ու մանրիկ ավազի հատիկներ կերևին մի առ մի, և առաջին անգամ նայողը կը կարծե, թե լճակը հազիվ մեկ թզաչափ խորություն կունենա, և եթե սիալմամբ մեջ մտնե իսկույն ոտքով գլխով կանհետանա»[1]։

Տարոնի արևելյան սահմանը վերջանում է Վանա լճի ափին գտնվող Սիփան լեռով, իսկ Նեմրութ, Գրգուր և Մոտկան լեռներից ջուրը ներծծվելով դուրս է գալիս Մշո մոտ, կազմելով մի ընդարձակ ճահիճ, որին և տեղացիները Շամբ են անվանում։ Այս ճահճից էլ սկզբնավորվում է Մեղրագետը, որը անցնելով Մշո դաշտով, իր ջրերը խառնում է Արածանիի (Մուրադ)-հետ։ Մեղրագետը լճաձև ակ է ունեցել, այնտեղից էլ է դուրս հորդում արտասուքի նման զուլալ, խմելու համար միանգամայն պիտանի սառը ջուրը։ Ժողովրդի մոտ պահպանվել էր հետևալ խոսքերը Մեղրագետի մասին. «Մուշեն ի Բաղեշ կամ Բաղեշեն ի Մուշ գնացողն այն ժամանակ կը հոգնի, երբ Մեղրագետո քովեն անցնելով կմոռանա մեղրագետեն խմելը» կամ «սույն գետո բղխած տեղին անտակ է» և վերջապես «Մեղրաջուրը կը գա Ներրովթ լեռան գագաթի լճակներեն»[2]։ Մ. Միրախորյանը Տարոն անունը կապում է Նոյի Տաբան որդու անվան հետ[3]։

Սասունի լեռներից վայրէջքներով դեպի ներքև են հոսում բազմաթիվ գետակներ։ Նրանց միահյուսումից և միախառնումից ծնվում է Տիգրիս գետը։ Այսպիսով, Տարոն աշխարհի լեռներից էլ սկզբնավորվում են Տիգրիսը, Եփրատը և Արաքսը։ Մայր Արաքսը իր սկզբնավորումն է առնում Բյուրակնյան լեռների Սրմանց գագաթից, իր մեջ առնելով շրջակա սառնորակ աղբյուրների ջրերը։ Աստվածաշնչի մեջ նա կոչվում է Գեհոն, որը և նշանակում է սրընթաց։ Արաքսի ջրերը կտրում են հազարավոր կիլոմետրեր տարածություն, ճանապարհին իրենց մեջ են ընդունում բազմաթիվ ջրեր և գետակներ և ապա Քուռ գետի հետ միասին թափվում են Կասպից ծովը։

Մուշի մոտ կա մի փոքրիկ գետակ, որն անվանում էին Գառ-

---

1 Ս. Տեր-Սարգսեանց, *Հահեն ի Սիպիր*, Կ. Պոլիս, 1911, էջ 48։

2 Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գաւառս արեւելեան Տաճկաստանի, մասն Ա, էջ 50։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 34։

նի չայ։ Սասունի լեռներից դեպի ներքև են իջնում մի քանի գետակներ, որոնցից են Մոտկանի գետը, որը սկիզբ է առնում Մոտկանի և Խութի լեռներից, Բսանաց գետը, որը սկզբնավորվում է Մարաթուքի և Ծովասարի հարավային լանջերից, Ադիլջևազի գետը, որը իջնում է Անդոք լեռան կատարից, ապա անցնում է Գելիեգուզան գյուղի մոտով և գնում դեպի Ադիլջևազ։ Անդոքից սկզբնավորվում է նաև Խուլբի գետը։ Սասունի լեռներից ներքև վազող ջրերից կազմվում էր մի գետ, որը կոչվում է Պըշըրիի կամ Պշրկու գետ (Թուրքերեն Բաթմանսու)։ Այս գետն ուներ երեք վտակ, որոնցից մեկը սկզբնավորվում էր Սասուն գավառակից, մյուսը՝ Խուլբից, իսկ երրորդը՝ Խիանքից։ Սասունից դեպի ներքև էին վազում նաև Ռընդուան գետը, որը սկզբնավորվում էր Խութ և Գզեխ գավառակներից։ Այս գետակների զուլալ ջրերում խայտում էին կարմրախայտ ձկները։ Տարոնի լեռներից սկիզբ են առնում Ախլաթի, Դատվանի գետակները, որոնց զուլալ ջրերը արագավազ հոսքով ներխուժում և միախառնվում են Վանա լճի ալիքներին։

Դեռ շատ հին ժամանակներում, երբ Հայկական լեռնաշխարհում չէր թափանցել քրիստոնեությունը, Մշո դաշտում գործում էին մեծ թվով հեթանոսական մեհյաններ։ Քրիստոնեության մուտքը ոչնչացրեց եղած մեհյանները և նրանց փլատակների վրա կառուցվեցին ս. Կարապետ, Առաքելոց կամ Թարգմանչաց, Աշտիշատ, ս. Հովհաննես և այլ-վանքեր։

Թարգմանչաց կամ Առաքելոց վանքում կար խաչքարերի մի կույտ, որը կոչվում էր «Գերեզմանք Թարգմանչաց», ըստ ավանդության այնտեղ էին նաև Սահակ Պարթևի և Համազասպ Մամիկոնյանի տապանաքարերը։ Այնտեղ էին թաղված Դավիթ Անհաղթ փիլիսոփան, Մամբրե Վերծանողը, Եզնիկը, Ղազար Փարպեցին, Ստեփանոս Ասողիկ Տարոնացին, Խաչիկ Մեծոփեցին, Մովսես Խորենացին և ուրիշներ։

Միրինկատարի ստորոտում կառուցված էր Աստղկա բերդը, որի մարմարյա սյուների փլատակները պահպանվել էին մինչև առաջին համաշխարհային պատերազմը։ Ըստ ավանդության հայոց Աստղիկ աստվածուհին Միրինկատարից իջնում էր Մշո դաշտ և լողանում էր Մեղրագետի զուլալ ջրերի մեջ։ Նույն ավանդության համաձայն գեղեցկության աստվածուհին տեսանելի չպետք է լիներ հասարակ մահկանացունների համար և այդ

պատճառով էլ նա մշուշով պատում էր Մշո դաշտը և իր գեղեցիկ մարմինը անտեսանելի էր դարձնում հանապարհ մահկանացուների համար[1]։

Մուշ քաղաքի մոտ էր գտնվում Մուշեղյան բերդի ավերակները, իսկ Քարքե լեռան ստորոտում, Կուառս գյուղի մոտ մինչև 1915թ. մնացել էին Մամիկոնյանների Ողական ամրոցի փլատակները։ Աշտիշատը գտնվում էր Արածանիի ափին, Մատնավանքից հյուսիս մեկ ժամ հեռավորության վրա։ Մուշից վեց ժամ հեռավորության վրա, Քարքե լեռան կողին, Միրինկատար սարի կանաչագեղ ստորոտի վրա գտնվում էր ս. Կարապետ հինավուրց վանքը, որը միաժամանակ իր առաջին վանահայր Ասորի Զենոբ Գլակի անունով կոչվում էր Գլակա վանք։ Քարքե լեռը տեղի բնակիչները անվանում էին նաև Բազմասար։ Քանի որ ս. Կարապետ վանքի մոտ գտնվող լեռան կրծքից դուրս էր հորդում ինը սառնորակ աղբյուր, վանքը միաժամանակ կոչվում էր Իննակնյան վանք[2]։

Մյուս բերդը Այծյաց բերդն է, որը կառուցված էր Մուշից դեպի Սասուն տանող լեռնալանջերից մեկի վրա։ Այս բերդը կոչվել է նաև Մոկաց բերդ[3]։ Մուշից ոչ շատ հեռու գտնվում էին Թարձենք և Մեծամոր բերդերը, որոնցից վերջինիս ավերակները կարելի էր տեսնել Մշո ս. Կարապետ վանքից ոչ շատ հեռու, նրա մոտակայքում։ Մուշի մոտ էր գտնվում նաև Եղանց կամ Եղնուտ, Գահար կամ Գարհար բերդերը։ Սրանցից առաջինը գտնվում էր Մուշի, իսկ մյուսը՝ Մշո ս. Կարապետ վանքի մոտ։ Աշտիշատի մոտ, Եփրատի արևմտյան ափին կարելի էր տեսնել Ռապնբլուր բերդի ավերակները[4]։

Մուշից ոչ շատ հեռու պահպանվել էին Զյունկերտ քաղաքի ավերակները, իսկ Օձ քաղաքի փլատակների մոտ կար մի ջերմուկ, որին բնակիչները անվանում էին Կերմավ, որի ջուրը բուժում էր մի շարք հիվանդություններ։ Մուշից հեռու, արևելյան կողմում կար մի ուրիշ «ջերմուկ գաղջ և ծծմբահոտ, որ բղխե ի

---

1 Գ. Սրվանձտյան, հատ. Ա, էջ 71։

2 Տեղեկութիւնք ի Փոքր և Մեծ-Հայս, Հ. Ներսեսի Սարգիսեան, Վենետիկ, 1864, ՌՃԺ, հ. Գ, էջ 229։

3 Մանուել Կ. Միրաքորյանի նշվ. աշխ., էջ 43։

4 Հ. Մելքայել, Վ. Հովհաննեսեան Մխիթարեան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 190—191։

նիրքուստ լերին և կոչի ծծմակ, որ թուի լինել ծծմբակ, և լեառնդ երկայնեալ ձգի 'ի դաշտն կոյս՝ կոչեցեալ Ծծմակայ—քիթ ..»[1]։

Մշո ս. Կարապետ վանքից ոչ շատ հեռու գտնվում էր ս. Հովհաննես վանքը, որը նաև կոչվում էր Եղրդուտի վանք։

Մշո ս. Կարապետ վանքում տոների ժամանակ հավաքվում էին մեծ թվով ուխտավորներ, որոնք գալիս էին Հայաստանի հեռավոր վայրերից, այստեղ կազմակերպվում էին տոնավաճառներ, «Հասոյթ վանանց թող զսեփական կալուածս իւր, գիւղորէք դաշտավայրին են մեծաւ մասամբ թեմ նորա։ Թող և զոր նուիրակքն բերեն 'ի հեռաւոր աշխարհաց։ Մենաստանս կերակրէ զօր ամենայն ոգիս աւելի քան զհարիւր յիսուն»[2]։

Դեռևս հին ժամանակներից սկսած հայ ժողովրդի երկու դաշտերը՝ Արարատյանը և Մուշինը որպես դպրության ամենախոշոր կենտրոններ կարծես թե մրցման էին ելել իրար դեմ։ Հին ժամանակներում ընդունված է եղել ասել, որ Մշո դաշտը Արարատյան դաշտի փոքր քույրն է։ Եթե Արարատյան դաշտը շրջապատում էին Արարատ և Արագած լեռները, ապա Մշո դաշտը՝ Սիփանը, Գրգուռը և Նեմրութը, այսպիսի համեմատություններ են արվել դարեր շարունակ։ Եթե V դարում Արարատյան դաշտը ունեցավ Եզնիկ Կողբացի և Ղազար Փարպեցի, ապա այդ ժամանակ Տարոնում գործում էին հայ գրչության և մշակույթի այնպիսի հսկաներ, ինչպիսիք էին Մովսես Խորենացին, Դավիթ Անհաղթը և հայ գրերի ստեղծողը՝ Մեսրոպ Մաշտոցը։

Ս. Կարապետ վանքի մասին շատ երգեր են հորինվել, որոնցից մեկը կոչվում է «Ի՞ս. Կարապետն Գլակա վանից», որի մեջ վանքը անվանվում է աղա, վազիր, բոլոր սրբերի գլխավորը, նույնիսկ Մարիամ կույսի քավորը մուրադատու, ահա մի կտոր այդ երգից.

Քե շինած են պանծր տեղաց.
Քեզ մէջ պանի, ֆրոն չաղաց,
Քեզ չորս պիկոր խայու գեղի,
Պանծր գմբեթ անուշ տեղի[3]։

[1] Ն. Սարգսյանի նշվ. աշխ., էջ 227։

[2] Նույն տեղը, էջ 230։

[3] Материалы для изучения Армянских наречий, выпуск II, Мушский диалект, издал К. П. Патканов, СПБ, 1875, стр. 45—46.

Վանքը մինչև առաջին իմպերիալիստական պատերազմը ուներ մեծ տնտեսություն։ Բավական է ասել, որ այնտեղ XIX դարի վերջին կային 400 ոչխար, 34 եզ ու գոմեշ, 33 կով ու մատակ, 20 տավար, 13 ձի և 16 էշ։ Այս մի ֆեոդալական հաստատություն էր իր տերիտորիայով, անասուններով։ Բացի վերը նշված անասունների եկամտից, վանքը մեծ քանակությամբ նվերներ էր ստանում։ Սակայն վանքը պետությանը հարկ էր վճարում. այսպես, 1908 թ. վանքը իշխանություններին վճարում էր տարեկան 40 ոսկի հացահատիկի համար, 40 ոսկի խոտի համար, խամչուռ (ոչխարի հարկ)՝ 25 ոսկի, էլմակ (կալվածական տուրք)՝ 18 ոսկի, ընդամենը՝ 113 ոսկի[1]։

Վանի ռուսական փոխհյուպատոս Մաևսկին, որը մինչև XX դարի սկիզբը եղել է տեղում և մանրամասնաբար ծանոթացել է Մշո ս. Կարապետ վանքի տնտեսության հետ, նշում է այնտեղ կատարված տոնախմբությունների մասին։ Ըստ նրա այդ օրերին այնտեղ հազարավոր մարդիկ էին հավաքվում եկած Թուրքիայի, Պարսկաստանի և Ռուսաստանի կողմերից։ Եվ այդ ուխտավորներից վանքը առատ նվերներ էր ստանում։ «Հայտնի են դեպքեր, երբ Ղրիմից և Նախիջևանից աստծուն աղոթողները գալիս էին այնտեղ և վերադառնում այնտեղից ոտքով»[2]։ Ըստ Մաևսկու, վանքը ուներ այգի, գործող ջաղաց, կաթնատուն, փուռ, պանրարան։ Վանքը ուներ 1000 ոչխար և այծ, մոտ 100 կթու կով, և գոմեշ, 50 ձի, եզներ էշեր[3]։

Ս. Կարապետ հինավուրց վանքը XIX դարի երկրորդ կեսին ուներ մի շարք կալվածքներ, որոնցից մեկը Կ. Պոլսի Վեզիր իանի վերին հարկն էր, «որոնց վարձքը 15 դարե ի վեր վանքիս արկղին հասած չի եղեր»։ Մյուսը կոչվում էր «Հոգետուն ի Կարին», որը հետագայում Կարինի բնակիչները վերածեցին աղջիկների վարժարանի, դրանից բացի վանքը Կարինում ուներ մի տուն, որից ստացված գումարը կիսում էր տեղի եկեղեցիներից մեկի հետ։ Գլակա վանքը մինչև 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմը տարեկան ուներ 400 հազար դահեկանի մուտք, որը ստացվում էր կալվածքներից, անասուններից, ուխտավորներից, հոգեբաժիններից, պտղի հարկից և այլ նվերներից։ Բացի

---

1 Տե՛ս Ա—Դ., Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Ե., 1912, էջ 114—115։

2 Ванский вилает. составитель Майевский. Тифлись 1901, էջ 40։

3 Նույն տեղը, էջ 43։

դրանից վանքն ուներ 6 արտ, որից և քը ազվուլտի։ Դրանից բացի այլ վայրերում ուներ 25 արտ և 14 չայիր և այգիներ[1]։

Սակայն ունենք տեղեկություններ նաև, որ վանքի հասույթի մի մասը յուրացվում էր նվիրակների և առանձին դրամաշորթ հոգևորականների կողմից։ Այդ մասին մեր ձեռքի տակ կան բավականաչափ փաստեր, նշենք միայն մեկի մասին։ 1862 թ. Հ. Սրվանձյանը «Մեղուում» հրապարակեց «Մուշի գործերը և ընդհանրապես մեր վանքերը» հոդվածը, որի մեջ ասված էր. «Մուշի և ընդհանրապես Տարոնի գավառին հայ ժողովուրդը բնականաբար արթուն, քաջասիրտ, բարեսեր, իր պատվույն վրեժխնդիր և կրոնասեր ժողովուրդ մըն է»[2]։ Սակայն Հ. Սրվանձյանը նշում է որ այդ ժողովրդին կեղեքում են ոչ միայն օտար հարստահարիչները, այլև հայ հոգևորականները։ Ինչպես ասվեց, Մուշի ս. Կարապետ վանքը մեծ քանակությամբ հարկեր էր հավաքում ժողովրդից, սակայն նրա մեկ տասներորդ մասը վանք չէր հասնում. «Մնացած 9 տասներորդը պտղի և նվեր առնելու համար աղքատ ժողովուրդին կոկորդին վրա կոխող նվիրակները իրենց ազգականներուն, սիրեկաններուն և ազգային վարչության աչքը գոցելու պաշտոնն ունեցող աղաներուն կը ղրկեն»[3]։

Շատ հետաքրքրական տեղեկություններ են պահպանվել ս. Կարապետ վանքի տոնախմբությունների մասին նաև թուրք պատմաբան Էվլիա Չելեբու մոտ, որը վանքը անվանում է Զանլի Քիլիսե (զանգակավոր եկեղեցի) և գրում է. «Այս եկեղեցին բազմաթիվ ազգությունների մեջ հռչակ է ստացել։ Տարին մեկ անգամ հարյուր հազարավոր մարդիկ հավաքվում են այստեղ, վրաններ և օթացներ են կանգնեցնում են յոթ օր ու գիշեր առևտուր անում։ Այստեղ բեռներ են թափվում, բեռներ են կապվում և քարավանները գնում են Երևանի կողմերը»[4]։

Ինչպես երևում է վերը բերված քաղվածքներից, այստեղ ժողովրդի զանազան խավերը միայն կրոնական տոնախմբության համար չէին հավաքվում, այլև՝ առևտրի։ Նկարագրությունները հավաստում են նաև, որ այստեղ տոնավաճառ է գործել։ Ծուցադրվել ու վաճառվել են մեծ քանակությամբ ապրանքներ, աշխույժ առևտուր է տեղի ունեցել և ապրանքափոխանակու-

---

1 Տե՛ս ԳԱԹ-ի արխիվ, Սրվանձտյանի ֆոնդ, վավ. 1—19, էջ 35—36։

2 Հ. Սրվանձյան, Հրապարակախոսություն, Երևան, 1960, էջ 291։

3 Նույն տեղը, էջ 292—293։

4 Էվլիա Չելեբու նշվ. աշխ., էջ 170։

թյուն։ Այդ օրերին այնտեղ հավաքվել են բյուրավոր մարդիկ։ Հետաքրքրական է, որ թուրք պատմաբանը վանքի լավ շինության, դեպի երկինք վեր խոյացած հոյակապ գմբեթների մասին ասելով նշում է նաև, որ նրա շրջապատում եղել են վանականների համար պատրաստված հարյուրավոր խցիկներ։ Ըստ նրա, տոն օրերին յուրաքանչյուր օր վանքում «հարյուր ոչխար, հինգ կով է մորթվում ու 50 տոմար ցորենի հաց է թխվում և նվիրվում է հյուրերին»[1]։

Վանքը հանդիսացել է Արևմտյան Հայաստանի ամենանշանավոր կենտրոնը, ունեցել է մեծ հարստություն, այնտեղ գործել են 300-ից ավելի վարդապետներ և աշակերտներ, նրա նվիրակները հասնում էին անգամ Ֆրանսիա և վանքի համար նվերներ հավաքում։

Էվլիա Չելեբին, ելնելով ժողովրդի մոտ եղած ավանդություններից, այնուհետև ասում է, որ իբր թե վանքի զորությամբ մարդիկ արվեստի մարդիկ էին դառնում և երգելու, նվագելու ու փահլևանության շնորհք ձեռք բերում։ «Բազմաթիվ իսլամներ և ոչ իսլամներ,— գրում է նա,— թամբուր (կիթառ) և զանգ, սանթուր և սրինգ, դուդուկ և այլ երաժշտական գործիքներ, առանց կարգի բերելու, դնում են այս վանքի ուխտատեղը, հաջորդ օրը վերցնում են իրենց երաժշտական գործիքները և այնպես վարպետորեն են նվագում, որ կարծես Հյուսեյին Բայկարայի եղանակներն են նվագում։ Այստեղի մարդիկ վարպետ բանաստեղծներ են։ «Այս արվեստն ու բանաստեղծությունը Զանլի Քիլիսին է տվել մեզ»,— ասում են նրանք և դրանում համոզված են»[2]։

Ուրեմն նախկին հեթանոսական տաճարի փլատակների վրա կառուցված վանքը Հայաստանում և հայաբնակ վայրերում մեծ հռչակ էր վայելում։ Ժողովուրդը այդ վանքին է վերագրում ոչ միայն երգի, երաժշտության, բանաստեղծության, փահլևանության, այլև հիվանդությունների բուժման զորությունը։ Ժողովրդի մեջ տարածված էր այն միտքը, որ բոլոր լավ բաները մարդկանց տալիս է այդ վանքը։ Հայկական ոչ մի եկեղեցի ժողովրդի մոտ վերևում ասված հարցերի կապակցությամբ այդպիսի հռչակ չի ունեցել։ Իր «Շահեն ի Սիպիր» գրքում Սեդրակ

---

1 Էվլիա Չելեբու նշվ. աշխ., էջ 170։

2 Նույն տեղը, էջ 171—172։

Սարգսյանը (Տևկանց) հիանալի նկարագրություններ է թողել Մշո ս. Կարապետ վանքի տոնախմբությունների մասին։ Իր անկախությունը կորցրած և թուրքական բռնակալության լծի տակ տառապող ժողովրդի այն մասը, որ գալիս էր այնտեղ ուխտի, հաստատապես համոզված էր, որ այդ վանքը մուրազատուր է։ Մի կին իր երեսն է քսել գերեզմանի վրա, որպեսզի քրդերի կողմից հալածված և ավելի քան տասը տարի հայրենիքից հեռացած իր ամուսինը վերադառնա, մյուսները աղոթում են, որպեսզի իրենց հիվանդությունները ամոքվեն, իսկ ոմանք էլ հարսանալու հույսով են աղոթում։ Ընթշամարտիկները ուժ են ցանկանում ունենալ և այն էլ գոմեշի ուժի չափ, երիտասարդները փնտրում են իրենց սերը, իսկ նրանցից ոմանք ցանկանում են դառնալ լարախաղացներ։ Այդտեղ ամենուրեք հնչել է հայկական ժողովրդական երգն ու տաղը և ապա նրա հնչյունների տակ մարդիկ պարել են, եղել են խաղեր և ձիարշավ։

Սակայն հավաքվածների մեջ գտնվել են նաև մարդիկ, որոնք իրենց երաժշտական գործիքները «չնկուռ, տամպուրին ու սանդուռ գերեզմանի վրա դրած՝ կը պահանջեն, որ իրենց մատանը ու սազին, այնպես զիլ ձայն, այնպես հինարf տա, որ ոչ ոք չի կրնա իրենց հետ մրցիլ, և մատքեր շարժած ժամանակ երկնքի թռչուններ և քարայրի մեջ բնակած օձեր կանաչ մատոտներ դուրս ելնեն բերաններին բանան շըշկրուռ դմայլած մտիկ անեն»[1]։

Ե. Տևկանցի վկայությամբ վանքի այդ տոնախմբությունների ժամանակ այնտեղ էին գալիս Հայաստանի և այլ վայրերի շատ բնակիչներ. «Ի բովանդակ գաւառացն Հայաստանի 'ի կողմանց Պարսից, Ռուսաց և Ռումինաց, 'ի յաշխարհաց Հնդկաց, եգիպտացոց գային հասանեին 'ի սուրբ մենաստանս Գլակայ. պատմեր թէ ոչ էր չափ և հաշիւ նուերաց և ընծայից ուխտաւորաց, յաւուր միում այր մի Նախիջևանցի 500 հազար դահեկան դարսպաս ընծայեաց»[2]։

Ինչպես Մշո դաշտում, այնպես էլ Բիթլիսում՝, Վասպուրականում և այլուր ժողովրդի մոտ տարածված էր այն ավանդությունը, որ լարախաղացների ձիրքը նրանք ստանում էին ս. Կարապետից։ Ըստ ավանդության, նա հրեղեն ձիու վրա ման

---

1 Շահեն ի Սիպիր..., էջ 61։

2 Մատենադարան, ձեռ. Ա4180, թ. 85։

էր գալիս ամենուր և իր ոսկեղեն կանաչ վարոցով (դալար փայտ) հունար էր պարգևում աշուղներին և լարախաղացներին։

Մշո ս. Կարապետ վանքի հռչակը տարածված է եղել ոչ միայն Հայաստանում, այլև Վրաստանում և այլուր։ Այսպես, մեծ բանաստեղծ, կախարդական խաղերի հեղինակ Սայաթ-Նովան իր բանաստեղծական, նվագելու և երգելու շնորհքը վերագրում է Մշո ս. Կարապետ վանքին։ Իր «Շատ սիրուն իս» խաղի տողատակում նա գրում է. «Ամեն աստված, յիս-մդդսու վորթ՝ Արութինս, պըստուց ինչոր յարսուն տարին գլուխ դրի ամենայն խաղին, ամա սուրբ Կարապիտի կարողութենով սորվեցա քամանչեն ու չոնգուրն ու ամբուրեն»[1]։

Եղել է արդյոք Սայաթ-Նովան այդ վանքում, թե՞ ոչ, այդ կապակցությամբ արված մեր պրպտումները ոչ մի արդյունքի չհասցրեցին, սակայն, եթե նա իր խաղի տողատակում նշում է, երեսուն տարի չի կարողացել նվագել և միայն այդ վանքի զորությամբ է սովորել վարպետորեն նվագել քամանչայի, չոնգուրի և ամբուրեի վրա, խոսում է այն մասին, հնարավոր է, որ նա եղած լինի այդ վանքում, այլապես ուրիշների ասածները լսելով չէր կարող գրել վերևում բերված տողերը։ Սայաթ-Նովան «Խմեցուր ձեռիտ թասեմեն» տաղում դիմելով գոզալին, ասում է.

Ովոյ ինձ շինեց գիվանա
Սուրբ Կարապիտեն խիվանա[2]։

Վերջապես, XVIII դարի հայ հանրահռչակ բանաստեղծն ու երգիչը գրել է «Մշու սուլթան սուրբի Կարապիտ» տաղը, որի մեջ ասում է.

Մշու սուլթան սուրբ Կարապիտ երկինք է հասյալ գովքն քո
Գլխու վարթապիտ ճշմարտության, չկար հավասար ոքն քո[3]։

Մշո ս. Կարապետ վանքի տոնակատարությունները կատարել են նաև Կոստանդնուպոլսի Սկյուտար (Ենի մահլե) թաղամասի բնակիչները, որոնք Մուշից օսմանյան մայրաքաղաք են գաղթել XVI դարում։ Մայրաքաղաքի Մուշի հատվածը «Վարդավառ՝

1 Սայաթ—Նովա, Հայպետհրատ, Ե., 1959, էջ 10։
2 Նույն տեղը, էջ 47։
3 Նույն տեղը, էջ 80։

տունին՝ գավառացի մանավանդ մշեցի աստվածապարարկներու հապարյակ մը, որ Մուշի Կարապետի վանքին կարոտ անկե կատնեին՝ բերելով իրենց ավյունին հետ՝ աշխարհական շեն շող ցնծություն մը՝ ասիական նախշուն գույներով ու խրոխտ ձայներով ժապավինված»[1]։ Կոստանդնուպոլսի այս թաղի բնակիչները իրենց հայրենի վանքը հիշելու նպատակով նրան անվանել էին ս. Կարապետ անունով։ Այս թաղի դպրոցը 1838թ. կոչվից ճեմարան՝ «սկիզբ ունենալով Բալեշի Ամրտոլու վանքեն եկող վարդապետներեն ու վարժապետներեն...»[2]։

Ըստ ականատեսներից մեկի, Սասունը մի լեռնագավառ էր. «Սասունը՝ լեռների, ժայռերի, խութերի, անթիվ ձորերի, կիրճերի, քարանձավների մի կուտակում է, որ տեղ-տեղ բացվում են փոքրիկ հարթություններ երկրագործության համար, սարավանդներ՝ անասունների հոտերը արածացնելու համար»[3]։

Սասունը բազմաթիվ լեռների վրա ծվարած, լեռների ու լեռնագագաթների մի միասնություն էր, որի հարավային մասը կազմում էր Տիգրանակերտի (Դիարբեքիր) հովիտը, որին անվանում էին Ներքին դաշտ, իսկ Մշո դաշտին՝ Վերին դաշտ։ Լեռներ-լեռներ, ամենուրեք լեռներ, գեղեցիկ բնություն, անհնաման գետակների ու աղբյուրների մի հավաքածու, տեղ-տեղ անտառներով պատած, իսկ անտառազուրկ վայրերը պատած էր ճոխ բուսականությամբ։ Սասունի լեռներն ու խորխորատներն այնքան շատ են, որ նրա բնակիչները միշտ էլ ինքնապաշտպանության համար տեղ էին գտնում։

Արխիվային մի վավերագրի մեջ այդ հերոսական ժողովրդի բնավորության և նրա երկրի գեղեցկության մասին նշված է, որ սասունցին իր դյուցազնական ոգին, անկախ ու անոնկճելի բնավորությունը ստանում էր իր երկրից։ «Սասունի անառիկ լեռների և ահարկու անտառների մեջ ապրող, նրա ազատ օդը շնչող և այն կուսական աղբյուրների ջուրը խմող ժողովուրդը կարող չէ թույլ հոգվո և տափակ սրտի տեր լինել։ Սասունի ժողովուրդը պետք է որ անպատճառ դյուցազնական սիրտ և հոգի ունենար, պետք է որ անպատճառ նրա մեջ ցոլանար յուր հայ-

---

1 Հին օրեր, Գուեռ Նալատուր Միսաքեան և իրեն ժամանակակից իմացականին վրայ, Ք. Գոլիս, 1907, էջ 20։

2 Նույն տեղը, էջ 21։

3 Ա. Գալանքար, Սասուն, Թիֆլիս, 1895, էջ 5։

բենի երկրի վեհ բնավորությունը»[1]։ Գ. Սրվանձտյանը Սասունի ժողովրդին մոտիկից ճանաչող այդ հոգևորական-մտավորականը, Սասունի լեռներն անվանում է «Սասնո քաջաբեր լեռներ»[2]։

Սասունի 1894 թ. ապստամբությունից հետո ռուսական սահմանն անցած մի կնոջ երբ թղթակիցներից մեկը հարց է տալիս, թե ինչո՞ւ թշնամու դեմ ուղարկեցիր քո որդուն, չէ որ դու հաստատապես գիտեիր, որ նրանք թվով շատ էին, սասունցի կինը հպարտ պատասխանում է. «Մեր Սասնո մեջ պարտք է որդուն կռիվ ուղարկելը. մեր լեռներու վրա ապրողը մեռնելուց չի վախենում։ Տղամարդի համար դոշակի վրա մեռնելը ամոթ է։ Սասունցու աղջկա լավ փեսացուն, քաջ ու արտոտ տղան է։ Մի տղա, որ վախկոտ եղավ ու կռվի մեջ յուր քաջությունը չերևացրեց, այդպիսինին գյուղի պետերը իրանք կը սպանեն։ Ես որդուս կռվի մեջ օգնել եմ, նրան վառոդ ու գնդակ հասցրել»[3]։

Եվ Սասունում, երբ տան մեջ ծնված մանուկը տղա էր լինում, նորածնի բարեկամները և հարևանները ուրախացած միաբերան հպարտությամբ ասում էին, որ իրենց լեռնաշխարհում այդ տան մեջ «թվընք մը լե էվելցավ»։

Նշենք, որ XIX դարի 60-ական թվականներին անառիկ Զեյթունի ինքնավարության վերացումից հետո «հայկական գավառներից միայն Սասունն էր մնացել, որ դեռ շարունակում էր ապրել յուր նախնական կիսանկախ կյանքով...»[4]։ Սասունցին ազնիվ էր ու իր խոսքի տերը, դավաճաններին նրանք անվանում էին «փսթի ու փնթի» կամ «շեյթանի» ընկեր։ «Ապրելով բնության ծոցում ու հեռու լինելով այն ամեն չարիքներից ու բարքերից, որ բերում են յուրյանց հետ ավելի հառաջացած կյանքի՝ բարդ պայմանները, սասունցին հավասարապես հեռու է խարդախությունից ու նենգությունից, ստրկահոգությունից ու դավաճանությունից, շռայլությունից ու անպարկեշտությունից, բայց նույնպես էլ՝ ուսումից ու կրթությունից»[5]։

Սասունցիները ապրում էին նահապետական մեծ դերդաստաններով։ Այնտեղ ընտանիքներ կային, որի տան հարկի տակ ապրում էին 70—80 հոգի, որոնք կառավարվում էին, «ամենայն

---

1 ՎՍՍՀ ԿՊԱ, ֆ. 480, ց.1, գ. 1233, թ. 85։

2 Գ. Սրվանձտյանի նշվ. աշխ., էջ 33։

3 ՎՍՍՀ ԿՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 1273, թ. 11։

4 «Արաքս», 1894—95, գիրք Ա, էջ 68։

5 Նույն տեղը, էջ 85։

արդարությամբ, առանց զրկանքի։ Սասնցի հարսներ ամոթ են համարում և մեղք տան բաժանման պատճառ դառնալ. ուստի, պարկեշտ և ազնիվ հնազանդվում են տանտիրուհուն»[1]։ Հարկ է նկատել, որ ճաշից բացակայողների թիվը այսպիսի ընտանիքներում կարողանում էին որոշել գգալները համրելով։

Սասունի կանայք քաջ էին և անվախ, շատ հաճախ նրանցից շատերը զենքը ձեռքին կռվում էին գեպի Սասուն արշավող հրոսակների դեմ։ Դրանցից էին Շաքեն, նրա ընկերուհիները և այնուհետև գելիեգուզանցի Հավսեն, որը կռիվներից մեկի ժամանակ իր չորս տղաներին հորդորում էր քաջ լինել, լավ կռվել։ «Լաո՛ն,— ասում էր Հավսեն իր որդիներին,— տայեն զձեզ զուրբան, մեր հարազատները վճռեցին պատերազմել, մենք երգվեցինք կռվել, որովհետև է՛լ անտանելի են դարձել թշնամու արածները, որովհետև ամոթ է մեզ, մեր սուրբ լեռները փուլ կգան և մեկ տակով կանեն՝ երբ մենք մընք քար կը հալցունք, ջուր կը դարձունք երկաթ, ափսո՛ս չը՞նք մենք վատ տաճիկներին ըռիութ»[2]։ Այնուհետև դառնալով իր կռվող զավակներին, մայրը ասում է. «Դուք երկուսդ՝ Ավե և Հաջո, կը լինեք ինձ հետ իմ խմբի մեջ, իսկ դուք կը գնաք ռես Գրքոյի հետ, այսպես է վճռված։ Մըր սուրբ Մարափեն Անտոք, Ծովասար կանչին, Հարի՞ խի մեռուկ մնաք դուք, մեզ են կանչում, մեզ են ասում մեռուկ, ցույց տանք, որ մենք մեռուկ չենք, դուք էլ ցույց տվեք, որ Հավսեի հարազատներ եք»[3]։

Սասունցի Հավսեն 1904 թ. մասնակցում է Ջայի ահեղ ճակատամարտին և իր որդիներին, և ճակատամարտի մասնակիցներին ասում է. «Լա՛ո, լա՛ո, մամոն քեզ զուրբան, ձեռներդ զորանան»։ Հանկարծ սկսվում է թշնամու գրոհը, Հավսեն իր որդիների հետ կռվողների շարքերում էր։ Երբ նա տեսավ, տղան՝ Հաջոն մի քիչ նահանջեց ավելի լավ դիրք գրավելու համար, զայրացած ասաց տղային. «Հաջո՛, Հաջո՛, կոկուն քաշեմ (սև վրան— Հ. Պ.) քաշեմ զքո գլուխ, հորի՞ ես կանգնել, լաո, էրի շաշուր է (սրի կռիվ)։ Սուր քաշեց Հավսեն առաջ նլացավ, նրան հետևեցին դարանած մարտիկները երգելով Շըր (առյուծ) մըր առջևեն փախնի ըլնց կատու, ափսոս չը՞նք մնանք տաճկին հարկատու»[4]։

---

1 «Արաքս», 1894—95, գիրք Ա, էջ 87։

2 «Երիտասարդ Հայաստան» շաբաթաթերթ, Բոստոն, 1906, էջ 211։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը, էջ 220։

Վերջապես մարտերից մեկի ժամանակ Հավսեն ոգևորվելով, տղաներին ասում է, որ պետք է խփել թշնամուն, սակայն Հաջոն մորը ասում է. «Մամո, թվանքս ավրավ, էլմա՞ կեղնի։

Ցա սուրբ Մարափա,— գոռաց Հավսեն, սուրը քաշեց ու վազեց, Հաջոն մոր օրինակին հետևեց։ Դարձյալ ձեռնամարտը սկսվեց»[1]։

Սասունը շատ բերդեր ուներ, սակայն նրանցից ամենակարևորը Դավթի բերդն էր, որը գտնվում էր Ծովասարի հարավային ստորոտին, մի բարձր ժայռի վրա։ Այդ բերդը պատմական Քաղքիկն է, որի ստորոտից էլ անցնում է Կուս գետը, այն եռանկյունի է, կառուցված մի քարաժայռի վրա, որտեղ և միավորվում են իրար հետ Կուս և Կապաս գետերը։ Այս բերդը իր տեղադրությամբ մի ցամաքային թերակղզի էր, ինչպես անառիկ Զեյթունը։ Կուս գետը կոչվում էր նաև Բոզրկան։ Դավթի բերդի երկարությունը՝ 300, իսկ լայնությունը 100 քայլ էր, բերդի պատերի բարձրությունը 50 քայլ էր, բերդի պատերը շարված են եղել կարմրագույն քարերով, որոնցից յուրաքանչյուրը երեք մետր երկարություն և մեկ մետր լայնություն ուներ։ Բերդի խմելու ջուրը բերվել էր Կապաս գետից, ժայռերի միջով խողովակներով։

Սասունի Բոնաշեն ավանի մոտ անառիկ վայրում ծվարել էր Աղբերկա կամ ս. Աղբերիկ վանքը, որի եկեղեցու խորանի մոտից բխում էր մի հիանալի սառնորակ աղբյուր, որին էլ տեղացիները անվանում էին ս. Թադևոս առաքյալի աղբյուր, իսկ վանքն էլ այդ կապակցությամբ անվանվել է ս. Աղբերիկ[2]։ Աղբերիկ վանքը սասունցիների ամրություններից մեկն էր։ Նրանք այդ վանքից մի քանի անգամ գրոհել են քրդական ուժերի վրա։ 1741 թ. Այեդին բեկը հրամայեց քանդել վանքը։ Այդ հրամանը կատարվեց և վանքը միաժամանակ թալանվեց, սակայն հետագայում, երբ փոխվեցին հայ-քրդական հարաբերությունները, նա նորից թույլ տվեց այն վերաշինել։

Մուշի հարավային լեռնաշղթայի վրա տեղավորված էր Աթանգինա կամ Աթանեա վանքը, որը սասունցիների ամենասիրած ուխտավայրն էր։ Սասունի Ծովասար գավառակում էր գտնվում ս. Թովմայի կամ ս. Թամայի Խոցոց վանքը, որը տեղա-

---

1 «Նրիտասարդ Հայաստան», 1906, էջ 320։

2 Հ. Ս. Էփրիկյան, Գանկերազարդ բնաշխարհիկ բառարան, պրակ երկրորդ, Վենետիկ, 1900, էջ 49։

վորված էր խոց կամ խողց գյուղում։ Սերկի լեռան հյուսիսային կողին կառուցած եկեղեցին կոչվում էր Կարմիր եկեղեցի, որտեղ հաճախակի կարելի էր հանդիպել Մուշից եկած ուխտավորների։ Կարմիր եկեղեցու մոտ էր գտնվում բուժիչ աղբյուրը, տեղացիների ասելով, իր քամիների ապրշում շվվոցով, իր գեղեցիկ ու աննման կարկաչով։ Ըստ ավանդության, այս աղբյուրի ջուրը խմելուց և լվացվելուց հետո մարդու մոտ անհետանում էին եղած հիվանդություններն ու ախտերը։

Մշո դաշտից գեպի Սասուն տանող ճանապարհը անցնում էր Կուրտրկ լեռան գագաթով, ապա Ծովասարի կողքով դեպի Շենիկ ու Սեմալ գյուղերը։ Մինչև XIX դարի 60-ական թվականները Մուշի դաշտի հարավային շրջանները գտնվում էին Դիարբեքիրի (Ամիդ) վիլայեթի մեջ, իսկ Մուշում նստում էր թուրքական փաշան։ Հետագայում թուրքական կառավարությունը հայոց պատմական Աղձնիք և Տուրուբերան նահանգներից կազմեց Բիթլիսի վիլայեթը, որի կենտրոնը Բիթլիսն էր։ Այն ուներ չորս սանջակներ՝ Բաղեշ, Մուշ, Սղերդ, Կենճ։ Մուշի սանջակի մեջ էր մտնում Սասունի մի մասը։ Վարչական այնպիսի բաժանումների ժամանակ թուրքական կառավարությունը ելնում էր «բաժանիր, որ տիրես» քաղաքականությունից։ Աշխարհագրական տեսակետից միաձույլ Սասունը կառավարությունը բաժանել էր մի քանի մասերի, այսպես, Խութն ու Մոտկանը մտնում էին Բիթլիսի սանջակի, իսկ Շատախն ու Բռնաշենը՝ Մուշի սանջակի մեջ, Խուլբը, Խիանքը և Տալվորիկը՝ Կենճի մեջ, իսկ Բսանքը, Արձնը (Խարզան) և Ռնդուանը՝ Սղերդի մեջ։

Վարչական այս բաժանման նպատակը շատ պարզ էր, եթե Սասունից կազմվեր մի սանջակ (մյութասարիֆություն), ապա այնտեղ հայկական բնակչությունը ճնշող մեծամասնություն կկազմեր, իսկ եթե այն բաժանվում էր չորս մասերի, ապա հայերի թիվը հարաբերական տեսակետից քիչ կլիներ։

Տարոնի դաշտը անտառներով հարուստ չէր, քանի որ թշնամու կատարած բազմաթիվ արշավանքների ժամանակ նրա երբեմնի խիտ անտառները շարքից դուրս էին եկել։ Անտառներով հարուստ էր Սասունը։ Սասունը հարուստ բուսականություն ուներ, նրա լեռնալանջերում կային մեծ քանակությամբ սենդի համար պիտանի բույսեր, որոնցից ամենակարևորը խավրծիչն էր, որը օգտագործվում էր ժողովրդի կողմից։ Սասունը ուներ նաև օգտակար հանածոների հանքեր։ Այսպես, հարավային Սասու-

նում կային աղահանքեր, իսկ Տալվորիկ գյուղի բնակիչները իրենց երկաթահանքից պրիմիտիվ ձևերով երկաթ և պողպատ էին արտադրում։

Մշո դաշտից հոսող գետերի՝ Եփրատի և Մեղրագետի մեջ խայտում էին Դեղիկ, Դիպուկ, Կարապետիկ, Մող, Սըլա ձկները։ Լեռներում եղած Ալժահրի կոչված ծառի պտուղներով ոչխարի մորթիներ էին մշակվում, որոնք ունենում էին շատ հաճելի մուգ գեղին գույն, իսկ Ծպխի ծառի կեղևով ներկված կաշին ստանում էր մութ կարմիր գույն։ Երկաթի և քարի հանքեր կային նաև Մուշում։ Այստեղ կար նաև մի տեսակ հող կաղճին անունով, որից և տեղացի բրուտները ամաններ էին պատրաստում։ Մուշում կային խաղողի այգիներ, որից բնակիչները լավորակ գինիներ էին ստանում։

Մշո դաշտում, պաշտոնական վիճակագրության համաձայն, հայերի թիվը XIX դարի երկրորդ կեսին հասնում էր 36 հազարի, իսկ մահմեդականներինը՝ 21 հազարի։ Այնտեղ ապրում էին 2500 հայ կաթոլիկներ և 500 հայ բողոքականներ[1], եթե միացնենք հայերի թվերը անկախ դավանանքից, կստացվի 39 հազար, նշանակում է, Դաշտի բնակիչների 60 տոկոսից ավելին հայեր էին։ Նույն թվերը բերել է իր «Արմենիա» գրքում նաև անգլիական դիտնական և ճանապարհորդ Լինչը, ըստ որի Մուշի «Դաշտին գյուղերը մեծ մասամբ հայկական էին... Վստահաբար կըրնանք ըսել թե բուն իսկ Դաշտի մեջ հայկական տարրը կը տիրապետե»[2]։ Մշո դաշտում հայերի թիվը գերակշռել էր նաև XIX դարի առաջին կեսին։ Լինչը բերում է անգլիական հյուպատոս Պրենդիի 1838 թ. վերաբերող տվյալները և եզրակացնում, որ «Մուշի բովանդակ դաշտին մեջ հայերու հետ խառնված ո՛չ մեկ իսլամ գյուղացի կա. այս իրողությունը շատ հստակորեն ցույց կուտա, թե այս երկրամասը կպատկանի ավելի Հայաստանի, քան Քուրդիսթանի»[3]։

Ըստ «Հարազատ պատմություն Տարոնոյ» գրքի, Մուշի հայ հատվածի մի մասը գաղթել էր Սասունից, Խութից և Մոտկանից։ XV—XVII դարերի ընթացքում քրդական մի շարք ցեղեր սկսեցին հաստատվել Տարոնի և Սասունի Փսանք, Խիանք, Գապլճոզ

---

[1] Տե՛ս Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 93։

[2] Լինչ, Հայաստան, Բ հատոր, Կ. Պոլիս, 1914, էջ 187։

[3] Նույն տեղը։

ու Հապաղջուր գավառներում և հայկական բնակչության մի մասը չդիմանալով նրանց ճնշմանը, սկսեց ընդունել մահմեդականություն։ Այդ նույն գրքում ասվում է նաև, որ Սասունում և նրա շրջակայքում կային հայկական ծագում ունեցող Բագրանցիք, Պալաքցիք, Մամրկանցիք, Ռոշկոտանցիք (Բագրատունիներ, Մամիկոնյաններ, Ռշտունիներ, Պահլավունիներ) ցեղերը[1]։

Նույն գրքի հեղինակի բերած վիճակագրական տվյալների համաձայն, 1880 թ. Մուշ քաղաքում կար 950 հայ ընտանիք 8900 բնակչությամբ և 1650 թուրք ընտանիք 12.000 բնակչությամբ։ Սակայն թուրքական պետության վարած քաղաքականության հետևանքով, բնակչության հարաբերակցությունը Մուշ քաղաքում փոխվեց և 1915 թվի նախօրյակին Մուշում կար 1200 հայ ընտանիք 12.000 բնակչությամբ և 2400 թուրք ընտանիք 18.000 բնակչությամբ[2]։ Իրավիճակը այլ է, երբ մենք Մուշ քաղաքի հետ միասին ամփոփում ենք նաև Դաշտի գյուղերի բնակչության տվյալները։ Այսպես, 1880 թ. Ն. Վարժապետյանի կարգադրությամբ հավաքած տեղեկությունների համաձայն, Մուշ քաղաքում և շրջակա գյուղերում թուրքական բնակչության թիվը հասնում էր 55 հազարի, իսկ հայերինը (Մուշ, Բուլանըխ, Մանազկերտ)՝ 225 հազարի[3]։

Առաջին իմպերիալիստական պատերազմի նախօրյակին XVIII դարի համեմատությամբ Տարոնի բնակչության կազմում մեծ փոփոխություններ էին տեղի ունեցել, հարաբերականորեն պակասել էր հայերի և, ընդհակառակը, ավելացել էր թուրք բնակչության թիվը։

XVII դարի թուրք պատմաբան Քյաթիպ Չելեբու «Ջահան նյումա» աշխատության մեջ ասվում է այն մասին, որ Մեծ Արմենիան (այդ ժամանակ թուրքական պատմաբանները ընդունում էին Մեծ և Փոքր Արմենիաների գոյությունը, այժմ ժխտում են այն) բաղկացած էր Վանի և Էրզրումի էլայեթներից[4]։ Վանի էլայեթը այդ ժամանակ ունեցել է տասներկու սանջակ և մեկ հյուքմեթ, սանջակներից մեկը Մուշինն էր։ Պատմագրի ասելով Մուշը «մի լեռան ստորոտում, հարթավայրում, Դաշտի եզրին

---

1 Հարազատ պատմություն Տարոնի, էջ 8։

2 Նույն տեղը, էջ 21։

3 Նույն տեղը, էջ 22։

4 Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և անդրկովկասյան մյուս ժողովուրդների մասին, հատ. Բ, Ե., 1964, էջ 35։

ընկած փոքր քաղաք է։ Դաշտը, որ հայտնի է Մուշի Դաշտ անունով, խիստ ընդարձակ է, ունի երկու օրագնաց տարածություն։ Այնուհետև պատմաբանը նշում է, որ «հայերի տերմինով, անջրդի տեղերը կոչվում են «Մուշ»։ Նա միաժամանակ նշում է, որ Մուշի «գյուղերում ամենուրեք ապրում են հայեր»[1]։ Այնուհետև Քյաթիպ Չելեբին նշում է, որ Մշո դաշտը արգավանդ է, հատկապես շատ հարուստ է այնտեղի կենդանական աշխարհը, իսկ գետակների մեջ խայտող ձկները շատ ու շատ են։

Ինչ վերաբերում է Սասունին, ապա այնտեղ մինչև XIX դարի 60-ական թվականները և դրանից հետո էլ հայ բնակիչները ապրել են ինքնամփոփ կյանքով, թուրքական աստիճանավորներ չեն եղել։ 1861 թ. Կոստանդնուպոլսում տպագրված աշխարհագրական մի դասագրքում այդ մասին կարդում ենք. «Սասուն գավառը լեռներու մեջ ինքնագլուխ երկիր մըն է»[2]։ Նույնը հաստատում է Ս. Պետերբուրգում հրատարակված «Հայոց պատմություն» գիրքը, որի մեջ ասված է. «Օսմանյան տերության մեջ սասունցիք ևս ունին Փոքր Ասիայումը մեկ անկախ ազատություն»[3]։

Սակայն, եթե սասունցիների մեծ մասը ամրացած էին իրենց լեռներում և նրանց բնակավայրերը կառավարական ոչ մի պաշտոնյա չէր մտնում, ապա այդպես չէր վիճակը Արևմտյան Հայաստանի, ինչպես նաև Տարոնի դաշտի գյուղերում։ Այսպես 1898 թ. Բուլանըխի գյուղերը թուրքական գանձարանին տալիս էին 386.190 ղուրուշ բեգել (զինվորական տուրք)։ Այստեղ յուրաքանչյուր տղամարդ պետք է վճարեր մոտ 38 ղուրուշ զինվորական հարկ[4]։ Տարոնի գյուղերը ղեկավարվում էին տանուտերերի (ռես) միջոցով, որոնց կից կար ծերերի ժողով (մեջլիսի իհթիար)։ Տանուտերի գրագրությունները կատարում էր գրագիրը (քյաթիպ) և նրա մոտ ծառայում էր գզիրը, վերջինս գյուղի և նրա բնակիչների հետ կապված հարցերի լուծման ժամանակ ոչ մի ձայն չուներ։ Տանուտերը կարող էր ընդունել կամ չընդունել գյուղի ծերերի ժողովի որոշումը, նա ընտրովի էր, յուրաքանչյուր գյուղացի մասնակցում էր նրա ընտրությանը և սարա-

---

1 Թուրքական աղբյուրները..., հատ. Բ, էջ 36։

2 Աշ ձեռն աշխարհագրություն, Կ. Պոլիս, 1861, էջ 23։

3 Պատմություն Հայոց ազգի, Սանկ Պետերբուրգ, 1863, էջ 268։

4 Տե՛ս Բուլանըխ կամ Հարք գավառ, Թիֆլիս, 1901, էջ 33։

գրում էր հանրագրության թղթի տակ։ Եթե գյուղացին կնիք չուներ, ապա թանաքի մեջ մատը թրջելով պետք է հաստատեր թուղթը, որը տանուտերը ոսկիների հետ միասին ներկայացնում էր գավառի կայմակամին[1] ապա իրավունք էր ստանում իր պաշտոնը վարելու համար։

Սասունի վարչական բաժանման, նրա բնակչության թվի մասին հրապարակի վրա կան մի շարք աշխատություններ, դրանցից ամենահինը Ղ. Ինճիճյանի գիրքն է, որը վերաբերում է XIX դարի սկզբին։ Այնուհետև XIX դարի վերջերին գրվեցին Սեյլանիի «Սասուն» և Ա. Քալանթարի «Սասուն» աշխատությունները։ 1908 թ. թուրքական հեղափոխությունից հետո լույս տեսան Ս. Բյուրատի «Ելտզե Սասուն», Ա—Դ-ի «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» աշխատությունները, որոնք նույնպես շատ կարևոր են Սասունի պատմության ուսումնասիրության համար։ Սովետական կարգերի հաստատումից հետո, 1950—60-ական թվականներին հրապարակ եկան Ե. Կարապետյանի «Սասուն» և Վ. Ս. Պետոյանի «Սասունի բարբառը», «Սասունի ազգագրություն» հուշագրությունները, Կ. Թառոյանի «Ժողովրդական շարժումները Սասունում» աշխատությունը։ Դրանք անկասկած, կարևոր են Սասունի պատմության ուսումնասիրության համար։ Սակայն սակավ արժեքավոր չէ նաև Արիստակես Տեկանցի աշխատանքը, որը գտնվում է Երևանի մատենադարանում։ Այն կոչվում է «Այցելություն ի Հայաստան», որի մեջ մանրամասն տեղեկություններ կան Բիթլիսի, Մուշի և Սասունի մասին։ Աշխատության մեջ բերված տվյալները վերաբերում են XIX դարի վերջին քառորդին և ավելի հին, քան վերևում նշված մի շարք հեղինակների տվյալները։ Ա. Տեկանցը իր վիճակագրությունը կազմել է Կոստանդնուպոլսի պատրիարքարանի հանձնարարությամբ։ Այդ գործը կատարելու համար նրան 1878 թ. մայիսին տրված է եղել երեք ամիս ժամանակ։ Առանց կասկածելու կարելի է ասել, որ այդ վիճակագրությունը կազմվել է հայկական հարցի հրապարակ գալուց հետո։

1878 թ. հունիսին Ա. Տեկանցը Մուշ քաղաքում և Մշո դաշտում էր։ Հեղինակի բերած տվյալների համաձայն Մուշ քաղաքը այդ ժամանակ ուներ ութ թաղ, որից հինգը՝ հայկական և երեքը՝ թուրքական։ Մուշում ապրում էին 4987 հայեր և 6620 թուրքեր

---

1 Տե՛ս Բուլանիխ կամ Հարք գավառ, Թիֆլիս, 1901, էջ 38։

ու քրդեր։ Հայերի թվի մեջ էին մտնում այնտեղ ապրող 315 կաթոլիկները և 42 բողոքականները[1]։

Ա. Տեկանցը Մշո դաշտի գյուղերը բաժանում է երեք գյուղախմբերի՝ Մոկունք, Բերդակ և Հունան 18 գյուղերով, որտեղ ապրում էին 7088 հայ բնակիչներ, իսկ քրդերի թիվը կազմում էր ընդամենը միայն 24 հոգի[2]։ Ա. Տեկանցը, այնուհետև տվյալներ է բերում առանձին գյուղերի մասին, նշելով, որ Ցրոնքը ուներ 850 բնակիչ, Արդխոնքը՝ 427, Կուրավան՝ 532, Չիարեթը՝ 980, Խայպեյանը՝ 1946, Գոմսը՝ 602, Շեխտունը՝ 469, Գզլաղաջը՝ 742[3], Ավզուտը՝ 442, Վարդենիսը՝ 1162, Ազրենիսը՝ 406, Թիլը՝ 658, Ավրանը՝ 840 բնակիչ և այլն[4]։ Ըստ 7 ա կազմած ցուցակի Սասունի հայկական գյուղերը այդ ժամանակ ունեին հետևյալ քանակի բնակիչներ.

Բազու	— 567	բնակիչ
Սորսոր	— 406	—»—
Հայկիրտ	— 119	—»—
Ալստին	— 63	—»—
Խաչիաչցաղ	— 427	—»—
Տոմ	— 154	—»—
Գելիեգուզան	— 413	—»—
Բիքար	— 448	—»—
Քարձոր	— 857	—»—
Խորանք	— 140	—»—
Փողրկոչ	— 413	—»—
Արդխոնկ	— 189	—»—
Ավազաղբյուր	— 442	—»—
Կաղխաղտաղ	— 49	—»—
Կեմակ	— 35	—»—
Կոլ	— 14[5]	—»—։

Զեռադրի հեղինակը բազմաթիվ հայկական գյուղեր ու վանքեր այցելելուց հետո այցելում է նաև ս. Կարապետ վանքը, որին անվանում է նազելաշուք թագուհի բազմած «Մովսարի

---

1 Տե՛ս Մատենադարան, Զանազան հեղինակների արխիվ, թղթ. 54, վավ. 135, թ. 13։

2 Տես՝ նույն տեղը, թ. 14։

3 Տե՛ս նույն տեղը, թ. 14 և 17։

4 Տես՝ նույն տեղը թ. 17։

5 Տե՛ս նույն տեղը, թ. 18։

կամ Բազմասարի կուսակեղ լեռանց մեջ»։ Ա. Տեկանցի վկայությամբ, Տարոնի գյուղացիները վանքին տալիս էին տարեկան 200—250 բեռ հացահատիկ, 150 լիտր յուղ, սակայն եկամուտների մեծ մասը վանքը ստանում էր տնտեսությունից և բազմաթիվ ուխտավորներից։ Վանքը այդ ժամանակ ունեցել է 1137 ոչխար, 16 ձի, 20 ավանակ, 18 կթան և լծկան անասուն[1]։ Մինչև 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմը վանքն ուներ երկու այգի, 14 կտոր խոտի մարգագետին, 180 սպասավոր, 18 վարդապետ, 36 մշակ, հոտաղ, պահապան, տնտես, 10 լվացարար կանայք և այլն[2]։

Ա. Տեկանցի մոտ կան տվյալներ ս. Հովհաննես, ինչպես նաև Մշո ս. Առաքելոց վանքերի մասին, որոնցից առաջինը այդ ժամանակ ուներ 300 ոչխար, 10 գոմեշ, 15 կով, 25 էշ ու հորթ և ջորի, 3 ձի։ Վանքի տարեկան եկամուտը կազմում էր 120000 ղուրուշ, այնտեղ վանահոր հետ գործում էին երկու վարդապետ, 8 աշակերտ կամ փոքրավոր, 10 միաբան, ինչպես նաև հոտաղ, մշակ, դռնապան, տնտես և այլն[3]։ Մշո Առաքելոց վանքը ուներ 3 աշակերտ, 4 մշակ, 2 տնտես, 2 հովիվ, մի քանի սպասավորներ, 120 ոչխար, 2 գոմեշ, 8 եզ, մի քանի կով[4]։

Այդպիսով, այդ վանքերն ունեին մեծ տնտեսություններ։ Սակայն նրանց եկամուտների մի մասը հափշտակվում էր տանձին վանականների, այնտեղ աշխատողների, ինչպես նաև շուրջ բեկերի և թուրք աստիճանավորների կողմից։

Ա. Տեկանցը տվյալներ է բերում նաև Մշո Բռնաշեն գավառի մասին, նշելով, որ այնտեղ ապրող հայերն ու քրդերը ազատ են «քաղաքական վարչության բռնությունեն և տանուտերական իշխանությամբ կկառավարեն իրենց»[5]։ Ըստ նրա Բռնաշեն գավառ ուներ 14 գյուղ, որից միայն մեկն էր զուտ հայկական, չորսը լ հվ քրդական, իսկ մնացած ինը՝ խառը։ Բռնաշեն գավառի մասին բերված նրա տվյալները հետևյալն են.

---

1 Տե՛ս Մատենադարան, Ջանասան Հեղինակների արխիվ, թղթ 54, վավ. 135 թ. 14։

2 Տե՛ս նույն տեղը, թ. 21—23։

3 Տե՛ս նույն տեղը, թ. 14։

4 Տես՝ նույն տեղը։

5 Նույն տեղը, թ. 28—29։

№	Գյուղերի անունները	Բնակիչների թիվը	
		Հայեր	քրդեր
1.	Օղուտ	140	—
2.	Կծանք	95	60
3.	Դաշտադեմ	46	24
4.	Ջորավա	45	61
5.	Կոսա	60	36
6.	Ընկուզիկ	84	32
7.	Արտոնք	48	34
8.	Բլրիկ	29	30
9.	Մեզրե	35	30
10.	Հնդկծոր	21	24
11.	Արխոնք	—	30
12.	Կիրոնդ	—	60
13.	Մաճպուպան	—	300
14.	Շիրո Մեզրե	—	63
	Ընդամենը	597	784[1]

Ինչպես տեսնում ենք Բռնաշենում ավելի շատ քրդեր էին ապրում, քան հայեր։ Դա, ըստ հեղինակի, հետևանք է այն բանի, որ հայկական մի քանի գյուղերի բնակիչներ, չտանելով քրդական վերնախավի հարստահարություններն ու ճնշումները, ստիպված թողել են իրենց հայրենի բնակավայրերը և հեռացել։ Տեկանցը բերում է վիճակագրական տվյալներ նաև Սասունի խութ գավառի մասին, ըստ որի, գավառն այդ ժամանակ ուներ 21 գյուղ 967 հայ և 984 քուրդ բնակիչներով[2]։ Եթե այս երկու գավառներում քրդական բնակչությունը շատ էր, ապա այդպես չէր վիճակը ամբողջ Տարոնում և Սասունում, որտեղ հայկական բնակչությունը մեծամասնություն էր կազմում։ Շատախի գյուղերի և բնակիչների մասին այդ աշխատության մեջ բերված են հետևյալ տեղեկությունները.

1 Ջանազան հեղինակների արխիվ, թղթ. 54, վավ. 135, թ. 25—26։
2 Տե՛ս նույն տեղը, թ. 26։

Մ	Գյուղերի անունները	Բնակիչների թիվը	
		հայեր	քրդեր
1.	Ավեկեարմ	19	240
2	Կոփ	245	—
3	Իրիցանք	140	—
4.	Տափրկ	144	—
5.	Գեղաշեն	151	—
6.	Շուշնամարգ	133	—
	Ընդամենը	832	2401

Այս աղյուսակից երևում է, որ Շատախում հայերը մի քանի անգամ ավելի էին, քան քրդերը։

Ըստ հեգինակի, Շատախի բնակիչները «կարի սիրահար են ազատության, պանդխտություն չգիտեն և կառավարության չեն ճանաչեր բնավ և զորք չեն տար նմա». ապա «զինավարժության մեջ շատ հաջողակ են, ընտիր վառոդ սորված են շինել»[2]։

Հետաքրքրական են Ա. Տեկանցի բերած վիճակագրական տվյալները Մուշի սանջակի ողջ բնակչության թվի վերաբերյալ։ Այդ սանջակը բաղկացած էր Մշո կավառ կամ գավառ, Վարդո կամ Մարտազի, Խնուս կամ Հարք, Թեքմեն, Շուշար, Շատյան, Բյուրակն, Խամուր կամ Վարաժնունիք, երկու Բուլանըխներ, Ասլահունիք կամ Մանազկերտ գավառներից։ Մուշ քաղաքի, շրջակայքում Դաշտի և Զուխուրի մասում կար 189 գյուղ, որից 90-ը հայկական, 89-ը՝ քրդական և 10՝ խառը բնակչությամբ, որտեղ ապրում էին 49057 բնակիչ, որից 29207-ը՝ հայեր և 19840-ը՝ քրդեր[3]։

Սասունի և շրջակա մասերում գտնվող գավառների մասին Ա. Տեկանցը բերում է հետևյալ տվյալները[4].

---

1 Տե՛ս Մատենադարան, Ջանազան հեգինակների արխիվ, թղթ. 54, վավ. 135, թ. 27։

2 Նույն տեղը, թ. 40։

3 Նույն տեղը, թ. 48։

4 Տե՛ս նույն տեղը։

№	Գյուղերի թիվը			Բնակիչների թիվը		Ընդամենը
	Հայկական	քրդական	խառն	Հայեր	քրդեր	
1.	Բոնաշեն 1	4	9	597	783	1380
2.	Խուր 5	10	12	1227	1182	2409
3.	Շատախ 5	—	1	833	240	1073
4.	Կավառ 11	5	1	1387	1087	2474
5.	Վաղոնվի 11	77	3	2417	4808	7225
6.	Խնուս 20	2	2	8424	1493	9917
7	Կեոյսու	16	3	—	1524	1524

Այսպիսով, ի մի բերելով այդ թվերը, ստացվում է, որ վեցը գավառներում կային 188 գյուղեր, որոնցից 53-ը՝ հայկական, 110-ը՝ քրդական և 25-ը՝ խառն, որտեղ ապրում էր 26000 բնակիչ, որից հայեր՝ 14884 և քրդեր՝ 11117։ Ինչպես տեսնում ենք, հայերի թիվը գերազանցում էր քրդերին։

Ա. Տեկանցը շատ տվյալներ է բերում Մշո աշխարհի մասին, ըստ նրա, այնտեղ կային 867 գյուղեր, որից 184-ը հայկական, 623-ը՝ քրդական և 60-ը՝ խառն։ Այդ գյուղերում ապրում էին 124153 բնակիչներ, որից հայեր՝ 66808 և քրդեր՝ 57345[1]։ Բերենք այդ մասին ավելի մանրամասն թվական տեղեկություններ.

№	Գավառներ	Գյուղեր			Բնակիչ. թիվը		Ընդամենը
		Հայ	քուրդ	խառը	Հայ	քուրդ	
1.	Թեյմեն . .	—	24	—	—	2399	2399
2.	Շուշարի . .	—	30	—	—	1581	1581
3.	Շատյան . .	—	19	—	—	689	689
4.	Բյուրական լեռ .	—	46	—	—	1786	1786
5.	Վարաժնունիք .	—	17	—	—	714	714
6.	Վերին Պուլանըխ .	14	—	6	10449	2459	12.908
7.	Ներքին Պուլանըխ. .	4	17	6	4417	3911	8405
8.	Մանազկերտ . .	3	75	13	2687	9746	13433
9.	Բզնունյաց . .	17	6	1	5097	424	5521
	Մշո աշխարհ .	184	623	60	66808	57345	124153[2]

[1] Տե՛ս Մատենադարան, Ցանազան հեղինակների արխիվ, թղթ. 54, վավ. 135, թ. 40։

[2] Տե՛ս նույն աեղը։

Այնուհետև Ա. Տեկանցը բերում է Բաղեշի մասին տվյալներ, ըստ որի Բաղեշ քաղաքն ուներ 8896 բնակիչ, որից հայերը էին 5964-ը։ Բաղեշի մեջ էր մտնում Մոտկան գավառը իր 7670 բնակիչներով, որից հայեր՝ 4950 և քրդեր՝ 2720։ Ամփոփելով Բաղեշի սանջակի թվերը, հեղինակը ասում է, որ այնտեղ կային 127 գյուղեր, որից հայկական՝ 67 և քրդական՝ 60։ Բաղեշի սանջակում ապրում էին 31113 բնակիչներ, որից հայերը էին 20473-ը և քրդերը՝ 10640-ը[1]։ Տեկանցը Բասանց գավառը դնում է Սղերդի սանջակի մեջ և գտնում է, որ այնտեղ ապրում էին 8814 բնակիչ, որից հայերը էին 5836-ը, իսկ քրդերը՝ 2978-ը[2]։ Այդ տվյալները ապացուցում են, որ Մուշի և Բաղեշի սանջակներում ապրող բնակիչների մեծ մասը հայերը էին։

Ըստ Սմբատ Բյուրատի «Եվրոպա Սասուն» գրքի, Սասունը XIX դարի վերջին բաղկացած էր ութը գավառներից, 30200 հայ բնակչությամբ (Շատախ, Վերին դավառ, Բուն Սասուն, Խարզան, Փսանք, Խիանք, Խույր, Բռնաշեն)։ Սասունի այդ գավառակներն ունեին հետևյալ թվով հայ բնակիչներ.

Գավառներ	
Բռնաշեն	1200
Խույթ	3000
Շատախ	2500
Սասուն և Խարզան	9000
Փսանք	2500
Խիանք	7000
Խույր	5000
Ընդամենը	30.2008

Այս թվերը ցույց են տալիս, որ թուրքական կառավարության վարած քաղաքականության պատճառով քրդերի թիվը Սասունում ավելի արագ էր աճում, քան հայերինը։

Սասունի բնակչության, նրա զբաղմունքի և այլ հարցերի մասին հետաքրքրական տեղեկություններ կան բնիկ սասունցի Վ. Ս. Պետոյանի «Սասունի բարբառը» աշխատության մեջ։ Ըստ

---

[1] Տե՛ս Մատենադարան, Ջանազան հեղինակների արխիվ, թղթ. 54, վավ. 135, թ. 4Ը։

[2] Տե՛ս նույն տեղը, թ. 62։

[3] Սմբատ Բյուրատ (Տեր Ղազարենց), Եվրոպա Սասուն, Գ հատոր, Կ. Պոլիս. 1910, էջ 618։

նրա, առաջին աշխարհամարտի նախօրյակին Սասունն ուներ տասը շրջան.

1. Սասուն	—	16 գյուղ
2. Շատախ	—	7 —»—
3. Խութ-Բռնաշեն	—	42 —»—
4. Փսանք	—	42 —»—
5. Հազզո-Խարլլսզ	—	108 —»—
6. Մոտկան	—	61 —»—
7. Խարզան	—	128 —»—
8. Խիանք	—	56 —»—
9. Խուլբ	—	67 —»—
10. Տալվորիկ	—	12 —»—
Ընդամենը՝		539 գյուղ[1]

Հեղինակը Սասունի հայ բնակչության թիվը հաշվում է 35 հազար, իսկ քրդականը՝ 15 հազար (էջ 7)։ Եթե ընդունենք, որ հեղինակի բերած թվերը ճիշտ են, ապա ստացվում է, որ Սասունի յուրաքանչյուր գյուղում ապրել են 93 շունչ։

Սասունի գյուղերի բնակչության թվի և նրանց կենցաղի մասին մանրամասն տվյալներ է բերել Ե. Կարապետյանը իր «Սասուն, ազգագրական նյութեր» գրքում։ Նա ցույց է տալիս, որ XIX դարի վերջին և XX դարի սկզբին Սասունը գտնվում էր Բիթլիսի վիլայեթի Մուշի սանջակում և բաժանված էր յոթ հիմնական շրջանի՝ Խութ, Բռնաշեն, Մոտկան, Փսանք, Խուլբ, Խիանք, Տալվորիկ, Շատախ, Սասուն[2]։

Սասունը ընկած էր Մովասար և Մարաթունք լեռների միջև, այստեղ էր գտնվում ժողովրդի մեջ մեծ անուն հանած «Դավիթի բերդը», որն ուներ իր թաղամասերը Ճախրկան (Ճախարակ մանողների), Մաղինք (մաղ գործողների), Մրթբան (մրթբների-բոշաների), Դարբնկանք (դարբինների) թաղերը։ Սասուն գավառակի քառասուն գյուղերից հայաբնակ էին Ճախրկանը, Կապածգետը, Խոծոծվանքը, Հիթենքը, Սղպիկը, Թխիքը, Կոզվտիքը, Մրթբան, Բվին, Խանը, Քաշքշենքը, Մաղինքը, Սարեկանը, Նոնան, Քաղքիկը, Քրտամանքը, Հարկոռքը, Թաթանքը, Կուսգետը, Գոմրտերը, Գոշակը, Փիրշենքը, Հրեկոնքը, Ավտոցը, Խծորտունը՝ թվով բոանինգ գյուղեր[3]։

1 Տե՛ս Վ. Ս. Պետոյան, Սասունի բարբառը, Ե., 1954, էջ 7։

2 Տե՛ս Ե. Կարապետյան, Սասուն, Ե., 1962, էջ 3։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 8։

Ըստ Ե. Կարապետյանի, Սասունի յոթ գավառակներում կար զուտ հայկական բնակչությամբ 115 գյուղ։ Սակայն այլ են Վ. Պետոյանի տվյալները, որի մոտ գավառակների թիվը տասն է, իսկ Ե. Կարապետյանի մոտ՝ յոթը։ Այդ տարբերությունը բխում է նրանից, որ Ե. Կարապետյանը իրար է միացնում մի քանի գավառակներ, իսկ Վ. Պետոյանը անջատում է այն։

Սասունի լեռների մի մասը, հատկապես Սեմալ, Տալվորիկ, Խուլփ գյուղերի մոտ ծածկված էր խիտ անտառներով։ Լեռնակատարներից դեպի ներքև վազող բազմաթիվ գետակները լեռնային օդը ավելի հաճելի և զով էին դարձնում։ Լեռների ոչ անտառապատ տարածությունները պատած էին թավիշ կանաչով։ Սասունում չորս-հինգ տարին մեկ անգամ անտառների վրա իջնում էր գազպեն (մանանա)։ Ամբողջ անտառը, հատկապես կաղնու ծառերը ծածկվում էին սպիտակ շաքարանյութով, ծառերի կանաչ տերևները սպիտակում և ծանրանում էին մանանայից։ Մուշի և Սասունի բնակիչները հավաքում էին ծառերի տերևները, լվանում ջրով, ապա կրակի վրա եփելով տեղափոխում տուն։ Այդ մասին ականատեսը ասում է, որ գազպեն կաղնի ծառերի վրա էր իջնում մայիս—հունիս ամիսներին «ճիշտ մեղրի պես, ժողովուրդը գնում է ընտանիքով, կտրում թուփերը, լվանում են և ստանում ռուպ և կամ չորացնում են և հաց են կազմում գազպեի այդ այլուրից»[1]։

Լեռնածերպերում թառած գյուղերը քիչ վարելահողեր ունեին և սասունցիները այդ լեռնային մասերում ցանում էին միայն կորեկ և գիլգիլ։ Սասունի բարձրագիր գյուղերում ցորեն, գարի և սիսեռ ցանում էին շատ հազվագյուտ դեպքերում և այդ էր պատճառը, որ այդ գյուղերում ապրող սասունցիները ցորեն հացին անվանում էին «ֆեկի» (միրգ) և ունեցած այդ հացն էլ պահվում էր պատվավոր հյուրերի համար։ Սասունի ճանապարհները նեղ էին և դժվարանցանելի, այդ ուղիներով նրանք կարողանում էին անասունների միջոցով տեղափոխել իրենց բեռները։ Սասունցիները պահում էին մեծ քանակությամբ այծեր և ոչխարներ։

XIX դարի վերջերից Սասունի ցածրադիր մասերում սկսեցին ծխախոտի մշակությունը։ Սասունի ցածրագիր գյուղերի ձորերում զբաղվում էին շերամապահությամբ, այգեգործությամբ, և տեղ-տեղ նաև բամբակագործությամբ և խաղողագործությամբ։

---

1 «Արարատ», 1881, հունիս, էջ 230։

Այդ ցածրադիր վայրերում սասունցիները ցանում էին կտավատ, ցորեն, գարի, կանեփ, չազգամ, կազամբ։ Կտավատից ստանում էին ձեթ, կանեփից՝ թել, իսկ ընկույզից՝ յուղ։ Սասունցիները ունեին առվույտի հողամասեր, սակայն քիչ էին ցանում, քանի որ պետությունը առվույտից հարկը գանձում էր դրամով, որը գյուղացին դժվարությամբ էր կարողանում վճարել։ Ցածրադիր գյուղերում աճում էր թուզ, տանձ, ծիրան, խնձոր, թութ, որից գյուղացիները պատրաստում էին պաստեղ, ռուփ, չամիչ, օղի։ Սասունցիները պահում էին կով, եզ, այծ, ոչխար, ջորի, էշ և այլ կենդանիներ։ Շերամի սերմը նրանք արտադրում էին, դրսից չէին ստանում։ Սասունի Շենիկ, Սեմալ և բազմաթիվ այլ գյուղերում կային մի քանի տասնյակ հազարի հասնող մեղվափեթակներ։ Լեռների ծաղիկներից գոյացած մեղրը շատ ընտիր էր։ Սասունցիները ընդհանրապես պանդխտության չէին մեկնում։ Սակայն ոմանք մեկնում էին Պելիճե, Այնթափ, Հալեպ, աշխատում որպես հացթուխներ, ջրաղացպաններ և զբաղվում էին ջորեպանությամբ։ Շատ հին ժամանակներից սկսած Հալեպում սասունցիների փոքրիկ մի գաղթօջախ կար, որտեղ նրանք աշխատում էին գլխավորապես հացի փուռերում և տեղի արաբ բնակիչները աղավաղելով նրանց հայրենիքի անունը անվանում էին Սուսանի։ Սասունցիների մոտ մասսայական պանդխտություն չկար, ինչպես այդ գոյություն ուներ Մուշում, Վասպուրականում և այլուր։

Սասունցիները աշնանը անտառի ծառերի ճյուղերը կտրում, դիզում էին իրար վրա, տեղափոխում էին իրենց գոմերի մոտ և ձմռանը կերակրում էին ոչխարներին։ Լեռներում ինչքան ասեք երեքնուկ կար, որը կեր էր անասունների համար։ Միաժամանակ, նրանք կազ փուշ էին հավաքում, որից էլ ստանում էին խեժ, և վաճառում էին։ Գյուղատնտեսության համար օգտագործելի հողը վարում էին արորով։ Հողը լեռնականները պարարտացնում էին աղբով, որն անվանում էին ուժել։ Հողն ուժում էին նաև 20—30 օր այդ արտերի վրա անասուններ դիշերելու միջոցով։

Ըստ Ա—Դ-ի, Սասունը մի լեռնագավառ է, որը բաղկացած է ութը հայաբնակ գավառակներից։ Ըստ այդ հեղինակի, Սասունի մեջ մտնում էր Շատախը, Առաջավորը, Գելիեգուզանը, Տալվորիկը, Ծովասարը, Խիանքը, Խուլփը, Խութ-Բռնաշենը[1]։

---

1 Տես՝ Ա—Դ-ի նշվ. աշխ., էջ 120։

Հեղինակը Շատախի գյուղերը հաշվում է վեցը, իսկ Ե. Կարապետյանը, ինչպես ասացինք՝ տասը։ Ե. Կարապետյանը Շենիքը, Սեմալ գյուղերը համարում է Շատախի մեջ, իսկ Ա—Դօն այն համարում է մի քանի այլ գյուղերի հետ որպես Առաջավոր գյուղախումբ։ Ըստ Ա—Դօի, Սասուն տանող ճանապարհի վրա գտնվող երկու գյուղերը՝ Շենիքն ու Սեմալը համարվում են Սասունի դարպասները և միշտ սասունցիների հետ կռիվը սկսվում էր այդ գյուղերի մոտակայքում, այդ պատճառով էլ նշված գյուղերը կոչվում էին առաջավոր։ Այդ գյուղախմբի մեջ կային մի քանի գյուղեր, որոնց մասին նախորդ ուսումնասիրողները չեն նշում։ Այսպես, Ա—Դօն Առաջավորի գյուղախմբի մեջ մտցնում է՝ Շենիքը, Սեմալը, Ալիանցիքը, Գելիեգենմանը, Գելիեգեմսուրը, Տալավաքեաժինը՝ 2380 շնչով[1]։

Այս գյուղերի մի մասը Ե. Կարապետյանը դնում է Շատախի մեջ։ Առհասարակ, ըստ նրա, Առաջավոր գյուղախումբ չի եղել։ Ինչպես Ա—Դօն անձամբ եղել է Սասունում, բայց մեր կարծիքով, պետք է հենվել Ե. Կարապետյանի բերած տվյալների վրա, որոնք համեմատելուց հետո, ըստ իս, ավելի հավաստի ես ու հավանական։

Ա—Դօն մանրամասն նկարագրել է Սասունի համեմատաբար մեծ գյուղերը և իր տվյալները, ինչպես ինքն է նշում, վերցրել է Մուշի առաջնորդարանում եղած նպաստամատույց հանձնաժողովի տեղեկագրերից։ Սասունի Գելիեգուզան գյուղը ընկած է մի ձորակի երկու կողմերում և 16 թաղերից բաղկացած բնակավայր էր, որի միջով անցնող գետակը գյուղը բաժանում էր երկու մասի։ Այդ գետակը կոչվում էր Գելիեգուզանի գետ և ըստ հավաստի տեղեկությունների այս գյուղի բնակիչները մինչև 1908թ. թուրքական հեղափոխությունը հարկ չէին վճարել կառավարությանը։ Դրանից առաջ տարին մեկ անգամ գալիս էր մի թուրք պաշտոնյա, որին որոշ գումար էին վճարում, առանց մանրամասն հաշիվներ տալու գյուղի ցանքատարածությունների, արոտավայրերի և անասունների թվի մասին[2]։ Գելիեգուզանի 16 թաղերում կային 130—140 տուն բնակիչներ, որոնց շնչերի թիվը հասնում էր 1000 հոգու։ Այս գյուղի բնակիչները քաջ, անվեհեր մարդիկ էին։

---

1 Տե՛ս Ա—Դօ-ի նշվ. աշխ., էջ 123։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 124—125։

Խութի շրջանում կար հիսուն գյուղ, որից հայաբնակ էին Բոկանք, Դաշտամիր, Զորավա, Դաշտադեմ, Կծանք, Ընկուզիկ, Կոստ, Շենիստ, Ագրակ, Փիչոնք, Լեռնաձոր, Թաղվու, Թաղավանք, Գիլոնք, Ռաբաթ, Սալաբոստ, Բաբնթաղ, Հավարք, Գործվարք, Պարծղենք, Շեն[1]։ Այսինքն հիսուն գյուղերից քսանմեկը զուտ հայկական բնակչությամբ գյուղեր էին։

Լեոն դեռ երիտասարդական տարիներին ոգևորված Սասունի դիրքի և նրա բնակիչների վեհությամբ գրում է. «Խութեցին իր սարերի ժայռն է, իր ծմակների աբջը» կամ թե չե. «Ահա թե սարերը ուր են տարել այդ ամբողջ երկիրը —ուղիղ ամպերի տակ»։ Շուշի քաղաքի ծնունդը լավ դիտեր, որ Սասունի և Հայրենի Ղարաբաղի բնության ու մարդկանց բնավորության մեջ շատ նմանություններ կան, ուստի ավելացնում էր. «Բայց գարնանը Խութը կանաչների մի միապաղաղ բարձրություն է, որ հասնում է երկնքին», կամ Խութի գյուղերը «կպել են ժայռերի ուսերին, անվրդով նայում են անհատակ ձորերի»[2],— ահա այսպիսին էր Խութը։

Մոտկանի 60—70 գյուղերից հայաբնակ էին Մրձի, Քաշաղ, Մզուկ, Հայթաղ, Աշրպներ, Կրբ, Սրլրնդ, Պոկնուտ, Մրցանք, Շեն, Արփի, Կրխու, Ալնցուի, Մեծ-Զոր, Տաճձի, Վերին Գեղ, Սարենք, Աղտեք, Մարմանտ, Կնձու և Նիջ, թվով քսանմեկ գյուղ[3]։ Մնացած գյուղերում հայերը ապրում էին քրդերի հետ միասին։

Փսանք գավառակի մի մասի բնակիչները քրդեր էին, այստեղ հայկական գյուղեր էին Փսանք, Թաթանք, Կոորնկես, Քաշռենք, Մկթենք, Զանդուս, Քիսթախ, Ջրնտիկ, Խնձորիկ, Թալնոր, Բալոյինք, Կոմք, Փշուտ և Միջգեղ[4], թվով տասնչորս գյուղ։

Խիանքի հայաբնակ գյուղերն էին՝ Հեղիճ, Իշխանաձոր, Արսրկ, Արտկունք, Սևիթ, Սաղտուն, Ընկուզակ, Փարգա, Անճարոնք, Գեղրավան, Բերմ, Ընձքար[5], թվով տասներեք գյուղ։

Տալվորիկն ուներ 11 գյուղեր կամ «թաղամասեր», որոնցից էին Փուրխ, Դվալենք, Հոսնուա, Հոսներ, Հարոք, Սրաղանք, Եղկար, Հլոդինք, Արթխու, Խլնովիտ և Արգիկ[6],

---

1 Տե՛ս Ե. Կարապետյանի նշվ. աշխ., էջ 3։

2 «Մշակ», 12-ը նոյեմբերի 1896։

3 Տե՛ս Ե. Կարապետյանի նշվ. աշխ., էջ 4։

4 Տե՛ս նույն տեղը, էջ 5։

5 Տե՛ս նույն տեղը, էջ 6։

6 Տե՛ս նույն տեղը։

Շատախի (Սասունի Շատախ) անառիկ վայրերում հարատևում էին տասը հայկական գյուղեր՝ Քոփ, Գարմավ, Խրիցաճ, Տալվիկ, Ծուշամերկ, Գեղաշեն, Սեմալ, Շենիկ, Ալյանցիկ և Գելիեզուզան[1]։

Տալվորիկ գյուղը մի բնակավայր էր իր անհատակ ձորերով և անառիկ, անմատչելի լեռներով, իր թաղերում ապրող հիասքանչ ու քաջասիրտ և «երկաթե մարդիկ» լեռնականներով։ Ականատես Ա—Դօն գրելով այդ գյուղի մասին, ասում է. «Քեփինի արևելյան և հարավարևելյան կողմերից՝ բացվում են երկու վիթխարի ձորեր, որոնց ծմակներում նստած ձյունի ահագին շեղփերից գետակներ են գոյանում։ Այդ երկու ձորերը միանալով, կապում են Գելիէսան. ահա այդ երկու ձորերի միջով ձգվում է Գելիեզուզանից Տալվորիկ տանող նեղ շավիղը։ Շավիղը անվերջ ելևէջներ է կատարում. տեղ-տեղ այն ձգվում է կոկ ժայռերի վրայով, ուր ոտք դնելիս սայթաքում է թե մարդու ոտքը և թե ձիու պայտը»[2]։ Ջերմ խոսքեր է ասում այդ գյուղի բնակիչների մասին նաև Լինչը, որը գրում է. «Տալվորիկցիները ապրուստին կը հարեն երկաթի հանքեր նախնական միջոցներով շահագործելով. շրջանակները բավական փայտ կա հալեցնելու գործողությանց ծառայելու համար»[3]։

Տալվորիկ գյուղի մոտ էր գտնվում Ֆոֆռքար լեռը։ Ավանդության համաձայն քամիները կպչելով այդ լեռան գագաթին օրորում են նրան, որի պատճառով էլ լեռը ստացել էր այդ անունը։ Այդ գյուղի մոտ էր գտնվում նաև պատմական Սատանայի կամուրջը։ Ճիշտ է նկատել Ա—Դօն, որ «Ֆոֆռքարը դիցական մի աշխարհ է, ուր ապրում է դիցական տալվորիկցին», որը «վեհանձն է, հպարտ. նա վիզը ծռել չդիտե, նրան խորթ են խնդրելն ու մուրալը...»[4]։ Այս վեհ հատկություններից ետ չի մնում Տալվորիկի իգական սեռը իր չարքաշ կյանքով, պարզությամբ և անվեհերությամբ. «Տալվորիկցի կինն է, որ տղամարդուն հավասար իշխում է այդ լեռներին. տալվորիկցի կինն է, որ նեղ բոպներին իր ամուսնու ընկերն է և օգնականը։ Նա է տան պահապանը, երբ ամուսինը բացակա է։ Տալվորիկցի կինը... աշխույժ է,

---

1 Տե՛ս Ե. Կարապետյանի նշվ. աշխ., էջ 7։

2 Ա—Դօի նշվ. աշխ., էջ 127։

3 Լինչ. Հայաստան, հատ. Բ, էջ 180։

4 Ա—Դօի նշվ. աշխ., էջ 130—131։

էրակոտ, եռուն, նրա շարժումները կյանք են շնչում և ձեզ խորին պատկառանք ազդում»[1]։

Տալվորիկի խորխորատներում, ուր չկային գյուղատնտեսության համար մշակելի հարթ տարածություններ, տալվորիկցին ոչ միայն կորեկ ու գիլգիլ էր մշակում, այլև ցորեն ու գարի։ Այդիներում հոզագործի ջանքերով աճում էր թուզ, նուռ, գխտոր, ծխախոտ, բամբակ։ Գյուղի խաղողի այգիներում աճում էին խաղողի տասներեք տեսակներ։ Այստեղ թաղերից մեկում ավելի շատ խաղող էին մշակում, որի պատճառով էլ այդ թաղը կոչվում էր Նգեռուն։ Տալվորիկում թթի ծառեր էին աճում, բնակիչները զբաղվում էին շերամապահությամբ։

Տալվորիկ գյուղի հիմնադրման մասին պահպանվել է մի ավանդություն, ըստ որի, Կիլիկիայի հայկական թագավորության վերացումից հետո Սասուն են գալիս մեծ քանակությամբ գաղթականներ իշխանական տներից մեկի շառավիղ Թորոսի գլխավորությամբ, որը քաջ այր էր և ժողովրդին լավ ղեկավարելու և արտաքին հարձակումներից պաշտպանելու համար ստանում է «պապ» մականունը։ Ավանդության համաձայն նրա մահից հետո Սասունի ժողովուրդը սկսեց նրա անունով երդվել՝ ասելով. «Մըր պաբու հրվադ», «միր խոր պաբգա գլոխ»[2]։ Ըստ այդ նույն ավանդության, Կիլիկիայից յոթ եղբայրներ իրենց ընտանիքներով գալիս են Մուշ։ Նրանցից երկուսը անցնում են Էրզրում և բնակություն են հաստատում այնտեղ։ Նրանց, սակայն շատ է զզվեցնում թուրք և քուրդ վերնախավի վայրագ վերաբերմունքը և որոշում են տանը մի հոր փորել և երբ բռնակալներից մեկը մտնում է իրենց տունը, եղբայրներից մեկը մյուսին ասում է. «Թըլ հորիկ» և այդպես էլ արվում է։ Սակայն որոշ ժամանակ անց նրանք որոշում են թողնել Էրզրումը և գալ Մուշ, իրենց եղբայրների մոտ և բնակություն են հաստատում Սասունի մի գյուղում, որի անունը գնում են «Թըլ հորիկ», որը հետագայում անվանում են Թըլորիկ կամ Դալվորիկ[3]։

Խիանքի գավառակի գլխավոր ձորը կոչվում էր Իշխնձոր, իր համանուն գյուղով, որը ուներ հարյուր տուն հայ բնակիչներ։ Իշխնձորը բաղկացած էր չորս թաղերից՝ Նորհանը (Նոր շինա-

---

1 Ա—Դ-ի նշվ. աշխ., էջ 132։

2 Ավշյան Հարություն, Վաթան և Սասուն, պատմական վեպ, հատ. առաջին, Վաղարշապատ, 1910, էջ VIII։

3 Տե՛ս նույն տեղը, էջ VI։

ծը), Գալինքը (Կալատեղ), Խլվարդիհը (Խլվարդը)։ Նրանցից դեպի վերև ժայռերի կրծքին ընկած էին Խիանքի Ընկուզակ, Սկիթ, Արտխոնք գյուղերը։ Խիանք գավառակը աշխարհագրական դիրքով չնայած Սասունի մի մասն էր կազմում, սակայն վարչական բաժանմամբ ընկած էր Գենջի սանջակի մեջ։ Նա ուներ տասնութ գյուղեր, ավելի քան 516 տուն, 1249 բնակիչներով։

Ա—Դօն իր գրքում տվյալներ է հրապարակել նաև Ծովասարի գյուղերի մասին, ըստ որի, այդտեղ կային չորս հայաբնակ գյուղեր, որոնք, ինչպես երևում է, ավելի շատ բնակիչներ ունեին, քան Խիանքի գավառի տասնութ գյուղերը միասին վերցրած։ Այս չորս գյուղերում ապրում էին ավելի քան 1300 բնակիչներ, որոնց մասին նա բերում է հետևյալ տվյալները.

№	Ծովասարի գյուղերը	Շունչ
1.	Աղբի	548
2.	Հեթինք	429
3.	Տատրս գոմ	165
4.	Կելուշ	87
		1329[1]

Ա—Դօի տվյալների համաձայն, Խուլփի գավառակում կային տասնվեց հայկական գյուղեր 563 ծխերով, որտեղ ապրում էին 3947 բնակիչներ։ Խուլփը խաղողի և մրգի իսկական հայրենիք էր։ Խուլփի գյուղացիների այգիներում աճեցրած անուշահամ մրգերը արտահանվում էին Մուշ։

Խութ-Բռնաշենը XIX դարի վերջին ուներ քսանմեկ հայաբնակ գյուղեր 300 տուն բնակիչներով։ Բռնաշենը լեռնային մի գավառ էր, իր բարձունքներով և ձորերով, որի մասին 1860-ական թվականներին Ն. Սարգսյանը գրում էր. «Խիտ առ խիտ են լերինք և բարձունք Բռնաշենոյ, և ձորք անդնդախորք, գիւղորէս ունելով յոյժ նուազունս ի ձորամէջսն, և արտորայս մշակելիս անբաւականս»[2]։

Այսպիսով, Ա—Դօն ամփոփելով Սասունի բոլոր գավառակների գյուղերում ապրող հայ բնակիչների թվերը, գտնում է, որ

---

[1] Տե՛ս Ա—Դօի նշվ. աշխ., էջ 139։

[2] Տեղեկագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, էջ 238։

Սասունի բոլոր գավառակներում միասին վերցրած ապրում էին 17000 հայեր[1], որը, մեր կարծիքով, պակասավոր է։

Չնայած սասունցիները առհասարակ հեռու էին պետական պաշտոնյաներից, նրանց քմահաճույքից և նրա ժողովուրդը համեմատաբար ավելի քիչ էր հարստահարվում, քան Մշո դաշտինը, սակայն երկարատև ժամանակաշրջանի ընթացքում քրդական մի շարք աշիրեթներ կարողացել էին հաստատվել Սասունի գյուղերի մի մասում, հատկապես Խութում, որտեղ «հայերն ապրում էին իբրև ճորտեր, վերին աստիճանի աղքատ էին ու հետամնաց»[2]։

Ըստ «Հարազատ պատմություն Տարոնոյ» գրքի հեղինակ Մ. Բդեյանի, մինչև 1890թ. սասունցիները ծվարած էին իրենց անմատչելի լեռների մեջ և շրջակա աշխարհի հետ սակավ հարաբերությունների մեջ էին։ Թուրքական կառավարությունը իր աստիճանավորներով հաստատված չէր այդ վայրում և միայն բավարարվում էր լեռնականներից տարեկան 18000 ղուրուշ տուրք գանձելով։ Մեր ուսումնասիրությունները բերել են այն համոզման, որ Մ. Բդեյանի բերած տվյալները հավաստի են և համապատասխանում են իրականությանը։

Դեռևս շատ հին ժամանակներից սկսած սասունցիները իրենց ժողովրդի ինքնապաշտպանության համար արտադրում էին չափմախլի հրացաններ, որոնց լեռնագավառի բնակիչները իրենց գյուղերում անվանում էին թվընգ։ Ժողովրդի մոտ եղած հրացանները տարբեր տեսակի և տրամագծի էին լինում։ Սասունցիները իրենց հրացանները անվանում էին Մաջառ, Շաշխան, Տերսմի, Ստամպոլի, Նավհլու և այլն[3]։ Սկսած մանկությունից Սասունի բնակիչները սովորում էին զենքի գործածությունը։ Տոն օրերին նրանք միշտ էլ կազմակերպում էին փորձնական խաղեր, որի ժամանակ երիտասարդությունը խմբեր կազմած մահակներով և վահաններով «հարձակվում էին» իրար վրա։ Խաղերի համար պատրաստված այդ վահանները պատած էին հաստ կաշվով և կոչվում էին մարթալ։ Սասունի գյուղերում «քաջության մեջ հետ չէ մնում և սասունցի կինը, որը գիտե ոչ

---

[1] Տես՝ Ա—Դօի նշվ. աշխ. էջ 140։

[2] Տե՛ս Ե. Կարապետյանի նշվ. աշխ., էջ 40։

[3] Հարազատ պատմություն Տարոնոյ, էջ 8—9։

միայն մահակով կռվել, այլև երբեմն նաև հրացան գործածել»[1]։

Սասունի լեռներում շատ կային աղվես և քաղցկ (կզաքիս), վայրի այծեր, արջեր։ Վերջիններս հաճախակի հարձակվում էին գիլգիլի արտերի վրա։ Բնակիչները իրենց հրացաններով պաշտպանում էին անասունների հոտերը գայլերից։

Լեռնափապարներում հարատևող այս հատվածը համարյա թե կտրված էր շուկայից, այստեղ բնակչության կարիքները հոգալու համար ընտանիքներում մշակվում էին ոչխարի բուրդը, այծի մազը, անասունների կաշիները։ Սասունցիների մոտ զարգացած էր ջուլհակությունը։ Բրդից նրանք քնչա են գցում, գործում էին նաև ջվալներ և կարպետներ։ Սասունի գյուղերում օճառը դրսից չէին ստանում, այլ իրենք էին եփում։ Նրանք մրկիթ ծառի պտուղներից ստացված ձեթը օգտագործում էին օճառ ստանալու համար։

Տալվորիկ գյուղը ուներ իր երկաթահանքը, որից պրիմիտիվ միջոցներով երկաթ և պողպատ էին ստանում։ Այդ երկաթից պատրաստում էին գյուղատնտեսական գործիքներ՝ խոփեր, բրիչներ, մանգաղներ, շղթաներ։ Տալվորիկում զարգացած էր նաև դարբնությունը։ Պատրաստում էին դանակներ, հրացաններ, հրացանի մասեր։ Հարդք գյուղում հանքը մշակողներից մեկը Գասպար Խաչոյանն էր։ Երկաթագործությամբ սասունցին զբաղվել է շատ հին ժամանակներից և այն համարել է ազատության, ազատ լինելու, ազատ ապրելու և հարատևելու գրավականներից առաջինը։ Այդ կապակցությամբ «Տալվորիկի կտրիճ» երգի մեջ ասված է.

Ցորենի տեղ կուտեմ կորեկ,
Երկաթ ծեծեմ գիշեր ցորեկ,
Շինեմ փետատ, խոփ, խաչ-երկաթ,
Ծանր է դատումս, բայց եմ ազատ[2]։

Պահպանված և մեզ հասած մի ավանդության համաձայն Սասունում առաջին երկաթ ձուլող վարպետը սկզբից սուր ձուլեց և դրանից հետո միայն՝ խոփ ասելով. «Խոփն առանց սրի և սուրն առանց խոփ արտասուք են»[3]։ Երկաթի մշակության մասին

---

1 Ա. Քալանթարի նշվ. աշխ., էջ 19։

2 Գանձարան Հայկական, Ա գիրք, սկեսուր մատենաշար, թիվ 8, Գահիրի, էջ 15։

3 «Մշակ», 12-ը նոյեմբերի 1896։

ականատեսը գրում է. «Այսպես՝ նախ պատրաստում էին փուռ, ապա երկաթաքարը բերում ու շարում փոի մեջ, մի ամբողջ շաբաթ, գիշեր-ցերեկ անընդհատ փայտ վառում քաբերի վրա, մինչև որ դրանք կհալվեին, ու արծաթափայլ տաք հեղուկը դուրս կը վազեր նախօրոք պատրաստած փոսիկների մեջ։ Սառելուց հետո կոշտ ու կարծր երկաթի ձուլլերը ջորիներով փոխադրում էին գյուղերը...»[1]։

Պահպանվել է տեղեկություն այն մասին, որ մինչև 1912 թ. երկաթահանքը մշակվում էր և այդ ժամանակից էլ դադարեցվեց նրա մշակությունը։ Տալվորիկի երկաթից պատրաստված իրերը տարածված էին շատ վայրերում, նրանից շինած «հրացանը, սուրը, աշտեն ու վահանը կարելի է գտնել Տիգրանակերտի, Մուշի ամեն կողմերում, հայերի, թե քրդերի ձեռքերում»[2]։

Հրացանների համար օգտագործվող կապարը ձեռք էր բերվում հայ առևտրականների միջոցով, իսկ վառոդը՝ Մշո Ցրոնք գյուղից։ Ցրոնքցիները վառոդը պատրաստում էին հետևյալ կերպ. «Ցրոնքի հողը տալիս էր ընտիր վառոդի հումք։ Գիշերները տների հոգե հատակին գոյանում էր աղանման սպիտակ բորբոս։ Կանայք ամեն առավոտ ավելում էին այդ բորբոսը և հոգախառն վիճակում կուտակում մի առանձին տեղ։ Ապա այդ ազբը ջրի հետ խառնում, լցնում էին կաթսաների մեջ և եփում մինչև անհրաժեշտ աստիճանի հասնելը։ Ապա եփած հեղուկը մանր մաղով քամում էին լայնաբերան տաշտերի մեջ և երեսին փռում բարակ ցախերի ճյուղեր։ Մի քանի ժամ անց շուրջը սառչում էր, և վառոդի բյուրեղանման ճերմակ ձողիկները, բոլոր կողմերից կցվում, փաթաթվում էին ցախերին ու ծածկում ջրի երեսը։ Այնուհետև այդ բյուրեղները հավաքում ու երկրորդ անգամ նորից եփում էին և ստանում ավելի թափանցիկ և մաքուր բյուրեղներ։ Սպիտակ այդ բյուրեղների հետ խառնում էին համապատասխանաչափ ծծումբ և ոստեր չունեցող ուռենու չոր փայտից պատրաստված ածուխ։ Այս խառնուրդը մի փոքր թրջելուց հետո լցնում էին սանդի մեջ և քարե սանդաքարի ուժեղ հարվածներով ծեծում։ Երկու տղամարդ տառներկու ժամվա ընթացքում հազիվ կարողանում էին գուրս բերել մեկ սանդ վառոդ (մոտ երեք կիլոգրամ)»[3]։

---

1 Ե. Կարապետյանի նշվ. աշխ., էջ 6։

2 «Արաքս», 1894—95, գիրք Ա, էջ 70։

3 Ե. Կարապետյանի նշվ. աշխ., էջ 42։

Հասարակ էր սասունցու զգեստը, տղամարդիկ իրենց գլխնելին դնում էին քոլոզներ, որի վրա թաշկինակներ էին փաթաթում, կոշիկները պատրաստում էին այծի մազից կամ կաշվից։ Ձմեռը տղամարդու հասակից էլ բարձր հաստություն ունեցող ձյան շերտի վրա քայլում էին դահուկանման փայտերով, որոնց անվանում էին լաքան։ Սակայն շատ բան հագուստների մեջ հարմարեցված էր միշտ կռվի համար պատրաստ սասունցու վիճակին։ Սասունցին կռվող էր և նրա հագուստը այնպես պետք է լիներ, որ պաշտպաներ նրան ոչ միայն անձրևից, ցրտից, այլև հարմար լիներ մարտի համար։ «Տղամարդու հագուստի մասն էր կազմում ասեղնագործ զարդերով բանված աբաքյազիխիկը, որի ծիլ-ծիլ փնջերով հյուսվածքը պահպանել է անձրևից, ցրտից, կարճ թևքերը չէին խանգարում կռվի մեջ։ Սուրը չէր կարող կտրել կտորը»[1]։

Ըստ Ս. Դավթյանի, հայկական ասեղնագործությունը ունի բազմաթիվ ասեղնակարեր, որոնց մի մասը տարածված է եղել բոլոր վայրերը և Սասունի, Մուշի, Մարաշի, Վանի, Այնթափի, Տարոնի կարերը տեղական բնույթ են կրել[2]։

Սակայն «Վան-Վասպուրականի և նրա մոտ գտնվող Սասունի, Մուշի, Տարոնի, մասամբ Ալաշկերտի, Հին Բայազետի հայկական տարազները մեզ հարուստ նյութ են տրամադրում», այնուհետև հետազոտողը գտնում է, որ «Մշո Առաքելոց վանքի փայտյա դռան զարդաքանդակները ներկայացնում են տվյալ վայրերի հայկական տարազի շուրջ հազարամյա կյանքը»[3]։ Իր երկար տարիների պրպտումներից և ուսումնասիրություններից հեղինակը մասնագիտական տեսակետից եկել է այն եզրակացության, որ հայկական տարազի մեջ Վասպուրականի և Սասունի տղամարդկանց ասեղնագործ հագուստը ամենահինն է, և «նմանություններ ենք գտնում Աղթամարի տաճարի Գագիկ Արծրունու բարձրաքանդակի և մինչև XX դարը պահպանված Վասպուրականի, Սասունի և Տարոնի տղամարդկանց հագուստների միջև»[4]։

Սասունի բնակիչները, ինչպես ասվեց, ազատ էին թուրք իշխանավորների կատարած բռնություններից, նրանք մի քուրդ

---

1 Դավթյան, *Հայկական ասեղնագործություն*, Ե., 1972 էջ 16։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 11։

3 Նույն տեղը, էջ 13։

4 Նույն տեղը։

մյուգիր ունեին, որը ապրում էր ու նստում քրդաբնակ Քոփ գյուղում։ Սասունցիների արտերի միայն տասը տոկոսն էր գրանցված կառավարական մատյաններում և որի համար էլ հարկ էին վճարում, մնացած հողերը համարվում էին արոտավայրեր, որոնց մեծ մասը նրանք մշակում էին՝ հարկ չտալով կառավարությանը։ Լեռնականների երիտասարդության մեծ մասը հաշվառումից դուրս էր և այդ պատճառով էլ նրանք ավելի քիչ բեդել (զինվորագրության փոխարեն) հարկ էին վճարում, «սասունցիները, հինեն ի վեր՝ կիսանկախ ցեղապետական (աշիրեթական) դրությամբ կը կառավարվեին. բնավ թույլ չէին տար, որ կառավարական որևէ պաշտոնյա մոտենար իրենց հոտերուն և անոնց համրանքն ստուգեր և ըստ այնմ ալ՝ տուրքեր գանձեր, ինչպես կըլլար Դաշտի գյուղերուն մեջ»[1]։

Կառավարական պաշտոնյաները փաստորեն հիմք էին ընդունում անասունների մասին սասունցիների գյուղերի գեկավարների տված թվերը և դրա հիման վրա էլ նրանց հարկադրում էին։ Լեռնագավառի գյուղերի ոչխարների գոմերը գտնվում էին բնակավայրերից շատ հեռու, լեռնալանջերին և կառավարական պաշտոնյաները մուտք չէին գործում այնտեղ։ Ելնելով վերը ստեղծված դրությունից, Սասունի բնակիչները հնարավորություն ունեին պահել մեծ քանակությամբ ոչխարներ ու այծեր և ավելի քիչ հարկեր վճարել։

Սասունի լեռնային օդի, անարատ բուսականության, կենարար ջրի առկայությունը և նահապետական կյանքը ստեղծել էին այնպիսի իրավիճակ, որ նրա բնակիչները շատ առույգ ու առողջ էին, ֆիզիկապես ուժեղ և երկարակյաց։ Սասունցու համար մի մեծ պարկ հացահատիկ շալակելը և գյուղից կիլոմետրեր հեռավորության վրա գտնվող ջրաղացը տանելը հասարակ բան էր։ Սասունում բժիշկներ չկային։ Այնտեղ զարգացած էր հին դարերից եկած ժողովրդական բժշկությունը։ Լեռնագագաթների վրա աճող բազմաթիվ ծաղիկներից և խոտաբույսերից նրանք դեղեր էին պատրաստում և բուժում բնակիչների մոտ եղած հիվանդությունները։ Սասունցիները կռիվների ժամանակ վիրավորվածներին նույնպես բուժում էին ծաղիկներից պատրաստված դեղերով։ Լեռնականներից շատերն իրենց մարմնի վրա ունեին շատ սպիներ, որովհետև հաճախ էր հարկ լինում պահ-

---

1 Հարազատ պատմություն Ծարոնի, էջ 245։

պանել իրենց ժողովրդին քրդական ցեղերի հարձակումներից։ Սասունում ապրող բնակիչները շատ փորձված էին մարմնի մասերի կոտրվածքները բուժելու մեջ. «Պառավները, որ մեկ-մեկ Հիպոկրատես են նախնական բժշկականությամբ, կրակով խարածին, գնդակով զարնվածին, սրով վիրավորվածին, քարով ջախջախածին, զանազան խոտեր և արմատներ, յուրաքանչյուր ցավին ու վերքին զատ-զատ ի գործ կ'ածեն և զանազան չոր ծաղիկներե, տերևներե և արմատներե փոշիներ ունին թե վերքի և թե ցավի, պես-պես մանիլամներ կը շինեն թարախ ու արյուն մաքրելու, ցամաքեցնելու, խոցերը բուժելու»[1]։

Սասունցիների ընտանիքները բազմանդամ էին։ Ըստ Երեմիա Տեկանցի Վասպուրականում և Տարոնում, Սոփքում դեռ իր ժամանակներում, կային «քանի մի հազվագիտ նահապետական գերդաստանք, որոնց մեջ քառասուն վաթսուն և մինչև եօթանասուն հոգիք ի միում տան բնակին խաղաղութեամբ և սիրով»[2]։

XIX դարի 80-ական թվականներին Տարոնի հայությունն ապրում էր դժվար վիճակում։ Քրդական բեկերը և թուրք փաշաները անխնա կեղեքում էին ժողովրդին։ Դաժան էր վարվում Մուշի ժողովրդի հետ հատկապես Ջիլախ շեյխը։ Այս բռնակալը նստած էր Ջրից Ջաուրմա կոչված վայրում և անմարդկային վարմունք ուներ շրջակա գյուղացիների և հատկապես հայերի նկատմամբ։ Սակայն, ինչպես ասում է ժողովուրդը, ամեն ինչ վերջ ունի։ Տարոնի ժողովուրդը զայրացած էր այդ անիրավ ոճրագործի վայրագություններից, որոշում է ինչ գնով էլ լինի վերացնել նրան ասպարեզից։ Ջաուրմայում ապրող երկու հայեր, որոնք նվադում էին շեյխի համար, նպատակադրվում են վերջ տալ նրա կյանքին։ Նրանք գաղտնի անցք են բաց անում շեյխի քյոշկի պատին և վառոդով լի դհոլը դնում պատի մեջ բացված այդ խոռոչում։ Երբ շեյխը զվարճանալուց հետո գիշերը նրանց արձակում է, նրանք կրակը միացնում են պատրույգին և հեռանում։ Որոշ ժամանակ անց հոդս է ցնդում շեյխի ապարանքը ընտանիքի հետ միասին և Տարոնի ժողովուրդը ազատվում է այդ ճիվաղից։ Այդ կապակցությամբ պահպանված արխիվային մի վավերագրի մեջ կարդում ենք. «Մուշ քաղաքից գեպի

---

1 Գ. Սրվանձտյանի նշվ. աշխ. էջ 42։

2 Հայրենասիրություն հայոց, Կ. Պոլիս, 1872, էջ 56։

հյուսիս մեկ ժամ հեռավորության վրա գանվող Ջավուրմա գյուղի փլատակների բեկորները, որ ամբողջ պալատական տունը՝ փաշան յուր գերդաստանով և վարչական ամբողջ կազմով վառոդի դարանված հորերով հօդս ցնդեցին...»[1]։

Ասվեց արդեն, որ ուսումնասիրություններից երևում է, որ լեռնականները վճարել են ամեն տարի 18 հազար ղուրուշ հարկ, սակայն նրանք երբեմն ստիպված էին լինում առանձին քուրդ ազդեցիկ ցեղապետների նաև նվերներ տալ։ Ուսումնասիրություններից երևում է, որ Սասունի լեռնականները ամբողջ XIX դարում ապրել են կիսանկախ վիճակում, հաղթակորով այդ լեռնական հատվածի վերը նշված վիճակի մասին Ղ. Ինճիճյանը դեռևս դարասկզբին գրում էր, որ նրանք են «արք յաղթանդամք եւ քաջասիրտք մարմնեղ և ահեղք ի պատերազմի մեջ», նրանց մազերի առատությունը բավական էր որպեսզի տեսնողները լցվեին վախով։ Նրանք սկզբից ի վեր ինքնադլուխ են եղել և չեն ծառայել ոչ ոքի և ոչ մի փաշա կամ բեյ չի կարողացել նրանց նվաճել։ Ապավինելով իրենց ամուր տեղերին և բազկի ուժին, նրանք ոչ ոքի թույլ չեն տվել մտնելու իրենց երկիրը։ Այդ երկրի բնակիչները, ըստ Ղ. Ինճիճյանի, քրդեր ու հայեր էին, որոնք միասին վայելում էին իրենց ազատությունը։ «Մերքն խօսին անդեն՝ ի լեզու. ինչ որ մերձաւորուի յոյժ ունի ընդ գրաբարին», «Մշեցիք զտաճիկ քուրդս Սասնոյ կոչեն սասնցիք. իսկ զհայս սասնոյ կոչեն գաւուցիք»[2]։

Բերված քաղվածքից երևում է, որ սասունցիները հաղթանդամ էին, քաջասիրտ և տեսնողը լցվում էր ահով, նրանց երկրի մի մասը ենթակա չէր ոչ մեկի, ոչ ոք չէր կարողացել նրանց նվաճել և ապաստանելով երկրի անառիկ վայրերում թույլ չէին տալիս ոչ ոքի մտնել իրենց երկիրը։ Տողերից երևում է նրանց կիսանկախ լինելու հանգամանքը։ Նրանց երկիրը տերիտորիալ տեսակետից գտնվում էր Օսմանյան կայսրության կազմում, ինչպես Կիլիկիայում Զեյթունը, սակայն նրանք ապրում էին կիսանկախ կյանքով։ Այդ ժամանակ այդ կարգի իշխանություններ կային նաև Ճապաղջուրում, Մոսկում, Շատախում և այլ վայրերում։

Իր «Կայծեր» վեպում Ռաֆֆին Սասունի լեռնականների

---

1 ՎՍՍՀ ՊԿԱ, ֆ. 480, ց. 1, գ. 1188, թ. 78։

2 Ղ. Ինճիճյանի աշխ. չորից մասանց աշխարհի, հ. Ա, էջ 200—201։

հպարտ և քաջարի բնավորությունը դրվատելով, գրում է. «Սասնո հայը երբեք իր պատյանը չէ դնում մերկացրած խենջարը առանց նրան թաթախելու հակառակորդի արյան մեջ։ Նա շատ դժվարությամբ է դուրս քաշում իր սուրը, իսկ երբ սուրը մերկացավ պատյանից, գործը վճռված է. նա պետք է կոտորեա»[1]։

XIX դարի երկրորդ կեսից սկսած թուրքական և քրդական վիրնախավը տարբեր ճանապարհներով սկսեց ձեռք բերել հայկական գյուղերին և վանքերին ու եկեղեցիներին պատկանող հողերը։ Արխիվում պահպանված են մի շարք կալվածագրեր, որոնք վերաբերում են հողային հարցերին, որոնք տրված են սուլթան Աբդուլ Ազիզի կողմից և իր ժամանակին թարգմանված են թուրքերենից պահպանելով բնագիրը։ Աշխատությունը չծանրաբեռնելու համար բերենք նրանցից միայն մեկը. տրված է Հիջրիի 1289 թ. սեպտեմբերի (մեր թվարկության 1872—73 թթ.), ահա այն.

«N 145 Սուլթան Ապտիլ Ազիզի
Թուղրան

Կալվածագիր պետական հող

Կալվածական վարչություն եկած և ներքևը համարը և ամիսը նշանակված մատյանեն ինչպես կը հասկացվի. Մուշ գավառի, Մուշ գավառակի Այնիեան գյուղի Պաքի Սեվանտայի շրջակայքը, ճանապարհ, Վատկո Ցախբ և Զեքիի սահմաններովը փակված մոտավորապես վեց արտավար և երեք հարյուր դահեկան արժեքով արտը, Պաղտիի տղան Սեխոն տասը տարիե ի վեր մուրհակ չունենալով, առանց վեճի տիրապետած լինելը ստուգված և օրինական ձևով տիրապետելու իրավունքը հաստատված ըլլալով, ամեն տարի ըստ շերիի տասանորդը վճարելու համար, սեփականության իրաւունք տրուած լինելը հաստատող այս մուրհակը տրուեցաւ 15 զիլղատե 1291
կարդահամարը 1029 ամս մատեան, սեպտ. 1289-ին»[2]։

Բնակիչները, զրկվելով իրենց պապենական հողերից, ստիպված իրենց գոյությունը պահպանելու համար սկսեցին քուրդ կալվածատերերի մոտ աշխատել որպես մարաբաներ։ Քրդական հարստահարությունները չտանող ժողովրդի մի մասը թողնում էր

1 Ռաֆֆի, Երկերի ժողովածու, չորրորդ հատոր, Երևան, 1956, էջ 402։
2 ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմության արխիվ (այսուհետև ՀՍՍՀ ՊԿՊ), ֆ. 57. ց. 3, գ. 2332, թ. 21։

Գայրենի գյուղերը։ Այսպիսի վիճակ ապրեցին Խութի բնակիչները, որոնց մի մասը, չանենելով քրդական վերնախավի արարքները, 1880-ական թվականներից սկսած թողնում էր իրենց պապենական տունն ու տեղը և ցրվում Ալաշկերտի, Մշո դաշտի, Բուլանըխի գյուղերը։ Նրանց մի մասը, անցնելով ռուսական սահմանը, բնակություն հաստատեցին Արևելյան Հայաստանում։ Եվ այսպես, պատմական Խութը կամաց-կամաց զրկվում էր իր գարավոր հայ բնակիչներից և այնտեղ բնակություն էին հաստատում քրդական ցեղերը։

Սակայն, ցանկանում ենք մի քիչ ավելի հանգամանորեն կանգ առնել մարաբայության հարցի վրա։ Մարաբայության էությունն այն էր, որ հողատերերը կամ փողատերերը տալիս էին իրենց տարածությունները հողազուրկ գյուղացիներին և երկրի տարբեր շրջաններում ստանում էին բերքի տարբեր մասը։ Մարաբաների ծանր վիճակը հայտնի էր բոլորին, այսպես, նույնիսկ սկսվեց գրքերի հրատարակություն «Մարաբների ազատության գործի օգտին», որոնցից մեկի մեջ գրված էր. «Մարաբա՝ նշանակում է ճորտ, ստրուկ, «եսիր»»[2]։ Սասունի հայերի մի մասը ջարդերից ազատվելու նպատակով իրենց անձերը փրկելու համար ստիպված ապավինեցին թուրք և քուրդ աղաներին և բեկերին ու դարձան նրանց ճորտերը կամ մարաբաները։ Գրքի հեղինակը գտնում էր, որ պետք է օգնել հայ մարաբաներին, որոնք «զուրկ են մարդկության բոլոր իրավունքներից, որ մեզ պես հայեր լինելով՝ գրաստ են դարձած. ծառայեցեք մարաբայության վերացման վսեմ գործին... մի մոռանաք, որ մարաբայությունը մեր բոլոր հայերիս համար, ուրեմն և ձեր համար սոսկալի ամոթ է, մի ծանր հանցանք, մի մեծ անքավելի մեղք...»[2]

Բանահավաք Ս. Հայկունին նույնպես իր աշխատություններում տալիս է տեղեկություններ մարաբաների մասին։ Լինելով Արևմտյան Հայաստանում, նա ուսումնասիրել է այդ հարցը և մարաբայության առաջացման հիմքը համարում է երկրում ստեղծված ծանր ու անելանելի վիճակը։ «Երկրի մեջ,— գրում է նա,— գործարան, գործ չկա, հարստահարության երեսեն երկրագործն օրավուր կզրկվի յուր անասուններեն ու վար ու ցանքեն, մշակության համար ոչ գործ կա, ոչ դրամ։ Նրա ցորյանը

---

1 Գր. Զալիուշյան, Մոքեր, գեմքեր, Թիֆլիս, 1914, էջ 9։

2 Նույն տեղը։

չվաճառվիր... Հանկարծ տեսար մի զրպարտության ենթարկվեցավ, պիտի հատուցանե 100, 500 կամ 1000 ղ. որ աղատվի և կամ քուրդ բեկի մոտ մրիբա դարձավ և պարտքի տակ ընկավ։ Բեկը նորա որդիքն իրեն կծառայեցնե»[1]։

Շատ հաճախ էր պատահում, որ հողագործը փողի կարիք ուներ և ստիպված դիմում էր կալվածատիրոջը կամ վաշխառուին, որոնք շատ սիրով նրան դրամ էին տալիս, շատ տեղերում հասցնելով երեսունից մինչև հարյուր տոկոսի վճարման։ Եթե հաջորդ տարին բերքառատ չէր և հողագործը չէր կարողանում վճարել պարտքը, իր տոկոսով հանդերձ, ապա փողատերը տոկոսից օգտվում էր և գրավ էր դնում նրա հողը, անասունները, երբեմն տունը, տեղը և գյուղացին չկարողանալով վճարել պարտքը, կամա թե ակամա խտացնում էր մարաբաների շարքերը։ Գործը այնտեղ էր հասել, որ թուրք և քուրդ վերնախավի ներկայացուցիչները հայ գյուղացիների մոտ հյուրասիրվելուց առաջ պահանջում էին կամ դրամ, կամ նվեր, որը կոչվում էր «դիշ քիրասի» (ատամի վարձ)[2]։

Դերջանում, Զարսանջակում, Քզիի շրջանում կային գյուղեր, որոնց «բնակչությունը հողագուրկ էր, ոչ արտ ուներ, ոչ էլ լրծկան, այդ բոլորը պատկանում էին աղային, բեկին, նույնիսկ տների սեփականության իրավունքը պատկանում էր կալվածատիրոջը, իսկ հողը մշակող, բերքը արտադրող գյուղացին պարզապես իրավազրկված մարապա էր, որը համազոր էր գերուն»։

Մարաբաները բաժանվում էին երկու մասի։ Առաջինը այն գյուղացիներն էին, որոնք ոչինչ չունեին, իրենց ընտանիքով ապրում էին աղայի տված բնակարանում, ընտանյոք աշխատում էին աղայի համար, սակայն ոչինչ չէին ստանում, նրանց ընտանիքի անդամները ուտում, հագնում էին աղայի հաշվին, «կինը կթվորուհի էր, երեխան՝ գառնարած, մեկը՝ հովիվ, մյուսը հողագործ, վերջապես աղայի սեփականությունը, ենթակա վաճառքի...»[3]։

Մարաբայության մյուս ձևի ժամանակ գյուղացին ապրում էր իր տանը, ստանում էր աղայից ամեն ինչ, վարում էր, ցանում,

---

1 Հայ ազգագրություն և բանահյուսություն, գիրք 4, Ե., 1973 էջ 45։

2 ՀՍՍՀ ԳԱ հնէաբանության և ազգագրության ինստիտուտ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, գիրք 5, Երևան, 1975, էջ 162։

3 Նույն տեղը։

հնձում էր, կալսում և վերջում աղան ստանում էր բերքի կեսը, կամ ավելին։

Մանր վիճակում էին նաև այն գյուղացիները, որոնք վճարում էին աղային մի տուրք, որ կոչվում էր խաֆիրային։ Խաֆիրության մասին շատ տեղեկություններ են պահպանվել Մուշի հոգևոր առաջնորդ Գ. Աղվանյանի նամակների ժողովածուում, որը գտնվում է Երևանի մատենադարանում։ 1870 թ. նոյեմբերի 10-ին Կոստանդնուպոլսի պատրիարք Մ. Խրիմյանին Գ. Աղվանյանը գրում է, որ ինչ-որ առիթով, երբ եղել է Բռնաշեն և նուիր գավառակները, տեսել է, որ այնտեղ Սասունի բնակիչները ապրում էին շատ ցավալի վիճակում. այդ կապակցությամբ նա հայտնում է. «Տիարք իմ խիստ ցավալի է ատոնց վիճակը, և անտանելի ատոնց կրած վիշտ և տառապանք, մանավանդ իրենց խաֆիր աղաներու հարստահարություն ու զրկանք...»[1]։

Խաֆիրները, ըստ նամակի, բաժանվում էին երեք մասի. «Առանց արցունքի կարդալ անհնար է կարծեմ հայ մը՝ երբ իր ազգ այսպիսի գերության մեջ տեսնե։

ա. Կարգի տուներու (համբայներ, որ մեկ լուծք ունին) տարեկան վճարած խաֆիր աղաներուն 7 բեռ արմտիք, 1 պաճարեղեն, 5 ոչխար, 2 լիտր յուղ, 1 շալվար, 1 զույգ սախ (զանգապան), 1 լիտր չորթան, 1 զույգ գուլպա, 12 ու կես ստակ, 2 լիտր թութուն, զոր Մուշեն պիտի գնեն՝ և բերեն տան, 42 լիտր աղ, 1 հոխա կապար գնդակի համար, 1 կիլո վառոտ, չպուխի գլուխ որչափ պետք ըլլա... 30 տքալ, 3 շերեփ, բոլոր ոչխար գարնան երկու օր իրենց կկթեն պանիր շինելու աշնանն ալ մածուն, 2 խանճան, 2 հատ կնկա գնդառձի թել, 10 երցատ, 6 լուցք հերկելու և տափելու... երկու կողով, 6 ցախավել, 2 շինված գահնակ, 21 հավ, 2 աքլոր, 2 և կես կիլո ձեթ, ոչխարի լաթան»[2]։

Այդ թվերը և փաստերը վերաբերում են առաջին կարգի ընտանիքներին, որոնք ավելի շատ հնարավորություններ ունեին, քան երկրորդ և երրորդ կարգի ընտանիքները։ Այսպես, երկրորդ կարգի ընտանիքներից վերցվում էր 3 բեռ արմտիք, 3 ոչխար, 2 և կես լիտր յուղ, մեկ շալվար, 1 լիտր չորթան, 1 զույգ գուլպա, մեկ լիտր թութուն, նորից 1 հոխա կապար և մեկ հոխա վառոդ, 10 գդալ, 2 հավ, 1 աքլոր, 1 կիլո ձեթ և այլն[3]։

---

1 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 219, վավ. 130։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը։

Երրորդ կարգի ընտանիքներից վերցնում էր 2 բեռ արմտիք, մեկ լիտր յուղ, 7 և կես ստակ, 3 հոխա թութուն, կես հոխա կապար, կես հոխա վառոդ, 2 լիտր աղ, 3 պուտուկ, 6 գդալ, 1 շերեփ, մեկ քասա, երկու հավ, մեկ աքլոր, 2 հատ խոնճան, մեկ կողով և 3 ցախավել, մեկ կիլո ձեթ, մեկ զույգ չարուխ, մեկ թակ, 15 զույգ չարխի թել և այլն և այլն[1]։

Ինչպես տեսնում ենք, խեղճ գյուղացին պետք է աղային վճարեր ոչ միայն դրամով աղայի կողմից նախատեսված դրամական հարկը, այլև պարտավոր էր նրա ընտանիքի համարյա բոլոր կարիքները հոգալ։ Այստեղ կային նաև այլ պարտավորություններ, որ պետք է կատարեր խաֆիրության ոլորտի մեջ եղած գյուղացին։ Այսպես, եթե աղան տղա էր ունենում, նրան պետք է շոր տաներին և դրա՝ հետ կամ ոչխար, կամ գառ, կամ էլ ուլ։ Եվ այդ տղան հասնում էր պատանեկական հասակին, նրա համար պետք է զենք գնեն և «ամուսնանալուն խալան ըսված տուրքը պիտի տան մեկ լավ ոչխար, յուղ, գաթա ամենայն ըստ աստիճանի հարստության պիտո է տանին հարսանեաց պարտականութիւնեն գալու, նմանապես մեռնելու ատեն օր մը սարխոշի (գլուխոցի) պիտի երթան ազգականաց, ոչխարով, յուղով, գաթայով ամենայն ի միխիթարություն»[2]։

Գ. Աղվանյանն այնուհետև բերում է ավելի մանրամասն տվյալներ այդ շրջանում ապրող հայ գյուղացիների անագորույն վիճակի մասին։ Նա նշում է, որ աղաները բաժին էին վերցնում նաև այն քահանաներից, որոնք մեկնել էին գյուղ, եկեղեցական ս[illegible], ծես կատարելու։ Հարկի տակ էին դրել նաև Սասունի ս. Աղբերիկ վանքը։ Սասունի այդ շրջանի հայերի ողբերգական վիճակի մասին առավել լրիվ պատկերացում կազմելու համար ցանկանում ենք մի կտոր ևս բերել վերոհիշյալ նամակից.

«1. Քուրդ աղաներ հայերը իբրև սեփական ստացված կամ գերի (ժամանակի արևմտահայ գրականության մեջ ընդունված է ճորտին անվանել գերի,— Հ. Պ.) կծախեն իրարու։

2. Հայ աղջիկները թե որ կարգվելու ըլլան, խալանը աղաներ կառնին։

3. Հայոց հարսներ և աղջիկներ աղաներու կըլկըլի արտերը ձեռքով օրերով կաշխատին քախնելու, շաբաթներով տուները կը

---

1 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 219, վավ. 130։

2 Նույն տեղը։

տանին իրենց ձավար և կորկոտ շինելու, նույնպես շարունակ անոնց լաթեր՝ սախեր և գուլպաներ կարեն և գործեն, թեպետ բարոյականի մասին քիչմը պինդին։

4. Քահանա չգտնված գյուղը մը եթե քահանա երթա պատարագ մատուցանե և վերադառնա այն եկամուտեն աղաներուն բաժին պիտի հանե։

Ահավասիկ սուրբ Աղբերիկ վանից վիճակը և աղաներուն տարեկան տուրքը, ա. 400 ղուրուշ մաքուր ստակ, 4 յուղ՝ բրինձ ընտրանոք, ղի եթե լավ չըլլան 6 կամ 8 կտանին, 20 ոչխար, 7 բեռ ցորեն, 4 լիտր յուղ, 4 լիտր թութուն, 4 լիտր ձեթ, 12 լիտր աղ, թակ, կողով, կուժ, պուտուկ, քասա, ցախավելլ, տքալ, չարուխ...

բ. Ժամանակաւ Բռնաշենու նահանգին վրայ վերկիք տուրք ձգած են, հասարակութիւն չկրնալով տալ 450 ղուրուշ ալ վանքի վրա ձգեր են և հայնմետե շարունակ 450-ական ղր. կառնին վերկի»[1]։

Հարց է առաջ գալիս, ու՞մ էր պատկանում հողը Սասունում։ Մեր ուսումնասիրությունից երևում է, որ գյուղացիներն ունեին իրենց ցանքի ու խոտհնձի համար հողակտորներ։ Մնացած ողջ հողը պատկանում էր գյուղական համայնքին, որին էլ պատկանում էր նաև արոտավայրերը, յայլաները, ուր ամռանը սարվորները արածեցնում էին անասունների հոտերը։ Աշնան հետ միասին սարվորները վերադառնում էին գյուղերը, բերելով իրենց հետ ձմեռվա յուղն ու պանիրը, բուրդն ու շորը, ինչպես նաև բանջարի չորացրած պաշարներ։ Գյուղում մնացածները հավաքում էին գիլգիլը, կորեկն՝ ու գարին։

Սասունցիների հետ լավ հարաբերությունների մեջ էին բալաքցի քուրդերը, որոնք մոտիկ էին գտնվում Խութի և Շատախի շրջաններին, այդ կապակցությամբ Ա. Քալանթարը՝ գրում է. «Մահմեդական քուրդերի հետ ևս սասունցիների հարաբերությունները առաջվա ժամանակները լավ էին, բարեկամական, մոերմական։ Միայն այս վերջին տասը տասներկու տարվա ընթացքում քուրդերի մեջ սկսեցին երևալ քարոզիչներ, որոնք վառում էին նրանց մեջ կրոնամոլությունը, ֆանատիկոսությունը, և սերմանում էին ատելություն դևպի այլակրոնները»[2]։ Այդ հատկապես ուժեղացավ «զուլումի» տարիներին, երբ սուլթանական

---

1 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 219, վավ. 130։

2 Ա. Քալանթարի նշվ. աշխ., էջ 25—26։

կառավարությունը սկսեց ավելի ուժեղանել երկու ժողովուրդներին թշնամացնելու իր քաղաքականությունը։

Հարկերի չափերը տարբեր էին լինում։ Հաճախ դրանք կախված էին կալվածատեր աղայի-բեկի «խղճից»։ Չենք կարող չնշել նաև, որ այս վավերագրերի մեջ նշված փաստերն ու իրավիճակը երբեք չի կարելի ընդունել ողջ Սասունի նկատմամբ, որի լեռնականները Գելիեգուզան, Տալվորիկ, Շենիկ, Սեմալ և բազմաթիվ այլ գյուղերում ոչ աղայից էին կախման մեջ և ոչ էլ թուրքական որևէ պաշտոնյայից։ Այստեղ խոսքը կարող է վերաբերվել միայն Խութի, Բռնաշենի և մի շարք այլ վայրերի ցածրադիր գյուղերում ապրող սասունցիներին և Մշո դաշտի բնակիչներին։ Իր «Մի երես մեր նորագույն պատմությունից» հոդվածում Ղ. Աղայանը սղագրել է իր զրույցներից մեկը մի մշեցու հետ։ «Մեկ անգամ,— գրում է նա,— մի մշեցի ինձ մի այսպիսի բան ասաց, որ ես կյանքումս առաջին անգամ լսեցի և որից շատ բան սովորեցի։ Ասացի. քրդերը ձեզ շա՞տ են նեղացնում։ Նա պատասխանեց, թե՝ քրդերը մեզ վրա այնպես են նայում, ինչպես իրենց ոչխարների վրա. մեզ կթում են, խուզում են և այս պատճառով էլ մեզ համարում են իրենց համար օգտակար կենդանի և այս պատճառով էլ նրանք շատ անգամ մեզ պահպանում են, օգնում են։ Շատ անգամ է պատահել, որ մեր առիթով քրդերի երկու ցեղեր իրար դեմ են դուրս եկել, կռվել և ջարդել իրար։ Մի ցեղ ուզեցել է մեզ վրա հարձակում գործել և կողոպտել, մյուսը կտրել է նրա առաջը և պաշտպանել, ասելով, մեզ պահողը հայերն են, մեր հացը նրանք են տալիս, եթե նրանք չլինեն, մենք կարող ենք սովամահ լինել։ Եթե հայերի արտերը, ոտնատակ տանք, խուրձերն այրենք, հետո մենք ինչ կուտենք այնուհետև»[1]։

Այսպիսով, ուսումնասիրությունից երևում է, որ Սասունի լեռնականների ճնշող մեծամասնությունը ամբողջ XIX դարում, չնայած գտնվել են թուրքական պետության սահմաններում, սակայն ապրել են կիսանկախ վիճակում։

---

1 Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հատոր չորրորդ, Ե., 1963, էջ 287

Գլուխ չորրորդ

ՍԱՍՈՒՆԻ ԼԵՌՆԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲՌՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԴԵՄ 1878—1894 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Արևելյան պատերազմից հետո ցարական Ռուսաստանը առիթներ էր որոնում Փարիզի պայմանագիրը չեղյալ հայտարարելու համար։ Բալկաններում իր հիմքերը ամրապնդելու նպատակով Ռուսաստանը շարունակում էր հովանավորել սլավոն ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները։ XIX դարի վերջին քառորդը ամենից առաջ նշանավորվեց նրանով, որ մեկը մյուսին հաջորդեցին Եվրոպայի մայր ցամաքում ապրող սլավոն ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, որոնք ուղղված էին թուրքական դաժան ռեժիմի դեմ։ 1875 թ. Բոսնիայում և Հերցոգովինայում սկսվեց հուժկու ժողովրդական ապստամբություն, իսկ 1876 թ. իր ազատագրության համար ոտքի կանգնեց բուլղար ժողովուրդը։ 1876 թ. Սերբիան և Չեռնոգորիան դաշնակցելով իրար հետ, պայքարի ելան թուրքական բռնակալության դեմ։

XIX դարի վերջին քառորդին Թուրքիայի տնտեսությունը և ֆինանսները կախված էին եվրոպական կապիտալից։ Լինելով հիմնականում գյուղատնտեսական երկիր, նրա բնակչության ճնշող մեծամասնությունը զբաղված էր գյուղատնտեսությամբ։ Թուրքական գյուղում հարկերն այնքան շատ էին, որ գյուղացին այն վճարելուց հետո, նրան շատ քիչ բան էր մնում իր վաստակից։ Հողագործը որքան շատ արտադրեր, այնքան շատ հարկ պետք է տար, ուստի նա բոլորովին էլ շահագրգռված չէր գյուղատնտեսության արտադրանքը ավելացնելու խնդրով։ Ավելի վատթար էր այն գյուղերի վիճակը, որտեղ ապրում էին այլազգիները, որոնք ծանր հարկեր վճարելու հետ միասին, տանում էին խոշտանգումներ և ազգային վիրավորանքներ։

Թուրքիայի արտաքին առևտուրը գտնվում էր Գերմանիայի,

Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի կապիտալիստների ձեռքին, որոնք այնտեղ կառուցել և կառուցում էին թեթև արդյունաբերական ձեռնարկություններ, օգտագործելով տեղական էժան հումքը և աշխատուժը։

Հսկայական ծախսեր էին կատարվում սուլթանական արքունիքում։ Աբդուլ Ազիզի ժամանակ (1861—1876) պալատի տարեկան ծախսերը կազմում էին 30 միլիոն ֆրանկ, այդ այն դեպքում, երբ անգլիական պալատի ծախսերը կազմում էին 12 միլիոն, ռուսական և ֆրանսիական արքունիքներինը՝ 26,5 միլիոն ֆրանկ, իսկ ամերիկյան պրեզիդենտինը՝ 124 հազար ֆրանկ[1]։ Ավելին, Աբդուլ Ազիզի ժամանակ թուրքական պետության եկամուտները կազմում էին 167 միլիոն 860 հազար, իսկ ծախսերը՝ 170 միլիոն 462 հազար ֆրանկ։ Այս գումարից սուլթանի տրամադրության տակ մնում էր 50 միլիոն ֆրանկ, նրա ձիանոցի վրա ծախսվում էր 20 միլիոն, սուլթանի եղբորը տրվում էր 8 միլիոն 700 հազար, սուլթանի հինգ ամուսնացած քույրերին՝ 13 միլիոն 500 հազար, նրանց ամուսիններին՝ 2 միլիոն 840 հազար, սուլթանի ավագ որդուն՝ 5 միլիոն, մնացած ութ տղաներին՝ 2 միլիոն 400 հազար, սուլթանի երկու աղջիկներին և ազգականուհուն՝ 2 միլիոն 800 հազար, սուլթանի 36 կանանց (որոնցից վեցը օրինական) և 30-ը մորգանատիկ (թագավորական տան անձերի ամուսնությունը ազնվականական ծագում չունեցող կնոջ հետ) և 18 հարճերին՝ 4 միլիոն 612 հազար 750 ֆրանկ։ Հարեմի 1780 հարճերին՝ 4 միլիոն 898 հազար, գանձապահին և քսան օգնականներին՝ 1 միլիոն 583 հազար ֆրանկ։ Ներքինիների պետին, աշխատավարձ և շրջագայության համար՝ 2 միլիոն 210 հազար, իսկ պալատական աստիճանավորներին՝ 3 միլիոն 900 հազար ֆրանկ։ Սուլթանական թիանաՀերի թիավարողներին՝ 1 միլիոն 800 հազար ֆրանկ։ Քսան թատերախմբերին և նրանց ղեկավարող փաշային՝ 4 միլիոն, երկու հազար դռնապաններին, սպասավորներին, պահակներին և դահիճներին՝ 3 միլիոն 900 հազար ֆրակ։ Պալատի թոշակի գնացած ծառայողներին՝ 2 միլիոն 880 հազար և վերջապես հարեմից թոշակի գնացած կանանց՝ 28 միլիոն ֆրանկ[2]։

---

[1] Տե՛ս Г. З. Алиев, Турция в период правления младотурок (1908—1918 гг.), М., 1972, էջ 18

[2] Տե՛ս «Кавказ», Особое прибавление (18/30), сентября, 1866, № 73

1860—70-ական թվականներին Թուրքիայում սկսվեց լիբերալ-բուրժուական շարժումը, որը նպատակ էր դրել ամենից առաջ պահպանել երկրի ամբողջականությունը, որը անկասկած, ինչ-որ չափով ուղղված էր իմպերիալիստական պետությունների քաղաքականության դեմ, որոնք պահպանում էին ստատուս քվոն, չնայած նրանցից յուրաքանչյուրը Թուրքիան բաժանելու հարցում ուներ իր նկրտումները։ 1865 թ. Կոստանդնուպոլսի Ենիքյոյ արվարձանում ստեղծվեց մի կազմակերպություն, որն իրեն անվանում էր «Նոր օսմանների ընկերություն»։ Այդ ընկերության անդամների մի մասը շատ հույսեր էր կապում սահմանադրական կարգի հետ և դնում էր Թուրքիայում սահմանադրական ռեժիմ հաստատելու հարցը։ Նրանցից Խալիլ Շերիֆը գրում էր. «Սահմանադրություն, այն մի օրվա ընթացքում, մի ժամում Թուրքիայի համար կանի այն, ինչ քառասուն տարիների ընթացքում չկարողացան անել ռեֆորմները»[1]։

1867 թ. թուրքական կառավարությունը փակեց «Նոր օսմանների» և նրանց կողմնակիցների կողմից հրատարակվող թերթերը և սկսեց նրանց ներկայացուցիչներին երկրի հեռու գավառներում պաշտոններ տալով հեռացել Կոստանդնուպոլսից։ Սրանց մի մասը, խուսափելով գավառներ մեկնելուց, անցավ Փարիզ, բայց քանի որ շուտով այնտեղ պետք է ժամաներ սուլթան Աբդուլ Ազիզը, ֆրանսիական կառավարությունը պահանջեց Թուրք էմիգրանտներին ազատել մայրաքաղաքը և նրանք ստիպված անցան Լոնդոն, որտեղ էլ 1867 թ. նորից լույս տեսան նրանց մամուլի օրգանները, որոնք գաղտնի առաքվում էին Թուրքիա։

Եվրոպայում «Նոր օսմանցիների» ներկայացուցիչները ծանոթացան այնտեղ գոյություն ունեցող բուրժուական կարգին, եվրոպական ազգերի գրականությանը, արվեստին, որը, ինչ խոսք, բարերար ազդեցությունը թողեց նրանց հայացքների վրա։ Հենց սկզբից «Նոր օսմանները» իրենց առաջ նպատակ էին դրել ամբողջ Օսմանյան կայսրության տերիտորիայում ձուլել մնացած ժողովուրդներին և ստեղծել մի ազգ։ Իսկ հրապարակ գալու օրից այդ կուսակցությունը ազգային հարցում բռնեց շովինիստական կուրս։ «Նոր օսմանները» գտնում էին, որ թուրքական ապագա պառլամենտում տեղ են գրավելու Թուրքիայում ապրող բոլոր

---

[1] **Ю. А. Петросян,** Младотурецкое движение (вторая половина XIX начала XX в.), М., 1971, стр 65.

ազգերի ներկայացուցիչները, սակայն այնտեղ թուրքերը պետք է տիրապետող դեր ունենան։ Այս ևս տանում էր դեպի մնացած ազգերի և ժողովուրդների հպատակեցումը և ձուլումը։ Ազգային հարցի կապակցությամբ նրանց իդեան ճիշտ է, ինչ որ չափով ուղղված էր եվրոպական պետությունների դեմ, սակայն այն անխուսափելիորեն տանում էր դեպի պանիսլամիզմ, դեպի կայսրության մեջ ապրող ազգերի և ժողովուրդների ձուլումը, վերջապես նպատակ ուներ տարբեր վայրերում ապրող մուսուլմանների միավորումը։ Ալի Մուավին բացեիբաց հայտարարում էր, որ թուրքերը հին և բարձր ռասա են և նրանց է պատկանում առաջնակարգ դերը համաշխարհային կուլտուրայի պատմության մեջ[1]։ Պանիսլամիզմը, այսպիսով, իսլամը համարում էր ոչ միայն կրոն, այլև պետական մի սիստեմ, որի մեջ պետք է միախառնվեին և միաձուլվեին Թուրքիայում ապրող բոլոր ազգերն ու ժողովուրդները։

1876թ. հրատարակվեց «Մուսուլման հայրենասերների մանիֆեստը», որտեղ ասվում էր, թե Թուրքիան կարող է փրկվել կործանումից միայն պառլամենտական ռեժիմի հաստատմամբ։ Այդ թվականին էլ նոր օսմաններին հաջողվեց գահընկեց անել Աբդուլ Ազիզին և կարճ ժամանակ Մուրադ V-ից հետո գահը գրավեց Աբդուլ Համիդը։ Նոր գահակալը, չնայած ատում էր սահմանադրությունը, սակայն նրա տեքստը մշակելու համար ստիպված հանձնաժողով ստեղծեց, որի մեջ մտան «նոր օսմանների» կուսակցության անդամներից շատերը, իսկ հայերից Օտյան էֆենդին և Զամիչ Հովհաննեսը[2]։ Երկար քննարկումից հետո, 1876թ. դեկտեմբերին սուլթանը հրատարակեց այդ սահմանադրությունը, որը և չնայած շատ քիչ էր սահմանափակում նրա իշխանությունը, սակայն հանդիսանում էր Թուրքիայի պատմության մեջ առաջադիմական երևույթ։ 1876թ. դեկտեմբերին սահմանադրության կողմնակիցները ի պաշտպանություն նրա, ցույց կազմակերպեցին, իսկ Միդհատ փաշան (Թուրքիայի մեծ վեզիրը), ցուցադրական կերպով այցելեց հայկական և հունական պատրիարքներին[3]։

---

1 Տե՛ս Зарождение идиологии национально-освободительного движения (XIX—начало XX в), М, 1973, էջ 28

2 Տե՛ս Յու. Պետրոսյանի նշվ. աշխ., էջ 82—83։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 96։

Օսմանյան այդ սահմանադրությունը ներծծված էր պանթուրանիզմով, նրա 8-րդ հոդվածը նշում էր, որ «Օսմանյան կայսրության մեջ ապրող բոլոր հպատակներն անխտրաբար իրենց օսմանցի պիտի կոչեն, ինչ-որ լինի նրանց դավանած կրոնը»[1]։

Սակայն ֆեոդալական ռեակցիան քնած չէր և մանրամասն տեղեկություններ ունենալով սահմանադրականների գործունեության մասին, սկսեց պայքարել նրանց դեմ։ Թուրքական առաջին պառլամենտը երկու սեսիա ունեցավ։ Պառլամենտը ուներ 119 դեպուտատ, որոնցից 71-ը մուսուլմաններ, 48-ը՝ այլազգիներ[2]։

1877—1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, երբ ռուսական հաղթական բանակը շարժվում էր դեպի Կոստանդնուպոլիս, նոր գահակալը օգտագործեց երկրի համար ստեղծված ծանր վիճակը՝ ցրեց սահմանադրության հիման վրա ընտրված պառլամենտը և դրանից հետո երկրում սկսվեց «զուլումի ռեժիմ»։ Այսպիսով, «նոր օսմանների» կողմից սկսված սահմանադրական շարժումը սկզբնական շրջանում հաջողություն ուներ, բայց ձախողվեց, քանի որ թուրքական բուրժուազիան թույլ էր ու վախկոտ, իսկ սուլթանը և նրա կողմնակիցները ուժեղ էին և հաղթեցին։

Թուրք պատմաբան Օսման Նուրին, որը գրել է «Աբդուլ Համիդ Երկրորդը և նրա իշխանության շրջանը» եռհատոր աշխատությունը, որն ընդգրկում է Թուրքիայի 1876—1909թթ. ժամանակաշրջանի պատմությունը, անդրադառնալով զուլումի շրջանի պատմությանը, շատ միամիտ, բայց ճիշտ է բնութագրում այդ ժամանակաշրջանի իրադարձությունները։ «Օսմանյան պետության 33 տարվա քաղաքական դեպքերի մասին,— գրում է նա,— մեզ մոտ ոչ մի պաշտոնական թուղթ չի հրատարակվել, ամենակարևոր դեպքերը մշտապես գաղտնի են պահվել օսմանյան ժողովրդից։ Ոչ մեկին չեն ներկայացվել պատերազմի նման օրինական միջոցառումների մութ ծալքերը, պատերազմներ, որոնց մի քանի անգամ ստիպված է եղել դիմելու մեր պետությունը։ Բռնապետական ամենամեծ հենարանը, գործունեության ամենազորեղ միջոցը եղել է տգիտությունը։ Մտքերի լուսավորումը, երկրի անցյալը ուսումնասիրող և նրա ապագան գուշակելու

---

1 Բազմավեպ, 1877, էջ 62։

2 Տե՛ս Յու. Պետրոսյանի նշվ. աշխ., էջ 96։

համար ուղեցույց հանդիսացող երկերի ոչ թե հրատարակումը, այլ անգամ ընթերցումը համարվում էր ոճիր»[1]։

Արդուլ Համիդի ժամանակ գրաքննությունը կայսերական պալատից ստացել էր հրահանգներ հոդվածներ չհրատարակել պետական պաշտոնյաների կաշառակերությունների, գողությունների և զեղծումների մասին։ Արգելված էր նաև «Հայաստան» և նրա պատմության և աշխարհագրության մասին որևէ այլ անունների հիշատակումը։ «Ամենադժբախտ գրքերը մեր երկրում թուրքերեն և այլ լեզուներով տպագրված գրքերն էին։ Բառիս բուն իմաստով մաղից էին անցկացվում գլխավորապես պատական գործերը։ Արգելված էր ընդհանուր պատմությունը, քիմիայում արգելված էին մի շարք բանաձևեր, որոնց միջոցով ստացվում էին պայթուցիկ նյութեր»[2]։ Քերականական գրքերում հանդիպող «դժգոհ ենք,» «դժբախտ ենք», «ազատ չենք» և նման այլ բառեր համարվում էին վտանգավոր և ջնջվում էին որպես ժողովրդի տրտունջը արտահայտող նախադասություններ։ «Եղբայր» բառը արգելված էր, քանի որ կարող էր հիշեցնել Արդուլ Համիդի եղբայր սուլթան Մուրադին, «հիվանդ» բառը արգելված էր, որովհետև հիշեցնում էր սուլթանի մասին Թուրքիայից դուրս գրվող «հիվանդ մարդ» արտահայտությունը։ Ջուլումի ժամանակաշրջանում բոլոր կասկածելի նամակները անխտիր բաց էին արվում, թարգմանվում թուրքերեն և ուղարկվում համապատասխան կազմակերպություններին։ Բազմաթիվ փաստերից հետաքրքրական է մեկը։ 1881թ. օգոստոսի 28-ին Կարսից Վան Գ. Սրվանձտյանին ուղարկած նամակում Գ. Աղվանյանը գրում է. «Վանեն մեզ գրեցին, որ իբրև թե իմ ան Ձեզ ուղարկած մի նամակը տաճկաց կառավարությունը բանալով թարգմաներ և ուղարկեր է 'ի Բ. Դուռը»[3]։ Այսպես էին վարվում մնացած բոլոր նամակների հետ, որոնց հեղինակները կասկածելի վիճակում էին գտնվում կառավարության կողմից։

Օսման Նուրին իր գրքում անդրադառնում է նաև հայկական հարցին և հանգամանորեն վերլուծում այն։ Օսմանյան կառավարության հայերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին պատմաբանը գրում է. «Մուրադ Հինգերորդի գահընկեցությու-

---

1 Թուրքական աղբյուրներ, հ. Դ, Երևան, 1972, էջ 83։

2 Նույն տեղը, էջ 163։

3 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 234 II, վավ. 119, թ. 41։

նից հետո, սկսել էին անարգարություններ գործադրել հայերի նկատմամբ։ Այդ իսկ պատճառով էլ հայոց պատրիարքը բազմիցս բողոքներ է ներկայացրել Բարձրագույն Դռանը, և հայերի համար շարունակ բարենորոգումներ կատարելու խոստումներ ստացել, բայց այդ խոստումներից և ոչ մեկը չէր կիրառվել»[1]։

Այնուհետև թուրք պատմաբանն անդրադառնում է Օսմանյան Թուրքիայում հայ ազգի վիճակի մասին, գտնելով, որ «հայ ազգը ամբողջությամբ գժգոհ չէր օսմանյան վարչությունից։ Արդարև գյուղացիները տանջվում էին, ողբում էին (ընդգծումը մերն է։— Հ. Պ.), սակայն խաղաղության հանգստավետության և առևտրի վարժված մարդիկ, հատկապես պետական պաշտոնատների բազմաթիվ ծառայողներն ու պաշտոնատերերը երբեք չէին գանգատվում»[2]։ Սակայն Թուրքիայում միայն պաշտոնյաներն ու առևտրին վարժված մարդիկ չէին, որ կազմում էին հայ ազգը, այլ գյուղացիները, արհեստավորները, օրամշակները և այլք։ Եվ ճիշտ է նշում պատմաբանը, որ գյուղացիները տանջվում էին, ողբում էին։ Սակայն այդ երկրում ով էր լսում նրանց ողբը։ Վայրենի կամայականությունները այդ կայսրության մեջ մեծ չափերի էր հասնում և երկիրը վերածում էր մի գեհենի, որտեղ ապրելը անհնարին էր դառնում։

Եթե Աբդուլ Ազիզի ժամանակաշրջանում Թուրքիան ֆինանսական և տնտեսական տեսակետից կախման մեջ էր եվրոպական պետություններից՝ Անգլիայից, Ֆրանսիայից, Իտալիայից, Ավստրիայից, ապա նրան հաջորդող ժամանակաշրջանում սկսեց երևան գալ մի նոր պետություն՝ Գերմանիան, որից էլ նա գլխավորապես կախման մեջ ընկավ։ Այդ մի ժամանակաշրջան էր, երբ նոր հրապարակ եկած գերմանական իմպերիալիստները, Ֆրանս-պրուսական պատերազմից հետո գրեցին աշխարհը վերաբաժանելու և առհասարակ իրենց «արևի տակ տեղ ունենալու հարցը։ Գերմանական զարգացող իմպերիալիզմը ամենից առաջ սկսեց իր թևերը տարածել դեպի Թուրքիա։ Կոստանդնուպոլսում ստեղծված գերմանական բանկը դուրս էր մղում այնտեղից մնացած իմպերիալիստներին, իսկ հետագայում Բեռլին—Ստամբուլ—Բաղդատ երկաթուղու շինարարությունն ավելի ուժեղ թելերով էր կապում թուրքական կառավա-

---

1 Թուրքական աղբյուրները, հ. Դ, էջ 164։

2 Նույն տեղը, էջ 172։

ռոյներին գերմանական իմպերիալիզմից։ Երկաթուղու կառուցումով Գերմանիան հնարավորություն է ստանում գաղութացման ենթարկել Փոքր Ասիան, ապա շարժվել դեպի Պարսից ծոց, մուտանալ Հնդկաստանին։ Երկաթուղու նախագծերի մշակման ժամանակ թուրքական կառավարության ներկայացուցիչները պնում էին շինարարությունը Ստամբուլ—Անկարա—Սվազ գծով տանելու հարցը։ Այս ձևնտու էր Թուրքիային հատկապես, երբ պատերազմ սկսվեր Ռուսաստանի դեմ։ Այդ դեպքում զորքերի և բեռների փոխադրությունը դեպի այդ կողմերը ավելի դյուրին կլիներ։ Այսպիսով, այս տարբերակը Թուրքիայի համար ուներ նաև ռազմական նշանակություն։ Սակայն վերջնական քննարկումներից հետո անցավ գերմանական տարբերակը, այսինքն՝ երկաթուղու կառուցումը Ստամբուլ—Անկարա, Ադանա—Դիարբեքիր, Մոսուլ—Բաղդատ դեպի արաբական նավթային շրջանները։

Եվ այսպես, XIX դարի 90-ական թվականներից սկսած գերմանական իմպերիալիզմը, նրա կայսր Վիլհելմը հասան այն բանին, որ թուրքական սուլթանը անցավ գերմանիայի կողմը և, ինչպես ճիշտ կերպով է նշված այդ ժամանակվա մամուլի էջերում, գերմանական խաչը առաջացավ դեպի կիսալուսինը և նրանք փարվեցին իրար, միաձուլվեցին, քանի որ այդպես էին պահանջում իմպերիալիստական Գերմանիայի և Օսմանյան Թուրքիայի տնտեսական շահերը։

Սասունի 1890-ական թվականների դեպքերի շարադրանքին և վերլուծությանն անցնելուց առաջ, ցանկանում ենք համառոտակի կանգ առնել այն դաժան ռեժիմի բնութագրության վրա, որ սկսվել էր Թուրքիայում Աբդուլ Համիդ Երկրորդի թագավորության սկզբից։ Օսմանյան գահակալը արտաքինից երևում էր մեղմ, սիրալիր, սակայն դաժան էր, եսասեր ու խարդախ։ Սկզբնական շրջանում նա որոշ չափով զիջումներ է անում սահմանադրական հովերով տարված մարդկանց, որոնց թվում նաև Միդհատ փաշային, որին էլ վստահեց մեծ վեզիրի պաշտոնը։ Նոր սահմանադրությունը դեմոկրատական չէր, քանի որ ժողովրդի մեծ մասը զրկված էր ընտրական իրավունքից, իսկ ինչ վերաբերում էր պառլամենտին, ապա նա հանդիսանում էր մի օրգան, որը և պետք է գնար սուլթանի ետևից, պետք է լիներ նրա կցորդը։ Երբ սուլթանը սկսեց քաղաքից աքսորել նոր օսմանների ղեկավարներին, շատ չանցած հերթը հասավ Միդհատ

փաշային, որը և աքսորվեց երկրից, նրան չփրկեց 1877թ. փետրվարին իր կուսակցության կազմակերպած ցույցը, որի մասնակիցները պահանջում էին սուլթանից՝ վերադարձնել մեծ վեզիրին իր պաշտոնին։ Շատ չանցած սուլթանի հրամանով Միդհատը Սիրիայի, ապա Իզմիրի կուսակալ դարձավ, այնուհետև 1881 թ., երբ սկսվեց Աբդուլ Ազիզի սպանության մասին դատական գործը, մեղադրվեց նրա սպանության մեղսակից լինելու մեջ և դատապարտվեց մահվան։ Խորամանկ սուլթանը որոշ ժամանականց փոխեց դատավճիռը, նրան աքսորեց Արաբիա և հետագայում սպանել տվեց։

Սկսած 1880-ական թվականներից նոր սուլթանի գաղափարախոսությունը դարձավ պանիսլամիզմը, որի հիմնական քարոզն էր, թե Ռուսաստանը գրավել է Ղրիմը, Միջին Ասիան, Կովկասն ու Անդրկովկասը, որտեղ մեծ քանակությամբ մուսուլման բնակիչներ կան։ Անգլիան գրավել է Եգիպտոսը, Աֆղանստանը, Հնդկաստանը, որտեղ նույնպես մեծ քանակությամբ մուսուլմաններ կան և անհրաժեշտ է միավորել նրանց ու պայքարել անհավատների դեմ։ Այս գաղափարախոսությունը ամրապնդելու նպատակով սուլթանը իրար դեմ էր լարում հայերին ու քրդերին, լարում էր Կովկասից եկած լազերին և չերքեզներին հայերի դեմ, այնուհետև նրանց միջև վեճերի ժամանակ հանդես էր գալիս հաշտարար դատավորի դերում, բայց գործը միշտ ավարտում էր ի վնաս հայերի։

Սուլթանը, ինչպես ընդունված էր ասել, հանդիսանում էր բոլոր մուսուլմանների խալիֆը և որից հետո միայն օսմանների թագավորը։ Զուլումի ժամանակաշրջանում Թուրքիայի պետական ապարատը շատ թույլ էր, պաշտոնները վաճառվում էին, իսկ կաշառակերությունը հասել էր անասելի չափերի։

Պետական ապարատի պաշտոնյաների կաշառակերությունը ձեռնտու էր Աբդուլ Համիդին և այդ էր պատճառը, որ նա հանդուրժում էր կաշառակերներին։ Ինչ-որ առիթով նա կաշառակեր պաշտոնյաների մասին ասել է. «Ես գիտեմ, որ ինձ շրջապատող պաշտոնյաները թալանում են և կաշառակերներ են, սակայն ես նրանց թողնում եմ իրենց պաշտոնին, քանի որ նրանք արդեն շատ հարուստ են, իսկ եթե նրանց փոխարեն նշանակեմ նոր մարդիկ, որոնք աղքատ են, ավելի շատ կթալանեն, մինչև կշտանան»[1]։

1 Ալիևի նշվ աշխ., էջ 46։

Շատ ծանր էր Թուրքիայի ֆինանսական վիճակը, զինվորները և ոստիկանները ամիսներով աշխատավարձ չէին ստանում և իրենց գոյությունը պահպանում էին ժողովրդի հաշվին։ Թուրքական ռազմաֆեոդալական ապարատում շատ էին մատնիչները, որոնք Բ. Դռանն էին հայտնում ժողովրդի մեջ եղած տրամադրությունները։ Մատնությունը հայրենասիրություն էր համարվում։ Սակայն, չնայած ստեղծված այս դրությանը, երկրի առաջավոր ուժերը չէին կարող հանդիստ նստել և հաշտվել ստեղծված վիճակի հետ և բնական է, որ պետք է դիմադրավեին բռնակալության դեմ։ Երկրում գաղտնի կերպով, իսկ երկրից դուրս լեգալ, սկսեցին գործել խմբակներ, որոնք հետագայում վերամիավորվեցին «Միություն և առաջադիմություն» կուսակցության մեջ, որոնք և սկսեցին իրենց կոչել երիտասարդ թուրքեր կամ իթթիհատականներ։ Այդ կազմակերպությունը իր առջև խնդիր դրեց կործանել զուլումի ռեժիմը, վերականգնել սահմանադրությունը, հասնել նրան, որ Թուրքիան ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական տեսակետից անկախ լինի օտարերկրյա կապիտալից և երկրում տնտեսական բարձունքներն ընկնի նոր ղարգացող բուրժուազիայի ձեռքը։

Առաջադրելով այդ խնդիրները, երիտթուրքերը անչափ ղգուշանում էին Թուրքիայում գտնվող ազգությունների ու առանձնապես հայերի ազգային-ազատագրական շարժումներից։ 1894 թ. Սասունի դեպքերի ժամանակ երիտթուրքերի կոմիտեն մի մանիֆեստ արձակեց, որտեղ պահանջում էր ոչ թե Թուրքական բռնապետության կործանումը, այլև լիբերալ ռեֆորմներ[1]։

Ռուս-թուրքական պատերազմը վերջացավ Ռուսաստանի հաղթանակով և 1878թ. փետրվարին Սան Ստեֆանոյում կնքվեց պայմանագիր, որով Բուլղարիան և Մակեդոնիան համարվեցին անկախ իշխանություններ՝ պահպանելով վասալական կախումը Թուրքիայից։ Բուլղարիայից պետք է հանվեին թուրքական զինված ուժերը։ Այդ պայմանագրով ճանաչվեցին Չեռնոգորիայի, Սերբիայի, Ռումինիայի անկախությունը, իսկ Բոսնիայում և Հերցոգովինայում ռեֆորմներ մտցվեցին։ Պայմանագրով Ռուսաստանին էին կցվում Հայաստանի տերիտորիաներից Կարսը,

---

1 Տե՛ս Ալիևի նշվ աշխ., էջ 57։

Բայազետը, Սարիղամիշը, Արդահանը, մինչև Սողանլուղի լեռնաշղթան։

Սան Ստեֆանոյի պայմանագիրը հույս էր ներշնչում հայկական առանձին հատվածներում հայերին ինքնավարություն տալու մասին, սակայն Բեռլինի կոնգրեսում քննարկվեց միայն Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը և այն վերափոխվեց՝ դառնալով 61-րդ հոդված։ Բեռլին մեկնած հայ պատվիրակությունը և նրա ղեկավար Մ. Խրիմյանը վերադարձան հուսալքված։

Բնութագրելով Թուրքիայում XIX դարի երկրորդ կեսի ազգային-ազատագրական շարժումները, Վ. Ի. Լենինը այն համարում է առաջադիմական, քանի որ ուղղված էր ֆեոդալական կարգերի դեմ, այդ կապակցությամբ նա գրում է. «Ոչ միայն 1855, 1859, 1864, 1866, 1870, այլև 1877 թվականի (ռուս-թուրքական) և 1896—1897 թվականների պատերազմների (Հունաստանի դեմ Թուրքիայի պատերազմի և հայկական հուզումների) ժամանակ, պատմական երևույթների հիմնական օբյեկտիվ բովանդակությունը եղել են ազգային-բուրժուական շարժումները կամ ֆեոդալիզմի տարբեր ձևերից ազատագրվող բուրժուական հասարակության «ջղաձգումները»»[1]։

Օսմանյան Թուրքիայի տերիտորիայում ինքնավար Հայաստանի գոյությունը ձեռնտու չէր եվրոպական տերություններին։ Հայկական հարցը կով գնաց եվրոպական պետությունների և Ռուսաստանի հակասությունների խառնարանում։ Ընդունված 61-րդ հոդվածը առհասարակ կյանքում չկիրառվեց։ Այն փաստորեն ոչինչ չտվեց՝ հայ ժողովրդի արևմտյան հատվածին՝ Ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ սեղանի վրա էր Բեռլինի կոնգրեսի պայմանագիրը, Հ. Պարոնյանը գրում էր. «Անմտություն է թուրքական կառավարութենե բարեկարգություն հուսալն» կամ թե չէ՝ «գավառաց հայերը դարերե ի վեր կը հարստահարվին, դարերե ի վեր թաֆրիրներ կը գրվին ու հարստահարությունները դարերե ի վեր կը շարունակվին»[2]։

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածում գրված էր. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ

---

1 Վ. Ի. Լենին, Երկ, հատ. 26, էջ 172։

2 Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 11, էջ 39։

բախումների ու բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենա վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգումներ, և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»[1]։

Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը քննարկելիս անհրաժեշտ ենք համարում կանգ առնել երկու հանգամանքի վրա։ Ամենից առաջ պետք է ուշադրություն դարձնել հոդվածի այն մասին, որտեղ ասված է, որ պետք է ռուսական զորքերը դուրս բերվեն նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից։ Ի՞նչ է նշանակում այս։ Ամենից առաջ նշանակում է ինչպես թուրքական, այնպես էլ ռուսական դիվանագիտությունը անհերքելիորեն ընդունում էին, որ Թուրքիայից գրավված վայրերը հանդիսանում են Հայաստանից գրավված տերիտորիաներ և դրանով ընդունում են Արևմտյան Հայաստանի գոյությունը։

Հարկ է նշել, որ 1878թ. հուլիսին ընդունված Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածից դուրս հանվեցին վերը նշված մասը և հոդվածը ձևակերպվեց այսպես. «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից (ընդգծումը մերն է։— Հ. Պ.)։

Բարձր Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը»[2]։

Վերը բերված երկու հոդվածները շատ են վերլուծվել հայ և օտարազգի պատմաբանների կողմից։ Մենք ընդհանուր շաբլոնից հեռանալով, ցանկանում ենք համառոտակի կանգ առնել մի շարք հանգամանքների վրա։ Հարցը նրանում է, որ Բ. Դուռը առհասարակ ցանկանում էր ապահովել իբրև թե «հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից», իսկ ի՞նչ է նշանակում այդ։ Այդ ամենից առաջ նշանակում է, որ թուրքական կառավա-

---

[1] Հայաստանը միջազգային դիվանագիտության և ռուսական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923), Երևան 1972, էջ 92։

[2] Նույն տեղը, էջ 128։

բությունը ի լուր ամենքի հայտարարում էր, որ ինքը ոչ մի մասնակցություն չուներ հայերի, քրդերի և չերքեզների միջև առաջացած խժդժություններին և ցանկանում էր իրեն հպատակ հայ ժողովրդին պաշտպանել նրանց հարձակումներից։ Բարերարի դիմակ հագած օսմանյան կառավարությունը ցանկանում էր լավություն անել հայերին։ Այո, պայմանագրի այդ հոդվածում ասվում է, որ թուրքական պետությունը ոչ մի մեղավորություն չունի, այդ քրդերն ու չերքեզներն են հարձակվում հայերի վրա, իսկ նա՝ «բարեխնամ», «հայասեր», կառավարությունը, ցանկանում է հայերին պաշտպանել նրանց հարձակումներից։ Ի՞նչ բարերարություն։ Ուրեմն ովքե՞ր են մեղավոր, չերքեզնե՞րը, որոնք 1850-ական թվականների վերջին գաղթեցին Ռուսաստանից և անմիջապես, առանց պատճառի, թշնամացան հայերի հետ։ Առերես հայերի և եվրոպական ու ռուսական դիվանագետների մոտ լավամարդ երևալու մի ձգտում էր այս՝ հաստատված եվրոպական մեծ պետությունների և Ռուսաստանի ներկայացուցիչների ստորագրություններով ու կնիքներով, իսկ իրականում թուրքական կառավարությունը, նրա ներկայացուցիչները տեղերում ոչ մի բանի առաջ կանգ չէին առնում այդ ժողովուրդներին իրար դեմ հանելու, ճարպիկ ու խորամանկ կերպով նրանց իրար դեմ գրգռելու գործում։

Ռուս-թուրքական պատերազմից առաջ կարևոր նշանակություն ուներ այն հարցը, թե ինչպես կվերաբերվեին քրդական ցեղերը դեպի ապագա պատերազմը։ Կմասնակցե՞ն արդյոք պատերազմին հանուն սուլթանի և նրա պետության պահպանության, թե՞ չեզոք կմնային։ Այս անգամ սուլթանը օգտագործեց ծագումով քուրդ Իսմայիլ Հեքքի փաշային, որը մինչ այդ ճնշել էր քրդական ապստամբությունը և ենթարկել էր մի շարք ցեղերի Օսմանյան կայսրությանը[1]։ Միայն Դերսիմի քրդերը չենթարկվեցին սուլթանին, իսկ Վանի, Մուշի, Բիթլիսի ցեղերը առհասարակ չհրաժարվեցին թուրքական բանակին զորք տալուց։ Սուլթանը և նրան շրջապատողները պատերազմի նախօրյակին այն համարեցին սրբազան։ Սուլթանը շեյխ Օբեյդ-Ուլլահի, Օմարի և Ջալալեդինի միջոցով համոզեց քրդերին՝ մասնակցել պատերազմին։ Այստեղ հարցը միայն քրդական ուժերը

---

[1] *Տե՛ս* **Ш. В. Мегрелидзе**, Закавказье в русско-турецкой войне Тбилиси, 1972, էջ 142

պատերազմի ժամանակ օգտագործելը չէր, այլև նրանց պատերազմի ժամանակ հանգիստ պահելը և թիկունքը ապահով վիճակի մեջ ունենալն էր։ Հետաքրքրականն այն է, որ հայ-քրդական հարաբերությունների վատացմանը ջանում էին թուրքական հրամանատարական կազմը հենց պատերազմի ընթացքում։ Թուրքական զինված ուժերը աջ և ձախ ավերում էին հայկական գյուղերը, կոտորում բնակիչներին, և նրանց զորահրամանատար Սուլթան Մուխտար փաշան այդ վայրագությունները համարում էր ոչ թե թուրքերի, այլ քրդերի գործը։ Այս ավելի պետք է վատացներ հայ-քրդական հարաբերությունները, որով այնքան շատ էր շահագրգռված օսմանյան կառավարությունը։ Շեյխ Օբեյդ-Ուլլահի, Օմարի, ապա Ջալալեդինի ուժերը ուղարկվեցին Բայազետ, կռվելու ռուսական զորքի դեմ։ Մոլեռանդ այս մարդիկ համոզում էին իրենց ենթակայության տակ գտնվող քրդական ուժերին, որ մի հարվածից հետո ռուսական բանակը կպարտվի և նրանք թուրքական բանակի հետ միասին Թիֆլիս կմտնեն։ Բայց ռուսական բանակի հզոր հարվածների տակ ինչպես թուրքական այնպես էլ քրդական ուժերը ցիր ու ցան եղան և վերադարձան դեպի Արևմտյան Հայաստան և սկսեցին իրենց վրեժը լուծել անմեղ հայ բնակիչներից։ Այսպես, վիրավոր Ջալալեդինը շարժվեց դեպի Խիզան, Օբեյդ-Ուլլահը՝ դեպի Խարզան և Ծոփք, իսկ Օմարը՝ դեպի Տարոն։ Վերջինս պատերազմի էր մեկնել 18 հազար հոգով և վերադարձին ուներ իր ուժերի կեսը միայն։ Նրա անկազմակերպ ուժերի մի մասը հարձակվեց Մշո դաշտի Հունան գյուղի վրա, որի բնակիչները իրենց սասունցի տերտերի գլխավորությամբ պաշտպանվեցին և թույլ չտվեցին քրդական զինված ուժերին գյուղ մտնել։

Քրդական այդ ուժերը ասացին սասունցիներին, թե պետք է հարկ տաք, նրանք պատասխանեցին. «Ենթարկվել բյուրավոր քուրդ թագավորների կամայականությանը՝ մենք միանգամայն անկարող ենք։ Աստվածային ողորմությամբ և մեր սրերի ուժով պիտի արգելենք բռնավորների մուտքն անկախ ու ազատ Սասուն»[1]։

Շեյխ Օմարը 1878թ. հուլիսի սկզբին նախապատրաստվեց Սասունի վրա հարձակվել, իր մոտ ունենալով քրդական ցեղերից 30 հազար մարդ, իսկ սասունցիներն ունեին ավելի քան եր-

---

[1] ՎՍՍՀ ՊԿՊԱ, Ֆ. 480, ց. 1, գ. 1236, թ. 16։

էու հաղար հոգի[1]։ Արշավանքը ոչ մի արդյունք չտվեց Օմարին և նրա ուժերը առաջին հարվածից հետո չկարողացան բարձրանալ Սասուն և ցրվեցին։ Այսպես անփառունակ վերջացավ քրդական այդ արշավանքը դեպի Սասուն։

Երևանի մատենադարանում է պահպանվում Սեյլանիի «Գորպե Սասունի 1878թ. արկածները» գրքի ձեռագիրը, որը ըստ հեղինակի իր «Սասունի» երկրորդ մասն է[2]։ Սեյլանին Սասունի 1894թ. դեպքերի ժամանակակիցն է։ 1896թ. նա արտասահմանից վերադառնում է Կ. Պոլիս, ապա անցնում է Սասուն՝ լուսավորություն տարածելու։ Նա և իր ընկերները մեծ ջանքեր են գործադրում Գելիեզուզան, Սեմալ, Տալվորիկ գյուղերում դպրոցներ բաց անելու գործում։ Սեյլանին ապա գրեց իր «Սասուն» գիրքը, հետո «Գորպեն», «որի բոլոր գործողները կենդանի էին, ինձ պատմում էին իրենց գործերը, խոսացածները»[3]։ Սեյլանի «Գորպեն» շարվում է «Մուրճի» մեջ, սակայն ցարական գրաքննությունը արգելում է նրա տպագրությունը։ Ապա փորձ է անում տպագրել Պետերբուրգի «Արաքսում», սակայն նորից ապարդյուն։ «Գորպեի» մեջ հեղինակը անդրադառնում է 1877—1878թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին, նրա ժամանակ և նրանից հետո քրդական ցեղերի մեջ եղած իրադարձություններին։ Հեղինակը նշում է, որ քրդական դինված ուժերը պատերազմի ժամանակ ջախջախվեցին և սկսեցին անկանոն փախչել։ Նրանք «իրենց սրի զորությունը փախչելիս պատահած հայի գլխի վրա փորձեցին, ոմանք էլ մի մարթինի հրացանը մի հացի հետ փոխեցին, մի շարք անօրեններ էլ ապաստան էին որոնում... հայի տան անկյունում, հագեցնում իրենց քաղցն ու ծարավը, ձեռների զենքը մի կողմ նետում ու փախչում հեռու՝, շատ հեռու՝ դեպի անառիկ լեռներ, որ չէր հասնելու քաֆրի խիզախ կոզակն ու պողպատե դրակոնը, չարքաշ սալտաթն ու սաստող գեներալը...»[4]։

Շեյխ Ջալալեդինը շարժվեց դեպի Խիզան, Օբեյդ-Ուլլահը դեպի Մոկս, Ճզիրե, Խերզենք, իսկ Օմարը դեպի Տարոն—Սասուն։ Ճանապարհին Օմարը հարձակվեց Մուշի Ղըղըլաղաճ, Արազ,

---

1 Տե՛ս ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 1236։

2 Տե՛ս Մատենադարան, Աշ. Հովհաննիսյանի արխիվ, թղթ 244[2], վավ. 6, թ. Ա։

3 Նույն տեղը, թ. Գ։

4 Նույն տեղը, թ. 4։

Բերդակ, Ջրիկ, Ցրոնք և այլ գյուղերի վրա, որոնց բնակիչները Հունան գյուղի օրինակով անցան ինքնապաշտպանության։ Մուշի դաշտում հաջողության չհասնելուց հետո Օմարը Սասունի վրա հարձակվեց և սկսեց մեծ բազմությամբ պաշարել այն։ Սասունի Շենիկ գյուղի բնակիչները, որոնք «բռնած էին Անդոքի սատրոտն ու քարքարոտ գլուխը, զարհուրեցան այդ օրը, երբ սարերը սև վրաններով ծածկված տեսան»[1]։ Ըստ Սեյլանիի, քրդական ցեղերի բազմության թիվը հասնում էր 40—50 հազարի, որի դեմ կանգնած էին Սասունի 1700 կռվողներ, Շենիկ, Սեմալ, Տալվորիկ, Տափրկ, Աղբեր, Հիթենք, Շուշնամերկ գյուղերից[2]։

1877—78 ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո հայկական բոլոր շրջաններին ամենից առաջ հետաքրքրում էր, թե ինչպիսի ընթացք կունենա հայկական հարցը։ Սակայն կյանքը ցույց տվեց, որ հայ ժողովրդի երազած հույսերը չիրականացան։ Դրանից հետո հիասթափված եվրոպական դիվանագիտության խարդավանքներից, հայ մտավորականությունը սկսեց քարոզել սեփական ուժերով պայքարելու և ինքնուրույնության հասնելու գաղափարը։ Այդ օրերին Մ. Խրիմյանը Բեռլինի վեհաժողովը նմանեցնում է հարիսայով լցված մի կաթսայի և գտնում էր, որ այնտեղից բաժին ստանալու համար պետք է երկաթյա շերեփ ունենալ. «Հիրավի հոս հարիսա կը բաժնվի, բայց շերեփ չունեցողն չի կարող անոր մոտենալ։ Եվ հիրավի, տեսա որ գարատաղցուն, բուլգարին և այլոց պատվիրակներուն քով կային քանի քաջեր, որոնց վրայեն կախված սուրերեն արյուն կը վազեր։

Հայնժամ դարձրի իմ երես և իբր թե կը փնտրեի իմ զեյթունցի, սասունցի և մշեցի քաջերս. ո՞ւր էին, պետք չէ՞ր, որ անոնցմի մեկ երկու հոգի ալ իմ քովս գտնվեին և նոցա արյունոտ թուրերը եվրոպացոց աչքը խոթելով բարձրաձայն աղաղակեին, թե տեսեք ահա հոս է շերեփը»[3]։ Խոսելով երկաթե շերեփի մասին, Մ. Խրիմյանը և նրա կողմնակիցները միաժամանակ դնում էին ազգի մեջ լուսավորություն տարածելը ուժեղացնելու հարցը, որին էլ լծվեց Բեռլինի կոնգրեսից հետո հայ առաջավոր մտավորականությունը։ Պատերազմից հետո Կոստանդնուպոլսի հայ

---

1 Մատենադարան Աշ. Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 24420, վավ 46. թ.12։

2 Տես՝ նույն տեղը, թ 21։

3 Ցուշարձան նուիրված սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութեան քառասնամեակին, Փարիզ, 1930, էջ 11։

մտավորականության մտածողության մշտական առարկան էր նաև Տարոնն ու Սասունը։

Պատերազմի ժամանակ և դրանից հետո Մշո ժողովուրդը ընկավ շատ ծանր դրության մեջ։ Այդ կապակցությամբ իր կազմած վիճակագրության մեջ Ա. Տեկանցը գրում է. «Մշոյ՝ Պուլանըխի, Խնուսա և Զուխուր գավառներու ամեն գյուղերու մեջ բարեկարգ դպրոցներ կան եղեր ասկե երկու տարի առաջ, բայց պատերազմի սկզբեն մինչև ցարդ ամենքն ալ գոցվեր են ցավոք սրտի։ Քանզի բարբարոս քուրդերն ու կանոնավոր զորքերն ամեն բանը տակն ու վրա ըրած են, թշվառ ազգը իբրև գերի անտանելի դրությամբ չարչարելով»[1]։

Այդ ժամանակաշրջանում Մուշ քաղաքում բացվեց Մշո Կեդրոնական վարժարանը, որտեղ պետք է կրթություն ստանային Մուշի և նրա շրջակայքի, ինչպես նաև Սասունի հայ հատվածի զավակները։ Վարժարանը բացվեց Կոստանդնուպոլսի պանդուխտ տարոնցիների ընկերության ջանքերով, այստեղ ուսանելու եկան նաև Խնուսից և Սասունից, Մշո դաշտից և այլ տեղերից։ Դպրոցը հիմնադրվեց 1878թ., ուներ 80 աշակերտ և ապագայում տվեց իր շրջանավարտները։ Նույն թվականին Մշո ս. Մարինե թաղում բացվեց աղջիկների վարժարան։ Հայոց միացյալ ընկերությունը սկսեց դպրոցներ բաց անել և այլ վայրերում։ Ընկերությունը դպրոց հիմնեց Սասունի Ահրոնք գյուղում, որտեղ սովորում էին 60 աշակերտ։

Միացյալ ընկերության Մուշի վարժարանի տեսուչն էր Մը-կըրտիչ Սարըյանը, որը հայոց բոլոր լուսավորչական միացյալ ընկերության ներկայացուցիչն էր և Մուշի Կեդրոնականի քնօրեն։ Մ. Սարըյանը 1879—90թթ. աշխատեց Մուշում։ Ծնվել էր նա 1853 թ. Տրապիզոնում, սկզբնական կրթությունը ստացել էր ծննդավայրում, սովորել էր Կոստանդնուպոլսի դպրոցներից մեկում, ապա ավարտել էր Կալաթա-Սերիայի լիսեն։ 1884թ. բանտարկվելով, տարվում է Էրզրում, ապա Կոստանդնուպոլիս։ Թուրքական կառավարությունը նրան աքսորում է Տրիպոլի, որտեղ մնում է մինչև 1897 թվականը։ Ազատվելուց հետո ապրում է Զմյուռնիայում, վարում է Մեսրոպյան և Հռիփսիմեան վարժարանների տեսչի պաշտոնը։ Քանի որ նա համարվում էր թուրքական իշխանությունների համար անբարեհույս տարր,

[1] ԳԱՊ-ի արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, վավ. № 49/3, էջ 1։

ապգային մարմինները թուրքական կառավարության ճնշմամբ նրան ազատում են պաշտոնից։ 1901թ., 48 տարեկան հասակում կնքում է իր մահկանացուն։

Ի՞նչ առարկաներ էին դասավանդում Մուշի Կեդրոնականում և մնացած դպրոցներում։ Պահպանված տեղեկությունների համաձայն, անցնում էին ֆրանսերեն, շափագիտություն, երկրաչափություն, թուրքերեն, հայոց լեզու, գրաբար, պատմություն, մարմնամարզություն, աշխարհագրություն, երգ, գեղագրություն, եկեղեցական արարողություններ։ Դպրոցի պատերի ներսում, եկեղեցական հին երգերի և շարականների հետ միասին առաջին անգամ հնչում էին նաև Մ. Նալբանդյանի «Ազատն աստված», Մ. Թաղիադյանի «Տեր կեցոն», Ղ. Ալիշանի «Արիք Հայկապունքը», Մկրտիչ Պեշիկթաշլյանի «Դու զով խնդրեսը» և «Ի բյուր ձայնիցը», Ն. Ռուսինյանի «Կիլիկիան» և ուրիշ հայրենասիրական երգեր։

Այս ուսումնական հաստատությունների ստեղծումից հետո կրթական գործը Մուշում, Սասունում սկսեց ավելի ու ավելի ծավալվել։ Օսմանյան դաժան պայմաններում անգամ կային շատ թվով մարդիկ, որոնք մտածում էին հողագործի աշխատանքը ավելի դյուրին և արդյունավետ դարձնելու մասին։ 1880թ. սեպտեմբեր ամսին Մշո ս. Առաքելոց վանքում երևաց մի նոր ուսումնական հաստատություն՝ գյուղատնտեսական վարժարանը, որտեղ սովորում էին մի քանի տասնյակ աշակերտներ։ Պահպանված տեղեկությունների համաձայն, այդ վարժարանի բացմանը մասնակցել են Սասունի իշխաններից մի քանիսը։ 1889թ. Մուշի մեջ գործում էին վեց դպրոցներ։ Դպրոցներ բացվեցին նաև Սասունի մի շարք գյուղերում։ Այդ տարիներին սկսեց գործել նաև Մուշի կաթոլիկների առաջնորդարանին կից նարեկրթարանը, որը հետագայում վերանվանվեց Մուշի Մուրադ-Մխիթարյան վարժարան և 1903թ. տվեց իր անդրանիկ շրջանավարտները։

1890 թ. Մուշում և Սասունում էր գործում «Տալվորիկի կրտրիճ» երգի հեղինակ, հնչակյան գործիչ Միհրան Տամատյանը, որը ավարտել էր Մուրադ-Ռափայելյանի դպրոցը։ Բաղեշի բանտում հանդիպելով նրան Լինչը գրում է, որ մի պահ Մ. Տամատյանին հաջողվել էր «քուրտերու և հայերու միջև զինակցություն մը գոյացնել», այնուհետև Լինչը Մ. Տամատյանի մասին գրում է հետևյալ խոսքերը ասելով. «Տամատյան հայ հեղափոխականի լավ

տիպար մըն է. անիկա առողջ դաստիարակություն մը ստացել է Վենետիկի Մխիթարյաններու վարժարանին մեջ...»[1]։ Լինչը նաև ծանոթանում է Մուշում եղած հայկական դպրոցների հետ և ցավով նշում է, որ թուրքական բռնակալական երկրում Մուշի «հայ համայնքը չի կրնար կանոնավոր ուսում մը ստանալ, որովհետև հայոց պատմության հետ կապ ունեցող որևէ գիրք իշխանության կողմե կը գրավվի»[2]։

Սակայն շուտով այդ բոլոր ծաղիկները պիտի խամրեին, քանի որ 1894—96 թվականներին օսմանյան կառավարությունը սկսեց գավառներում հայկական ահավոր ջարդերը։ Այս ժամանակից սկսած դադարեց գործելուց Հայոց միացյալ ընկերությունը, որը վերսկսեց իր գործունեությունը 1908թ. թուրքական հեղափոխության հաղթանակից հետո միայն։

* *
*

1880-ական թվականներից սկսած Տարոնը հանդիսացավ հայ ազգային-ազատագրական շարժման ամենակարևոր կենտրոններից մեկը։ Սուլթանական կառավարությունը ամեն ինչ անում էր, որպեսզի հայ ու քուրդ ժողովուրդների միջև եղած հարաբերությունները ավելի մութ ու վատ կերպարանք ստանան։

Շատ բնական է, որ ժողովրդի հարստահարումները, ազգային արժանապատվության ոտնահարման փաստերը նրան կամա թե ակամա պետք է տաներին ազատագրության մասին մտածելու և այդ ուղղությամբ գործնական քայլերի դիմելու ճանապարհը։ Ցավով նշենք, որ կան առանձին ուսումնասիրողներ, որոնք այն միտքն՝ են հայտնում, որ XIX դարի վերջին քառորդի հայ ազգային-ազատագրական շարժումները ներմուծված էին դրսից, դրանք ներսում հող չունեին և հրահրվում էին ինչպես Ռուսաստանի, այնպես էլ եվրոպական պետությունների և հայ կուսակցությունների կողմից։

Այդ ուսումնասիրողները, ինչ խոսք, սխալ են, քանի որ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները օրինաչափ էին։ Ուրիշ կերպ լինել չէր կարող, երբ թուրքական պետության

---

1 Լինչ, Հայաստան, Բ հատոր, էջ 180։

2 Նույն տեղը, էջ 206։

կողմից սահմանված հարկերը շատ ու շատ էին, երբ անտանելի էին դարձել ամեն փոքր բանի համար մարդկանց խոշտանգումները, երբ հայերի ազգային արժանապատվությունը ոտնահարվում էր ամեն օր և ամեն ժամ, երբ մարդը մտածում էր, որ իր ունեցվածքը ուզած րոպեին կարող են խլել, իր ընտանիքի պատիվը արատավորել։ Ինչ պետք է անի հայ գյուղացին կամ արհեստավորը. կամ պետք է հարմարվի իրականությանը և ստրուկի նման հաշտվի ստեղծված իրավիճակի հետ, կամ պետք է թողնի հայրենի երկիրը և հեռանա, կամ էլ թե չէ, մնալով տեղում պետք է միջոցներ փնտրի այդ ծանր վիճակից դուրս գալու համար, այսինքն պետք է բռնի ինքնապաշտպանության ուղին։

Վ. Նավասարդյանը առանց հիմք ունենալու գրում էր. «Անկախության գաղափարը հայ ժողովրդի սեփականությունն էր դարձել, սակայն ոչ միայն իբրև ներքին պահանջ, այլ իբրև արտաքին թելադրանք։ Ոչ միայն ինքը հայ ժողովուրդն է ձգտում անկախության իր ներքին ենթակայական մղումներով, այլև դրսի, արտաքին ուժերն առարկայորեն նրան մղում են դեպի այդ նպատակայանը, որովհետև իրենք ձգտում են նրան»[1]։

Բայց դրսից թելադրողներից ո՞ր մեկն էր հայերին անկախություն խոստացել։ Ո՛չ մեկը։ Հայ ժողովրդի արևմտյան հատվածը երկրում ստեղծված ծանր պայմաններից ելնելով էր, որ ոտքի էր կանգնում. այս մի օրինաչափ, անհրաժեշտ շարժում էր, որը անկախ էր մարդկանց կամքից, այն մի պրոցես էր, որ ստեղծված էր վերը նշված պայմանների պատճառով։ Վերլուծելով XIX դարի վերջին քառորդին Մուշի ժողովրդի վիճակը, հայ մեծ՝ երգիծաբան Հ. Պարոնյանը իրավացիորեն գրում է. «Չկա հոն ո՛չ ստացվածքի ապահովություն, ո՛չ կենաց և ո՛չ ալ պատվո երաշխավորություն, այլ կան հոն հափշտակություն, մարդասպանություն, պատվո բռնաբարում...»[2]։

Ամբողջ Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ վայրերում ժողովուրդը անտանելի վիճակի մեջ էր։ Մուշը այդ երկրից դուրս չէր գտնվում։ 1870-ական թվականների վերջերից սկսած օսմանյան արքունիք ուղարկվեցին մի շարք թագրիրներ Տարոնի հայ բնակչության նկատմամբ գործադրվող բռնություն-

---

1 Վ. Նավասարդյան, Դաշնակցության քաղաքական ուղին, Գահիրե, 1925, էջ 25։

2 Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 11, էջ 35։

ների մասին։ Սակայն համիդյան կառավարությունը թողնում էր անհետևանք։ 1880 թ. մարտին պատրիարքը մի թագրիր է ուղարկում կառավարությանը այն մասին, որ Մուշի և Ճապաղջուրի հայերը տարիներ շարունակ կեղեքվում և թալանվում են և Բերլինի կոնգրեսի կողմից ընդունված հոդվածը չի կենսագործվում[1]։ Սակայն անօգուտ, բողոքները դարձյալ մնում են որպես ձայն բարբառո հանապատի։

1882թ. հունիսին կառավարությանն է ուղարկվում դիմում Մուշի Բուլանըխից այն մասին, որ կառավարական պաշտոնյաները և բանակի սպաները շարաշահում են իրենց պաշտոնները և բնակչությունից բնամթերքով հարկեր են հավաքում։ Սակայն իզուր, թուրքական կառավարության համար ոչ մի նշանակություն չունեին այդ թագրիրները և նրանց մեջ նշված փաստերը։ 1883թ. հայոց պատրիարքը, ելնելով տեղերից ստացված աղերսալի նամակներից, ուղարկում է նոր թագրիրներ Մուշի սանջակում, Բուլանըխի մի շարք հայկական գյուղերում գյուղացիների հողերի անօրինական գրավման և կատարված եղեռնագործությունների մասին։ 1884թ. փետրվարի 8-ին գրվում է թագրիր, թե ինչպիսի կեղեքումներ ու հանցագործություններ են կատարվում Մուշի սանջակում ոմն Մահմեդ Ալիի և նրա հրոսակների կողմից Սրան հաջորդում է 1885թ. օգոստոսի 25-ին ուղարկած մի նոր թագրիրը այն թալանի ու կեղեքումների մասին, որին ենթարկվում է Մուշի դաշտի բնակչությունը։ Վերջապես 1887թ. փետրվարի 18-ին գրված մի ուրիշ թագրիր հավաստում է Մուշում տիրող անտանելի դրության և կրոնական հալածանքների մասին[2]։ Թուրքական կառավարությունը, նրա «կարմիր» սուլթանը իրենց առաջ գրել էին հայերին ջարդելու միջոցով հայկական հարցը հրապարակից հանելու խնդիրը։ Այդ տարիներին Թուրքիայի ժողովրդական լուսավորության մինիստրության համապատասխան կարգադրության հիման վրա արգելվեց հայկական գպրոցներում հայոց պատմության դասավանդումը։

Այդ առիթով 1889թ. մարտի 11-ին պատրիարքը դիմում է ներկայացնում կառավարությանը չհասկանալով, որ այդ կարգադրությունը կատարվել է կառավարության կամքով, որը վարում էր պանիսլամիստական քաղաքականություն։ Միամիտ հոգևո-

---

1 Մ. Ներսիսյանի նշվ. աշխ. էջ 490, 491, 492։

2 Տես՝ նույն տեղը, էջ 496—498։

լուկանը բողոքում է նաև այն մասին, որ Էրզրումի մաքսատան պաշտոնյաները չեն թողնում սահմանից դեպի Արևմտյան Հայաստան տանել «Նարեկ», «Մաշտոց», «Ժամագիրք», միայն նրա համար, որ այդ գրքերի վրա կար «Հայաստան» և «Հայաստանի եկեղեցի» բառերը։

Բեռլինի կոնգրեսից անցան տարիներ, սակայն հայ ժողովրդի արևմտյան հատվածի կյանքի մեջ ոչինչ չփոխվեց։ Նորից շարունակվեցին անլուր տառապանքները։ Դրանից հետո էլ դրվեցին շատ թագրիրներ Մշո դաշտի ժողովրդի անտանելի վիճակի մասին, սակայն սպանությունները,[1] թալանը, առգրավումները, անօրինականությունները շարունակվեցին ինչպես դատական, այնպես էլ քաղաքացիական պաշտոնյաների կողմից։

XIX դարի վերջին տասնամյակներին արդեն արմատական փոփոխություններ տեղի ունեցան հայ-քրդական հարաբերություններում։ Օսմանյան պետության և նրա պաշտոնյաների վարած նուրբ քաղաքականությունը տվել էր սուլթանական պետության համար իր ցանկալի, սակայն առանձնապես հայերի համար ոչ հաճելի պտուղները։ Հայ-քրդական հարաբերությունները ավելի ու ավելի էին սրվել։ Այնպիսի խոր անջրպետ էր առաջացել երկու ժողովուրդների միջև, որ անհնարին էր նրանց ամբողջական միավորումը ընդդեմ օսմանյան կառավարության։ Քրդական ցեղապետներից շատերը և հատկապես Կուփ Մահմեդը և նրա շրջապատի մարդիկ շատ լավ էին հասկանում, որ «տաճիկ կառավարությունը եթե քուրդերուն երես է տված, պարզ այն պատճառով է, որ դեռևս չի փակված հաշիվները հայերու հետ»[1]։ Ապա «քրդերեն կային այնպիսիները որ կը հասկնային խային ռոմի նենգությունը»[2]։ Քրդական ցեղապետներից ոմանք նաև ասում էին. «Ռոմ խային է, դա տը խաբին է (թուրքը գավադիր է, քեզ կը խաբե)»[3]։

Ալեդին տան վերջին շառավիղը՝ Մուսա բեկը, ուներ իր զինված հրոսակախումբը, որը 1880-ական թվականներին անարգել

---

1 Արամ-Ռուբեն, *Հայ հեղափոխականի մը հիշատակները*, Բ հատոր, էջ 253։

2 Նույն տեղը, էջ 279։

3 Կ. Սասունի, *Սարերու ասլանը* (Գ. Չավուշի կենսագրավեպը), Պեյրութ, 1966, էջ 225։

կողոպտում էր հայկական գյուղերը։ Այս բեկի ավազակային վարք ու բարքի դեմ սկսեցին բողոքել Ագրեվանք գյուղի ռես Օհանը և Ղարս գյուղի ռես Միրոն։ Մուսա բեկը բանտարկվեց և տարվեց Բիթլիս, սակայն շատ չանցած ազատվեց։ Մուսա բեկին դրանից հետո 1889 թ. հաջողվում է ռես Օհանին կրակի վրա կենդանի-կենդանի այրել, իսկ որոշ ժամանակ անց գազազած ցեղապետը 150 զինվորներով գնում է Ղարս գյուղը, մտնում է ռես Միրոյի տունը, սպանում է նրա ընտանիքի մի քանի անդամներին և ապա առևանգում նրա եղբոր աղջկան՝ Գյուլիզարին։ Դրանից հետո գազազած բեկը հարձակվում է Տափավանքի Աբրահամի տան վրա, սպանում նրան և կողոպտում ունեցվածքը, նույնն է անում Սոխորթ գյուղի մեջ Հակոբի տան նկատմամբ։

Մեր ձեռքի տակ են Գյուլիզարի հուշերը, որ գրի է առել նրա աղջիկը՝ երգչուհի Արմենուհին։ Ըստ նրա հուշերի, քաջալերված թուրքական կառավարության կողմից, այդ բեկը կողոպտում և ավարի էր ենթարկում շրջակա հայ գյուղերը. «Ան ուներ սիրուհիներ ամեն գյուղի մեջ...» և անընդհատ անկոչ հյուր էր առանձին հարսանիքների, որի ժամանակ էլ շատ անգամ «փեսայեն առաջ կը մտներ հարսին սենյակը, և բռնի կը հոգեցներ իր գազանային կրքերը»[1]։

Վերը նշված գազանությունները տեսնելով Մուշի դաշտի վաթսունվեց գյուղապետներ և գործիչներ բողոքելու նպատակով բրոնում են Կոստանդնուպոլսի ճանապարհը։ Այդ մասին կառավարությանը բողոք է ուղարկում նաև Մուշի առաջնորդարանը։ Գործին միջամտում է նաև Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքը, հանգես են գալիս եվրոպական դեսպանություններն ու թերթերը։ Դրանից հետո դեռատի աղջկա առևանգման և նրա հարազատների գազանաբար սպանության հարցը թուրքական գատարանի քննարկման առարկա է դառնում։ Սկզբում նրա դատը եղել է Բիթլիսում, որի ժամանակ հայ գեղջկուհին, չվախենալով հետևանքներից, համարձակ ասում է. «Վալի էֆենտի, դուք ալ գիտեք, Աստված ալ գիտե, որ Մուսա բեկ գիշերանց 150 քուրտերով հարձակվեցավ հորս տան վրա, սպանեց ծնողքս, կողոպտեց մեր տունը, զիս առևանգելով տարավ Խվներ»[2]։ Այնուհետև

---

1 Արմենուհի Տեր-Կարապետյան (Գևոնյան), Գյուլիզար, Փարիզ, 1946, էջ 9։

2 Նույն տեղը, էջ 91։

նա ասաց. «Ես աղքատ հոտաղ մը կառնիմ, չեմ ուզեր հարուստ բեկին կին ըլլալ»[1]։

Մուսա բեկը 1889 թ. կանչվում է Կոստանդնուպոլիս, որտեղ և փոխադրվում է այդ դատը։ Այս բոլորը, ինչ խոսք, ձեռակալություններ էին, քանի որ թուրքական կառավարությունը վարում էր քրդերին և հայերին իրար դեմ հանելու քաղաքականություն։ Երբ Մուսա բեկը ոստիկանների հսկողությամբ տարվում է օսմանյան պետության մայրաքաղաքը, Էրզրումի հայերից մեկի հետ խոսելու ժամանակ նրան ցույց է տալիս մի քանի նամակներ, որոնք գրված էին «Կարնո, Բաղեշի և Վանի կուսակալներեն, թե իր բոլոր միջոցներով պետք է հարստահարել և հալածել հայերը»[2]։ Մուսա բեկը Կոստանդնուպոլսում թուրքական դատաքննչական մարմինների կողմից ենթարկվեց հարցաքննության։ Եղած տվյալների համաձայն, նա սպառնում էր թուրքական իշխանություններին, որ եթե դատարանը իրեն դատապարտի, ապա նա «կհրատարակե այն բոլոր նամակները, որոնց մեջ պավառական նահանգապետները նրան դրդում են մղել այն արշավանքները հայերի դեմ...»[3]

Եվ այսպես, մի քանի տասնյակ մշեցիներ մայրաքաղաքում ստիպված անցկացնում էին իրենց թշվառ օրերը և սպասում, թե երբ կսկսվի և կվերջանա իրենց բաց արած դատը Մուսա բեկի դեմ։ Դատը վերածվեց կատակերգության, չնայած նրան մասնակցում էին եվրոպական շատ երկրների ներկայացուցիչներ։ Թուրքական կաշառված դատարանը և պաշտոնյաները պաշտպանեցին եղեռնագործին։ Մշեցիների դատապաշտպան Թանկրը Սիմոն Էֆենդին վճռից հետո դիմեց Բ. Դռանը խնդրով. «Բնկանել և չեղյալ համարել եղեռնապատ ատյանի վճիռը իբրև ապօրեն»[4]։ Դատարանը քննարկեց նաև Մշո Արդկոնք գյուղի բնակիչ Մկրտիչ Հովհաննիսյանի խնդիրը այն մասին, որ Մուսա բեկը այրել է իրենց ընտանիքի կալն ու ամառանոցը, մտնելով իր հայրական տունը, կապել է հորը և եղբորը և միայն 20 ոսկի ստանալով հեռացել։ Ապացուցվեց նաև, որ Մուսա բեկը սպանել է ջրաղացպան Մալխասին։ Երկու այս փաստերի մասին վկայե-

---

1 Արմենուհի Տեր-Կարապետյանի (Գևոնյան) հուշերը..., էջ 95։

2 Միհրան Տամատեան (1863—1945), գրեց Գ. Յ. Տեփոեան, Գահիրե, 1956, էջ 39։

3 «Հնչակ», 1889 սեպտեմբեր, №8։

4 Նույն տեղը, №4։

ցին վեց աշխարհականներ և երկու հոգևորականներ, սակայն անօգուտ, թուրքական դատարանը «արդարացրեց» հանցագործին[1]։ Ռես Օհանի կինը Կոստանդնուպոլիս է տանում «ամուսնու ածխացած ձեռքերը»[2]։ Ապա Գյուլիզարը պատմում է. «Դատարանին մեջ երես երեսի եկա Մուսա բեկի հետ, անվախ թվեցի իր կատարած ոճրագործությունները և զիս բռնի թաղցնելու փորձերը»[3]։ Սակայն թուրքական դատարանը ամեն ինչի գնով ցանկանում էր «արդարացնել» ոճրագործին։ Այդ մասին Գյուլիզարը գրում է. «Դատավարության ընթացքին դատախազին վերաբերմունքը շատ խիստ էր հանդեպ անգրագետ հայ գյուղացիներուն, որոնք վկայության եկած էին։ Դատախազը ամեն ճիգ գործ կը դներ զիրենք շփոթեցնելու և ցույց տալու, որ զրպարտիչներ են»[4]։ Երբ 1889 թ. դեկտեմբերի 5-ին դատարանը Մուսա բեկին արդարացրեց, դրանից հետո սկսվեց բողոքների մի ամբողջ շրջան և վերջապես թուրքական դատարանը բողոքներից և արտաքին միջամտություններից հետո ստիպված եղավ ընդունել Մուսա բեկին Մեքքա աքսորելու մասին վճիռը։ Սակայն 1908 թ. հեղաշրջումից հետո հանցագործը նորից վերադարձավ Տարոն։ Ուժերի հավասարակշռության պահպանության հարց էր, թուրքական կառավարությունը չէր ցանկանում վերացնել Տարոնի հայության գլխին կախված Մուսա բեկի սուրը։

Չնայած վերը նշվածին, Մշո դաշտի գյուղերում այդ կարգի փաստերը շարունակվեցին։ Մուսա բեկի եղբայր Ջազոն իր ուժերով մտնում է Ագրեվանք գյուղը և փորձում է այրել ռես Օհանի տունը։ Սակայն նա հանդիպում է գյուղացիների զինված դիմադրությանը։ Շատ չանցած սկսվում է Ջազոյի և Վարդենիսի բնակիչների միջև կռիվը։ Վարդենիսցիները հարևան գյուղից հարս էլ տանում։ Ջազոն իր ուժերով հարձակվում է հարսանեկան թափորի վրա և ցանկանում է առևանգել հարսին։ Երկուստեք սկսված կռիվը ավարտվեց նրանով, որ ինչպես քրդերի, այնպես էլ հայերի կողմից կային սպանվածներ և վիրավորներ։ Վերջապես հարսանեկան թափորը կռվով հասնում է Վարդենիս։ Դրանից հետո քրդական նոր ուժերը շարժվեցին դեպի Վարդենիս,

---

1 «Հնչակ», 1889 սեպտեմբեր, №4։

2 Արմենուհի Տեր-Կարապետյանի հուշեր..., էջ 100։

3 Նույն տեղը, էջ 107։

4 Նույն տեղը։

սրի բնակիչները, վարժապետ Մարգարի գլխավորությամբ, ոտքի ելան և պաշտպանեցին իրենց գյուղը։

Թուրքական պաշտոնյաներին առիթ էր պետք բանտարկություններ սկսելու համար և նրանք օգտագործեցին այն։ Վարժապետ Մարգարի վարմունքը որակվեց որպես հայդուկային։ Նա բանտարկվեց, այնուհետև կախաղան բարձրացվեց, իսկ քրդական վերնախավից ոչ ոք չենթարկվեց պատասխանատվության։

Մարգար վարժապետը (Ամիրյան) ծնվել է 1858 թ. Վարդենիս գյուղում, որտեղ ստացել է իր սկզբնական կրթությունը, ապա յոթ տարի սովորել է ս. Կարապետ վանքի դպրոցում։ 1879 թ. երբ նա վերադառնում է գյուղ, հիմնում է դպրոց և գյուղացիներին մղում է դեպի ինքնապաշտպանության։ Դրանից հետո նա գյուղի դպրոցի կառուցման հարցերով գալիս է Կովկաս, ծանոթանում Գր. Արծրունու և Բաֆֆու հետ, ապա անցնում Կ. Պոլիս և հանդիպում է Մ. Խրիմյանին։ Վարդենիսի դեպքից հետո նորից մեկնում է Կովկաս և ապա Արաբոյի խմբի հետ անցնում Երկիր։ 1892 թ. Ավազուտ գյուղում թուրքական մի սպայի սպանության պատճառով բանտ է նետվում, չնայած ինքը մեղսակից չէր այդ գործին։ Թուրքական դատարանում նա ընդունում է «իր հեղափոխական լինելը և աներկյուղ պարզում այն պատճառները, որոնք ստիպել էին նրան կռվի դուրս գալ անարդար ու բռնակալ կառավարության դեմ»[1]։ Մարգար վարժապետը դատապարտվում է մահվան և կախվում է Բազեշում 1893 թ. հունվարի 27-ին։ Կախաղանից առաջ նա ասել է. «Հայե՞ր մի՛ վհատիք, քաջ գիտցեք, որ այլևս հասած ենք մեր նպատակին։ Թեև ես կմեռնեմ, բայց դուք պիտի ապրեք։ Միայն այն երջանիկ ժամանակ դիս չմոռնաք։ Եթե խանդակաթ այցելուներ ունենամ գերեզմանիս շուրջը, ոսկերքս ալ կը հրճվին ու կը խայտան»[2]։ Մարգար վարժապետի «դիակը երեք օր մնացել է կախաղանի վրա իբրև խրատական օրինակ ուրիշներու»[3]։

1890 թ. Լաչրքանցի քրդական ուժերը արշավեցին դեպի Խզրլաղաճ հայկական գյուղը և ցանկացան գրավել այն։ Գյուղի բնակիչները դիմեցին և փորձված հայդուկ Հրայրի (Արմենակ

---

1 Ցուցապատում, Հ. Ց. Դաշնակցութեան, 1890—1950, Բոստոն, 1950, էջ 347։

2 Նույն տեղը, էջ 347—348։

3 Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Գ հատոր, Լոս Անջելես, 1951, էջ 54։

Ղազարյան) զինավորությամբ դիմադրություն կազմակերպեցին։ Քրդերը, տեսնելով գյուղացիների անընկճելի ուժը, ստիպված թողեցին և հեռացան։

Վարդենիսի և Խզզլաղաճի գյուղացիների դիմադրությունները միաժամանակ հասկացրեցին թուրքական կառավարողներին, որ Տարոնի հայերը նախկին հնազանդ ռայան չեն և հարկ եղած դեպքում կարող են և այն էլ զենքով, պաշտպանել իրենց գյուղի և ընտանիքի պատիվը։ Վերջապես նրանք հասկացան նաև, որ ռայան արդեն դարձել է զինված մի ուժ, որին ընկճելը կապված է զգալի զոհերի և դժվարությունների հետ։

Հայ ժողովուրդը, սակայն, ամբողջությամբ վերցրած, անզեն կանգնած էր գայլերի ոհմակի առջև։ Եթե չհաշվենք լեռնական զեյթունցիներին, սասունցիներին և մի քանի այլ տեղերի բնակիչների, որտեղ ժողովուրդը մասնակիորեն զինված էր, ապա մնացած մասերում նա զենք չուներ։ Սակայն ինչպես դինվել։ Թուրքական կառավարությունը մահմեդական կրոնին պատկանողներին ազատորեն թույլ էր տալիս զենք կրել, իսկ քրիստոնյաները՝ հայերը, ասորիները, հույները իրավունք չունեին զենք կրելու։ Եթե հանկարծ նրանց մոտ զենք էր հայտնաբերվում, մեղադրվում էին ազատագրական շարժմանը մասնակցություն ունենալու մեջ և ստանում 101 տարի կալանք։ Այսպիսով, հայը պետք է գաղտնի զինվեր և այն էլ իր սուղ միջոցների հաշվին։ Զենքը նա ձեռք էր բերելու թանկ գնով, մաքսանենգներից, որոնք ռուսական և եվրոպական զենքերը կարող էին անցկացնել սահմանից դեպի Երկիր և վաճառել արևմտահայերին, իսկ վերջիններս ստիպված գնում էին, վախենալով ապագա արհավիրքների ուրվականից։

Զենք կարող չասել, որ հայրենի զենքի դիմելու և պաշտպանվելու մեջ ոգևորում էր բալկանյան ժողովուրդների օրինակը։ Նշենք, որ Դիարբեքիրը արդեն դարձել էր բուլղար հեղափոխականների աքսորավայրը և 1867 թ. այդտեղ հասավ աքսորականների առաջին խումբը, որի մեջ էր նաև բուլղարական հայտնի հայդուկապետ Պայտեոդ Խիտովը։ Նրանք ապրում էին մի փոքրիկ սենյակում և «բեռնակրությունով ինչ դրամ որ վաստակեին, այնպիսով կապրեին, հավաքաբար ծախսելով և կերակուր հայթայթելով»[1]։

---

1 Տ. Մկռնդ. *Ամիտայի արձագանքները*, 1950, էջ 183։

Հայերի հետ հանդիպումների ժամանակ Պ. Խիտովը հասկացնում էր նրանց, որ հարկավոր է զենք գործածել սովորել։ Եվ Դիարբեքիրի երիտասարդությունը որսորդության անվան տակ, սկսեց սովորել զենքի գործածությունը։ Հետագա տարիներին Դիարբեքիր աքսորվեցին բուլղար արքեպիսկոպոսների նոր խմբեր։ Բուլղարիայի կառավարիչ Միդհատ փաշան 1870 թ. անում էր ամեն ինչ բուլղար հեղափոխականներին և ընդհանուր տարրերին երկրից արտաքսելու գործում։ Միծաղելի է, սակայն փաստ է, որ բուլղարացիների հետ Դիարբեքիր էր աքսորվել մի թուրք, որի հանցանքը «այն էր, որ պուլկար հեղափոխականներու ձիերուն պայտերը գամեր է»[1]։ 1876թ. ապստամբության պարտությունից հետո աքսորականների նորանոր խմբեր եկան Ամիդ։ Սրանց գաղափարները, բնական է, պետք է թափանցեին Արևմտյան Հայաստան, հատկապես Մուշ և Սասուն, որոնք Ամիդից շատ հեռու չէին գտնվում։

1878 թ. Կոստանդնուպոլսից Ամենայն հայոց կաթողիկոսին ուղարկված մի դիմումում, որի տակ ստորագրել էին 4 հազար մարդ, նշվում էր բուլղար ժողովրդի ծանր վիճակի մասին։ Ասվում էր, որ այնտեղ կատարված «ամենայն անցք աղիողորմք որ հասին 'ի վերջին աւուրս ի վերայ ազգին բուլկարաց յանականոն զորաց օսմանեան բանակին»[2]։ Թուրքական լուծը նրանք համարում են «զլուծ գերութեան ի բուլկարաց քրիստոնեից»[3]։ Այս տողերը գրելուց հետո նրանք միաժամանակ նշում են, որ նույնանման վիճակում է գտնվում նաև հայ ժողովուրդը. «Արդարև քանի դարեն զի ազգ մեր անկեալ է ընդ հպատակութեամբ թրքաց. զտիւ և զգիշեր. անդուլ անդադար տագնապիմբ անագորույն չարչարանօք 'ի գաւառապետաց, 'ի հարկահանաց, 'ի գործակալաց և յայլոց բռնաւորաց, մինչ իսկ առ առակն շրջեցուցանել նոցա զհովիւս եկեղեցւոյ մերոյ, խայտառակել զհամեստութիւն կանանց և զպատիւս կուսանաց մերոյ, խողխողել զերիտասարդս մեր և զծերս, անարգել զսրբութիւն տաճարին և զխաչի։ Բաբե յորպիսի թշվառութիւն մատնեցին զեղբայրս մեր յափշտակեցին զինչ նոցին, և յաւարի առին զամենայն ինչ-որ գտին ի հիւղս գեղջկաց»[4]։

---

1 Տ Մկուեդ, Ամիտայի արձագանքները, էջ 189։

2 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 228, վավ. 23։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը։

Դիմումի հեղինակները գրում են այնուհետև, որ ժողովրդի տառապանքների մասին բազմիցս գրել են թուրքական նախարարներին, սակայն անօգուտ։ Ուստի գտնում են, որ պետք է վեր խոյանալ բուլղարների նման և թոթափել թուրքական լուծը։ Դիմումի վերջում նրանք գրում են. «Ապա թե ոչ, վեհափառ հայր, եթե ոչ լինիցին վախճան ցաւոց մերոյ, եթե տևիսցե բաւիսցե գերութեանս դառնալից աւարք, եթե դեռևս լացցեն հարսունք զիւրեանց նորատի փեսայս, ո՜հ, մի՛ լիցի մեզ հասնել ոյնմ աւուր, այլ բա բե. օրինակ առաջի աչաց մեր, զԲուլգարացն ասեմ, զայն օրինակ թօթափեսցուք և մեծ զլուծ գերութեանս՝ հեղմամբ արեան մերոյ»[1]։

1860-ական թվականներին հրապարակ իջավ հայ ազգային սահմանագրությունը, հայերի մեջ ամենուրեք տարածվում էին Մ. Նալբանդյանի ազատության մասին գրված բանաստեղծությունները և նրա Կոստանդնուպոլսի համախոհների գաղափարները։ Շատ բնական է, որ ազատագրական շարժման մթնոլորտ էր առաջանում նաև Մուշում և Սասունում։ 60-ական թվականներին Մուշում սկսեցին լայն տարածում գտնել նաև Մ. Խրիմյանի և Գ. Սրվանձտյանի կողմից հրատարակած Մուշի առաջին պարբերականի «Արծուիկի» գաղափարները։ Ժողովուրդը գնում էր ազատության համար պայքարի։ Հետագայում ինչպես Վանի «Փրկություն ի միություն», «Սև խաչ», Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունների առկայությունը չէր կարող իր ազդեցության ոլորտը չառնել նաև Մուշի և Սասունի ժողովրդահատվածներին։ Այդ միությունների և գործիչների հայացքները թափանցում էին Մշո դաշտը, անցնում դեպի Սասունի անառիկ լեռները, ուր ապրում էր հայ ժողովրդի ամենամարտունակ և ռազմիկ հատվածներից մեկը՝ Սասունի բնակիչները, որոնք դարերի ընթացքում անհնազանդ լինելով, կռիվների ժամանակ վախ ու սարսափ չունեին և իրենց լեռնակատարների ու ժայռերի նման հաստատուն կերպով նստած էին իրենց բնակավայրերում։

1877—78 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո, ինչպես արդեն ասվեց, դրվեց սեփական ուժերով թուրքական բռնակալության դեմ պայքարելու և ազատագրվելու հարցը։ Հայ ժողովրդական հատվածների մի մասը վեր խոյացավ զուլումի ռեժիմի դեմ։ Այդ խոյանքներով նա ամբողջ քաղաքակիրթ

---

1 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 228, վավ. 22։

աշխարհին ցույց տվեց, որ ունակ է զենքը ձեռքին պաշտպանելու իր ընտանիքի պատիվը։ Եվ ռուս-թուրքական պատերազմից հետո հայ ժողովրդի առանձին հատվածների մեջ տարածված էր այն միտքը, որ հարկավոր է կռվել թուրքական բռնակալական ռեժիմի դեմ և կռվով ազատագրվել։ Այսպես սկսվեց տասնամյակների մի համառ և արյունոտ պայքարի ժամանակաշրջան, սակայն ցավով նշենք, որ հայ ժողովուրդը քիչ արդյունքի հասավ, քանի որ ցրված էր, շատ դեպքերում էլ անկազմակերպ։ Ավաղ, նրա ուժերը թույլ էին այդ նպատակին հասնելու համար։

Սակայն ներքին մի կրակ, ազատագրվելու մի հսկայական տենչ նրան մղում էր դեպի փրկություն։ Ճիշտ է, նրա կուսակցությունների տակտիկան ճիշտ ուղիով չէր տանում իր ժողովրդին, բայց և այնպես նա մաքառում էր։ Այդ մի մաքառում էր, որի նպատակն էր ազատագրվել թուրքական բռնակալությունից։ Եվ մաքառումների այդ ճանապարհին նա համախոհներ էր որոնում, ցանկանում էր միանալ ասորիների հետ, եզդիների հետ, նույնիսկ փորձեր էր անում լավացնել իր հարաբերությունները քրդերի հետ, որը և մեծամասամբ նրան չէր հաջողվում։

Միանգամայն իրավացի են մասնագետները, երբ նշում են, որ սուլթանիզմի դեմ ուղղված հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները ոչ թե առաջանում էին Լոնդոնում, ուր գտնվում էր անգլո-հայկական ընկերությունը, ոչ թե բխում էին հնչակյան, դաշնակցական և արմենական կուսակցությունների պրոպագանդայից, այլև այն դաժան հարկային ու սոցիալական քաղաքականությունից, որը վարում էր օսմանյան կառավարությունը հայերի նկատմամբ։ Իսկ ինչ վերաբերում է Սասունի լեռնականների ազատագրական պայքարին, ապա նրա ժամանակ «կռվողներուն ջախջախիչ մեծամասնությունը կը կռվեր իր ընտանիքը, տունը, հողը, հոտը պաշտպանելու, քուրդ ցեղապետներուն ճորտ չդառնալու և կառավարության բռնություններեն խուսափելու կամքով»[1]։

XIX դարի վերջին տասնամյակներին Մուշը և նրա հարևան Սասունը դարձան հայ ազգային-ազատագրական շարժման ամենակարևոր օջախներից մեկը։ Այս բանի համար Տարոնն ուներ երկու առավելություն. նախ՝ ստվար հայկական բնակչություն, երկրորդը՝ լեռներ, որոնց վրա ապրում էին սասունցի արծիվ-

---

[1] Ջորմիսյանի նշվ. աշխ., էջ 257։

ները, որոնք թշնամիների դեմ մաքառելու դաբերի փորձ ունեին, որտեղ պահպանվել էին ազատ լինելու և ազատության համար մաքառելու գաղափարը։

1870-ական թվականներից սկսած օսմանյան կառավարությունը էլ ավելի սկսեց սիրաշահել քրդական վերնախավին, որն իր հերթին սկսեց կամաց-կամաց հարմարվել ստեղծված պայմաններին և ավելի համերաշխվել թուրքական իշխանությունների հետ, մի բան, որ շատ ձեռնտու էր սուլթանական կառավարությանը։ Մինչև 1877—78 թվականների ռուս-թուրքական պատերազմը քուրդ և հայ ժողովուրդների նախկինից մնացած բարեկամության և համագործակցության նշանները դեռևս լիովին չէին անհետացել։ Կային շատ դեպքեր, երբ հայերը և քրդերը միավորվում էին և պայքարի դրոշ էին բարձրացնում կառավարական ուժերի և ոստիկանության դեմ։ Այսպես, 1864 թ. թուրքական բանակները նպատակադրվեցին ներխուժել Սասուն, սակայն հայ-քրդական միացյալ ուժերը միավորվելով, Բաթմանա կամրջի մոտ այնպիսի հարված հասցրին թշնամուն, որ նա չկարողացավ այնտեղ մտնել[1]։ Այս միավորումն ու դիմադրությունը, ինչ խոսք, շատ օգնեց սասունցիներին, որոնք մինչև 1890-ական թվականները մնացին կիսանկախ վիճակում։

Մինչև 1860-ական թվականները Սասունի հայերը հաշվվում էին մի աշիրեթ, իրենց իշխաններով և մի փոքրիկ հարկ էին վճարում քուրդ տիրակալներին։ Նրանց իշխանության վերացումից հետո քրդական բեկերը սկսեցին զեկավարել իրենց փոքր շրջանները, իսկ Սասունի հայերը՝ զեկավարվեցին իրենց իշխաններով։ Սակայն քրդական առանձին աշիրեթապետներ ձգտում էին Սասունի հայերից վերստին հարկ գանձել, ինչպես անում էին քրդական դերեբեյությունների գոյության ժամանակաշրջանում։ Լեռնականները չէին համաձայնվում պատճառաբանելով, որ նրանք հարկատու են կենտրոնական կառավարությանը և չեն կարող երկու հարկ տալ։ Այս կապակցությամբ սկսվում էին սրվել հակամարտությունները սասունցիների և քրդական աշիրեթապետների միջև։

Օսմանյան կառավարության կողմից քրդական վերնախավին սիրաշահելու մյուս ճանապարհը նրանց հոգևոր պետերին՝ շեյխերին հովանավորելն էր։ Այստեղ թուրքական կառավարությունն

---

1 Տե՛ս Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 523։

օգտագործում էր կրոնական հզոր մի գործոն՝ իսլամը, որն ընդունել էին քրդական ցեղերը։ Հենց այս ժամանակաշրջանից էր, որ թուրքական իշխանությունները սկսեցին չնկատելու դնել քրդական բեկերից շատերի վայրագ վերաբերմունքը դեպի հայերը։Օգտվելով այդ հանգամանքից, որոշ քուրդ ցեղապետներ ցանկանում էին իրենց ենթարկել հարևան սասունցիներին։ Վերջիններս զինված էին և հարկավոր էր նրանց ճնշել ուժի միջոցով, իսկ այդ ձեռնտու էր նաև օսմանյան կառավարությանը, որը նույնպես խորհում էր իրեն ենթարկել Սասունի լեռներում գտնվող այդ անհնազանդ տարրը։ Այստեղ քուրդ ցեղապետների և օսմանյան կառավարողների շահերը միաձուլվում էին։

Կառավարության վարած հայահալած քաղաքականության հետևանքով Խուլբի շրջանի հայերը ստիպված որոշ հարկ էին տալիս նաև քուրդ աշիրեթապետին։ Բացի դրանից գյուղացիները պարտավոր էին կերակրել նրան և իր զինված ուժերին ու նվերներ տալ։

Մի գեղեցիկ օր Սասունի Ահրոնք գյուղի բնակիչները խրոշեցին քուրդ աշիրեթապետին այլևս հարկ չտալ, հայտարարելով, որ նրանք արդեն հարկը վճարում են օսմանյան կառավարությանը։ Շուտով Սասունի մի շարք գյուղերի բնակիչներ հրաժարվում են՝ կառավարական տուրքերից։ ՀՍՍՀ գրականության և արվեստի թանգարանի արխիվում պահպանված մի վավերագրում, որը գրված է 1894 թ. օգոստոսի 2-ին Սասունի գեպքերի թարմ տպավորության տակ, ասված է. «Մի քանի տարիներե ի վեր Տալվորիկ և նրա օրինակին հետևելով այս տարի ևս Գելիեզուզան, Իշխանոր, Աղբեն, Հերթինք, Շենքք, Սեմալ, Բազմահայոց գյուղերը կմերժեն բացարձակորեն կառավարության տուրք և շրջակա քուրդ ցեղապետներուն Խաֆիրության 2 տարեկան կտրված հարկը վճարել։ Սոցա կաշխատին հետևել Շատախու, Բերմի, Խուլպ և Խեյան ու Փսանա գավառի հայ բնակիչները և նպատակավ կանպատվեն ու կհալածեն ամեն տեղ հարկահան ոստիկանները»[1]։

1880 թ. Խուլբի Միրզա աղան իր մոտ է կանչում Սասունի Ահրոնք գյուղի Գրգո իշխանին և Շուղեք հայկական գյուղում սպանում է նրան։ Այդ իշխանը Սասունում և նրա շրջակայքում մեծ հեղինակություն ուներ։ Լսելով Գրգոյի սպանության մասին,

---

[1] ԳԱԹ-ի արխիվ, Հ. Առաքելյանի ֆոնդ, վավ. № 165, էջ 1։

Ահրոնք գյուղի ողջ ժողովուրդը ոտքի է կանգնում։ Նրանք այրում են հաշվեհարդարից փախած աղայի տունը, ապա վերցնելով իրենց իշխանի դիակը, վերադառնում են Սասուն։ Կառավարությունը վախենալով լեռնականների հուզումներից, ստիպված դատի է տալիս Միրզա աղային, ապա կախաղան է բարձրացնում, իսկ նրա եղբայրները և որդիները աքսորվում են Խուլբից[1]։ Աղայի ավերված և այրված տունը միշտ հասկացնում էր քրդական մյուս ցեղապետներին, որ Սասունի վրա ուժ գործադրելը այնքան էլ հեշտ բան չէ։

Քրդական որոշ ցեղերի ցեղապետներ ցանկանում էին իրենց ենթարկել Խիանքի և Բասանքի սահմանի վրա գտնվող Պերմ (Բերմ) հայկական գյուղը։ Իմանալով նրանց այդ նպատակի մասին, գյուղացիները կազմակերպեցին զինված պաշտպանություն և թույլ չտվին քրդական ուժերին մտնելու իրենց գյուղը։ 40 օրվա համառ պայքարը վերջացավ պերմցիների հաղթանակով, ապա նրանք վռնդեցին նաև թուրքական հարկահավաքներին։ Մ. Տամատյանը այդ առիթով գրել է Սասունի բարբառով մի փոքրիկ պոեմ «Պերմցոց քաջությունը» վերնագրով, որի մեջ նաև ասվում է այն մասին, թե թուրքական զավթիչները քրդական անհաջող արշավանքից հետո դաժան մեթոդներով ցանկանում էին հարկ հավաքել գյուղացիներից.

Ասոր վրա մեր գեղացիք
Սեծով քշեցին այդ զորքն անկարգ[2]։

Եվ ապա.

Ուրանք մարթին, մեր չախմախի
Մեր կռիվն էր անհավասար[3]։

Այսպիսով, Պերմի գյուղացիների պայքարը վերջացավ հաղթանակով։ Նրանք առժամանակ ազատվեցին հարստահարությունից։

Քրդական ցեղապետները շատ էին ձգտում հաստատվել Սասունում։ Նրանցից մեկը Բասանքի Մատին Առաքյալ կամ Գոմուց վանքի դիմաց կամենում էր տուն շինել։ Նպատակը պարզ էր. նա ցանկանում էր կամաց-կամաց հաստատվել Բասանքում, որի իշ-

---

[1] Լ. Զորմիսյանի նշվ. աշխ., էջ 152։
[2] Միհրան Տամատյան, էջ 266։
[3] Նույն տեղը, էջ 267։

խան Շառոն և Գոմուց վանքի վանահայր Պետրոս վարդապետը, կոահելով քուրդ բեկի մտադրությունը, ոտքի հանեցին ժողովրդին։ Սկսվում են երկուստեք կռիվները, որը վերջանում է սասունցիների հաղթանակով։

Հետաքրքիր է նաև Շենիկ գյուղի բնակիչների կռիվը, որը Սասունի պատմության մեջ հայտնի է որպես «յոթ գդալի համար կռիվ»։ Այդ գյուղի հոտերը ամռանը արածում էին Կուրտիկ լեռան շրջակայքում։ Քրդական մի ջոկատ գալիս է գյուղի ամառանոցը։ Հյուրասեր լեռնականները նրանց կերակրում են։ Սակայն քրդերը արհամարհելով նրանց հյուրասիրությունը, վերցնում են յոթը գդալները և ցանկանում են հեռանալ։ Խնդիրը յոթը գդալը չէր։ Հյուրասիրվելուց հետո մարդկանց արհամարհելը ոտքի է հանում շենիկցիներին, զինվում է ողջ գյուղը և սկսվում է կռիվը։ Քրդերը պարտվում են։ Դրանից հետո նրանք չեն համարձակվում դրսևորել նման վարքագիծ։

Սասունի իշխանները քրդական ցեղերի հետ իրենց հարաբերությունների օրըստօրե վատացումից ելնելով որոշում են հավաքվել և մշակել իրենց վերաբերմունքը քրդական վերնախավի նկատմամբ։

1885 թ. Ահրոնք գյուղում տեղի ունեցավ ժողով, որին մասնակցում էին Շենիկի իշխան Գրգոն, Գելիեգուզանից իշխան Պետոն և տեր Քաջը, Տալվորիկից իշխան Գասպարը և Թաթարը, Խիվանքից իշխան Վարդանը և ուրիշներ։ Ժողովին ներկա էին նաև Խուլբի բոլոր իշխանները, Հրայրը և Մշո ս. Կարապետ վանքի վանահայր Վարդան վարդապետը։

Ժողովը գալիս է այն եզրակացության, որ հարկավոր է զինվել, քանի որ քրդական ցեղապետները որոշել են ինչ գնով էլ լինի իրենց ենթարկել Սասունը։ Սակայն զինվելու համար հարկավոր էր կուտակել վառոդ, կապար, ընդարձակել Տալվորիկի երկաթի հանույթը և ունենալ չախմախլի հրացաններ կրող շատ մարդիկ։ Հայտնի է, որ վառոդը Սասունը հիմնականում ստանում էր Մշո Ցրոնք գյուղից, իսկ կապարը և վառոդի մի մասը բերվում էր Տիգրանակերտից։ Սասունի գյուղերում տեղի բնակիչները իրենք էլ վառոդ էին պատրաստում։ Ինքնապաշտպանության նախապատրաստվելու շրջանը փաստորեն ընդգրկում է 1887—1890 թվականները, որի ընթացքում Տալվորիկում սկսեց զգալի չափով ավելանալ երկաթի արտադրությունը, իսկ գյուղերում՝ վառոդի պատրաստման գործը։

Քրդական ուժերը ավելի լավ վիճակում էին գտնվում, քանի որ նրանք զենք ունեին և մանկությունից սկսած աղատորեն սովորում էին զենք գործածել։ Քրդական ցեղերին օգնելու եկավ նաև մի ուրիշ հանգամանք։ 1890-ական թվականների սկզբին հայկական հալածանքները սաստկացնելու նպատակով Աբդուլ Համիդը սկսեց ստեղծել քրդական զինված խմբեր, որոնք նրա անունով կոչվեցին «Համիդիե» գնդեր։ Շուտով Կոստանդնուպոլիս հրավիրվեցին 70 քուրդ ցեղապետներ, որոնց Ելտըզ Քյոշկում մեծ շուքով ընդունեց սուլթանը, նրանք ստացան թանկագին նվերներ։ Սկզբնական շրջանում կազմակերպվեցին այդպիսի 24 գնդերը[1], ապա նրանց թիվը ավելացավ։ Համիդիե գնդերի թիվը 1899 թ. արդեն հասնում էր 140-ի, որը իր մեջ միավորում էր 70 հազար ձիավորների։ 1904 թ. ստեղծվեցին ևս 32 նոր գնդեր, սրանց մեջ ընդգրկվեցին նաև Սվազի չերքեզները և միայն ձիավորների թիվը հասավ 100 հազարի[2]։

Համիդիե գնդերի ձիավորների քոլոզների վրա կար թիթեղյա մի նշան «սուլթան Համիդ» մակագրությամբ։ Նրանք նույնիսկ չէին վախենում իշխանավորներից ասելով, որ իրենք էլ զինվորներ են։ Նրանք անցնում էին «այս գյուղից այն գյուղը, և ամեն պատահածի կողոպտում, լինի նա հասարակ կամ պաշտոնական մարդ»[3]։ Շատ հաճախ համիդիեականները բռնություններ էին գործադրում նաև մահմեդական գյուղացիների նկատմամբ։

Համիդիե գնդերը կազմելուց հետո քրդական աշիրեթապետները, առանց զինվորական կրթության երես տեսնելու, ունենում էին այն էլ բարձր զինվորական կոչումներ, ստանալով բարձր ոռնիկ, չնայած նրանք «ստուգապես նամազգեստավոր ավազակներ» կոչվելու արժանի եղած են»[4]։ Օգտագործելով պետության կողմից նրանց տրվող կոչումներն ու առանձնաշնորհումները, ինչպես նաև չհսկելու և չսանձելու ազատությունը, նրանք սկսեցին հարստահարել հայերին և այլոց։

Համիդիե գնդերը իսկապես ժողովրդի նկատմամբ իրենց վարմունքով ավազակային խմբեր էին և նրանց նկատմամբ «հարստահարվող ժողովրդի վերին երկինք բարձրացված ողբն ու բողոքը, մի քանի հայրենասեր քաջ վարչական պաշտոնյաներու

---

1 Տե՛ս ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 1052, թ. 7։

2 Տե՛ս «Մշակ», №264, 21-ը նոյեմբերի, 1914։

3 ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 1126, թ. 30։

4 «Լուսակ», №17, 1909, էջ 209։

դիմումները հաճախ անլսելի ու ապարդյուն կը մնային»[1]։ Թուրքական իշխանավորներից շատերը իրենց սրտի խորքում գեմ էին այդ գնդերի գոյությանը, բայց քանի որ դրանք ստեղծվել էին սուլթանի հրամանով, ոչինչ անել չէին կարողանում։ Նրանք շատ էին վախենում այդ գնդերի պետերից, որոնք ամբաստանագրերով կարող էին հրապարակից հանել և նույնիսկ պաշտոնազրկել իրենց։

Թուրքական պետության այն փաշաները և կայմակամները, որոնք փորձ էին անում զսպել այդ գնդերին, պաշտոնանկ էին արվում։ Հին Բայազետի նոր նշանակված փաշան դեռ իր պաշտոնական վայրը չհասած, իր մոտիկ մարդկանցից մեկին ասում է. «Ես գնում եմ Բայազետ վերջնականապես պաշտոնանկ լինելու համար, որովհետև չպետք է կարողանամ տանել համիդիե կոչված գազանների արարքները»[2]։ Բանահավաք Ս. Հայկունին, որ ականատես էր եղել համիդիեական զինվորների վայրագություններին, սրտի կսկիծով գրում է, որ հայ մարդը չի կարող Օսմանյան Թուրքիայում բողոքել, քանի որ նրա բողոքը լսող չկա և ասված մի արասցե, եթե նրա բողոքը «Համիդիե կոչված ձիավոր քրդերի դեմ է, այդ դեպքում նա պատժվելու էր որպես թագավորին հայհոյողի, վասնզի թագավորի անուն կրող զինվորի դիմադրել թագավորին դիմադրել՝ մեկ հաշիվ է»[3]։

Աբդուլ Համիդի անձնական քարտուղարներից մեկը իր հուշերում գրում է, որ սուլթանը այդ գնդերը սկսեց կազմակերպել 1890 թ. Գում-Գաբուի ցույցից հետո։ «Գում-Գաբուի դեպքեն ետքը,— գրում է նա,— Պոլսո հայերուն հաղարավորներու տունները մարեցան։ Այս եղելութենեն ատեն մը վերջը, սկսվեցավ «Համիդիե հեծելագնդերու» կազմությունն»[4]։

Թուրքական կառավարությունը համիդիե գնդերն օգտագործում էր նաև Թուրքիայից Անդրկովկաս անցնող հայերին հետապնդելու համար։ Այդ գնդերը հաճախ անցնում են ռուսական սահմանը և ասպատակում ու կողոպուտի ենթարկում ռուսական տիրապետության տակ գտնվող շրջանները[5]։ Գտնվեցին, սա-

---

1 «Կոհակ», №17, 1909, էջ 209։

2 ՎՍՍՀ ՊԿԱ, ֆ 480, ց. 1, գ. 1201, թ. 25։

3 Ազգագրություն և բանահյուսություն, գիրք 4, էջ 47։

4 Մուստաֆա Նեմիմ, Հայ եղեռնը, Սոֆիա, 1936, էջ 12։

5 Վ. Ա. Բայբուրդյան, Թուրք-իրանական հարաբերությունները (1900—1914 թթ.), Երևան, 1974, էջ 21։

կայն քուրդ ցեղապետներ, որոնք հրաժարվեցին այդպիսի գնդեր կազմակերպելուց և ամբողջ ցեղով տեղափոխվեցին Իրան[1]։ Սակայն Սասունին մոտիկ քրդական աշիրեթների միայն մի մասը համաձայնվեց մտնել համիդիե գնդերի մեջ, նրանցից «հոծ բազմություն մը չուզելով բաժանվիլ իրենց գրեթե անկախ վիճակեն, մերժած էր համիդիե դառնալ»[2]։ Զեքի փաշան սկզբնական շրջանում կարծես չտեսնելու էր դնում այդ հանգամանքը, սակայն երբ 1894 թ. արդեն Սասունի լեռնականները ընկճված էին, նա համիդիեական գնդերից խուսափող քրդական ցեղերին սկսեց հետապնդել՝ ու հալածել, իսկ ճիպրանցի, ռաշկոտանցի, փանջարացի աշիրեթները աքսորվեցին դեպի հարավ[3]։

Թուրքական կառավարությունը այդ գնդերը տեղաբաշխում էր մեծ մասամբ ռուսական սահմանին մոտ գտնվող հայաշատ շրջաններում, նպատակ ունենալով, եթե ապագայում պատերազմ սկսվի Ռուսաստանի դեմ, ապա նրանք կմասնակցեն պատերազմին, միաժամանակ կամենում էր այդ գնդերը օգտագործել հայերի ազգային-ազատագրական շարժումները ճնշելու համար։

Համիդիե գնդերը կազմակերպելիս, թուրքական կառավարությունը երկրի զինվորական ուժը ավելացնելու հետ միասին, նպատակ ուներ նաև «քուրդերու առանձնահատկությունները ջնջելով, թուրք տարրին հետ ձուլել», այս նպատակին հասնելու համար քուրդ վերնախավի որդիների համար մայրաքաղաքում բացվեց մի վարժարան[4], որտեղ դասավանդումը տարվում էր թուրքերեն և վարժեցնում էին քրդական երիտասարդությանը թուրքական պանիսլամիստական ոգով։ Այս գնդերի գոյությունը և նրանց վայրագությունները հայերին մղում էին ակամայից զինվելու ուղին, իսկ քրդերին տանում էր դեպի ձուլումը, այդ գործին օգնության էր հասնում մուսուլմանական կրոնի հոգևոր դասը՝ իր պանիսլամական, իսկ հետագայում պանթուրքական քարոզներով։

Քրդական համիդիե զորախմբի կազմակերպման գործը հանձնարարվեց Սասունի բնակիչների ապագա դահիճ Զեքի փաշա-

---

1 Վ. Ա. Բայբուրդյան, *Թուրք-իրանական հարաբերությունները (1900—1914 թթ.)*, Երևան, 1974, էջ 21։

2 Ռուբեն, *Հեղափոխականի մը հիշատակները*, Գ հատոր, Լոս Անճելես, 1951, էջ 120։

3 *Տե՛ս նույն տեղը։*

4 *Ազգապատում*, Գ հատոր Գ գիրք Պեյրութ 1959 էջ

յին, որը 1891 թ. հեռագրեց սուլթանին, որ արդեն կազմակերպված է 30 գունդ, յուրաքանչյուրը 550 ձիավորից[1]։

Համիդիե գնդեր կազմակերպվեցին Տիգրանակերտում, Մանազկերտում, Բուլանըխում, Խնուսում, Մուշում, Բաղեշում, Վանում։

Լեոն իր «Անցյալից» գրքում գրում է, որ Համիդիե գնդերը կազմակերպվել են 1892 թ. և այն էլ «ռուսաց կոզակի զորքի օրինակով։ Անկանոն հեծելազորքի այս գնդերը սուլթանի անունով ստանում էին Համիդիե անունը»[2]։ Պատմաբանի այդ համեմատությունը նախ ճիշտ չէ, քանի որ ռուսական կոզակային գնդերը կանոնավոր զորամասեր էին և չէին ստեղծված կողոպուտի համար, երկրորդ՝ Համիդիե գնդերը ստեղծվեցին ոչ թե 1892, այլ 1890 թվականին։

Սակայն քրդական ուժերից բացի Մուշի դաշտում կային նաև այլ ուժեր, որոնք հաճախակի հարձակվում էին հայկական գյուղերի վրա։ Բանն այն է, որ Ղրիմի պատերազմի ժամանակ, անգլիացիների թելադրանքով, թուրքական լրտեսների ու գործակալների ջանքերով, Հյուսիսային Կովկասում սկսվեց ընդդեմ Ռուսաստանի ապստամբության նախապատրաստում, որը անհաջող վախճան ունեցավ և դրանից հետո Թուրքիա տեղափոխվեցին մոտ կես միլիոն չերքեզներ։ Թուրքական կառավարությունը նրանց տեղափոխելու և տեղավորելու համար նախապատրաստական ոչ մի աշխատանք չէր տարել, այդ պատճառով էլ գաղթականների 50 տոկոսը հիվանդությունների պատճառով մահացան[3]։

Գաղթականների մի մասը տեղավորվեց Մշո դաշտում։ Ջինված այս նորեկները թուրքական իշխանությունների թողտվության պատճառով հենց սկզբից սկսեցին ասպատակել հայկական գյուղերը։ Նրանց այդ խժդժությունները չհանդուրժեցին Հավատորիկ գյուղի բնակիչները, որոնք ոտքի ելան այդ ուժերի դեմ։ Շուտով հավատորիկցիներին միացան Բերդակ, Առաց, Մեզրե հայ գյուղերի բնակիչները և կառավարությունը ստիպված նորեկներին տարավ Մշո դաշտից։

Հայ ժողովրդի համար ստեղծված ծանր վիճակը ստիպում

---

1 Տե՛ս «Արձագանք», № 4—21 (3), նոյեմբեր, 1891։

2 Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 103։

3 Տե՛ս Մեգրելիձեի նշվ. աշխ., էջ 56։

էր հայրենասեր երիտասարդներին հայդուկային խմբեր կազմել և ոտքի ելնել օսմանյան կառավարության դեմ։ Մուշ-Սասունում առաջին հայդուկային կազմակերպված խմբերը երևացին 1880-ական թվականներին։ Առաջիններից Արաբոյի (Առաքել) և Մխո Շահենի (Սեֆերյան Մխիթար) խմբերն էին։ Արաբոն Բռնաշեն գավառակի Կուռթեր գյուղից էր, ավարտել էր Առաքելոց վանքի դպրոցը և «զենքը ձեռքին կռվում էր քրդական աշիրեթների և տաճիկ հարստահարողների դեմ՝ իրեն զինակից ունենալով Մխո Շահեն անունով տերգեվանքցի մի երիտասարդ»։ Նրանք ահաբեկում էին «իշխանավորներին, կողոպտում նրանց քարավանները և ավարը բաժանում էին չքավոր գյուղացիներին»[1]։

Ժողովրդի մեջ ասում էին, որ «Հոն ուր Արաբոն կերևնա, թուրք ոստիկանները մկան ծակ կը փնտրեն»[2], որ նա «իշխանություն չի ճանչնար, թուրքի և քուրտի բռնության դեմ է։ Օր մը Սուրբ Աղբերիկն է, ուրիշ օր մը սա վայրերի ժայռերուն մեջ, Դավթի քարեն վեր...»[3]։ Արաբոն դնում էր ժողովուրդին զինելու հարցը, նա նշանաբան ուներ. «... Ձենք գրավել թշնամիեն և զայն ուղղել անոր կուրծքին»[4]։

Արաբոյի խմբի մասին եղած առասպելական պատմությունները դուրս էին եկել Մշո դաշտից, անցել էին Էրզրում և Վան, Պարսկաստան և Կովկաս։ Հետաքրքրական է, որ Վանի արմենականները 1890 թ. Տարոն են ուղարկում ապագա նկարիչ Փ. Թերլեմեզյանին, որը «1890-ին կանցնի Մուշ, սղերդցիներ, մշեցիներ, քղեցիներ և սասունցիներ հարաբերության մեջ դնելու Վանա հեղափոխականներուն հետ...»։ Այստեղ նա ծանոթանում է Արաբոյի և Լևոնի հետ և այդ ծանոթությունը «մղեց զինք դեպի հեղափոխական գործը» և նա նվիրում է Արաբոյին իր դաշույնը[5]։ Ինչ հարցերի մասին են խոսել նրանք, մեզ անհայտ է, բայց փաստ է, որ Վանի արմենականները ցանկացել են անպայման կապ ունենալ Արաբոյի խմբի հետ։

Արաբոյի մասին ժողովուրդը հորինել էր զանազան երգեր, որոնցից մեկի մեջ ասվում է.

---

1 Եսայիկ Դաշտենց, *Բանչպարների կանչը, Վիպասք հայ շինականների կյանքից*, Ե., 1979, էջ 32—33։

2 Կ. Ստեփանի, *Սարերու ասլանը*, էջ 46։

3 Նույն տեղը, էջ 47։

4 Նույն տեղը, էջ 54։

5 Թեոդիկ, *Ամենայն տարեցույցը, վեցերորդ տարի*, 1912, էջ 244։

Մեկ խարցուցեք—գալեղ ո՞րն է,
Քաջ Աբաբ Բաղդավորն է,
Կաբմիր իրացանց զինվորն է,
Առաքելսի զարդով կիդա։
Աբաբոյիս բաժին բողուն,
Բարութ զյուլեն ուր բնաղուն,
Կը թափե ձրբ վախկոտ աբուն,
Հայ անարատ կաթով կիգա[1]։

Շուտով ձերբակալվեց Մխո Շահենը և տասը ոստիկանների հսկողությամբ տարվեց Բաղեշ։ Սակայն ճանապարհին նա հալածվում է ոստիկաններից մեկի զենքը և փախչում։ Հետապնդումները արդյունք չեն տալիս, նա անվնաս հասնում է Սասուն։ Որոշ ժամանակ անց նորից ձերբակալվելով տարվում է Կ. Պոլիս, ապա՝ Աքեայի բանտը։ Նրան հաջողվում է բանտից փախչել, անցնել Կիպրոս, ապա Կիլիկիա և մասնակցել 1896 թ. Զոք Մարզուանի ինքնապաշտպանությանը։ Սրանից հետո նորից ձերբակալվում է և տարվում է Հալեպի բանտը, ապա ազատվելով այնտեղից անցնում է արտասահման։

Եվ այսպես, հայ իրականության մեջ առաջին անգամ Աբարոն և Մխոն եղան հայդուկային առաջին փոքր խմբերի կազմակերպիչները։ Այդ խմբերին ժողովուրդը անվանում էր ֆիդայական խմբեր, իսկ այնտեղ կռվողներին՝ ֆիդայիներ (պարս. քաջ, անձնազոհ)։ Աբաբոյի խմբի մեջ էին նաև ալիզոնանցի Լևոնը, մգդենցի Գևորգը (Շավուշը), գոմերցի Հովիկը, բերդակցի Ներսոն, նրանց հարում էր նաև Մարգար վարժապետը։ Այդ խմբերը պաշտպանում էին աղքատներին և ժողովրդին հարստահարողներից և հարուստներից խլված ապրանքները բաժանում էին նրանց։ Ֆիդայիները վրեժխնդիր էին լինում կառավարական պաշտոնյաներից, քուրդ վերնախավի ներկայացուցիչներից և հայ վաշխառուներից ու մատնիչներից։ Աբաբոն և Մխո Շահենը, ինչպես նաև նրանց միացած հայդուկները բմբոստ և քաջ մարդիկ էին և պաշտպանում էին ճնշված ժողովրդի շահերը. «Բազմաթիվ վայրերուն մեջ գործակիցներ ունեցած է Աբարոն որևէ նեղություն և վնաս չէ պատճառած գյուղացի և ռայա հայերուն և քուրդերուն, ընդհակառակը, անոնց բաժին հանած է հարուստներեն կատարած իր կողոպուտներենը»[2]։ Հայդուկները ընդու-

1 Ռամկական մբմունջներ, ժողովրդական երգեր և պարերգեր, Ալեքսանդրապոլ, 1898, էջ 73։

2 Լ. Զորմիսյանի նշվ. աշխ., էջ 153։

նում էին տեռորը։ Արաբոյի և Մխո Շահենի ազնիվ գործողությունները շուտով նրանց դարձրին առասպելական անձնավորություններ։ Նրանք ահաբեկեցին Մշո Վարդենիսի երեք գյուղերի տանուտերերին նրա համար, որ զբաղվում էին մատնությամբ։ Հետագայում Արաբոյի ընկերներից մեկը նրա մասին գրել է. «Սուսերամերկ կռիվներից մեկի մեջ դաշույնի մի հարված էր ստացել նա (Արաբոն) և այդ հարվածի հետքը երկար ու թեք գծով իջնում էր նրա գողտրիկ բերանի ձախ անկյունից դեպի ծնոտը... և նրա դեմքի կուսական գեղեցկությանը տալիս էր դյուցազնական կնիք»[1]։ Արաբոն հետագայում անցավ Կովկաս և վերադարձին ամբողջ խմբով ոչնչացավ։ Ժողովուրդը երկար ժամանակ չէր հավատում, որ նա մեռած է և գտնում էր, որ «ան դեռ կը գործե լեռներուն մեջ»[2]։

Այսպիսով, թուրքական և քրդական աստիճանավորների, տեղական հարստահարողների սանձարձակությունների մասին բողոքներին զուգընթաց XIX դարի վերջին քառորդին հանդես եկավ հայդուկային պայքարը։

Հայդուկային շարժումը իր ժամանակին շատ էր տարածված բալկանյան ժողովուրդների մեջ, որոնք թուրքական բռնակալության դեմ այդպիսի պայքարի մեծ փորձ ունեին։ Այսպես, Բուլղարիայում հայդուկային պայքարը գալիս էր XV դարից, որտեղ այն ծագեց տարերայնորեն, որպես մի բողոք ընդդեմ թուրքական ֆեոդալների անտանելի թալանի ու բռնության[3]։ Եվ այդ շարժումը Բուլղարիայում ավելի ուժեղացավ XVIII դարում և XIX դարի առաջին կեսին, երբ թուրքական ֆեոդալների թալանը և դաժան բռնությունները ոչ մի արգելքի չհանդիպեցին պաշտոնական իշխանությունների կողմից։ Հայդուկային շարժումը որպես ինքնապաշտպանության և վրեժխնդրության միջոց Բուլղարիայում այդ ժամանակամիջոցում իր ամենաբարձր ծաղկումը ապրեց։ Որպես կանոն հայդուկներ էին դառնում խիզախ և երիտասարդ մարդիկ, որոնք այլևս չէին կարող տանել թուրքական բռնությունները[4]։

Ճիշտ է ասված, որ «աշխարհում ֆիդային ոչ մի հարստու-

---

1 Միքայել Վարանդյան, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատոր առաջին, էջ 142։

2 Նույն տեղը։

3 Տե՛ս Д. Косев, Новая история Болгарии, М, 1952, էջ 68.

4 Նույն տեղը, էջ 68։

թյուն չունի։ Նա օթևան չունի։ Յոթ օրից ավելի ֆիդային իրավունք չունի մնալու նույն տեղում։ Նա անվերջ շարժման մեջ է... Ֆիդային գերեզման չունի։ Նրա ամենամեծ բաղձանքը կռվի մեջ մեռնելն է՝ ազատության երգը շուրթերին և գնդակը ճակատին»[1]։ Ֆիդայիները զենքի ուժին ապավինած մարդիկ էին, անվախ, մահը արհամարհող, նրանք գտնում էին, որ իրենք մատաղներ են ժողովրդի համար։ Բավական է ասել, որ նրանցից յուրաքանչյուրը իր տոպրակում պահում էր իր պատանքը։ Հայդուկները հաստատ համոզված էին, որ այսօր կամ փաղը սպանվելու են, սակայն նրանք այդ ավելի էին գերադասում, քան թուրքական բռնակալության պայմաններում ապրելը. «Այդ հայդուկներից ամեն մեկը վերքերի և հին ու նոր սպիների թանգարան է»[2] և «ֆիդայու ամեն մի վերքը, ամեն-մի սպին դրոշմ է բռնակալության դեմ մղած անթիվ կռիվների»[3]։ Եվ նրանց մեծ մասն ընկան կռիվներում հայ ժողովրդի ազատագրության իդեալը սրտերում, նրանք... անխնա բնաջնջվեցին, ոմանք կլ՝սաճամփին, շատերն էլ սահմանագլխի վրա, ճզմվելով բռնակալներից։ Թշվառ, հավատավոր ուխտի վինվորներ, սուրբ վերքերով պատկած անհայտ, անանուն շիրիմների մեջ»[4]։ Երբ ֆիդայիներից ոմանք տրտնջում էին ցրտից և չէին դիմանում հայդուկի չարքաշ կյանքին, սարերում այդ կյանքի մեջ եփված Գ. Զավուշը ասում էր. «Էհ, ֆիտայու հալը էդպես պիտի լինի՝ մին օր փաշա մյուս օր փոշա»[5]։

Հայկական ֆիդայական շարժումը սնկասկած ուներ բուլղարական և բալկանյան մյուս ժողովուրդների շարժման ազդեցությունը, որն արտահայտվել էր երգերի մեջ։ 1956 թ. Մոսկվայում հրատարակվել է «Բուլղարական պոեզիայի անթոլոգիան», որտեղ հայդուկային երգեր ընդհանուր խորագրի տակ տպվել է մոտ երկու տասնյակ երգ[6]։ Այդ երգերի մեջ առկա են թշնամուն չենթարկվելու, ազգային արժանապատվությունը վեր դասելու և ժողովրդին պաշտպանելու վեհ ձգտումը։ Չնայած բուլղարական հայդուկների շարժումը շատ քիչ հետքեր թողեց փաստաթղթե-

---

1 Խ. Դեչտենց, *Բանչպարների կաչը*, էջ 169։

2 Նույն տեղը, էջ 174։

3 Նույն տեղը, էջ 175։

4 Նույն տեղը, էջ 340։

5 Ավո, Գեորգ Զավուշ, Պեյրութ, 1972, էջ 114։

6 *Տե՛ս* Антология болгарской поэзии, М., 1956, էջ 48—68։

ռում, բայց նրանց հերոսությունների մասին բուլղար ժողովուրդը հորինեց հիանալի երգեր, պատմվածքներ և լեգենդներ[1]:

Հայդուկները իրավունք չունեին ժողովրդի մի մասին կպչելու անկախ նրանց ազգային պատկանելությունից, նրանց պայքարի սլաքը ուղղված էր միայն բռնության և բռնակալների դեմ, անկախ նրանից, թե որ ազգին են պատկանում։

Հայկական լեռնաշխարհի հսկայակերպ լեռներում ապրող հայդուկները կամ ֆիդայիները սարերն էին բարձրացել ոչ թե ինչ-որ մի կուսակցության կազմակերպչական աշխատանքի կամ արտաքին ուժերի ազդեցության տակ, այլ դաժան բռնությունները չտանելու և արհամարհելու պատճառով։ Այս մարդիկ չտարան թուրքական զուլումի ռեժիմը, որովհետև կառավարությունը բոլորովին չէր զսպում աղաների, բեկերի գազանությունները, իսկ այդ խոշտանգումներին չդիմացող անհատները ստիպված թողնում էին իրենց տունն ու տեղը, ընտանիքը և բարձրանում էին անմատչելի լեռները։ Նրանք իրենց հարազատներին գրկելու փոխարեն չոր հրացաններն ու դաշույններն էին գրկում, երբեմն կուշտ, երբեմն քաղցած, արհամարհելով բնության խաղերը՝ անձրևն ու ձյունը, փոթորիկն ու կարկուտը, պայքարում էին թուրքական անտանելի ռեժիմի դեմ։

Հայդուկներն իրենց շրջապատի մարդկանց մոտ մտցրին այն գիտակցությունը, թե կառավարությանը բողոքներ ուղարկելը անմիտ բան է, քանզի նա միշտ էլ պաշտպանում է հարստահարիչներին։ Անհրաժեշտ է անցնել ինքնապաշտպանության։ Նրանք բոլորն էլ պայքարի ելան թուրքական բռնակալական ռեժիմի դեմ հաստատապես համոզված լինելով, որ կընկնեն անհավասար մարտում այսօր կամ վաղը, սակայն առանց վախենալու գնացին դրան։ Հայդուկները սարսափ տարածեցին թուրք, քուրդ և հայ հարստահարողների մեջ։ Այդ պայքարի ընթացքում նրանք հասկացրին իրենց ժողովրդին, որ չպետք է խոնարհվել բռնակալության դեմ։ Հայդուկները լեռների և լեռնափապարների մեջ էին անընդհատ և պաշտպանում էին տանջվածներին։ Հայդուկներն իրար ետևից շարքից դուրս էին գալիս, սակայն նրանց փոխարինում էին նորերը։ Ամրակուռ և հաղթակորով ֆիդայիները կարծես մարդկային մսից չէին ձուլված։ Նրանք իրար ետևից եկան ու անցան, սակայն կեղեքվող ժողովրդի մոտ թողեցին

---

1 Տե՛ս История Болгарии, т I, М, 1954, էջ 179:

լավ հիշատակներ և բարի անուն։ Նրանց ճնշող մեծամասնությունն ընկավ կռվի մեջ և մնաց անգերեզման։

Յուրաքանչյուր հայ հայդուկի հետ իր հայրենի գյուղում պատահել էր հարստահարության որևէ դեպք, որից հետո նա ստիպված բարձրացել է սարերը։ Այդպիսի դրությունից ելնելով սարերը բարձրացան Աղբյուր Սերոբը, Անդրանիկը, Հրայրը, Գևորգ Չավուշը (Սարհատ) և շատ ուրիշներ։ Հայ ժողովուրդը հորինել է հայդուկներին նվիրված բազմաթիվ երգեր, որոնցից շատերը քնքուշ են ու հոգեզմայլ և մինչև հիմա էլ երգվում են ժողովրդի կողմից։ Ահա նրանցից մի քառյակ, որը նվիրված է Գևորգ Չավուշին, հորինված Ն. Խաբախանյանի կողմից.

Հազար ինը հարյուր յոթ թվականին,
Զքնաղ մայրսի քսան և յոթին,
Տոն է բազմաշիատ մահվան Գևորգին,
Սասնո հարազատ մեծանուն քաջին...[1]

Մի շարք երգեր նվիրված են Աղբյուր Սերոբին (Սերոբ Վաչագանյանին), որոնցից մեկի մեջ կոչ է արվում քաջ երիտասարդներին անցնել լեռները, որտեղ և՛ կռվից, և՛ մահից չվախեցող քաջեր են հավաքված։ Հայդուկային երգերում նշվում էր նաև, որ հայ ժողովուրդը հինգ դար շարունակ տառապում է թուրքական տիրապետության տակ, որտեղ սպանում են, բռնի կրոնափոխ անում, տանում աղջիկներին ու կանանց, ուստի և հարկավոր է կռվել և մեռնել հայրենիքի համար.

Մերթ Սասնո մեջ, մերթ Սիփան
Կռիվ անենք միջա անխափան,
Գավով փրկենք հայրենիք
Այս հալալ ունեցողը թող դա[2]։

Երգի մեջ նշվում է այն մասին, որ հայդուկները պետք է երկրի մարդիկ լինեն, գիմանան բոլոր տեսակի դժվարություններին, լինեն անվախ և անվրնդ կրակեն թշնամու վրա։ Երգի վերջում նշվում է, որ Սերոբին սիրողները թող դան լեռները.

Վերջապես մենք ունենք կռիվ,
Ջենքով պիտի մաքրենք հայիվ,
Մեր հայրենյաց փառքն ու պատիվ
Սերոբ փաշան սիրող թող դա[3]։

---

1 Նոր քնար, Սալոնիկն (Սելանիկ), 1937, էջ 171։

2 Նույն տեղը, էջ 177։

3 Նույն տեղը։

Վերջապես կան երգեր 1899 թ. Աղբյուր Սերոբի, իր եղբայրների, տղայի, կնոջ, նրա հետ եղած հայդուկների մղած ճակատագրական կռվի մասին, ուր ընկան Սերոբը, նրա եղբայրները՝ Զաքարն ու Մխոն, տղան՝ Հակոբը և վիրավորվեց Սոսեն, որտեղ հայ կինը ամուսնու կողմից ստանում է հրաման վերցնել մոսինը և ցույց տալ, թե ինչպես կլինի քաջությունը և նա կատարում է այդ առաջարկությունը ասելով, որ քեզ հետ միասին պետք է կռվենք ու մեռնենք։ Հայ կինը հոգեպես նախապատրաստված էր այդ վիճակին և պատրաստ էր կռվել ու մեռնել.

Իսկ քո Սերոբը, կյանքիդ հատորը,
Արյունով ներկեց Տալվորիկ ձորը,
Առյուծի նայվածքով նայում էր բոլորը,
Հաղթական կռվի մեջ էր ամբողջ օրը[1]։

Երբ մենք ուսումնասիրում ենք Բալկաններում եղած հայդուկային շարժման պատմությունը, շատ պարզ գույներով երևվում է, որ հայդուկները իրենց առջև քաղաքական ոչ մի խնդիր չէին դրել։ Մեզ մոտ նրանց նպատակն էր վրեժխնդիր լինել թուրք պաշտոնյաներից ու քուրդ բեկերից և հայ դավաճաններից ու վաշխառուներից, որոնք հատկապես անխղճաբար թալանում էին աղքատ և անօգնական բնակչությանը, այդ պատճառով էլ ժողովուրդը հայդուկներին համարում էր իրենց պաշտպանները։

Հայ ֆիդայիների մոտ կային մշակված կանոններ, որոնք և ոչ ոք իրավունք չուներ խախտելու։ Այդ կանոնները հետագայում ամփոփվեցին ժողովրդական հերոս Անդրանիկի կողմից և ստացան «Մարտական հրահանգներ» անունը։ Հայդուկները այդ կանոնները պետք է պահպանեին սրբությամբ, այնտեղ խիստ պահանջվում էր, որ «Երկիր մտնողները, խմբապետեն սկսած մինչև վերջին զինվորը՝ բարոյապես բարձր պետք է պահեն զիրենք և ապրելով ժողովուրդին մեջ, լավ տպավորություն պիտի թողնեն անոնց վրա»[2]։

Բոլոր կռիվների ժամանակ պետերը պետք է ուրախ դեմք ունենային, չշփոթվեին, իրենց սառնությամբ և անձնվեր օրինակով քաջալերեին հայդուկներին։ Վերցրած գերիներին անհրաժեշտ էր պահել, կերակրել։ Հայդուկը պարտավոր էր «վարք ու բարքով մաքուր և անարատ մնալ»[3]։

---

1 Նոր քնար ..., էջ 181։

2 Զոր. Անդրանիկ և իր պատերազմները, Կ. Պոլիս, 1920, էջ 61։

3 Նույն տեղը։

Հայդուկները պետք է գաղտնապահ լինեին, իրավունք չունեին սուտ խոսել, իրար հետ կռվել, վիրավոր։ կան խոսքեր ասել մեկը մյուսին, նրանք պետք է միմյանց հանդեպ սիրով և քաղցրությամբ վարվեն, խստապահանջ չլինեն կերակուրի և հագուստի հարցերում, իրար հետ խոռվ չլինեն և ստացած նվերները պարտավոր են հանձնել խմբապետին։ Հայդուկներին արգելվում էր ոգելից խմիչքներ օգտագործել[1]։

Հայդուկային խմբերը ղեկավարելու համար անհրաժեշտ էր ունենալ 12 անդամից բաղկացած մի խորհուրդ։ Այն բժշկի միջոցով պետք է ընտրեր առողջ երիտասարդներ, որոնք պետք է ազնիվ խոսք տային, որ ուրախությամբ ուխտել են «իրենց անձը զոհել հայրենիքի ազատության և ինկած հազարավոր նահատակներու համար»[2]։ Այս երդումից հետո զինվորական խորհուրդը կարող էր արձանագրել նոբակոչիկի իսկական և կեղծ անունները։ Այնուհետև հայդուկներն արդեն սկսում էին հրացանի մասերը քանդել և հավաքել, սովորում էին անվրեպ կրակել և վարժվել հայդուկային կյանքի դժվարություններին։

Մարտական այդ հրահանգներում Անդրանիկը, ելնելով իր փորձից գրում է. «Դիրք բռնած սարիդ թե գագաթները և թե ստորոտները լավ նայե. տե՛ս ոչխարի հետք կամ ոչխարի նոր պտրուկ կա Եթե կա— գիտցիր, որ հովիվները ոչխար կը բերեն այդ տեղ։ Այն ժամանակ հարկավոր է խիստ զգուշությամբ պահվիլ։ Հովվի շները հոտառությամբ կը հայեն և կուգան ձեր մոտ։ Պետք պահվիլ և չերևիլ, երբ հովիվը գա ձեզ մոտ՝ բռնեցե՛ք։ Եթե վարպետությամբ չի բռնեք— «հարայր» կը ձգե և քանի մը հրացան օդի մեջ կը պարպե ու կռիվը կը սկսի»[3]։

Կռվի ժամանակ անհրաժեշտ է թողնել, որ թշնամին մոտենա, որից հետո միայն մի քանի անգամ իրար ետևից համազարկ բացել։ Հայդուկը իրավունք չունի հայհոյելու, քանի որ այն տղամարդու գործ չէ։ «Համազարկի ժամանակ անհրաժեշտ է միշտ աղմուկ բարձրացնել, իսկ հանդարտ ժամանակ՝ կռվիլ ու երդել և նայել խմբապետի հրահանգներուն ու ձեր քովը գտնված տասնապետներուն։ Պարապ տեղը՝ չըլլա, որ փամփուշտ վատնե։ Երբեմն ալ մի՛ մոռնաք հրացանները մաքրել»[4]։

---

1 Տ՛ս Զօրավար Անդրանիկ և իր պատերազմները, էջ 62։

2 Նույն տեղը, էջ 134։

3 Տե՛ս Նույն տեղը, էջ 135—136։

4 Նույն տեղը, էջ 136—137։

Հայդուկային խմբի հարձակումը պետք է սրընթաց լինի, չպետք է ժամանակ կորցնել։ Լավ կլինի հարձակում գործել գիշերը, որովհետև թուրքական զինվորները տարբեր տեղերից հավաքված լինելով, լավ չգիտեն տեղանքը. «Ամեն թուրք զինվոր մեկ-մեկ գավառե է, տեղերուն բոլորովին անծանոթ, մերկ ու բոպիկ, կրնամ ըսել՝ փորը միշտ կուշտ ալ չէ։ Եթե դանդաղիս, այն ատեն տեղին ծանոթ շրջակա քուրդեր բերելով, անոնք կըսկըսեն խուզարկությունները»[1]։

Հետաքրքրական էր հայդուկային կյանքի մասին զորավար Անդրանիկի տված գնահատականը. «Հայդուկային կյանքը,— ասում է նա,— տանողին համար ամենաբարձր կյանքն է աշխարհիս մեջ, չի կրցողին համար՝ ամենադժվար կյանքը։ Տասը տարվա մեջ չի տեսա զինվոր մը որ բնական մահով մեռներ, ամենքն ալ շատ առողջ կյանքի մեջ էին։ Կըսեմ որ մեր վեհ ծաղկավետ սարերու օդերը և հրաշալի աղբյուրներու ջրերը, կերած բանջարեղենները, կաթն ու մածունը և իրենց խղճի հանգստությունը, իրենց պատվական հրացանները և ունեցած ոսկեգույն փամփուշտները շատ ու շատ կօգնեին զինվորներու առողջությանը»[2]։

Հայդուկը պարտավոր էր «պահպանության ժամանակ խիստ զգուշ ըլլալ, չի քնանալ, չերգել, լի ծխել, իրարու հետ բարձր ձայնով չի խոսիլ, լուցկի չի վառել, կրակհան չի զարնել» և նա պարտավոր էր իր զենքն ու փամփուշտները մաքուր պահել, առանց հրամանի որևէ տեղ չգնալ, ժողովրդի հետ սիրով ու քաղցրությամբ վարվել։ «Մարտական հրահանգների» վերջում Անդրանիկը կոչ էր անում հայ երիտասարդությանը, որտեղ էլ որ նրանք լինեն, առվորեն զենք գործածել։ Այդ կապակցությամբ նա գրում է. «Ամեն օր երևան եկած դեպքերն ու անոնց հայտնությունը մեզի բացարձակորեն կը ստրվեցնեն թե հայը, ըլլա Տաճկաստան, ըլլա Կովկաս, Պարսկաստան կամ ուրիշ տեղ, իր կյանքը պահպանելու մեկ միջոց մը միայն ունի, մեկ պաշտպան մը, այն ալ զենքն ու զինավարժությունն է։ Մարդ ո՛չ հերոս, ո՛չ ալ կովող կը ծնի. զենքն է, որ մարդուն կռվելու ընդունակություն կուտա և դիմադրության ոգի կը ստեղծե անոր մեջ։ Անոնք որ կըսպասեն՝ թէ մեր նոր սերունդները առանց զենքի ընտելանալու,

---

1 Զորավար Անդրանիկ և իր պատերազմները, էջ 143։

2 Նույն տեղը, էջ 145։

առանց զինավարժությամբ պարապելու՝ վաղը կռվողներ պիտի դառնան՝ ողջայական միամտություններին է, որ կը հայտնեն, ուրիշ ոչինչ։ Այս կերպով՝ եթե դարեր ալ սպասենք, նորեն երկչոտներ, ստրուկներ պիտի մնանք, և նորեն մեր կյանքն ու պատիվը պիտի ըլլան օտարի ձեռքի խաղալիքը։

Ես չեմ, որ կը հրավիրեմ ձեզ, արտասահմանյան երիտասարդներ, այլ դժբախտ հայրենիքին հողն ու քարը իրենց արյունով ներկած մեր նահատակներն ու պաշտելի հերոսներն են, որ կոչ կընեն ձեզի՝ զենքի զինավարժության ու վրեժխնդրության։

Լսեցե՛ք անոնց ձայնը՝ որ մեր կյանքի ձայնն է»[1]։

XIX դարի վերջերից սկսած օսմանյան կառավարությունը հայկական հայդուկային շարժմանը սկսեց հակադրել իր կողմից կազմակերպվող ավազակային խմբեր, որոնք կոչվում էին ջանբեզարներ։ Ի հակադրություն հայ հայդուկների, որոնք իրավունք չունեին անկախ ազգային պատկանելությունից, բնակչության հետ վատ վարվել, այս խմբերը հանկարծակի հարձակվում էին հայ գյուղերի վրա և սպանություններ ու բռնություններ կատարում։ Հայ հայդուկները երբեք թուրք կամ քուրդ բնակչությանը նեղություն չէին պատճառում, էլ չենք խոսում, որ նրանք ինչ պայմաններում էլ լինեին, երբեք իրավունք չունեին կանանց նկատմամբ անհարգի վերաբերմունք ցույց տալ։ Թուրքական պաշտոնյաների կողմից կազմակերպված այս ավազակային և թալանչիական խմբերի առջև խնդիր էր դրված՝ թալանել, խոշտանգել, անմեղ ու անզեն մարդկանց։

Հայդուկային խմբերին վարկաբեկելու նպատակով օսմանյան կառավարության ներկայացուցիչները շատ անգամ տեղերից կազմակերպում էին հեռագրեր, որ իբր թե «հայ ֆիտայիները այնքան շատցեր են և սանձարձակ են, որ մեր կիներն ու աղջիկները, օրը ցերեկին չեն համարձակիր աղբյուր գնալ ջուր բերելու համար»[2]։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդպիսի փաստեր երբեք չեն եղել, որ հայ հայդուկները քուրդ, թուրք, հայ ժողովրդին թալանելու ձգտումով երբեք տարված չեն եղել։ Բազմաթիվ ու բազմաթիվ փաստեր կան, երբ ժողովրդի հայդուկ զավակները հարուստ բռնակալներից խլված ունեցվածքը բաժանել են ժողովրդին։ Հայ հայդուկի հակառակորդը հարստա-

---

1 Զօրավար Անդրանիկ և իր պատերազմները, էջ 167։

2 Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 315։

հարողն էր, անկախ նրանից նա քուրդ էր, թուրք թե հայ։ Հայդուկային շարժումը հենց հարստահարությունների և բռնությունների արդյունք էր։ Լեռներում ծվարած հայ հայդուկները թողել էին իրենց գյուղերը, ընտանիքը, հարազատներին, բարձրացել սարերը և պայքարում էին օսմանյան բռնակալության դեմ։ Անվիճելի է, որ հայդուկային պայքարը ժողովրդին ազատագրելու միջոց չէ, այդ ճանապարհով ոչ մի ժողովուրդ, որոնց թվում նաև արևմտահայերը, օսմանյան լծից չէին ազատվի, սակայն հայդուկային շարժումը ինքնապաշտպանության միջոց էր։

* *
*

XIX դարի հայ ազատագրական շարժումների պատմության մեջ 1890-ական թվականները շատ հերոսական էջեր ունեն։ Սասունի չորս տարվա, ապա Զեյթունի 1895 թ. ապստամբությունները այնպիսի հերոսապատումներ են, որոնց նմանը չկա հայ ժողովրդի XIX դարի պատմության մեջ։ Այդ պոռթկումները, ինչ խոսք, 1877—78 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո թուրքական կառավարության վարած հայահալած քաղաքականության արդյունք էին։ Մինչև XIX դարի 90-ական թվականները Տարոնի և Սասունի բնակչության շրջանում աշխատում էին այնպիսի հայ մտավորականներ, ինչպիսիք էին Գ. Այեաթճյանը, Մ. Խրիմյանը, Գ. Սրվանձտյանը, Մ. Սարգսյանը, Ն. Խարախանյանը, որոնք հայրենասիրություն էին քարոզում ժողովրդի մեջ։ Նրանց աշխատանքը իզուր չանցավ. այդ ժամանակամիջոցում դաստիարակվեց օսմանյան բռնակալության դեմ վերը խոյացող մի անվախ սերունդ։ Թուրքական կառավարական պաշտոնյաները շատ լավ էին հասկանում այդ և նրանք Մուշի և Տարոնի մթնոլորտը կարգավորելու համար վերը նշված գործիչներից ոմանց աքսորեցին Տարոնից։

1890 թ. Մուշի Կեդրոնական տեսչի պաշտոնն էր վարում հնչակյան կուսակցության ակտիվ գործիչ Մ. Տամատյանը (Պերճ Մուշլու), որը եղել էր Եվրոպայում, որտեղ շատ բանով փոխվել էին նրա գաղափարները և ահա նա երկրորդ անգամ գտնվում էր Մուշում։ Մ. Տամատյանը Կոստանդնուպոլսի կաթոլիկ հայ ընտանիքի ծնունդ էր, ավարտել էր Վենետիկի Մուրադ-Ռափայել-

յան վարժարանը։ 1884—88 թվականներին նա ուսուցչություն էր անում Տարոն-Տուրուբերանի և Վասպուրականի շրջաններում, որը հնարավորություն տվեց նրան ավելի մոտիկից ծանոթանալու այդտեղ ապրող հայության կյանքին։ 1888 թ. նա նորից Կոստանդնուպոլսում էր, ապա մասնակցում է Գում-Գափուի ցույցին, որից հետո, հալածանքներից խուսափելու նպատակով, տեղափոխվում է Աթենք։ 1891 թ. նա Սասունի լեռներում էր։ 1892 թ. ձմռանը Մ. Տամատյանը ֆրանսերեն մի ընդարձակ տեղեկագիր է գրում Կարինի անգլիական հյուպատոսին, որի մեջ նկարագրում է հայ բնակչության ծանր վիճակը, միաժամանակ անդրադառնում է բանտերում տառապող հայ բանտարկյալների դաժան կյանքին։ Այդ գործիչների հետ նույն ժամանակներում Մուշում էին գործում Մխիթար Շեխիկյանը, Համբարձում Պոյաճյանը (Մուրադ) և Հալեպից Մուշ եկած Գևորգ Չավուշը։

Մուշում որոշ ժամանակ գործելուց հետո Մուրադը անցնում է Պարսկաստան, ապա Կովկաս, նպատակ ունենալով զենք տեղափոխել Մուշ և Սասուն։ 1891 թ. Մ. Տամատյանը Սասունի դպրոցներին ծանոթանալու նպատակով անցնում է Սասուն և խորհրդակցում է լեռնականների իշխանների հետ, նրանց հաղորդելով իր ծրագրերը։ Այդ ժամանակ Սասունի Գելիեգուլան և Տալվորիկ գյուղերի իշխանների միջև վեճեր կային։ Նրան հաջողվում է հարթել այդ վեճերը և բարեկամացնել նրանց։ Մ. Տամատյանը ազատ շրջում էր Սասունի գյուղերում և կաղմակերպում ժողովրդին ապագա դիմադրության համար։ Շատ չանցած Ահրոնք գյուղում հրավիրվում է մի ժողով, որին ներկա էին Սասունի բոլոր իշխանները և հոգևոր պետերը։ Ժողովում խոսվում է ազատ հայրենիք ունենալու և ժողովրդին ինքնապաշտպանության միջոցով փրկելու մասին։

Ի՞նչ էին Մ. Տամատյանի և Հնչակյան կուսակցության կենտրոնի պլանները։ Միամիտ մի մեթոդ, ըստ որի անհրաժեշտ է ոտքի հանել ժողովրդին, եվրոպական պետությունների առջև դնել հայկական հարցը և Բեռլինի կոնգրեսի ոչինչ չասող 61-րդ հոդվածը։ Ինչպես Սասունի 1894, այնպես էլ Զեյթունի 1895 թ. ապստամբությունների ժամանակ Հնչակյան կուսակցությունն ուներ հայ ժողովրդի «խուլ Եվրոպայի» ականջը հասցնելու հետևյալ լոզունգները՝ «Դիմադրել, դիմադրել միշտ, դիմադրել, որքա՞ն կարելի է երկար», որպեսզի «խուլ Եվրոպայի» ականջնե-

ին հասնի թնդանոթների որոտը և սասունցու «Յա Մարաբա»[1] ուազմակոչը։

Ապստամբությանը նախորդող շրջանում և նրա ընթացքի ժամանակ Սասունում, ապա հետո 1895 թ. Զեյթունում, հնչակյան գործիչները եվրոպական օգնություն էին խոստանում Սասունի և Զեյթունի բնակիչներին, չնայած հաստատ չիտեին, որ այդպիսի օգնություն չի լինելու։ Երբ սասունցիները Մուրադին հետաքրքրում հարցնում են. «Պարոն Պոյաճյան, ու՞ր մնաց մեզի խոստացված օգնությունը։ Ան կը պատասխանե եղեր. — Ի՞նչ ընեմ, եվրոպացիք մեզ խաբեցին, ես ալ ձեզ խաբած եղա»[2]։ Իրականում եվրոպական պետություններից և ոչ մեկը Սասունի բնակիչներին կամ ապստամբության ղեկավարներին ոչ մի խոստում չէր տվել։

Մ. Տամատյանը գործում էր Սասունում, իսկ Վարդենիսի շրջանում աշխատանք էր տանում Մարդար վարժապետը, որը նոր էր վերադարձել Կովկասից։ Այստեղ սկսում են հավաքվել հայ դուկները, որոնց մեջ էին նաև սեբաստեցի Սաքոն և Ավոն։

Մ. Տամատյանը գրել է բանաստեղծություններ, մեծ մասամբ սասունցիների բարքառով «Ներշնչումներ» ընդհանուր խորագրի տակ։ Նա թարգմանություններ է կատարել իտալերենից և ֆրանսերենից, ունեցել է «ինքնադիր բանաստեղծություններ, որոնք Սասունի մեջ փչացած են առանց լույս աշխարհ տեսնելու»[3]։ Գրել է մի աշխատություն հայերենի և հունարենի փոխազդեցության մասին, որով ցույց է տվել, որ «հելլեններենը ինչ խոշոր ազդեցություն բերավ հայ լեզվի վրա Աստվածաշնչին թարգմանության աշխատանքի օրերուն կամ հաջորդող դարերու ընթացքին»[4]։ Մ. Տամատյանը գրել է «Պերմցոց քաջությունը» պոեմը և նրան է պատկանում «Տալվորիկի կտրիճ» երգը։

Ասվեց արդեն, որ մինչև 1890-ական թվականները Սասունում թուրքական պաշտոնյաներ չկային։ Թուրքական կառավարական զինվորական առաջին ուժերը գեպի Սասուն բարձրացան 1891 թվին, սակայն նրանք Սեմալ գյուղից այն կողմը չանցան։ Դարերով կիսանկախ վիճակում ապրող Սասունը թուրքական զոր-

---

[1] Յիսնամեակ— 1887—1937— Սոց. դեմոկրատ. հնչակյան կուսակցութեան, Փորվիտէնս, 1938, էջ 114։

[2] Հարազատ պատմություն Տարոնո..., էջ 65։

[3] Միհրան Տամատյան. Գահիրե, 1905, էջ 262։

[4] Նույն տեղը, էջ 263։

քեր ու պաշտոնյաներ չէր տեսել և նրա կուսական սարերն ու ձորերը միայն ելք ու մուտք ունեին Սասունի բնակիչները։ Թուրքական կառավարության համար այդ երևույթը ցանկալի չէր, նա ամեն գնով ցանկանում էր հաստատվել Սասունում։ Այդ նպատակին հասնելու համար կառավարական պաշտոնյաները նպատակադրվել էին իրենց ձեռքը գցել Սասունի իշխաններին։ Սակայն այդ նրանց չէր հաջողվում, քանի որ լեռնականների իշխանները ամեն կերպ խույս էին տալիս թուրքական փաշաների հետ հանդիպում ունենալուց։ Թուրքական կառավարական պաշտոնյաները մտածեցին Սասունի իշխաններին իրենց ձեռքը գցել քրդական աշիրեթների միջոցով։ Այս հարցում նրանք օգտագործեցին այն հանգամանքը, որ Սասունի լեռներից ներքև գտնվող քրդական աշիրեթները նույնպես ցանկանում էին մուտք գործել Սասուն, սակայն հանդիպում էին այդ լեռնական ժողովրդի կատաղի դիմադրությանը և նրանց փորձերը մատնվում էին անհաջողության։ Թուրքական իշխանությունները շրջակա քրդական ցեղերին սկսեցին գրգռել սասունցիների դեմ։ Բիթլիսի այն ժամանակվա կուսակալ Թեհսին փաշան այդ նպատակով օգտագործեց Զիլանի շեյխ Մահմեդին, Տուտերի շեյխ Օմերին, որպեսզի նրանք նախապատրաստեն իրենց ուժերը Սասունի վրա հարձակվելու համար։ Սակայն միշտ չէ, որ թուրքական պաշտոնյաներն իրենց այս քաղաքականության մեջ հաջողություն էին ունենում, իրար կողք կողքի դարերով ապրող ժողովուրդները՝ հայերն ու քրդերը շատ դեպքերում չէին ենթարկվում պետական պաշտոնյաների խարդավանքներին։ Բայց թուրքական պաշտոնյաները խորամանկ էին, նրանք ապագա կռիվներին և պատերազմական գործողություններին սկսեցին կրոնական բնույթ տալ։ Այս անգամ նրանց հաջողվեց իրենց կողմը գրավել վերը նշված երկու շեյխերին և սասունցիների դեմ սպասվող ապագա կռիվները ստացան կրոնական բնույթ։

Մեր պատմագրության մեջ սովորաբար ընդունված է միայն խոսել Սասունի 1894 թ. ապստամբության մասին։ Ուսումնասիրությունները, սակայն, մեզ բերում են այն եզրակացության, որ այդ ինքնապաշտպանական կռիվները սկսվել են 1891 և վերջացել 1894 թվականին, իսկ 1894 թիվը հերոսական դիմադրական կռիվների կոթագծի ամենաբարձր և վերջին կետն է։

1891 թ. Տիգրանակերտի և Սասունի շրջակայքի քրդական աշիրեթները թուրքական իշխանություններից հրահանգ էին ստա-

ցել Սասունի վրա արշավելու համար։ Այդ կռիվները հնարավորություն կտային Թուրքական բանակի երկու ժողովուրդների միջև եղած ընդհարումը վերացնելու պատրվակով հրաման ստանալ և մտնել Սասուն։ Չենք կարող այստեղ չնշել, որ քրդական ուժերի մի մասը չէր հավատում Թուրքական պաշտոնյաներին և նրանց խոստումներին։ Մուշի Վարդան վարդապետը, հասկանալով կառավարության մտադրությունը, իր մարդկանց միջոցով հորդորում էր քրդական աշիրեթների ղեկավարներին, որ ապագա կռիվները և Թուրքական պաշտոնյաների նպատակը երկու ժողովուրդների համար կործանարար արդյունք կունենա։ Սակայն կրոնական մոլեռանդությունը և շեյխերի պրոպագանդան զսպելը այնքան էլ հեշտ բան չէր։ 1891 թ. նախապատրաստվող քրդական ուժերը սկսեցին կամաց-կամաց կենտրոնանալ Սասունի սահմանագծին և նախապատրաստվեցին հարված հասցնել լեռնականներին։ Բայց ինչն էր ստիպում քրդական աշիրեթներին դիմելու Սասունի ժողովրդի վրա արշավանքը կազմակերպելու քայլին։ Չէ որ պատմության մեջ ոչ մի փաստ անգամ չկա, որ լեռներում ապրող այդ քաջ ժողովրդահատվածը գոնե մեկ անգամ հարձակված լիներ իր հարևան քրդերի վրա։ Ասվեց արդեն, որ նախկինում Սասունի հայկական գյուղերը քրդական ցեղերի ղեկավարներին հարկ էին տալիս և հրաժարվեցին հարկ տալուց։

Ժամանակները փոխվել էին, Սասունի հայ իշխաններն իրենց քրդական աշիրեթներին հավասար էին համարում և չէին ընդունում նրանց նախկին գերիշխանությունն ու առավելությունը։ Միաժամանակ նրանք քրդական ցեղապետներին հասկացնում էին, որ կա Թուրքական կառավարություն, որին և ենթարկվում են ոչ միայն սասունցիները, այլև Սասունին մոտիկ գտնվող բոլոր քրդական ցեղերը։ Բայց քրդական աշիրեթների ղեկավարները, այնուամենայնիվ, ցանկանում էին Սասունի հայերին ենթարկել իրենց։ Թե ինչ էին ուզում սասունցիները և քրդերը, այդ կարևոր չէր Թուրքական պաշտոնյաների համար, որոնք շուտափույթ կերպով նախապատրաստում էին երկու ժողովուրդների բախումը։

1891 թ. հունիսին քրդական զինված ուժերը շարժվեցին դեպի Տալվորիկ, Անդոք և Մովասար, որտեղ հանդիպեցին լեռնականների համառ դիմադրությանը։ Տալվորիկում ժողովուրդը ոտքի ելավ իշխաններ Գասպարի և Արեի, Շենիկում՝ Քշխան Գրգոյի և Մովասարում՝ Իշխան Մակարի գլխավորությամբ։ Հարձակվող աշիրեթների գլխավորողներն իրենց հաշիվներում սխալվել էին.

նրանք կարծում էին, որ առաջին հարվածից հետո նշված գյուղերը գրավելը շատ դյուրին կլինի, սակայն առաջին հանդիպումը տալվորիկցիների հետ ցնցեց նրանց։ Լեռնականները հիանալի կռվում էին ու դիմադրում երգելով «Տալվորիկի կտրիճ» երգը։ Ահա մի կտոր այդ երգից.

Տալվորիկի զավակ եմ ղորթ,
Քաղքացու պես չեմ թուլամորթ.
Սարի զավակ, քարի որդի՝
Չին քաջ հայոց եմ մնացորդ,

Տալվորիկի զավակ եմ քաջ,
Չեմ խոնարհիր վատին առաջ,
Քարոտ լեռանց եմ ազատ շուճ
Չեմ տեսներ ո՛չ արոր, ո՛չ մաճ

Հայ աղբրտիք, ջան աղբրտիք,
Տալվորիկի զավակ եմ քաջ,
Ազատության սիրույն համար
Եկեք դեպ ինձ, յառաջ, յառաջ[1]։

Այդ երգը ժամանակին տարածված էր ամբողջ Արևմտյան Հայաստանով մեկ։ Այսպես, Տիգրանակերտի բանտում բանտարկյալները երգում էին «Տալվորիկի կտրիճ» երգը։ Թուրք կուսակալի այն հարցին, թե տոնվում է սուլթան Աբդուլ Համիդի գահակալության հանդեսը, այդ ի՞նչ երգ է երգվում, բանտարկյալներից մեկը՝ Սամվել Զորյանը պատասխանում է. «Ասքարիա մարշի տրր, ենի չրխմրշ (նոր հորինված զինվորական քայլերգ է)»[2]։

1891 թ. համառ կռիվներ էին մղվում ոչ միայն Տալվորիկում, այլև Մովասարում, Գելիեգուզանում, Վերին Խուլբում և Անդոքում։ Լեռնագավառի բնակիչները կատաղի դիմադրություն էին ցույց տալիս։

Թուրքական կառավարությունը, տեսնելով սասունցիների համառ դիմադրությունը, ցանկացավ խորամանկաբար ձերբակալել ինքնապաշտպանության ղեկավարներին։ Այդ նպատակով նրանց հրավիրեց Մուշ։ Սակայն ղեկավարները չներկայացան, ուղարկեցին գյուղերի այլ ներկայացուցիչների։ Բայց կառավարությունը նրանց ձեռք չտվեց։

---

1 Սիրված երգեր, Երգարան, Երևան, 1971, էջ 163—164։

2 Տիգրան Մկուռեղ, Ամիտայի արձագանքներ, էջ 204։

Այսպես, ուրեմն, 1891 թ. գարնանը թուրքական ոստիկանական մի քանի վաշտեր քրդական ուժերի հետ միասին, սկսեցին մի տեսակ պաշարողական դրության մեջ պահել սասունցիներին։ Նրանք չորս կողմից շրջապատել էին Սասունը։ Ոստիկանական վաշտերի հրամանատարը սասունցիներին փորձում էր խաբել, որ կառավարությունը ոչ մի վատ բան չունի Սասունի բնակիչների նկատմամբ։ Ոստիկանական ուժերը փնտրում են հնչակյան կուսակցության գործիչ Մ. Տամատյանին և ցանկանում են տեսակցություն ունենալ իշխան Պետոյի և Գրգոյի հետ։ Բայց երբ քոչվորները սկսեցին բարձրանալ սարերը, թուրքական ոստիկանները, ինչպես միշտ, դրժելով իրենց խոստումը, ձեռնարկեցին բանտարկություններ՝ գործադրելով ձերբակալվածների հանդեպ բարբարոս և վայրագ մեթոդներ։ Նրանցից մեկին՝ Ազոյին անասելի տանջանքների են ենթարկում, ծեծում են, դաղում մարմինը, քաշում ատամները և տեղ-տեղ քերթում մաշկը։ Բայց Ազոն արիաբար տանում է տանջանքները և հայտարարում. որ ինքը շատ բան գիտե, սակայն, միևնույն է, չի ասի, եթե նույնիսկ սպանեն։ Ազոն տեղափոխվում է Մուշի բանտը, որտեղ նոր, գազանային տանջանքների ենթարկվելուց հետո մահանում է։ Մահից առաջ նա հայտարարում է՝ ահա իմ մահը, Սասունին դավաճանել չեմ կարող «զինչ որ կուզեք՝ են էլ արեք»[1]։

Սասունի լեռնականները ցանկանում էին հարված հասցնել թուրքական ոստիկաններին։ Բայց իշխանները ժամանակավորապես զսպում էին նրանց, չէին ցանկանում նախահարձակ լինել և դրանով առիթ տալ թուրքական Կառավարությանը մտնելու Սասուն։

Թուրքական իշխանավորների կողմից կանխորոշված պլանի համաձայն Սասունի արևելյան կողմից լեռնականների վրա պետք է հարձակվեր Հազզոյի կայմակամը, բայց վերջինիս կոչերը համարյա թե արձագանք չգտան այդ շրջանի քրդական ցեղերի մեջ, որոնք բոլորովին էլ վրեժով չէին լցված դեպի հայերը և բարեկամական կապերի մեջ էին սասունցիների հետ։ Հազզոն Սասունին շատ մոտիկ գտնվող մի գյուղաքաղաք էր, Սասունի կայմակամանիստ վայրը, որն ընկած էր Հյուսիսային Փսանաց և Սասունի գավառների, արևելքից Խարզանի, իսկ հարավից Պշերիկի և արևմուտքից Խուլբի գավառակների մոտ։ «Ժայռն ու ծաղիկը

1 Պատմություն Տարոնի աշխարհի», էջ 562։

հրաշագեղ տեսարանը Հաղբոյի հրապույրը կը կազմեն»[1]։ Այդ գյուղաքաղաքը նեղ հովտի մեջ ծվարած մի գեղեցիկ վայր էր։ Նրա բուրդ և հայ բնակիչները զբաղվում էին երկրագործությամբ, ցանում էին ցորեն, գիլգիլ, գարի, ոսպ։ Նրանց այգիներում աճում էին ընկույզ, նուռ, խաղող, ծիրան, սերկևիլ։ Գյուղաքաղաքի մոտակայքում մի չմշակվող աղահանք։ Բնակիչների մոտ զարգացած էր ջուլհակությունը, գինեգործությունը, կոշկակարությունը։ Նրանք զբաղվում էին նաև գխտորի, կաշվի և բամբակի առևտրով[2]։

1891 թվականին Հաղբոյի կայմակամը հրաման ստացավ տուրքեր հավաքելու պատրվակով զինված ուժերով անցնել Սասունայի կամրջով և մտնել Տալվորիկի գավառակը։ Արխիվային վավերագրերից և պարբերական մամուլի էջերից քաղված տեղեկությունները հավաստում են այն մասին, որ այս Տալվորիկ մբռնող առաջին ոստիկանական խումբն էր։ Թուրքական տիրապետության ամբողջ ժամանակամիջոցի ընթացքում այդպիսի բան չէր եղել։ Այս փաստը, ինչ խոսք, համբերությունից հանում էր տալվորիկցիներին։ Սկսվում է համառ կռիվ իր զարմանալի ու զարմանահրաշ դեպքերով։ Թուրքական երկու ոստիկաններ Հարթք գյուղացի Ավոյի հոր առաջնորդությամբ գնում են դեպի այդ գյուղը տուրքեր հավաքելու։ Իմանալով այդ քայլի մասին, Ավոն լուր է ուղարկում դեռևս գյուղ չմտած հորը, որ եթե նա համարձակվի թուրքական ոստիկանների հետ գյուղ մտնել, ապա կգնդակահարվի։ Հայրը չի հավատում որդու սպառնալիքներին և երկու ոստիկանների հետ մտնելով գյուղ, մոռանում է իր տանը։ Տգան սպանում է իր հորը և դառնում դեպի ոստիկանները, ասում է, որ վերադառնան այնտեղ, որտեղից եկել են և ինչ որ տեսել են պատմեն ճշմարտապես։ Ոստիկանները հանձնարարություն էին ստացել գյուղի յուրաքանչյուր բնակչից համապատասխան հարկ հավաքել։ Ավոն խրոխտ կերպով նրանց պատասխանում է, որ մեր գյուղացիները նպատակ չունեն քրդական ցեղերին ենթակա դառնալու։ Այս արտահայտությունից երևում է, որ ինչպես Ավոն, այնպես էլ մնացած լեռնականները լավ գիտեին, որ թուրքական պաշտոնյաների մուտքի հետ միասին սկսվելու է գյուղի համար մի ողբերգություն, որը տանելու էր կամաց-կամաց դեպի խաֆի-

---

[1] ԳԱԹ, արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, վավ. № 4/3, էջ 1։

[2] Տե՛ս նույն տեղը։

բություն, ինչպես այդ եղել էր Սասունի մի շարք ցածրադիր գյուղերում։

Կայմակամը իր ուժերով շարժվում է դեպի Սպաղանք և Խոծոծվանք գյուղերը, ցանկանում է հնազանդեցնել ժողովրդին և հարկեր հավաքել։ Այդ գյուղերի բնակիչները իշխան Մակարի գլխավորությամբ հարձակվում են ոստիկանների վրա, տասը հոգու սպանում են, իսկ մյուսներին՝ վռնդում։ Ուշագրավ է, որ կայմակամի վերևում նշված անօրինականությունների դեմ դուրս եկան Սպաղանքից ոչ հեռու գտնվող ոչ միայն հայերը, այլև քրդերը։ Հայ-քրդական ղինված միացյալ ջոկատը սպանում է ոստիկանների մի մասին, իսկ մյուսներին դուրս քշում գյուղերից։ Այսքանից հետո կայմակամին հաջողվում է հավաքել սասունցիների նկատմամբ անբարյացակամ քրդական որոշ ուժերի և թալանել ս. Աղբերիկի վանքը։ 1891 թ. իրադարձությունների ուսումնասիրությունից անմիջապես երևում է, որ ինչպես Հազզոյի կայմակամը, այնպես էլ թուրքական ոստիկանական ուժերի ղեկավար Ֆերիմը, հանդիպելով հայերի և քրդերի համառ դիմադրությանը, ստիպված թողնում են Սասունը։ Այդ դեպքերից հետո իշխան Գրգոն իր խմբով շրջում էր հայրենի լեռները և հորդորում բոլոր քուրդ քոչվորներին, որ տեղի ունեցած իրադարձությունները կառավարության կողմից կազմակերպված մի խաղ էր, անհրաժեշտ է ապրել խաղաղ, որ հարկավոր չէ հարձակվել հայ գյուղացիների վրա, ստիպել հայերին, որպեսզի նրանք ինքնապաշտպանության դիմեն և ցույց տան իրենց զենքի ուժը։

1892 թ. Հազզոյի կայմակամը օգնական ուժեր ստանալով, սկսեց իր նոր արշավանքը դեպի Խոծոծվանք և Խնձորեկ գյուղերը, որոնց բնակիչները նախորդ տարվա դեպքերից հետո քրդական բնակչության հետ նախապատրաստվել էին պաշտպանական մարտերի։ Հայ-քրդական միության այս էջերը մինչև այժմ համարյա թե չեն լուսաբանվել սովետահայ պատմաբանների կողմից։ Հրապարակի վրա եղած աշխատություններում նշվում է, որ օսմանյան կառավարողների ոստիկանական ուժերին 1892 թ. դիմադրել են միայն հայերը, սակայն այդ այդպես չէ, այդ ուժերի դեմ պայքարում էին նաև քրդական մի շարք ցեղեր։ Խոծոծվանքի և Խնձորեկի հայերը և քրդերը ջարդեցին ոստիկաններին, գերի վերցրին կայմակամին, որին լավ ծեծելով դուրս արեցին իրենց գյուղերից։ Այսպիսով, 1892 թ. Սասունում հայ-քրդական ուժերի միավորվածությունը այս անգամ էլ ստիպեց

թուրքական կառավարական ուժերին հեռանալ այնտեղից։ Նշված այս դեպքերը 1892 թ. մայիսին արձանագրվեցին «Հնչակում», որը գրում էր. «Հատուկ թղթատարով մի մեծ ու ծանր լուր հասավ վերջին վայրկյանիս— Հնչակյան հեղափոխական կուսակցության նախաձեռնությամբ մայիսի առաջին օրերը Սասնո գավառում և Մշո դաշտի մի քանի գյուղեր ապստամբել են կառավարության դեմ։ Մի քանի անգամ Մուշից և Բաղեշից զորքեր են ուղարկվել ապստամբների վրա, բայց ջարդվել են»[1]։

Թուրք պատմաբան Օսման Նուրին 1892 թ. դեպքերի մասին օբյեկտիվ գիրքերից ելնելով գրում է, որ կուսակալը «Սասունից հարկեր հավաքելու համար դիմել էր հայերով բնակված ավաններին։ Հայերը հայտնել էին, որ չեն կարող երկու անգամ հարկ վճարել։ Այս բանից ազդված կուսակալը մի տարի հետո որոշեց այդ մերժման համար վրեժ լուծել»[2]։ Այնուհետև պատմաբանը նշում է, որ չհասնելով իր նպատակին, կուսակալը սկսեց իրար դեմ հրահրել երկու ազգերին և «հայերի դեմ շարժում առաջացնելու համար նախապես բորբոքեց քրդերի մոլեռանդությունը»[3]։

Սասունի լեռնականների և քրդական ուժերի 1892 թ. միացյալ պայքարը և հաղթանակը բարձրացրեց նրանց հեղինակությունը։ Այդ իրադարձությունները միաժամանակ շատ մեծ մտահոգություն պատճառեցին օսմանյան կառավարությանը, որը նպատակադրվել էր հնազանդեցնել քրդական ցեղերին, ոտնակոխ անել ու իր կրնկի տակ պահել անհնազանդ Սասունը։ Այդ նպատակին հասնելու համար կառավարությունը 1892 թ. կռիվներից հետո Սասունը պահում էր պաշարված վիճակում և սկսեց ուժեղացնել «բաժանիր՝ որ տիրես» քաղաքականությունը։ Նա կարողացավ թշնամություն առաջացնել մի շարք քրդական ցեղերի և սասունցիների միջև։ Կառավարական պաշտոնյաներին զանազան խաբեությունների միջոցով հաջողվեց Պալաքցի քրդերին անջատել հայերից։ Այնուհետև նրանք սկսեցին Սասունի հայերին իրար դեմ հանելու քաղաքականություն տանել։ Սեմալի իշխան Գուրգենը գտնվում էր Մշո բանտում։ Օսմանյան իշխանավորները նրան խոստանում էին, որ եթե Մ. Տամատյանը բանտարկվի, ապա նա ազատ կարձակվի։ Երկար աշխատանքից հետո նրանց

1 «Հնչակ», 23-ը մայիսի 1892 թ.

2 Թուրքական աղբյուրները..., Դ հատ., էջ 174։

3 Նույն տեղը։

հաջողվեց իրենց կողմը գրավել Սեմալի իշխանի եղբորը, որը Մ. Տամատյանին հանձնում է թուրքական ոստիկաններին։ 1893 թ. գարնանը Մ. Տամատյանը տեղափոխվում է Մշո բանտը, ապա Թիֆլիս։ Ձեբրակալված Մ. Տամատյանը Մուշ հասնելով դիմում է այնտեղի հայերին. «Հայեր, մի՛ հուսահատիք։ Ես կը մեռնիմ, բայց իմ աեղս մի ուրիշը կուգա։ Կեցցե՛ հեղափոխությունը»[1]։ Թիֆլիսի ճանապարհին ոստիկանի ձին հարվածում է նրա ոտքին և ջարդում։ Բայց ոստիկանները հաշվի չառնելով նրա այդ վիճակը, բանտում սկսում են խոշտանգել։ Մ. Տամատյանի հետ Թիֆլիսի բանտ տարվեցին նաև 25 հոգի սասունցիներ։ «Յուրաքանչյուրին մի գոմ արած են,— գրում է ականատեսը,— 5—10 հրիտասարդ կալանավորներ բոլորն էլ միմյանց շղթայակապած, բոլորն էլ ջարդված գանակոծումից, ինչպես կալատեղի եղները, շղթաների վերջի երկու ծայրերն անցկացնելով դռնից դուրս, կղպած են սրահի անկյուններում խրված երկաթյա ցիցերի օղակների մեջ»[2]։ Ականատես Գ. Շերենցը, որ այդ օրերին մի գիշեր եղել է Բաղեշի բանտում և տեսել է Սասունի բանտարկված լեռնականների թշվառ վիճակը, գրում է. «Եվ այսպես՝ Սասունի արծիվները թափահարված ընկել էին գառիգիղում. Եռցա կցկտուր եղերական ախ ու վախի ձայները, որ շնչում էին՝ ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի արհամարհական ցույց աշխարհիս անիրավության դեմ...»[3]։ Մ. Տամատյանը հինգ ամիս Բաղեշի բանտում մնալուց հետո տեղափոխվում է Կոստանդնուպոլիս և ապա ազատ է արձակվում։

Դավաճանաբար Մ. Տամատյանին թուրքական իշխանություններին հանձնելը իր բացասական հետևանքներով հանդերձ ավելի ու ավելի էր զգաստացնում Սասունի իշխաններին, որոնց Տամատյանի բանտարկությունից հետո ղեկավարում էր Հրայրը։

Նշված բանտարկությունից էլ առաջ սասունցիները Մ. Տամատյանի հետ միասին որոշեցին մի քանի հոգի Մուրադի գլխավորությամբ ուղարկել Կովկաս, այնտեղի հայերից նյութական օգնություն ստանալու համար։ Մուրադը մի քանի մշեցիների հետ հասնում է Թիֆլիս։ Սկզբում նա դիմում է Ղ. Աղայանին, այնու-

---

1 Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության, Ա հատոր, Պելրուդ 1962, էջ 139։

2 Գ. Շերենց, Ալթուն Դերեսի կամ մի գիշեր Բաղեշի բանտում, 1893—1896, Թիֆլիս, 1910, էջ 25։

3 Նույն տեղը, էջ 26։

հետև գնում է դաշնակցական գործիչ Ս. Զավարյանի մոտ, որին պատմում է Սասունի բնակչության դժնդակ վիճակի մասին և խնդրում է նրան օգնել։ Ս. Զավարյանը նրան պատասխանում է. «Ապստամբությունը համարել որպես դաշնակցության գործ, այն ոտնն մենք ձեզ կբավարարենք, այլապես ոչինչ չենք կրնար ընել»[1]։ Պատասխանից երևում է, որ դաշնակցական կուսակցությանը ամենից առաջ հետաքրքրում էր ոչ թե անպստամբության գլիբը, այլ այն, թե այդ ապստամբությունը ինչ չափով կպատկանի իրենց կուսակցությանը, որը և կբարձրացնի դաշնակցության հեղինակությունը որպես ապստամբության նախապատրաստողի։ Հուսահատված Ս. Զավարյանի վերաբերմունքից, Ն. ուրադը թողնում է Թիֆլիսը և վերադառնում է Սասուն։ Մուրադը Կովկասից վերադառնում է չորս ընկերներով և մի քանի զենքերով։ Ահա այն, ինչ նա ստացավ Կովկասի դաշնակցականներից։

Այսպիսով, 1892 թ. դեպքերից հետո օսմանյան կառավարողների տարած աշխատանքը հասցրեց նրան, որ մայիսի վերջին բանտարկվեց Մ. Տամատյանը, և 1893թ. գարնանը քրդական ուժերը անջատվեցին հայերից։ Այդ իրադարձություններից հետո կառավարությունը սկսեց կրոնական պատերազմի կոչերով քրդական ցեղերին ուղղել Սասունի հայերի դեմ և Սեմալը անջատեց Սասունից։

Քանի որ Սեմալի իշխանի եղբոր միջոցով Մ. Տամատյանը հանձնվեց օսմանյան կառավարությանը, մնացած սասունցիները վրեժով լցվեցին այդ գյուղի հանդեպ։ Հավաքների ժամանակ նրանց մոտ նույնիսկ առաջարկություններ էին արվում հարձակվել այդ գյուղի վրա և կործանել։ Նրանք այն անվանում էին սիրած գյուղ։ Սակայն լեռնականների մեջ կային ողջամիտ մարդիկ, որոնք շատ շուտով հասկացան, որ այդ քայլով նրանք կբկատարեն օսմանյան կառավարողների ցանկությունը, հայերը կկռվեն միմյանց դեմ ու դրանով ավելի գյուրին կդարձնեն Սասունի հպատակեցումը։

Այսպիսով, 1893 թ. գարնանը կառավարական ուժերը գտնվում էին ավելի նպաստավոր պայմաններում։ Նրանք միացան քրդական աշիրեթների հետ և շարժվեցին դեպի Սասուն։ Անմիջապես գործի դրվեց կրոնական մոլեռանդության մեքենան, քրդ-

---

[1] Պատմություն Ս. Գ. Հնչակյան կուսակցության Ա. հատ., էջ 141։

դական երկու շեյխերը, որոնց մասին մենք ասացինք իր տեղում, նորից սկսեցին իրենց քարոզները անհավատ սասունցիների դեմ արշավանք սկսելու անհրաժեշտության մասին։ Այս նախապատրաստական աշխատանքներից՝ հետո 1893 թ. հունիսի առաջին կեսին Սասունը արդեն պաշարված էր։ Այդ օրերին 150 հեծյալ և 300 հետևակ զորքով այդտեղ է ժամանում Բիթլիսի կուսակալ Թահսին փաշան; որին շուտով միացան Կենճի կառավարիչի ուժերը։ 400 հոգուց բաղկացած մի ջոկատ էլ Մուշի զորահրամանատար Մուստաֆա փաշայի գլխավորությամբ անցավ Հավատարիկ լեռան վրայով և տեղավորվեց Քոփի բարձունքներում։ Այս բոլորը կատարվեց քրդական աշիրեթների աչքերի առջև, որոնք հատկապես հավատացած էին, որ դարերով հաղթ կանգած սասունցիներին ենթարկելու հարցը դրված է կառավարության օրակարգի մեջ։ Ոգևորված սրանից, քրդական շրջակա գյուղերի զինված ուժերը շարժվեցին դեպի Տալվորիկ և Անդոք։ Նրանք պետք է անցնեին Շենիկ գյուղով և հաստատապես համոզված էին, որ այդ գյուղի բնակիչները վերևում նշված դեպքերից հետո չեն դիմադրի, ճանապարհ կտան իրենց։ Սակայն այդպես չեղավ. Շենիկի քաջակորով բնակիչները սկսեցին արիաբար դիմադրել քրդական ուժերին։

Սեմալի մոտ բանակ դրած Թահսին փաշան զայրացած իր մոտ է կանչում Սասունի իշխաններին, որոնք չեն ներկայանում թուրքական բռնավորին և ուղարկում են մի քանի գյուղացիներ։ Փաշան առաջարկում է կառավարությանը հանձնել Սասունում գտնվող դրսից եկած գործիչներին, զինված ուժերի բոլոր զենքերը և ապա մի հանրագրություն ներկայացնել փաշային այն մասին, որ սասունցիները ապստամբ չեն և գոհ են օսմանյան կառավարությունից։

Ստանալով սասունցիների մերժումը, քրդական ցեղերին հրաման տրվեց արշավանք սկսել դեպի Շենիկ, որի բնակիչները իշխան Գրգոյի գլխավորությամբ անցան հակահարձակման։ Շուտով ժամանեցին թուրքական և քրդական նոր ջոկատներ, սակայն շենիկցիները ամբողջ գյուղով մի բռունցք են կազմում ընդդեմ հարձակվողների։ Այս կռվի մեջ մասնակցություն ունեին նաև շենիկցի հայ կանայք։ Շուտով շենիկցիներին օգնության են հասնում Ալիանք գյուղի զինված շինականները և թշնամին ընկնելով երկու գյուղերի ուժերից կազմված աքցանի մեջ, խուճապահար թողնում է կռվի վայրը և հեռանում։ Զորահրամանատար Մուս-

տաֆա փաշան իր ուժերը ուղարկում է Գելիեգուզան գյուղը, որն արդեն դատարկ էր, քանի որ նրա բնակիչները իրենց ունեցած չունեցածով բարձրացել էին Անդոք լեռան անմատչելի ու անառիկ բարձունքները։

Քրդական ուժերը դրանից հետո որոշեցին շարժվել դեպի Տալվորիկ, որի բնակիչները զինված սպասում էին իրենց հրամանատարների հրամանին։ Լեռնականների մոտ էին հայդուկներից շատերը, որոնց թվում Հրայրը, Գևորգ Չավուշը և ուրիշներ։ Ընդամենը 400 զինված կտրիճներ ուներ Տալվորիկը, որի դեմ կռվի էին դուրս եկել հազարավոր ուժեր։ Մի պահ լեռնականները կարծես թե սկսեցին խուճապի մատնվել, սակայն նրանց ոգևորում էր Հրայրը՝ հասկացնելով, որ Սասունի մնացած գյուղերից շուտով իրենց օգնության կգան։ Շատ չանցած փոթորկի նման այստեղ են հայտնվում Շենիքի իշխան Գրգոյի և գելիգուզանցիների ջոկատները։ Այսպիսով սասունցիների ուժերը ստվարանում են, և սկսվում են մարտերը։ Քրդական ուժերը, չդիմանալով լեռնականների հարվածներին, նահանջում են։ Օրհասական ու համառ այդ պայքարը պատկերացնելու համար ասենք, որ այդ կռիվների ընթացքում հավաքվեցին երկու հարյուր հայեր, և հազարից ավելի քրդերի դիակներ[1]։

Հաղթանակը կատարյալ էր, սակայն ձեռք էր բերված հարյուրավոր զոհերի գնով։ Կառավարական ուժերն ու քրդական աշիրեթները այլևս չեն ցանկանում այդ օրերին նոր հարձակման անցնել և գերադասում են նախապատրաստվել 1894 թ. գարնանից Սասունի դեմ նոր արշավանք սկսելու համար։ Երկուսաթ սկսվում են նախապատրաստությունները։ Լեռնականները այդ դեպքերից հետո սարերից իջնում են իրենց գյուղերը և նախապատրաստվում են հաջորդ տարվա կռիվներին։ Նրանք գիտեին, որ քրդական ուժերի կողքին Մուշում և նրա շրջակայքում սկսում են կենտրոնանալ նաև թուրքական կանոնավոր բանակի զինվորները։ Անկասկած Սասունցի Դավթի թոռներն ու ծոռները հասկացված էին, որ 1894 թ. կռիվները ավելի ծանր և կատաղի ու դաժան կլինեն։ Այդ ի նկատի ունենալով գյուղերի իշխանները սկսում են շուտափույթ նախապատրաստական աշխատանքներ տանել, Տիգրանակերտից Սասուն տեղափոխելով զենք և կապար։

1894 թ. գարնանը Սասունը ուներ մայրաքաղաքից ժամանակ

---

1 Տե՛ս Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 571։

իր նոր ղեկավարը՝ հանձին Կոստանդնուպոլսի բժշկական ուսումնարանի վերջին կուրսի ուսանող Համբարձում Պոյաճյանի (Մուրադ), որը հայ ազգային-ազատագրական շարժման ակտիվ գործիչներից մեկի՝ Ժիրայր Պոյաճյանի եղբայրն էր։ Վերջինիս օսմանյան կառավարությունը կախաղան էր բարձրացրել արգելյ Մուրադին է նվիրված «Պարզիր աղբյուր» ժողովրդական երգը։

1894 թ. Սասունի դեպքերը տարիներով կուտակված տառապանքին և տանջանքներին հաջորդող մի պոռթկում էին, ուղղված քրդական վերնախավի և թուրքական հարստահարողների բռնությունների դեմ։ 1894 թ. ապրիլին Մշո Բուլանըխի Թեղուտ գյուղի բնակիչները Ամենայն հայոց կաթողիկոս Մ. Խրիմյանին գրում էին. «Մենք Թեղութ գյուղի գլխավոր հասարակությանե վարդապետուս քահանայոք և իշխանոք դիմում ենք Ձերին վեհափառության հայտնել մեր կրած թշվառությունք, որ կրենք քուրտ բարբառոսաց և տեղվոյս անարդար կառավարության ձեռոք, վասն զի մենք այժմ ոչ մեր արթար վաստակին և ոչ անասունների, ոչ իսկ ընտանեաց տեր ենք, զի բոլոր վայրենի քուրդերին անգթության զոհ գնացին և շարունակելու վրա ենք։ Մեկ խոսքով, կուզեն որ հայ ազգը իրեն ծնած հայրենիքեն փաղցնեն և նոցա անունը և հիշատակ աշխարհեն բառնալ, ինչպես Ներսես վարդապետ, որ անձս երկու տարի Բաղեշ քաղաք բանտարկված էր, հիմա քովեն 400 օսմանյան ոսկի առնելով այնտեղեն դուրս հանեցին բերին խնդրակատար վանքը, արգելեցին որպես թե ապաշխարհեն առանց որևէ երես տեսնելու։

Նմանապես Մանուկս աղայի Թելո էֆենդիի քովեն 40 ոսկի տուկանք առին ոչինչ պատճառով, որ ինքն էլ կառավարության «չինայմիթի» անդամ էր։ Եվ այլ ուրիշ այսպիսի ցավալի դեպքեր, որ անհամար կը գործեն բռնության ձեռքով»[1]։

Մ. Խրիմյանի արխիվում պահպանվել է Մուշի Արտկոն գյուղի բնակիչներից մեկի դիմումը կաթողիկոսին, որի մեջ ասված է. «Հայտնի է Ձերդ վեհության, որ այս քանի ժամանակներս Տաճկահայաստանում, մասնավորապես Սասունի և Մշո կողմերում ոչ մի հայ ապահովություն չունի յուր կյանքի համար. ոչ ոք չէ կարողանում դուրս գալ յուր տնից առանց թուրքերին կամ քրդերին զոհ դառնալու»[2]։ Այնուհետև դիմումի հեղինակը նշում է,

---

[1] Մատենադարան, Մ. Խրիմյանի արխիվ, թղթ. 102, վավ. 545։

[2] Նույն տեղը, թղթ 103, վավ. 7։

որ Արտկոճ գյուղի ութսունամյա տեր Առաքել Ավագյան քահանային և նրա որդուն բանտարկեցին Կոփի բանտում, որտեղ պահեցին չորս ամիս և «այս միջոցին իմ եղբորս Գասպարին կրոնափոխ արին բռնի կերպով։ Չարաբախտ հայրս ստիպված եղավ յուր բոլոր կարողությունը մսխել յուր ունեցած չունեցածը ծախել, որով կարողացավ ազատել բանտից թե իրեն, թե ինձ. բայց այժմ էլ նորան ամենևին հանգիստ չեն թողնում, որ գոնե եկեղեցի գնա և ստիպում են, որ ինքն էլ իր ընտանիքով ուրանա յուր սուրբ հավատը, ընդունի մահմեդականություն և թուրքի մոլլա դառնա ասելով, «ինչպես որ Ապրոյան Գասպարը մահմեդական դարձավ, այնպես էլ դու պետք է մահմեդական դառնաս, որ Գասպարին և մյուս դարձած հայերին մոլլայություն անես», իսկ ես մի կերպ կարողացա Համիդիե հարյուրապետ Ասսադ աղա անուն քրդից պարտքով առնել յոթանասուն օսմանյան լիրա և ազատել մահմեդականացած եղբորս քրդերի ձեռքից և նորան յուր ընտանիքով հետս առած՝ անցա Ռուսաստան, Ղարս գավառ Քուրեք Դերե գյուղը, ուր թողի եղբորս ընտանիքը»[1]։

Այսպես, չդիմանալով թուրքական բռնակալական սիստեմի սարսափներին, հայերը գաղթում էին, իսկ այդ, ինչ խոսք, սուլթանական կառավարությանը շատ ձեռնտու էր, քանի որ նրանց գյուղերում թուրքական և քրդական բնակչություն էր բնակեցնում։ Գաղթելու մասին շատ ու շատ վավերագրեր կան, սակայն բանկանում ենք դրանցից բերել Մուշի Գուլանջու գյուղի բնակիչներից մեկի նամակը, ուղղված Ամենայն հայոց կաթողիկոսին, որի մեջ ասված է այն մասին, որ քրդական ցեղերը գրավել են այդ գյուղի գյուղացիների ունեցվածքը, դրանից հետո գյուղացիներին «ենթարկեցին տանջանաց ստիպելով մեզ կրոնափոխության և մենք չդիմանալով քուրդերի առաջարկությանը, առանք մեզ հետ մեր գերդաստանն զավակներով գիշեր ու մթին ժամանակ 1894 թ. ամի մայիս ամսո մեջ ճանապարհորդեցինք բարեխնամ Ռուսիայի երկրում...»[2]։

1894 թ. սկզբներին Տալվորիկի Մկրե խմբապետը տեղեկացնում է Մուրադին, որ թուրքական կառավարությունը նշանակվել է նորոգել Սասունի կամուրջը և նրա վրայով չորքոտանի շարժել դեպի Սասուն։ Այդ կապակցությամբ Տալվորիկում ուժ

---

1 Մ. Երիմյանի արխիվ, թղթ. 103 վավ 7։

2 Նույն տեղը, էջ. 20։

Խաչոյան Գասպարի տանը գումարվում է ժողով, որին ներկա էին բացի Մուրադից, Անդրանիկը, ռես Գրգոն, Գևորգ Չավուշը, կովտունցի Մուրադը, Քոչոզ Հովհաննեսը և ուրիշներ։ Տալվորիկի թաղերից ժողովին մասնակցում էին տանուտերը, Գամեյան Համղեն, Գաբրիել քահանան, Մկրեի երկու եղբայրները, Խաչո և Մակար եղբայրները և ուրիշներ[1]։ Ժողովը որոշում է ամեն գնով խանգարել Սատանայի կամրջի նորոգումը։ Դրանից հետո Տալվորիկի, Գելիեգուզանի և Սեմալի խմբերը մեկնեցին քար ու քանդ անելու կամրջի վրա արած թուրքական կառուցումները։

1894 թ. հունիսի 15-ին Սասունի Շենիք գյուղում Մոսեի Գրիգորի տանը հավաքված էին Սասունի իշխաններն ու երևելիները խորհելու այն մասին, թե ի՞նչ պետք է անեն, երբ թշնամին սկսի իր զորաշարժը դեպի Սասուն։ Գրգոյի մասին Սասունի պատմությամբ զբաղվող հեղինակներից մեկը գրում է. «Թեև երիտասարդ, սակայն լինելով կարդացվոր, տիրացու և միանգամայն ճարտարախոս և քաջարի՝ կռվի դաշտում, նա շատ հարգված էր և ընտրված էր գյուղի ռես (գյուղապետ)»[2]։

Վերը նշված ժողովին մասնակցում էր նաև Համբարձում Պոյաճյանը, որն իր ելույթում ասում է. «Եղբայրներ, Սասունը պաշարված է։ Ձեզ հայտնի է առաջին օրվան արյունահեղ ընդհարումը բաղրկանցի աշիրեթի հետ։ Կառավարական զորքն արդեն եկել հաստատվել է մեզանից մեկ երկու ժամ հեռու, Մերկե-Մողանում, և քուրդ աշիրեթներն ու հրոսակախմբերն իրենց անթիվ ոհմակներով պաշարել են մեր լեռները։ Պատերազմը անխուսափելի է, իսկ մեր դրությունը վատ, որովհետև մենք անպատրաստ ենք։ Սակայն իմ կարծիքով, մենք չպետք է վհատվենք, այլ Սասունի վաղեմի սովորության համաձայն՝ պիտի ջանանք մինչև մեր արյան վերջին կաթիլը պաշտպանել մեր հայրենի լեռները, մեր ընտանեկան սուրբ օջախը»[3]։ Շենիքի իշխան Գրգոն Սասունի բարբառով ասում է, «Հընը բավո, էլ ինչ տը մտածինք, ավ տայի է լը սըր, չի բողտկի չի թիղքի։ Քուրդերեն առածն ասում է. «ջուրը ծածկեր է գլուխ, ի՞նչ արշին, ի՞նչ թիզ»։ Մի՞թե մեր պապերը, որ կռվով ապրեցին, շատ էին մտածում կամ շատ մտածող եղբայրները ի՞նչ եղան և ի՞նչ են լինելու։ Ահա

---

1 Տե՛ս Պատմություն Հնչակյան կուսակցության, Ա հատ., էջ 141։

2 Ապստամբ Սասունը, Ժընև, 1903, էջ 3։

3 Նույն տեղը, էջ 4։

տուշմանը եկեր է մեր դուռը, ուզում է մեր տերը լինել, մեր օջախը քանդել, տակն ու վրա ընել, մեզ գերի տանել, բանտարկել, մի՞թե մոռցանք մեր իշխաններ Աղոյի և Գուրգենի նահատակությունը թուրքական բանտերում, մեր թշնամին— ձեռքով ցույց տալով դեպի դուրս — ուզում է թրքացնել մեր կույս աղջիկներին, կին, զավակներին, քանդել մեր եկեղեցիները և ոտնակոխ անել մեր ընտանեկան պատիվը, նամուսը։ Մի՞թե մենք տղամարդ չենք, էլ որ օրվա համար ենք ապրում, հա իմ 120 մարդկանցով պատրաստ եմ. բոլորս էլ ուխտել ենք մեռնիլ և գլուխ չծռել թշնամուն։ Կամ մահ կամ ազատություն»[1]։

Ժողովը անցել է հայրենասիրական ելույթներով, ասվել է շատ լավ խոսքեր. ինքնապաշտպանությունը հերոսաբար կազմակերպելու մասին այսպես է խոսել Գելիեգուզանի տեր Պետոն. «Սիրելի եղբայրներ, — ասում է նա, — իմ կարծիքով պետք է հաշտություն առաջարկել և եթե հնարավոր է՝ աշխատենք մի քանի զիջումներով այս տարի էլ վտանգն անցկացնել, մինչև եկող տարի, տեսնենք աստված ողորմած է, մի բան կը լինի։ Մանավանդ այժմ, ինչպես գիտենք, հայը քաղելու վախտն է, ապրանք, պաշար ձեռք բերենք, հետո ինչ որ անելու է անենք»[2]։

Ժողովականները շատ են մտածում ստեղծված ծանր վիճակից ելք գտնելու մասին։ Այդ օրերին կառավարությունը պահանջում էր՝ յոթը տարվա հարկը, որը կազմում էր 175 հազար ղուրուշ։ Այնուհետև ըստ կառավարության պահանջի, Սասունի ու հատկապես Տալվորիկի 67 երեելիներ իրենց քահանաներով պետք է գնային Մուշ հպատակվելու կառավարությանը։ Վերջապես կառավարությունը պահանջում էր հանձնել Սասունում գտնվող բոլոր օտարականներին։ Սրանով, ինչ խոսք, թուրքական իշխանությունները ցանկանում էին գլխատել լեռնականներին և դրանից հետո սկսել անմեղ բնակիչների ջարդը։ Լսելով այդ բոլոր պահանջների մասին գելիեգուզանցի 70 տարեկան Պետոն խրոխտ ու հպարտ ասում է. «Տեսնում ե՞ք ալևոր մազերս։ Տարիքս 70-ի մեջ է, բայց գիտեք, ձեզանից քսանը էլի մեկ չեմ սեպեր, — ձեռքը երկնցնելով երիտասարդներին,— այո 70 տարվա մեջը 37 կռիվ եմ տեսել, թող Ֆն պատասխան մեր-մոնը հանաքներ։ Բայց ձեզ պիտի ասեմ, որ այս կռիվը չի նմանիլ այն կռիվնե-

---

1 Ապստամբ Սասունը..., էջ 4—5։

2 Նույն տեղը, էջ 6։

րից և ոչ մեկին, սրա գույնը և ձևը ուրիշ է, ես վախենում եմ այս կուլից։ Տեսնում ե՞ք այս վերքերը (և նա ցույց տվեց բազմաթիվ սպիներ)։ Այս վերքերը ձեզ ցույց տալով չեմ ուզում ձեզ վախեցնել, այլ ընդհակառակը, ինչպես որ ես մահից չեմ վախենում, ցանկանում եմ, որ դուք ևս նույն սիրտն ու հոգին ունենաք։ Բայց մի բան կա,— մեր թշնամին անհամար է, թվով մեզանից շատ և բացի դրանից, ինչպես տեղեկանում ենք, անիծյալ ռումի (թուրքի,— Հ. Պ.) սև ապքարն էլ միացել է այդ անհավատ քուրդերին։ Այնուամենայնիվ չը պիտի հուսահատվենք, պետք է սկսենք, մինչև իրրև ծերունի և փորձառու մարդ, ձեզ կասեմ, որ հաղթողը նա է, որ առաջին հարվածը կտա։ Պետք է կռվել, էլ սպասելու ժամանակ չունինք։ Կեցցե կռիվ, կեցցե Սասուն»[1]։

Այնուհետև Պետոն խորհուրդ է տալիս գաղտնի հարձակվել թուրքական ուժերի վրա, փախուստի մատնել նրանց, գրավել գինքերն ու ռազմամթերքը և բարձրանալ Սասունի անառիկ լեռները։

Թուրքական կառավարությունը շարունակում էր անհնարին դարձնել հայերի և քրդերի մերձեցումը։

Բոլոր նրանց, ովքեր հայ-քրդական բարեկամական քարոզներ էին անում, համարում էին ռուսական լրտեսներ։ 1894 թ. կռիվներից առաջ Միհրան Տամատյանը երկար ժամանակ աշխատանք էր տանում լավացնելու հայ-քրդական հարաբերությունները, սակայն քրդերը, ենթարկվելով կառավարության պրովոկացիային, նրան համարում էին ռուսական լրտես և չէին միանում հայերի հետ[2]։

1894 թ. Մուշ կենտրոնացվեցին թուրքական չորրորդ բանակի դրամասերը։ Երզնկայից Մուշ ժամանած թուրքական չորրորդ բանակի հրամանատար Զեքի փաշան ապստամբ սասունցիների դեմ հանեց 3000 զինվոր, 8 թնդանոթ և 15000 քրդեր[3]։ Այս ուժերը քանի գնացին ավելի ստվարացան։ Սկզբնական շրջանում թուրքական բանակին հրաման էր տրված չհարձակվել սասունցիների վրա, կարծելով, որ միայն քրդերը կհաղթեն լեռնականներին, միաժամանակ «մեզ թույլ էր տրված,— ասված է թուրք սպաներից մեկի հուշերում,— ռազմամթերք տալու նրանց և

---

[1] Ապստամբ Սասունը..., էջ 7—8։

[2] Նույն տեղը, էջ 14—15։

[3] ՎՍՍՀ ՊԿՊԱ. Ֆ. 480, ց. 1, գ. 1231 թ. 168։

նրանք ստանում էին հրացան, վառոդ, գնդակ, որ հատուկ քրդերի համար էինք բերել»[1]։

Այս հուշերից, որը ժամանակին տպագրված է անգլիական թերթերից մեկում, երևում է, որ թուրքական զորքերի թիվը հասավ 14—15 վաշտի կամ 6500 հոգու, իսկ քրդերինը՝ 20 հազարի, դրանից հետո ժամանում է Իսմայիլ բեյը, որը Էրզրումից և Երզնկայից բերում է 3500 զորք և սուլթանի հրամանը (ֆերմանը)[2], որը կարդացվում է զորքերի համար։ Ըստ այդ ֆերմանի, հայերը ապստամբել էին սուլթանի դեմ, և անհրաժեշտ է զենքի ուժով ճնշել նրանց ապստամբությունը։ «Այնուհետև Իսմայիլ բեյը դիմում արավ գնդերին։ Ասաց, թե պետք է կրակով ավերել ապստամբների գյուղերը, թե պետք է սրի մատնել գյուղացոց. թե զինվորներին թույլ է տրվում ինչպես կամենան, այնպես էլ վարվեն հայերի հետ և սպանեն ամեն կենդանի արարած. այդ էր սուլթանի հրամանը։ Գնդերը երեք անգամ կեցցե գոռացին և հեռացան»[3]։ Սասունի դեմ հայտարարվեց սրբազան պատերազմ։

Սասունի հարավից դեպի Իշխնձոր գյուղը սկսեց սրշավել Փասուրի կայմակամը՝ պահանջելով բնակիչներից զինաթափվել և հանձնել զենքերը։ Լեռնցիները, չընդունելով նրա առաջարկությունը, հարձակվում են կայմակամի ուժերի վրա, զգալի մասին սպանում են և գուրս անում իրենց գյուղից։ Սրանք 1894 թ. մեծ կռիվների նախակռիվներն էին, որոնցից հետո կառավարական պաշտոնյաները թուրք և քուրդ մոլեռանդ ուժերին գրգռեցին սասունցիների դեմ, ասելով, որ Սասունում կան դրսից եկած մարդիկ, որոնք ցանկանում են ժողովրդին գրգռել կառավարության դեմ, արտասահմանից զենքեր են փոխադրում և իբրև թե Սասունում «կազմված է հայ հրոսակային խումբ մի, որ մշտական հարձակումներով սարսափ կգցե շրջակա քուրդերուն վրա»[4]։

Այնուհետև Բիթլիսում նահանգապետը իր մոտ է հավաքում Սասունի շրջակա քուրդ ցեղերի ներկայացուցիչներին և նշում է, որ «Սասունը իր անառիկ դիրքով, անմատչելի տարերով և ժողովրդով միշտ գլխավոր վտանգ մեր օսմանյան կառավարության»[5]

---

1 ՎՍՍՀ ՀԿՊԱ, ֆ. 480, գործ 1273, ց. 1, թ. 43։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը։

4 ԳԱԹ-ի արխիվ, Հ. Առաքելյանի ֆոնդ. վավ. № 165, էջ 2։

5 Նույն տեղը։

ԵՒ կոչ է անում նրանց հարձակվել Սասունի վրա։ Փաշան կարգադրում է Մուշ տեղափոխել Բիթլիսում գտնվող բոլոր զորքերը՝ 7894 հետևակ և 2000-ի չափ հեծյալներով և թնդանոթներով։

Արխիվային մի վավերագրում նշված է, որ քրդական ուժերի թիվը հասնում էր 43 հազարի, իսկ սասունցիները ունեին հետևյալ քանակի կռվողներ. Տալվորիկն ուներ 304 հրացանակիր, իսկ գյուղերի հետ՝ 741, Գելիեգուզանը՝ 208, Շենիքը՝ 160, Սեմալը՝ 180, Իշխանձորն ու Հարթինքը՝ 34, Աղբին՝ 120, Ալիանցիք՝ 208։ Ինչ խոսք, այս թվերը քիչ են, քանի որ սասունցիները ավելի շատ կռվողներ ունեին։

1894 թ. հիմնական կռիվները սկսվեցին Շենիք և Սեմալ գյուղերից։ Թշնամու միացյալ ուժերը հարձակվեցին այդ գյուղերի վրա։ Իշխան Գրգոյի ղեկավարած ջոկատի ուժերը կատաղի դիմադրություն ցույց տվեցին, մեծ վնաս հասցնելով քրդական ուժերին։ Նախապատրաստվել էին կռվին նաև Գելիեգուզան գյուղի բնակիչները։ Դեպի Անդոք արշավող քրդական ուժերին դիմավորում էին ոչ միայն Սասունի հերոսների անվրեպ գնդակները, այլև վերևից գլորվող ահռելի քարերն ու ժայռաբեկորները, որոնք ոչ միայն կոտորած, այլև ահ ու սարսափ էին առաջացնում թշնամու մեջ։

Թուրքական բանակին միացած քրդական մի խումբ սկսեց հարձակումը Շենիքի վրա։ Հուլիսի 28-ից մինչև օգոստոսի 2-ը տեղի ունեցան կատաղի կռիվներ։ Թշնամու ուժերն ավելի շատ էին, որը միաժամանակ գործի էր դրել իր ունեցած թնդանոթները։ Մեծ քանակությամբ արկեր թափվեցին Շենիքի և Սեմալի վրա։ Ելնելով ստեղծված վիճակից, այդ գյուղերի լեռնականները ստիպված նահանջում են և դիրքեր բռնում Ալիանքի բարձունքներում։ Թշնամին մտնելով այդ գյուղերը, տները թալանում է և այրում։ Նրա այդ հաջողությունը, սակայն, կարճատև եղավ։ Շուտով Շենիքի և Սեմալի բնակիչներին օգնության են հասնում նոր ուժեր։ Նրանք անցնում են հակահարձակման։ Լեռնականները ջեղտակի հարվածներով խուճապի են ենթարկում թշնամուն, որը ստիպված թողնում է Շենիք և Սեմալ գյուղերը։ Այս ճակատամարտում թշնամին տվեց 354 սպանված, իսկ լեռնականներք՝ մոտ 40 սպանված և զգալի թվով վիրավորներ[2]։

---

1 ՏՀ՝ ԳԱԹ-ի արխիվ, 2 Առաքելյանի ֆոնդ վավ. N 165, էջ 8։
2 ՏՀ՝ նույն տեղը։

Սակայն այդ կռիվները սպասվող մարտաբաս ճակատամարտի նախերգանքն էին։ 1894 թ. օգոստոսի 8-ին Սասունի վրա հարձակվող թուրքական և քրդական ուժերը բոլոր կողմերից սկսեցին առաջխաղացումը։ Մուշից թուրքական ուժերը առաջացան դեպի Ծիրինկատար և հարձակվեցին Սասունի Շատախի գավառակի վրա, որի գյուղերի բնակիչները, չդիմանալով նրանց հարվածներին, ստիպված թողեցին իրենց բնակավայրերը և անցան դեպի Գելիեգուզան։ Շատախցիները չկռվող բնակիչներին տեղավորեցին լեռներում, իսկ զինված մարտիկները միացան Գելիեգուզանի կռվողներին։

Թշնամու ամենակարևոր խնդիրն էր հարված հասցնել Տալվորիկին և ապա Գելիեգուզանին։ Այդ նպատակով էլ սկզբից նա հարձակվում է Գելիեգուզանի վրա։ Գյուղացիները դիմադրում էին հերոսաբար։ Այնուամենայնիվ թշնամուն շատ ծանր կորուստների գնով հաջողվում է գրավել գյուղը։ Սասունցիները որոշեցին հիմնականում կենտրոնանալ Անդոք լեռան բարձունքներին և շարունակել մարտերը։ Թշնամին տեսնելով այդ, առաջ շարժվեց ու պաշարեց Անդոք լեռը, որի կողերի վրա էլ սկսվեցին կատաղի մարտերը։ Թշնամու հարձակումները հաջորդում էին մեկը մյուսին։ Օգոստոսի 13-ին նա վերախմբավորելով իր ուժերը, հարձակման է անցնում լեռան պաշտպանների վրա։ Կռիվը կատաղի էր, լեռնականները նահանջի ճանապարհ չունեին և պետք է դիմադրեին մինչև վերջին շունչը։ Երկու հարյուր մարտիկներ, հերոսաբար, անմոռանալի, առանց վախի զգացում ունենալու ընկան այդ օրվա ճակատամարտում։ Թշնամու ուժերը ավելի շատ զոհեր տվեցին։

Շուտով թուրքական հրամանատարությունը հայտնում է լեռնականներին, որ ցանկանում է բանակցությունների միջոցով վերջ տալ կռվին։ Քանի որ բազմաթիվ սասունցիներ ընկել էին այդ անհավասար ճակատամարտում, իսկ նրանց ունեցած ռազմամթերքը արդեն վերջանալու վրա էր, լեռնականները, հավատալով թուրքական հրամանատարության խոստումներին, բանակցելու նպատակով 200 հոգով գնացին դեպի թուրքական բանակը։ Սակայն, ինչպես միշտ, այս անգամ էլ թուրքական ուխտադրուժ զինվորականներն ու պաշտոնյաները հրամայում են զորքին հարձակվել բանակցությունների համար լեռից ցած իջած սասունցիների վրա։ Սկսվում է անհավասար և դաժան մարտը, որին էլ զոհ գնացին բոլորը։

Բայց սասունցիները գեռևս վերջնականապես ընկճված չէին։ 1894 թ. օգոստոսի 15-ին թշնամին հարձակման է անցնում իշխան Գրգոյի ունեցած ուժերի դեմ, որը արիաբար դիմադրում է նրան մինչև օգոստոսի 22-ը։ Ապա դինված ուժերը անցնում են դեպի Ցալվորիկ, իսկ ժողովուրդը ցրվում է լեռնաշխարհի կիրճերը։ Այս ճակատամարտին մասնակցում էին նաև Սասունի իգական սեռի ներկայացուցիչները, որոնք կռվի մեջ հիանալի օրինակ ցույց տվեցին։ Իշխան Գրգոյի եղբոր կինը՝ Շաքեն և իր ընկերուհիներից ոմանք, թշնամու ձեռքը չընկնելու համար, նետում են իրենց քարաժայռից և նահատակվում։ Նրանց հետևում են այլ կանայք։ Արխիվային մի վավերագրում կռվին մասնակցող Սասունի կանանց մասին կարդում ենք, որ նրանցից ոմանք «այդ գազան զորաց ձեռքը չմատնվելու համար, ինքն իրանց ժայռերու բարձրութենեն անգունդ գլորեցին, ոմանք իրենց մանուկները գրկած անոնց հետ մեկտեղ գահավեժ ըրին իրանց արիաբար...»[1] Շուտով քրդական ուժերը շրջապատում են Գրգոյի ջոկատին և շատ դժվարությունների ու զոհերի գնով հպատակեցնում նրան։ Այս ճակատամարտում շատ սասունցիներ ընկան, որոնց թվում նաև իշխանը։

Թուրքական ոճրագործները դաժան հաշվեհարդար տեսան սասունցիների հետ, թալանեցին գյուղերը ու կոտորեցին գյուղացիներին։ Մեր պատմագրության մեջ ընդունված է լեռնականների տված զոհերի թիվը հասցնել 10-ից 16 հազարի։ Կ. Սասունին իր «Պատմություն Տարոնի աշխարհի» գրքի մեջ գտնում է, որ այդ ժամանակ Սասունը տվեց 500 կռվողների կորուստ, իսկ ժողովրդից սպանվեցին ևս 1200 հոգի, ընդհանուր թվով 1700 մարդ[2]։

Ա. Օսիպովը, որ այդ ժամանակ գտնվել է Կոստանդնուպոլսում, զոհերի թիվը հասցնում է 800-ի[3]։ Ամենայն հավանականությամբ այդ գրքի հեղինակը հաշվել է միայն կռվողներից ընկածներին։ Վրացական ՍՍՀ պետական պատմական արխիվում պահպանվող մի փաստաթղթում սասունցիների կորուստը հասցվում է մինչև 3000 հոգու[4]։

Ռեյտեր գործակալության կողմից Հայաստան ուղարկված թղթա-

---

[1] ԳԱԹ-ի արխիվ, Հ. Առաքելյանի ֆոնդ, վավ. № 1899, էջ 14։

[2] Տե՛ս Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 580։

[3] Տե՛ս Ա. Օսիպով, Մի ամիս Կ. Պոլսում, Աստրաքանդրապոլ, 1905, էջ 14։

[4] Տե՛ս ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 1231, թ. 168։

կիցը Սասունի ավերված գյուղերի թիվը հասցնում է 25-ի, իսկ սպանվածներինը՝ 1000-ից մինչև 3000 հոգու[1]։ Թուրք պատմաբան Օսման Նուրին այդ թիվը հասցնում է 4500-ից մինչև 5000 մարդու[2]։ Ա. Նազարբեկը Սասունի բնակիչների կորուստների թիվը հասցնում է մինչև 7 հազար մարդու[3]։ Լեոն իր «Անցյալից» գրքում գտնում է, որ Սասունի բնակիչները այդ ժամանակ 10 հազար զոհ ունեցան[4]։

Դժվար է այժմ ասել, թե դրանցից, որ թվերն են ճիշտ, սակայն անժխտելի է, որ այդ թվականին սասունցիները հազարավոր զոհեր ունեցան ինչպես կռվողներից, այնպես էլ խաղաղ բնակիչներից։ Այս կոտորածների մասին գրվեցին անգլիական, ֆրանսիական, գերմանական, իտալական, բելգիական, հունական և այլ երկրների մամուլում։ Թուրքական կառավարությունը տեղեկություն ստացավ, որ այդ նյութերը եվրոպացիներին մատակարարել է Վանի անգլիական փոխհյուպատոսը, որը բանտարկվեց և ազատվեց միայն անգլիական թագուհու միջամտությունից հետո։ Սուլթանական կառավարությունը ամեն գնով ցանկանում էր հերքել առհասարակ Սասունում բնակչության կոտորածի գոյությունը և «Թուրք կառավարությունը Բեռլինի դաշնագիրը ստորագրող վեց պետություններուն պաշտոնական զեկուցումներ ուղարկվեց, որով կը հերքե Սասնո կոտորածի լուրը և այդ մասին եվրոպական լրագրության հրատարակությունները։ Պաշտոնական զեկուցում մըն ալ տվեցին Թուրք թերթերը, որը հրատարակեցին բոլոր տեղական թերթերը»[5]։ Զեկուցագրի մեջ միաժամանակ նշվեց, որ թուրքական չորրորդ բանակի հրամանատար Զեքի փաշան գնացել էր Սասուն պատժելու համար հայ «ավազակներին», «որոնք երկրի խաղաղությունն ու անդորրությունը խզած էին վերջերս իրենց ասպատակություններով, թալանելով ու կեղեքումներով և թե Սասուն բնակվող կայսերական հպատակները առաջվա պես կատարյալ խաղաղության և հանգստության մեջ են և իրենց գործով կը զբաղին»[6]։

Սասունի 1894 թ. դեպքերի մասին եղած տեղեկությունները

---

1 Տե՛ս ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 1273, թ. 18։

2 Տե՛ս Թուրք. աղբյուրները, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Դ հատ, էջ 175։

3 Տե՛ս «Գաղափար», № 2, 1894, սեպտեմբեր, էջ 167։

4 Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 104։

5 ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 1231, թ. 168։

6 Նույն տեղը։

և զեկուցագրերը տպագրվեցին անգլիական Կապույտ գրքի մեջ, որի առաջին հատորում ամփոփված է Սասունի դեպքերի նկարագիրը, իսկ երկրորդը՝ իր մեջ է պարունակում օտարերկրյա հյուպատոսական ներկայացուցիչների միացյալ զեկուցագիրը։ Երկրորդ հատորի մեջ կան մանրամասն տեղեկություններ Մուշ-Սասուն ուղարկված թուրքական հանձնաժողովի գործունեության մասին։ Թուրքական պաշտոնյաները հասկացնում էին ազգով թուրք վկաներին, որպեսզի նրանք ցուցմունք տան այն մասին, որ Սասունի գյուղերի բնակիչները իրենք են կատարել Սասունի բնակչության կողոպուտը և գյուղերի թալանն ու հրդեհը։ Սակայն «հանձնաժողովի եվրոպական ներկայացուցիչները ցույց են տալիս, որ հայերը չէին կարող իրենք իրենց տները քանդել ու այրել, անարգել իրենց եկեղեցիները, կատարել այնպիսի խայտառակություններ, որոնց մասին պատմել անհնարին է։ Այդ բոլորը քուրդերի և թուրք զինվորների գործն է»[1]։ Ըստ եվրոպական պետությունների ներկայացուցիչների, այդ կռիվների ժամանակ ավերվեց 20 գյուղ, քրդերը կոտորածներ առաջացնելու հետ միասին զբաղվեցին սասունցիների ունեցած անասունների թալանով և «գերեցին աղջիկներ, իսկ զինվորները թույլ էին տալիս բռնաբարել կույսերին»[2]։ Այդ փաստերը վերցված են անգլիական փոխհյուպատոս Հոլանդի 1894 թ. հոկտեմբերին գրած զեկուցագրից, ուր ասված է. «Պատմում են ականատեսները, որ մարդկանց այրում էին և օդն էին թռցնում վառոդով։ Դալվո գիկցի մի կին պատմեց ինձ, որ երեսուն հոգու զինվորները թաղել են ողջ-ողջ հողի մեջ, այդ միևնույնը ես լսեցի ուրիշներից, բայց տեղն ու տեղը քննելու կարողություն չունեմ»[3]։

Անգլիական մամուլից վերցված տվյալների համաձայն, 1895—96 թթ. Հայաստանում մոտ 40 հազար հայեր ստիպված ընդունեցին իսլամը։ Թուրքական իշխանությունները և հոգևոր դասը «խիստ հսկում են, որ նորադարձները ճշտությամբ կատարեն մահմեդական բոլոր ծեսերը և սովորությունները։ Հայ ջահել աղջիկներ և այրիներ բռնի կերպով ամուսնացվում են թուրքերի հետ»[4]։ 1896 թ. հունվարին Մուշից «Մշակ» լրագրին գրում էին այն մասին, որ «իսլամացումը սովորական դարձած է դաշ-

---

1 «Մշակ», № 11, 3-ը փետրվարի 1896։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը, № 35, 23-ը մարտի 1896։

տին մեջ։ Կենճի վեց գյուղերուն բնակիչները Քատրք ըսված քուրտ գյուղը ապաստանած են. մոլլա Հասանի որդին հրավիրած է անոնց իսլամություն ընդունել։ Պահմտայու և Կրեխոխեյի գյուղերը իսլամացած են, իսկ Դառկա, Սաղտան և Արա գյուղերու հայերը դեռ ոչ»[1]։

Անգլիական «Կապույտ գրքում» տպագրվեց թուրքական հանձնաժողովի նիստերի բոլոր արձանագրությունները, որոնք կազմել էին օտարերկրյա երեք հյուպատոսները։ Ըստ այդ գրքի, Սասունի դեպքերը պատահական չէին, քանի որ քրդական ցեղերը սասունցիներից բռնի կերպով պահանջում էին «խաֆիր» կոչված հարկը։ «Կապույտ գրքում» այդ մասին կարդում ենք. «1894 թ. չնայելով Մերգեմուզանում գտնվող զորագնդերի ներկայությանը, նրանք (սասունցիները— Հ. Պ.) վճարել էին տուրքն բաքրանցի Օմեր և Շերո աղաներին 2 ոսկի, 30 ոչխար, 5 քիլե ցորեն, 5 բաթման այծի մազ։ Երբ մերժում էին տուրքը տալ, քրդերը առնում էին բռնությամբ»[2]։

Հանձնաժողովը քննեց նաև Համբարձում Պոյաճյանին (Մուրադ), որը «խաֆիր» տուրքի մասին ասել է. «Ամեն հայ մեկ կամ մի քանի աղաների վճարում է տարեկան որոշ տուրքեր՝ զանազան անուններով «Բեշ» «Հալա»։ «Հալա» տուրքը վճարում է այն ժամանակ, երբ մի հայ ամուսնացնում է իր աղջկան։ Ստացվող գլխագնի (օժիտի) կեսը պիտի տրվի քուրդ աղային»[3]: Այս հարկերի դիմաց աղան խոստանում էր պաշտպանել հայի ընտանիքը։ Մուրադը դրանից հետո ասում է. «Աղան կարող է ծախելով կամ փոխանակելով փոխանցել ուրիշ աղայի՝ իր այդպիսի հարկատուն։ Հարկատուի այդ վաճառումը գնահատվում է ըստ հայի ունեցած զավակների քանակության»[4]։ Ապա նա ասել է. «Սակայն չէ որ գյուղացին չի կարող տուրք վճարել միաժամանակ երկու իշխանությունների։ Եվ դրա պատճառով է, որ Տալվորիկի հայերը 20 տարուց ի վեր տուրք վճարելով քրդերին, չէին կարողացել վճարել նաև պետությանը»[5]։

1894 թ. Սասունի ապստամբության ողբերգական վախճանից հետո սկսվեց բողոքների ու ցույցերի մի շրջան։ Թուրքական կա-

---

1 «Մշակ», № 35; 23-ը մարտի 1896։

2 ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, ց. 1, գ. 131, էջ 33։

3 Նույն տեղը, էջ 131։

4 Նույն տեղը, էջ 132։

5 Նույն տեղը։

ռավարությունը արդեն հասել էր իր նպատակին։ Նրա բանակի վաշտերի և քրդական ուժերի հետ միասին լեռնականների դիմադրությունը ճնշվել էր։ Եվրոպական պետությունների և Ռուսաստանի միջամտությունից հետո միայն սուլթանը ստիպված Սասունից հեռացրեց թուրքական կանոնավոր բանակի և քրդական աշիրեթների ուժերին։

Սասունի ապստամբությունը ճնշելուց հետո, թուրքական կառավարությունը այդ ամբողջ դեպքերը համարեց քրդական աշիրեթների և նրանց ղեկավարների գործը։ Սասունի դեպքերի ամբողջ պատասխանատվությունը դրեց միայն ու միայն քրդերի վրա։ Եվ թուրքական մամուլը սկսեց այն միտքը հայտնել, որ քրդերն են հանդիսացել Սասունի վրա հարձակվելու նախաձեռնողները, իսկ կառավարական զորքերը ստիպված միջամտել են, նպատակ ունենալով դադարեցնել երկու ժողովուրդների միջև սկսված կռիվը։ Կառավարությունը այնպես էր ձևացնում, որ ինքը տեղյակ չի եղել Սասունում տեղի ունեցող իրադարձությունների մասին։

Ապստամբությունից հետո, երբ թուրքական կառավարությունը արդեն հասել էր իր նպատակին՝ ոչնչացնելով քրդական աշիրեթներից սասունցիներից գրաված ոչխարների մի մասը թուրքական աստիճանավորների միջոցով բաժանել հայկական ընտանիքներին։ Սրանով կառավարությունը նորից նպատակ ուներ ցույց տալ, թե օսմանյան կառավարությունը մեղք չունի Սասունի իրադարձությունների մեջ, այն բանը շատ լավ հասկացան ինչպես հայերը, այնպես էլ քրդերը։

Զլտրզի տիրակալը շատ ճարպիկ կերպով էր տանում իր քաղաքականությունը, որն ավելի ու ավելի պետք է սրեր հայ-քրդական առանց այն էլ լարված հարաբերությունները։ Պետական պաշտոնյաները, ղեկավարվելով սուլթանի այդ քաղաքականությամբ, ձգտում էին սասունցիներից թղթեր կորզել այն մասին, որ իբր թե Սասունի ժողովուրդը գոհ է օսմանյան կառավարությունից և դժգոհ միայն քրդական ցեղերից, որոնք ցանկանում են իրենց ենթարկել սասունցիներին։

Կառավարությունը համաշխարհային հասարակությանը խաբելու համար նաև «պաշտոնից» հանեց Բիթլիսի կուսակալ Թեհսին փաշային։ Սակայն սասունցիները, չստորագրեցին թուրքական կառավարությանն ուղղված ոչ մի հանրագիր, որ նրանք գոհ են թուրքական կառավարությունից։

Շատ հետաքրքրական է այդ տեսակետից Շենիք գյուղի բնակիչների ցույցը։ Կառավարական պաշտոնյաներն այդ գյուղերում ուզում էին համոզել գյուղի բնակիչներին ստորագրել մի համախոսական, որ իրենք ապստամբել են դրսից եկած խռովարարների դրդումով։ Ստանալով բնակիչներից այդ ստորագրությունները, նրանք բանտարկեցին իշխան Գրգոյին փոխարինող Միքայելին՝ և տարան Մուշի բանտը։ Զայրացած կառավարական պաշտոնյաների այս վարմունքից, գյուղի ամբողջ բնակիչները հաշվի չնստելով իրենց ծանր վիճակի հետ, շարժվեցին դեպի Մուշ և ստիպեցին թուրքական իշխանավորներին ազատ արձակել իրենց իշխանին։

Իր պաշտոնից ազատվելու նախօրյակին Բիթլիսի կուսակալ Բեհսին փաշան և Մուշի սանջակի մյութասարիֆը ցանկացան ստեղծել մի փաստաթուղթ Մուշ քաղաքի բնակիչների ստորագրությամբ, որտեղ նրանք շնորհակալություն էին հայտնում սուլթանին Սասունի ապստամբությունը ճնշելու համար։ Սակայն քաղաքի բնակիչները հրաժարվեցին այդպիսի մի փաստաթղթի տակ ստորագրելուց։ Միայն հաջողվեց մի քանի գյուղապետներից կորզել այդպիսի ստորագրություններ և ստեղծել շինծու վավերագիր, որը և շտապեցին հրատարակել այն ժամանակվա թուրքական թերթերում։

Սասունի ապստամբության զեկավարներ Մուրադը, Գևորգ Չավուշը, Ադամը և Ավոն գտնվում էին Մշո բանտում։ Գևորգ Չավուշը առաջարկում է Մուրադին փախչել բանտից, սակայն նա չի համաձայնվում։ Հնչակյան այս գործիչը ցանկանում էր դատարանի ամբիոնն օգտագործել թուրքական կառավարության հայաջինջ պլանները մերկացնելու համար։ Եվ Մուրադը կանգնելով դատարանի առաջ, բազմաթիվ փաստեր բերեց թուրքական կառավարության ոճրագործության մասին, սակայն դատարանը հաշվի չնստեց նրա փաստերի հետ և դատապարտեց Մուրադին 11 տարի բանտարկության։ Մուրադը աքսորվեց Տրիպոլի, 1906 թ. փախավ բանտից և 1908 թ. հեղափոխությունից հետո վերադարձավ Կոստանդնուպոլիս։

Սասունի ապստամբությունից հետո Կարինի բանտը նետվեցին 60 հոգի, որոնց քննությունը տևեց տարիներ։ Ամբաստանյալներից 37-ը ազատ արձակվեցին, 10-ը դատապարտվեցին «հայտնի չէ թե ինչ պատճառով», 13-ը մեռան քննությունների ընթացքում, չտանելով անթիվ խոշտանգումները։ Ամենից շատ չարչա-

բանքների և տանջանքների ենթարկվեց Համբարձում Պոյաճյանը։ Բիթլիսից բերելուց հետո նրա «վզին երկաթ անցուցին և ոտքերն ու բազուկներն ալ կաշկանդեցին ծանր շղթաներով»[1]։

Դրանից հետո Մուրադին տարան Բաղեշի կառավարիչի մոտ, որը նրան առաջարկեց ստորագրել ներքոհիշյալ թուղթը. «Կը զղջամ օտար տերությանց և մասնավորապես Անգլիո խոսքերուն հավատ ընծայացած ըլլալուս համար, անոնք մեծ գումարներ, զենք ու ռազմամթերք խոստացած էին ինձի. անոնց խոստումին վրա է, որ Թուրքիա եկա և խռովություններ հարուցի։ Բայց հիմա համոզված եմ, որ Անգլիա՝ մարդասիրության և Արևելքի քրիստոնեից պաշտպանության պատրվակին տակ իր սեփական շահերը միայն կը հետապնդեր. իր դրդումներուն անսալով խռովություններ հարուցի և պատճառ դարձա, որ դարերե ի վեր կայսերական կառավարության (Թուրքիո) գթառատ հովանիին տակ ճանդարտ ապրող հայերու արյունը հոսի»[2] (ընդգծումը հոդվածագրինն է։ — Հ. Պ.)։

Սակայն Մուրադը մերժեց այդպիսի մի գրություն ստորագրելը։ Դրանից հետո նրան սկսեցին տանջել և սպառնալ ավելի ծանր պատիժներով։ Սակայն նա նորից հրաժարվեց։ Թուրքական պաշտոնյաները սկսեցին մեկ-մեկ հանել նրա մորուքի մազերը, ապա մի կարպետի վրա լցրին երկաթի ու ապակու մանրած կտորներ և մերկացնելով նրան, գլորեցին նրա վրա, սակայն իզուր, նա այդքանից հետո էլ մնաց անդրդվելի։

Այլ ձևով էր մտածում Գևորգ Չավուշը, որը թուրքական դատարանում եղած խոսակցությունը ոչնչություն էր համարում։ 1896 թ. նա բանտի պատից անցք բացելով կարողանում է փախչել և դուրս գալով հասնում է Մշո ս. Առաքելոց վանքը։ Այստեղ նա հավաքում է իր ընկերներից մի քանիսին և նորից բարձրանում Սասունի աղատ և սեգ լեռները։

Սասունի ապստամբության ավարտից հետո ժողովրդի ողբերգական վիճակի մասին մանրամասն տեղեկություններ կան Էրզրումի ռուսական հյուպատոս Մաքսիմովի Կոստանդնուպոլիսի ռուսական դեսպան Նելիդովին 1894 թ. ուղարկած զեկուցագրում։ Նա նշում է, որ Սասունի հայերը թողել են իրենց գյու-

---

1 «Մուրճ», №8, 1905, էջ 91։

2 Նույն տեղը, էջ 91—92։

զերը և բարձրացել են լեռները, որոնք ավելի դժվարամատչելի են, քան Ղարադաղի (Զեռնոգորիա) լեռները[1]։

Ապստամբությունից հետո Սասունի հայերի վիճակը անտանելի էր, գյուղերի մեծ մասը ավերվել էր և թալանվել թուրք և քուրդ բարբարոսների կողմից։ 1895 թ. հունվարի 9-ին էջմիածին հասած երեք սասունցիներ կաթողիկոսին հղած նամակում իրենց երկրի վիճակի մասին գրում են. «Հայտնի է նորին վեհափառությանդ նվաստնուս աստ գալը, հետևապես մանրամասն հայտնի է մեր ներկա ողբալի վիճակը։ Ինչ որ օսմանյան կառավարությունը ջարդեց, այժմ այնքան և ավելի սովը կը ջարդե։ Այս վերջինը ավելի սոսկալի է՝ քան նույնիսկ ինքն օսմանցին։ Եվ ահա հանուն այդ սովատանջ ժողովրդյան դիմելով ներկա աղերսագրավ նորին վեհափառությանդ Աստվածընտիր Հայրիկ հայրապետիդ, կաղերսեմք կողկողագին, որ Ձեզ միակ հատուկ գթառատությամբ տնօրինեք մի կերպով օգնելու ստակով ու հացով այն հազարավոր սերտ ու գթո կարոտ անտեր-ու անխնամ ժողովրդոց, որոնք իրենց նվաղած աչքերով գեպի Ձեր սուրբ աջը հառած հաց կաղաղակեն»[2]։

Հատկանշական է, որ կոտորածների տարիներին ծանր վիճակ էր ոչ միայն Սասունում, այլև ամբողջ Արևմտյան Հայաստանում, որի բնակիչների մի մասը հեռանում էր հայրենիքից։ 1895 թ. սեպտեմբերի 22-ին Մ. Խրիմյանին ուղղված մի նամակում Արևմտյան Հայաստանի ժողովրդի կրած անօրինակ տանջանքների մասին ասված է. «Թե որ երկնքի աստղերուն հեսաբ կա, մեր քաշած ցավերուն էլ էմալ հեսաբ կա, մեր ծովացյալ մեղաց համար Աստված երկնուց մեզնե երես դարձուցած է։ Օսմանցին բռնացավ, քուրդն գազանացավ, սրանց թրեն ու սրեն աբուն կկաթեր, էլ համբերել դիմանալ չկրցանք, թորկինք հայրենիք, թորկինք տուն տեղ, թորկինք մալ դովլաթ, էդ զմմեն թորկեցինք, մեր խեղճ ճժերու ձեռքեն բռնեցինք, տկլոր, քաղցած, ծարավ ոուսի հոգն անցանք, ասինք, էստեղ կեղնի որ կտորմ խաց կտոր մը հանգիստ գտնենք չուրի տեսնենք մեր վերջ»[3]։

Ապստամբությունից հետո Սասունի գյուղերի մեծ մասը թա-

---

[1] Տե՛ս Геноцид армян в османской империи, сборник документов и материалов, под редакцией проф. М. Г. Нерсесяна, Е., 1966, էջ 20։

[2] Մատենադարան, Մ. Խրիմյանի արխիվ, թ. 103, վավ. 2։

[3] Նույն տեղը, վավ. 259։

լանվեց։ Ոչ լրիվ տվյալներով միայն Տալվորիկ, Հլոդենք, Հագմանք, Փուրի, Տուալենք, Խլհովիտ, Հոսնուտ, Հարթք, Սպաղանք, Զորեր, Եղկարդ, Էրած, Մերկեր գյուղերից տարվեց 254 ջորի, 3100 խոշոր եղջերավոր անասուն, 24.520 ոչխար, 790 պղինձ, 14.067 մեղվի փեթակ, 216 մազե վրան։ Թալանվեց 130 երկաթագործի խանութ, գրավվեց 130.000 լիտր երկաթ և 8000 ռ. արժողությամբ կանացի ոսկյա զարդեր[1]։

Թուրքական զորքերի հրամանատար Զեքի փաշան Սասունի բնակիչների հետ դաժան դատաստան տեսնելուց հետո, Աբդուլ Համիդի «Գահրը թեմիր» (արմատախիլ անել) հեռագրին պատասխանեց «իրատեի սենիյե թամամեն իճրա, Սասուն վե հավալիստինտե ասայիշ պեր քեմալ տըր» (կայսերական հրամանը գործադրված է ամբողջովին, Սասունի և շրջակայքի մեջ անդորրությունը կատարյալ է)[2]։

Էրզրումի հյուպատոս Մաքսիմովը 1894 թ. հոկտեմբերի 1-ին Նելիդովին գրած զեկուցագրում գրում էր այն վիճակի մասին, որ գոյություն ուներ Սասունում ապստամբության ճնշումից հետո։ Լեռնականները մնացել էին առանց օթևանի. քանդվել և այրվել էր Տալվորիկում 400 տուն, Գելիեգուզանում՝ 360, Սեմալում՝ 85, Շենիքում՝ 106, Ալիենում՝ 165, Իշխանձորում՝ 78[3]։

Թուրքական գազանությունների և թալանի մասին հրատարակվեցին բազմաթիվ գրքեր, բրոշյուրներ և հոդվածներ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, հայերեն և այլ լեզուներով։

Այդ փաստաթղթերում ասված է այն մասին, որ Մշո գաշտ գնացող թուրքական զորքերն իրենց հետ ունեին 80 բաք նավթ և թնդանոթներ, որոնցից նավթը գյուղերում հրդեհ առաջացնելու, իսկ թնդանոթները ինքնապաշտպանական կռիվների մասնակիցներին հարվածելու և ժողովրդի վրա հոգեբանական ազդեցություն թողնելու համար։ Թուրքական պաշտոնյաները և հրամանատարները Սասունի վրա հարձակվելու համար սկզբում նախապատրաստեցին քրդական ուժերին, արտաքնապես ցույց տալով, որ իրենք նպատակ չունեն հարձակվելու Սասունի վրա։ Որոշ ժամանակ անց քրդերը հրաժարվեցին շարունակել կռիվները և պահանջեցին, որպեսզի իրենց հետ սասունցիների վրա

---

1 Տե՛ս Սմբատ Բյուրատ, Ելտրզն Սասուն, Կ. Պոլիս, 1910, էջ 1237—1238։

2 Նույն տեղը, էջ 1302։

3 Տե՛ս Հայերի գենոցիդը...», էջ 21։

Զարձակվեն նաև կառավարական զորքերը։ Երզնկայից Սասուն ժամանած Ֆերիկ Օսման փաշան զորքերի առաջ կարդում է սուլթանական ֆերմանը հայերին ջարդելու մասին և նրանց հորդորում «խստաբար կատարել իրենց պարտքը»[1]։ Չնայած դրան, զորքը սկզբնական շրջանում չէր ցանկանում խաղաղ բնակչության դեմ կռիվ սկսել, սակայն սպայական կազմի ճնշման տակ սկսեց կոտորածը։ Դահիճները Գելիեգուզան գյուղում մարդկանց կապեցին իրար հետ և այրեցին։ Այդ գյուղում «մոտ 60 երիտասարդ. կանանց և աղջիկների լցրեցին եկեղեցին, զինվորներին թույլատրեցին նրանց անել այն, ինչ ցանկանում են, իսկ դրանից հետո սպանել նրանց, որը և կատարվեց», կամ թե «ջոկվեցին մեծ քանակությամբ առավել գեղեցիկ կանայք, որոնց առաջարկեցին իսլամը ընդունել և ամուսնանալ Թուրքերի հետ. նրանք հրաժարվեցին և սպանվեցին»[2]։

Սասունում կատարված գազանությունները ոտքի հանեցին ժամանակի առաջավոր մարդկանց։ Այսպես, ԱՄՆ-ում կազմվեց հայերի բարեկամ մի ընկերություն բանաստեղծ Ջուլիա Հաուի նախագահությամբ, որը որոշեց թերթի խմբագիր Սամուել Պորոզին ուղարկել Սասուն, տեղում կատարված դեպքերին ծանոթանալու համար։ Պատվիրակը շուտով տեղեկացավ, որ եվրոպական թերթերի թղթակիցներից մեկը՝ Էմիլ Դիլոնը գտնվում է Սասունում և գրում այդ իրադարձությունների մասին, դրանից հետո չմեկնեց Սասուն։ Սասունում կատարված դեպքերը, բնակչության կոտորածի լուրը ցնցեց ամերիկահայ գաղութին և այստեղ կազմակերպվեցին մի շարք միտինգներ[3]։

Սասունի 1894 թ. ապստամբության մասին գրվեցին շատ հոդվածներ ինչպես այդ ժամանակ, այնպես էլ դրանից հետո։ Այդ ապստամբությանը անդրադարձել են պատմաբանները և ամեն մեկը յուրովի է վերլուծել այդ ժամանակի իրադարձությունները։ Այսպես, օրինակ, վաստակաշատ պատմաբան Արշակ Ալպոյաճյանը, առանց խորանալու Սասունի այդ ժամանակաշրջանի պատմության ծալքերի մեջ, 1890-ական թվականների Սասունի ապստամբությունը համարում է օճառի պղպջակ[4]։ Մեր կարծիքով պատմաբանը իրավացի չէ, քանի որ նա հաստատա-

---

1 «Наблюдатель», СПБ, 1895, № 12, стр. 3.

2 Հայերի գենոցիդը..., էջ 27։

3 Տե՛ս Մ. Ծիրմեճյանի նշվ. աշխ., էջ 35 և 43։

4 Տե՛ս Պատմութիւն Եւզոկիոյ հայոց, Գահիրէ, 1952, էջ 1144։

պես գիտեր, որ այդ ապստամբությունը Սասունի բնակիչների երկար տարիների լեռնացած զայրույթն էր, որը այդ տարիներին հրաբխի պես ժայթքեց Սասունի լեռներում։ Հերոսական այդ ապստամբությունը միայն կարող է պատիվ բերել հայ ժողովրդին։ Այդ կռիվներում զոհվեցին Սասունի լեռնականներից շատերը, մնալով իրենց ժողովրդի սրտում։ Սասունի 1894 թ. հերոսական ապստամբությունը՝ ճիշտ չի գնահատում նաև Մ. Վարանդյանը, որը այն համարում է «Սասունի խլրտումներ» և այն էլ «առանց քիչ-շատ լուրջ ու զինյալ պատրաստության»։ Հեղինակը այդպես է գնահատում Սասունի ապստամբությունը, որովհետև նրա կազմակերպիչները հնչակյաններն էին։ Մ. Վարանդյանը հայտարարում է, որ երբ Մուրադը գալիս է Թիֆլիս և դաշնակցությունից խնդրում է օգնություն, այդ «իրեն չմերժվեցավ»[1]։ Սակայն ինչ օգնություն ցույց տվեցին այդ կուսակցության ղեկավարները Սասունի ապստամբներին, մեր պրպտումները ոչ մի բանի չհանգեցրին։

Հ. Գ. Վարդանյանը իր «Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները XIX դարի վերջին քառորդում» աշխատության մեջ թույլ է տվել մի շարք սխալներ։ Այսպես, գրքի 186 էջում նա Մուրադին Համբարձում ասելու փոխարեն անվանում է Հարություն։ Սասունի դեպքերի սկիզբը դնում է ոչ թե 1891, այլ 1894 թվականը։ Նույն աշխատության մեջ հեղինակը գրում է. «Հասնելով Անդոք, Զեքի փաշան հրամայում է հարձակման անցնել և թնդանոթների կրակով տակն ու վրա անել Սասունը։ Թշնամու այդ գերազանց ուժերի դեմ սասունցիները կռվում էին քաջաբար։ Մուշի դաշտավայրը ծածկվեց մարդկային դիակներով։ Ուժերն անհավասար էին, շարունակել կռիվը այլևս անհնարին էր, ապստամբությունը պարտվեց։ Թշնամուն հաջողվեց գերի վերցնել Մուրադին և տանջամահ անելով փոխադրել Մուշի բանտը և սուլթանի հրամանով վերջ տալ նրա կյանքին»[2]։

Այդ քաղվածքում երկու սխալ կա։ Անվիճելի է, որ սասունցիները այդ ժամանակ հերոսաբար են կռվել, սակայն նրանք

---

1 Միքայել Վարանդյան, Հ. Յ. Դաշնակցության պատմություն, առաջին հատոր, էջ 66։

2 Հ. Գ. Վարդանյան, Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները XIX դ. վերջին քառորդում, Երևան, 1967, էջ 194—195։

կռվում էին ոչ թե Մշո դաշտում, այլ Սասունի լեռներում։ Ապա, Համբարձում Պոյաճյանը (Մուրադ) գերի ընկնելուց հետո ոչ թե սպանվեց, այլ ստացավ 101 տարի բանտարկություն, 1906 թ. բանտից փախավ, 1908 թ. վերադարձավ Կոստանդնուպոլիս, ընտրվեց Թուրքական պառլամենտի անդամ և 1915 թ. կախաղան հանվեց։

Սասունի 1894 թ. ապստամբության և Թուրքական գազանությունների մասին 1895 թ. ռուսական մի ամսագիր հրատարակեց Գրինի գիրքը «Թուրքական գազանությունները Հայաստանում» վերնագրով, որի մեջ հեղինակը հանդես եկավ Սասունի լեռնականների դատի պաշտպանությամբ։ Գրքում նկարագրված է Թուրքական բանակի և շրջակա քրդական ուժերի կատարած գազանային արարքները։ «Սասունի անմարդկային ջարդը,— ասված է այնտեղ,— որը տեղի ունեցավ անցած տարի 1894 թ. օգոստոսին Սասունի բարձունքներում, Վանի լճի մոտ»[1] և նրա բնակիչների աղետալի վիճակը գրավեց Եվրոպայի ուշադրությունը։ Գրինը մանրամասնաբար անդրադառնում է Սասունում 1894 թ. տեղի ունեցող բոլոր իրադարձություններին և՝ ամերիկացիների ուշադրությունը հրավիրում այն ծանր պայմանների վրա, որ ապրում է հայ ժողովուրդը Թուրքիայում։ Գիրքը բաղկացած է երկու մասից, առաջինում հեղինակը նկարագրում է Սասունի դեպքերը, իսկ երկրորդում վերլուծում է այն դաժան ռեժիմը, որի մեջ ստիպված ապրում է հայ ժողովուրդը։ Սասունում Թուրքական զինվորների և համիդիեական գնդերի կատարած գազանությունների մասին ունեցած իր տվյալները Գրինը վերցրել է Սասունի մոտ ապրող ու գործող ամերիկյան քաղաքացիներից։ Գրքում հանդես են գալիս ամերիկյան քսան քաղաքացիներ, որոնք ի լուր ամենքի ներկայացնում են իրենց նամակներն ու տեղեկանքները։ Այդ մարդիկ ամերիկյան հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ էին։ Դիմումի վերջում նրանք խնդրում են հանգամանորեն ծանոթանալ այդ փաստերի հետ և միջոցներ ձեռք առնել Հայաստանում եղած վիճակը շտկելու համար։ Ամերիկյան քաղաքացիները ցույց տվեցին, որ Սասունում ոչնչացված է 27 գյուղ, «6000 տղամարդիկ և կանայք ու երեխաներ սպանվել են զորքերի և քրդերի կողմից»[2]։ Այնուհետև

---

[1] «Русская мысль», 1895, т 11, стр. 109.

[2] Նույն տեղը, էջ 110։

նրանք հաստատում են, որ Սասունում կատարված գազանությունները կատարվել են սուլթանի հրամանների հիման վրա։ Նրանք միաժամանակ վկայում են, որ գերի ընկած երիտասարդներից մի քանիսին կենդանի այրում էին, երեխաներին կանգնեցնում էին շարքով իրար ետևից և կրակում նրանց վրա, փորձելով իմանալ, թե հրացանից արձակած մի գնդակը քանի մարմնի միջով կարող է անցնել[1]։

1895 թ. հունիսի 26-ին Ջեստերում (Անգլիա) Գլադստոնը արտասանեց հայկական դատը պաշտպանող մի հայտնի ճառ, որի մեջ նշում էր, թե այն, ինչ կատարվեց Սասունում ու Արևմտյան Հայաստանում, պետք է համարել օսմանյան կառավարության կատարած գործը, որին մասնակցել են ոչ միայն քրդերը, այլև թուրքական կանոնավոր բանակի զինվորները[2]։ Գլադստոնը միաժամանակ ասաց, որ այդ կոտորածներն արվում են հայկական տարրը քշացնելու և ոչնչացնելու նպատակով։ Իր ճառի վերջում նա հայտարարեց, որ թուրքական կառավարությունը իր առջև խնդիր է դրել ջարդել Օսմանյան Թուրքիայում եղած քրիստոնյա բնակիչներին, առանձնապես հայերին Հայաստանում[3]։

Պետք է նշել, որ թուրքական բանակի առանձին սպաներ հայ ժողովրդի հանդեպ ցուցաբերել են ոչ թե իրենց ղեկավարների կողմից թելադրվող դաժանությունները, այլ մարդասիրական վերաբերմունք։ Արխիվում պահպանվել է Պողոս սարկավագ Սրապյանի «Հայոց պատմություն (Զեյթունի, Սասունի, Կարինի, Վասպուրականի ջարդերի)» վերնագրով, որի մեջ նա բերում է հետևյալ փաստը. «Սասնո մեծ պատերազմին պոլսեցի մի ուսյալ հարյուրապետ մը տաս և ութ հատ երեք չորս տարեկան տղաքներ ժողովելով, գաղտնի կերպով անտառաց մացառուտներուն մեջ պահելեն զկնի մի փոքր հյուղ կը շինե սույն երեխաները կը պատսպարե և յուր ոճիկով կը կերակրե զանոնք տասներհինգ օրի չափ, իսկ տաս և հինգ օրեն զկնի երբ ահռելի պատերազմը կը վերչանա Մշեցի Շավեշ-անուն ոստիկանի մը կը հանձնե սույն տղաքը. և սույն ոստիկանին մի օսմանյան ոսկի կուտա իբրև ճանապարհի ծախս և կը պատվիրե ուղղակի Հա-

---

1 Տե՛ս «Русская мысль», 1895, т. 11, էջ 111։

2 Տե՛ս Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896, էջ XV։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 21։

յոց Առաջնորդարանը կը տանիս և առաջնորդին կը հանձնիս. եթե դուն ուղղությամբ տանիս եկածիս պես հեմ պարգև կուտամ քեզ, հեմ պաշտոնդ կրարձրացնեմ, ըսելով հարյուրապետը սույն երեխաները ոստիկանի հետ ճանապարհ կը դնեն, իսկ արյունարբու ոստիկանն ինչ տանջանելի չարչարանքներով տարած վերջի ի՛ վերջո, Մուշեղյանց բերդի տակեն ահռելի մի ջո՛ր կանցնի նույն ջուրին գլուխը գալով տաս և ութ տղայոց գլուխները կտրելով, ջուրը կը ձգեն, իսկ հարյուրապետը Մուշ գալով կը հարցնեն սրճարանին մեջ, որ փող պարգևեմ սույն ոստիկանին (ուլան Շավաշ, նե յափտըն թեսլիմ էթտեյիմ չոճուկլարը, հիշ նե յափտաճաղրմ, պաշլարընը քեստիմ սույա տյեռքտիմ— Ա՛յ Շավաշ, ինչ արեցիր քեզ հանձնած երեխաներին, ոչինչ, ինչ պետք է անեի, գլուխները կտրեցի, ջուրը նետեցի), իսկ հարյուրապետը բարկանալով և հայհոյելով, որ այդպիսի անմեղ մանկանց այդպիսի անօրեն, անհավատ մարդոց ձեռամբ, որ այդպիսի թագավորություն մը ինչ պետք է շահ ունենա, բացի խայտառակութենե զատ ըսելով թուրը կը քակե յուր մեջքեն, գետին կը զարնե կը կոտրե, պետք չէ ինձ այսուհետև ըսելով, ուղղակի՝ Անգղիո դեսպանին քով կերթա, ես այսուհետև քրիստոնյա՛ եմ ըսելով, ոչ թե մահմեդական»[1]։

Սուլթանական կառավարությունը համաշխարհային հասարակայնությանը հանգստացնելու և խաբելու համար Սասունի դեպքերից հետո սկսեց առաջ քաշել հայկական գավառներում և գյուղերում բարենորոգումներ մտցկացնելու հարցը։ Նա հանձնաժողով ուղարկեց Սասուն, որի մեջ մտնում էին Շեֆիք բեյը (նախագահ), Ճելալ բեյը, Ծմեր բեյը, Մեջիդ բեյը և Հասան Թեֆիք փաշան։ Այդ հանձնաժողովի կազմում էին նաև օտարերկրացի երեք հյուպատոսներ՝ Վիլպերը (ֆրանսիացի), Պրժևալսկին (ռուս) և Շիֆլեյը (անգլիացի)։ Սակայն հանձնաժողովում չէին ընդգրկված հայերից և ոչ ոք։ Հանձնաժողովը 1895 թ. հունվարին արդեն Մուշում էր, որտեղ մինչև նույն թվականի հուլիսի 26-ը ունեցավ 106 նիստ, լսեց 190 վկաների, որոնցից 23-ը կառավարական պաշտոնյաներ, 6-ը՝ բանակի սպաներ, 6-ը՝ հայ հոգևորականներ, 61 քրդեր, 2 մշեցի հայեր, 78-ը խավրանցի հայեր և 18-ը խիանցի հայեր։

Կոստանդնուպոլսի հայ պատրիարքը այդ ժամանակ ցանկա-

---

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 453, թ. 27—28։

նում էր մի ներկայացուցիչ ուղարկել Սասուն, դեպքերին ծանոթանալու և պատրիարքարանին իրական վիճակը զեկուցելու համար, սակայն օսմանյան կառավարությունը մերժեց այդ առաջարկը։ Ավելին, թուրքական իշխանավորները ամեն ինչ անում էին, որպեսզի Մուշում արգելվի հանձնաժողովի անդամների հանդիպումները լեռնականների հետ։ Այսքանից հետո թուրքական պաշտոնյաները համոզում էին հայոց Իզմիրլյան պատրիարքին գոհունակության ուղերձ մատուցել սուլթանին այն դեպքում, երբ ողջ ազգը արյան մեջ էր։ Ջստանալով պատրիարքի դրական պատասխանը, սուլթանի առաջին թարգման Մյուներ բեյը նրան կաշառք է առաջարկում, սակայն հաստատակամ պատրիարքը պատասխանում է, որ իր «միակ փառքը, բարձրությունը, մեծությունը և հարստությունը յուր ազգի բարօրությունն է, որից դուրս ոչ մի տեսակ գանձ ինքը ոչինչ է համարում»[1]։

Այս դեպքերի կապակցությամբ մշեցի մի կաթոլիկ հայ իր եղբորը՝ Կ. Պոլիս գրում է. «Սասունի կոտորածների վրա քոզ քաշել աշխատող խումբն արդեն հուսահատ հայերին հավատացնում է, թե եվրոպական թերթերում հրատարակվածները սուտ են, թե հայերի վիճակը երբեք չպետք է փոխվի, թե ինչպես ռուսները եկան մինչև Էրզրում և մինչև Սան Ստեֆանո ու ստիպված եղան կրկին հետ դնալու իրենց տեղերն, այս անգամ էլ քննիչները պիտի գան ու դարձյալ հետ գնան, առանց մի բան անել կարենալու, այնինչ քննության ժամանակ հոգուտ կառավարության խոսողները, որպես հավատարիմ հպատակներ, պետք է վարձատրվեին և երբեք նրանց որևէ վնաս չպետք է հասնի, քննիչների առաջ ի վնաս կառավարության խոսողները կենթարկվեն ավելի խիստ տանջանքների...»[2]։

Սասունի կոտորածից հետո բնակիչներից քչերը կարողացան անցնել ռուսական սահմանը։ Նրանցից մեկն էր 40-ամյա գեղիեգուզանցի Ջարեն։ Արխիվում պահպանվել է նրա պատմածները Սասունի դեպքերի մասին։ Նա ասում է, որ «թնդանոթները հաղթեցին մեր սասունցոց, չէ թե թուրքի զորքերը»[3], «ով կարողացավ մեզանից փախչել այրերը մտնել, ազատվեց սրից, ով զորքի ճանկն ընկավ, մարդ թե կնիկ, մանուկ թե ծծկեր, ամենն

---

1 ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 1272, թ. 27։

2 Նույն տեղը, թ. 38։

3 Նույն տեղը, գ. 1273, թ. 11։

էլ խողխողվեցին։ Մեր մի մասը ցրվեց անտառի մեջ, նրանց հետ էր նորընծա Տեր-Պետրոսը, վալիի մարդիկ հետեւելով, շատերի հետ Տեր-Պետրոսին բռնեցին ու 28 կտոր 'արին, ինչպես որդուշ դեն ածեցին»[1]։

Հպարտ սասունցի կնոջը հանդիպող լրագրողը այսպես է նկարագրում այդ հանդիպման պահը. «Չարեն 40 տարու մոտ կլիներ, հայացքը խոր ու մութ, դեմքը մելամաղձիկ, աչքերը հրացայտ, կասկածոտ ժպիտը ինչպես թոշնած մանուշակ, հասակը բարձր, քալուվածքը խիզախ, նվեր ընդունելիս անսահման հրպարտ։ Նրա կրակոտ աչքերը դիմացի նվիրատուին կարծես ասելիս լինեն,— ես ձրիակեր չեմ, ձեր փարան ձեզ լինի, ինձ իմ սիրած լեռներս տվեք, լեռներս, փարթամ ու հարուստ Գելիեգուզանս ավեր ու մոխիր է դարձել, ամա՜ն...»[2]

Արխիվում պահպանվել է նաև մի զեկուցագիր, «Պատճեն բողոքագրին առ Եվրոպա։ Առ վսեմապատիվ ներկայացուցիչս մեծազոր տերությանցն Եվրոպիո որք՝ ի Մուշ»[3] 'վերնագրով։ Այս ձեռագրի տակ ստորագրել է Համբարձում 'աբեղա Աբեղյանը։ Ոչ մի կասկած չկա, որ այդ դիմում-զեկուցագիրը հանձնվել է եվրոպական պետությունների ներկայացուցիչներին, որոնք 1894 թ. Սասունի դեպքերից հետո ժամանեցին Մուշ։ Հեղինակի տողերից երեւում է, որ ինքը վկան է «շատ թշվառ տեսարաններու» և «շատ վշտեր և անասելի տանջանքներ անձիս վրա եմ կրած», սակայն լսելով նրանց գալուստը, ուղարկում է «քննիչ հանձնաժողովիդ Սասունի սոսկալի կոտորածին նկարագիր, որո ականատես եղա նվիրակությանս ատեն հուսամ թե հավատարիմս ձեռք ստացած կլինիք անվտանգ»[4]։

Զեկուցագրի հեղինակը բազմաթիվ փաստերով մերկացնում է թուրքական կառավարության հայատյաց և հայաջինջ քաղաքականությունը. միաժամանակ քննադատության տակ առնելով եվրոպական պետություններին հայկական հարցի նկատմամբ ունեցած երկդիմի վերաբերմունքը ասելով. «Քրիստոնյա Եվրոպան դարերով հաստատված այս իրողություն և իրան աչքերով տեսած այս գառն ճշմարտությունքը գեռ քննելու կարոտ կը հա-

---

1 ՎՍՍՀ ԳԿՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 1278, թ. 11։

2 Նույն տեղը։

3 ԳԱԹ 2 Առաքելյանի ֆոնդ, վավ. № 1899, էջ 2։

4 Նույն տեղը էջ 3

մարեն և գեռ ապացույց ալ կը փնտրեն այն ալ տաճկաց կառավարության միջոցով»[1]։

Հեղինակը գտնում է, որ թուրքական կառավարության կողմից ուղարկված քննիչ հանձնաժողովը ամեն գնով ցանկանում է ծածկել փաստերը և «սուրջ 'ի ձեռին նստած Մշո մեջ, օրական քանի մը քուրդ ու թուրք, կամ նախապատրաստված մատնիչներու և կաշառված վկաներու հարցաքննելով ժամանակ կը վատնեն, որպեսզի իշխանությունք այդ ամեն կենդանի և իրական փաստեր հնարավորություն ունենան և հաջողեսցեն ծածկելու, անհայտացնելու և ո՛վ կարող է երաշխավորել, որ ամենայն ինչ տաճիկ կառավարության ըսածին պես չպիտի լինի»[2]։

Սասունի 1894 թ. ապստամբությունից հետո 1895 թ. մարտ և ապրիլ ամիսներին Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի դեսպանների ներկայացրած հուշագրում Հայաստանի ռեֆորմների վերաբերյալ գրվեց նաև Սասունի մասին։ Հուշագրի իններորդ գլուխը կոչվում էր «Սասունի, Տալվորիկի և այլ տեղերի դեպքերի զոհ գնացած հայերի վարձատրությունը» վերնագիրը։ Այդտեղ ասված էր. «Սասունի, Տալվորիկի և այլ տեղերի դեպքերի միջոցին թե՛ իրենց անձով և թե՛ իրենց գույքով վնասված հայերը պետք է ստանան իրենց պատշաճ հատուցումը և վարձատրությունը։

Կայսերական բարձր վերահսկող կոմիսիոններին պետք է հանձնվի ուսումնասիրել այդ գործը և ձեռք՝ առնել նպատակահարմար միջոցներ»[3]։

Մեծ պետությունների ներկայացուցիչները 1895 թ. մշակեցին և մայիսին սուլթանին ներկայացրին հայկական բարեկարգումների ծրագիրը, որը և պատմության մեջ ստացել է Բարենորոգումների մայիսյան ծրագիր անունը։ Այն ժողովրդին ժամանակավորապես լռեցնելու և եվրոպական գիվանագիտության աչքերին թոզ փչելու մի փաստաթուղթ էր, որից հայ ժողովուրդը ոչ մի օգուտ չստացավ։

Բարենորոգումների այդ ծրագրում ոչինչ չէր ասվում աշխատավոր գյուղացու, արհեստավորի և ժողովրդի մասին։ Եվ այս ծրագիրը շուտով անհայտացավ, նրանից մնացին թղթի կտորներ,

---

1 ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆոնդ, վավ. № 1899, էջ 9։

2 Նույն տեղը, էջ 19—20։

3 Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում, էջ 185։

քանի որ 1895—96 թվականներին սուլթանի թելագրանքով սկսվեցին հայերի մասսայական կոտորածները։

Կարմիր սուլթանը, որը դեռ 1877—78 թվականների ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո Զեյթունում մի զորանոց կառուցեց ժողովրդի պոռթկումները զսպելու նպատակով, 1894 թ. կոտորածներից հետո որոշեց զորանոցներ կառուցել նաև Սասունի մի քանի գյուղերում։ Կառավարության պլանով պետք է կառուցվեին զորանոցներ Շենիք, Գելիեգուզան և Տալվորիկ գյուղերում։ Այդ նպատակով ձմռան բուք ու բորանին Մուշից մեծ քանակությամբ հայ արհեստավորներ ուղարկվեցին Սասուն։ Զորանոցների կառուցումը կատարվում էր ձրի, իսկ նրանց համար նախատեսված դումարները մտան թուրքական սպաշտոնյաների գրպանները։ Զորանոցները շատ արագ կառուցվեցին։ Այդ կապակցությամբ Սասունի իշխաններն ու երևելիները հավաքվեցին և որոշեցին կուսակալին ներկայացնել ներքոհիշյալ պահանջները. «Ոչ մեկ զինվոր իրավունք պիտի ունենա մտնելու մեր գյուղերը. մեր կերակուրը սովորաբար, կորեկ ու թանապուր ըլլալով զորքը չի կրնար ուտել, հետևաբար՝ ուտելիք գնելու պատճառաբանությամբ՝ պետք չէ մտնե գյուղին մեջ։ Հետո, անոնք իրավունք պիտի չունենան մուտենալու մեր արտերուն, ուր առհասարակ կաշխատին մեր կիներն ու աղջիկները, ըստ մեր վաղեմի սովորության։ Անոնց ամբողջ պարենը հատկապես պետք է քաղքեն բերվի։ Վառելափայտ և միս ձեռք բերելու համար փոխարժեքը անմիջապես պետք է վճարվի կանխիկ։ Եթե, հակառակ պարագային, գոհացում չի տրվի մեր այս պահանջներուն, մենք պատրաստ ենք նորեն բարձրացնելու ապստամբության դրոշը»[1]։

Կուսակալը ստանալով այդ պահանջագիրը, ստիպված դիմում է Կոստանդնուպոլիս, որից հետո հայտնում սասունցիներին, որ նրանց պահանջը պետք է բավարարվի։ Գարնան հետ ձմեռվա սառնամանիքի ժամանակ հապճեպ կառուցված թուրքական զորանոցները սկսեցին փուլ գալ և կառավարությունը ստիպված իր զինված ուժերը Սասունից տեղափոխեց Մուշ։ 1894 թ. գեպքերից հետո թուրքական կառավարությունը Մուշի ս. Կարապետ, ս. Հովհաննես և Առաքելոց վանքերի մեջ տեղավորեց մեկական գումարտակ սպառնալով, որ եթե այդ վայրերում կարդ

---

[1] Հարազատ պատմություն Տարոնի, էջ 216։

ու կանոն չլինի, ապա այդ եկեղեցիները կվերածվեն մզկիթների։ Հայկական ազգային-ազատագրական շարժումները զսպելու համար կառավարությունը Մուշի Ալվառինջ, Նորաշեն, Առինջ, Ցրոնք, Կուրավի, Գոմս և Խըզլաղաճ գյուղերում նույնպես զինվորական ուժեր տեղավորեց։ Կառավարության կեղեքումներն ու ճնշումները հասան իրենց գագաթնակետին և ահա հենց այս ժամանակ էր, որ Տարոնում սկսվեց մի շարժում՝ Ռուսաստանի հովանավորության տակ մտնելու մասին։ Շարժման կազմակերպիչները առաջին հերթին դնում էին ռուսական օրթոդոքս դավանությունն ընդունելու հարցը։ Այդ կապակցությամբ սկսվեց գյուղերի բնակիչների հանրագրերի հեղեղը Բաղեշի ռուսական հյուպատոսին։ Այս հանրագրերը ստանալուց հետո Մուշ էր ժամանում Բաղեշի ռուսական հյուպատոսը և սկսում է խորհրդակցել տեղի երևելիների հետ։

Քնած չէին նաև թուրքական պաշտոնյաները, որոնք այդ մասին տեղյակ պահեցին Կոստանդնուպոլսի կենտրոնական կառավարությանը, որը պատրիարքարանի միջոցով սկսեց միջոցների դիմել այդ շարժումը կանխելու համար։ Իրականում թուրքական կառավարությունը շատ էր ցանկանում, որպեսզի հայ բնակիչները այլ վայրեր տեղափոխվեն, քանի որ մահմեդական վերնախավը դրանից հետո հնարավորություն կունենար հողեր գնել հայկական գյուղերում, ապա տներ կառուցել և հաստատվել այնտեղ։ Բացի դրանից, կառավարությունը սկսեց Մուշի հայկական գյուղերում տեղավորել Կովկասից Թուրքիա գաղթած մահմեդականներին (մուհաջիրներ)։

Սասունի դեպքերից հետո ժողովրդի վիճակը ավելի ծանրացավ։ Արխիվում են գտնվում Մուշի Վարգան վարդապետի երկու զեկուցագրերը, մեկը ուղղված Մատթեոս պատրիարքին, իսկ մյուսը՝ Մ. Խրիմյան կաթողիկոսին։ Դրանցից առաջինը գրված է 1895 թ. նոյեմբերի 1-ին և նշվում է, որ նորից շարունակվում է ժողովրդի թալանը։ Այսպես, այդ թվականին ճեպրանցի քրդերը հարձակվում են ս. Կարապետ վանքի ագարակի վրա և թալանում են այնտեղ գտնված 553 գլուխ ոչխարներն ու գույրը։ Վարդան վարդապետը նշում է, որ Բաղեշի հայերի կոտորածի մասին լսելով, Մշո դաշտի ժողովուրդը վախենում է, որ այն կարող է սկսվել նաև Մուշի դաշտում և այդ պատճառով երկրագործությունը համարյա դադարել է։ Թալանը շարունակվում է և «Կենճի նուլի և նիան գամառակաց ամբողջ հայ գյուղերը

թալանվեր և ավարի առնվեր են հայոց ինչքեր և ստացվածք...»[1]։ Ապա նշվում է, որ քրդական աշիրեթները պատրաստվում են նորից արշավանք Սասունի լեռնականների դեմ «և այրել նորաշեն տուներն և երկրորդ ջարդ մը ևս տալով սպառ-սպուռ ջնջել սասունցիներին, արդեն Սասնո Զիթենք և Կելիեմսուր գյուղերը քանի օր առաջ թալանվեցին աստի և անտի ի նորո հայթայթված գույքերեն»[2]։

Այնուհետև զեկուցագրի հեղինակը նշում է, որ քուրդ աղաները լցվել են Ֆասունի, Շատախի գյուղերը «մահու և ավարառության սպառնալիքով խաֆիրության տուրք կը պահանջեն երկպատիկ և քառապատիկ»[3]։

Ամենայն հայոց կաթողիկոսին գրված զեկուցագրում Սասունի ժողովրդի կրած տառապանքների մասին Վարդան վարդապետը գրում է. «Սաւուն այցելած միջոցնուս ամենաստույգ տեղեկություններ հավաքեցինք կոտորածի և ողջ մնացածներու թվոյն վրա, նույնպես այրված գյուղերու և ընդհանուր վնասոց»[4]։ Ըստ նրա բերած տվյալների Սասունի ժողովրդի կրած մարդկային կորուստը հասնում է 5000 հոգու։

1894—96 թթ. կոտորածների ժամանակ Մուշի և Բաղեշի գյուղերից դեպի Ռուսաստան և Ամերիկա սկսեցին գաղթել մեծ թվով հայ ընտանիքներ։ Ջարդը դադարելուց հետո նրանց մի մասը նորից ցանկացավ հայրենիք վերադառնալ, թուրքական իշխանությունները սկսեցին դիմադրել և թույլ չտալ։ Երբ ռուսական կառավարությունը ցանկացավ «ետ դարձնել գաղթողներին, անդրդվելի արգելք հանդիպեցավ տաճկական կառավարության կողմից, նույնիսկ ծածուկ դարձողները բռնվեցան, կամ կրկին ստիպվեցան փախչել, կամ հավիտյանս բանտերում նստել»[5]։

Սուլթանական կառավարությունը կոտորածներից հետո ստեղծել էր «Գաղթականական հանձնաժողով» և նպատակ ուներ ավելի դյուրին դարձնելու երկրից գաղթող հայերի գործը։ Այսպես, միայն 1899 թ. այդ նպատակի համար տրվել էր 60 հազար ոսկի, որը ծառայում էր «գաղթականության գործը թեթևացնելու, գաղթել ցանկացող հայու տունը, կալվածքը գնել, ուրեմն միջոց տալ

---

1 Լեոյի արխիվ, ց. 1. գ. 144, թ. 63։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը։

5 «Արարատ», հուլիս—օգոստոս, 1907, էջ 665։

գաղթելու, իսկ կայքը հանձնել եկվոր թուրքի կամ լեզկու, որոնց հոսանքի միշտ կա և գնալով սաստկանում է»[1]։

Սասունի 1894 թ. կոտորածներին անդրադարձան նաև գերմանական սոցիալ-դեմոկրատիայի հայտնի ներկայացուցիչները։ 1894 թ. Ֆ. Էնգելսը գրեց, որ հայ ժողովրդի ողբերգությունն այն է, որ նա «դժբախտություն ունի գտնվելու թուրքական Սցիլլայի և ռուսական բռնակալության խարիբդայի միջև» և որ այդ տանջված ժողովրդի ազատությունը «հնարավոր կլինի միայն այն օրը, երբ կտապալվի ռուսական ցարիզմը»[2]։

1896 թ. Ռոզա Լյուքսեմբուրգը հանդես եկավ «Ազգային պայքարը Թուրքիայում և սոցիալ-դեմոկրատիան» հոդվածաշարով[3], որտեղ նա նշում էր, թե գերմանական սոցիալ-դեմոկրատական մամուլում ոմանք այն կարծիքն են հայտնում, թե Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունները հետևանք են Ռուսաստանի հրահրումների և իբրև թե «հայերի ապստամբությունները ռուսական ռուբլիով գնված գործակալների գործն է» և գերմանական մամուլի որոշ օրգաններ իրենց հոդվածներում «Թուրքիան ներկայացնում է որպես հեքիաթային մի աշխարհ», որտեղ «տարբեր ազգությունները դարերով կողք կողքի խաղաղ ապրում էին» և «ամենակատարյալ ինքնավարություն վայելում» և վերջապես եվրոպական դիվանագիտությունն է Թուրքիայում ստեղծում արհեստական դժգոհություններ և խանգարում «անմեղ զառ սուլթանին»[4] իրականացնելու նախատեսված ռեֆորմները։

Այնուհետև Ռ. Լյուքսեմբուրգը հանգամանորեն վերլուծում է XIX դարում թուրքական կառավարության անցկացրած ռեֆորմները, որոնք այդ երկրում «վերացրին ֆեոդալական իշխանությունը և նրա փոխարեն ստեղծվեց կենտրոնական բյուրոկրատիա, մշտական բանակ և ֆինանսական նոր սիստեմ»[5]։ Սակայն այդ ռեֆորմները ոչնչով չփոխեցին Թուրքիայի իրավիճակը և երկրում նորից մնացին «ծանր, անուղղելի հարկեր, հարկ յուրաքանչյուր գլուխ անասունից և ամեն մի ծղոտից, մաքսատուրք, դրոշմատուրք, իմիչքների հարկ, տասնորդական տուրք՝

---

1 «Արարատ», հուլիս—օգոստոս, 1907, էջ 666։

2 К. Маркс и Ф. Энгельс, соч. изд. второе, т. 39, стр. 271.

3 Գ. Ղարիբջանյան, Ռ. Լյուքսեմբուրգը և Կ. Լիբկնեխտը հայ ժողովրդի մասին, Երևան, 1971։

4 Նույն տեղը, էջ 47—48։

5 Նույն տեղը, էջ 49։

պարբերաբար քառորդ չափի ավելադիրով, այնուհետև եկամտահարկը՝ քաղաքում՝ 30, գյուղում՝ 40%-ի չափով. քրիստոնյաների համար զինապարտությանը փոխարինող հարկ և վերջապես նաև հասարակական կոռեր—ահա սրանցով պետք է ժողովուրդը ծածկեր բարենորոգված պետության ծախսերը»[1]։

Ռ. Լյուքսեմբուրգը նշում էր, որ բռնապետական այդ երկրում «պետական բոլոր պաշտոնները փաստորեն վաճառվում են և չեն ձարձատրվում կենտրոնական իշխանության կողմից. պաշտոնյաները մեծ մասամբ ապրում են տեղական ազգաբնակչության եկամուտներից — բյուրոկրատական մի տեսակ ավատ։ Այսպես ամեն մի փաշա ազատ չափով կարող էր գավառը փետրահան անել. հենց որ դրամական մի մեծ գումար Ստամբուլ ուղարկելու կարիք լիներ»[2]։

Այնուհետև նա գրում է, որ Թուրքիայում «քրիստոնյան օրենքի առաջ այլ էր. նրա երդումը մահմեդականի դեմ արժեք չուներ, նա զենք կրելու իրավունք չուներ. որպես կանոն պետական պաշտոն վարել չէր կարող»։ Ստեղծված այդ ծանր պայմանների պատճառով, բնականաբար առաջ էր գալու «քրիստոնյա ազգերի մահացու կռիվը Թուրքիայի դեմ՝ հույների, բոսնցիների և հերցոգովինների, սերբերի և բուլղարների։ Հերթը այժմ հայերինն է»[3]։

Ռ. Լյուքսեմբուրգը պնդում է, որ Թուրքիայում ապրող ճնշված ազգերի, որոնց թվում նաև հայերի ազգային-ազատագրական շարժումները և ապստամբությունները դրսի՝ այսինքն ցարիզմի կողմից կազմակերպված չեն, ինչպես պնդում են ոմանք բանվորական շարժման մասին, որ իբր թե «ժամանակակից բանվորական ողջ շարժումը սոցիալ-դեմոկրատական մի քանի խառնակիչների գործն է»[4]։ Ռ. Լյուքսեմբուրգը իր հոդվածաշարի վերջում հարց է տալիս, թե Թուրքիայում հայերի ազգային-ազատագրական պայքարի կապակցությամբ ինչպիսի՞ դիրք պետք է բռնի գերմանական սոցիալ-դեմոկրատիան։ «Սկզբունքորեն,— գրում է նա,— սոցիալ-դեմոկրատիան միշտ կողմ է ազատագրական ձգտումներին։ Քրիստոնյա ազգերը, տվյալ դեպքում հայերը, ուզում են ազատագրվել Թուրքական տիրապետության լծից, և սոցիալ-դեմոկրա-

---

1 Տե՛ս Կ. Լիբկնեխտը և Ռ. Լյուքսեմբուրգը հայ ժողովրդի մասին, էջ 45—50։

2 Նույն տեղը, էջ 50։

3 Նույն տեղը, էջ 56։

4 Նույն տեղը, էջ 57։

տիան անվերապահորեն պետք է ճանաչի այդ»[1]։ Ռ. Լյուքսեմբուրգը ասում է, որ ինքը իր առաջ նպատակ չի դրել հայ ժողովրդի առջև գործնական պահանջներ դնելու հարցը, սակայն նա պնդում է, որ սոցիալ-դեմոկրատիան հանդես պետք է գա «ճոգուտ» ապստամբների և ոչ թե նրանց դեմ (ընդգծումը Ռ. Լյուքսեմբուրգինն է. – Հ. Պ.)»[2]։

Այդպես էր գնահատում սոցիալ-դեմոկրատիայի հայտնի ներկայացուցիչներից մեկը հայկական գավառներում և հատկապես Սասունում տեղի ունեցած իրադարձությունները։ Սակայն այդ ժամանակ և դրանից հետո էլ գերմանական մամուլի օրգանների էջերում սխալ տեղեկություններ էին տպագրվում Հայաստանի, հայ ժողովրդի, հայկական հարցի և Թուրքիայում ապրող հայկական զանգվածների կրած տառապանքների մասին։ Այսպես, 1913 թ. գերմանական պրոֆեսոր Լյուդվիգ Շտեյնի խմբագրությամբ հրատարակված «Nord und süd» ամսագիրը սկսեց հրատարակել սուլթան Աբդուլ Համիդի «Հուշեր և հիշողություններ», որտեղ ասված էր. «Միթե՞ արդեն ապացուցված չէ, թե ինչպիսի սուտ տեղեկություններ էին հրատարակում այն ժամանակ անգլիական լրագրերը։ Նրանք հաղորդում էին քրիստոնյա գյուղերի ավերումների և նրանց բնակիչների բնաջնջման մասին, այնինչ բանից երևում էր, որ այդ տեղերը գտնվում էին ծաղկյալ դրության մեջ, իսկ ազգաբնակչությունը կատարյալ համաձայնության մեջ է իր մահմեդական հարևանների հետ։

Արդյոք պե՞տք է զարմանալ Թուրքերի կատաղության վրա, որոնք մինչև ներջին ժամանակներս երես էին տալիս հայերին և որպես շնորհակալություն այդ բանի համար, ենթարկվեցին նրանց կատաղի հարձակումներին հենց սեփական տան մեջ»[3]։

Կատարյալ կեղծիք էր այդ երեսուն տարուց ավելի «զուլումի» ռեժիմն ստեղծող աբքայի կողմից։ Այնուհետև նա շարունակում է. «Ռուսաստանի համար, շատ կարելի է չափազանց մեծ նշանակություն ունի, փշրել Դարդանելի շղթաները, սակայն մեզ համար ևս կենսական հարց է մեր ձեռքում պահել ջրանցքները։ Եթե որ մենք այս կետում անհաշտ հակառակորդներ չը լինեինք, մենք աշխարհիս երեսին ամենալավ բարեկամները կը լինեինք Ռու-

1 Տե՛ս, Կ. Լիբկնեխտը և Ռ. Լյուքսեմբուրգը հայ ժողովրդի մասին, էջ 58։

2 Նույն տեղը, էջ 59։

3 «Մշակ», № 18, 25 հունվարի 1913։

սատանի հետ։ Պետական ամբողջ կառավարական եղանակով ցարի կայսրության և իմ կայսրության միջև շատ բան նման և հարազատ են»[1]։

1890-ական թվականների հայկական շարքերի կապակցությամբ Եվրոպայում և Ռուսաստանում հանգես եկան շատ առաջադեմ մտածողներ և գործիչներ, որոնք դատապարտեցին սովթանական կառավարության կողմից կատարված այդ դաժան և մարդկային հասարակության պատմության մեջ իր նմանը քիչ ունեցող կոտորածները։ Վրաստանում հրատարակվող «Иверия» թերթը այդ կապակցությամբ գրեց, «որ աճում է այն մարդկանց թիվը, որոնք հայ ժողովրդին ցավակցում են նրա համար, որ նրան բաժին է ընկել Հայաստանի երջանկության համար այդքան ծանր պայքար մղելը»[2]։ Նույն թերթը նշում է միաժամանակ, որ այդ օգնությունը, որի մասին նշում են եվրոպական թերթերը, չպետք է լինի սոսկ «քրիստոնեական մարդասիրությունից»։

Այդ ժամանակաշրջանի պատրիարքը՝ Մ. Իզմիրլյանը որն իրավամբ ստացավ երկաթե պատրիարք անունը, «միակն էր, որ չէր վախենում ասել ճշմարտությունը ոչ միայն Իլդըզ-Քիոսկի շքեղ ընդունարաններում, այլև նույնիսկ փադիշահի երեսին»[3], իսկապես այդ մարդը համառ էր, հաստատակամ ու արդարամիտ և «ծռել նրան անհնարին էր, նրան կարելի էր չարդել, որը վճռեց ինքը միայն սուլթանը, և այն էլ երկար տատանումներից հետո»[4]։ Իզմիրլյանը շատ ճիշտ էր հասկանում, թե ինչ պայմաններում է գտնվում յուր հոտը. «Հինգ դար գերությո՞ւն, դա նշանակում է տասը միմյանց հաջորդող սերունդ զգում են իրենց վրա կիսալուսնի ուժը. դա արդեն դժոխք է։ Որոտացին հլացանի հարվածները, շողշողացին դանակները, մշակված դաշտերը դարձրին անապատներ և հարուստ գյուղերը ավերակների կույտեր»,— ցավով ասում էր պատրիարքը[5]։

Ցավով լի այդ դեպքերը իրենց արտահայտությունն են գտել և նաև Զապել Պոյաճյանի «Եսթեր» վեպում։ Հեղինակի հայրը՝ Թովմաս Պոյաճյանը Թուրքիայում անգլիական փ՝ հյու-

---

[1] «Մշակ», № 19, հունվարի 1913։

[2] Մեգրելիձեի նշվ. աշխ., էջ 283։

[3] Ա. Օսիպով, Մի ամիս Կ. Պոլսում, էջ 28։

[4] Նույն տեղը։

[5] Նույն տեղը, էջ 29—30։

պատու էր։ 1894 թ. նա Սասունի դեպքերի կապակցությամբ սողոք է ուղարկում Անգլիայի արտաքին գործոց մինիստրության։ Նույն թվականին կատաղած խուժանը խարբերդում հարձակվում է նրա տան վրա և սպանում։ Այդ դեպքից հետո անգլիական փոխհյուպատոսի ընտանիքը տեղափոխվում է Լոնդոն։ Զ. Պոյաճյանի վեպը Վարդենի ծածկանվան տակ լույս է տեսել 1901 թ. անգլերեն, այն հրատարակվել է նաև Լայպցիգում՝ գերմաներեն։ Մահմեդական կրոնի մոլեռանդության մասին վեպում գրված է. «Մի արտառոց կրակ էր վառվում նրանց աչքերում, դա կրքերի այն քստմնելի կրակն էր, որ մարդ կոչեցյալներին նվաստացնում, իջեցնում է գազանի աստիճանի»[1]։

Սասունի հերոսամարտերն իրենց արտացոլումն են գտել նաև Բագրատ Այվազյանի «Սասունը այրվում է» դրամայում, որը բեմադրեց Թիֆլիսում 1912 թ. վրաց ազնվականական թատրոնի շենքում Ամո Խարագյանը։ Նույն թվականի դեկտեմբերին Բաքվում Սիրանույշի ղեկավարությամբ դրաման նորից բեմ բարձրացավ, որտեղ հանդես եկան Արուս Ոսկանյանը, Զարիֆյանը և ուրիշներ։ Դրամայի գլխավոր հերոսը՝ Կարոն, նպատակ ունի ամեն ինչ անել հայկական դպրոցների շրջանավարտների համար, որպեսզի նրանք կապված լինեն կյանքին, օգնեն իրենց ծնողներին և ավելացնեն ընտանիքի «նյութական բարեկեցությունը»։ Դրամայում խոսք է գնում Թուրքիայում սուլթանի կողմից ստեղծված Համիդիե զորագնդերի մասին։ Կարոն ասում է հորը՝ Սրգոյին, որ այդ խմբերը Սասունի համար այնքան էլ վտանգավոր չեն, քանզի «Սասունը ամուր է և անառիկ», «Սասունը ազատ ապրել է և ազատ կմնա»։ Լրջախոհ հայրը՝ Սրգոն, հասկացնում է տղային, որ «Սասունը ազատ է եղել յուր քաջերի շնորհիվ» և Կարոն պետք է հասկանա, որ սուլթանական կառավարությունը «ուժի և անիրավության կառավարություն է»[2]։ Գլխավոր հերոսը՝ Կարոն, աշխատում է Սասունի ժողովրդին լուսավորելու միջոցով հանել խավարից, սակայն հայրը անընդհատ հորդորում է նրան հեռանալ այդ զուլումի երկրից, քանզի այդ խավար մթնոլորտում հնարավոր չէ լուսո բողբոջներ փնտրել։ Որդին անդրդվելի է և բացնիբաց հայտարարում է, որ ինքը ոչ մի դեպքում չի հեռանա

---

[1] Տ. Խուրշուդյան, Զապել Պոյաճյանի «Եսթեր» վեպը, «Սովետական գրականություն», № 3, 1976, էջ 149։

[2] Բագրատ Այվազյան, Սասունը այրվում է, դրամա 5 գործողությամբ, Թիֆլիս, 1913, էջ 24—25։

հայրենի երկրից։ Կարոյի և նրա նմաններ-ի, Սասունի հայ հատվածի առջև կանգնած էր Հուսեյին բեկը, որը կարգադրում է իր համախոհներին գտնել Կարոյին։ Չգտնելով որդուն, սրով վիրավորում է հորը՝ Սրգոյին և պատանդ վերցնելով քրոջը՝ Եղսոյին, հեռանում է։ Տեղեկանալով այն մասին, որ սուլթանը ապստամբ է հայտարարել Սասունը և լսելով իրենց ընտանիքի հետ կատարված այդ դեպքը, Կարոն կոչ է անում սասունցի իր հայրենակիցներին՝ նախապատրաստվել ինքնապաշտպանության։ Հայարտ սասունցին չի ցանկանում հարևան քրդերի հետ կռվել, քանի որ նա միշտ նպատակ է ունեցել «ազգերի մեջ համերաշխություն ձգելու, սեր, ազնվություն քարոզելու...»[1]։ Կռվի ընթացքում, սակայն ուժերն անհավասար են. սասունցիները կռվում են ոչ միայն քրդական, այլև թուրքական կանոնավոր բանակի դեմ։ Հուսեյին բեկը Կարոյին ծնկի բերելու նպատակով ցանկանում է առևանգել Կարոյի կնոջը՝ Քրիստինեին, բայց ապարդյուն։ Կարոյին և նրա ընկերներին հաջողվում է ազատել Եղսոյին։ Հերոսամարտը շարունակվում է, սակայն թշնամու ահռելի ուժի դեմ այլևս անհնարին էր դիմադրել։ Սասունը ընկնում է։ Դրամայի վերջում Կարոն սպանում է Հուսեյին բեկին և ապա եզրակացնում . «Քրդերը ջարդեցին հայերին, հայերը ջարդեցին քրդերին։ Երկուստեք թափեցին արյուն, ինչո՞ւ, ինչո՞ւ համար...»[2] Այո, սուլթանական կառավարությունը իրար դեմ էր հանել երկու ժողովուրդներին։ Թշնամու ձեռքը չընկնելու համար Կարոն և Քրիստինեն իրենց նետում են ժայռից՝ վերջ տալով իրենց կյանքին։

Սասունի լեռնականների մղած համառ կռիվները իրենց արտահայտությունը գտան Մուրացանի 1895 թ. գրած «Ինչպես էին մեռնում» պոեմում, որը լույս տեսավ առաջին անգամ «Լումայում» 1907 թ.։ Այդ պոեմում հեղինակը նկարագրում է սասունցիների խաղաղ և շինարար աշխատանքը, որն ընդհատվում է 1894 թ. թուրքական զորաբանակների և քրդական համիդիեականների հարձակումով։ Ապա ցույց է տալիս պոեմի գլխավոր հերոսներ Ավոյի և նրա կնոջ Ալմոյի սխրագործությունները, թշնամու դեմ մղած նրանց հերոսական մաքառումները։

Ավոն մեկնում է կռիվ, որոշելով պայքարել մինչև արյան

---

1 Բ. Այվազյանի նշված գրական, էջ 48։

2 Նույն տեղը, էջ 97։

վերջին կաթիլը։ Թշնամին մեծ կորուստների գնով առաջ է շարժվում։ Ավոյի հրաշքների պաշարը վերջանում է և այդ պահին նկատում է, որ ժայռերի միջից դեպի կովողներն է իջնում իր կինը՝ Ալմոն, որը նրան փամփուշտներ տալով ասում է.

— Ահա՛ քեզի պատրաստ կրակ
Իմ սիրեցյալ ամուսին,
Մի՛ սրդողիր, որ ես եկա
Մեռնիլ քեզ հետ միասին[1]։

Եվ Ավոն, և Ալմոն կռվում են Թշնամու դեմ։ Այդ կռվում նրանք երկուսն էլ ընկնում են արիաբար։

Սասունի ապստամբության մասին Ա. Ծատուրյանը գրեց «Հայ մայրերին» բանաստեղծությունը, որի մեջ հորդորում է մարտերում ընկած որդեկորույս հայ մայրերին՝ դառնագին լաց չլինել, քանի որ ընկածներն իրենց կյանքը տվել են հայրենիքին.

Օ՛չ հոգեբուխ սուրբ աղոթքը
Օրհնեց անթաղ դիակներ,
Ո՛չ մայրական դողդոջ ձեռքը
Փակեց անկյանք, սառն աչքեր[2]։

Ա. Նապարբեկը (Լեոնց) Սասունի 1894 թ. ապստամբության մասին գրեց «Սասուն» պոեմը, որի մեջ գովում է սասունցիների հերոսական կռիվները և նրանց արիությունը հատկապես Շաքեի սխրագործությունը.

Նետում է իրան այն ժայռից անդունդ՝
Մեղմած իր գրկին իր սիրո ծնունդ
Եվ մենկն է, մյուսը, երրորդն, հիսուն կին,
Որ հեռանում են նրա սուրբ քայլին..
Ո՛չ, դրանք, այդ կիներն մահկանացու չեն,
Դիցուհիներ են որբացած արդեն[3]։

---

1 «Լուսա», №3—4, սեպտեմբեր—հոկտեմբեր, 1907։

2 Ալեքսանդր Ծատուրյան, Բանաստեղծություններ (1892—1898), երկրորդ հատոր, Մոսկվա, 1898, էջ 81։

3 «Գաղափար», № 2, Առաջին տարի, սեպտեմբեր, 1894, էջ 166։

Գլուխ հինգերորդ

1895—1896 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ։ ՍԱՍՈՒՆԻ 1904 Թ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ։ 1908 Թ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1894—1896 թթ. հայ ժողովրդի պատմության մեջ դժվարին և տառապանքներով լի համաժողովրդական ազատի տարիներ էին։ Թուրքական սուլթանը ավելի ուժեղացրեց Արևմտյան Հայաստանում և հայկական գավառներում հայերի նկատմամբ սոցիալական ու հարկային ճնշումները։ Ելարդի տիրակալը փոխանակ կատարելու եվրոպական պետությունների և Ռուսաստանին տված իր խոստումները՝ բարենորոգումներ անցկացնելու մասին, սկսեց հայերի զանգվածային կոտորածը։ Համաժողովրդական ողբերգության այդ տարիներին հայկական գավառներում հարյուրավոր գյուղեր քանդվեցին և հրկիզվեցին։ Ջարդարարների սրին զոհ գնացին հարյուր-հազարավոր կանայք, երիտասարդներ, երեխաներ, ծերեր։

Գրինի վերոհիշյալ գրքում տվյալներ են բերված այն մասին, որ կոտորածները նորություն չէին թուրքական արյունարբու կառավարության համար։ 1820 թ. մինչև 1894 թ. քրիստոնյա բնակչությունից Թուրքիայում սպանվել էր 93.000 մարդ, որից 1822 թ. հույներ, հատկապես Քիոս կղզում, 50.000 մարդ, ապա 1850 թ. Քուրդիստանում սպանվեցին 10.000 ասորիներ և հայեր, 1860 թ. Էիբանանում և Դամասկոսում սպանվեցին մարոնեաներ, սիրիացիներ՝ 11.000 մարդ, 1876 թ. 10.000 բուլղարացիներ[1]։

Ինչ խոսք, Գրինի թվերը փոքրացված են, սակայն նրանք խոսում են այն մասին, որ Օսմանյան Թուրքիայում տարվում էր քրիստոնյա-բնակչության և առանձնապես հայերի, հետևողական նոսրացման քաղաքականություն։

---

[1] «Русская мысль», 1895, № 11, стр. 122.

ժամանակի հայ և օտարերկրյա մամուլի էջերում միշտ կարելի էր հանդիպել արտահայտություն այն մասին, որ «Թուրք կառավարությունը ամենայն ջանք գործ է դնում Տաճկահայաստանում եղած հայ տարրը նվազեցնելու համար»[1]։ Եթե այդ սկզբում կատարվում էր պարբերաբար և համեմատաբար ավելի սակավ, ապա 90-ական թվականներին թուրքական կառավարությունը արդեն չվախենալով ոչ ոքից, բոլորի աչքերի առջև կազմակերպեց Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ վայրերում զանգվածային կոտորածներ։ Հայ ժողովրդի պատմությանը, գրականությանը և մշակույթին գիտակ Յու. Վեսելովսկին՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանի գիմնազիական բաժնի շրջանավարտը, գրում էր. «Երբեք չի մահացել հայ ժողովրդի անհամեմատ զգայուն, կայտառ և խիզախ ներկայացուցիչների կրծքում հավատն այն մասին, որ վաղ թե ուշ թուրքական Հայաստանի համար կփայլի նոր կյանքի արևը»[2]։ Այնուհետև նա նշում էր, որ հայկական ջարդերը կազմակերպվել են պլանավորված կարգով և հաճախակի։ «Այդ արյունոտ դեպքերի կազմակերպիչների իսկապես ղեկավարող ցանկությունն էր, եթե հնարավոր չէ ամբողջովին ոչնչացնել հայկական տարրը, այնուամենայնիվ, որքան հնարավոր է կրճատել այն»[3]։

Այդ տարիներին քարուքանդ արվեցին 2600 քաղաքներ և գյուղեր, ոչնչացվեցին 560 վանքեր և եկեղեցիներ։ Սպանվածների թիվը հասավ 300 հազար մարդու։ Մի շարք ուսումնասիրություններ այն հասցնում են մինչև կես միլիոնի։ Սարսափած այդ ահավոր վիճակից, հայ բնակչության մի մասը կաթոլիկություն և մուհամեդականություն ընդունեց և 559 գյուղեր դավանափոխ եղան[4]։ Կոտորածների ժամանակ անապաստան որբ երեխաների թիվը հասավ մինչև 100 հազարի[5]։ Բնութագրելով հայ ժողովրդի այդ մղձավանջային և ծանր դրությունը, Կոստանդնուպոլսի պատրիարք Մ. Իզմիրլյանը ասել է. «Ամբողջ հայ ժողովուրդը սուլվում է արյան մեջ»[6]։

---

1 «Արձագանք», № 3, 1883։

2 Ю. А. Веселовский, Очерки армянской литературы, истории и культуры, Е, 1972 стр 411.

3 Նույն տեղը, էջ 428։

4 Տե՛ս Братская помощь пострадавшим в Турции армянам, М, 1898, էջ 23

5 Տե՛ս նույն տեղը, էջ LXIV։

6 Նույն տեղ։

Մեր ձեռքի տակ է Մուշի առաջնորդի փոխանորդ Վարդան Հակոբյան վարդապետի 1896 թ. դեկտեմբերի 3-ին գրած զեկուցագիրը, ուղղված Կարսի, Թիֆլիսի և Կովկասի բարեգործական ընկերություններին, Տարոնի ժողովրդի կրած տառապանքների մասին. «Գիտեմք որ,— ասված է այնտեղ,— ի սուգ անմխիթար կամք այն ընդհանուր քստմնելի կոտորածներու, վայրագ բռնաբարությանց, ոճրագործությանց և անօրինակ չարչարանաց հանդեպ, վերջին տարիներե, մանավանդ անցյալ 1895 տարվքնե ի վեր եկան հասան թշվառ տաճկահայերուն վրա և բովանդակ Հայաստան աշխարհի լեռներ, ձորեր, դաշտ ու դուրաններ հարյուր հազարավոր հայ անմեղ զոհերու արյունով ներկեցան ու ողողեցան»[1]:

Մեր նպատակից դուրս է այդ զեկուցագրի ողջ բովանդակությանն անդրադառնալը, ասենք, սակայն որ այնտեղ ճիշտ կերպով է ասված, որ այդ բոլորը արվում էր կառավարության գիտությամբ և ցուցումներով. «Երկիրն անիշխանության և լրբության տարտարոս մը դարձած է. չկա երբեք պատասխանատվություն հայերու դեմ եղած ամեն չարյաց համար։ Կառավարությունն մի կողմե, իսլամ տարերք մյուս կողմե հրդեհ մը բռնկցուցած են հայերու գոյության դեմ և փութապես ու անխղճաբար կբորբոքեն կրակը, վառելով, մոխիր դարձնելով ինչ-որ հայուն և Հայաստանինն է»[2]։ Խոսելով 1895 թ. դեպքերի մասին, ականատեսը գրում է. «Անցիր դեպի ներքին աշխարհներ, տես ինչ աշխարհ է այդ, Տարոն դարա՜ն, Մուշ մաշավ, Սասուն սասանվե՜ց, Կարին կորա՜վ, Բաղեշ փչացա՜վ, որ մեկ թվեմ»[3]։ Պարզ ասած, այդ մի ժամանակ էր, երբ մարդիկ իրար ասել են. «Մեր զմանուկ ուրացել է»։ Նույնը ասում է նաև սուլթանի քարտուղարը՝ Մուստաֆա Նեթիմը, գրելով. «Մեկը չմնաց, որ լսած չըլլա և չգիտենա քարերը սարսափեցնելու չափ դառն աղետներ և զարհուրելի աստիճանը այն հարստահարություններուն, զորս թուրքերը ի գործ դրին հայերու նկատմամբ»[4]։

1896 թ. Կոստանդնուպոլսի տասնյակ քահանաներ իրենց ստորագրությունն..ով մի նամակ են ուղարկել Ամենայն հայոց

---

[1] ԳԱԹ-ի արխիվ, Հ. Առաքելյանի ֆոնդ, վավ. № 1903, էջ 1։

[2] Նույն տեղը, էջ 2։

[3] Դիտան Հայոց պատմութեան, գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ ԺԴ։

[4] Մուստաֆա Նեթիմի նշվ. հուշերը էջ 3։

կաթողիկոսին, որի մեջ նշում են, որ «Մշո և Վասպուրականի մեջ բնակվող հայք՝ ընչից, պատուոյ և կենաց մասին միշտ այլ և այլ հարստահարութեանց ենթակա են, մանավանդ նույն օսմանեան տերութեան հպատակ քուրտ կոչված ժողովրդոց կողմեն։ Այս հարստահարութիւնները վերջին ժամանակներս յիշեալ գաւառներուն մեջ յայտնի և անլուր եղեռնագործութեանց փոխուեցան»[1]։ Այնուհետև նրանք նշում են, որ ժողովրդի «ստացուածները կը յափշտակուին, մեր տունները, վանքերն ու եկեղեցիները կը կողոպտվին, մեր կանայք, և աղջկունք կբռնաբարվին, մեր աղգայինք, եկեղեցական և աշխարհական կը խողխողուին շարաշար. և այս ամենը կը կատարուի 'ի տունջեան յայտնի և հրապարակաւ»[2]։ Եվ եկեղեցական սքեմի տակ գտնված այդ մարդիկ աղերսում են կաթողիկոսին շուտափույթ կերպով խնդրել եվրոպական քրիստոնյա պետություններին, որպեսզի նրանք ազդեն օսմանյան պետության վրա կատարելու իր խոստացած պարտավորությունները։

Սակայն սուլթանական կառավարությունը շարունակում էր իր ոճրագործությունները։ Ժողովուրդը հետագայում իրավամբ Աբդուլ Համիդին անվանեց «արյունարբու կարմիր սուլթան», «մեծ մորթող», «կարմիր գազան», իսկ Գլադստոնը՝ «մեծ մարդասպան»։

Մեր ձեռքի տակ են ինչպես արխիվային, այնպես էլ տպագիր հայերեն, ռուսերեն և եվրոպական լեզուներով բազմաթիվ վավերագրեր, որոնք պատմում են 1895—96 թվականներին Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ վայրերում տեղի ունեցող ջարդերի մասին։ Մեր առջև դրված խնդրից հեռու է շարադրել այդ ողբերգության սրտաճմլիկ պատմությունը, սակայն ցանկանում ենք բերել մի քանի փաստեր։

Ջարդերը կազմակերպվում էին նախատեսված պլանով՝ սկզբնական շրջանում մի վայրում, ապա մյուսում։ 1895 թ. դեկտեմբերին, սկսվեց Տիգրանակերտի ջարդը, ուր մոլեռանգ կրոնավորները ազդարարում էին. «Քանի որ կյավուրները իրենց լուծը թոթափել կը ջանան, մեր Քուրանի օրինոք և կայսեր հրամանով պետք է ամեն մի ճշմարիտ իսլամ 25 անհավատ քրիս-

---

[1] Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 203, վավ. 965, թ. 1։

[2] Նույն տեղը։

տունյա ջարդե և նոցա ինչից, ստացվածոց և կնոջ տիրանա»[1]: Այդ պրոպագանդայից հետո սկսվեց Տիգրանակերտի բնակիչների սոսկալի կոտորածը։ Ջարդը, սակայն, չվերջացավ միայն Տիգրանակերտով, քաղաքի շրջակա հայկական 20 գյուղեր մոխրակույտերի վերածվեցին։

1895 թ. Կարինի առաջնորդ Ղևոնդ Շիշմանյանի զեկուցագրում՝ ուղղված Ամենայն հայոց կոթողիկոսին, տեղի կոտորածների մասին գրված է. «Մեռելոց դիակները գնալով կը ստվարանան, որ կողմ դառնաս դիակաց կույտ, ամբողջ քաղաքը գերեզմանոց է դարձել, և պահվածնե՞րն և այրվածնե՞րը... Տեր աստված—անթիվ են,— ամեն բան հետզհետե կը հայտնվի, ո՛չ Սասուն, ո՛չ Տրապիզոն, ո՛չ Երզնկա, ո՛չ Բաբերդ, ո՛չ Բաղեշ և ո՛չ չգիտեմ որ հայու ավերյալ, կործանյալ, քաղաք չեն կրնար հավաստվիլ։ Կարինի, ա՜հ, ափսոս, կորած, աղքատացավ, մարտիրոսացավ Էարին,— կարող եմ միթե՞ թվել վիրավորելոց անուններն. հարյուրավո՞ր, թե հազարավոր, չգիտեմ, միայն թե վարժարանները՝ որ փակվեցան, գոցվեցան անոնց համար և լցվեցան,— կեցցե՛ սուլթան, կեցցե յուր ցնորական և խաբեբայական բարենորոգմունք»[2]։

1895 թ. հոկտեմբերին թուրք ջարդարարները սկսեցին Երզնկայի հայերի կոտորածը, որի մասին ականատեսներից մեկը գրում է. «Վեց ժամ տևող այս կոտորածին մեջ վայրագ խուժանը չտեսնված խժդժությամբ կոտորեց անզեն հայերը տուրով, դաշույնով, դանակով, տապարով, լախտով, ու հրազենով...

Նույն օրը կատաղի ու վայրագ խուժանին անգութության գոհ գնացին հարյուրավոր ազգայիններ, որոնցմե 90 մեռյալ գտնված են ցարդ։ Ասոնք սպանելե վերջ սոսկալի վայրագությամբ կողոպտված ու մերկացած էին ոտից ցգլուխ։ Ամենուն ալ մարմինները, մանավանդ դեմքերն ու գլուխները ծանր ու խորունկ վերքերով ծածկված ու ջախջախված, ոմանց ալ մորթած էին»[3]։

1895 թ. նոյեմբերին սկսվեց 20 օր տևող Արաբկիրի հայերի կոտորածը, որին մասնակցում էին թուրքական բանակի զորամասերից 1600 հոգի, ինչպես նաև շրջակա քրդական ցեղերի ուժերը։ Եվ պատկերացնել է պետք, թե ի՞նչ կլինի քաղաքի խա-

---

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 5, գ. 70 թ. 1։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը, ց. 4, գ. 152, թ. 5։

ղաղ հայ բնակիչների վիճակը, որոնք բոլորովին էլ չգիտեին սկսվող չարդի մասին։ Այդ օրերին Արաբկիրի մեջ զոհ գնացին շուրջ 3000 հայեր, հրկիզվեցին 2750 տներ, այրվեցին 325 խանութներ, իսկ շրջակա գյուղերից մի քանիսը ստիպված իսլամություն ընդունեցին[1]։

Սակայն ժողովուրդը շատ տեղերում անցնում էր ինքնապաշտպանության։ Նրանք վարում էին մահվան և կենաց կռիվներ։ 1895 թ. քրդական համիդիե խմբերը հարձակվեցին Խնուսի Արոս գյուղի վրա, արոսցիները հերոսաբար պաշտպանվեցին, դիմադրեցին թշնամուն և թույլ չտվեցին նրան մտնելու իրենց գյուղը[2]։

1895 թ. Ագ-Դաղի հայերի և նրանց Կեմերիկ գյուղի բնակիչներին ապանելու և գյուղը ավիրելու գործը դրված էր Միհրալի բեյի վրա, որին միաժամանակ հանձնարարված էր զսպել քուրդ աշիրեթներին և նրանց ենթարկել կառավարությանը։ Զգալով սպանդի վտանգը ժողովուրդը որոշում է դիմադրել։ 1895 թ. հոկտեմբերի 2-ին Հ. Պահլավունու գլխավորությամբ տեղի է ունենում մի ժողով, որը ընտրում է զինվորական խորհուրդ և նախապատրաստվում դիմադրության։ Զինվորական խորհուրդը զենքի տակ դրեց 410 հոգի չախմախլի և 200 հոգի մարտին տիպի հրացաններով[3]։ Սկսվեց ահեղ կռիվը։ Մեծ թվով սպանվածներ և վիրավորներ տալով, թշնամին նահանջում է։ Հաջորդ օրերին թշնամու հարձակումները կրկնվեցին մի քանի անգամ, սակայն կեմերիկցիները ավելի կատաղորեն էին դիմադրում։ Թուրքական հրամանատարը ցանկացավ խաբել հայերին. նա բանագնացներ ուղարկեց, որոնք հաշտության մասին առաջարկություն արեցին, բայց զինվորական խորհուրդը մերժեց։ Թշնամին հարկադրված էր 1895 թ. դեկտեմբերի 18-ին թողնել գյուղը և հեռանալ։

Հերոսաբար պաշտպանվեց նաև Ագ-Դաղի անմատչելի կրծքին գտնվող 4000 բնակիչ ունեցող Զաթ գյուղը։ Նրա զավակները ի ծնե ըմբոստ և ազատասեր էին, երբեք գլուխ չէին ծռել թուրքական բռնակալների առջև։ 1895 թ. նոյեմբերի 26-ին Զաթի վրա սկսեցին հարձակվել գյուղի շրջակա ցեղերը։ Բնակիչները ստեղ-

---

1 Տե՛ս Պատմութիւն Հայոց Արաբկիրի, Նիւ Եորք, 1969, էջ 645։

2 Տե՛ս Հարք, նույն, էջ 33։

3 Կ. Գալուստեան եւ Ն. Գաբիկեան, Ագ-Տաղի քառամեայ պոյամարտը, Մարսէյլ, 1932, էջ 22։

ծելով ինքնապաշտպանության ուժեղ շղթա, սկսեցին հերոսական դիմադրությունը։ Վեց օր տևեց Զաթի կռիվները։ Թշնամին անընդհատ հարձակվում էր գյուղի պաշտպանական դիրքերի վրա և վերջապես, արդյունքի չհասնելով, թողեց հեռացավ։

·1896 թ. հունիսի սկզբին թուրքական կառավարությունը կազմակերպեց Վանի բնակչության կոտորածը։ Առաջին օրը չարդարարներին հաջողվում է սպանել քաղաքի թաղերից մեկի մի քանի հարյուր բնակիչներ։ Քաղաքի հայ երիտասարդությունը զինվելով ստեղծում է հզոր ինքնապաշտպանական շղթա։

Թուրքական բանակը բազմահազարանոց համիդիեական գնդերի հետ միասին սկսում է իր հարձակումը պաշտպանության դիրքեր բռնած ժողովրդի վրա։ Սակայն քաղաքի բնակիչները համառորեն պաշտպանվում են։ Վերջապես եվրոպական հյուպատոսների միջամտությունից հետո մի քանի հարյուր զինված երիտասարդներ Մ. Ավետիսյանի (Թերլեմեզյան) գլխավորությամբ թողնում են հայրենի քաղաքը և բռնում Պարսկաստանի ճանապարհը։ Սակայն ճանապարհին պաշարվում են հակառակորդի մեծաթիվ ուժերի կողմից։ Սկսվում է օրհասական կռիվը, ընկնում են համարյա բոլոր հայերը։ Միայն մի քանի տասնյակ հոգու հաջողվում է ազատվել կոտորածից[1]։

Թուրքական չարդարարները 1895 թ. ցանկացան ծնկի բերել նաև հայ ազգային-ազատագրական շարժման մյուս ըմբոստ օջախը՝ Զեյթունը։ Զեյթունի թուրքական կայմակամի փոխանորդը այդ օրերին գյուղացիներին հայտարարում էր. «Ես հրահանգ ունիմ իմ սիրելի թագավորես՝ այդպես վարվելու, որպեսզի դուք ալ գրգռվիք մի խլրտում հանեք, այն ատեն թագավորը բարկանա և զՁեզ ալ Սասնո տառոսին (վիճակին) հասցնե»[2]։ Եվ լեռնականները, որոնց մոտ արդեն տարիների ընթացքում լցվել էր համբերության բաժակը, ապստամբեցին։ Նրանք Բերդիզ չայի մոտ դիմադրեցին թուրքական բանակին, ապա անցան Զեյթուն, գրավեցին զորանոցը և 600 թուրքական զինվորներ ու սպաներ անձնատուր եղան։ Մի քանի ամիս տևող թուրքական բանակի հարձակումները չկարողացան ոչ մի արդյունքի հասնել, քաղաքը պաշտպանվում էր չտեսնված ուժով։ Վերջապես օտարերկրյա վեց

---

1 Տես՝ Հ. Անառյան, Տաճկահայոց հարցի պատմությունը, Նոր-Նախիջևան, 1915, էջ 41։

2 Զեյթունցի, Զեյթունի անցյալն և ներկայնն, Բ մասն, Բաքու, 1903, էջ 2։

հյուպատոսների միջամտությունից հետո 1896 թ. սկզբին կընքվեց պայմանագիր օսմանյան կառավարության և լեռնականների միջև։

1895—96 թվականների կոտորածների պատճառով Թուրքիայում անկում ապրեցին ինչպես առևտուրը, այնպես էլ արհեստները։ Երկրում ստեղծվել էր հայ ժողովրդի համար անտանելի վիճակ։ 1896 թ. մարտ ամսին Իզմիրլյան պատրիարքը գրեց մի հուշագիր «Հայ ազգին փրկությունը» վերնագրով, որի մեջ, ելնելով ստեղծված ողբալի դրությունից գրում էր. «Մեր ներկան անտանելի է, մոտ ապագան նույնպես. որովհետև բացի ավերումից, ուրիշ ոչինչ չի կարելի սպասել։ Գաղթականություն, պանդխտություն, կրոնափոխություն, աղքատություն ու տնավերություն, ահա մոտակա ապագայում մեր սպասելիքը...»[1]

Հայ պատրիարքը այդ հուշագրում գտնում էր, որ այլևս ապրել այսպիսի պայմաններում անհնարին է, նա առաջարկում էր ամբողջ ժողովրդով գաղթել մի ուրիշ երկիր և ստեղծել նոր հայրենիք։ «Ես առաջարկում եմ գաղթել հիմնովին (այս և սրանից հետո բոլոր ընդգծումները հեղինակինն են։— Հ. Պ.) մի անգամ ընդմիշտ տնով տեղով, եթե կարելի լինի ամբողջ ժողովրդով, կամ որքան կարելի է մեծ բազմությունով. գաղթել այնպես, որ զրկվելով հայրենի երկրից, նոր երկրի տեր դառնալ, թողնելով մայրենի հողը, նոր հող ձեռք բերել գյուղացու համար գաղթության տեղում... թողնելով թշվառ, ստրկական վիճակը, ստեղծել հայի համար նոր կյանք, երջանիկ, ապահով և ազատ, որքան հնարավոր է...»[2]։ Ազգակործան այս առաջարկությունը պատրիարքը անում էր ելնելով իր ժողովրդի համար Թուրքիայում ստեղծված դժոխային պայմաններից։

ԳԱ պատմության ինստիտուտի արխիվի Լեոյի ֆոնդում կա մի վավերագիր գրված XIX դարի վերջին Բիթլիսի կուսակալության մեջ գտնվող Սասունի և Մուշի բնակիչների վիճակի մասին, ուր ասվում է, որ 1895 թ. մայիսյան բարենորոգումները մնացին թղթի վրա և ժողովրդի վիճակը ավելի վատացավ։ «Բիթլիսի կուսակալության Մուշի գավառն,— կարդում ենք այդ փաստաթղթում,— որու մեջ կը գտնվի նաև Սասուն գավառակն, թատր եղած է զեղծումներու, անհորդորելի կեղեքումներու և սոսկալի

---

1 Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1922, էջ 156։

2 Նույն տեղում, էջ 170։

ոճիրների։ Այս չարիքները կը գործվին զանազան ձևերով և դրություն մը դարձած են հայ տարրը փճացնելու համար»[1]։

Վավերագիրը շատ հետաքրքրական է նրանով, որ երկու տառնյակ կետերով վերլուծության է ենթարկում այն դառը վիճակը, որի մեջ ապրում է ժողովուրդը։ Այսպես, Տարոնի, Սասունի հայ գյուղացիները թուրքական երկրագործական բանկից եթե փոխ գումար են վերցնում, ապա «չնչին գումարի մը համար անոնց մեծարժեք արտեր ու կալվածներ գրավի առնելով։ Պայմանաժամը լրանալուն՝ կը նեղեն զանոնք այնքան, որ կստիպվին արտերը կամ պանգային թողուլ կամ թուրքերուն ծախել չնչին գնով, զորօրինակ 10.000 ղրշ. արժող կալվածը՝ 1500 կամ 2000 ղրշ-ի և նույն համեմատությամբ»[2]։ Թուրքական կառավարական պաշտոնյաները պետք է յուրաքանչյուր տղամարդկանցից տարեկան 12 ղուրուշ ճանապարհի հարկ գանձեն, կամ էլ նրանք պետք է չորս օր աշխատեն, սակայն «թե դրամը կը գանձեն և թե գյուղացիները կաշխատեցնեն», կամ թե չէ «20 սայլ ունեցող գյուղեն 40 որ պահանջեն ու այս պատրվակով կաշառք կառնուն»[3]։ Փաստաթղթում ապա նշվում է, որ այսպիսի մեթոդներով քրիստոնյաներից հավաքած միջոցներով կառուցվում է Մուշի մզկիթներից մեկը և կառավարչատունը։ Քաղաքի հեռագրատունը շինելու և փողոցները կարգի գցելու նպատակով յուրաքանչյուր չափահաս անձից 10 ղուրուշ գումար հավաքվեց։ Ապա զորանոց շինվեց և այլն։

Թուրք և քուրդ վերնախավի ներկայացուցիչները սկսեցին ավելի վայրագ մեթոդներով տիրանալ հայկական գյուղերին պատկանող հողերին։ Այդ մասին վավերագրի մեջ կարդում ենք. «Հայ գյուղերու տիրապետող այս քուրդ և թուրք աղաները հողագործ ժողովրդեն մելիք անուն տուրք մը կը գանձեն. միրիպայություն ընել կուտան (կիսարար լուծք) և արդյունքին մեծ մասը կը հափշտակեն։ Փոխ դրամ կամ արմտիք կուտան ու կրկնապատիկը կառնին։ Տարապարհակ կաշխատցնեն. չնչին գումարի փոխարեն՝ արտերը գրավ կառնեն և հետո կիրացնեն և գյուղացիներն այսպես մերկացնելով՝ կենթարկեն իրենց ծառայությանց»[4]։

---

1 ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, ց. 1 գ. 144, թ. 2.

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը, թ. 45։

Մուշի դաշտի Զիարեթ, Աշիճան, Ավազաղբյուր հայկական գյուղերում ստեղծվեցին երեք նոր նահիեներ, ուր հաստատված թուրք մյուդիրները իրենց 8—12 պաշտոնյաներով «իրենց պետքերը ուտեստ և այլն ձրի՝ կը խլեն գյուղացիներեն կեղեքումներով»[1]։ Այնուհետև աղնամը հավաքելու նպատակով ոստիկանները 20—25 հոգով գյուղ են գնում և «իրենց ձիերուն ուտեստը գյուղացիներեն կխլեն»[2]։ Հայերին բռնի կերպով աշխատում են իսլամը ընդունել տալ, գեղեցիկ աղջիկներին և կանանց հաճախակի փախցնում են և ապա նրանց ստիպում են, որ դատարանին գրեն կրոնափոխության մասին։ Մուշի դաշտում շատ էր տարածված վաշխառությունը կամ սելեֆությունը։ Պատահում էր այնպես, որ վաշխառուն (սելեֆճին) հողագործին մի փոքր պարտք էր տալիս հետագայում մեծ գումար ստանալու պայմանով։ Իսկ հարկերը գանձվում էին վայրագ եղանակներով և «դաղթողներուն ու պանդուխտներուն բաժինն մնացողներն կը պահանջեն, հարկի փոխարեն կը խլեն անոնց քիչ մը պարենը և անոնց տնակները կը քակեն ու կը ծախեն, իրենց ձիերուն կերը գյուղացիներեն կառնին, ազգի ու կրոնի կը քֆրեն, կարասիները առ թշնամություն կը ջարդեն այս անօրինությանց դեմ բողոքող գյուղացիներն հեղափոխական ու անհնազանդ կնկատվին»[3]։

Թուրքական դատարանները իրենց վճիռները սովորաբար արձակում էին ի վնաս հայերի, և նրանց օրինական հողերը վերցնելով տալիս էին թուրք և քուրդ վերնախավի ներկայացուցիչներին։ Այսպես, Սեմալի գյուղացիներին պատկանող հողը դատարանը տվեց «խիանցի քուրդ ցեղապետ Քոռ Սըլոյին, որը 95-ին Սասնո գլխավոր կոտորողներից մեկն էր»[4]։ Տասանորդ հավաքողները՝ մյուլթեզիմները, ազգով թուրքեր էին, քանի որ այն տրվում էր աճուրդով, որին հայերը չէին կարող մասնակցել։ Մյուլթեզիմները չարաշահում էին իրենց իրավունքները։ Նրանք «բոլոր կալերեն տասանորդական տուրքեն զատ՝ գալմաստ անունով արմտիք կառնեն, երկար ատեն բերքերը չեն չափեր, որպեսզի հունձքի տերերը պարտավորվին գոհացնել մյուլթեզիմներու պահանջմունքները»[5]։

---

1 Լեոյի արխիվ, ց. 1, գ. 144, թ. 45։

2 Նույն տեղը, թ. 46։

3 Նույն տեղը, թ. 47։

4 Նույն տեղը։

5 Նույն տեղը, էջ 48։

Թուրքական կառավարությունը այգիների բերքի և պտուղների ու բանջարանոցների համար գյուղացիներից շատ տուրք էր ակնկալում, այդ պատճառով էլ հաճախ նրանք հրաժարվում էին դրանց մշակումից։ Բացի գրանից, կառավարական պաշտոնյաները սկսեցին խոտի տասանորդը դրամով գանձել և վերջապես գյուղացիներից հավաքված տասանորդը նրանց միջոցներով տեղափոխում էին իրենց պահեստները։

Թուրքական պաշտոնյաները ժողովրդից դրամ կորզելու նպատակով նրանցից շատերին մեղադրում էին ազատագրական շարժումներին մասնակցելու մեջ։ Այդ կապակցությամբ վավերագրի մեջ ասված է. «Ժողովուրդը փշացնող և դայն տառապանքի մատնող ամենեն ծանր հարվածը եղած է հելափոխություն բառին կամ պատրվակին տակ անոր դեմ հարուցած հալածանքը»[1]։ Մի տարվա ընթացքում ֆիդայիներ ձերբակալելու անվան տակ թուրքական ուժերը բազմաթիվ գյուղերի վրա են հարձակվել։ Քրդական ցեղերին սկսեցին արդեն անարգել կերպով տեղավորել հայկական գյուղերի մեջ, և «հայ գյուղերու աղաներն, անոնց արբանյակներն ու սպասավորները իրենց բոլոր պետքերը բռնությամբ կստանան, առանց փոխարենը վճարելու, դիմադրողք կսպանվին։ Հայերը տարապարհակ աշխատությամբ կը վարեն աղաներուն արտերը, կը քաղեն խոտերը ու հունձքերը»[2]։

Մուշի և Սասունի հայերի մի մասը հարկադրված խաֆիրության անունով տուրքեր էին տալիս քուրդ բեկերին. «Արքունի տրոց նման ամեն տարի կը նորոգվի այս տուրքը և կը գանձվի անպատճառ»[3]։ Վավերագրի հեղինակը նշում է, որ խաֆիրության տուրքի տակ էին ընկել նաև վանքերը։ Այսպես, Սասունի Մատին Առաքելո վանքը քուրդ աղաներից մեկին տարեկան տալիս էր 20 ոչխար, 20 լիտր յուղ և 1200 ղուրուշ գրամ։

Հայերը ենթարկվում էին քրդական զինված ուժերի հարձակումներին, որի հետևանքով Մուշի և Սասունի գյուղերում միայն մեկ տարվա ընթացքում սպանվել էին 106 և վիրավորվել 10 մարդ։ Սասունի Հերթինք գյուղի բնակիչները չցանկացան իրենց հողերը տալ աղաներին։ Եվ աղաները «արշավելով նույն դյուղն,

---

1 Լեոյի արխիվ, ց. 1, գ. 144, թ. 48։

2 Նույն տեղը, թ. 49—50։

3 Նույն տեղը, թ. 50։

տունները այրեցին, թալանեցին և գյուղին երևելիներին 5-ն հեշտ-տեցին ու ղիակները գետը նետեցին ու երկուք վիրավորեցին, բնակիչք ցրվեցան ու գյուղն ջնջվեցավ։ Այս տարի ալ Ջբազանք գյուղն համայնաջինջ ըրին»[1]։

Վերը բերված վերջին տողից երևում է, որ դեպքերը կատարվել են 1899 թվականին, այսինքն՝ թուրքական կառավարության կողմից հայերի համար կյանքի և գույքի ապահովություն ստեղծելու մասին բազմաթիվ խոստումներից հետո։

1890-ական թվականների կոտորածներից հետո սկսվեց էլ ավելի ծավալվել հայդուկային պայքարը։ Սասունի լեռներում ապաստանել էին հայդուկային նոր խմբեր, որոնցից մեկը Սերոբ Վարդանյանի խումբն էր (Աղբյուր Սերոբ), որի մեջ էր մտնում նաև Անդրանիկը։ Հալ երիտասարդությունը կոտորածների առաջն առնելու միակ ելքը տեսնում էր գաղտնի զինվելու, հայդուկներին միանալու և եթե հարկ լինի, թշնամուն հարված հասցնելու մեջ։ Աղբյուր Սերոբի խումբը գործում էր Ախլաթի շրջանում։ Հայդուկային այս խմբերի առջև խնդիր էր դրված պաշտպանել հայ գյուղերի բնակիչներին ավազակային հարձակումներից։

Թուրքիայում գոյություն ունեցող անտանելի հարկային ռեժիմը, գյուղացու պարտքերը, ինչպես ասվեց, ստիպում էին հողագործների մի մասին թողնել հայրենի օջախը և գնալ դեպի մայրաքաղաքը, դեպի ծովեզերքներին գտնվող քաղաքները, հեռանալ դեպի Եվրոպա, Ռուսաստան, տարիներով մնալ այնտեղ, մաշվել օտարության մեջ և երազել տուն վերադառնալու մասին։ Սակայն նրանցից հանդուգն բնավորություն ունեցողները չէին հեռանում երկրից և խտացնում էին լեռներում ապաստան գտած ֆիդայիների շարքերը։ Ճիշտ է նկատել մեծ վիպասան Բաֆֆին, գրելով, թե «հայդուգ բառը չէ նշանակում գող, ավազակ, կամ վտարանդի ելուզակներ. դա նույն նշանակությունն ունի, ինչ որ էին հունաց Կլիֆտները, նրանց ապստամբության ժամանակ, կամ... Սուլիոտները»[2]։

Այնուհետև Բաֆֆին, որը սկզբում, ցանկացել էր իր «Կայծեր» վեպը վերնագրել «Հայդուկներ», շարունակում է. «Հայդուգը ստրուկի բողոքն է իշխողի բարբարոսության դեմ։ Նա թողնում է ընտանեկան օջախը, որ իր համար պղծված էր, նա

---

1 Լեոյի արխիվ, ց. 1, գ 144, թ. 51։

2 Բաֆֆի, Երկերի ժողովածու, IX հատոր, 1958, էջ 323։

թողնում է յուր հասարակությունը, առանձնանում է մթին անտառների խորքում, սարերի անմատչելի փապարներում և այնտեղ, որպես մի փոքրիկ թագավոր, լեռների ազատ որդին, սկսում է տիրել ամայության վրա»[1]։ Բաֆֆին գտնում է նաև, որ «Վերջ Հայաստանի» վեպի գլխավոր հերոս Աղասին նույնպես մի հայդուկ է։ Ճիշտ է նկատել Բաֆֆին, որ հայդուկը նպատակ ունի «իր սիրելի հայրենիքը ազատված տեսնել տիրանի ճնշումից, իր արյունակից եղբայրներին փրկել բարբարոս ձեռքից — ահա դրանք են նրա ցանկությունները»[2]։

Լեոն իր «Անցյալից» աշխատության մեջ նույնպես անդրադարձել է հայդուկների գործունեության գնահատմանը և ճիշտ չի գնահատել այդ շարժումը։

Լեոն գտնում էր, որ այն կազմակերպվել է 1887 թ. ծնված հնչակյան կուսակցության կողմից և հայդուկային կռիվը համարում էր «բահերով կռիվ» «մաուզերների դեմ»[3]։ Նախ, հայդուկային կռիվները, ինչպես ասացինք, առաջացան հարստահարությունների և ժողովրդի նկատմամբ թուրք աստիճանավորների և քուրդ բեկերի ճնշման պատճառով։ Այն կար մինչև հնչակյան կուսակցության երևան գալը և նրա հետ կապելը ճիշտ չէ։ Վերջապես հայդուկները կռվում էին ոչ թե բահերով, այլ զենքերով։

Թուրքական կառավարությունը ցանկանում էր հրապարակից հանել Աղբյուր Սերոբի խումբը՝ և չերքեզների, և քրդերի հետ միասին պաշարում է Սոխորդ գյուղը, գյուղացիներն անցնում են դիմադրության։ Աղբյուր Սերոբը իր փոքրաթիվ խմբով դուրս գալով թաքստոցից, հանկարծակի հարձակվում է թշնամու վրա, կոտորած և խուճապ է առաջացնում նրա շարքերում։ Այս-ոգևորում է գյուղացիներին, նրանք միանում են հայդուկներին և թշնամուն դուրս են շպրտում իրենց գյուղից։ Այս հաղթա՛նակը ոգևորիչ էր ոչ միայն Սոխորդի, այլև մնացած գյուղերի համար։

Աղբյուր Սերոբը 1890-ական թվականների սկզբից ներգրավված էր հայդուկային շարժման մեջ։ Նա եղել էր Կոստանդնուպոլսում, ապա Ռումինիայում, որտեղ ծանոթացել էր բալկանյան ժողովուրդների հայդուկային շարժման հետ, այնուհետև վերադարձել էր Ախլաթ և կազմակերպել իր խումբը։

---

1 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. IX, 1958, էջ 323։

2 Նույն տեղը։

3 Լեո, Անցյալից, էջ 61։

1897 թ. փետրվար ամսվա մի խստաշունչ օր կառավարական ուժերը Աղբյուր Սերոբին բռնելու նպատակով նորից են պաշարում Սոխորդը։ Գյուղին չվնասելու համար նա հագնում է լաքանները և ձյան վրայով բարձրանում Նեմրութ լեռը։ Թուրքական ուժերը հետապնդում են նրան։ Սկսվում է բուքն ու բորանը։ Հետապնդողները կարծում են, որ նա խեղդված կլինի։ Սակայն հաջողությամբ բարձրանում է լեռան գագաթը և միայն երկու շաբաթ հետո վերադառնում Ախլաթի գյուղերը։ Սերոբ Վարդանյանը հայ գյուղացիների կողմից ստացել էր Աղբյուր Սերոբ, իսկ քրդերից՝ Սերոբ փաշա անունները։

Հայտնի է, որ թուրքական կառավարությունը 1896 թ. ընդհանուր ներում շնորհեց քաղաքական բանտարկյալներին։ Այդ ժամանակ բանտից վերադարձավ նաև Հրայրը։ Հարկ է նշել, որ նրա հայացքները այլ հայդուկներից շատ բանով տարբերվում էին։ Նա գտնում էր, որ թուրքերի և քրդերի հետ պետք է քիչ խմբակային ընդհարումներ ունենալ, քանի որ դրանից հետո չնայած ժողովուրդը բարոյապես շահում է, սակայն թուրքական իշխանությունները շատ անմեղ մարդկանց բանտ են նետում։ Հրայրը իր ընկերներին առաջարկում էր հարատևորեն նախապատրաստվել և ապստամբության միջոցով հաղթանակի հասնել։

Սերոբին էին միացել նրա եղբայրները՝ Զաքարն ու Մխոն, տղան՝ պատանի Հակոբը և կինը՝ Սոսեն։ Կարճ ասած, նրանց ամբողջ ընտանիքը զինվորագրվել էր հայդուկային պայքարին։ Եվ դա հասկանալի է. թուրքական պաշտոնյաները ավերել ու այրել էին նրա տունը։ Աղբյուր Սերոբը հաստատվելով Սասունում, ղեկավարում էր հայդուկային բոլոր խմբերին, հանդիսանում էր նրանց հրամանատարը և կամաց-կամաց այդ խմբերին նախապատրաստում նոր պայքարի։

Հարկ է նշել, որ հայդուկների մոտ Սոսեի առկայությունը անցանկալի էր։ Հայդուկներից ոմանք ասում էին. «Մենք բոլորս ամուսնացած ենք, կնոջ, զավկի տեր ենք։ Եթե մենք ալ մեր կիները մեզի հետ բերենք, այլևս ինչպե՞ս կրնանք ազատ շարժիլ։ Սոսեն դրկենք Կովկաս կամ ուրիշ ապահով տեղ մը»[1]։ Չնայած այս առարկություններին, այնուամենայնիվ, Սոսեն միաժա-

---

[1] Ռոնա Ջեյրանյան, *Հայ կնոջ դերը հայ հեղափոխական շարժման մեջ*, ԱՅՍԻԱ։ Երևան, 1968, էջ 68։

մանակ ոգևորող գեր էր խաղում։ Առհասարակ նրա մասին շատ է գրվել, մանավանդ երբ նա կորցրեց իր ամուսնուն, նրա եղբայրներին, իր 18-ամյա տղային։

Աղբյուր Սերոբը իր հայրենակիցներին շատ հաճախ ասում էր. «Սուլթանի երկրում առանց հացի մնացեք, առանց զենքի մի մնացեք»[1]։

1898 թ. հոկտեմբեր ամսին սկսվեց Բաբշենի կռիվը։ Այստեղ էին գտնվում Աղբյուր Սերոբը իր 18 ընկերների հետ, որոնք պաշարվում են թուրքական ուժերի կողմից։ Հայդուկները կարողանում են ճեղքել պաշարման շղթան և մեկ շոհ տալով հեռանալ, թշնամուն պատճառելով տասնյակ զոհեր։

1899 թ. հայդուկ Գուրգենը իջնում է Սասունից Մուշի ծրոնք գյուղը՝ վառոդ տեղափոխելու։ Թուրքական ուժերը, տեղեկություն ստանալով այդ մասին, պաշարում են ծրոնքը և նավթ լցնելով մարագների վրա, սկսում են այրել։ Դրությունը օրհասական էր։ Գուրգենը հրամայում է հայդուկներին՝ մարագներից դուրս գալ, ճեղքել պաշարման շղթան և գյուղից հեռանալ։ Եվ հայդուկային խումբը այդպես էլ վարվում է։ Հայդուկները կռվում են մինչև արյան վերջին կաթիլը։ Այդ անհավասար կռվի մեջ ընկան բոլոր ութը հայդուկները, թշնամուն պատճառելով 23 սպանված և 20 վիրավոր։ Թուրքական իշխանավորներին հարկավոր էր շարքից հանել նաև հայդուկների գլխավորին՝ Սերոբ Վարդանյանին։ Եվ կառավարական պաշտոնյաներին այդ հաջողվում է։ Նրանք մի մատնիչի միջոցով Գելիեգուզանում կարողանում են թույն խառնել ծխախոտի հետ և թունավորել նրան։ Ապա քրդական 500 մարդուց բաղկացած ջոկատը հանկարծակի հարձակվում է այդ գյուղի վրա և պաշարում այն տունը, որտեղ հիվանդ վիճակում գտնվում էր Սերոբը։ Ծխախոտից թունավորվել էին նաև նրա ընկերներից մի քանիսը։ Սերոբը, նրա ընտանիքը և ընկերները կռվելով բարձրանում են դեպի գյուղի մոտ գտնվող լեռը։ Քրդական ուժերը հետապնդում են նրանց։ Կռվում սպանվում են Սերոբը, նրա երկու եղբայրները՝ Մխոն և Զաքարը, տղան՝ Հակոբը։ Սպանվում է նաև Սասունի հայտնի Տեր Քաջը, իսկ մի քանի հայդուկների հաջողվում է փախչել։ Սոսեն շարունակում է կռիվը։ Սակայն վիրավորվում է թշնամու գնդակից։

---

1 Խ. Դաշտենց, *Ռանչպարների կանչը*, էջ 44։

Թրքական ուժերի պետը՝ Բշարե Խալիլը, մոտենում է Սերոբին, կտրում է անշնչացած հայդուկի գլուխը և վերցնելով վիրավոր Սոսեին, արագորեն իջնում է Մուշ։ Սարսափ առաջացնելու նպատակով Սերոբի գլուխը մի ցցի վրա անցկացրած պտտեցնում են Մուշի թաղերում, ապա տանում Բիթլիս։ Բաղեշի հոգևոր առաջնորդ Ե. Չիլինկիրյանը գրում է. «Հերոս Սերոբի գլուխը ձիավոր սպա մը ձողի վրա բարձացուցած թափորին առջևեն կընթանար հուշիկ. այս տխուր թափորը եկավ և լցվեցավ կառավարության ընդարձակ հրապարակը, նույն միջոցին պատրաստ գտնվող զինվորական նվագածուած խումբը բոլորակ մը ձևացուց և Սերոբին գլուխը բարձր բռնած ձիավոր սպան շրջանակի մեջ մտավ և սկսավ տխուր եղանակներ զարնել»[1]։ Այնուհետև գլուխը մի կոզովի մեջ դնելով տանում են Բաղեշի առաջնորդանիստ Կարմրակնյա եկեղեցին. «Ժամը 12-ին մոտ էր, քանի մը թուրքեր կանգնած ս. եկեղեցվո դռան առջև և Աղբյուր Ծերոբի գլուխը կը փափաքեին տեսնել։ Ներս առի հետաքրքիր թուրքերը, որ դիտեցին հերոսին պատվական գլուխն ու մեկնեցան»[2]։

Կարմրակնյա եկեղեցու բակում էր թաղված նաև Մարգար վարժապետը։ Ե. Չիլինկիրյանը, չնայած չէր տեսել Մարգարին, սակայն վկայում է, որ նրա «գերեզմանը հասարակաց ուխտատեղի էր, ախտաժետ կանայք և օրիորդք գերեզմանին վրա կը լվացվեին և հողեն ալ կուց մը տանեին ի բուժումն ախտացելոց»[3]։ Ե. Չիլինկիրյանը Սերոբի գլուխը թաղել է Կարմրակնյա եկեղեցու բակում։ Նա գրում է. «Պարզ և ջինջ երկինք մը կար, և գիշերը անլուսին էր, շողշողուն բյուրավոր աստղեր կը պլպլային երկնակամարին վրա ու անթիթ վկաներ էին թաղումին սարսռազդեցիկ արարողության և տխուր տեսարանին, որուն նմանը հազվադեպ է մարդկային ողբերգական կյանքին մեջ։ Նույն գիշերը անսուաղ և անքուն անցուցի։ Ամիսներ հետո զբաց հրամանատարը Ալի փաշան հարուրապետի մը միջոցավ ինձ հանձնեց նահատակ Սերոբի կինը Սոսե անունով. սա քանի մը տեղերե գնդակով և դաշույնով վիրավորված ըլլալով հրամանատարը պատվավոր տուն մը դրած և կառավարության ծախքով դարմանել տված էր զայն։ Հրամանատարը միշտ կը կրկներ

1 Հիշատակներ Բաղեշի առաջնորդութենես, գրեց Եղիշե եպիսկոպոս Չիլինկիրյան, Երուսաղեմ, 1925, էջ 36։

2 Նույն տեղը, էջ 37։

3 Նույն տեղը, էջ 59։

ինձ. «Այդ կինը դյուցազն մշն է, ինչ օգնություն որ ընեք ատոր, կարժե»։ Սասեն օր մը հանդուցեալին հողակույտին վրա տարի, արտասուք յուս համբուրեց գերեզմանը ծնկաչոք և լռությամբ աղոթեց ընդերկայր»[1]։ Այսպես կարվեց Տարոնի, Սասունի, Ալ-լաթի հայդուկի կյանքի թելը, որը երկու գերեզման ունեցավ. նրա մարմինը թաղվեց Գելիեզգուզան գյուղում, իսկ գլուխը՝ Բիթլիսում։ Ազգային-ազատագրական շարժման գործիչները և ողջ Տարոնի ժողովուրդը այդ կապակցությամբ մեծ հուզմունք ապրեց։ Սերոբի մասին հորինվեցին բազմաթիվ երգեր։

Հայ ֆիդայիների, որոնց թվում և Սերոբի մասին, կան նաև շատ քրդական երգեր։ Նրանցից մեկի մեջ ասվում է այն մասին, որ քրդական զինված ուժերը շարժվում են դեպի Նեմրութ սարը։ Այստեղ նրանք հանդիպում են Սերոբի խմբին, որի մեջ էր նաև նրա կինը։ Քրդական ուժերը հարձակվում են հայ ֆիդայիների վրա, որի ժամանակ տալիս են երկու զոհ։ Սերոբը հասկացնում է ջոկատի պետին, որ լավ կլինի թողնել ու հեռանալ, քանի որ իր տղաները դիպուկ կրակողներ են և կարող են սպանել շատերին։ Քրդական ջոկատը հեռանում է։ Քուրդ ժողովրդի կողմից հորինվում է մի երգ նրա վեհանձն արարքի մասին։

Աղբյուր Սերոբի և նրա զինակիցներ Առաքելի ու Մուշեղի մասին պահպանված մի եզում, որը կոչվում է «Ավերակ ջաղաց» գովերգվում է հայդուկների քաջագործությունը, Սերոբի արիասրտությունը։ Գեղեցիկ են այդ երգի հնչյունները։ Ահա նրանից մի փոքր կտոր.

Առաքել, Մուշեղ լեռներեն իջան,
Ավերակ ջաղաց, հոգի ջան, գտան օթևան,
Լեռներ ու ձորեր եղան բոլոր մարգ,
Ավերակ ջաղաց, հոգի ջան, օգնեց մեզի ջատ։
Ձմրուխ սարը բռնել էր կարկուտ,
Սերոբ կը կանչե, հոգի ջան, դուշմանն է անգութ։
Դե զարկեք, զարկեք, դե կռվեք քաջ-քաջ.
Տիրոջ սուրը կամքով, հոգի ջան, մենք երթանք առաջ։

Գուրգենի, Սերոբի և այլոց նահատակությունը բացասական ազդեցություն թողեց հայ հայդուկային շարժման վրա։ Շահեց

---

1 Ե. Չիլինկիրյանի նշվ. աշխ., էջ 37—38։

2 Տարոնի ժողովրդական երգեր, հայնագրված Արմենուհի Գևոնյանի կատարումից, Երևան, 1978, էջ 29։

միայն կառավարությունը։ Նախ նրանով, որ շարքից դուրս եկան հայդուկային շարժման երկու ղեկավարները, երկրորդ, քուրդ Բշարե Խալիլի վայրագության պատճառով ավելի սրվեցին հայ և քուրդ առանց այն էլ անբարյացակամ և թշնամական հարաբերությունները։ Բշարե Խալիլը Սերոբին սպանելու համար սուլթանից շքանշան ստացավ։

Սակայն Սերոբի և Գուրգենի սպանություններով հայդուկային շարժումը չվերացավ Տարոնից և Սասունից, նրանց փոխարինեցին Անդրանիկը և Գևորգ Չավուշը։

Այսպիսով, հայդուկային շարժումը և նրա հիմնական աղբյուրը ժողովրդի կրած անտանելի վիճակն էր, ազգային արժանապատվության ոտնահարման փաստերը, հարստահարությունները, անմեղ մարդկանց թալանելը, բանտեր նետելը, նրանցից և նրանց հարազատներից հսկայական գումարներ կորզելը։

Օսմանյան կառավարական պաշտոնյաները առանձին մարդկանց, հատկապես հարուստների ունեցվածքին տիրանալու համար հաճախ նրանց բանտարկում էին։ Այսպես, Տարոնի Սուլուի գյուղի բնակիչ Սերոբին նրանք մի քանի անգամ բանտարկեցին, որի հետևանքով նա ստիպված դարձավ հայդուկ «Տարոնի առյուծ» մականունով։ Ե. Չիլինկիրյանի միջնորդությամբ ազատվելով Բաղեշի բանտից, Սերոբը նրան ասում է, որ հայրենական հարստությանս տիրանալու նպատակով թուրք պաշտոնյաներն ամեն անգամ ինձ բանտ են նետում «... և մինչև որ գրամական ուժս չսպառեն, բանտից չեն արձակեր զիս, այս եղանակավ շատ անգամ բանտարկված ու արձակված էմ, միշտ կողոպտված...»[1]։ Ապա շարունակում է, որ նա որոշել է ողջ ունեցվածքը վաճառել, վերցնել իր հետ զավակներին, դառնալ հայդուկ և բարձրանալ Սասունի լեռները։ Սերոբը եպիսկոպոսին ցույց է տալիս իր տան թաքստոցը և ասում. «Հայր սուրբ, ուխտս հավիտենական է. կարողությունս դրամի վերածելով այս զենքերովս ու հարազատներովս պիտի բարձրանամ Սասնո սարը, տղերանց մոտ պիտի ծառայեմ ս. գործին, կենաց ու մահու չափ։ Ուրեմն օրհնե զիս, որ զօրանամ ու արիանամ»[2]։

Օսմանյան կառավարության դեմ դուրս են եկել նաև բիթ-

---

1 Չիլինկիրյանի նշվ. աշխ., էջ 43։

2 Նույն տեղը, էջ 45—46։

լիսցի Մուշեղը, որը սովորել էր Էջմիածնի Գեորգյան ճեմարանում, ծանոթ էր Մ. Տամատյանին և իր արիությամբ հայտնի էր Մոտկանում, Խութում և Սասունում։ Մ. Տամատյանի բանտարկվելուց հետո Մուշեղը վերադառնում է Բիթլիս, որտեղ ծանոթանում է Աղբյուր Սերոբի հետ և միասին մեկնում են Խլաթ, Բուլանըխ, Մուշ և Սասուն։ Իմանալով Մարգար վարժապետի կախվելու լուրը և իր մի քանի ընկերների դատավարության մասին, նա սպանում է մատնիչին և ապա միանում է Սերոբի խմբին։ Այնուհետև նա սպանում է քուրդ ցեղապետ Սլոյին, որը շրջակա հայ գյուղերը սարսափի մեջ էր պահում։ Մուշեղը սպանվում է 1899 թ. Խախռեֆ գյուղում։

Օսմանյան կառավարողների կողմից հովանավորող Բշարե Խալիլը իր խմբով ավելի հանդուգն ու համարձակ էր դարձել։ Նա ցանկանում էր ուժեղ հարված հասցնել Սպաղանք (Զբաղանք) գյուղին և շարքից հանել նրա երիտասարդներին, որոնց ղեկավարում էր Մակարը։ Սակայն հայ մարտիկները պաշտպանվեցին և քուրդ բեկը ստիպված հեռացավ գյուղից։

Արխիվում պահպանվել է մի «Տեղեկագիր Բաղեշի զինվորական հրամանատար Ֆերիկ (Ալի) փաշայի կազմակերպած և քուրդ աշիրեթապետ Խալիլի միջոցով Սասունի Զբաղանք գյուղի հրդեհման, կողոպտման և գյուղացիների բնաջնջման մասին»։ Զորս թերթանոց այդ վավերագրի մեջ ասված է, որ 1900 թ. հուլիսի 3-ին Սասունի Զբաղանք կամ Սեպկան գյուղը բնաջինջ արվեց։ Զարդարարները այդ օրը սպանեցին գյուղի բոլոր բնակիչներին, նրանցից շատ քչերը միայն կարողացան ազատվել։ 1899 թ. քուրդ աշիրեթապետ Խալիլը իր ուժերով ցանկացավ տանել այդ գյուղի ոչխարները, սակայն գյուղացիները անցան ինքնապաշտպանության և թույլ չտվին։ Դրանից հետո նա միավորվում է քրդական մի ուրիշ ցեղապետի՝ Քոռ Սլոյի հետ և նրանք միասին կարողանում են տեղական իշխանությանը համոզել, «թե հեղափոխականք ապաստանած են ի Զբաղանք» և անհրաժեշտ է նրանց հարված հասցնել։ Լսելով այս մասին Բաղեշի զինվորական հրամանատար Ֆերիկ Ալի փաշան մի քանի վաշտ զորքով շարժվում է դեպի Սասուն։

Զինվորական ու ոստիկանական ուժերը և քրդական զինված համիդիեներ պաշարում են Սպաղանքը։ Գյուղի բնակիչները չէին հասկանում այդ վարմունքի պատճառը, սակայն երբ նրանք արդեն պաշարման մեջ էին «գնդակներու տեղատարափին ներքև

կակսի խուճապն գյուղի մեջ, բնակիչք հանկարծակի կուգան, գյուղն պաշարված և ողողված էր այս խառնամբոխ գումարտակներով, փախուստի անցք չէր գտնվեր, շարժել կարելի չէր»[1]։

Թշնամին սկսում է ջարդը։ Վավերագրի մեջ ասված է. «Խրճիթներուն և փողոցներուն մեջ զով որ կը գտնեին, գնդակով, դաշույնով ու սվինով կսպանեին, կիները իրենց երեխաներով ընդառաջ կվազեին զորաց, կարծելով, որ անոնք պիտի խնայեն տղայոց ի կանանց, սակայն կսխալին»[2]։ Թուրքական փաշան որոշել էր «հնչացնել բոլորին։ Խալիլը նախորդ տարվա դեպքերից հետո ատելությամբ էր լցված այդ գյուղի գյուղապետ Մակարի նկատմամբ։ Նրա կարգադրությամբ ճեղքում են Մակարի հղի կնոջ՝ Թամեի «արգանդը երեխան կենդանի՝ դուրս հանելով կը փոխադրեն մոր գրկաց մեջ ու եաքն ալ կը հոշոտեն մայրը դաշույնի հիսուն հարվածներով»[3]։

Ժողովրդի մի մասը ստիպված պատսպարվում է եկեղեցում։ Ջարդարարները հարձակվում են եկեղեցու վրա, սակայն չեն կարողանում ներս մտնել, որից հետո եկեղեցու վրա խոտ և նավթ լցնելով այրում են։ Ժողովրդի դիակները Ալի փաշայի հրամանով հավաքում են մի տեղ և բարբարոսաբար հրկիզում։ Դիակներից առանձնացնում են վեցը, որպեսզի ասեն, թե դրանք հեղափոխականների դիակներն են, սակայն իրականում «Զբաղանքի մեջ բնավ հեղափոխական չէ գտնված, միայն արդարացնելու համար հեղափոխականք հոն մուտ գտած էին, կըսվի»[4]։ Սրանով էլ վերջացավ Սասունի Զբաղանք գյուղի ողբերգությունը, ուր մինչ այդ բնակվում էին 150—200 մարդ, սակայն դրանից հետո մնացին 4 տուն 27 բնակիչներով[5]։ Այս վայրագ ու դաժան դեպքի կապակցությամբ հետագայում Անդրանիկը գրեց, որ Բշարե Խալիլը և Ալի փաշան Սպաղանքից «քսանյոթ կին և երեխա տեր Պետրոս քահանային հետ սպանել տված էր և քառասուն և ութ ժամ վերջը գյուղացիներեն թաղված այդ դիակները հանած իրենց գերեզմաններեն, ուս Մակարի տան մեջ լցնելով հարյուր ութսուն խուրձ խոտ քարյուղով թրջելով այրած

---

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 6, թ. 1։

[2] Նույն տեղը, թ. 1—2։

[3] Նույն տեղը, թ. 2։

[4] Նույն տեղը, թ 3—4։

[5] Նույն տեղը, թ. 4։

էր զանոնք բոլորը անոնց հետքերը անհետացնելու համար»[1]: Այդ գյուղը կործանելուց հետո նշված ուժերը մասնակի չարդեր են առաջացնում նաև Եզկարթ, Զորմետ և այլ գյուղերում։

Հայդուկները որոշում են վրեժխնդիր լինել իրենց զոհված ընկերների համար։ Նրանք, նախ, հաշվեհարդար են տեսնում Գեղաշենի մատնիչ Ավեի հետ, այնուհետև հետապնդում են Աղբյուր Սերոբի դահիճ խալիլին։ Նրանք Անդրանիկի գլխավորությամբ կտրում են այն կիրճի բերանը, որով 13—14 զինյալների հետ պետք է անցներ Բշարե խալիլը և Մուշից գնար Սասունի Աղբերիկ գյուղը։ Ե. Չիլինկիրյանը նշում է. «Խալիլ հեծած էր գորշ գրաստի մը վրա, գեղեցիկ էգ մը, որ բռնի առած էր Սասնո Կոր գյուղի ռես Խըզո՞ Արեի ձեռքեն»[3]։ Հայդուկների առաջին համազարկը շարքից հանում է խալիլի ջոկատի անդամների մեծ մասին։ Խալիլը կենդանի բռնվում է և բերվում Անդրանիկի մոտ։ Հայդուկները կազմում են դատական ատյան և դատը վարում է Արթին Զավուշը, որը հիանալի քրդերեն գիտեր։ Դատավորը խալիլին հարց է տալիս. «Ուրեմն սպանված Սերոբի գլուխը կտրողը դո՞ւն էս»[3] (ընդգծումը հեղինակինն է։— Հ. Պ.): Այս հարցին հաջորդում է մյուսը. «Տալվորիկի Զբաղանք թաղին մեջ քսանյոթը հայ կիներն ու փոքրիկները, նույնպես գյուղին 75 տարեկան ծերունի Տ. Պետրոս քահանան սպանողը դու՞ն էս»: Այնուհետև Բշարե խալիլին տրվում է վերջին հարցը. «Հերթինք գյուղի յոթը հայ երիտասարդները բռնող և թևերը կապած Նրոնա գոմին ներքև՝ գետի մեջ սպանողը դո՞ւն էս»[4]: Այս ասելուց հետո հայ ֆիդայիները կտրում են նրա գլուխը, անցկացնում ցցին և պրոտեցնում Սասունի Տավրնե գյուղում։

Այս դեպքից հետո էր, որ ժողովուրդը սկսեց երգել զուսան Շերամի Անդրանիկի մասին հյուսված հետևյալ երգը.

Իբրև արծիվ սավառնում ես լեռ ու ժայռ,
Թնդացնում ես երկինք երկիր անդադար,
Քաջ անունդ պիտի հիշվի դարեդար,
Հսկա լեռինք քեզ ապավեն Անդրանիկ։

---

[1] Աուլքելոց վանքին կռիվը, պատմեց Զոր. Անդրանիկ, գրի առավ Լ. Կ. Լուլեճյան, Պոսթրն, 1924, էջ 12։

[2] Եղիշե Չիլինկիրյան, Արձագ։ նք Բ. վերհուշեր անցեալէն և ազգ. զանազան անցուդարձերու 1900—1918, Պեյրութ, 1927, էջ 84։

[3] Նույն տեղը, էջ 85։

[4] Նույն տեղը, էջ 86։

Հայոց կուսանք գափնյա պսակ թող հյուսեն,
Քնքույշ ձեռամբ քո ճակատը պսակեն
Գոհարներով քո քաջ կուրծքը զարդարեն
Հայրենիքի տեր ու պաշտպան Անդրանիկ[1]։

1901 թ. նոյեմբերին Անդրանիկի և Գեորգ Չավուշի գլխավորությամբ 25 ֆիդայիներ իջնում են Սասունի լեռներից և ամրանում Մշո ս. Առաքելոց վանքում։ Հետագայում Անդրանիկի պատմածի հիման վրա Առաքելոց վանքի դեպքերի մասին գրի առնվեց ու հրատարակվեց մի փոքրիկ, բայց իրական փաստերը ճիշտ նկարագրող գրքույկ։ Այդ գրքույկում Անդրանիկը նշում էր, որ «Հայրենիք» ամսագրում տպագրված Ռ. Տեր-Մինասյանի հոդվածաշարը իրականությունը ճիշտ չի՞ ներկայացնում։ Այնտեղ՝ եղած «գրությունները խեղաթյուրված պատմություններ են, որոնք երբեք չեն ներկայացներ մեր անցյալի փառավոր դեպքերը իրենց հարազատ և իսկական պատկերներուն մեջ»։ Անդրանիկը միաժամանակ գտնում է, որ Ռ. Տեր-Մինասյանը չի մասնակցել կռվին և գրել է դեպքերի մասին «որոնց ոչ ներկա եղած է, ոչ ապրած և ոչ ալ տեսած է»[2]։ Այնուհետև նա՝ նշում է, որ Առաքելոց վանքի կռիվը մղվեց «ափ մը ֆեդայիներով», որոնք գնացին այդ քայլին ժողովրդի վրա «ծանրացող տառապանքը մեղմելու և թուրքական ու քրդական հարստահարություններն ու հալածանքները դադարեցնելու»[3] համար։ Ըստ Անդրանիկի, այդ կռիվը սկսվեց նրա համար, որպեսզի թուրքական կառավարության և օտար դեսպաններին ստիպեն «բարենորոգում մը և դարման մը ձեռք բերելու այս տառապած և հարստահարված խաղաղիկ ժողովրդին համար»[4]։

1901 թ. նոյեմբերին, երբ Անդրանիկն ամրացավ Առաքելոց վանքում, թուրքական իշխանությունները ցանկացան հենց ըսկզբից վանքը ռմբակոծել թնդանոթներով, սակայն «Ռուսիո հյուպատոսը առարկած է կառավարության, թե այդ վանքին մեջ որբեր կան և անոնք անմեղ են»[5]։ Վանքը ուներ այնտեղ եղածների համար մեկ ամսվա սննդի պաշար։ Որպեսզի ապահովեն

---

[1] Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, Գեյրութ, 1932, էջ 356։
[2] Առաքելոց վանքին կռիվը..., էջ 1 և 8։
[3] Նույն տեղը, էջ 9։
[4] Նույն տեղը, էջ 13։
[5] Նույն տեղը, էջ 24։

իրենց ջրով, հայդուկները սկսում են ջրով լցնել բոլոր ջրամանները, գինու կարասները, մատաղի կաթսաները։

Հետաքրքրական են այնտեղ հավաքված հայդուկների ունեցած զենքերի մասին տվյալները։ «Այդ տարին,— պատմում է Անդրանիկը,— մենք տակավին ռուսական մոսին չունեինք, 1877-ին գործածված ռուսական պերտանգաներ էին մեր զինվորներու ձեռքը գտնվածները, միակ իմս մոսին մավզեր էր»[1]։

Շուտով նրանց են միանում Մշո դաշտից ժամանած նոր երիտասարդներ։ իրենց ռազմաթերքով և խմբի թիվը հասնում է 80 հոգու։ Սկսվեց թուրքական ուժերի և հայդուկների կռիվը, որը և տևեց 21 օր։ Պաշարման ընթացքում հայդուկները երգում էին «Ծովասարի խումբ և իր խմբապետ լեռներեն իջան» երգը։ Թուրքական կառավարությունը վանքում ապաստանածներին ճնշելու նպատակով ուղարկեց նոր ուժեր։ Ջորքերը բազմաթիվ գրոհներ կատարեցին հինավուրց վանքի վրա, սակայն հայդուկները դիմադրում էին առանց խուճապի և հուսահատության, ու թշնամու գրոհները ետ են մղվում։ Հանկարծ վիրավորվում է անվախ հայդուկներից մեկը՝ Հարությունը։ Նա խնդրում է Անդրանիկին. «Փաշա՛, ինձ չթողուք և երթաք, ինձ սպանեցեք, հետո հեռացեք վանքեն»[2]։ Կռվի 17-րդ օրը հայդուկները նրան թաղում են մեծ շուքով։ Մի քանի օր հետո թուրքական բանակի հրամանատարը սկսեց համոզել պաշարվածներին՝ անձնատուր լինել։ Սակայն հայդուկները մերժեցին նրա առաջարկը։ Դրությունը օրհասական էր։ Հայկական փոքրաթիվ այդ ջոկատը ուժերի գերլարումով էր դիմադրում թշնամուն։ Թուրքական բանակի թիվը ուսումնասիրողները հասցնում են 800 հոգու, չհաշված քրդական ուժերին։ Սուլթանական կառավարությունը հրամայեց վերջ տալ հայդուկների դիմադրությանը և գրավել վանքը։ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանը հրահանգեց Մուշի առաջնորդարանին համոզելու հայդուկներին, որ նրանք անձնատուր լինեն, սակայն պաշարվածները նորից մերժեցին նրանց առաջարկը։ Վերջապես սկսվում են բանակցությունները, որին մասնակցում էին Մշո առաջնորդարանի տեղապահ Խ. Պահրիկյանը, Առաքելոց վանքի վանահայր Հովհաննես վարդապետը և երկու թուրք պաշտոնյա։ Անդրանիկի գլխավորած հայդուկները ներկայաց-

---

[1] Առաքելոց վանքին կռիվը..., էջ 28։

[2] Ջոր. Անդրանիկ և իր պատերազմները, էջ 76։

նում են հետևյալ պահանջները. ազատել քաղաքական բոլոր բանտարկյալներին, յուրաքանչյուր գյուղի տասանորդը պետք է հավաքի հենց ինքը գյուղացին և հանձնի կառավարությանը, չնչել քուրդ ցեղապետների հարկերը, որոնք հավաքվում են հայ գյուղացիներից, քանի որ պետության մեջ պետություն չպետք է լինի։ Զինաթափ անել այն քրդական զավթիչ ուժերին, որոնք հարձակվում են խաղաղ հայ գյուղերի վրա և վերադարձնել հայ գյուղացիներից բռնագրավված հողերը։ Այնուհետև Անդրանիկը և նրա զինակիցները ասացին, որ կառավարությունը մեր մեջ ավազակներ է տեսնում, սակայն «ավազակները պետք է կառավարությունը իր մեջ փնտրե, որոնք ահագին գեղծումներ կը գործեն և կաշառքներ կառնին». իսկ հայդուկները «խաղաղ ժողովրդին ոչ մեկ օր կամ ոչ մեկ ատեն չարիք պատճառած չեն»[1]։ Այնուհետև նշում էին բազմաթիվ անմեղ մարդկանց սպանություններն ու բանտարկությունները ցույց տալով, որ Մոկունք գյուղից 15 անմեղ մարդիկ են բանտարկված և բանտում թունավորված. «Անոնց տված թույնին սաստկութենեն գլուխներուն մազերն իսկ թափեցան։ Դուք առանց խղճահարվելու բանտերուն մեջ լեցուցիք մոտավորապես հարյուր յոթանասուն անմեղ հոգիներ և տակավին կըսեք ինծի, թե ի՞նչ է նպատակդ և ի՞նչ կուզես»[2]։

Այնուհետև Անդրանիկը հայտարարում է. «Մենք հարյուրավոր մղոններ կտրած հոս եկած ենք մեր պատանքները մեր տոպրակներու մեջ դրած։ Եթե այս համեստ առաջարկներուս բավարարություն չտրվի, մենք ունինք պաշար վեց ամիս գիմադրելու»[3]։

Բանակցությունների վերջում հայդուկները պահանջում են ընդունել այդ առաջարկությունները, որից հետո միայն իրենք կթողնեն վանքը և կհեռանան։ Ինչ վերաբերում է անձնատուր լինելուն, ապա նրանք չեն մտածում այդ մասին և ցույց տալով ռազմամթերքներով լիքը սնդուկները, Անդրանիկը բանակցելու համար վանք մտած թուրք աստիճանավորներին ասում է. «Մենք մահը աչք առնելով ֆիդայի դարձած ենք և հետևաբար մահեն չենք վախենար. այս սնդուկներուն մեջ որքան փամփուշտ կա՝ կը վառենք ու ապա կնահատակվինք, բայց գիտցեք, որ մեկ

---

1 Առաքելոց վանքի կռիվը..., էջ 45—46։

2 Նույն տեղը, էջ 47։

3 Նույն տեղը, էջ 48։

նահատակի տեղ տասը և հարյուր հերոսներ ոտքի պիտի կանգնին և հայ ժողովուրդի իրավունքները պաշտպանեն...»[1]։

Վերջապես ութ օրվա դադարից հետո Կոստանդնուպոլսի պատրիարքարանից ստացվում է հեռագիր, որի մեջ ասված էր. «Անձնա ուր եղեք, ձեզի ներում կը շնորհվի և ձեր պահանջները կը բավարարվին»[2]։ Սակայն կռվի 21-րդ օրը խմբի անդամները հագնում են սպիտակ շապիկներ և բքի ու մշուշի միջով, մի զոհ տալով կտրում են թշնամու շղթան և բարձրանում են Սասունի լեռնակատարները։

1901թ. դեկտեմբերին Գևորգ Չավուշը հայդուկների հետ գտնվում էր Նորաշեն գյուղում։ Հանկարծ գյուղ է մտնում հարյուր հոգիանոց թուրքական մի ջոկատ, սկսվում է կռիվը։ Թուրքական ջոկատի հրամանատարը մի շարք ձիավորների հետ շարքից դուրս է գալիս, իսկ հայդուկները թողնում են գյուղը։

1900—1901 թվականներին հայդուկային խմբերը իրենց առջև խնդիր էին դրել՝ ամեն գնով լավացնել իրենց հարաբերությունները քրդական ցեղերի հետ։ Այս գործի ամենաջերմ ջատագովներն էին Հրայրը և Վարդան վարդապետը, որոնք, ինչպես երևում է մեր ուսումնասիրություններից, լավ էին հասկացել երկու ժողովուրդների համար էլ թուրքական կառավարության վարած քաղաքականության կործանարար լինելը։ Հրայրը և Վարդան վարդապետը սկսեցին քրդական շատ ցեղապետների հետ բանակցություններ վարել և նրանց հասկացնել, որ սկսված կռիվներից օգուտ է քաղում միայն ու միայն օսմանյան կառավարությունը, որ տուժում են միայն քրդերն ու հայերը, որոնք դարեր շարունակ կողք կողքի են ապրել։ Նրանց հաջողվեց մի շարք ցեղապետների հայերին բարեկամ դարձնել։ Հայ-քրդական հարաբերությունների բարելավումը կարևոր էր նաև մի այլ տեսակետից։ Այն ավելի դյուրին էր դարձնում Բասենից դեպի Խնուս և Կարսից դեպի Ալաշկերտ-Ախլաթ ղենքի փոխադրության գործը։

Հետաքրքրական է Հրայրի կարծիքը այն ժամանակվա Տարոնի ազգային-ազատագրական շարժումների մասին։ Նրա կարծիքով Տարոնի և Սասունի ժողովուրդը դեռևս «պատրաստ չէր հեղափոխական իդեալները յուրացնելու, ավելին՝ դեռ շատ թույլ էր ռազմական ոգով ալ» և քանի որ ժողովուրդը պատրաստ չէր

---

1 Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 648։

2 Նույն տեղը։

միացյալ կռվի համար, պետք է շատ զգույշ լինել և չպետք է սարերը բարձրանալ, իսկ փախստականները, որոնք գտնվում են սարերում, պետք է «հեռանան երկրեն, կառավարությունը ժամանակեն առաջ չարթնեցնելու համար»[1]։

1903 թ. Գևորգ Չավուշը Արճեշից վերադարձավ Սասուն։ Հենց նույն տարին Կովկասից Խնուս-Մուշ և ապա Սասուն անցավ Թուման Թումանյանի (Թորգոմ) 23 հոգուց բաղկացած հայդուկային խումբը։ 1903 թ. Կովկասից դեպի երկիր եկան Նշան Կարապետյանը (Ռուբեն Խանզատյան) և Նևրուզի խմբերը, որոնք երկուսը միասին ունեին 146 մարտիկներ։ Դալի Բաբայում և Ցուղվերանում թուրքական զորքը պաշարեց նրանց։ Կռիվը կատաղի էր, խմբերից ազատվեցին միայն 20 հոգի, իսկ մնացածները ընկան մարտում. թուրքական ուժերը այս կռվում թողեցին 800 դիակ։ Այս կարգի խմբերի, ինչպես նաև հայկական կոտորածների մասին Եղիշե Չարենցը գրել է.

«Ես սրտի փոխարեն ունեի իմ կրծքում պողպատ զսպանակ,
Անծանոթ էր կյանքում ինձ համար ամենայն վարանում և ահ.
Մեր երկրի արի այրերից կազմեցի ես մեծ մի բանակ,
Եվ մեր սև դրոշի վրա գրեցի «Հայրենիք կամ մահ»։
Գնացին նոքա, այդ արի զինվորները, երկիրն Ավետյաց,
Տիրում էր այնտեղ բռնություն, և՛ ոճիր և՛ կյանք անազատ,
Գնացին նոքա՝ սրբելու մեր դեմքից նախատինք և լաց,
Բայց երկիրն արյամբ ողողեց տագնապած Արքան այն գազան»[2]։

Հարկ է նշել, որ հայ ազգային կուսակցություններին և հատկապես դաշնակցականներին ոգևորեց Թորգոմի խմբի Սասուն հասնելը։ Սակայն նրանց ոգևորությունը ավելորդ էր ու վնասակար։ Շուտով երկիր անցած Կայծակի և Երկաթի (Արմենակ Լևոնյան) խմբերը «առանց բացառության կոտորվեցան հազիվ սահմանը անցած»[3]։ Այս մեթոդներով թուրքական կառավարության դեմ կռվելը առնվազն խակմիտ արարք էր և դրանից, ինչ խոսք,

1 Ավ., Գևորգ Չավուշ, էջ 112։

2 Եղիշե Չարենց, Գիրք ճանապարհի, Պոեմներ և բանաստեղծություններ 1933, էջ 82։

3 Ապրումներ, Մալխաս, Պոսթրն, 1931, էջ 255։

հայ ժողովուրդը չօգտվեց, մանավանդ, երբ թուրքական ուժերը ավելի վատ էին վարվում խաղաղ բնակչության հետ։ Անգամ պաշնակցական գործիչները հետագայում խոստովանում էին իրենց կուսակցության այդ սխալ վարքագիծը։ Այսպես, Ա. Կ. Հովսեփյանը (Մալխաս) այդպիսի խմբերի մասին գրում էր. «Զարաբաստիկ ձեռնարկմ էր այդ, անմիտ ու անժամանակ, ու իր սաղմնավորության մեջ իսկ դատապարտված անհաջողության»[1]։

Մինչև 1904 թ., ինչպես ասվեց, Սասունի գյուղերում ոչ մի թուրքական աստիճանավոր չկար, կային միայն Սասունի իշխանավորները, որոնք ռեսի կամ տանուտերի պաշտոն էին վարում։ Նրանք գյուղացիներից հավաքում էին հարկերը և հանձնում էին թուրքական կառավարությանը։ Սակայն Սասունի 1894 թ. ապրստամբությունից տասը տարի անց թուրքական կառավարությունը որոշեց մի անգամ ևս հարված հասցնել Սասունի լեռնականներին և սկսեց Մուշում կուտակել զորքեր, որոնք հարմար առիթի դեպքում պետք է արշավեին դեպի Սասուն։ 1904 թ. հունվար ամսին քրդական բեկերը, չսպասելով գարնան գալուն, սկսեցին իրենց հարձակումը Սասունի, Խիանքի ու Խուլբի հայ գյուղերի վրա։ Լեռնականները դիմադրեցին և արդյունքը եղավ այն, որ Խիանքի և Խուլբի վրա հարձակվող թուրքական և քրդական ուժերը նրանցից շառաչուն հարվածներ ստացան և ստիպված թողեցին Սասունի սահմանները։ Այդ կռիվների ժամանակ լեռնականները ստեղծեցին ազատասիրական մի նոր երգ.

Դարձյալ փայլեց Սասնո գլխին,
Ազատության դրոշակ
Կեցցե՛ հայրենիք կոչելով,
Բարձրացրին աղաղակ[2]։

Թուրքական ուժերին դիմադրելու և Սասունի լեռնականների շարքերը խտացնելու նպատակով սկսվեց կամավորական խմբերի մեկնումը դեպի Սասուն։ Մուշում և Սասունի շրջակայքում գտնվող թուրքական և քրդական զորամասերը նույնպես նախապատրաստական մեծ աշխատանք էին տանում։ Նրանք իրենց ուժերը դասավորեցին այնպես, որ երեք ուղղությամբ սկսեն արշավանքը դեպի լեռնական Սասուն։ Թուրքական հրամանատա-

---

1 Ապրումներ, Մալխաս, Պոսթրն, 1931, էջ 255։

2 Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 670։

ության պլանի համաձայն, նրանց ուժերի մի մասը պետք է շարժվեր դեպի Քուփ, մյուսը Կուրտրկ լեռան վրայով դեպի Շենիկ և Սեմալ գյուղերը, իսկ վերջինը՝ Խրզբլաղաճի վրայով դեպի Ալիանք գյուղը։

1904 թ. սկզբներին Բաղեշի կուսակալ Ֆեբիտ փաշան զորքով գալիս է Մուշ և հայ երևելիներին ու հոգևոր պետին ներկայացնում է հետևյալ պահանջը. «Սուլթան Համիդի ձեռքին վրա գոյացել է մեծ ուռուցք մը, որ նեղություն կը պատճառե անոր. անհրաժեշտ է այդ ուռուցքը վիրահատել, որպեսզի վերքը շուտով առողջանա և չըլլա թե մեր կայսեր ամբողջ մարմինը վարակե ու թանկագին կայսեր մահվան պատճառ դառնա։ Այդ ուռուցքը Սասունի մեջ գործող Անդրանիկն ու Հրայրն են։ Պետք է ատոնք, իրենց բոլոր ուժերով, գան հանձնվին՝ առանց արյունահեղության։ Հակառակ պարագային սուլթանը մեծ ուժ ու կարողություն ունի այդ վերքը շուտով առողջացնելու»[1]։

1904 թ. փետրվարի 6-ին Սասունից գրում են մի նամակ, որը պահպանվել է Մոսկվայի արխիվներից մեկում և իր գրքերից մեկում բերել է պրոֆ. Գ Գալոյանը, այնտեղ ասված է. «Ձմեռը դաժան է, սառնամանիքները և ձյունահյուսերը անտանելի են, ժողովուրդը բոբիկ է և տկլոր, իսկ պատերազմը՝ անհավասար։ Ի՞նչ կլինի մեզ հետ վաղը և ինչ կլինի մեր դրությունը, չգիտենք, մտածեք ինքներդ»[2]։

Մի ուրիշ արխիվային վավերագրում, ուղարկված 1904 թ. մարտի 21-ին, գրված է. «Ապստամբները՝ Սասունի ազատ հայերը, պատրաստ են առանց վախենալու բաց կրծքով կանգնել ընդդեմ սուլթանի կողմից նախապատրաստված դաժան կրակին, իսկ այդ արդեն ոչ առաջին անգամ։ Այդ պատճառով թախանձագին խնդրում ենք մեր եղբայրներին չհրաժարվել խեղճ սասունցիներին օգնելուց...»[3]։

Ինչ խոսք, սասունցիների վիճակը դժվարին էր, նրանք փոքրաթիվ ուժերով պետք է պայքարի մեջ մտնեին թուրքական ահռելի ուժերի դեմ։ Սակայն կյանքը ստիպում էր նրանց նախապատրաստվել ինչքան որ կարող են։ Սասունցիներն ունեին իրենց

---

1 Հարազատ պատմություն Տարոնի, էջ 163։

2 Галоян Г. А. Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900—1922, Е., 1969, стр. 58.

3 Նույն տեղը, էջ 59։

պաշտպանական գիծը և հրամանատարները, նրանց պաշտպանական ուժի հյուսիսային ճակատը գլխավորում էր Հրայրը, իսկ Անդրանիկի գլխավորած ուժերը փակել էին Շատախի արևելյան անցքը, Իշխանձորի և Տալվորիկի ուժերին գլխավորում էր Գևորգ Չավուշը, իսկ Կոտոյի Հաճին պաշտպանում էր Ջայի գլուխը։ Սասունում կուտակված հայդուկների թիվը հասնում էր 200 հոգու, որոնք բոլորն էլ կոփված մարտիկներ էին, նրանցից երեսունը եկել էին դրսից, իսկ 170-ը Տարոնից և Սասունից էին։ Սասունն ուներ ընդամենը 1200 կռվող, որոնցից 200-ը՝ հայդուկներ։ Սակայն, ինչքան էլ նրանք մարզված լինեին, ինչքան էլ նրանք քաջ ու անվախ լինեին, ինչքան էլ նրանց լեռները անմատչելի լինեին դրսից հարձակվողների համար, միթե այդ փոքրաթիվ ուժերով հնարավոր էր դիմադրել թուրքական և քրդական ահռելի ուժերին, որոնք անընդհատ զինամթերք էին ստանում պետական ռազմապահեստներից։ Իսկ ինքնապաշտպանների զինամթերքը քիչ էր։ Ճիշտ է, սասունցիներն իրենք էին վառոդ պատրաստում, սակայն նրանց զինամթերքը երկարատև պայքարի ընթացքում շուտ էր սպառվում։ Սասունի լեռնականների դեմ եղած թուրքական ուժերը հաշվվում էին մոտ տասը հազար սվին, իսկ քրդականը՝ հինգ հազար մարդ։ Եվ այս ահռելի բանակի դեմ կանգնած էր ընդամենը 1200 հոգի։ Թուրքական ուժերը արդեն ապրիլի 13-ին գտնվում էին Սեմալ գյուղի մոտ։ Նրանք այս անգամ նախապատրաստվել էին հենց գարնան հետ սկսել արշավանքը։ Սեմալ գյուղի բնակիչները ստիպված թողնում են իրենց հայրենի գյուղը և տեղափոխվում Գելիեգուզան։ Թուրքական ուժերը արշավում են դեպի Գելիեգուզան և ցանկանում են գրավել այն, սակայն այստեղ գտնվող ուժերը հերոսաբար պաշտպանվում են։ Թուրքական հարձակումից առաջ Անդրանիկի մոտ ուղարկվեցին եվրոպական պետությունների ներկայացուցիչներ, որոնք սկսեցին համոզել նրան՝ առանց կռվի թողնելու Սասունը։ Այս քայլն ուներ իր նպատակը, քանի որ եթե զինված ուժերը հեռանային Սասունից, ապա թուրքական զորքերը կարող էին առանց դիմադրության մահացու հարված հասցնել Սասունի ժողովրդին։ Սակայն, ինչպես Անդրանիկը, մյուսները նույնպես հասկանում են նրանց նենգությունը և պատասխանում, որ առանց կռվի երկիրը չեն թողնի։ Տեզի ունեցած հայդուկային հավաքում, որին մասնակցում էին Հրայրը՝, Ավոն, Կոտոյի Հաջին, Գևորգ Չավուշը, Ամբատը և

ուրիշներ, որոշվեց. «Կռիվով տալ Ճակատամարտին, վերջին անհավասար մարտնչումներու Ճակատամարտ և ապա հեռանալ սուրբ հայրենիքեն»[1]։

Եվ կռվի նախապատրաստական աշխատանքներն սկսվեցին. Բխվեց մեծ քանակությամբ հաց ու թաքցվեց լեռների անմատչելի խոռոչների մեջ, որով ապահովվում էր հայդուկների անուն-դը։ «Անդրանիկը կը բռնե քուրտեր և դրամի ու վարի ապրանքության տակ փոխադրել կուտա իր մոտ բավականաչափ ապնիկ ռազմական գործողությունների համար»[2]։

1904 թ. ապրիլի 12-ին Սասուն է հասնում Կոստանդնուպոլսի պատրիարք Մաղաքիա Օրմանյանի կոնդակը՝ «Օսմանյան «բարեխնամ» կառավարությանը հնազանդվելու և զենքը ցած դնելու հրդրոով, միաժամանակ այստեղ է հասնում սուլթանի հրամանը հայ հայդուկներին՝ զենքը ցած դնելու դեպքում ներում շնորհելու մասին։ Սակայն հայդուկները պատասխանում են, որ իրենք չեն հավատում թուրքական կառավարությանը, որը բազմիցս խաբել է հայ ժողովրդին։

Թուրքական բանակը չսպասելով գարնան գալուն, ոկսեց շարժվել դեպի Զայ։ Կռիվը գնալով սաստկանում էր։ Յուրաքանչյուր ժայռի ետևից թուրքական ուժերին դիմավորում էին կրակոցները։ Շատ շուտով սասունցիները անցան հակահարձակման և ստիպեցին թշնամուն նահանջել։ Լեռնականները նրանց հետապնդեցին մինչև Սեմալ։ 1904 թ. ապրիլի 14-ին և 15-ին դաժան կռիվներ սկսվեցին Մերկեր գյուղի ուղղությամբ։ Այստեղ սասունցիների համառ դիմադրությունը հասցրեց նրան, որ թշնամին կորուստներ տալով, ստիպված թողեց ճակատամարտի դաշտը։ Ինչպես Սեմալի կռվում, այնպես էլ այս կռվում թուրքական 15 թնդանոթները 1500 ռումբ նետեցին դեպի Սասունի պաշտպանների դիրքերը, սակայն լեռնականները կռվում էին առանց վհատվելու։ Դադարի ժամանակ Գելիեգուզան գյուղի բնակիչները տեղափոխվեցին այլ տեղ։ Սասունի, Շատախի գյուղերի կռվող ուժերի մեծ մասը նախատեսվում էր կուտակել Գելիեգուզանում, որի մոտ էլ 20 կմ հատվածով պետք է տեղի ունենար ապագա ճակատամարտը։

Սասունի վերը նշված դեպքերը նորից շարժման մեջ դրե-

---

1 Զօր. Անդրանիկ և իր պատերազմները, էջ 85։

2 Նույն տեղը, էջ 87։

ցին մեծ պետությունների դիվանագիտական աշխատողներին, որոնք անմիջապես ժամանել Մուշ, զբաղվել Սասունի հարցերով։ Սասունի մասին սկսեցին «մտածել» նաև Կոստանդնուպոլսի օտարերկրյա դեսպանները, որոնք առիթ էին որոնում միջամտելու Թուրքիայի Ներքին գործերին։ Սակայն այս բոլորը դիվանագիտական խաղեր էին, նորից երգվում էր հին երգը, նրանցից ոչ մեկը չէր ցանկանում և չխորացավ հարցի էության մեջ, թե ինչու՞ վերջապես 1894 թ. տասը տարի անց նորից սասունցիները անցան ինքնապաշտպանության։

Ապրիլի 16-ին թուրքական ուժերը սկսեցին շարժվել դեպի Իշխնձոր, սակայն հարված ստանալով ստիպված ետ նահանջեցին։ Ապրիլի 17-ին թուրքական և քրդական միացյալ ուժերը ուղղություն վերցրին դեպի Շատախ և նրա գյուղերը բնակիչներից դատարկված տեսնելով, անցան Գելիեգուզան, որտեղ կուտակված էր հայ կռվողների հիմնական ուժը։ Պաշտպանվողների առաջին համազարկերը հնձեցին նրանց շարքերը և ստիպեցին նահանջել։ Ապրիլի 20-ին թուրքական ուժերը 12 թնդանոթների համագործակցությամբ վերսկսեցին հարձակումը։ Ընկրկվեց երկուստեք միահամուռ ու ծանր մարտը, որի ժամանակ սասունցիները իրենց լեռների և ժայռերի նման մնացին անառիկ։ Ապրիլի 21-ին թշնամին վերախմբավորեց իր ուժերը և ճակատամարտը վերսկսվեց նոր թափով։ Սասունի մարտիկները նորից պաշտպանվում էին նույն վճռականությամբ։ Նրանց ոգևորում էին կանայք, որոնք հաց և փամփուշտ էին հասցնում և շատ տեղերում մասնակցում էին կռվին։ Ապրիլի 22-ին կռիվը շարունակվում է սաստկությամբ, վերջապես կռվողների ռազմանյութը սկսում է վերջանալ։ Նրանք թողնում են դիրքերը և անցնում պարտիզանական պայքարի։ Կռվողները նահանջում են Գելիեգուզանից, ժողովրդի հետ շարժվում են Ալուճակի բարձունքները, որտեղից ժողովուրդը թշնում է Մշո դաշտ, իսկ հայդուկները և նրանց հետ կռվող ուժերը շարունակում են պարտիզանական կռիվները։

Անդրանիկի խումբը ուղղություն է վերցնում դեպի Ծովասար, որի ստորոտում գտնվող Աստվածածնա ավերակ վանքը դառնում է նրանց ինքնապաշտպանության վայրը։ Թշնամին իմանալով այդ, Տափրկ և Կուի գյուղերի մոտ սկսում է հարձակումը։ Հայդուկները կատաղի դիմադրում են, սակայն ընկնում են ծանր վիճակի մեջ։ Անսպասելի նրանց օգնության է հասնում մի խումբ

Գելիեզուզան գյուղից։ Հայկական ուժերը հանկարծակի անցնում են զետակը և շնչատակի հարվածում թշնամուն։ Մայիսի 2-ին շարունակվեցին կռիվները Սովասարի վրա. առավելությունը սասունցիների կողմն էր։ Թշնամին ոչ մի հաջողություն չունենալով՝ ստիպված թողեց մարտադաշտը, տալով մեծ քանակությամբ կորուստներ։

Դրանից հետո կռիվները շարունակվեցին յուրաքանչյուր սարի և կիրճի համար, սակայն թշնամուն չհաջողվեց խորտակել Սասունի ուժերին։ Հայկական գյուղերը դատարկ տեսնելով թուրքական ուժերը սկսեցին այրել, ավերել և մոխրակույտերի վերածել դրանք։ Այս դեպքերով էլ վերջացան Սասունի 1904 թ. հերոսական կռիվները։ Լեռնական Սասունի գյուղական բնակչության մի մասին հաջողվեց իջնել Մշո դաշտի գյուղերը և տեղավորվել այնտեղ։

Երևանի մատենադարանում է գտնվում Տարոնի փոխառաջնորդ Վարդան վարդապետ Հակոբյանի զեկուցագիրը՝ ուղղված Կոստանդնուպոլսի պատրիարքին, որից երևում է, որ թուրքական ուժերի կենտրոնացումը Մուշում Սասունի վրա հարձակվելու նպատակով սկսվել է դեռևս 1903 թ. վերջերից, դրանից հետո սկսած 1904 թ. հունվարից «հետզհետե 900 հոգիանոց զինված վաշտեր դեպի Մուշ կը մեկնեին Սեբաստիայե, Խարբերդե, Տիարբեքիրե, Տրապիզոնե, Երզնկայե, Էրզրումե, Վանե և այլն։ Փետրվարի մեջ այս վաշտերը արդեն կսկսեին հասնել ի Մուշ մինչև մարտի 20-ը 11—12 վաշտ զորք ու հետզհետե կհասնեին նորերն ալ, արդեն աշնանե հայտարարված էր, թե առաջին գարնան Սասունը պիտի զարնվի, բավական էր, որ մեկ երկու տարի սասունցի հայերը քիչ մը հանդարտ շունչ կառնեին»[1]։

Ապա Վարդան վարդապետը շարունակում է, որ արշավանքը նախապատրաստելուց առաջ թուրքական պաշտոնյաները Կոստանդնուպոլիս էին ուղարկում զանազան հնարած ոչ ճիշտ փաստեր, տեղեկություններ և ամբաստադրեր Սասունի ժողովրդի մասին։ 1904 թ. հունվարի 23-ին սկսվեց թուրքական ոստիկանական և զինվորական ուժերի հարձակումը Մշո Հունան գյուղի վրա։ Հարձակումը սկսվեց զիշերը և չնայած գյուղացիների դիմադրությանը, հրոսակները այդ գյուղում «ամենեն սոսկալի չարիքներ գործեցին, բաղմաթիվ կին և աղջիկ (առանց տարիքն իսկ խնա-

---

1 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 237բ, վավ. 18, թ. 2։

յելու) լկվեցան և բռնաբարվեցան, մարդիկ սպանվեցան»[1] և ջրհորների մեջ նետվեցին։ Դրանից հետո նրանք գյուղից գերիներ վերցնելով շարժվեցին դեպի Հեղին գյուղը, որի վրա արշավելը նրանք պատճառաբանում էին, թե իբր այդ գյուղում նկատել են ֆիդայիների, սակայն նպատակը գյուղի թալանն էր։ Հեղինի վրա հարձակվելուց առաջ նրանք պահանջեցին գյուղացիներին կերակրել իրենց և այդ ժամանակ քրդական բեկերից մեկը գյուղացիներին ասում է. «Ձեր հացը չպիտի ուտէ՞, եթե 40 ոսկի չհամրեք հիմա, ուրկե՞ գտնեին դրամ, ասկե վերջ թալանը կսկսի, բայց տնական գույքերե, կհափշտակեն հայերե մի ձի, 1 քուռակ, 200-է ավելի ոչխար ու կհեռանան»[2]։

Այնուհետև Վարդան վարդապետը նշում է, որ երկու դեպքերից հետո կառավարական զորքերը քրդական ուժերի հետ սկսեցին պաշարել Սասունը։ Կառավարական պաշտոնյաները սկսեցին սովորեցնել Տափրկ քրդական գյուղից ոմանց, որպեսզի նրանք գնան Մուշ և բողոքեն Անդրանիկի և սասունցիների դեմ։ Մուշում զգալով կռվի նախապատրաստական աշխատանքների մասին, սկսեցին փակել խանութները։ Սակայն, ինչպես վկայում է Վարդան վարդապետը, այդ նույն Տափրկ գյուղից որոշ քրդեր դիմելով իրենց գյուղի աղաներին, ասում էին. «Այս մարդիկ ինչ չարիք ըրած են, որ կուզեք սպանել, եղբոր պես վարված են մեզ հետ»[3]։

Այս բոլորից հետո քրդական ուժերը սկսեցին հարձակվել 10—12 տուն բնակիչ ունեցող Կելիեկերման գյուղի վրա և ցանկանում են թալանել գյուղը, սակայն նրա բնակիչները անցնում են ինքնապաշտպանության և «բուռն կրակ մը կը տեղացնեն քուրտերու վրա, որոնք 35—40 վիրավոր ու մեռյալ թողլե վերջ, վատաբար կսկսին փախչիլ»[4]։ Լսելով այս կռվի մասին, շենիկցիները օգնության են հասնում Կելիեկերման գյուղի բնակիչներին և նրանց տեղափոխում են իրենց գյուղը։ Շուտով քրդական ուժերը նոր հարձակման են անցնում Կելիեկերման գյուղի վրա, սակայն այնտեղ ոչ ոքի չգտնելով, այրում են տները։

Ըստ Վարդան վարդապետի, Կելիեկերմանի դեպքը «նոր պատրվակ մը եղավ վերջապես, որ Սասնո դեմ մտագրված իսլա-

---

1 Կաթ. դիվան, թ. 237 բ, վավ. 18, թ 3։

2 Նույն տեղը, թ. 4։

3 Նույն տեղը, թ. 5—7։

4 Նույն տեղը, թ. 7։

մական ընդհանուր հարձակումը սկսին, որուն կայս. զինվորական ուժ և գործակից ըլլալու համար բարձրագույն հրաման ալ ձեռք բերված էր և զինյալ վաշտերու համալրումը կը շարունակվեր»[1]։ Վարդան վարդապետի զեկուցագրի համաձայն 1904 թ. մարտին թուրքական բանակի վաշտերի թիվը Սասունի շրջապատում հասնում էր 12-ի։ Ստացվում էր կարծես թե նույնը, ինչ 1894 թ.։ 1904 թ. ապրիլի 5-ին Մուշ է ժամանում Բաղեշի նոր կուսակալ Ֆերիտ պեյը։ Դրանից մի քանի օր հետո կուսակալը և թուրքական զորքերի հրամանատար Ֆերիք Սաղիմ փաշան հանդիպում են ունենում Բաղեշի հոգևոր առաջնորդ Եզնիկ Գալֆակչյանի և Մուշի երևելիների հետ։ Կառավարական պաշտոնատան մեջ հավաքում են Բաղեշի և Մշո առաջնորդները Բաղեշի իտարեի հայ անդամները և Մշո քաղաքական ժողովի անդամները։ Փաշայի կողմից նախօրոք պատրաստված մի գրություն է հրամցվում հավաքվածներին, «թե Սասնո հայերը և հոն ապաստանողները ըմբոստ և ապստամբ պետք է նկատվին, քանի որ Մուշ ժամանումս լսած ըլլալու են՝ հարկավ և պետք է որ մինչև հիմա եկած և անձնատուր եղած ըլլային, արդ քանի որ չեկան, ըմբոստ և հանցավոր են...»[2]։

Հավաքին մասնակցող թուրք պաշտոնյաները ստորագրում՝ են թուղթը Սասունի բնակիչներին ապստամբ անվանելու մասին, սակայն հայերը պատասխանում են, թե «սասունցիներու կամ հոն գտնվողներու հետ երբեք որևէ բանակցություն չեղավ մինչև հիմա, ոչ ալ հորդոր կամ համոզում հաղորդված է, ոչ ալ անոնք ըմբոստության ցույց մը ըրած են, այդ պարագային ներքև իրենք չեն կրնար ստորագրել այդ գրություն»[3]։

Վարդան վարդապետը ապա շարունակում է, որ կուսակալը ապրիլի 10-ին 5 վաշտ զորքով և հրանոթներով շարժվեց դեպի Խրգբլուդաջ գյուղը, որը աշխուժացրեց և գործի մեջ դրեց քրդական զինված ուժերին, որոնք «հազարավոր խումբերով Սասուն խուժեցին օգնելու զինվորական հարձակման, ջարդելու և թալանելու հայերը»[4]։ Ապրիլի 11-ին սկսվեց հարձակումը Շենիկի վրա, որը ետ մղվեց։ Այս դեպքերից հետո թուրքական փաշան զինվորական և քրդական ուժերը կենտրոնացրեց Լաչբքանում, որ-

1 ԿԱԹ դիվան, թղթ. 237բ, վավ. 18, թ. 9։

2 Նույն տեղը, թ. 13։

3 Նույն տեղը, թ. 13—14։

4 Նույն տեղը, թ. 16։

տեղ հավաքվածների մոտ ցուցադրեց սպանվածների դիակները։ Ապրիլի 12-ին Շենիքի վրա սկսվեց մի նոր հարձակում, որը և վերջացավ թուրքական ուժերի անհաջողությամբ։ Շենիքցիները թողեցին իրենց գյուղը և հեռացան Սասունի բարձունքները։ Թուրքական ղեկավարությունը դրանից հետո սասունցիների մոտ է ուղարկում ս. Հովհանու Առաքել վարդապետին և պահանջում է զենքը վայր դնել։ Զեկուցագրի մեջ այս վարդապետ բանագնացի մասին ասված է, որ նա «բոլորովին անհարմար է այդ գործին, նախ որ անճարակ, երկրորդ գինեմոլ մըն էր և ամենևին խոսք խոսելու և հասկացնելու անկարող»[1]։ Առաքելը հասնում է Սեմալ, հանձնում Սասունի ղեկավարներին ուղղված գրությունները, որին նրանք պատասխանում են, որ խորհրդակցելու և պատասխան տալու համար 24 ժամ ժամանակ պետք է տրվի, սակայն չսպասելով պատասխանին, թուրքական զորքերը սկսում են հարձակումը։ «Աղետը պիտի պատահեր,— գրված է զեկուցագրում,— և արյունը պիտի վազեր, որովհետև գործելու ընթացքը դեպի հոն պիտի տաներ, քանի որ խաղաղության պատշաճավոր միջոցներ, համոզիչ երկարատև բանակցություններ, խոստացված ապահովիչ հայտարարություններ և այլն տեղի չունեցան»[2]։

Լսելով թուրքական կանոնավոր բանակի զինվորների հարձակման մասին՝ Սասունի Սեմալ, Շենիք, Գեղաշեն, Շուշնամարգ գյուղերի բնակիչները թողնում են իրենց բնակավայրերը և անցնում Գելիեգուզան։ Այստեղ սպանվում է հայդուկ Հրայրը։ Նա ինչպես ասվեց, Մշո խրզբլաղաճ գյուղացի էր, հին հայդուկ, դատապարտված էր թուրքական դատարանի կողմից 101 տարվա բանտարկության։ Ավարտել էր Մշո ս. Կարապետ վանքի ժառանգավորաց դպրոցը, եղել էր Կովկասում և Ռուսաստանում։ Հրայրը դեմ էր 1904 թ. ինքնապաշտպանական կռիվներին, գրում էր, որ «նորեն հաղարավոր զոհեր տալու ըլլանք, եվրոպացին պիտի չլսե. մենք մեր վտիտ ուժերով ալ չենք կրնար տապալել բռնակալ կառավարությունը, և կարմիր սուլթանը ա՛լ ավելի պիտի գրգռվի մեզի դեմ»[3]։

Ապրիլի 13-ին, իմանալով հարձակման մասին, Խիանք, Իշ-

---

1 Կաթ. դիվան, թղթ. 237 բ, վավ. 18, թ 18։

2 Նույն տ՝ղը, թ. 22։

3 Հարազատ պատմություն Տարոնի, էջ 151։

խընձոր, Ընկուզակ, Հեղին, Սիվիտ, Արդկոնք և այլ գյուղերի բնակիչները նույնպես թողնում են իրենց գյուղերը և ապաստանում լեռներում։ Ապրիլի 19-ին զինվորական ուժերը սկսում են սեղմել պաշարման օղակը և «հարձակվող զորաց թիվը կրկնապատկվեցավ։ Ամեն օր ամեն կողմե քուրտ գյուղերե հարյուրներ ու հազարներ Սասուն կը հասնեին, պաշարողներին օժանդակելու, անցքերու, կիրճերու, պահպանություն ընելու համար»[1]։ Թուրքական և քրդական ուժերի կողմից պաշարվում են Սասունի 42 գյուղեր։ Պաշարմանը մասնակցում էին 20000 քրդեր, իսկ թուրքական վաշտերի թիվը անցնում էր 20-ից[2]։ Ապրիլի 20-ին այդ ահռելի ուժերի մի մասը հարձակվեց Գելիգուզան գյուղի վրա[3]։ Քրդական ուժերը նույնպես «զինված էին կանոնավոր հրացաններով, և պարեն ալ կստանային, բայց վերջապես Գելիեգուզան նույն օր անվնաս կը մնա-հայերուն կորուստը թեթև, իսկ հակառակ կողմե ստվարաթիվ եղած է, որուն քանակությունը ճշտել կարելի չեղավ, թեև հարյուրավորներեն ավելի է կըսվի»[4]։ Վերջապես սասունցիների ղեկավարների հավաքը որոշում է կանանց, ծերերին և երեխաներին ուղարկել Մուշ, իսկ կռվող մասը պետք է շարունակեր մարտերը։

Թշնամին, հանդիպելով Մուշ գնացող անզեն բնակիչներին, ոչնչացնում էր նրանց։ Միայն մայիսի 2-ին թնդանոթների կրակին զոհ գնացին 700 հոգի, բացի դրանից նույն օրը խաղաղ բնակչությունից կոտորվեցին 173 հոգի, որոնց մի մասը «հոշոտված ու մորթված գետը կը թափվին»։ 1904 թ. մայիսի 3-ին բնակչությունից ոչնչացվեցին 285 հոգի, իսկ մնացածները ցիր ու ցան եղան։ Նրանք, որոնք շարժվեցին դեպի Մուշ, մի մասը ընկան Ջարդարարների ձեռքը, ոչնչացան, իսկ Ալիանք գյուղի անտառում մայիսի 7-ին սպանվեցին 172 հոգի[5]։ Վարդան վարդապետի զեկուցագրում կան շատ սարսռազդեցիկ դեպքերի ու փաստերի նկարագրություններ, որոնցից միայն մի քանիսն ենք ցանկանում բերել։ Այսպես «բազմաթիվ քրդեր 47 այր, կին, երեխա, խժդժական կերպով խեղդամահ կընեն, ոմանց ծոծրա-

---

1 Կաթ. դիվան, Ողթ. 237բ, վավ. 18, թ 29։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը, թ. 31։

4 Նույն տեղը, թ. 32։

5 Նույն տեղը, թ. 53։

կեն կը մորթեն, ոմանց կենդանի անդամ-անդամ կը կտրեն, ոմանց մորթազերծ կընե կամ փորերը սրով կճեղքե, իսկ երեխաները ողջ-ողջ քարերու վրա երկնցնելով, խոշոր քարեր կիջեցնեն գլխուն և կը ջախջախեն...»[1]։ Ազատվողներից մեկը այսպես է պատմում բնակիչների կրած տառապանքների մասին. «Նախ ամենուս ձեռք թիակ ու փայտատ տուավ և հոր մը փորել առաջարկեց, երբ փորվեցավ, ըսավ թե զքեզ կենդանի պիտի թաղեմ, եթե ինչ որ առաջարկվի չստորագրեք, գլխի վայր կախեցին, տանջեցին, աղի ծխեցին մեր քթին ու բերանին և պահանջված ձեռագիրը առին»[2]։ Եվ այսպես շարունակվեց անզեն հայերի կոտորածները մինչև մայիսի 30-ը, երբ «բարերար» կայսրը ներում շնորհեց բոլորին։

Հետաքրքրական և հավաստի այդ զեկուցագրի վերջում ամփոփվում է 1904 թ. ապրիլի կեսերից մինչև մայիսի վերջը ընկած ժամանակաշրջանում Սասունի գյուղերում կատարված թալանի և սպանությունների թվերը։ Ըստ նրա, Սասունի Անդոքի շրջանի 6 գյուղերից (Գելիեգուզան, Շենիք, Սեմալ, Ալիանք, Կելեմսուր, Կելիեկեոման) այրված և կողոպտված են 9 եկեղեցիներ և 641 շենք, սպանվեցին 1772 հոգի (572 տղամարդ, 502 կին, 698 երեխա) և 2876 բնակիչներ մնացին առանց ապաստանի ու սնունդի։ Շատախի 8 գյուղերում վնասվեցին 13 եկեղեցի և այրվեցին 779 շենքեր, սպանվեցին 1367 հոգի (447 տղամարդ, 401 կին, 519 երեխա) և 2610 հոգի մնացին անօթևան ու առանց սնունդի։ Խիանքի 5 գյուղերից այրվեցին 352 շենք, սպանվեցին 1469 հոգի և անօթևան և անսնունդ մնացին 1509 հոգի։ Տալվորիկի 16 գյուղերից այրվեցին 343 շենք և սպանվեցին 2494 հոգի (1073 այր, 690 կին, 731 երեխա), կարոտյալների թիվը հասավ 1439 հոգու։ Փսանքի շրջանում վնասվեց 7 գյուղ, այրվեցին 142 շենքեր, սպանվեցին 671 հոգի (256 այր, 160 կին, 255 երեխա), կարոտյալների թիվը հասավ 520-ի[4]։ Վերջապես զեկուցագրի հեղինակի կարծիքով մեկուկես ամսվա ընթացքում Սասունի բնակիչներից սպանվեցին 7773 հոգի, կարոտյալների թիվը կազմում էր 8854 հոգի, այրվեց 42 գյուղ 2262 տներով[5]։

---

1 Կաթ. դիվան, թղթ. 237բ, վավ. 18, թ. 53—54։

2 Նույն տեղը, թ. 54—55։

3 Նույն տեղը թ. 72։

4 Նույն տեղը, թ. 72։

5 Նույն տեղը։

Ինքնապաշտպանական կռիվներից հետո Անդրանիկը իր 34 ընկերներով տեղավորվեց Կուրավա գյուղում, որտեղ շրջապատվեց թուրքական զինվորներով։ Հայդուկները սկսում են հարվածել թշնամուն, որը կորուստներ տալով թողնում է գյուղը։ Շուտով թուրքական մի նոր ջոկատ է երևում, որը ենթարկվելով հայդուկների կրակին, ետ է շպրտվում։

Սասունի այդ ժամանակվա իրադարձություններին հետևում էր ամբողջ հայոց աշխարհը։ Նրանցով հետաքրքրվում էին նաև Մուշում գտնվող եվրոպական դիվանագիտության ներկայացուցիչները։ Թուրքական կառավարությունը առաջարկեց հայդուկներին հեռանալ Տարոնից, խոստանալով ներում շնորհել կռվողներին և մտցնել բարենորոգումներ։ Այս վերջին հարցը անհավատալի և ծիծաղելի էր թվում հայկական գանգվածներին, քանի որ 1877—78 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո նա քանի-քանի անգամ այդպիսի խոստումներ էր տվել հայերին, բայց ոչինչ չէր արել։

Հայ ազգայնական կուսակցությունները և ամենից առաջ դաշնակցությունը Սասունի այս հերոսամարտը համարեց «դաշնակցական ապստամբություն»։ Նրանք ամեն գնով ցանկանում էին ժողովրդական այդ ինքնապաշտպանությունը իրենց վերագրել։ Դաշնակցականներից մեկը՝ Վարդոն, չհանդուրժելով այդ, սկսեց քննադատել իր կուսակցության պարագլուխների նմանօրինակ վարքագիծը, մամուլում հանդես եկավ նրանց քննադատությամբ։ Դաշնակցականները կազմակերպեցին Վարդոյի սպանությունը[1]։

Ուսումնասիրությունից երևում է, որ լեռնականները երբեք չէին էլ մտածում նորից կռվի ասպարեզ նետվելու մասին, քանի որ տասը տարի առաջ կատարված դեպքերը դեռ թարմ էին նրանց հիշողության մեջ։ Սակայն ի՞նչ անեին լեռնականները, երբ տեսան, որ ահա ուր որ է թուրքական զորքերը կհարձակվեն իրենց վրա, ստիպված անցան ինքնապաշտպանության։

Սակայն պետք է նշել, որ հայ ազգայնական կուսակցությունները, փորձեցին օգնել Սասունին։ Արևելյան Հայաստանում կազմակերպած նրանց փոքրիկ խմբերը հարձակվեցին ռուսական սահմանամերձ Ուշքիլիսա, Ղումլուպուճաղ և Մոսուն գյուղերը։

---

[1] Տե՛ս Գ. Ճիզմեճյանի նշվ. աշխ., էջ 109։

առեղավորված թուրքական զորանոցների վրա, որոնցից առաջինում կար 50, երկրորդում՝ 30, իսկ երրորդում՝ 50 զինվոր»[1]։

1904 թ. հունիսի վերջին հնչակյան կուսակցության կողմից կազմակերպված 14 հոգիանոց մի խումբ անցնում է ռուս-թուրքական սահմանը և մոտենում Ղումլուգուճաղ գյուղին։ Թուրքական զինվորները նկատում են խմբին։ Սկսվում է կռիվը։ Հակառակորդը կորցնում է 20, իսկ հնչակյանները 8 հոգի։ Կենդանի մնացած հնչակյանները նահանջում են դեպի ռուսական սահմանը։ Թուրքական կառավարության համար այս դեպքը առիթ է դառնում, որպեսզի հինգ գյուղեր՝ Ղումլուգուճաղ (40 տուն), Ուշքիլիսե (30), Սայդա (5), Ղարաբաբազար (15) և Ջուզան (40) ենթարկվեն ապանության, թալանի և կողոպուտի[2]։

Մի ուրիշ խումբ, որ բաղկացած էր 102 հոգուց, 1904 թ. հունիսի 6(19)-ին անցնում է սահմանը, բաժանվելով երկու մասի շարժվում են դեպի Մոսուն ու Ջոռ։

Հունիսի 12-ին (25) խմբերից մեկը հարձակվեց Մոսունի զորանոցի վրա և ոչնչացրեց 60 թուրքական զինվոր։ Մոսուն և Քորուն գյուղերի հայ բնակիչները, հասկանալով, թե ինչ կարող է սպասել իրենց, ստիպված թողեցին հարազատ գյուղերը և անցան ռուսական սահմանը։ Մյուս խումբը հարձակվեց Ջոռի պահականոցի վրա։ Սկսվեց կռիվը, երկուսաթեք գոհեր եղան։

Հատկանշական է, որ Անդրանիկը, ըստ Ալ. Շիրվանզադեի վկայության, 1904 թ. Սասունի դեպքերից հետո ժամանելով Թիֆլիս, ասել է. «Մինչ մենք Սասնո լեռներուն մեջ կռվիացած՝ օրհասական պայքար կը մղեինք, կուսակցությունը (դաշնակցական— Հ. Պ.) փոխանակ մեզ դրամ և ուժեր ղրկելու՝ սոսկ հրահանգներ և քաջալերական հերհյուրածո լուրեր միայն կը հասցներ մեզ, իբրև թե տերությունները՝ Սասնո երկրորդ հերոսամարտեն ազդված՝ ընդհուպ հայկական հարցը ձեռք պիտի առնեն. մինչև այժմ կստուգեմ, որ այդպիսի քայլ մը երբեք չէր առնված»[3]։

Այս գոյամարտից հետո Անդրանիկը մի խումբ հայդուկների հետ անցնում է Աղթամար։ Իմանալով այդ մասին, թուրքական զինված ուժերը ոմբակոծում են վանքը։ Միաժամանակ նրանք առագաստանավերով սկսեցին առաջանալ դեպի կղզին։ Հայդուկ-

---

1 Տե՛ս Օնիկի, Մոսունի և Ջոռի արշավանքները, Բոստոն, 1905, էջ 6։

2 Տես՝ նույն տեղը, էջ 9։

3 Համբարձում Երամեան, Յուշարձան, հատ. Բ, Եղեքսանդրիա, 1929, էջ 46։

նեռը սկսեցին կրակ տեղալ թշնամու վրա, որոնք «չփորձեցին իսկ դիմադրել, մեծ դժվարությամբ շրջան ըրին և դարձան, թընդանոթները լռեցին»[1]։ Նույն օրը թուրքական ուժերը նորից սկսեցին հարձակվել, սակայն ֆիդայիների գնդակները նրանց ստիպեցին հեռանալ դեպի ափ։ Հաջորդ օրը թուրքական ուժերը նավերի վրա թնդանոթներ տեղադրելով վերսկսեցին իրենց հարձակումը, սակայն «ծովը ալեկոծ լինելու պատճառավ թե հրացանայնն իրենց նշանառությունը բոլորովին աննպատակ կողմեր կը ցոլեր...»[2], երրորդ օրը կղզում ոչ՝ ոք չկար։ Թուրքական բանակի հրանոթների ռմբակոծության պատճառով վնասվեցին «Գաղիկ թագավորի շինել տված եկեղեցիին գմբեթն ու կամարները»[3]։

Աղթամարում եղած ժամանակ հայդուկներից շատերը, որոնց թվում Գևորգ Չավուշը և Կորյունը, չեն ցանկանում դուրս գալ Երկրից, նրանք՝ հաստատակամորեն ասում են, որ իրենք ուզում են մնալ Տարոնում, իրենց ժողովրդի մոտ և նրանց հետ միասին շարունակել պայքարը թուրքական բռնակալության դեմ։ Եվ Գևորգ Չավուշի խումբը վերադառնում է Տարոն, որտեղ հանդիպում է Մակարի գլխավորած հայդուկների հետ։

Հեռանալով Աղթամարից, 1904 թ. Անդրանիկը Կոթուրի վրայով անցնում է Պարսկաստան։ Այդ օրերին Պարսկաստանում գտնվող Մալխասը գրում է. «Ես երբեք այլևս չհանդիպեցա նման սքանչելի խումբի մը։ Զարմանալի ներդաշնակություն մը և համերաշխություն մը կար անոնց մեջ, ավելի կարծես նահապետական մեծ ընտանիքի մը հարազատ եղբայրները լինեին, հոգատար իրար հանդեպ, գուրգուրոտ և ուշադիր»[4]։ Ապա նա շարունակում էր, որ «Անդրանիկ անուն դարձեր էր սիմպոլ մը, կռվող Հայաստանի։ Դժվար թե գտնվեր ամենահետ ընկած գյուղի մը երդիքը, որ չերգվեր Անդրանիկը որ արդեն անձ մը չէր այլևս, այլ ազգային, լեգենտական հերոս մը, բոլոր հերոսները մարմնավորող»[5]։

Պարսկաստանից Անդրանիկը անցավ Կովկաս։ Թիֆլիսում նա հյուր եղավ հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի մոտ,

---

1 Վանան Փափազյան, Իմ հուշերը, հատոր առաջին, Պոսթրն, 1950, էջ 324։

2 Նույն տեղը, էջ 325։

3 Փառության օճախը կամ Օրմանյանի պատրիարքությունը, Պոսթրն, 1908։ էջ 25։

4 Մալխաս, Ապրումներ, Պոսթրն, 1931, էջ 262։

5 Նույն տեղը, էջ 262—263։

ապա մեկնեց Փարիզ, Շվեյցարիա, որտեղ և ծանոթացավ բանաստեղծ Սիամանթոյի (Ատոմ Յարճանյան) հետ։ Շվեյցարիայից նա գնաց Անգլիա։ 1905 թ. հայ ժողովրդի հերոսը նորից ծնևում էր, ուր ծանոթացավ մեծ գրող Դերենիկ Դեմիրճյանի հետ։ Ժնևից Անդրանիկը անցավ Բուլղարիա՝ Ֆիլիպե քաղաքը, ուր գրի առավ իր «Մարտական հրահանգները»։ Բուլղարիայում նա ծանոթանում է մակեդոնական ազգային-ազատագրական շարժման ակտիվ գործիչ Բորիս Սարաֆովի հետ։ Հետագայում նրա ոգեշնչությամբ Անդրանիկը գրում էր, թե Բորիս Սարաֆովի «մահը ինձի այնքան ցավ և հոգեկան վիշտ պատճառեց, որքան Սերոբի և Գևորգ Չավուշի մահը»[1]։

Հայ ազգային հերոսը չի տառապել փառասիրությամբ, երբեք չի ցանկացել, որ իր մահից հետո իր արձանը կանգնեցվի։ Նա գրում է. «Եթե հայ ժողովուրդը կուզե ինձ պատիվ մը ընել, ես իմ արձանս չեմ ուզեր, փառավոր թաղում չեմ ուզեր, թո՛ղ հայ ժողովուրդը կանգնացնե ավերակ դարձած Առաքելոց վանքը և այնտեղ հիմնե փոքրիկ ուսումնարան մը հայ մանուկներու համար, այս է ամբողջ իմ բաղձանքս և բարոյական պահանջս հայ ժողովրդեն»[2]։ Նրա այդ իղձը չկատարվեց։ Անդրանիկի շիրիմը հանգչում է Փարիզի Պիեռ Լաշեզի գերեզմանատանը։ Զանազան առիթներով Փարիզ ժամանած հայերը միշտ թարմ ծաղկեփնջեր են դնում նրա գերեզմանին։ Նրանք իրենց հարգանքն են մատուցում հերոսին այն բանի համար, որ նա ավելի քան քառորդ դար իր կյանքը նվիրաբերեց արևմտահայությանը թուրքական լծից ազատագրելու գործին։

Սասունի 1904 թ. ինքնապաշտպանությունը նաև մի ուրիշ բան ապացուցեց, որ հայդուկային պայքարի միջոցով անհնարին է ազատագրվել սուլթանական Թուրքիայի ճիրաններից։ Անդրանիկը գալիս է այն համոզման, որ հայդուկների շարժումը կլինի ավելի էֆեկտավոր այն ժամանակ, երբ նրանց մեջքին կկանգնի որևէ հզոր պետություն։ «Սասունցին,— գրում է նա,— մշեցին, ախլաթցին, հրացանը, անգամ մը ևս, այն ատեն միայն առնելու են ձեռքերնին, երբ այդ հրացանը պետության մը պահեստեն է, որ իրենց կուգա։ Անանկ հարյուր մոսինով, երկու

---

1 Զօր. Անդրանիկ և իր պատերազմները, էջ 186։

2 Նույն տեղը, էջ 74։

հաբյուր պերտանով, աչքը դեպի փամփուշտի ճամփան, պետությանն մը դեմ կռիվ չի մղվիր»[1]։

Հայտնի է, որ 1905 թ. ցարական կառավարությունը Անդրկովկասում կազմակերպեց նզբայր ժողովուրդների սպանդ։ Երբ Անդրանիկին կանչեցին մասնակցելու այդ կոտորածներին, նա կտրականապես մերժեց ասելով. «Ցարը և՛ մեզ հետ է, և՛ թաթարին. անոր և անոր ճուտերուն նպատակն է մեզ իրար կոտորել տալ և մեր մեջ բանալ ատելության վիհ մը։ ...Որ՝ ցարը կուզե, որ մենք և թաթարները շարունակենք զիրար կոտորել, հայտնի է այն փաստեն, որ ամիս մըն է ահա, որ կը տևե կռիվը։ Եթե ցարը չուզեր, որ մենք զիրար կոտորենք, իր ցուցամատը կը շարժեր և, հա՛յը ըլլա թե՛ թաթար կդադարեցնեին անմիջապես իրենց կռիվը. և, ասիկա կը տևեր ո՛չ թե մեկ ամիսն, այլ ո՛չ ավելի, քան մեկ րոպե»[2]։

1904 թ. ինքնապաշտպանական կռիվներից հետո կառավարությունը Սասունի լեռնականներին զսպված պահելու նպատակով զորանոցներ կառուցեց Տափրկում, Գելիեզուղանում, Տալվորիկում, Իշխանձորում և այլն։ Միաժամանակ կառավարությունը Մշո դաշտում տեղավորեց Կուրավայում՝ 300 զինվոր, Ցխավայում՝ 50, Արվարինջում՝ 300, Առախում՝ 200, Առաքելոց վանքում՝ 100, Հավատորիկում՝ 200, Օղունքում՝ 100, Նորաշենում՝ 200, Խասգյուղում՝ 50, Մուշաղշենում՝ 100, Վարդենիսում՝ 300, Գոմսում՝ 100, Ջիարեթում՝ 50, ս. Կարապետ վանքում՝ 100, ս. Հովհաննեսում՝ 100, Սասունի Տափրկ գյուղում 100, Սեմալում՝ 200, Գելիեզուզանում՝ 300, Տալվորիկում՝ 200, Իշխանձորում՝ 300 զինվորներ[3]։

Հայկական հալածանքներն ու կեղեքումները սաստկացնելու նպատակով կառավարական պաշտոնյաները սկսեցին Մշո դաշտում խուզարկություններ անել։ Ներման մասին եղած խոստումները դուրս եկան լոկ դատարկ խոսքեր։ Ընթերցելով այդ ժամանակաշրջանի կատարված դեպքերի և իրադարձությունների մասին գրված աշխատությունները, ժամանակի պարբերական մամուլը, արխիվային վավերագրերը, մարդ հասկանում է, թե իրենից ինչ էր ներկայացնում Օսմանյան Թուրքիան, արյունարբու սուլթանի

---

1 Ա. Թերզիպաշյան, Անդրանիկ, Փարիզ, 1942, էջ 103։

2 Նույն տեղը, էջ 103—104։

3 Տե՛ս Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հատ. Դ, Լոս Անճելես, 1951, էջ 88։

«զուլումի» ռեժիմը։ 1904 թ. ինքնապաշտպանությունից հետո Տարոնի և Սասունի զավակներից 1500 հոգի նետվեցին թուրքական բանտերը, որոնց թվում կային նաև կանայք։

Սակայն այդ ժամանակ Գևորգ Չավուշի խումբը նորից գործում էր, անցնում էր գյուղից գյուղ և ոգևորում էր ժողովրդին։ Նրա խմբին հաջողվեց շարքից հանել քրդական մի շարք արյունարբու ցեղապետների։ Միաժամանակ Գևորգ Չավուշը սկսեց մոտիկ հարաբերություններ հաստատել ջիբրանցի և պատկանցի քրդերի հետ, որոնք սկսեցին պաշտպանել հայդուկներին։ Այդ ցեղերի ուժերը հայդուկների հետ նույնպես երես առ երես կանգնած էին թուրքական բռնակալության դեմ։

1905 թ. ապրիլ ամսին Գ. Չավուշը իր խմբով գտնվում էր Ղարս գյուղում, որը շուտով հայտնի է դառնում թուրքական իշխանություններին։ Նրանք պաշարում են գյուղը։ Թուրքական ուժերի հրամանատարը կանչում է գյուղի տանուտերին և ասում է. «Մեր բարեխնամ կառավարությունը անոնց ներում տված է, միայն թող գան և իրենց հպատակությունը հայտնեն և զենքերը թող հանձնեն, իսկ եթե չգան չներկայանան, ձեր գյուղը կը վառենք և ձեզ բոլորիդ ալ կը կոտորենք»[1]։ Լսելով այս մասին գյուղի բնակիչները միանում են հայդուկներին, շեշտակի հարված հասցնում թշնամուն և «գլուխը կորսնցուցած զորքերը գյուղից խուճապահար կը փախեին։ Ամբողջ գյուղը ոտքի վրա էր, նույնիսկ կիները տունեն դուրս եկած՝ կռվին կը մասնակցեին»[2]։ Այս կրռվում սպանվեց քուրդ Հուսեյին բեկը, որը իր մոտ ուներ «Աղբյուր Սերոբի հրացանը, զոր ամեն տեղ հպարտությամբ ցույց կուտար և կը խոսեր իր հերոսությունների մասին»[3]։ Մի քանի օրից հետո թուրքական ուժերը նորից են շրջապատում Ղարսը, սակայն նրա բնակիչները ժամանակավորապես հեռացել էին հարևան գյուղերը։

1907 թ. մայիսին Գևորգ Չավուշը գտնվում էր Սուլուխ գյուղում։ Կառավարական զորքերը հարձակվեցին նրա վրա։ Սկսվեց կատաղի մարտը։ Գ. Չավուշը վիրավորվում է, թուրքական ուժերը 300 հոգի համալրում են ստանում։ Հայդուկները վերցնելով վիրավոր Չավուշին դուրս են գալիս պաշարումից։ Ժամանա-

---

1 Ավո, Գևորգ Չավուշ, էջ 277։

2 Նույն տեղը, էջ 280։

3 Նույն տեղը։

կակիցների վկայությամբ Գ. Զավուշը ընկճված չի եղել և խորը գիտակցել է, որ մահանում է իր ժողովրդի համար։ Մահից առաջ Գ. Զավուշը ասում է. «Ով հայրենիքի հարազատ զավակներ. իմ մահը թող չվհատեցնի ձեզի. ես վերքը՝ որ այժմ կը ծորա կարմիր արյունը, մոտ եկեք համբուրեցեք զայն և դուք՝ ձեր կյանքի ասպարեզի վրա, հեղափոխական շրջանի մեջ, ավելի նախընտրեցեք այս վերքը, քան թե ստրկությունը... Այս վերքը սուրբ է, որովհետև հայրենիքի ազատության համար գնվեցավ ան»[1]։ Ապ ա նա շարունակել է. «Ձեր հայրենիքը ձեզ կը կարոտի, իմ պաշտելի ընկերներ, դուք ձեր անոր ջահերը դուք եք երկրի պաշտպան զինվորները։ Տարածեք ս. գործը, և հայ տառապանքը՝ թող վայրկյան մը իսկ ձեր առջևեն իսկ չկորսվի»[2]։

Հաջորդ օրը թուրքական բանակը մտավ գյուղ և հաշվեհարդար տեսավ խաղաղ բնակչության հետ։ Գյուղացիների զգալի մասը ջարդվեց, նետվեց Արածանիի մեջ։ Այդ կապակցությամբ նույն հեղինակը գրում է, որ թուրքական ուժերը «մեկ ակնթարթով սկսան անապատի վերածել այդ ամենահարուստ գյուղը» և «ամբողջ ծերերը, այր թե կին, իրար կապած, դեպի գետ տարին, և Արածանի շատ սիրով գրկեց իր զավակները հորհանուտ այլակներուն մեջ»[3]։

Գ. Զավուշի և նրա երկու ընկերների դիակները բերվեցին Մուշ և թաղվեցին ս. Մարինե թաղի գերեզմանոցում։ Գ. Զավուշի մասին հորինվել են հայերեն, թուրքերեն և քրդերեն բազմաթիվ երգեր։ Համեստ հայդուկ. մի անգամ լսելով իր մասին երգը, ասել է. «Ես մի բոստանջու տղա բոստանջի. իմ վրա կերգես դու խանատան տղա, ինչե՞ն կլինի որ քեզի չես երգե»[4]։

Սուլուխ գյուղի կռվում ընկան 3 հայդուկ, գյուղի բնակիչներից 41 հոգի, վիրավորվեցին 7 հայդուկ։ Թուրքական բանակից սպանվեցին Քյոսե Բինբաշին, 2 հարյուրապետ, 5 ենթասպա, 1 բժիշկ, 1 ոստիկանապետ և 110 զինվոր[5]։

Այսպես շարունակվեցին Տարոնի և Սասունի հայ հատված-

---

1 Բարսեղ Ս. Բարսեղյան, *Հին հուշեր (907—908), հայ հեղափոխական կյանքի, Կ. Պոլիս, 1918, էջ 12—14։*

2 *Նույն տեղը, էջ 14։*

3 *Նույն տեղը, էջ 16—17։*

4 Ավո, *Գևորգ Զավուշ, էջ 114։*

5 *Տե՛ս Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 701։*

ների տառապանքները մինչև 1908 թ. թուրքական հեղափոխությունը, որից հետո հայդուկները թողեցին անմատչելի լեռները և իջան գյուղերն ու անցան խաղաղ աշխատանքի։ Բանտերից ազատվեցին հայ ազգային-ազատագրական շարժման գործիչներ, որոնցից շատերի ուսերին կար թուրքական դատարանի 101 տարվա բանտարկության վճիռը։

* *
*

1905—1907 թթ. ռուսական բուրժուադեմոկրատական հեղափոխությունը արթնացրեց Ասիայի ժողովուրդներին դարավոր նիրհից և ուղղեց նրանց բռնապետական ռեժիմի դեմ։ Այն թափանցեց Իրան և չէր կարող իր ազդեցությունը չունենալ նաև Օսմանյան կայսրության սահմաններում ապրող ժողովուրդների վրա։ Սակայն զուլումի ռեժիմը գլխավորող դաժան սուլթանը և նրան շրջապատողները ամեն գնով ուզում էին խեղդել իրենց երկիրը թափանցող հեղափոխական տրամադրությունները։ Բայց դա նրանց չհաջողվեց։ Ռուսական 1905—1907 թվականների բուրժուադեմոկրատական հեղափոխության ազդեցության տակ սկսեցին աշխուժանալ թուրքերը, արաբները, քրդական ցեղերը, հայերը և ուրիշներ։ Երիտթուրքերը օգտագործեցին այդ ամենը ընդդեմ Աբդուլ Համիդի։

1907 թ. դեկտեմբերի վերջին Փարիզում հրավիրվեց երիտասարդ թուրքերի ընդհանուր կոնգրեսը, որին մասնակցում էին նաև դաշնակցականները։ Կոնգրեսի նախագահությունում Ախմեդ Ռիզա բեյի և Սաբահեդդինի կողքին, բազմել էր նաև դաշնակցականների ներկայացուցիչ Խ. Մալումյանը։ Այդ կոնգրեսում ընդունված դեկլարացիայում կոչ արվեց Թուրքիայի ողջ բնակչությանը, առանց ազգային խտրության, ոտքի կանգնել, տապալել Աբդուլ Համիդի ռեժիմը։

1908 թ. թուրքական հեղափոխությունն արդեն փաստ դարձավ, և այն կատարվեց առանց արյունահեղության։ Այն տարիներ շարունակ նախապատրաստված էր և որին սպասում էին Թուրքիայում ապրող բոլոր ազգերի ներկայացուցիչները։

Հեղափոխությունից անմիջապես հետո կարծես թե սովորական էր դարձել արտասանել «օսմանյան ազատագրված հայրենիք» արտահայտությունը։ Շատերը այդ հեղափոխությունը գնա-

հատելիս այն տեղը հասան, որ այն համարեցին «Թուրքիայի ազատագրության երջանկավետ դարագլուխ»[1]։

Հայ մտավորականներից շատերը, որոնց թվում նաև զեյթունցի Սմբատ Բյուրատը, միամտորեն կարծում էին, որ թուրքական 1908 թ. հեղափոխությունը, ապա նրան հաջորդած սահմանադրությունը, լուծելու էին բազմաթիվ կնճռոտ հարցեր, իբրև թե այդ սահմանադրությունը «իրեն հետ բերավ երթևեկելու, խոսելու, գրելու ազատությունը, որ այնքա՛ն խժդժորեն բռնարարված էր Ապտյուլ Համիդի մը բռնապետության տակ։ Ավելորդ է կրկնել թե՝ այդ դարագլուխը պիտի մնա օսմանյան պատմության մեջ իբրև վերածնունդի ու վերականգնումի խորհրդանշան մը, որովհետև այդ թվականեն կըսկըսի հրապարակը ողողվել նոր, հզոր ու հյութեղ հրատարակություններով»[2]։ Հրապարակ եկած մի շարք գրքերում 1908 թ. թուրքական հեղափոխությունը համարվեց երկրի վրա «ծագած արշալույս», որի ժամանակ «էրեկ իրար թշնամի եղող երկու ազգեր, իրարու արյունը խմող երկու ժողովուրդներ, այսօր եղբայրացան միևնույն դրոշի տակ»[3] և ըստ հեղինակի «ազատությունը բարեկամացուց թուրք, հայ և քուրդ ժողովուրդները իրարու կապեց զանոնք եղբայրական կապերով իրարու հետ, բայց... տարաբախտաբար այդ կապերը չամրացան...»[4]։

Անժխտելի է, որ 1908—1914 թվականներին Թուրքիայում և հատկապես Կոստանդնուպոլսում, լույս տեսավ մեծ քանակությամբ գրականություն, որն ուղղված էր «զուլումի» ռեժիմի դեմ և լույս տեսած այդ գրքերից շատերը ձեռնտու էին երիտասարդ թուրքերին, քանի որ այնտեղ քննադատվում էին հին ռեժիմը, իսկ նրանցից շատերի առաջաբաններում գովեստի խոսքեր էին ասվում ինչպես հեղափոխության, այնպես էլ երիտասարդ թուրքերի հասցեին։ Ոգևորությունը հեղափոխությունից հետո հատկապես Կոստանդնուպոլսում եղած հայերի մոտ այն աստիճանի է հասած եղել, որ մամուլում գրվեց թե «Պոլսո հայերն այժմ իրենց օսմանցի են անվանում՝ երիտասարդ թուր-

---

1 Գափամաճեան Սիմոն, Մ. Մ., Մատթէոս Իզմիրլեան, Մ. Եղիշէ, Դուրեան, Դ. Պոլիս, 1908, էջ 8։

2 Սմբատ Բյուրատ, Ինքնասնվեց, արյունի ծիրեն, Կ Պոլիս, 1911, էջ Բ։

3 Բ. Բարսեղյանի հուշերը, էջ 85։

4 Նույն տեղը, էջ 87։

քերի ցանկության համեմատ»[1]։ «Սահմանադրության առաջին օրերուն,— գրում է այդ օրերի ականատեսը,— տարբերություն չէր մնացած ոչ ոքի միջև. ամեն դասակարգի, ամեն սեռի, ամեն հասակի, դիրքի ու պաշտոնի անձնավորության, հարբած մուգական «հուրիեթ, ատալեթ, մուսաֆաթ» (աղատություն, արդարություն, հավասարություն։— Հ. Պ.) խոսքերեն, իր զգացմունքը թափելու պարտականության մեջ կը գտնվեր, մին պարելով, մին լալով, մին գոռալով, մյուսը հրացան պարպելով, ոմանք ճառելով, ոմանք գինիի և արաղի սրվակները ձեռին փողոցները շրջագայելով և հարայհրոց հանելով»[2]։

Հեղափոխությունից անմիջապես հետո Տարոն (Մուշ) ուղարկվեց Վեհիր բեյը (հետագայում փաշա), որը ծառայել էր Մակեդոնիայում և իր կողմն էր գրավել թուրքական շատ զինվորական մասերի։ Տասը օրվա ընթացքում նա Մուշում հաստատեց երիտթուրքերի կոմիտեներ։

Այդ ամիսներին Կոստանդնուպոլսում և գավառներում տեղի ունեցան բազմաթիվ ցույցեր և միտինգներ, շատ գովեստի ճառեր արտասանվեցին նոր ռեժիմի մասին, իսկ իշխանության դուխ անցածների կողմից շատ խոստումներ տրվեցին ժողովրդին։ Մուշում թուրքական հեղափոխությունից հետո թուրքական թաղի բնակիչները անցան հայկական թաղերը և միտինգում ճառեր արտասանվեցին։ Այդ միտինգին մասնակցում էին սարեբից իջած հայդուկները և նրանց ներկայությամբ Սալիհ փաշան հայտարարեց. «Ահա ֆեդայիները, մեր աչքերը կապած են եղել, եղբայր եղբոր կուրծքին սվին ենք ուղղել, մեղքը մերը չէ, հին ռեժիմինն է. կեցցե սահմանադրությունը, կեցցեն հեղափոխականները»[3]։ Թեև լեռներից իջած հայդուկների մեջ կային մարդիկ, որոնք հենց սկզբից չհավատացին երիտթուրքերին ասելով. «40 տարի է ֆեդային թաս իմ չէ եղած, մենք ուխտ ենք արած զենքով մեռնելու» կամ «չէ, հայու հյուքմաթ կլինի, հայու զորք չլինի, ֆեդայիներս օսմանցուն չպիտի հավատանք, իրանց հուրիաթ, սահմանադրություն իրանց գլուխ թող ուտեն»[4]։ Այսպես էին մտա-

---

1 «Արարատ», հուլիս—օգոստոս, 1908, էջ 721։

2 Թուրքեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Ե հատոր, Լոս Անճելես, 1951, էջ 13։

3 Նույն տեղը, հատ Դ, էջ 395։

4 Նույն տեղը, էջ 389։

ծում հայկուկներ իշխանձորցի Կարոն, Գալշոյի Մանուկը, Ջելոն և ուրիշներ։

Շուտով, սակայն, վերջացավ թուրքական հեղափոխության մեղրամիսը։ Պարզվեց, որ վերևից կատարված այդ հեղափոխությունը չի լուծել երկրում բազմաթիվ արմատական հարցեր։ Եվ ժողովուրդը՝ հասարակ մարդիկ, առանձնապես երկրում ապրող քրիստոնյա ազգերը, որոնք տարիներ շարունակ հույսեր էին կապել սպասվող հեղափոխության հետ, խորը հիասթափություն ապրեցին։ Հրապարակից հեռացավ «մեծ մարդասպանը», որը 33 տարի շարունակ իր ստեղծած դաժան և անտանելի ռեժիմով ճնշել էր Թուրքիայի բոլոր ազգերին ու ժողովուրդներին, առանձնապես հայերին, խեղդել էր նրանց միտքը և բանտերը լցրել էր ժողովրդի զավակներով։ Սկզբնական շրջանում արտասահմանյան երկրներից դեպի Թուրքիա սկսվեց ժողովրդական մի հոսանք, որի մասնակիցները հաստատապես համոզված էին, որ հեղափոխությունից հետո այդ երկրում գտնելու են հարատևելու և ապրելու մինիմալ պայմաններ։ Սակայն նրանք այդ չգտան և խորը հիասթափություն ապրեցին։ Մի քանի տարի հետո այդ նույն մարդիկ երկրի վիճակի մասին գրեցին. «Մի՞թե այսօր ալ նույնը չէ, միթե՞ նորեն 5 տարի առաջվան կոտորումն ու կեղեքումը չի՛ շարունակվիր, միթե՞ հայը այլևս ստրուկ չէ։

Առաջ կառավարությունն ալ միսածույլ քուրդ և տաճիկ պեյերու հետ, առընթեր կը գործերն Հայաստանի կոտորածը, հայկական այդ սարսռազդեցիկ ոճիրները. բայց այժմ կառավարությունը մինակ անտարբեր կմնա...»[1]

Հեղափոխությունից հետո սկսվեցին թուրքական պառլամենտի ընտրությունները։ Հպատակ ազգերը առաջ քաշեցին պառլամենտում իրենց թվի համեմատ ներկայացուցիչներ ունենալու հարցը։ Սակայն ո՞վ էր նրանց լսողն ու կատարողը։ Դեռ ավելին, երիտասարդ թուրքերը հայկական շրջանների մեջ սկսեցին սպառնալիքները այդ խնդիրն առաջ քաշողների նկատմամբ։ Վերջապես հայկական գավառներում Միդհատյան սահմանադրությունը չկիրառվեց։

Հեղափոխությունից առաջ և նրանից հետո եվրոպական պարբերական մամուլը գովում էր երիտթուրքերին այն բանի համար, որ նրանք չափավոր են։ Եվրոպական պետություններից

---

[1] Թ. Բարսեղյանի հուշերը, էջ 38։

և ոչ մեկը չէր ցանկանում «օգնելու թուրքական հեղափոխությանը, նրա հաղթանակին, նրա ամրապնդմանը։ Ընդհակառակն, բոլորն էլ վախենում են թուրքական հեղափոխության հաջողությունից...»[1]։ Այդ պետությունների նպատակն էր ավելի շատ իրենցից կախման մեջ դնել Թուրքիային։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ նրանք «երիտթուրքերին գովում են չափավորության և զսպվածության համար, այսինքն թուրքական հեղափոխությունը գովում են այն բանի համար, որ նա թույլ է, այն բանի համար, որ նա չի արթնացնում՝ ժողովրդի ստորին խավերին, չի հարուցում մասսաների իսկական ինքնուրույնությունը, այն բանի համար, որ այդ հեղափոխությունը թշնամի է Օսմանյան կայսրության մեջ սկսվող պրոլետարական պայքարին,— և միաժամանակ շարունակում են առաջվա նման կողոպտել Թուրքիան»[2]։

Երկրում սկսված մեծ քանակությամբ միտինգները շուտով մոտեցան իրենց ավարտին և ժողովրդի ղգալի մասը սկսեց հասկանալ, որ երիտթուրքերը չեն լուծում և չեն էլ մտածում մի շարք կարևոր հարցեր լուծելու մասին։ Գերմանական մամուլի թղթակիցներից մեկը՝ Պարվուսը, որը այդ ժամանակ գտնվում էր Կոստանդնուպոլսում, իրավացիորեն ասել է. «Դուք կսեք՝ թուրք հեղափոխություն, բայց ես կը տեսնեմ, որ հոս չկա հեղափոխություն, այլ կա հեղաշրջում։ Դուք կսեք՝ հին և նոր ռեժիմներ, բայց ես այդ չեմ տեսներ, այլ կը տեսնեմ անձերու և դերակատարներու փոփոխություն միայն, տարբեր հագուստներու մեջ, ինչ որ չի նշանակեր հեղափոխություն»[3]։

Ստեղծված պառլամենտը չէր սահմանափակում ինքնակալի իրավունքները։ Այնուհանդերձ այն, ինչպես սուլթանի, այնպես էլ նրա համախոհների համար անտանելի էր թվում։ Սուլթանը և նրա կողմնակիցները սպասում էին հարմար առիթի, նոր ռեժիմը տապալելու և երկրում նորից զուլումի ռեժիմը հաստատելու համար։ Այդ նպատակով 1909 թ. ապրիլին նրանք խռովություն կազմակերպեցին, որը սկսվեց Կոստանդնուպոլսից, որտեղ տեղավորված էին սուլթանին հարազատ և նրան պաշտպանող զորամասերը։ Խռովարարներին հաջողվեց գրավել մայրաքաղաքը։ Երիտթուրքերը թողնելով մայրաքաղաքը անցան Մա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկ, հատոր 17, էջ 267։

2 Նույն տեղը, էջ 268։

3 Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հատ 2, Լոս Անճելես, 1951, էջ 303։

կեղոնիա, որտեղ շատ շուտով կուտակվեցին նրանց պաշտպանող հսկայական ուժեր, որոնք շարժվեցին դեպի մայրաքաղաք, ճնշեցին խռովարարներին և մի քանի օր հետո Կոստանդնուպոլիսը նորից անցավ երիտթուրքերի ձեռքը։ Այդ օրերին մի՞ապետականներին հաջողվեց շարքից հանել թուրքական բանակի շատ սպաների։ Այս դեպքերից հետո նրանք սուլթան Համիդին Սելանիկ աքսորեցին, և նրան փոխարինեց Ռեշադը, որը մի հիվանդ մարդ էր և «կրնար շարժիլ ու գատել միայն այլոց աջակցությամբ»[1]։

1908 թ. թուրքական հեղափոխության և երիտասարդ թուրքերի սին խոստումների նկատմամբ հենց սկզբից կասկածանքով էր վերաբերվում Անդրանիկը։ Հեղափոխությունից հետո նա գաղտնի եկավ Թուրքիայի մայրաքաղաքը։ Ընկերները խնդրեցին գալ Կոստանդնուպոլիս, խոստացան նրան առաջադրել օսմանյան պառլամենտի անդամ, ինչպես հետո ընտրվեցին Համբարձում Պոյաճյանը (Մուրադ), Գրիգոր Զոհրապը, Սապահ Գուլյանը և ուրիշներ։ Անդրանիկը նրանց պատասխանում է. «Ես ձեզ գուշակություն մը կուզեմ ընել և կուզեմ, որ լսեք։ Եթե այս հեղափոխական կարծված թուրքերը օր մը ձեզ չկախեցին, ես մարդ չեմ։ Օր պիտի գա, որ այս հեղափոխականներն ալ պիտի գառնան Սուլթան Համիդի պես գազան մը և բոլորիդ ալ պիտի ճոշոտեն»[2] (ընդգծումը մերն է,— Հ. Պ.)։

Ինչքան ճիշտ գուշակություն։ Անդրանիկը միայն վեց օր մնաց Կոստանդնուպոլսում և թողեց մայրաքաղաքը և այլևս չվերադարձավ այնտեղ։ Օսմանյան նոր կառավարության պառլամենտի անդամ Գարեգին Փաստրմաջյանը (Արմեն Գարո, 1873—1923) նշում է, որ 1908 թ. հեղափոխության օրերին ինքը և իր շրջապատը (բոլորն էլ դաշնակցականներ) հավատում էին այն վերսիային, որ հեղափոխությունից հետո Թուրքիայում կրարելավվի հայերի վիճակը, որին, սակայն, չէր հավատում Անդրանիկը։ Կոստանդնուպոլսում եղած ժամանակ մի ուրիշ առիթով նա ասում էր. «Մեծ թակարդ-մը կա, զգույշ եղեք, և այն երիտասարդներն ալ, որ զինվոր տվիք, այդ պատրվակի տակ պիտի կոտորվին ամենքն ալ»։ Այս խոսքերից հետո, նշում է Արմեն Գորոն, Ակնունին (Խաչատուր Մալումյան) դառնում է Անդրա-

---

1 Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հատ Զ. Լոս Անճելես, 1954, էջ 303։

2 Զօր. Անդրանիկ և իր պատերազմները, էջ 188։

նիկին և ասում. «Անդրանիկ ջան, ի՞նչ հոռետես ես, քիչ մըն ալ լավատես եղիր, այլևս ոչ մեկ հայրս քիթը պիտի արյունի»։ Հոռետես անվանվելուց հետո, նա դառնում է Ակնունուն և ասում. «Այսքան երկար խոսելե վերջ, երբ տակավին համոզված չեք խոսքերուս, ինքդ տեսնեք ձեր էնվերին ալ, ձեր Թալեաթին ալ և ոտքի ելնելով «մնաք բարի» ըսավ և հեռացավ։ Այս խոսքերեն հաղիվ քառասուն օր անցած էր, երբ երիտասարդ Թուրքերը Ադանան կոտորեցին։ Ադանայի կոտորածին Անդրանիկ Եղիպտոսեն այսպես գրած էր Ակնունիին. «Ահա իմ հոռետեսությունս և ձեր լավատեսությունը, երբ ժամանակը գա ձեր Թալեաթն ու Էնվերը ձեզ ալ պիտի կոտորեն»[1]։ Նույնը նշում է նաև Մալխասը ասելով, որ 1908 թ. դեպքերից հետո դաշնակները ամեն տեղ հայտարարում էին, որ «չմոռնանք ըսելու, որ Թուրքիա արդեն սահմանադրական երկիր մըն էր, ու մենք՝ եղ ու մեղր Թուրքերուն հետ...»[2]։

1909 թ. երիտԹուրքերը և նրանց հետ միացած Կոստանդնուպոլսի դաշնակցական մարմինը մի միացյալ շրջաբերական գրեցին, որի մեջ ասված է. «Հայրենիքի ազատությունը ապահովելու և անոր հողային և քաղաքական ամբողջությունը մշտապես պահպանելու (ընդգծումը և հետագա ընդգծումները մերը չեն,— Հ. Պ.) կարգ մը անձերու մեջ գոյացած թյուրիմացությունները փարատելու և օսմանյան տարրերու միջև լավագույն հարաբերություններ հաստատելու նպատակով՝ Իթթիհատ թերաքի կուսակցությունը և Հ. Յ. Դաշնակցությունը կատարյալ համաձայնություն եկան հետևյալ կետերու մասին։

Առաջին սահմանադրությունը կիրարկելու և հանրային զարգացումը երկրի մեջ ամրապնդելու համար «պիտի աշխատին և պայքարեն միացած ուժերով, չխնայելով ոչ մի զոհողություն»։

Երկրորդ՝ պիտի գործեն «միասիրա հաստատակամությամբ» հետադիմական շարժումներուն հավանականության դեմ.

Երրորդ՝ «Օսմանյան նվիրական հայրենիքը անջատումն և բաժանումն զերծ պահելը երկու կազմակերպությանց միացած գործունեության նպատակակետը ըլլալով, անոնք պիտի աշխատին գործնականապես ցրել հանրային կարծիքին մեջ բռնակալ ռե-

---

1 Զոր. Անդրանիկ և իր պատերազմները, էջ 170։

2 Մալխաս, Ակրոմներ, Պոսթրն, 1931, էջ 139։

ժիմեն ժառանգ մնացած այն սուտ զրույցները՝ թե հայերը անկախության կը ձգտին»[1]: Ինչ է ասում վերը բերված քաղվածքը։ Այն որ երիտթուրքերի ստեղծած նոր պետությունը պետք է տերիտորիալ տեսակետից մնա ամբողջական, այսինքն՝ անբաժանելի և որ օսմանյան Նվիրական հայրենիքը հայրենիք է բոլորի համար, այս էլ լինելու է երկու կուսակցությունների նպատակը, որ հայերը անկախության են ձգտում արտահայտությունը սուտ է, այն գալիս է Աբդուլ Համիդի ռեժիմից։

Հայ ժողովուրդը հավատ չուներ երիտթուրքերի և նոր ընդունված սահմանադրության նկատմամբ, քանի որ նա լավ էր հասկանում, որ այդ թղթի կտորը՝ «սահմանադրությունը դավ մը, ծուղակ մը եղավ, հայության ջիղերեն քամելու համար իր կորովին մինչև վերջին կաթիլները և զայն մարդկային քուրջի վիճակի մը վերածելու»[2]։

Այսպիսով, դաշնակցական կուսակցության պարագլուխները թուրքական 1908 թ. սահմանադրությունից հետո որոշեցին «գործակցություն իթթիհատի հետ՝ սահմանադրական կարգերու հաստատման և պահպանման համար»[3]։

Երիտթուրքերը ներքին կարգով հրահանգել էին խիստ սահմանափակել քրիստոնյա դեպուտատների թիվը։ Ընտրված նոր պառլամենտը ուներ 266 դեպուտատ, որից 220-ը՝ մահմեդական (թուրք՝ 125, արաբ՝ 70 և ալբանացի 25) և 46-ը քրիստոնյա (հույն՝ 23, հայ՝ 10, բուլղար՝ 4, հրեա՝ 4, սերբ՝ 3, ուլահ՝ 1)[4]։ Շատ հետաքրքիր է այդ պառլամենտի դասակարգային և դասային կազմը։ Պառլամենտում ընտրվածների 35 տոկոսը կրոնավորներ էին, 30 տոկոսը՝ կալվածատերեր, 20 տոկոսը՝ պաշտոնյաներ, ազատ արհեստի մարդիկ էին 10-ը և անորոշ աշխատանքի մարդիկ՝ 5 տոկոսը։ Մուսուլմանների և կրոնավորների 80 տոկոսը անգրագետ էին[5]։ Դրանց մեջ բացառություն էին քրիստոնյա դեպուտատները, որոնք բոլորն էլ գրագետ էին, հայ դեպուտատներից 5-ը ունեին համալսարանական կրթություն։

Դաշնակցականների պլատֆորմն էր «Օսմ. կայսրությունը, քանի

---

1 Ցուշամատյան մեծ եղեռնի, Պեյրութ, 1965, էջ 108։

2 «Հոսանք», Գահիրէ, Ա. տարի, 14/27 հոկտեմբերի 1912, էջ 498։

3 Վահան Փափազյան, Իմ հուշերը, Բ հատոր. Պեյրութ, 1952, էջ 51։

4 Տե՛ս նույն տեղը, էջ 90։

5 Տե՛ս նույն տեղը, էջ 01։

կունենա սահմանադրական ժողովրդական կարգեր, պիտի ճանաչվի անկախ և ամբողջական»[1]։

Երիտթուրքերի ժամանակ այլ ժողովուրդներին ջարդելու Աբդուլ Համիդի քաղաքականությունը չդադարեց։ Այսպես, այդ տարիներին ջարդվեցին ավելի քան 50 հազար հայեր, 40—50 հազար մակեդոնացի բուլղարներ, հույներ, սերբեր, և վլախներ, 20 հազարից ավելի ալբանացիներ, 100.000 արաբներ, հազարավոր տուրզիներ, թուրքեր, քրդեր և այլն[2]։

1909 թ. սկսվեց Ադանայի հայերի կոտորածը, որին զոհ գնացին 30 հազար մարդ։ Երիտթուրքերի խոստումներն այն մասին, որ ստեղծված նոր կարգի պայմաններում Թուրքիայի տերիտորիայում հպատակ ազգերի և ժողովուրդների կյանքի և ունեցվածքի ապահովություն կլինի, հօդս ցնդեցին։ Այդ մասին «Կոհակը» գրում էր. «Քամի ցանողը փոթորիկ կհնձե։ Իշխիհատը մեզ համար, բարոյական որևէ արժեքից զուրկ ապականություն մըն է, կործանարար ջլատիչ ուժ մը, որուն գոյությունն իսկ արգելք մե ինքնին իր ապրած երկրին հառաջադիմության և զինքը շրջապատողներուն անկաշկանդ զարգացման առջև»[3]։

1908 թ. «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հրատարակած ծրագիրը ազդարարում էր, որ հեղափոխության հաղթանակից և սահմանադրությունը ընդունելուց ու ընտրություններ անցկացնելուց հետո պետք է լիներ երկրորդ պալատ, որի պատգամավորների մեկ երրորդը պետք է ընտրվեր սուլթանի կողմից։ Ընտրությունները լինելու էին երկաստիճան, առաջին աստիճանի ժամանակ ընտրողը կարող էր լինել 20 տարին լրացած արական սեռի մի օսմանցի, որի կալվածական ցենզը չպետք է հաշվի առնվեր, իսկ երկրորդ աստիճանում ցենզը հաշվի էր առնվելու։

Հետաքրքրական է այդ ծրագրի դրույթները բանվորների և գործարանատերերի կապակցությամբ. այնտեղ նշվում է, որ հարկավոր է «օրենքներ հաստատել գործավորներու և գործարանատերերու իրավունքներն ու պարտականությունները ճշտող»[4], սակայն ինչ օրենքներ և ինչպիսի փոխհարաբերություններ պետք է լիներին այդ երկու դասակարգերի միջև, այստեղ երիտթուրքերը լռում էին։ Հեղափոխությունից առաջ երիտթուրքերը խոստա-

1 Վահան Փափազյան, Իմ հուշերը, Բ հատոր, Պեյրութ, 1952, էջ 96։

2 «Կոհակ», Կ. Պոլիս, 14/27 նոյեմբերի 1912, էջ 497։

3 Նույն տեղը, էջ 498։

4 «Ուսանող», Փարիզ, 1909, էջ 8։

ցել էին վերադարձնել հայ գյուղացիների այն հողերը, որոնք գրավվել էին թուրքական և քրդական ֆեոդալների կողմից[1]: Սակայն իշխանության գլուխ անցնելուց հետո նրանք չլուծեցին հողային խնդիրը, այդ թվում նաև հայ գյուղացիների հողերի հարցը։ Եվ ինչու՞, քանի որ նրանց հողային հարցում ունեցած քաղաքական գիծը ոչ թե փոքր հողատերերի, այսինքն գյուղացիների, այլ խոշոր հողատերերին պաշտպանելու հարցն էր, որոնց ձեռքում էլ կենտրոնացած էր հողի մեծ մասը։ 1908 թ. հեղափոխության հաղթանակից հետո երկրում խոշոր հողատերերը չնայած կազմում էին բնակչության մեկ տոկոսը, սակայն նրանց ձեռքում էր գտնվում հողի 39,3 տոկոսը, կուլակները կազմում էին բնակչության չորս տոկոսը, նրանց ձեռքին էր հողի 26,2 տոկոսը, իսկ հասարակ գյուղացիներն անկախ ազգային պատկանելությունից, կազմում էին բնակչության 95 տոկոսը, սակայն նրանք ունեին հողի 34,5 տոկոսը միայն[2]։

Այսպիսով երիտասարդ թուրքերը պաշտպան էին այդ խոշոր հողատերերին։ Նրանց այդ քաղաքականությունը հասցրեց այն բանին, որ Թուրքիայում հեղափոխությունից հետո հողը սկսեց ավելի ու ավելի կենտրոնանալ խոշոր հողատերերի ձեռքը։ Երիտթուրքերի իշխանության ժամանակ երկրում հարկային ռեժիմի մեջ փոփոխություններ համարյա թե չեղան, գյուղացիները նախկինի նման վճարում էին բոլոր հարկերը։ Իրավացի է Ա. Համբարյանը, երբ գտնում է, որ Արևմտահայ գյուղացիությունը ստիպված ընդդիմացավ երիտթուրքերի դեմ և «նրա պայքարն արտահայտվեց ամենատարբեր ձևերով՝ բողոքներով ու գանգատներով, հարկերից խուսափելով, ակտիվ ընդվզումներով ու ելույթներով»[3]։

Ուժեղացավ երիտասարդության հոսքը դեպի քաղաքները, հայ բնակչության մի մասը սկսեց գաղթել արտասահման։ 1909 թ. երկրում սկսեց սովը, և տեղի ունեցան գյուղացիական մի շարք հուզումներ։

Երիտասարդ թուրքերի տիրապետության ժամանակաշրջանում շատ ռեակցիոն կերպով դրվեց ազգային հարցը, չնայած

---

1 Տե՛ս Ալիևի նշվ. աշխ., էջ 159։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 161։ Տե՛ս նաև Ա. Ս. Համբարյան, Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազգային շարժումներն Արևմտյան Հայաստանում, Ե., 1979, էջ 67։

3 Ա. Ս. Համբարյանի նշվ. աշխ., էջ 182—183։

նրանց ընդունած ծրագրերում և նրանց ներկայացուցիչների ելույթներում շատ ջերմ խոսքեր ասվեցին երկրում ապրող ազգերի հավասարության մասին, սակայն «հին պաշտոնական քաղաքական դոկտրինան, պանիսլամիզմը՝ ավելի ուժեղացավ և փոխարինվեց բուրժուանացիոնալիստական դոկտրինայով—պանթյուրքիզմով»[1]։ Առանց որևէ մեկից երկնչելու, նրանք հայտարարում էին, որ Թուրքիայում չկան ոչ մուսուլմաններ, ոչ էլ քրիստոնյաներ, և ոչ էլ տարբեր ժողովուրդներ, գոյություն ունի միայն օսմանյան ժողովուրդ։ Ահա նրանց քաղաքականությունը ազգային հարցում, սակայն չէ որ Թուրքիայում ապրող 73 տարբեր ազգությունների՝ քրդերի, հայերի հույների, ասորիների, և այլ ազգերի գոյությունը կախված չէր երիտթուրքերի ցանկությունից, նրանք այդ երկրում կային, ապրում էին։

Հեղափոխությունից հետո երիտասարդ Թուրքերը ընդունեցին մի կանոնադրություն ոչ իսլամների զինվորագրության մասին, որի մեջ ասված էր, որ միապետական ռեժիմի ժամանակ զորքը վերցվում էր միայն իսլամներից, իսկ ոչ իսլամները պետք է զինվորական տուրք տային (պետելի ասքերի) և նրանք վերացրին տուրքը և «Թե Պոլիս և Թե գավառները բնակող ոչ իսլամները այդ Թվականեն սկսյալ իսլամներու օրենքին համաձայն զինվորագրություն կունենան»[2]։

Իրականում ինչ էր ներկայացնում այդ զինվորական ծառայություն ասվածը, որը տևելու էր 25 տարի, որից 3 տարին գործող բանակի մեջ (նիզամյե), վեց տարի գործող բանակի պահեստային (իհթիյաթ), ինը տարի պահեստային (ռեսիֆ) և յոթը տարի երկրապահ (մուսթահֆըզ)[3]։ Մոտավորապես նույն վիճակում պետք է լիներին նաև ծովայինները։

1909 թ. թուրքական հեղափոխությունից անցել էր մեկ տարի, սակայն հայ ժողովրդի ու նրա Մուշի հատվածի վիճակի մեջ փոփոխություն համարյա չէր կատարվել։ 1909 թ. օգոստոսի 20-ին Մուշից Ն. Խարախանյանը Ամենայն հայոց Մատթեոս կաթողիկոսին գրած մի նամակում նշում է. «Երկիրը տնտեսապես քայքայված, փչացած, ամենուրեք սով կը տիրե, Թե՛ նյութական և Թե մտավորական, ամեն օր բազմաթիվ պատանիներ կը լցվին

---

1 Ալիևի նշվ. աշխ., էջ 4։

2 «Հայուն տարեցույցը», Կ. Պոլիս, 1913, էջ 37։

3 Նույն տեղը։

գլխուս և ուսում կը խնդրեն և կը խորհիմ երբ հնար չէ ամենուն գոհացում տալ, բարձրագույն վարժարանները ղրկելով զանոնք, գոնե՛ ջանանք միջնակարգ վարժարան մը ս. Կարապետին մեջ բանալ, սակայն այդ նպատակին հասնելու համար ալ ահագին դրամական ուժ հարկավոր է, ինչ որ կը պակսի մեզ»[1]։

Այնուհետև նա նշում է, որ իրեն հայտնի է, որ Վարագի հոգաբարձությունը դիմել է կաթողիկոսին խնդրելով, որ ստեղծվի «Հայրիկյան ֆոնդ» Վարագի վանքի մեջ երկրագործական վարժարան բաց անելու համար, ուստի նա էլ խնդրում է, որպեսզի այդ հավաքված գումարների կեսը հատկացնել Տարոնին, քանի որ Մ. Խրիմյանը Տարոնին պակաս չէր սիրում իր հայրենի Վանից։ Ն. Խարախանյանի նպատակն էր Տարոնում բաց անել միջնակարգ դպրոց գյուղատնտեսական բաժնով։

Արխիվային մի վավերագիր-նամակում, որը անստորագիր է և ուղարկված է 1909 թ. մայիսի 20-ին Մատթեոս կաթողիկոսին, նշված է, որ Տարոնը և Սասունը գտնվում են նյութական տեսակետից քայքայված վիճակում, սակայն «Տարոն-Սասունը իր հարևան գավառներով, և իր մեջ ունենալով Մուշ, Բաղեշ քաղաքները և Հազզո, Ֆարգին (Նփրկետ)— Կենճի Արտղեն, Ճապաղջուր, Մանազկերտ, Խնուս Բերդ և Կոբ գյուղաքաղաքները— ոչ միայն միջին Հայաստանի սիրտը կը կազմե, այլ տակավին կըպարունակե հարյուր հազարավոր բազմություն մը Ձեր դժբախտ հոտեն, որոնք թեև չարաչար տանջանքի, կեղեքումներու ու փճացման ենթակա, դեռ կը տոկա և պիտի տոկա՝ փարած մնալով մայրենի նվիրական եկեղեցիին, որուն համար միշտ պատրաստ եղած է զոհաբերելու իր անձը։

450-ի մոտ գյուղեր, 2 քաղաք և 10 գյուղաքաղաք պարունակող այս բազմահազար շրջանը ցավ է ինձ ըսել բոլորովին զուրկ և կարոտ են կրթության բարձրացնող լույսին»[2]։

Երիտթուրքերի հռչակած սահմանադրությունից հետո ժողովրդական հատվածների դրությունը չբարելավվեց։ Սովը ավելի վատացրեց այն։ Սկսեցին իրենց մոտ պահել հացահատիկը, հետագայում ավելի թանկ գնով վաճառելու համար։ «Արարատի» 1908 թ. սեպտեմբերի «Սով Մշո մեջ» հոդվածում կարդում ենք. «Հիսուն տարիներն ի վեր ժողովուրդը կեղեքող ու հարստահա-

---

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ 57, ց. 2, գ. 1845, թ. 10։

2 Նույն տեղը, էջ 29։

ղող մյուլթեզիմները, սովին հիմնադիրները, ցորենները ամբարած են և քառապատիկ ու հնգապատիկ գինով ժողովրդին պիտի կերցնեն»[1]։

Օգտվելով երիտթուրքերի պաշտոնյաների պաշտպանությունից, այդ մյուլթեզիմները հարստանում էին ժողովրդի հաշվին։ Սովը սպառնում էր ոչ միայն Մշո դաշտին, այլև շատ այլ տեղերի ժողովրդահատվածներին. «Մուշ, Վան, Բաղեշ, Խնուս և Սասուն սով տիրած է և նույն տեղերու հայ բնակիչներ ընտանիքներ ոչ միայն հացի կարոտը կը քաշեն, այլև, բոլորովին մերկ ըլլալով՝ վերահաս ձմռան իրենց կյանքին սպառնացող մահվան վտանգներուն հանդեպ այժմեն իսկ սահմռկած են, հաց և հագուստ կը հայցեն»[2]։

Նույն «Արարատում» տպագրված «Տաճկաստանի հայոց դրությունը» հոդվածում նշվում էր որ «ապահովությունը և ցեղերու եղբայրական հարաբերությունները տակավին իրականություն մը չեն»[3]։ *Այնուհետև հոդվածագիրը շարունակում է թվել ժողովրդի տարապանքները՝ գրելով. «Կիներ և աղջիկներ կառևանգվին ըստ առաջնոյն, առանց նկատի ունենալու անոնց տարիքը և հարգելու ընկալյալ կարգ ու կանոնը. և կիսլամացվին, նույնիսկ անոնց տեղ երբեմն առևանգողի պարագաներեն ուրիշ կիներ ներկայացնելով իդարեի ժողովին՝ ուր անոնց հայտարարությունը կը լսվի, երբեմն կթույլատրվեր, որ կրոնափոխը համոզելու համար գացող հոգևոր պաշտոնյան առանձին իր հորդորները ուղղե, այժմ նույնիսկ ուրացողին երեսն ալ ցույց չտրվիր, հայտարարելով թե արգելված է ըստ շերիի»*[4]։

1909 թ. օգոստոսի 31-ի հրամանով գավառական իշխանություններին կարգադրվեց, որպեսզի հայոց ազգային հաստատությունների և գյուղացիների հողերը վարչական կարգով ետ վերադարձվեն իրենց տերերին, սակայն «Թուրք և քուրդ բռնավոր տարրը սիրաշահելու քաղաքականությամբ 1910 թ. ապրիլի 1 թվականով նոր հրամանագրով մը ետ առնվեցավ նախորդ տնօրենությունն, և գրավյալ հողերու խնդրոյն լուծումը հանձնվեցավ գատարաններու»[5]։

---

[1] «Արարատ», սեպտեմբեր, 1908, էջ 1017։

[2] Նույն տեղը, էջ 1018։

[3] Նույն տեղը, 1911, հունվար, էջ 32։

[4] Նույն տեղը, էջ 32—33։

[5] Նույն տեղը, էջ 33։

Արդեն 1912 թ. նոյեմբերին Արևմտյան Հայաստանից ստացվում էին սրտաճմլիկ լուրեր այն մասին, որ «անլուր վայրագությունը դարձյալ գլուխ է բարձրացրել» և սկսվել են մասնակի կոտորածները, որ «այդ կոտորածները կան այսօր, երբ երկիրը սահմանադրական է, նրանք կատարվում էին և երեկ, երբ անսահման կամայականություններ էր իշխում, վերջապես նրանք ոչ մի նորություն և ոչ մի տարօրինակ բան չեն Տաճկաստանի մեջ»[1]։ Խոսելով երիտթուրքերի ժամանակաշրջանում քրիստոնյա հպատակների անազորույն վիճակի մասին, հոդվածագիրը նշում է, որ Թուրքիայի «հպատակները եղել են միշտ արհամարհելի մի տարր, ռայա, եղել են և այսօր էլ նույնն են մնում»[2]։ Թուրքական նոր կառավարիչներից որևէ բան սպասելը անմտություն էր, քանի որ նրանք միշտ էլ խոստումներ տալիս էին ժողովրդին երկրում բարենորոգումներ անցկացնելու մասին, սակայն չէին կենսագործում։ Այդ պատճառով էլ հայ ժողովրդի հատվածները վերջնականապես համոզվեցին, որ երիտթուրքերի խոստումները, «լոկ պատրանք է և հավատալը՝ տհասություն»[3]։

«Արարատի» տպագրած մի ուրիշ հոդվածում «Հողային խնդիրը Տարոնում» վերնագրով նշված է, որ օսմանյան սահմանադրության հռչակումը մեծ ոգևորությամբ ընդունվեց հայերի կողմից, սակայն «Սասուն, Խոյթ, Բռնաշեն, Մոտկան և այլն նույնիսկ ենթարկված մնացին հնեն ի վեր տիրող-բռնության ներքև և որ աստիճան մը ավելի ծանրացավ, որովհետև ի լուր սահմանագրության ճնշվածները շարժում մը ըրին անոնց լուծը թոթափելու, սպանություններ, առևանգություններ և ավարառություններ ու գողություններ շարունակվեցան և չարագործներ մնացին անպատիժ»[4]։

Հատկանշական է, որ սահմանադրության հռչակումից հետո «բռնավորները սարսափահար եղած էին, եղան անոնցմե ոմանք, որ օրվան տպավորութենեն ազդված իրենց ձեռքի տակ գտնվող հողերը իրենց սեփականատերերին դարձուցին, սակայն շուտով երևան եկավ օսմանյան պաշտոնեից հին նենգ քաղաքականությունը, որ ոչնչացրուց և ցրեց բոլոր հույսերը»[5]։

---

1 «Արարատ», սեպտեմբեր, 1912, էջ 796։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը, հունվար, 1913, էջ 90։

5 Նույն տեղը։

Տարոնում սկզբում եղավ մի վիճակ, երբ վարչական ժողովները վճիռ կայացրին գրավված հողերը իրենց տերերին վերադարձնելու մասին, սակայն բեկերն ու աղաները, զգալով իրենց նկատմամբ կառավարության վարած մեղմ վերաբերմունքը, չենթարկվեցին ոչ մի որոշման և հողերը չվերադարձվեցին։

Հեղափոխությունից հետո իրենց հայրենիքից հեռացած գյուղացիները սկսեցին վերադառնալ տուն այն հույսով, որ կորցրած իրենց պապական հողերը ետ կստանան, սակայն չստացան և մնացին առանց հողի և բնակարանի, քանի որ «կառավարությունը չէ բավականացած զաղթող հայերու հողեր գրավել ու չերքեզ և թուրք գաղթականներուն տալ, այլ իրենց տեղերեն չշարժվող ու հայրենիք մնացող բազմաթիվ հայերու հողերն ալ առած մահմեդական գաղթականներուն տված է»[1]։

Այսպես ուրեմն, Տարոնում ոչ միայն հին հողերը չվերադարձվեցին, այլև Մուշի Վարդենիս. Առնիար, Դրմերի և Պոստաքյանգ գյուղերի հողերի զգալի մասը տրվեցին չերքեզներին, իսկ Սասունի «Գապելճող գյուղի երեք հայ ընտանիքները իրենց տուներեն գուրս ձգվեցան և անոնց տունները և կալվածները տրվեցան մուսեցի ավազակաբարո քուրդերուն»[2]։

1908 թ. հեղափոխությունից հետո խաֆիրային վիճակում գտնվող հայ գյուղացիները մերժեցին ինչպես տուրքի վճարումը, այնպես էլ ծառայությունների կատարումը, սակայն քրդական վերնախավի ներկայացուցիչները, կաշառելով դատավորներին, կարողացան որոշումներ ձեռք բերել այն մասին «թե խաֆիրություն անունով տուրքերը հայերու ձեռք գտնվող իրենց հողերու վարձն է»[3]։

Երիտթուրքերի ժամանակ էլ տասանորդների կապալառուները՝ մյուլթեղիմները և թուրքական ոստիկանները, «ավազակները ոչ նվազ չարիք մըն են գյուղացի ժողովրդյան, զորս կը ծեծեն, կը խոշտանգեն, կը կեղեքեն, որոնցմե ձրի կստանան իրենց և ձիերու կերակուրը»[4]։ 1912 թ. սեպտեմբերի 16-ին Կոստանդնուպոլսի պատրիարքարանից էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսին գրած մի վավերագրի մեջ ասված է. «Կսպասենք ազգովին և լի

---

1 «Արարատ», հունվար, 1913, էջ 61։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը, տե՛ս նաև Մատենադարան, Գյուտ. եպիսկոպոսի արխիվ, թղթ. 3, վավ. 48—57, թ. 59։

4 Նույն տեղը, էջ 94։

հույսով, որ օսմանյան սահմանադրության հռչակումեն ետքը, որ քանդեց հայոց արյամբ ողողված բռնապետական նախորդ դրությունը, այլևս վերջ գտնեն այն անլուր չարիքները, սակայն ցավոք սրտի կը հարկադրվինք հաստատելու, որ իրաց վիճակը հայոց նկատմամբ որևէ նպաստավոր փոփոխություն չկրեց և Ադանայի ահավոր կոտորածով սկսավ այնպիսի նոր շրջան մը, որ անպակաս եղան ամենուրեք նորանոր չարագործությունք, որոնց մասնավոր թույր դարձան վերջերս, Վանա, Աղթամարա, Բաղեշի, Մշո և Սղերտի վիճակները։ Նոր ի նորո հասած հեռագրեր գուժեցին սպանությանց, ավարառությանց, առևանգումներու դեպքեր»[1]։

1912 թ. հուլիսի 12-ին Մուշի հոգևոր առաջնորդ Ն. Խարախանյանը Խութի Թաղավանք գյուղի գյուղացիներից ստանում է հետևյալ տեղեկությունը. «Խոյթի Թաղավանք գյուղացի հայերն իրենց արտերը հսկելու ատեն ծանոթ մարդասպաններ ու ավազակներ հարձակվելով անոնց վրա, Մխիթար և Ներսես անուն գյուղացիները վիրավորեցին, ժողովուրդն ահ ու սարսափի է մատնված և ցրված է։ Կը խնդրենք հանուն արդարության, որ հիշյալ չարագործները պատժվին և արդարության վերահաստատման համար հարկ եղած անմիջական միջոցներ ի գործ դրվին»[2]։ Այսպիսի փաստեր շատ կան արխիվներում և ժամանակի մամուլի էջերում։

1912 թ. հոկտեմբերի 19-ին նույն Ն. Խարախանյանը մի զեկուցագիր է ուղարկել Ամենայն հայոց կաթողիկոսին Տարոնի ժողովրդի ծանր վիճակի մասին, որից ցանկանում ենք մի քանի քաղվածքներ բերել։ 1908 թ. հեղափոխությունից հետո «օսմանյան սահմանադրության հռչակումը որքան մեծ խանդավառությամբ ընդունվեցավ բոլոր հայերու կողմե, սակայն անոր արդյունքը չեղավ այն, ինչ որ կակնկալեր ճնշված ժողովուրդը, իրավ է մեկ-երկու տարի մասնակի խաղաղություն մը և ապահովություն տիրեց ու եղբևեկությունը դյուրացան, բայց հիմնական բարենորոգումներ մը և բարեկարգություն մը երբեք չգործադրվեցավ և մեր թեմի մութ անկյուններն՝ ինչպես են Սասուն, Խոյթ, Բռնաշեն, Մոտկան և այլն, նույնիսկ ենթարկված մնացին հինեն ի վեր տիրող բռնության, և որ աստիճան մը ավելի

---

1 Մատենադարան, Գյուտ եպս. արխիվ, թղթ. 3, վավ. 48—87, թ. 6։
2 Նույն տեղը, թ. 27։

ծանրացավ, որովհետև ի լուր սահմանադրության ճնշվածները շարժում մը ըրին անոնց լուծը թոթափելու, սպանություններ, առևանգություններ և ավարառություններ ու գողություններ շարունակվեցան և չարագործները մնացին անպատիժ»[1]։

Ն. Խարխանյանը, այդ դեպքերի ականատեսը, ինչ խոսք, ճիշտ էր գնահատում ժամանակի իրադարձությունները և ապա շարունակում. «Մեր գավառի համար ժողովրդյան ամեն դասակարգին խորին ցավ պատճառող և շատ մը չարյաց պատճառ եղող ամենեն կարևոր խնդիրը՝ հողային հարցը եղած է. հայերը բռնության շրջանին, ոչ միայն կողոպտված էին, ոչ միայն հազարավոր պատվական կյանքեր զոհված էին, այլ Համիդի հայաջինջ քաղաքականությունեն քաջալերած թուրք և քուրդ պեյեր ու աղաներ հայերու կալվածները հափշտակած էին, գյուղ չկա, որ այդ զրկանքին ենթարկված չըլլար, հայերը միամտություն ունեցան կարծելու թե՝ սահմանադրության շնորհիվ վերստին տեր պիտի ըլլան իրենց սեփական հողերուն, այս հույսով ժողովրդական բողոքները միմյանց հաջորդեցին, բռնավորները սարսափահար եղած էին»[2]։ Ն. Խարախանյանը այնուհետև ասում է. «Եղան անոնցմե ոմանք որ օրվան տպավորությունե ազդված իրենց ձեռքի տակ գտնված հողերը, իրենց սեփականատերերուն դարձյալ հանձնեցին, սակայն շուտով երևան ելան օսմանյան պաշտոնեից հին նենգ քաղաքականությունը, որ ոչնչացուց, ցրեց բոլոր հույսերը, քանի-քանի անգամ վարչական ժողովներով վճիռներ տրվեցան, հողերը ետ տալ իրենց սեփականատերերուն, որոնք ի ձեռքն ունեին օրինական կալվածագրերը, այդ մտքով բարձրագույն հրամաններ ալ ստացվեցան, բայց այդ ամենը չկրցան ազատել պեյերու, աղաներու ազդեցության տակ գտնվող անպարտաճանաչ պաշտոնեից և բռնավորները տեր մնացին հայերու հափշտակած հողերուն»[3]։

Այնուհետև Ն. Խարախանյանը նշում է, որ տարագիր հայերը սահմանադրության հռչակումից հետո վերադարձան իրենց տները, սակայն նրանք չստացան իրենց հողերը և մնացին «թափառական, ոչ վարելահող ունեն և ոչ տուն, ոչ բնակարան»[4]։ Ժողովրդի դրությունը բոլորովին չփոխվեց, քանի որ պետությանը

1 Գյուտ եպս արխիվ, թղթ 48—87 թ 81։

2 Նույն տեղը, թ. 58։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը։

հարկ վճարելու հետ միասին հարկեր էր վճարում նաև քուրդ աղաներին։

Մատենադարանում պահպանվում է մի տեսակ «Տաճկահայոց հարցի պատմությունը» վերնագրով, որտեղ բազմաթիվ հետաքրքրական վավերագրերի կողքին կա Տարոնի հոգևոր առաջնորդ Ն. Խարախանյանի մի ուրիշ զեկուցագիրը՝ ուղղված Ամենայն հայոց կաթողիկոսին 1912 թ. հոկտեմբերի 19-ին։ Այդ զեկուցագրում նորից նշվում է այն մասին, որ երիտասարդ թուրքերի տիրապետության հաստատումից հետո քիչ փոփոխություններ կատարվեցին տարոնահայության վիճակի մեջ։ Զուլումի տարիներին հայ գյուղացիներից խլված հողերը ոչ միայն չվերադարձվեցին, այլև նրանցից սկսեցին քուրդ աղաներն ու բեկերը նոր հարկեր գանձել։ Այսպես, Սասունի Զիթենք, Դաշտ, Պատրիք գյուղերը «նույն գավառի դատարանի անիրավ վճռով վերոհիշյալ թվականին տրվեցավ մուսեցի և բրոդրքցի քուրտերուն»[1]։

Թուրքական հեղափոխության առաջ դրված կենսական հարցերից մեկն էլ ազգային հարցն էր։ Իշխանության գլուխ անցնելուց առաջ, իշխանության տիրանալու նպատակով երիտթուրքերը իրենց հրատարակած մամուլի էջերում, թռուցիկներում և դեկլարացիաներում կտրուկ կերպով դնում էին կայսրության տերիտորիայում ապրող ժողովուրդների ազատագրության հարցը, դատապարտում հայերի կոտորածները, սակայն նրանք «պատմական արենա դուրս եկան որպես բուրժուական հեղափոխականներ, բայց իշխանությունը գավթելով, դարձան հայտնի շովինիստներ»[2]։

Հետաքրքրական է նրանց վերաբերմունքը գեպի համիդեական գնդերը, որի զեկավարների մեծ մասը անգրագետ էին և զինվորական կոչումներ էին ստանում՝ ելնելով իրենց տոհմական ծագումից։ Պառլամենտի անդամների մեծ մասը, որոնց թվում նաև Գրիգոր Զոհրապը, պնդում էին, որ պետք է ցրել այդ գնդերը և նրանց զեկավարներին տված կոչումները ետ վերցնել, քանի որ նրանք ռազմական կրթություն չունենալով, գցում են զինվորական կոչման պատիվը։ Սակայն երիտթուրքերը այդ քայլը չկատարեցին։

Արևմտյան Հայաստանի և Թուրքիայում ապրող հայերի մոտ

---

1 Գյուտ եպս. արխիվ, թղթ. 48—87, վավ. 81, թ. 59։

2 Ալիևի նշվ. աշխ., էջ 4։

ավելի ու ավելի էր ուժեղանում հիասթափությունը և նրանք զգում էին, որ շատ բան չի փոխվել աբդուլհամիդյան ռեժիմից։ Նրանք հասկացան, որ Արևմտյան Հայաստանը ինքնավարություն չի ստանա։ Այն անիրագործելի մի խնդիր է։ Այստեղից էլ կործանվեց, խորտակվեց նրանց հավատը երիտթուրքերի նկատմամբ։

Հայերին և մնացած ժողովուրդներին ավելի էր զայրացնում սահմանադրության 8-րդ կետը, որտեղ հայտարարվում էր աշխարհով մեկ թուրքական պետության տերիտորիայում ապրող ազգերի ձուլման և մեկ օսմանյան ազգ ստեղծելու մասին։ Այդ կետում ասված է. «Օսմանյան կայսրության բոլոր հպատակներն առանց խտրության կը կոչվին օսմանցի, ինչ ալ որ ըլլա անոնց դավանած կրոնը»[1]։

Երիտթուրքերը իշխանության գլուխ անցնելուց հետո շատ շուտով մոռացան իրենց խոստումները ազատության, հավասարության և եղբայրության մասին և սկսեցին ենթակա ազգերի և ժողովուրդների նկատմամբ ավելի վատթար քաղաքականություն վարել։ Սելանիկում 1911 թ. գումարված երիտթուրքերի համաժողովի մեջ Թալեաթն ասաց. «Համաձայն սահմանադրության, բոլոր թրքահպատակները, թե՛ մուսուլման, թե՛ քրիստոնյա, հավասար են օրենքի առաջ։ Բայց դուք գիտեք ինքներդ, որ այդ անիրագործելի է։ Այդ գաղափարը նախ և առաջ կը հակասե շարիաթին, կը հակասե անոր և մեր անցյալը։ Անոր դեմ կը բողոքե հարյուր հազարավոր հավատացյալներու զգացմունքը։ Թուրքիո մեջ հավասարության մասին այն ատեն միայն կարելի է խոսիլ, երբ բոլոր տարրերն ալ կը ձուլվին, օսմանցի կը դառնան»[2]։

Այնուհետև այդ ժողովը որոշեց. «1. Ըստ բնության օրենքներուն, ստորադաս ցեղերը պետք է գերադաս ցեղերուն կերն ըլլան։

2. Ջարդելը աղնվականության ցասումն է անարդ ցեղերուն դեմ, որոնք նկատված են իբրև վտանգավոր թշնամիներ։

3. Անգամ մը որ որոշված է, ջարդերու ծրագիրը պետք է գործադրել ամբողջությամբ, առանց որևէ մեկի ազդվելու և առանց տարվելու զգացական պարագաներե։ Անգթություն չէ

---

1 Թուրք սահմանադրությունը և երիտասարդ թուրք կուսակցությունները, Թիֆլիս, 1908, էջ 11։

2 Մուշեղ եպիսկոպոս, Հայկական մզձավանջը. քննական վերլուծումներ, Պոստոն, 1916, էջ 42։

ասիկա, այլ դերադաս տարրի մը ոգիին արիասրտությունը։

4. Զինվորական անհրաժեշտություն մըն է ժողովուրդներու ջարդը, առանց տարիքի և սեռի խտրության։

5. Թշնամի ցեղի մը՝ մանուկները ջարդելը կանխարգել միջոց մըն է ազգային պաշտպանության։

6. Իրենց մայրերու արգանդներուն մեջ իսկ ապրելու անարժան են այս մանուկները, իբրև աստվածամերժ շառավիղներ։

7. Կայսրության գոյությունը կախում ունի երիտասարդ Թուրք (ժեոն Թուրք) կուսակցության ուժեն և բոլոր հակամարտ գաղափարներու զսպումեն»[1]։

Երիտթուրքերի վարչակարգը հարկադրեց արևմտահայերին կրկին բռնել արտագաղթի ճամփան։ Արտագաղթում էին ոչ միայն հնաբնիկները, այլև գաղթադարձից նորերս վերադարձածները։

Առհասարակ ամբողջ XIX դարի երկրորդ կեսի մեր գրականության մի զգալի մասը, ապա պարբերական մամուլը, լի են աշխատություններով, պատմվածքներով, հոդվածներով, որոնք նպատակ ունեին պանդխտության դեմ պայքարել, այն կանխել։ Սակայն պանդխտությունը տասկ կոչերով ու ցանկություններով կանխելը անհնարին էր, քանի որ անհրաժեշտ էր ամենից առաջ վերացնել այն պատճառները, որոնք ստիպում էին գյուղացուն թողնել իր տունն ու տեղը, իր կնոջն ու երեխաներին և գնալ օտարության։ Անհրաժեշտ էր գյուղում թեթևացնել հարկերը, ստեղծել նորմալ պայմաններ գյուղացիների համար, մի բան, որ չարվեց երիտթուրքերի տիրապետության ժամանակ, այդ էր պատճառը, որ նրանց իշխանության ժամանակ էլ շարունակվեց այս անդամ արդեն ընտանիքներով արտագաղթը հայրենի երկրից և հայաբնակ վայրերից։ Թուրքական հեղափոխությունը, ինչպես ասացինք, խորը և սոցիալական հարցեր չլուծեց և չէր էլ կարող լուծել։ Այն չկարողացավ վերացնել երկրում տիրող թունալից մթնոլորտը։

Այսպիսով, 1908 թ. հեղափոխության հաղթանակի հետևանքով, թեև Թուրքիան դարձավ սահմանադրական միապետություն, սակայն նրա տիրապետության տակ ընկած ժողովուրդները և առանձնապես արևմտահայ ժողովուրդը նորից մնացին տառապանքների ծովում։

---

[1] Կարո Գևորգյան, *Ամենույն տարեցույցը*, Պեյրութ—Լիբանան, 1965, էջ 178—179։

Գլուխ վեցերորդ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (1914—1918 ԹԹ.)։ ՄՈՒՇԻ ԵՎ ՍԱՍՈՒՆԻ 1915 Թ. ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ

XIX դարի վերջին Օսմանյան Թուրքիան վերջնականապես թեքվեց դեպի գերմանական իմպերիալիզմը, որը առաջադրում էր աշխարհի քաղաքական քարտեզը պատռելու, նորը գծելու, աշխարհի հողերը վերաբաժանելու հարցը։ 1898 թ. գերմանական կայսր Վիլհելմ II Կոստանդնուպոլսում էր։ Այդ հանդիպումների ժամանակ նա ամեն ինչ անում էր իմպերիալիստական Գերմանիայի հարցերը Թուրքիայում կարգավորելու համար։ Գերմանական կայսրը Դամասկոսում արտասանած իր ճառում ասաց. «Թող սուլթանը և երեք հարյուր միլիոն մահմեդականները, որոնք ի դեմս սուլթանի (Համիդ) կը հարգեն իրենց խալիֆան, համոզված ըլլան, որ գերման կայսրը ամենուրեք ու ամեն ժամանակ կը դառնա անոնց բարեկամը»[1]։ 1908 թ. թուրքական հեղափոխության նախօրյակին, իր երկրի շահերից ելնելով, Վիլհելմ Երկրորդը նորից այցելեց Թուրքիա։ Այս արդեն մի ժամանակաշրջան էր, երբ իմպերիալիստական պետությունները աշխարհը վերաբաժանելու համար պետք է սկսեին առաջին համաշխարհային պատերազմը։

Պատերազմի նախօրյակին Ռուսաստանը նպատակադրվել էր նոր տերիտորիաներ գրավել։ Լենինը իր մի շարք հոդվածներում մանրամասն շարադրեց ու մերկացրեց պատերազմի իմպերիալիստական բնույթը և ցույց տվեց, որ շովինիստների աղաղակներն այն մասին, թե իրենք պայքարի են դուրս եկել «հայրենիքի պաշտպանության» համար, սուտ է։ Վ. Ի. Լենինը միաժամա-

---

1 Հրաչեա Գանգրունի, *Հայ հեղափոխությունը օսմանյան բռնատիրության դեմ (1890—1910), Պեյրութ, 1973, էջ 15։*

նակ նշեց, որ «Ռուսաստանի 170 միլիոն բնակչությունից մոտ 100 միլիոնը ճնշված են ու իրավազուրկ։ Ցարիզմը պատերազմ է մղում Գալիցիան գրավելու և ուկրաինացիների ազատությունը վերջնականապես խեղդելու համար, Հայաստանը, Կոստանդնուպոլիսը գրավելու համար և այլն»[1]։

Ռուսաստանի վերը նշված նկրտումները դուր չէին գալիս եվրոպական պետություններին և առանձնապես գերմանական իմպերիալիստներին, որոնք ցանկանում էին իրենց դիրքերը ավելի ամրապնդել Թուրքիայում և պատերազմի ժամանակ գրավել ռուսական հողերի մի մասը։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ռուսական նավատորմը լավ վիճակում չէր գտնվում։ 1904 թ. ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ այն ուժեղ հարված էր ստացել։ 1912 թ. Պետական դումայում քննարկվեց երկրի նավատորմը ուժեղացնելու հարցը և որոշվեց 50 միլիոն անգլիական ոսկի տրամադրել նավաշինության զարգացման համար[2]։ Այդ պլանով նախատեսվում էր մինչև 1917 թվականը նավատորմը ուժեղացնելու համար զգալի աշխատանքներ տանել, սակայն, երբ երկու տարի անց սկսվեց պատերազմը, այդ պլանը հիմնականում մնաց թղթի վրա։

Պատերազմից առաջ Արևմտյան Հայաստանում և հայաբնակ վայրերում հայկական բնակչության դրությունը օր օրի վրա ավելի օրհասական էր դառնում։ Եվրոպական պետությունները Ռուսաստանի պահանջով սկսեցին մշակել բարենորոգումների ծրագրեր, որը իր հիմքում ուներ պահպանել «Օսմանյան կայսրության անձեռնմխելիությունը», «պահպանել Թուրքիայի ամբողջության սկզբունքը»[3]։ Այդ ժամանակաշրջանի դիվանագիտական փաստաթղթերի ուսումնասիրությունից անմիջապես երևում է, որ նոր կազմված նախագծերի հիմքում պետք է դրվեին 1894—95 թթ. կազմած նախագծերը։ Այս գործում ամենից շահագրգռված պետությունը Ռուսաստանն էր։ Բեռլինի ռուսական գեսպանի 1913 թ. 6(19) հունիսի գրությունից Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրին երևում է, որ բարենորոգումները կենսագործե-

---

1 Վ. Ի. Լենին, Երկ, հատ. 26, էջ 387։

2 Պատմություն համաշխարհային պատերազմի և հայկական հարցը, հ. առաջին, Կ. Պոլիս, 1919, էջ 35։

3 Հայաստանը միջազգային դիվանագիտության փաստաթղթերում, էջ 193—194։

լիս այնպես պետք է արվեր, որպեսզի «խուսափել այն ամենից, որ կարող է հակասել ինչպես սուլթանի վեհապետական իրավունքին, նույնպես և թուրքական կայսրության հողային ամբողջության սկզբունքին»[1]։

1914 թ. ապրիլի վերջերից Ամենայն հայոց կաթողիկոսը ստանում է Ն. Խարախանյանի զեկուցագրերը հայ ժողովրդի Տարոնի հատվածի ծանր վիճակի մասին։ Զեկուցագրերից մեկի մեջ, որը գրված է 1914 թ. ապրիլի 27-ին ասված է. «Գավառիս մեջ քուրդերու կողմը ամենեն շատ կընեղվին Սասունի, Մոտկանի և Խոյթի հայերը... Խոյթի հայերու վիճակը ավելի ևս անտանելի է երեսաց պալաքցի աշիրեթներու, անցյալ տարի տեղվոյն Լաուավարական պաշտոնյան հայերու հացահատիկները բռնությամբ քաշելով տվավ քուրդերուն, հայերը մատնվեցան ամենաթշվառ վիճակի մը»[2]։ Այնուհետև այնտեղ նշվում է, որ պալաքցի քրդերը սկսել են ուժեղացնել ժողովրդի նկատմամբ իրենց բռնությունները և շինականները չեն կարող «ազատ, համարձակ դաշտ ելնել, տավարներ, ոչխարներ արածացնելու տանել, լուծք ընել, իրենց հողերը մնացած են անմշակ, ափ մը սերմ գետին ձգած չեն, քուրդերը կը պահանջեն, որ հայերը մուրհակ տան հողերու արդյունքի կեսը իրենց տալու, ապա թե ոչ չպիտի թողուն արորը գետին դարնելու»[3]։

1914 թ. ձմռանը Խութի մյուդիրի փոխանորդ Մահմեդը ապանված գտնվեց իր բնակարանում, որը վերագրվեց Սասունի հայերին, որի պատճառով էլ Շենիկ գյուղի բնակիչներից 17 հոգի բանտ նետվեցին։ Այդ դեպքի կապակցությամբ Խութի մի շարք գյուղերի բնակիչների նկատմամբ սկսվեցին թուրքական իշխանությունների բռնությունները «և զինվորական օֆիցեր և մյուդիր հայերուն կը ստիպեն, որ քուրդերուն գոհացում տան, այսինքն իրենց հողերը քուրդերուն թողուն և իրենք վարձվեն իբր վարձկաններ»[4]։ Այնուհետև զեկուցագիրը նշում է այն մասին, որ «Սասունի մեջ քուրդերը կը շարունակեն հայերեն առնել խուֆիրություն անունով բռնավորական տուրքը»[5]։

Այդ օրերին «Արարատը» տպագրել է նույն համարում Ն.

---

1 Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում, էջ 208։

2 «Արարատ», մայիս, 1914, էջ 408։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը։

5 Նույն տեղը։

Խարախանյանի մեկ ուրիշ ղեկուցագիրը, որի մեջ նշվում է, որ Մոտկանից Մշո առաջնորդարան է հասնում «ցավոց ու հեծեծանոց ավելի խորունկ ու սրտառուչ արձագանք»[1]։ Նույն ղեկուցագրում Ն. Խարախանյանը դրել է Մոտկանի Գղեխ գյուղի ուսուցիչ Բենիամին Հլղաթյանի 1914 թ. հունվարի 16-ին գրած նամակի լրիվ տեքստը, որի մեջ նա նշում է, որ Գղեխի գյուղախումբը 20 հայկական գյուղ ունի, որի գյուղացիների հիմնական սնունդը կորեկն ու գիլգիլն է, սակայն գյուղացիների «բոլոր աշխատանքը քուրդ աղաներ կը հափշտակեն, բացի գողությամբ, ավազակությամբ տարածներեն, քուրդերը քանի մը տեսակ տուրք կառնեն, որոնց գլխավորն է խաֆիրությունը»[2]։ Ըստ այդ նամակի կառավարությունը չի պաշտպանում հայ գյուղացիներին, ընդհակառակը, ինքն էլ տարբեր տուրքեր է պահանջում հողագործներից և այդ ժամանակ «մյուլթեզիմներու շահատակությունները աննկարագրելի են։ Վերջապես այդ խեղճ հայերը գարունեն մինչև աշուն կաշխատեն միմիայն կշտացնելու համար դաղանաբարո մարդասպաններ, որ միշտ կը սպառնան զանոնք բնաջինջ ընել»[3]։ Գղեխի շրջանում հայտնի էր իր բարբարոս վարքագծով շեյխ Զեյնադինը, որը գրավել էր Մետեթաղը գյուղի «կալվածները առանց վճարելու, հիմա այդ գյուղի 34 արտերուն տիրելեն զատ, տիրած է բոլոր անտառներուն, արոտատեղերուն և ջրաղացքի մը, դեռ կը սպառնա ուրիշ կալվածներու ալ տիրել, գրաված կալվածներու տուրքերը աղքատ հայեր կը վճարեն, իսկ ինքը կը տանե բոլոր բերքերը, ամեն տարի գյուղի տասանորդ ինք կը վերցնե, ամբողջ տասանորդի գինը գյուղացիներեն գանձելեն վերջ կըսկսի չափել անոնց կալերը և տասանորդը իրեն կը սեփականացնե»[4]։

Վերևում բերված քաղվածքները ինքնըստինքյան ասում են այն մասին, թե ինչպիսի դառը և օրհասական վիճակում էր գտնվում հայ գյուղացին առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, այն գյուղացին, որ 1908 թ. թուրքական հեղափոխությունից հետո հույս ուներ կյանքի բարելավում ստանալ։

Առաջին համաշխարհային սպանդի նախօրյակին հրապարակ եկավ Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանության աշխա-

---

1 «Արարատ», մայիս, 1914, էջ 411։

2 Նույն տեղը, էջ 412։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը, էջ 412—413։

տակից Մանդելշտամի նախագիծը հայկական մի նահանգ կազմելու մասին։ Սակայն եվրոպական պետությունները, առանձնապես Գերմանիան, համաձայն չէին այս նախագծին։ Երկար քննարկումներից հետո այն աղճատվեց և 1914 թ. հունվարին կազմվեց ռուս-թուրքական մի նոր նախագիծ հայկական բարենորոգումների մասին, ըստ որի վեց վիլայեթներից պետք է կազմվեր երկու սեկտոր, որոնցից առաջինի մեջ պետք է մտնեին Էրզրումի, Տրապիզոնի և Սվազի, իսկ երկրորդում՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթները։ Պատերազմի սկսվելու հետ միասին այդ համաձայնագիրը մնաց թղթի վրա։

Ամենայն հայոց կաթողիկոսը գրում է. «Գերհարգ կոմս Իլարիոն Իվանովիչին» մի նամակ, որի հայերեն և ռուսերեն տեքստերը գտնվում են արխիվում։ Գովեստի խոսքեր ասելով Կովկասի փոխարքայի հասցեին, կաթողիկոսը իր ջերմ երախտագիտությունն է հայտնում նրան և ապա ասում է. «Ավելորդ է ինձ խնդրել Ձեզ ապագայում ևս օգնության հասնելու իմ բազմատանջ հոտին», ապա ավելացնում է. «Բայց ես վերապահում եմ ինձ իրավունք այսուհետև ևս դիմել Ձեզ խորհրդի և օգնության, երբ հայտարարված բարենորոգումները կհանդիպեն իրագործման ժամանակ սովորական արգելքների օսմանյան կառավարության կողմից»[1]։

Առաջին համաշխարհային պատերազմը սկսվեց, սկզբնական շրջանում գերմանական զորքերը հաջողությունների մեջ էին։ Նրանք գրավեցին Բելգիան և Ֆրանսիայի մի մասը։ Այդ հանգամանքը ավելի արագացրեց երիտթուրքերի կառավարության շրջադարձը դեպի Գերմանիան։ Ռուսաստանի դիվանագիտական աշխատակիցների բանակցությունները Կոստանդնուպոլսում Թուրքիայի չեզոք մնալու մասին իզուր անցան։ Չնայած ռազմական տեսակետից իր ողբալի վիճակին, առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Թուրքիան նույնպես ուներ իր պլանները։ Երիտթուրքերը ահագին աշխատանք էին տարել ժողովրդի մեջ իրենց պանթյուրքիստական գաղափարները տարածելու գործում։ Այդ գաղափարախոսությունն իրենց էմիսարների միջոցով նրանք գաղտնիորեն պրոպագանդում էին Կովկասում և Անդրկովկասում, նպատակ ունենալով հարձակվել Ռուսաստանի վրա և խլել նրանից Կովկասն ու Անդրկովկասը։ Թուրքական իմպե-

---

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 1172, թ 27։

բիալիզմը ձգտում էր նաև դեպի Միջին Ասիա։ Այս շովինիստա-կան ծրագրերը կոչվում էին «Մեծ Թուրան»։ Նրա սահմանները տարածվում էին Իսպանիայից մինչև Չինաստան։ Սակայն նրանց պլանները կառուցված էին ավազի վրա։ Այդ պլանը երիտթուրքերը, ինչ խոսք, ցանկանում էին կենսագործել կայսերական Գերմանիայի օգնությամբ, նրա իրագործման ճանապարհին որպես մի խութ ընկած էր մի ազգ, որին հնարավոր էր շարքից հանել, քանի որ նա դարեր շարունակ ռուսական կողմնորոշում ուներ և ձգտում էր միանալ Ռուսաստանին կամ նրա օգնությամբ ինքնավարություն ստանալ։

Պատերազմի նախօրյակին ցարիզմը ցանկանում էր ամեն գնով մերձենալ երիտթուրքերի հետ, հրաժարվել հայկական հարցից, ոչ մի օժանդակություն ցույց չտալ «հայկական ազգային հոսանքներին»։ Ռուսական ցարիզմը չէր ցանկանում ապագա պատերազմում երկու ճակատով կռվել։ Ռուսաստանի արտաքին գործոց մինիստր Սազոնովը 1914 թ. հուլիսի 30 (օգոստոսի 12-ին) Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանին գրում էր. «Թուրքիայի շահերը նրան դրդում են ոչ միայն մերձենալ, այլև դաշինք կնքել Ռուսաստանի հետ։ Այդ դաշինքը Ֆահրեդդինի կարծիքով պետք է խարսխված լինի հետևյալ հիմքերի վրա։

Թուրքիան չի ձգտում որևէ հողային հավելումների, բայց ցանկանում է իր տերիտորիալ անձեռնմխելիության ապահովումը։ Նա իր բանակը կգնի Ռուսաստանի տրամադրության տակ, եթե այս պատերազմում՝ առաջանա այդպիսի անհրաժեշտություն։

Փոքր Ասիայում Գերմանիայի երկաթուղային և բոլոր այս կոնցեսիաների սեփականացումը կհանդիսանար այն վարձահատուցումը, որ ցանկանում է Թուրքիան։

Թացի դրանից, Բ. Դոանը պետք է հավաստիացվի, որ Ռուսաստանը խոստանում է (այնուհետև ջնջված է՝ «հրաժարվում է իր պահանջներից հայկական հարցում և»), պարտավորվում է չօժանդակել ազգայնական հայկական հոսանքներին, որովհետև Թուրքիան երկյուղ է կրում հայկական մարզերի նկատմամբ Ռուսաստանի ըղձանքներից»[1]։

Այդ փաստաթուղթը հավաստում է այն մասին, որ ցարական կառավարությունը, ելնելով իր երկրի շահերից, տարբեր ժամանակ հայկական հարցին մոտեցել է տարբեր միտումներով։

---

[1] Հայաստանը միջ. դիվ. փաստաթղթերում..., էջ 866։

Սակայն շատ չանցած, երբ Թուրքիան վերջնականապես անցավ Գերմանիայի կողմը, ռուսական կառավարական գործիչները սկսեցին հայկական հարցի կապակցությամբ խոստումներ անել հայկական գործիչներին, նրանց ջանքերով պետք է հրապարակային կամավորական ջոկատներ, որոնց ղեկավարությունը պետք է անցներ այն մարդկանց ձեռքը, որոնցից շատերին ցարիզմը դատել էր և բանտ նետել։

Սկսած 1910 թ. երիտթուրքերը գերմանական սպաների միջոցով մեծացնում և մարզում էին իրենց բանակը։ 1913 թ. արդեն Թուրքիայում էր գտնվում գերմանական գեներալ Լիման ֆոն Սանդերսի ռազմական միսիան, որի անդամների թիվը հասնում էր հարյուրավոր սպաների։ Գերմանական սպաները մարզում էին թուրքական բանակը, ուշադրություն դարձնելով հատկապես այն զորամասերի վրա, որոնք գտնվում էին անդրկովկասյան սահմանների մոտ։ Այս շատ կարևոր էր գերմանական ՝իմպերիալիզմի համար, քանի որ պատերազմի դեպքում Ռուսաստանը ստիպված պետք է լիներ կռվելու երկու ճակատով։ Սկզբնական շրջանում Լ. ֆոն Սանդերսը ընդունեց Կոստանդնուպոլսի առաջին բանակի հրամանատարությունը, այնուհետև տոնացավ թուրքական մարշալի կոչում և նշանակվեց թուրքական զորքերի հրամանատար։ Այսպիսով թուրքական բանակը դրվեց գերմանական հրամանատարության տրամադրության տակ, որի աչքից չվրիպեցին նաև քրդական զորագնդերը, որոնք նույնպես խնամքով զինվեցին և նախապատրաստվեցին ապագա պատերազմին մասնակցելու համար։ 1914 թ. հոկտեմբերին Ռուսաստանի հետ պատերազմ սկսելու նախօրյակին թուրքերը Էրզրումի մոտ ունեին 400-հազարանոց մի բանակ, 80 գաշտային, 50 լեռնային հրանոթներով և 50 գնդացիրներով[1]։

Պատերազմը սկսվելուց հետո Անգլիային նույնպես հետաքրքրում էր դաշնակիցների նկատմամբ Թուրքիայի գրաված դիրքի հարցը։ Անգլիական կառավարությունը հարցում արեց, թե «Սուլթան Օսման» մարտանավը, որը պատվիրված էր Անգլիայում, կառուցվելու է թե ոչ։ Թուրքիան դրական պատասխան տվեց։ Մեծ վեզիրը ամեն տեսակ հավաստիացումներ էր անում անգլիական և ռուսական դիվանագետներին Թուրքիայի չեզոքության մասին։ Սակայն, երբ սկսվեց պատերազմը, օգոստոսի

---

1 Տես՝ Մ. Արզումանյան, *Հայաստանը 1914—1917, Ե., 1969,* էջ 149։

առաջին շաբաթվա-ընթացքում Դարդանելը ականապատվեց, և ոչ մի նավ այնտեղից անցնել չէր կարող։

Դեռևս 1914թ. հուլիսի 31-ին (օգոստոսի 13-ին) թուրքական լրագրերը տպագրեցին սուլթանի հրովարտակը և ռազմական մինիստր Էնվեր փաշայի հաղորդագրությունն այն մասին, որ Թուրքիան ցանկանում է խաղաղ ապրել և չի ցանկանում որևէ պետության հետ կռվել։ Այս, ինչ խոսք, դիվանագիտական մի խաղ էր։ Սուլթանի հրովարտակում նշված էր. «Իմ կառավարությունը ցանկանում է ապրել խաղաղության մեջ։ Ես համոզված եմ, որ բարձրյալի ողորմությամբ, մարգարեի երկնային աջակցությամբ և իմ ժողովրդի հայրենասիրությամբ մենք կարող ենք պաշտպանել մեր երկիրը և մեր իրավունքները ամեն տեսակ հանգամանքներում։ Եվ իմ ողջույններն եմ ուղղում իմ որդիներին։ Ես ցանկանում եմ, որ իմ որդի զինվորները բացարձակ հնազանդություն ցույց տային իրենց գլխավորներին։ Գլխավորների խոսքերը պետք է կատարվեն այնպես, ինչպես իմ խոսքերը։ Հարկ եղած դեպքում զինվորները որպես մի մարդ պետք է գնան մահվան դեմ։ Ես վստահ եմ իմ զորքի վրա, որ նա եռանդով ու քաջությամբ կը կատարի իր պարտքը»[1]։

Այս փաստաթուղթը ասում է այն մասին, որ սուլթանը կռվի կոչ էր անում, չնայած նրա սկզբում խաղաղության մասին եղած հավաստմանը։ Թուրքական ռազմական մինիստր Էնվերը նախապատրաստվում էր Անդրկովկաս արշավելու համար։ Սեպտեմբեր ամսին Թուրքիա ժամանեցին 4000 գերմանական սպաներ և զինվորներ, իսկ հոկտեմբերին թուրքական ռազմանավերը խորտակեցին ռուսական «Դոնեց» պահականավը, լուրջ վնասեցին ֆրանսիական մի նավի, ռուսական երեք շոգենավի և ռմբակոծեցին Թեոդոսիա քաղաքը։ 1914 թ. հոկտեմբերին պատերազմը սկսելու պահին թուրքական բանակի թիվը հասնում էր մոտ մեկ միլիոնի, որից կես միլիոնը մարզված զինվորներ էին[2]։

Համաշխարհային պատերազմից առաջ, ինչպես ասվեց, Բ. Դուռը ընդունել էր հայկական գավառներում անցկացվելիք բարենորոգումների ծրագիրը։ Եվրոպական պետությունների կողմից նշանակվեցին Արևմտյան Հայաստան մեկնող ներկայա-

---

1 «Մշակ», №186, 24 օգոստոսի 1914։

2 Տե՛ս Պատմություն համաշխարհային պատերազմի..., էջ 305։

ցուցիչներ հոլանդացի Վեստենենկը և նորվեգացի Հոֆը։ Վերջինս արդեն Հայաստանում էր և անցել էր իր պարտականությունների կատարմանը, երբ սկսվեց առաջին համաշխարհայինը։ Այն լաբի նման գեն նետեց բոլոր տեսակի բարենորոգումների ծրագրերը, և աշխարհում հարցերը սկսեցին լուծվել զենքի և արյան միջոցով, միլիոնավոր մարդկանց կյանքի գնով։

Ռուսաստանի բոլոր ձգտումները Թուրքիային չեզոք պահելու հարցում արդյունքի չհասցրին, պատերազմը երկու պետությունների միջև սկսվեց։ Գերմանական «Գեբեն» և «Բրեսլաու» նավերն անցան նեղուցները և ներխուժեցին Սև ծովի ջրերը։ Գերմանական ադմիրալ Սուշոնը գրավեց գերմանա-թուրքական ծովային ուժերի հրամանատարի պոստը։ 1914 թ. վերջերին թուրքական հրամանատարությունը Կովկասյան ճակատում մեծ ուժեր կուտակեց և խնդիր դրեց Սարիղամիշի մոտ հարված հասցնել ռուսական բանակին, ներխուժել Անդրկովկաս, գրավել Թիֆլիսը, իսկ բանակի աջ թևը պետք է գրավեր Իրանական Ադրբեջանը, ապա Ջուլֆան, Գյանջան, հետո Բաքուն, իսկ այնտեղից էլ շարժվել Հյուսիսային Կովկաս։ Ահա այս «պլանով» էր ապրում և շնչում գերմանական ռազմական կրթություն ստացած Էնվեր փաշան։ Սակայն այդ «պլանը» շատ կարճ ժամանակամիջոցում օճառի պղպջակի նման պայթեց, դնելով նրա կողմնակիցներին ու ոգևորողներին շատ ծանր վիճակում։ Նախ հենց այս «պլանի» կենսագործման սկզբից թուրքերին չմիացավ արաբական աշխարհը։ Ընդհակառակը այն սկսեց ազգային-ազատագրական պայքարը Թուրքիայից անջատվելու համար, իսկ մնացած մուսուլմանների մեծ մասը չմիացավ Թուրքիային։

1914 թ. վերջին Թուրանական մեծ պետություն ստեղծելու հարցը վերջնականապես թաղվեց, երբ թուրքական բանակը խայտառակ պարտություն կրեց Սարիղամիշի տակ։ Այդ ճակատամարտից հետո թուրքական բանակի զինվորների և սպաների մեջ տարածվեցին հետևյալ թևավոր ասացվածքները. «Գնացինք Տամբատ՝ բրինձ բերելու, տանը գտնված ձավարն էլ կորցրինք» կամ «դու մի թափառաշրջիկ գնչու ես, ինչի՞ դ է պետք արծաթ զուռնա»[1]։ Թուրքական բանակի բարոյաքաղաքական վիճակը շատ վատ էր, խիստ անբավարար մատակարարումը, նրան

[1] Մի թուրք սպայի հիշատակարանից, Թիֆլիս, 1917, էջ 10։

ջատ վատ դրության մեջ էր դրել նաև Սարիղամիշի 40 աստիճանից ավելի ցուրտը։

Թուրքական բանակի բարոյական ծանր վիճակի մասին է հավաստում Սարիղամիշում գերի ընկած մի թուրք ծերունու հետևյալ խոսքերը. «Ես այդ տխմար ջահիլներին ասացի. «Դեռ, մորուքիս մազերի միջից չի անհետացել ռուսի վառոդի ծխի հոտը», բայց ապուշները ո՛չ ոքի չը լսեցին։ Ես նրանց կրկնեցի, թե «տղե՛րք, ռուսի ռումբն ու զազախի թուրը հարսանիքի տանը ուտելու հալվա չէ». ինձ ծաղրեցին։ Դե՞հ, կերա՞ք, պրծա՞ք, հիմի քաշեցեք հավիտենական տանջանքները»[1]։

Երիտթուրքերի ներկայացուցիչները՝ Նեջի, Խալիլ և Շաքիր բեյերը 1914 թ. հունիսին մասնակցեցին դաշնակցականների Էրզրումի 8-րդ պատգամավորական ժողովին։ Նրանք ցանկանում էին, որ ամբողջ հայ ժողովրդի երիտասարդությունը լիներ թուրքական բանակում։ Ապա առաջարկում էին արտասահմանյան հայերից կազմակերպել կամավորական ջոկատներ և դնել թուրքական հրամանատարության տրամադրության տակ։ Սակայն ո՞ր հայը կգար արտասահմանից թուրքական դրոշի տակ՝ որպես կամավոր կռվելու Ռուսաստանի դեմ։ Այս անհնարին մի հարց էր, որը անկախ որևէ մեկի ցանկությունից երբեք չէր լուծվի։ Վերջապես երիտթուրքերը առաջարկում էին Արևելյան Հայաստանում ռուսական պետության դեմ կազմակերպել ապստամբություն, հարվածել ռուսական բանակի թիկունքից և եթե պատահի այնպես, որ երիտթուրքերը հաղթանակեն և Անդրկովկասը գրավվի, ապա նրանք խոստանում էին «Արարատյան Հայաստանը ինքնավար դարձնել օսմանյան դերիշխանության տակ»[2]։

Ուրեմն վերը նշված պայմանների կատարումով, այն էլ Արևելյան Հայաստանում, եթե իրագործվեր երիտթուրքերի անհիմն պլանները, հայերը կստանային ինքնավարություն թուրքական պետության սահմաններում, իսկ Արևմտյան Հայաստա՞նը, նրա հոծ բնակչությու՞նը, այդ մասին երիտթուրքերը լռում էին։ Նրանց այս հարցադրումներից հետո էլ Էրզրումի պատգամավորական ժողովը որոշեց. «Տաճկահայաստանը հավատարիմ կմնա Թուր-

---

1 «Մշակ», №5, 10 հունվարի 1915։

2 Կ Սասունի, Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914—1918), Բոստոն, 1927, էջ 22։

քիո, կենթարկվի պարտադիր զինվորական պարտականության և լիովին կկատարե իր պարտքը հանդեպ պետության»[1]։

Ա. Դարբինյանի հուշերում Էրզրումի 8-րդ պատգամավորական ժողովի մասին կա հետևյալ տեղեկությունը, որ թուրքերը պահանջեցին դաշնակցականներից. «Կամավորներ տվեք մեզ Ռուսիո դեմ կռվելու համար։ Կովկասին տիրապետելե հետո հայերուն ինքնավարություն կուտանք, առաջարկեցին իթթիհատական պատգամավորները»[2]։

Այնուհետև Երիտասարդ թուրքերի ներկայացուցիչները Վանի վրայով ցանկացան անցնել Պարսկաստան և տեղի մուսուլման բնակիչներից Ռուսաստանի դեմ կամավորներ հավաքագրել։ Սակայն նաչի բեյը նոր էր հասել թուրք-պարսկական սահմանին, երբ սկսվեց ռուս-թուրքական պատերազմը։ Պարսկաստանի մուսուլման բնակչությունը կամավորներ չտվեց թուրքական բանակին։

Պատերազմի սկսվելուց հետո հայ ժողովուրդը ինչպես միշտ, այս անգամ էլ կողմնորոշվեց դեպի Ռուսաստանը։ Նրա ազգայնական կուսակցությունները գիտեին, որ գերմանական կայսրությունը պաշտպանում է թուրքական կառավարությանը, կապիտալ ունի ներդրած Թուրքիայում, նրա բանակին զենք է մատակարարում և վերջապես 1914 թ. պատերազմի նախօրյակին բարյացակամ վերաբերմունք չուներ դեպի հայկական հարցը, մի բան, որ ամբողջ հայության առջև կանգնած էր իր ամբողջ հասակով և անցյալի տխուր ու անլուծելի պատմությամբ։ Բնական է, որ հայ ժողովուրդը չէր կարող կայզերական Գերմանիայի և նրա ոտքերին փարվող Թուրքիայի հետ կապել իր արևմտահայ եղբայրների ազատագրության հարցը։ Վերջապես կար մի մոմենտ ևս, որ ավելի էր դյուրացնում ազգայնական կուսակցությունների անցումը ցարիզմի կողմը։ Ամբողջ XIX դարի ռուս-թուրքական պատերազմների ժամանակ հայ ժողովուրդը եղել էր Ռուսաստանի հետ։ Այսպես հայկական ազգայնական կուսակցությունները և հայ մտավորականությունը (բացառությամբ բոլշևիկյան կու-

---

1 Կ. Սասունի, *Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914—1918)*, Բոստոն, 1927, էջ 23։

2 Արտակ Դարբինյան, *Հայ ազատագրական շարժման օրերին (հուշեր, 1890—1940)*, Փարիզ, 1947, էջ 250։

սակցության), ցանկանում էին ցարիզմի հաղթանակը, որից հետո, նրանց կարծիքով, կսկսվի հայկական նոր արևածագը և կստեղծվի հայկական ինքնավար պետություն։

Անցած երկու դարի փորձը և ազատագրվելու հույսերը հայերին մղեցին դեպի Ռուսաստանը։ Իսկ Թուրքիայի հետ լինելու մասին նրանք լսել անգամ չէին ցանկանում։ Հինգ հարյուր տարվա խոշտանգումները, ազգային արժանապատվության նվաստացումները երբեք ու երբեք չէին կարող մղել հայ ժողովրդին դեպի Թուրքիան՝ ընդդեմ Ռուսաստանի, այդ անհնարին էր և անիրագործելի։

Պատերազմից առաջ Թիֆլիսում գործում էր հայկական բյուրո (դաշնակցական), որը պատերազմը սկսվելու հետ միասին դարձավ ցարիզմի և նրա փոխարքա Վորոնցով Դաշկովի կցորդը։ Սակայն որպեսզի բյուրոն ազգի անունից գործող մի օրգանի վերածվեր, հարկավոր էր նրա գործունեությանը մասնակից դարձնել Ամենայն հայոց կաթողիկոսին։ Հայ ժողովրդի ինքնուրույնության կորստից հետո Ամենայն հայոց կաթողիկոսությունը մի հաստատություն էր, որը երբեմն կարողանում էր բանակցություններ մեջ մտնել ռուսական կառավարության և եվրոպական պետությունների գործիչների հետ։

Պատերազմի հենց սկզբից Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ը 1914 թ. օգոստոսի 5-ին մի նամակով դիմեց Կովկասի փոխարքա Վորոնցով Դաշկովին, նկարագրեց արևմտահայերի անասելի ծանր վիճակը, խնդրեց Արևմտյան Հայաստանից ստեղծել մի ինքնավար նահանգ, Ռուսաստանի կողմից նշանակված կառավարիչով և հսկել, որ մինչև այդ նախատեսված բարենորոգումներ կատարվեն։ Հայոց հոտի հովվապետը այս նամակում, ինչ խոսք, ոչ մի արտահայտություն չէր անում այդ նահանգը Ռուսաստանին միացնելու մասին։

Վորոնցով Դաշկովը 1914 թ. սեպտեմբերի 2-ին պատասխանում է կաթողիկոսին, որ նրա նամակը հանձնված է Մինիստրների խորհրդի նախագահին։

1914 թ. սեպտեմբերի 17-ին ցարը ուղղեց մի կոչ հայ ժողովրդին, որի մեջ ասվում էր, թե «Հայերը հինգ դարերու բրոնապետական լուծե մը հետո, որու ընթացքին ձերիններեն այնքան զոհեր ինկան և որուն տակ ձերիններեն շատերը կը կրեն տակավին էն գեշ անարգանքները, ահա հնչեց վերջապես ձեզի

համար ազատության ժամը»[1]։ Կոչի մեջ ցարը հիշում է նաև Լազարևի, Լոռիս-Մելիքովի անունները և հորդորում է հայերին ինչպես դարեր հավատարիմ են եղել, այդպես էլ հավատարիմ մնան ռուսական տերությանը։ Սակայն՝ի՞նչ էր խոստանում հայ ժողովրդին ցարը, այդ մասին նրա կոչում ոչ մի խոսք չէր ասված։

1914 թ. սեպտեմբերին Փոխարքան կաթողիկոսին հասկացնում էր, որ հայկական ազգայնական կուսակցությունները այնպես պետք է գործեն, որ առիթ չտան Թուրքիայի հետ ընդհարման։ Փոխարքան չէր մոռանում ասել նաև, որ Թուրքիայում պետք չէ կազմակերպել հայկական ապստամբություններ։ Միաժամանակ Վ. Դաշկովը առաջարկում էր կաթողիկոսին, որ ինչպես Ռուսաստանի, այնպես էլ արտասահմանյան հայերը պատրաստ լինեն կատարելու այն հանձնարարությունները, որ իր կողմից կտրվեն[2]։ Ավելի պարզ ասած, հայկական հարցը կախված էր ցարական կառավարության և նրա զորքերի առաջխաղացումից և հաղթանակից, ցարական կառավարության կամքից և նրան ձեռնտու լինելու կամ չլինելու հանգամանքից։

Պատերազմը սկսվելու հետ միասին Թուրքիայում սկսվեց զորահավաքը։ Թուրքական բանակի մեջ զորակոչվեցին 18-ից մինչև 45 տարեկան հայ տղամարդիկ։

Հայ ժողովրդի արևմտյան հատվածի համար այս պատերազմը մյուսներից տարբերվում էր նրանով, որ նախորդ պատերազմների ժամանակ հայերից բանակ չէին վերցնում, եթե չհաշվենք փոքր թվով մասնագետներին, գրագետ մարդկանց։ Այս անգամ, սակայն, հարյուր-հազարավոր մարդիկ պետք է թողնեին իրենց տունն ու տեղը և մեկնեին դեպի անհայտություն։ Այս հանգամանքը, ինչ խոսք, ավելի դյուրին դարձրեց Թուրքական ատիճանավորների դաժան վերաբերմունքը դեպի հայ ժողովուրդը ինչպես գյուղերում, այնպես էլ քաղաքներում։ Իր նամակներից մեկում Սիամանթոն 1914 թ. օգոստոսի 26-ին գրում է. «Սոսկալի վիճակի մեջ ենք։ Ես, Թուրքերուն զինվո՞ր երթամ։ Ոչ։ Զիս փրկել կուզեն...», ապա օգոստոսի 31-ին մի ուրիշ նամակում շարունակում է. «Անցյալ օր ապահովագրած նամակ մը ղրկած եմ... Հոս դժոխային վիճակ է։ Ամբողջ ծաղիկ հայությունը զինվոր տարին։ Սուգ ամեն տուն։ Իմ եղբայրս ալ գնաց։

1 Ա. Դարբինյանի նշվ. աշխ., էջ 247։

2 Տե՛ս Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատոր երկրորդ (1901—1918), Վենետիկ, 1926, էջ 543։

Ամեն տուն անոթի և ամեն զինվոր անոթի։ Աննկարագրելի վիճակ թե հոս, թե գավառները։ Ժողովեն եկան։ Իմ պետելս հանգանակությամբ վճարեցին։ Ազատագրվեցա զինվորագրութենե, բայց պատվո խոսքես չեմ ազատած»[1]։

Պահպանված բազմաթիվ փաստաթղթերից երևում է, որ հայերը չէին ցանկանում կռվել թուրքական բանակի շարքերում ընդդեմ Ռուսաստանի։ 1914 թ. սեպտեմբերին Մարսելի հայ գաղութը կոչ արեց ֆրանսահպատակ հայությանը ոչ մի դեպքում կռվի չգնալ Ռուսաստանի դեմ։ Այդ կոչում ասված էր. «Ռուսաստանի՞ դեմ։ Բնավ և երբեք. մենք չենք գնա հրացան արձակելու Կովկասի մեր եղբայրների դեմ։ Բալկանյան պետությունների՞ դեմ, որոնց վերաբերմամբ մենք մեր համակրությունն ունենք։ Երբե՛ք»[2]։

Թուրքական պաշտոնյաները, օգտվելով պատերազմական վիճակից, գավառներում քամում էին ժողովրդի վերջին կոպեկները և քրիստոնյա բնակչությունից մեծ քանակությամբ բեղել էին վերցնում։ Այդ գումարով պետական պաշտոնյաները երիտասարդների մի մասին բանակից ժամանակավորապես ազատում էին։ Որպեսզի պատկերացնենք, թե պատերազմը սկսվելուց հետո ինչքան գումար էին վերցնում հայ բնակչությունից, ասենք, որ 1914 թ. օգոստոսին միայն Էրզրումի հայերից հավաքվեց 20, իսկ Քղիի հայերից՝ 5 հազար ոսկի[3]։ Եվ այսպես, թուրքական իշխանությունները շատ զինվորներ էին հավաքում հատկապես վեց վիլայեթներից, որտեղ քրիստոնյա բնակչությունը հարաբերական տեսակետից ավելի շատ էր մուսուլմաններից։ Այսպես, Էրզրումի նահանգում պատերազմից առաջ ապրում էին 250, Վանում՝ 185, Բիթլիսում՝ 180, Խարբերդում՝ 168, Դիարբեքիրում՝ 105, Սվազում՝ 165 հազար հայ բնակչություն կամ մեկ միլիոն 18 հազար հայեր, որը կազմում էր այնտեղ ապրող բնակչության 38 տոկոսը։ Վերը նշված վեց նահանգներում ապրում էին 666 հազար թուրքեր կամ 25 տոկոսը, 242 հազար նստակյաց և 182 հազար քոչվոր քրդեր։ կամ բնակչության 16 տոկոսը[4]։

---

1 Ս. Վրացյան, Հին թղթեր նոր պատմության համար, Թեյրութ, 1962, էջ 50։

2 «Մշակ», №214, 26 սեպտեմբերի 1914։

3 Տե՛ս Ս. Վրացյանի նշվ. աշխ., էջ 74—75։

4 Տե՛ս «Մշակ», № 41, 23 փետրվարի 1913։

1914 թ. վերջերին Սարիղամիշի մոտ թուրքական բանակի խայտառակ պարտությունից հետո, զինվորների մեջ սկսվեց մասսայական դասալքությունը։ Փախչում էին բոլոր ազգերի ներկայացուցիչները, որոնց գնդակահարելու սպառնալիքով պատերազմի դաշտ էին քշել երիտթուրքերը։ Կառավարությունը չէր կարող այս փաստի կողքով անցնել և սկսեց դիմել ամենախիստ միջոցների։ Ամենից առաջ թուրքական իշխանավորները բանակում զենք կրող հայ զինվորներին զինաթափեցին և օգտագործեցին կառույցների վրա, հետո հայտարարվեց, որ եթե փախստական զինվորները չվերադառնան, ապա դատի են տրվելու։ Մուշ քաղաքում ազդարարվեց, որ եթե որևէ մեկը փախստական զինվոր թաքցնի, ապա այրելու են նրա տունը։ Նշենք, որ Մուշից հավաքված 10 հազար զինվորների երեք քառորդը հայեր էին[1], որոնք կռվելու փորձ չունեին։ Այդ զինվորների մեծ մասը, անկախ ազգային պատկանելությունից, ճանապարհից ետ վերադարձան դեպի Մուշ։ Վերջապես կառավարությունը հայտարարեց, որ նրանք, ովքեր անցյալում չեն եղել զինվորական ծառայության մեջ, կարող են բեռել տալով ազատվել բանակից։

Հատկանշական է, որ չզորակոչված հայերը ստիպված կատարում էին թուրքական իշխանությունների կարգադրությունները, չցանկանալով սրել հարաբերությունները, սպասելով, թե ի՞նչ վախճան կունենա սկսված պատերազմը։ Օգտվելով ստեղծված դրությունից, տեղական իշխանությունները հայերի նկատմամբ անթիվ և անհամար պահանջներ էին ներկայացնում։ Նրանք Մուշի հայ բնակիչներից մեծ թվով ձիեր պահանջեցին։ Ովքեր չունեին, պարտավոր էին գնել և հանձնել։ Այդ պատճառով էլ ձիերի գները Մուշում սկսեցին օր օրի վրա թանկանալ։ Թուրքական կառավարությունը միաժամանակ թալանեց հայ վաճառականների խանութներում եղած ապրանքները, պատճառաբանելով, որ այն տրվելու է բանակին։ Ապա սկսեց հայ գյուղացիներից վերցնել նրանց ունեցած պարենն ու անասունները։ Ամենաանտանելին այն էր, որ 45-ից բարձր տարիք ունեցող արու բնակիչները պետք է շալակով Մուշից մինչև Հասան Ղալե, Քեփրի Քյոյ 10 օրվա ճանապարհ անցնելով պարեն փոխադրեին թուրքական բանակի համար։ Թուրքերը այդ ջոկատներն անվանում էին համալ թաբուրի (շալակով փոխադրություն կա-

---

[1] Տե՛ս Հարազատ պատմություն Տարոնո..., էջ 274։

ուարող վաշտեր)։ Հայ գյուղացիներից կազմված շալակավորների այդ քարավանները դեպի ռազմաճակատ են քշվել ծեծի և խարազանների ուժով։ «Յուրաքանչյուր երթ ու դարձին,— գրում է ականատեսը,— 30 առ հարյուրը կը մեռնեին ծեծի տակ ճանապարհին, դիակները ձգված ճամբուն եզերքը, իսկ վերադարձող 70-են մեծ մասը ճամբուն տաժանքեն, խոշտանգումներեն՝ ու ցուրտեն արդեն իր՝ բաժինն առած, իսկույն կիյնար անկողին, քանի մը օրեն իր վերջին հուսահատ ակնարկը գոցելու այն աշխարհին, որուն թուք մը միայն կրնար իր սրտի խորեն բաժին հանել»[1]։ Այդ ժամանակ Մուշում և նրա շրջակայքում կազմակերպվեց շալակավորների 7000-անոց մի խումբ, որոնցից «շատերը կոտորվեցին բուք ու բորանից, շատերը հիվանդություններից։ Շալակավորները Մուշից՝ 6—8 լիտր ծանրությամբ բեռ շալակած՝ գնում էին մինչև Հասան-Կալե, այսինքն 150—180 կիլոմետր տարածություն»[2]։ Ականատեսը գրում էր, որ նրանցից «ճամբան մեռնողներ եղան, իսկ մեծ մասը կը վերադառնար հյուծված և հիվանդ»[3]։ Սակայն սկսած 1915 թ. փետրվարից թուրքական իշխանությունների հայաջինջ գործունեության հետևանքով շալակավորները «սկսան անհետանալ նախ՝ անհատապես ու ապա անհետ կորչիլ խումբերով»[4]։

Պատերազմական վիճակից օգտվելով թուրքական պաշտոնյաները սկսեցին գյուղերում հավաքել այն, ինչ իրենք էին ցանկանում, պատճառաբանելով, թե այդ բոլորը արվում է բանակի կարիքները բավարարելու համար։ «Գյուղերու մեջ ոչ գուլպա մնաց, ոչ տրեխ, ոչ յուղ և ձավար, խոտ ու հարդ, ցորեն ու կորեկ, ամեն ինչ գրաւված էր...»[5]

Այդ բոլորը Մուշում, նրա շրջակա գյուղերում կատարվում էր Թուրքիայի խորհրդարանի անդամ, դաշնակցական Վահան Փափազյանի աչքերի առջև, որի կուսակցությունը Էրզրումի ժողովում որոշել էր լոյալ մնալ և կատարել թուրքական պետության նկատմամբ իր պարտականությունները։ Մուշի կառավարիչը և նրա համախոհները ամեն ինչ անում էին հայերի մեջ խռովություն

---

1 Տարօնոյ ինքնապաշտպանութիւնն ու ջարդը 1914—1915, պատմեց Եղիշէ Տեր-Պարսամեան, Ֆրեզնո, 1920, էջ 26։

2 Արամը, Մահվան հիսնամյակի առթիվ, Լիբանան, 1969, էջ 185—186։

3 Վահան Փափազյան, Իմ հուշերը, Բ հատոր, Պեյրութ, 1925, էջ 328։

4 Նույն տեղը, էջ 341։

5 Եղիշե Պարսամյանի նշվ. աշխ., էջ 27։

առաջացնելու և ապա զինվորական ուժով այն ճնշելու համար։ Սակայն հայերը հասկանալով այդ, անմոռնչ տանում էին բոլոր տանջանքները և աշխատում էին կառավարության պաշտոնյաների հետ որևէ վեճ չառաջացնել։ Այդ օրերին զինվորագրության փոխարեն հարկը (բեդել) 25-ից հասցվեց մինչև 60 ոսկու։ Հայերից այդ գումարը ստանալուց հետո ուղարկում էին նրանց զանազան պարհակներ կատարելու։ Բացի դրանից թուրքական կառավարությունը սկսեց կազմել հայերից և թուրքերից խառն հանձնաժողովներ, որոնք ժողովրդից պետք է պարեն հավաքեին և դրա փոխարեն տային կնքված թղթեր, որով նրանք պատերազմից հետո օսմանյան գանձարանից պետք է ստանային իրենց հանձնած մթերքի արժեքը։ Բանակին տրվող նյութական այդ օգնությունից հրաժարվողներին թուրքական պաշտոնյաները հայտարարում էին պետության թշնամիներ, իսկ նրանց գործը հանձնում ռազմական դատարաններին։ Օգտվելով հարմար առիթից, հարկահավաքները գյուղերից վերցնում էին գյուղացու հացահատիկի 1/8-ը որպես տասանորդ, ապա նրա հացահատիկի կեսը՝ զորքի կարիքները հոգալու համար[1]։ Ռուսական բանակի առաջխաղացման լուրը ոչ մի բանով չէր ազդում քրդական համիդիե գնդերի վրա, որոնք «կը լցվեին գյուղերը և կը հափշտակեին ինչ որ իրենց չէր...»[2]։ 1914 թվականի վերջերին Մուշ քաղաքի «շտեմարանները կը լցվեին գյուղերե հափշտակված և գյուղացիներու սայլերով և անասուններով փոխադրվող հացահատիկներով. շուկան ավերակի էր վերածված. խանութները գատարկ էին. կյանքը՝ մեռած»[3]։

Գյուղացիներից հավաքվում էր նաև կաշեղեն, ձու, թաղիք, գգալ, տրեխ, զանազան տեսակի թելեր, մսացու և դավուրմայի ոչխար, յուղ, պարկ, ինչպես նաև վերմակներ և սպիտակեղեն։ Օսմանյան 4-րդ բանակի պարենավորումը պետք է հայթայթեին Ալաշկերտի, Բասենի, Բուլանըխի, Խնուսի և Մշո դաշտի հայ հատվածները։

Հարկ է նշել, որ սասունցիները այդ ժամանակ տվեցին 100—150 շալակավորներ, որոնք չտանելով անտանելի պայմանները, ճանապարհին բեռները նետելով, վերադարձան Սասուն։ Նրանք

---

1 Տե՛ս Հարազատ պատմություն Տարոնի, էջ 278։

2 Վահան Փափազյան, Իմ հուշերը, Բ հատոր, էջ 317։

3 Նույն տեղը, էջ 326—327։

օսմանյան բանակին շատ քիչ զինվորներ տվեցին, պատճառաբանելով, որ բանակի պիտանի կլինեն սարդների մի զգալի մասը 1904 թ. կռիվների ժամանակ սպանվել են։ Կառավարությունը, ինչ խոսք, շատ լավ գիտեր, որ լեռնականները չեն ցանկանում զինվոր ուղարկել թուրքական բանակին, սակայն ցույց էր տալիս, որ անտեղյակ է այդ փաստից և լուռ սպասում էր հարմար առիթի՝ սասունցիներից ազատ լուծելու համար։ Սասունի երիտասարդների այն մասն, որ բանակ գնաց, շուտով այնտեղ եղած անտանելի ռեժիմի պատճառով վերադարձավ հայրենի լեռները։ Մոլասարի, Շատախի և Տալվորիկի շրջանները համարյա թե ոչ մի զինվոր չտվեցին թուրքական բանակին։ Չնայած ամեն օր կառավարական պաշտոնյանները կարգադրում էին Մուշի առաջնորդարանին և դաշնակցական կուսակցության կենտրոնին, որպեսզի ուրիշ տան և շալակավորներ, սակայն սասունցիները պարտիզանվել էին իրենց լեռներում և չէին էլ ցանկանում լսել այդ մասին։ Այսպիսով, պատերազմը սկսելու պահից սասունցիները գտնվում էին պաշարված դրության մեջ և ստիպված միջոցներ էին որոնում ապագա կռիվների և ինքնապաշտպանության համար։ Լեռնականներից շատերը 1915 թ. հունվար—փետրվար ամիսներին լարանները հագած իջնում էին Մուշ՝ «աղ, ցորեն, հագուստեղեն և, մանավանդ, վառոդի պատրաստության և ռազմամթերքի պարագաները գնելու, ինչպես ծծումբ, բորակ և լաւար ու գիշերով, ծանր շալակներով կը վերադառնային՝ եղնիկներու արագությամբ»[1]։ Ըստ Ա. Փափազյանի, Սասունի ժողովուրդը այդ ժամանակ ուներ 700—800 շեշխան և որսորդական հրացաններ և 150—200 կանոնավոր զենքեր, իսկ «դաշտը ավելի խղճալի վիճակ կը ներկայացներ»[2]։

Կոստանդնուպոլսի հայ պատրիարքարանը, ինչպես նաև դաշնակցական կուսակցության ներկայացուցիչները միշտ առաջարկում էին ժողովրդին խոհեմ լինել, ենթարկվել կառավարությանը և այդ միջոցով ազատ մնալ ֆիզիկական ոչնչացումից։ Սակայն թուրքական իշխանությունների և զինվորական կազմակերպությունների սանձարձակությունները, անթիվ ու անհամար պահանջներն այնքան էին զզվեցրել ժողովրդին, որ ակամայից նրա մոտ միտք էր առաջանում՝ եթե հանկարծ վտանգի առջև դրվի

---

1 Վահան Փափազյան, Իմ հուշերը, Բ հատոր, էջ 336։

2 Նույն տեղը, էջ 327։

երա ֆիզիկական գոյությունը, ապա ինքը՝ կգնա դեպի ինքնապաշտպանություն։ Ժողովուրդը լավ էր տեսնում, որ ամենուրեք վխտում էին թուրքական զինված ուժեր։

1914 թ. դեկտեմբերին Մուշում հրավիրվեց նշանավոր մարդկանց հավաք, որտեղ որոշվեց՝ վտանգի դեպքում անցնել ինքնապաշտպանության, հույս ունենալով, որ այդ դեպքում ժողովրդի մի մասը գոնե կփրկվի ոչնչացումից։ Մուշի և Սասունի ժողովրդի մոտ կար այն կարծիքը, որ ժողովրդի ջարդին պետական կանոնավոր զինվորական մասերը չեն մասնակցի, որ իրենց վրա կհարձակվեն քրդական զինված ջոկատները, որոնց հետ էլ նրանք կբախվեն։ Ժողովրդի հույսը ռուսական բանակի և հայ կամավորական ջոկատների առաջխաղացման վրա էր, որը և, ավա՜ղ, ուշացավ։

Ըստ Վ. Փափազյանի, Ռուբեն Տեր-Մինասյանը գտնում էր, «թե վտանգի պահուն, դաշտը չի կրնար պաշտպանվիլ, իսկ քաղաքը վստահելի հենարան մը չէ ինքնապաշտպանության տեսակետեն։ Մեր ուժերը պետք է կենտրոնացնենք Սասուն և հոն կազմակերպենք ինքնապաշտպանությունը՝ ապավինելով լեռներուն և հենվելով լեռնական մեր ժողովրդին»[1]։ Նրա հուշերի համաձայն, Մուշում այդ ժամանակ հրավիրվում է խորհրդակցություն, որի մասնակիցները գտնում են, որ «Սասունը չի կրնար ապաստան դառնալ հարյուր հազարե անց ժողովրդին, ուրեմն, պետք է ջանալ տեղական ինքնապաշտպանությունը կազմելու։ Ափսո՜ս քիչ մը ուշ, բայց պատրաստվեցավ ծրագիր մը, որուն համաձայն դաշտը կը բաժնվեր հինգ՝ ինքնապաշտպանության շրջանակներու»[2]։ Վ. Փափազյանը նշում է, որ եթե այդ օրերին սկսվեր հայերի հարձակումը «Տարոնը փրկված պիտի լիներ. Ղորք գրեթե չկար. կռիվը պիտի ընդլայնվեր. մերինները լեռներեն կիջնեին, քաղաք կը գրավեինք և կը կապվեինք ռուսական հառաջացող բանակին»[3]։ Հայդուկային ուժերը պահանջում էին հարձակվել Մուշի վրա, գրավել ռազմական պարենը և միանալ ռուսական բանակին. այսպես էր մտածում նաև գելիեդուզանցի Կիրակոսը, երբ ասում էր. «Մուշ գա՜րկենք, ռազմամթերք և պաշար ձեռք բերենք, կամրանանք և լուր կուտանք ռուս բանակին»[4]։

---

1 Վահան Փափազյան, Իմ հուշերը, Բ հատոր, էջ 321

2 Նույն տեղը, էջ 355—356։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը, էջ 363։

Ինչպես Հ. Փոսիազյանը այնպես էլ Ռ. Տեր-Մինասյանը չկնացին դրան։

• Ինքնապաշտպանության միջոցները Սասունում շատ քիչ էին։ Ինչպես ասվեց, այնտեղ այդ ժամանակ կար 700—800 շեշխան և որսորդական հրացաններ և 150—200 կանոնավոր զենքեր, իսկ Մշո դաշտի 90 գյուղերում կար մոտ 200 կանոնավոր հրացան։ Բնական է, այսպիսի խղճուկ զինվածության պայմաններում անկարելի էր լուրջ ինքնապաշտպանական կռիվներ մղել։ Հատկապես Մշո դաշտում։ Տարոնի ղեկավարների մոտ էլ ինքնապաշտպանության մասին զանազան կարծիքներ կային։ Ռուբեն Տեր-Մինասյանը և նրա կողմնակիցները գտնում էին, որ անհրաժեշտ է հետևել դեպքերի ընթացքին և միայն դրանից հետո դիմել ինքնապաշտպանության քայլին։ Իսկ Կորյունը և մշեցի Հաշի Հակոբ Կոտոյանը գտնում էին, որ Թուրքական կառավարությունը կգնա դեպի ժողովրդի ջարդը և ելնելով հայդուկային պայքարի փորձից, պետք է հարձակվել գյուղերում եղած ոստիկանական պահականոցների վրա, գրավել զենքերը, զինվել և ապա անցնել ինքնապաշտպանության։

1915 թ. փետրվարին Գոմս գյուղի Թուրքական պաշտոնյաները նպատակադրվեցին սպանել հայդուկ Կորյունին։ Ժողովուրդը ստիպված անցավ զինված դիմադրության, որի ժամանակ հարձակվող Թուրքական զինված խումբը ոչնչացավ։ Գյուղի երիտասարդությունը բարձրացավ Սասունի լեռները։ Կառավարությունը այս դեպքին ծանոթանալու նպատակով, ուղարկեց մի հանձնաժողով, սակայն դրությունը քանի գնաց, այնքան ահավոր և մութ կերպարանք ստացավ։

1915 թ. հունվարի վերջին 500 հոգուց բաղկացած Թուրքական մի ջոկատ մտնում է Մշո Ցրոնք գյուղը, գրավում է 150 տուն, այրում՝ ու կողոպտում։ Պատճառաբանությունն՝ այն էր, որ իբր թե այդ գյուղում կային զինված խմբեր։ Այսպես սկսվեցին հարձակումները հայ գյուղերի վրա։ Այդ օրերին հին հայդուկ Մկրտիչ Պոլեյանը (Մեռ) իր խմբով գնում է Առաքելոց վանքը։ Մուշի կառավարիչը նրանց հնազանդեցնելու նպատակով ոստիկանական ուժեր է ուղարկում։ Բայց անարդյունք։ Սկսվում է կռիվը, որի ժամանակ Թուրքական ուժերից մի քանի հոգի սպանվում են, իսկ զինված հայերը բարձրանում են Սասուն։ Այս մի պատրվակ էր, որպեսզի Մուշի փաշա Սերվեթը մի քանի հարյուր զինվորներ ուղարկեր վանք։ Ներս մտնելով նրանք սկսում են

վանքի թալանը։ Մուշի առաջնորդ Ն. Հալաթյանի բողոքների հիման վրա գույքի մի մասը վերադարձվում է, իսկ մնացածը յուրացվում է զինվորների կողմից։ Վերը նշված իրադարձությունն էլ պատճառ դարձավ, որպեսզի թուրքական իշխանությունները ղորքեր տեղավորեն Մուշի վանքերում։ Եվ նրանք ս. Կարապետ վանքում տեղավորեցին 200, ս. Հովհաննեսում՝ 150, ս. Առաքելոց վանքում՝ 150 զինվորներ[1]։

1915 թ. հունվարից մինչև մարտ մի շրջան էր, երբ Մշո դաշտի և Սասունի բնակիչները վերջնականապես, հասկացան, որ թուրքական կառավարությունը հայկական մեծ ջարդ է նախապատրաստում։ Մինչև այդ նրանք կարծում էին, որ իրենց դեմ կարող են հանդես գալ միայն քրդական զինված ուժերը։ Մուշում և նրա դաշտի գյուղերում շատ շատերը կարծում էին, որ կառավարությունը միջոցներ կձեռնարկի սանձահարելու քրդական ուժերին, սակայն այդ մտածողությունը ճիշտ չէր։ Հին հայդուկային ուժերը, հասկանալով կառավարության մտադրությունը, սկսեցին կենտրոնանալ Սասունում։ Այդպես վարվեց նաև Վ. Փափազյանը, որը թողեց Մուշը և անցավ Սասուն։ Նրա փախուստի լուրը անմիջապես տարածվեց և բարոյալքիչ ազդեցություն ունեցավ։ Հետագայում ինքը խոստովանում էր, որ ժողովուրդը իմանալով իր փախուստի մասին, իրավացիորեն մտածել է՝ «կացությունը հուսահատական է ուրեմն, որ պահվեցավ»[2]։ Ապա նա գրում էր, որ շատ շուտով զղջացի, «թե ինչ ահավոր սխալ մը գործած էի ձգելով քաղաքը այդ ծանր օրերուն և քաշվելու լեռներու ծերպերը»[3]։

Ըստ հեղինակի, այդ օրերին Սասունի Սեմալ գյուղում հրավիրվում է մի խորհրդակցություն, որին մասնակցում էին ինքը և Ռուբեն Տեր-Մինասյանը։ Նրանք որոշում էն, քանի որ կառավարությունը ձեռք չի տալու դաշտի գյուղերին, «ամեն ինչ Սասունի համար գործածվի, դաշտեն կարևոր ուժեր պետք էր կանչվեին անմիջապես և հնարավոր եղածին չափ, ռազմական պարեն կենտրոնացվեր»[4]։

Եվ այսպիսով, թշնամին թողնում է, որ դաշտի ուժերը քաշվեն Սասուն, իսկ Մուշում և դաշտում ինքը կոտորած է կազմա-

---

1 Եղիշե Տեր-Պարսամյան նշվ. աշխ., էջ 41։

2 Վ. Փափազյան, Իմ հուշերը, Բ հատոր, էջ 359։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը, էջ 363։

կերպում։ Այդ կապակցությամբ վերոհիշյալ հուշերում ասված է. «Թշնամին թողուց, որ դաշտի զինված ուժերը դուրս հանենք ու կենդրոնանանք Սասնո կղզիացած պզտիկ տարածության վրա, որուն երեք կողմերը քուրտ բնակչություն էր և միայն դաշտի կողմը բաց էր մեզ համար. Թշնամին օգտվելով, ուրեմն այս պայմաններեն բնաջնջեց ժողովուրդը»[1]։ Քրդական և թուրքական զինված ուժերը 1915 թ. մարտ ամսից սկսեցին հարձակվել Տալվորիկի վրա, որի բնակիչները կազմակերպեցին հերոսական պաշտպանություն և նրանց ետ շպրտեցին։ Լևոնականների ուժերը դիրքեր բռնեցին Կուրտրկի բարձունքներից մինչև Միրին-կատարը, իսկ հարավային կողմից՝ Խուլբի, Խիանքի և Բսանքի սահմանները։ Մշո և Սասունի ժողովուրդը սպասումի ուրախալի պահեր էր ապրում։ Նրանք հաստատ գիտեին, որ ռուսական բանակը և հայ կամավորները արդեն հասել են Բուլանըխ և շատ շուտով պետք է մտնեն Մշո դաշտ։ Սակայն, դժբախտաբար, ցարական բանակի նահանջի պատճառով ռուսական ուժերը Մշո դաշտ չմտան։

Հայկական կոտորածների մասին էջմիածնում տեղեկություններ կային դեռևս ապրիլ ամսվա սկզբներին, և Ամենայն հայոց կաթողիկոսը, ելնելով դրանից, այդ ժամանակ դիմեց Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով Դաշկովին, Իտալիայի թագավոր Վիկտոր Էմանուել II-ին, Անգլիայի թագավոր Գեորգ Հինգերորդին, Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Վիլսոնին, Ֆրանսիայի հանրապետության նախագահ Պուանկարեին։ 1915 թ. ապրիլի 7-ին Ռուսաստանի արտաքին գործոց մինիստր Սազոնովին տված իր հեռագրում կաթողիկոսը գրում էր. «Ստացված հեռագրական տեղեկությունների համաձայն, որոնք հաստատվում են և ուրիշ աղբյուրներից, տեղի է ունենում անպաշտպան և անզեն հայերի կոտորած Էրզրումում, Դերջանում, Զեյթունում և շրջակայքում, այրունահեղ ընդհարումներ Բիթլիսում, Վանում, Մուշում, բռնություններ և թալաններ, սպանություններ Ակնում, Կիլիկիայում»[2]։ Այս հեռագիրը տրվել է այն ժամանակ, երբ Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայկական շրջաններում չէին սկսվել հայերի մասսայական կոտորածները։ Սակայն կաթողիկոսի այս դիմումներն ու հեռագրերը չկարողացան կանխել

---

1 Վ. Փափազյան, Իմ հուշերը, Բ հատոր, էջ 365։

2 «Մշակ», № 91, 2 մայիսի 1915։

երիտթուրքերի կողմից նախապատրաստված ահավոր եղեռնը։ Հայ գործիչներից մեկի հետ խոսելու ժամանակ Թալեաթը հայտարարել է. «Երբ մենք ծանր դրության մեջ էինք, բալկանյան պատերազմի ժամանակ, դուք ավտոնոմիա էիք պահանջում. այժմ երբ մեզ ոչ ոք չի կարող խանգարել, մենք միջոցներ պետք է ձեռք առնենք այն բանի համար, որ 50 տարի չը կարողանաք երազել որևէ սխրագործություն անելու»[1]։ Այնուհետև Հայաստանում կատարված կոտորածների մասին Թալեաթը ասել է. «Հայերին վիլայեթներից հեռացնելը անհրաժեշտություն էր։ Այն ժամանակ, երբ նրանց գաղթեցնում էին Միջագետք, նրանց վրա հարձակվել են քրդերը և մի մասին սպանել»[2]։

Այնուհետև Թալեաթը, մեղքը ուրիշների վրա գցելով, ցինիկաբար շարունակում է. «Հայերը ձգտում էին խորտակել Օսմանյան կայսրությունը։ Պատերազմի սկզբում ռուսների և թուրքահայերի խորհրդակցությունը որոշել է, որ Կովկասի հայերը պետք է կռվեն Թուրքիայի դեմ, իսկ Անատոլիայի հայերը կը սպասեն մինչև ռուսները Անատոլիա մտնեն։ Խուզարկությունների ժամանակ հայերի մոտ գտնվեցին ռումբեր և հրացաններ։ Անհրաժեշտ էր ապստամբներին հեռացնել սահմանամոտ շրջաններից։ Հետագայում Դարդանելի գործողության պատճառով ցանկություն կար կառավարությունը փոխադրել Էսկի-Շեհիր, ուստի հայերին գաղթեցրին վերջինիս և Կ. Պոլսի միջև եղած շրջանից։ Կառավարությունը անմեղ է արտաքսվածների կոտորածի մեջ։ Առաջին կոտորածին թուրք հեծելազորը՝ հայերին պաշտպանեց քրդերից, որոնց պարագլուխները կախվեցին հետո։ Երկրորդ՝ մեղավոր են անպիտան պաշտոնյաները»[3]։

Սակայն 1894—1896 թվականներին կամավորական շարժում չկար, ի՞նչու մոտ կես միլիոն հայություն ոչնչացավ, վերջապես Ադանայի կոտորածի ժամանակ նույնպես կամավորականներ չկային։ Հարցը պարզ է. թուրքական կառավարությունը որոշեց տեղահան անել և ոչնչացնել մեր ժողովրդի արևմտահայ հատվածին, որպեսզի առհասարակ հայկական հարցը ասպարեզից գեն նետվի։

Մոտում կատարված այդ ժամանակաշրջանի իրադարձու-

---

1 «Մշակ», № 190, 29 օգոստոսի 1915։

2 «Մշակ», № 107, 17 մայիսի 1916։

3 Նույն տեղը։

թյունները որպեսզի ավելի պարզ լինեն, մենք ցանկանում ենք մի փոքր շեղում կատարել և համառոտակի գրել 1915 թ. Վանի պաշտպանության մասին, որը մեր ժողովրդի պատմության ամենահերոսական էջերից մեկն է։ Մի ամիս տևեց Վան-Այգեստանի 1915 թ. ապրիլի հերոսամարտը, որի ժամանակ քաղաքի բնակչության ամբողջ ուժերը գերլարումով մաքառեցին թուրքական բանակի գերազանց ուժերի դեմ և փրկեցին տասնյակ հազարավոր մարդկանց կյանք։ Ճիշտ է նկատել ականատեսը, որ սկսվեց կատաղի ու անհավասար մի գոյամարտ, որի ժամանակ թուրքական ուժերը կռվում էին «բնաջնջելու, կողոպտելու և բռնաբարելու համար, իսկ հայը՝ ապրելու, իր օջախն ու պատիվը պաշտպանելու համար»[1]։

Ինքնապաշտպանությունը սկսվելու օրը միավորվում են բոլորը, թե երիտասարդ և թե ծերունի, թե կին և թե տղամարդ, որոնք միաբերան երդվում են կռվել թշնամու դեմ մինչև արյան վերջին կաթիլը։ Վանի հայությունը կենտրոնացած էր Այգեստանում և քաղաքամեջի թաղերում։ Վերջինում հայ բնակիչների թիվը հասնում էր 2500-ի, իսկ Այգեստանում՝ 20000-ի[2]։ Վանի բոլոր զինագործներն այդ օրերին հավաքված էին արհեստանոցներում և վերանորոգում էին փչացած զենքերը, իսկ կրակած փամփուշտների պարկուճները հավաքվում էին, լցվում և վերադարձվում կռվող մարտիկներին։ Պաշարվածները կազմակերպում են վառոդի արհեստանոց։ Կռվի սկզբում ինքնապաշտպանության մասնակիցների մոտ կար 200 հրացան։ Երբ մոտ 20000 գյուղացիներ ստիպված մտան Վան, հրացանների թիվը հասավ 400—500-ի[3]։ Թուրքական զինված ուժերը սկսեցին հայկական թաղերի գնդակոծումը։ Սակայն ինքնապաշտպանության ելածները առաջին օրվանից ցույց տվեցին, որ հայկական թաղերը գրավելը այնքան էլ հեշտ բան չէ։ Կռվի առաջին օրը հրատարակվեց Վանի ազգաբնակչության անունից մի կոչ՝ ուղղված քաղաքի թուրք ազգաբնակչությանը, որի մեջ նշվում էր, թե սկսված կռիվը Ջևդեթ փաշայի սարքած խաղն է, հարկավոր չէ մասնակցել այդ անարդար կռվին, որը երկու ազգերի մեջ անդունդ է բացում։ Կոչի վերջում ասված էր, որ Ջևդեթը, որպես պաշտոնյա,

---

[1] Տե՛ս Ատեան մեծ եղեռնի, Պեյրութ, 1985, էջ 731։

[2] Տե՛ս Ա. Դարբինյանի նշվ. աշխ., էջ 272։

[3] Տես՝ նույն տեղը, էջ 285։

մի հյուր է, իսկ «ազգերը մնայուն կը մնան» և որ «երկու ազգերը պետք չէ իրար զարնել տալ»[1]։ Սակայն Ջևդեթը որոշել էր ամեն գնով ընկճել Վանի բնակիչներին, կոտորել նրանց։ Առաջին օրվանից նա հրաման տվեց թնդանոթաձիգներին և զորքին սկսելու հարձակումը, որոնք ինքնապաշտպանության դուրս եկածների դիրքերը սկսեցին ռմբակոծել Հաջի Պեքերի զորանոցից, Թոփրակ Կալեի բարձունքներից և Բերդից։ Թշնամին հատկապես մեծ ջանքեր էր թափում Աղվեսի ձոր կոչվող տեղամասը գրավելու համար, նպատակ ունենալով խուճապ առաջացնել բնակչության մեջ և Այգեստանի գրավումը ավելի դյուրին դարձնել։ Ինքնապաշտպանության դիրքերը ավելի ապահով դարձնելու համար հարկավոր էր հրկիզել ֆրանսիական հյուպատոսարանի շենքը[2]։ Այս դժվարին գործը հանձնարարվում է բուլղարացի Գրիգորին, որը քանքանների միջոցով գետնի տակից անցք է բացում դեպի զորանոց և նրա չորս անկյունների տակ ռումբեր տեղավորելով պայթեցնում։ Հրդեհը ընդգրկում է զորանոցը և նրան կից շենքերը։ Ինքնապաշտպանական դիրքերից սկսում են կրակ տեղալ փախչող զինվորների վրա, հայ մարտիկները դուրս են գալիս դիրքերից և հետապնդում են թշնամուն։

Այս հաղթանակից հետո Վանի պաշտպանները որոշեցին հրկիզել նաև թուրքական մի քանի կարևոր դիրքեր, որոնցից մեկն էր Արարուց հրապարակի վրա գտնվող թուրքական ոստիկանատունը։ Ապրիլի 13-ի գիշերը, գաղտնի դեպի ոստիկանատուն սկսեց շարժվել ուսուցիչ Տիգրանը և հրկիզեց ոստիկանատան կողքին գտնվող խանութները։ Թուրքական ուժերին հաջողվում է հանգցնել կրակը։ Սակայն Տիգրանը ապրիլի 15-ին կարողանում է հրկիզել ոստիկանատունը։ Հայկական դիրքերից սկսվում է կրակը ոստիկանատնից փախչող զինվորների վրա։ Նույն օրը Վանի պաշտպաններին հաջողվում է հրկիզել Պոճկե Ահմեդի դիրքը Շան թաղի մեջ։ Թուրքերը այս անգամ ևս տալիս են զգալի կորուստներ։ Դրանից հետո ինքնապաշտպանական կռիվները ավելի սաստկացան և ավելի սուր ու կատաղի բնույթ ընդունեցին։ Թուրքական ջարդարարները իրենց հաշիվները արդեն մաքրել էին Վասպուրականի գյուղերի անզեն բնակչության հետ և շտապում էին դեպի Վան։ Թշնամին զինվորական նոր ուժեր և

---

1 Ցուշամատեան մեծ եղեռնի, էջ 733։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 736։

ռազմամթերք ստացավ Բիթլիսից ու սկսեց հարձակումը։ Նրան հաջողվեց ռումբերով խորտակել հայկական դիրքերը և ներխուժել պաշտպանական շրջանը։ Հայ մարտիկների անձնազոհությունը ստիպեց հակառակորդին կորուստներ տալով նահանջել ելման դիրքերը։ Ապրիլի 17-ին թուրքական 300 զինվորներ թնդանոթների և գնդացիրների օգնությամբ սկսեցին իրենց հարձակումը Արարքի դիրքերի վրա, սակայն հանդիպելով կռվողների համառ դիմադրությանը, ետ նահանջեցին։ Հաջորդ օրը թշնամին գործի դրեց իր ունեցած բոլոր հրանոթները և սկսեց ռմբակոծել փողոցները, այգիները, եկեղեցիները, դպրոցները։

Խոշաբի և Հայոց ձորի ու Վանի արվարձաններից մոտ 5000 գաղթականներ տեղավորված էին Շուշանցի և Վարագի լեռնալանջերի վրա։ Խորամանկ թշնամին սկսեց հարվածել կուտակված այս բազմությանը և թափանցել հայկական դիրքերը։ Գաղթականների մի մասը չդիմանալով նրա գրոհին, հեռանում է դեպի լեռները, իսկ մյուսը ահագին զոհերի գնով շարժվում է դեպի Վան, գժվարացնելով պաշարվածների դրությունը, որոնք ստիպված էին կերակրել մի քանի հազարի հասնող ամբոխին։ Արճակի 12 գյուղերից բազմահազար բնակիչներ հավաքվում են Խառակոնիս գյուղը և դիմադրում, ապա 10000 հոգի անցնում են քաղաք։ Թուրքական բարբարոսները Վանի պաշտպանության օրերին ջարդեցին Բերկրիի 5000 հայերին, լցրեցին Բանդի Մահու գետը։ Ավելի վատթար վիճակի մեջ էին Արճեշի հայերը, որի 10000 բնակիչների մեծ մասը կոտորվեց[1]։ Այդ նույն օրերին կազմակերպվեց համառ ու տևական դիմադրություն Շատախի Փեսանդաշտում, որտեղ հավաքվել էին Շատախի, Գավաշի և Հայոց ձորի գյուղերի հայ բնակիչները։

Կոտորածից փրկվեցին Մոհթուլա բեկի օգնությամբ Մոկսի և այնտեղ ապաստանած Կառկառի հայերը, թվով 3000 մարդ։ Ապրիլի 26-ին և 27-ին թուրքական ուժերը սկսեցին ուժեղ հարձակումները։ Նրանք Վանի հյուսիսում գտնվող Ծրտոտ քարից մինչև արևելք գտնվող Սղգա գյուղը կենտրոնացրին 5—6 հազար զինվորներ և թնդանոթների որոտների տակ անցան հարձակման։ Սակայն վանեցիները պաշտպանվում էին ուժերի մեծ լարումով։ Կռիվը ավելի է սաստկանում ապրիլի 28-ին և վերջանում է երկուստեք ծանր կորուստներով։ Ապրիլի 29-ին ինքնապաշտ-

---

[1] Տե՛ս Ա. Դարբինյանի նշվ. աշխ., էջ 295—296։

պանության մասնակիցները իմացան, որ ռուսական բանակը մոտենում է Վանին։ Մայիսի 3-ին թուրքական ուժերը ցանկացան իրենց վերջին մաղձը թափել Այգեստանի հերոսամարտի մասնակիցների վրա և գործի դրեցին 12 թնդանոթներ։ Վանի պաշտպանները թշնամուն ետ են շպրտում և հետապնդում նրան։ Ապա ջախջախեցին Թոփրակ Կալեի զորանոցի պահակների ուժը, գրավեցին այն, ապա Զըմզըմ մաղարայի պահականոցը և Հաջի Պեքիրի զորանոցը։ Մինչև ռուսական զորքերի և հայ կամավորների մուտքը, երեք օր քաղաքը գտնվում էր Վանի պաշտպանների ձեռքին։ Մայիսի 6-ին հայ կամավորական ջոկատները մուտք գործեցին Վան և նրա բնակիչներին ու դրսից եկածներին փրկեցին կոտորածից։

Դիլմանի ճակատամարտում խալիլ բեյը պարտվելով, սկսեց նահանջել։ Նրան միացան Ջևդեթի ուժերը։ Երկու պարտված «զինվորականները» կռվողների հետ չկարողանալով հաշիվը տեսնել, սկսեցին իրենց պարտության վրեժը լուծել այլ վայրերի խաղաղ հայ բնակչությունից։ Մայիս ամսին ռուսական հաղթական բանակը և հայ կամավորական ջոկատները շեշտակի հարվածներ էին հասցնում թուրքական նահանջող ուժերին։ Վանի, Մանազկերտի, Ալաշկերտի և Բուլանըխի քրդական աշիրեթները՝ և Վանի նահանգում գտնվող թուրքական գյուղերի բնակիչները, տեսնելով թուրքական բանակի նահանջը, նրանց հետևանալու հետ միասին տեղահան էին լինում և անցնում էին դեպի Մշո դաշտ։

Կառավարությունը հայերին տեղահանելու իր դիվային ծրագրի մեջ սկզբից չէր նախատեսել Տարոնի ժողովրդի տեղահանությունը։ Նա ծրագրել էր հայկական այդ հատվածին բնաջնջել հեռից իր բնօրրանի մեջ։ Այդ նպատակով նա օգտագործեց Մշո դաշտի Ալեդին տան վերջին շառավիղ քուրդ Մուսա բեկի գլխավորած ուժերին։ Մուշի կառավարիչ Սերվեթը ծրագրել էր հավաքել հայ տղամարդկանց, լցնել մարագները և այրել։ Պատմության մեջ չլսված այս դաժան մեթոդը գործադրողները հանդիսացան ֆաշիստների նախորդները։

Մայիսի 5-ից 15-ի ընթացքում թուրք ջարդարարներին հաջողվեց կազմակերպել Խնուսի (Հարք) հայկական հատվածի կոտորածը, որի ժամանակ հերոսական դիմադրության շատ օրինակներ եղան Խնուսում։ Ուժերը անհավասար էին, ինքնապաշտպանները հրազենի խիստ պակաս ունեին։ Այդ օրերին Ախլաթի մի քանի գյուղերում կոտորածներ են կազմակերպվում։ Այդ վայ-

թերից 300 հոգի անցնում են Մուշ ու բաժանվում Վերին, Զորո. ս. Մարինե թաղերի վրա[1]։

Մուշի ժողովուրդը գիտեր, որ Վանի ազգաբնակչությունը փրկվել է հերոսական պաշտպանության միջոցով, գիտեր նաև, որ ապրիլի 24-ին Կոստանդնուպոլսում բանտարկված են հայ մտավորականները և աքսորված են, իսկ Կիլիկիայի հայկական հատվածը քշված է դարավոր բնակավայրերից դեպի անապատները։ Մայիս և հունիս ամիսներին Մուշ քաղաքի և դաշտի գյուղերի բնակիչները սրտատրոփ սպասում էին ռուսական բանակին, որի առաջխաղացման հետ էլ կապում էին իրենց փրկությունը։ Սասունի քաջակորով լեռնականները պաշտպանում էին իրենց հոգերը թուրքական հարձակումներից և նույնպես սպասում էին ռուսական բանակի ժամանելուն։

Սակայն թուրքական կառավարությունն ուներ իր պլանները։ Նա ցանկանում էր մի քանի օրվա ընթացքում կոտորել Մշո դաշտի ողջ հայությանը։ Երիտթուրքերը հայկական ջարդերի կազմակերպման գործում գերազանցեցին իրենց նախորդ Աբդուլ Համիդին։ Վանից, Ալաշկերտից, Մանազկերտից և Բուլանըխից ռուսական բանակի առաջխաղացման հետևանքով նահանջեցին նաև քրդեր ու թուրքեր՝ իրենց զինված ուժերի հետ միասին։ Այնուհետև Մուշի դաշտում և հատկապես քաղաքում կային հայ ժողովրդի ջարդը կազմակերպելու ջատագովներ՝ թուրքական չեթեներ և վերջապես թուրքական բանակի ուժերը, որոնք նահանջելով հասել էին Մշո դաշտ։ Այդ բոլոր ուժերը օգտագործվեցին երիտթուրքերի կողմից տարոնահայության բնաջնջման համար։

Սակայն Մշո դաշտում և Սասունում դեռ կային կենսունակ ուժեր։ Դրանք ժողովրդի ընդերքից դուրս եկած հայդուկներն էին (Կորյունը, Մեռն, Կոտոյան Հաջի Հակոբը)։ Նրանք գտնում էին, որ թուրքերը փոխել են իրենց տակտիկան, այժմ կռիվը կլինի ոչ միայն Սասունում, այլև Մշո դաշտում։ Նրանք գտնում էին, որ անհրաժեշտ է կազմակերպել Մուշ քաղաքի և դաշտի ժողովրդի ինքնապաշտպանությունը։ Եվ այդպես էլ արեցին։ Անհավասար կռվում նրանք զոհվեցին, սակայն ընդմիշտ մնացին իրենց ժողովրդի սրտում։

Ռուբեն Տեր-Մինասյանը և Վահան Փափազյանը, երբ տեսան,

---

[1] Տե՛ս Եղիշե Պարսամյանի նշվ. աշխ., էջ 44։

որ Մշո դաշտը և Սասունը հեղեղվեցին հայերի արյունով, թողեցին իրենց ժողովրդի բեկորներին բախտի կամքին, փախան Թիֆլիս՝ փրկելով իրենց կաշին։ Եվ արդար է Ռոստոմը, երբ Թիֆլիսում Ռուբեն Տեր-Մինասյանին ասաց. «Ձկրցա՞ր ինն նահատակվիլ»[1]։ Անգամ Վ. Փափազյանը խոստովանում էր, որ Մուշից «ազատված ընկերները, բուռն համոզմունքով և խոր կսկիծով, իրենց դառնությունը կը թափեին իմ և, մասնավորապես, Սասունի ընկերներուն դեմ։ Պետք չէ որ ես Մուշեն հեռանայի, կսեին»[2]։

Այս ժամանակաշրջանի դեպքերի մասին պահպանվել է Հավատորիկ գյուղի բնակիչ Ե. Կարապետյանի հուշերը։ Նա նշում է, որ սասունցիները լսելով Թուրքիայի հայության տեղահանության և ջարդի մասին, կտրեցին իրենց կապը այլ տեղերի հետ և իրենց լեռներում անցան ինքնապաշտպանության։ Հունիսի 20-ից թուրքական ուժերը արդեն չէին թողնում շրջակա գյուղերի հայերին Մուշ գալ։ Հուշերի հեղինակի վկայությամբ քրդերից մեկը Հավատորիկ գյուղի բնակիչներին ասում է. «Հայեր, ես պետք է ձեզ ասեմ ճշմարտությունը։ Ստացվել է սուլթանի հրամանը այն մասին, որ օսմանների երկրում ապրող բոլոր հայերին պետք է առանց խղճալու սպանեն։ Սլիվանի հայերին մենք արդեն ջարդել ենք և եթե դուք այժմ կանգնեք և նայեք Սլիվանի հովտին, կտեսնեք, որ ցորենի դաշտերը հասել են, հասկերը առատորեն լցվել են, սակայն չեք գտնի այնտեղ նույնիսկ մի ճնճղուկի և այնտեղ թագավորում է չտեսնված դատարկություն»[3]։

Հունիսի 20-ին Մուշում գիտեին այն մասին, որ Մուսա բեյը 2500 հոգով գտնվում է Խաս գյուղում։ Նրանց ստացած նամակում ասված էր. «Մեր վերևում կախված են մռայլ սև ամպեր։ Հաջի Մուսա բեյը 2500 հեծյալ և հետևակ զինված քրդերով արդեն երկու օր է, որ տեղավորված է մեր գյուղում։ Նրանց նպատակը առայժմ հայտնի չէ։ Մանոթ քրդերից ոմանք հավատացնում են, որ արշավանք է նախապատրաստվում ռուսների դեմ, մյուսները ասում են առաջիկայում սպասվող հայերի ջարդի մասին։ Մենք հավատում ենք վերջինիս, բայց կասկածում ենք, թե

---

1 Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 825։

2 Վ. Փափազյան, Իմ հուշերը, Բ հատոր, էջ 377։

3 ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, գիտ. մաս, Գ, 439, էջ 15։

այդ բոլորը կվերաբերի մեզ բոլորիս՝ կանանց և երեխաներին, թե միայն տղամարդկանց»[1]:

1915 թ. հունիսի 28-ին թուրքական չաուշները անցնելով Մուշ քաղաքի փողոցներով, բարձր ձայնով ասում էին հայ բնակիչներին. «Հայեր, Մուստաֆա փաշայի հրամանի համաձայն դուք պարտավոր եք ժամը 10-ին ներկայանալ պետական գրասենյակ ձեր ունեցած սայլերի, ձիերի, անասունների, ունեցվածքի ու ընտանիքի հետ Դիարբեքիր գնալու համար։ Ովքեր չենթարկվեն այդ հրամանին, կտեղահանվեն քաղաքից և նրանց ունեցվածքի կբռնագրավվի»[2]։

Այս օրերի իրադարձությունների մասին հետաքրքրական տեղեկություններ են պահպանվել օսմանյան պառլամենտի անդամ Գեղամ Տեր-Կարապետյանի և Եղիշե Պարսամյանի հուշերում։ Հունիսի վերջերին Մուշի կառավարիչ Սերվեթը և նրա համախոհները կանչում են Վարդան վարդապետին ու Մուշի նշանավոր հայ մարդկանց և նրանց հայտնում են, որ Կարինի հայերը արդեն գաղթել են և նույնը պետք է անի Մուշի բնակչությունը։ Դրանից հետո երեք ժամ ժամանակ են տալիս բնակչության գաղթի համար[3]։ Մուշի բնակիչների մի մասը այդ օրը ենթարկվում է հրամանին և դուրս է գալիս քաղաքից։ Սակայն նրանք Մուշից շատ չէին հեռացել, երբ թուրք ջարդարարները սկսում են անզեն ժողովրդի կոտորածը։ Լուրը արագ հասնում է քաղաք։ Այլևս կասկածները վերանում են, որ թուրքերը ծրագրել են կոտորել Մուշի բնակիչներին, մանավանդ, որ քաղաքի հասարակությունը գիտեր, որ խնուսի 10 հազարի չափ հայությունը տեղահան է արված, տարված է Վարդո և կոտորված է[4]։ Մուշի Վարդան վարդապետը շատ լավ գիտեր, որ թուրքական կառավարության կարգադրությամբ կոտորվելու է նաև Մշո հայությունը։ Այնուհանդերձ նա կողմնակից էր գնալ Ուրֆա, ասելով. «Ըմբոստանալ, դիմադրել օգուտ չունի, ժողովրդիս կը հրամայեմ, որ երթա հանձնվի, եթե իրենցմե ոմանք մասամբ վտանգի ենթարկվին, գոնե քաղաքի մեջ մնացած կիներն ու երեխաները անվնաս կը մնան»[5]: Բայց եղան մարդիկ, որ առար-

---

1 ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, գիտ. մաս, գ. 439, էջ 15։

2 Նույն տեղը, էջ 19։

3 Եղիշե Պարսամյանի նշվ. աշխ., էջ 45։

4 Նույն տեղը։

5 Հարազատ պատմություն Տարոնո, էջ 379։

կեցին նրան, նշելով. «Բաղեշի ժողովուրդը, որ ի բնե զինասեր, հեղափոխական չէ եղած, և սահմանադրության շրջանին ալ՝ նորեն նույն անտարբեր ժողովուրդը մնաց մինչև վերջին վայրկյանը, ինչո՞ւ զերծ չմնաց կոտորածեն, ինչո՞ւ չխնայվեցավ անոնց կիներուն և երեխաներուն»[1]։ Բազմաթիվ ու բազմաթիվ օրինակներ կարելի է բերել և ապացուցել, որ թուրքական ջարդարարները արդեն պլանավորել էին կոտորել ինչպես բովանդակ հայ ժողովուրդը, այնպես էլ նրա Մուշի հատվածը։ Նրանց այն պատճառաբանությունը, թե ռուսական բանակում կային հայ կամավորներ, այդ պատճառով էլ արեցին կոտորածը, անհիմն է, քանի որ, եթե կամավորներն էլ չլինեին, նրանք նպատակադրված էին տեղահանել և կոտորել հայ ժողովրդին։

Մուշի ժողովուրդը իմանալով կոտորածի մասին, որոշում է այլևս չենթարկվել թուրքական կառավարության հրամանին, դուրս չգալ տներից և ունեցած փոքր ուժերով դիմադրել։ Ուրֆայի ճանապարհին իրենց հայրենակիցների ողբերգական ջարդերից հետո, նրանք եկան այն եզրակացության, թե «արդ, փոխանակ ծունկի գալու, որ վատ դահիճը իր հարվածները իջեցնե մեր գլխուն և անպատիվ մեռնինք, նախապատիվ կը համարենք, որ ո՛չ ոք հեռանա իր տունեն, ամեն մարդ աշխատի կատարել իր պարտականությունը՝ ըլլա՛ զենքով, ատրճանակով, սուրով, երկաթով և ինչով որ կարենա իր վրեժը լուծել և իբրև մարդ՝ մեռնիլ»[2]։ Սակայն թուրքական արյունարբու կառավարությունը արդեն ամիսներ առաջ նախապատրաստել էր Մուշի հայերի կոտորածը։ Այդ օրերին, բացի Մշո դաշտում և քաղաքում տեղավորված թուրքական ուժերից և 2000-անոց չեթեննների ջոկատից, Խարբերդից 20 վաշտ զորք բերվեց Մուշ։

Հունիսի 28-ի լուսաբացի մասին Գ. Կարապետյանի հուշերում ասված է. «Հայերը լուռ են, իբրև մահվան դատապարտվածներ. կը զգուշանան ճիչ մը անգամ հանելե. գիտեն, որ պատրվակ կը փնտրեն։

Նույն գիշեր թուրք թաղերու մեջ մունետիկով կառավարությունը կը պատվիրե, որ բոլոր այն իսլամներ, զինվոր կամ չեթե վաղը դուրս չելլեն տուներեն ու զգուշանան իրենց տուներու մեջ որևէ հայ պահելու։ Հետո ճիճատ կը քարոզվի զինվորներուն ու

---

1 Հարազատ պատմություն Տարոնի, էջ 380։

2 Նույն տեղը, էջ 379։

չեթեններուն և քաղաքի այն թուրք սրիկաներուն, որ ջարդին կը մասնակցին։

Նենգավոր լուսարացին, հունիսի 28-ին՝ հայոց թաղերը չորս կողմն թնդանոթի կը բռնվին. բոլոր ժողովուրդը ներս փակված, թնդանոթաձգության հետ միասնաբար ութ տաս հազար հրացաններ կորոտան անմեղ, անզեն ու ահաբեկ ժողովրդին վրա, տունները կը հրդեհվին, տունները կը փլին, աղեխարշ վայնասուններ ու աղաղակներ քաղաքը կը լեցնեն։

Ու թնդանոթները կորոտան...»[1]

Այսպես էլ սկսվեց հայ ժողովրդի ամենահին բնօրրաններից մեկի՝ Մուշ քաղաքի և նրա շրջակա գյուղերի բնակչության ջարդը և տեղահանությունը։ Ջարդից առաջ քաղաքը ուներ հինգ հայաբնակ թաղեր, որոնցից էր Վերին (450 տուն, որից 20-ը թուրքական), Զորո (350 տուն հայեր), ս. Մարինե (370 տուն, որից 30-ը թուրքական), Բրտի թաղ (180 տուն հայ և այդքան էլ թուրք), Ճիկրաշեն (100 տուն հայ և կրկնակի թուրքեր)։ Այսպիսով, ջարդից առաջ Մուշ քաղաքում ապրում էր 1450 տուն հայություն՝ 12 հազար բնակչությամբ։ Կոտորածից առաջ Մուշ եկան և տեղավորվեցին նաև շրջականերից 10 հազար մարդ[2]։ Թուրքական իշխանությունները դավաճաններ էին համարում այն իսլամներին, որոնք կհամարձակվեին իրենց տներում պատսպարել հայերին։ Հայերի նկատմամբ համակրանք ունեցող քուրդ վերնախավի առանձին ներկայացուցիչներ ջարդը սկսելուց առաջ ասում էին հայերին. «Ձեր փրկությունը ոչ աղայի, ոչ էլ պեյի քով փնտրեցեք, այլ դեպի ռուս բանակը, որ հեռու չէ, Պուլանուխի լիզ գյուղը կը գտնվի։ Ցանցառ է թուրքական բանակատեղին, լուծված են քրդական գունդերը՝ հայերը ջարդելու համար. զանգվածորեն փախեք, հրաշք կը գործեն ճամբան գիտցողները. երկու օրվա ճամբա է ասկե լիզ. երկու գիշեր քալելով կանցնեք ամեն վտանգ»[3]։

Մշո դաշտի հայերի կոտորածը սկսվեց Խաս գյուղից, որտեղ բնակչությունից անջատեցին անզեն տղամարդկանց և սպանեցին։ Գեղեցիկ հարսներն ու աղջիկները առևանգվեցին կամ

---

1 Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 844։

2 Տե՛ս Հարազատ պատմություն Տարոնո, էջ 381։

3 Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 847։

զոհ գնացին ջարդարարների կրքին։ Մնացած ժողովուրդը՝ ծերերն ու պառավները, երեխաները XX դարի վանդալների կողմից լցվեցին մարագները և այրվեցին։ Այդ գյուղի ջարդի մասին ականատեսներից մեկը գրում էր. «Տեսա զույգ մարագներ, ուր լեցուցին իմ բախտակիցները, կրակի ճարակ գարձան։ Անոնց բոցերուն լույսը կը լուսավորեր խաս գյուղի փողոցները։ Կը լսեի սարսափելի պայթումի ձայներ կրակի մեջեն։ Մեռավ լմնցավ աշխարհ մը շենցնող ժողովուրդը մեկ ժամվա մեջ. մսե լեռ մը, մարգկային ծով մը կը փճանար։ Եվ այդ բոցերդուն առջև մարդոց բազմություն մը, որ այդ զարհուրելի և աշխարհի պատմության մեջ չտեսնված տեսարանին առջև, շնական քրքիջներ կարձակեր»[1]։

Մեր նպատակից դուրս է հանգամանորեն շարադրել Մշադաշտի գյուղերի և քաղաքի բնակչության ջարդի հուզմունքով լի և արտասվախառն ու սրտահմլիկ պատմության մանրամասները, սակայն ասենք, որ այդ անգութ ջարդը կատարվեց մարդկության պատմության մեջ իր նմանը չունեցող մեթոդներով։ Ականատեսներից մեկը Յողունք գյուղի բնակչության կոտորածի մասին գրում է. «Կին մը կար, շատ գեղեցիկ էր, բայց պժգացին, որովհետև արգանդին մեջ հայու զավակ կը սնուցաներ։ Արգանդը սուրի մեկ հարվածով պատռեցին, երեխան պատեպատ զարկին և այդպիսով վերջ տվին թե՛ մոր և թե՛ զավկին։ Ճիշտ այդ միջոցին խումբ մը քրիստոնյա գերմանացի սպաներ, թուրք սպաներու հետ սանիք նստած օդի կը խմեին և հաճույքով կը հոհոային ի տես այս անլուր դուլումին»[2]։

Խոսելով Տարոնի ժողովրդի այդ ժամանակաշրջանի անագորույն վիճակի մասին, չենք կարող չնշել, որ նրա ժողովրդի մի մասը, ինչպես նաև Սասունի լեռնականները «քաջությամբ մեռցուք ի վերայ, աշխարհիս մեր» նշանաբանը ունենալով, դիմեցին ինքնապաշտպանության։

Այդ հերոսամարտերի մասին եղած տեղեկությունները պետք է հարազատորեն ու հպարտությամբ տրվի թղթի էջերին, նրանով պետք է հպարտանա մեր ժողովուրդը, քանզի իր մի հատվածը մղձավանջային այդ օրերին ապրեց և կռվեց հերոսաբար, շատերն ընկան զենքը ձեռքին, չափսոսելով հայրենիքի համար տված

---

1 Պատմություն Տարոնի աշխարհի,—էջ 850։

2 Նույն տեղը, էջ 857։

իրենց կյանքին և մահը ավելի դեբադասեցին, քան ստրկաբար և ծնկաչոք ապրելը։ Մուշ քաղաքը միայն մի քանի օր կարողացավ դիմադրել, որի մասին մանրամասն գրվել է ինչպես Բդեյանի, այնպես էլ Ծղիշե Պարսամյանի և այլոց հուշերում։ Պաշտպանական կռիվները սկսելուց առաջ Մշո դաշտի կապը կտրված էր քաղաքից։ Ինչպես Դաշտի գյուղերում, այնպես էլ Մուշ քաղաքում չկար անհրաժեշտ չափի հրացաններ և զինամթերք։ Պետք է պատկերացնել, եթե մեծ թվով հայ բնակչություն ունեցող Մուշ քաղաքում ընդամենը կար մի քանի տասնյակ հրացան, ապա գյուղերում բնակչության մոտ ավելի քիչ զենք և զինամթերք կար։

Այս մնալու կամ չմնալու համար մղվող գոյամարտում, մահվան դեմ արիաբար կանգնեցին ոչ միայն Մուշի տղամարդիկ, այլև իգական սեռի ներկայացուցիչները։ Այդ կապակցությամբ Ե. Պարսամյանի հուշերում ասված է. «Ու ինչպես չը սքանչանալ ու չհիանալ մշեցի հայ կիներու վրա, որոնք ամենքն ալ լացն ու վախը թողած՝ փոքր տղոց իրրև բաժին, իրենք կը մասնակցեին այդ անհավասար գոտեմարտին, իրենց կռվողներուն ջուր, հաց, ռազմամթերք հայթայթելով, դիրքեր շինելով, անձերովը կռվողները պաշտպանելով իրենց չորս կողմը, խնդում գեմք ցուցնելով հերոսներուն։

Ինան աղջիկ, ապրեցան տանջանքը և մեռան իբրև հերոս տղամարդ»[1]։

Թուրքական զորքերի դեմ սկսված պաշտպանական մաքառումների պահերին Մուշի բնակիչները միաժամանակ իրենց աչքերը հառել էին դեպի Սասուն, որի լեռնականներից օգնություն էին սպասում։ Սակայն դաշնակցական ղեկավարներն այդ մասին մտածել անգամ չէին ցանկանում։ Անմատչելի լեռներում պատսպարված, նրանք սպասում էին ռուսական բանակի գալստյան։

Մուշի հերոսական այս կռվի ընթացքում Հաջի Հակոբ Կոտոյանը երեք անգամ վիրավորվեց, սակայն չհեռացավ դիրքերից։ Պաշտպանները շատ լավ էին հասկանում, որ հասել են իրենց կյանքի վերջին օրերը, սակայն կռվում էին արիաբար։ Գտնվեցին մարդիկ, որոնք թշնամու ձեռքը չընկնելու համար թույն ընդունեցին, այսպես, «Կնհոյենց Գաբրիելն ու Խոշկա Կարագը, իրենց

---

1 Ծղիշե Պարսամյանի նշվ. աշխ., էջ 55—56։

քնտանիքին բոլորին իրենց ձեռքով թույն կուտան, ասենց կհետևեն ժողովրդեն շատերը»[1]։

Մուշի ինքնապաշտպանության ղեկավար Կոտոյի Հաճին հանդուգն և քաջ հին հայդուկ էր։ Նա ակտիվորեն մասնակցել էր 1893—1894 թթ. դեպքերին, որի պատճառով ձերբակալվել ու ուղարկվել էր Աքեայի բանտը։ Նա մասնակից էր 1901 թ. Առաքելոց վանքի կռիվներին, իսկ 1904 թ. իր եղբոր հետ Սասունում կռվում էր կառավարական զորքերի և քրդական ուժերի դեմ։ Այս կռիվներում սպանվում է նրա եղբայրը։ Կռիվներից մեկի ժամանակ գնդակը տարել էր Կոտոյի Հաճիի ցուցամատի մի մասը։ 1904 թ. Սասունի ինքնապաշտպանությունից հետո, երբ նա Պարսկաստանում էր, բժիշկը ցանկանում է նրա մատը թմրեցնել և ապա վիրահատել։ Հաճին ամուր նստում է աթոռի վրա, գրպանից հանում է մի կարմիր թաշկինակ «և քանի մը անգամ ծալելով բերանը կոխեց ու ձեռքը երկնցուց զարմացած բժիշկին. «իշտե գործիդ սկսե»... Ամբողջ գործողության ժամանակ, մեր Կոթոյի Հաճին ուֆմ իսկ չըրավ...»[2]։

Հաճիի տղան չնայած փոքր էր, սակայն մասնակցելով կռիվներին արդեն սպիներ ուներ իր մարմնի վրա, իսկ նրա կինը Ցուղոն և քույրը Փառանձեմը նույնպես անվախ կանայք էին, որոնք «քանիցս բանտ են տարված, չարչարված, բայց փաստեր չ ունելով՝ ազատ են արձակած»[3]։

Մուշ քաղաքի բնակիչների դիմադրությունը տևեց մի քանի օր։ Կռվող մարտիկների թիվը այստեղ հասնում էր 60 հոգու, որոնք ունեին մի քանի տասնյակ հրացաններ և 30 հազար փամփուշտ, որից 24 հազարը կրակվեց երկու օրում։ Վերջին օրը հայերը զգացին, որ անհնարին է դիմադրել թուրքական այդ ահռելի ուժերին և որոշեցին ժողովրդի հետ դուրս գալ քաղաքից, անցնել գետը և բարձրանալ գեպի Սասունի լեռները։ Այդպես էլ արվեց։ Սակայն, երբ բնակչությունը անցնում էր գետը, թշնամին նկատում է և սկսում է նրա վրա կենտրոնացնել կրակը։ Փախստական հազարավոր բնակիչների թուրքական զորքերը սպանում են Քոփ և Կերմավ գյուղերի մոտ, նրանց մի մասին միայն հաջողվում է ազատվել կոտորածից և բարձրանալ

---

1 Ղազիշե Պարսամյանի նշվ. աշխ., էջ 56

2 Մալխաս, Ապրումներ, Պոսթըն, 1931, էջ 274։

3 Հեղափոխականի մը հիշատակները, հատ. Դ, էջ 115։

Սասուն։ Թուրքական ջարդարարների կոզմից Մուշի ամբողջ արու բնակչությունը սպանվեց, իսկ կանանց և երեխաներին լքրին մարագները և այրեցին։ Քանդվեց և թալանվեց Մշո Առաքելոց վանքը։ Թուրքերը չխնայեցին անգամ քաղաքի գերմանական որբանոցում գտնվող 300 որբերին։ Հերոսաբար էին կռվում Մուշի պաշտպանության ղեկավարներ Հաճի Հակոբն ու Պոլեյի (Պոլեյան) Մշոն։ Հաջի Հակոբի «14 տարեկան տղան անգամ զենի ի ձեռքին քաջաբար կը կռվեր հոր կողքին և երբ հերոսի մը նման դուրս կը խոյանա դեպի թշնամին, կիյնա գնդակներու տարափին տակ»[1]։ Կոտոյի Հաջին ինքնապաշտպանության վերջում «երբ կը տեսնա որ ռազմամթերքը սպառեցավ, տունը կրակի կուտա, կինը կը դնդակահարե ու ինքն ալ, ամեհի առյուծի պես մռնչելով կիյնա յուր վերջին դնդակեն»[2]։

Չնայած Մշո դաշտի գյուղեր մի քանի օրվա ընթացքում մոխրակույտերի վերածվեցին և նրա բնակիչները զոհ գնացին թուրքական արյունարբու խուժանի սրին, սակայն եղան տեղեր, որտեղ ժողովրդի ինքնապաշտպանությունը—այլեյի համառ էր և երկար տևեց։ Առանձնապես հերոսական պաշտպանության վերածվեց ս. Կարապետ վանքը և նրա շրջակայքը։ Ավրան, Ալիջան գյուղերը և Վարդենիսի շրջանի բնակիչները որոշեցին զենքը ձեռքին մեռնել, սակայն չհանձնվել թշնամուն։ Բայց հակառակորդը դինված էր մինչև ատամները, նրա ուժերը շատ էին։ Թուրքական բանակի հրամանատարությունը, պլանի համաձայն, յուրաքանչյուր գյուղի բնակչությանը կոտորելու համար առանձին զորաբաժին էր հատկացրել, և յուրաքանչյուր հրամանատար գիտեր, թե իր ուժերը որ գյուղի վրա պետք է հարձակվեր։

Թուրքական բարբարոսները ժողովրդին ոչնչացնելու հետ միասին պայթեցնում և ոչնչացնում էին հին, դարավոր հուշարձանները, թալանում էին վանքերին և եկեղեցիներին պատկանող գույքը։ Այդ մասին նշված է Ռուսաստանի գիտությունների կայսերական ակադեմիայի 1915 թ. հոկտեմբերի 14-ին կայացած կոնֆերանսի մասնակիցների դիմումում, ուղղված Կովկասի փոխարքային, այնտեղ արձանագրված է, որ Արևմտյան Հայաստա-

---

1 Վասպուրական, Վան-Վասպուրականի ապրիլյան հերոսամարտի սասնեհինգամյակին առթիվ, 1915—1930, Վենետիկ, ս. Ղազար, 1930, էջ 133։

2 Վ. Փափազյան, Իմ հուշերը, հատ. Բ, էջ 377։

նում և հատկապես Վանի շրջանում հավերվել են բազմաթիվ հին հուշարձաններ, թալանվել են եկեղեցական գրադարանները, թանկարժեք ձեռագրերը, որոնք հարյուրավոր տարիներ պահպանվում էին վանքերում և եկեղեցիներում...»[1]

Կոնֆերանսի մասնակիցները խնդրում են փոխարքային, մարդիկ ուղարկել տեղերում, այդ փաստերը ավելի մանրամասն ուսումնասիրելու համար։

Թուրքական ուժերի հարձակմանը դիմադրեցին նաև Մուշից ոչ հեռու գտնվող Կառեն գյուղի բնակիչները, որոնք իրենց համագյուղացի, հին հայդուկ Մկրտիչի գլխավորությամբ որոշեցին անցնել ինքնապաշտպանության և դուրս չգալ հայրենի գյուղից։ Հուլիսի 12-ին առավոտյան սկսվեց Կառենի բնակիչների մարտը։ Գյուղը պաշարող ուժերին օգնում էր նաև Մուշի բերդի թնդանոթներից մեկը, որը հարվածներ էր հասցնում գյուղի պաշտպանների դիրքերին։ Սակայն արկերի պայթյունները չեն ընկճում պաշտպանական մարտի ելածներին։ Նրանք արժանի հակահարված հասցրին թշնամուն և թույլ չտվեցին մտնել գյուղ։ Կռիվը շարունակվեց ամբողջ օրը։ Պաշտպանական դիրքերում գտնվողները կռվեցին մինչև արյան վերջին կաթիլը, վերջին շունչը։ Օրհասական այս կռվի մասնակիցները անմոռուն դիմադրում էին գյուղի վրա հարձակվող զորքերին և խուժանին։ Այս գիտակցված հանդգնություն էր, որի ժամանակ բոլոր կռվողները, մինչև վերջին մարդը, ընկան հերոսաբար։ Թուրքական թնդանոթը հարված հասցրեց հատկապես գյուղի այն տներին, որտեղից ինքնապաշտպանական կռվի ելած մարտիկները հարվածում էին թշնամուն։ Տների փլատակների տակ էլ մնացին գյուղի պաշտպաններից շատերը։

Մշո գաշտի կոտորածներն արդեն սկսվել էին, երբ թուրքական ուժերը ցանկացան կոտորել նաև Աչիջան գյուղի բնակիչներին։ Նախ նրանք պահանջեցին 20—30 ձի և յուրաքանչյուրի հետ մի տղամարդ։ Գյուղացիները կատարեցին այդ պահանջը։ Թուրքական ուժերը տղամարդկանց տարան գյուղից ոչ հեռու և սպանեցին։ Հրաշքով միայն մեկին հաջողվեց փախչել գյուղ և հայտնել բնակիչներին կատարված այդ ահավոր փաստի մասին։ Դեպքից քիչ անց գյուղ է մտնում թուրքական մի ուրիշ ջոկատ և պահանջում է իրենց հանձնել մնացած տղամարդկանց։ Այս պա-

---

1 ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց 3, գ. 1591, թ. 2։

հանաչը չի կատարվում։ Գյուղացիները որոշում են դիմադրել և շրջապատելով խումբը, զինաթափ են անում, վերցնում են զենքերն ու փամփուշտները և պատրաստվում դիմադրության։ Չորս օր է տևել Ալիջան գյուղի բնակիչների հերոսամարտը[1], որի ընթացքում բնակիչները ուժեղ հարվածներ են հասցնում իրենց գյուղը շրջապատող թշնամուն։ Կռվին մասնակցում էին նաև կանայք։ Կռվել, անընդհատ կռվել և ապա մեռնել մարտում, այս է եղել այդ գյուղի ինքնապաշտպանության ելած մարտիկների նշանարանը։ Երեք օրից հետո քրդական ուժերը գյուղը չկարողանալով գրավել, թողեցին և հեռացան։ Մուշից մի նոր ջոկատ է ուղարկվում բնակիչների դիմադրությունը կոտրելու և նրանց ոչնչացնելու համար։ Չորս օր հերոսաբար դիմադրելուց հետո ալիջանցիները որոշում են թողնել գյուղը և հեռանալ Քանի լեռները։

Թուրքական ուժերին և շրջակա բաշիբոզուկներին ուժեղ դիմադրեցին նաև Ավրան գյուղի բնակիչները։ Կռիվը այնքան դաժան ու ծանր է եղել, որ դիմադրող մարտիկներից ոչ մեկը կենդանի չի մնացել։ Ինքնապաշտպանության մասին եղած մանրամասնությունները հնարավոր չէ շարադրել, քանի որ նահատակված մարտիկները այդ իրենց հետ տարան գերեզման։

Ավրանցիների վերջին ապաստանը գյուղի եկեղեցին էր, որտեղ էլ նրանք ոնկան մինչև վերջին մարդը։ Ավրանը դիմադրել է 12 օր։ Թշնամուն հարկ է եղել գյուղը գրավել տուն առ տուն[2]։

Ջարդարարներին ուժեղ դիմադրեց նաև Ջուխուրի շրջանի Վարդենիս գյուղը։ Ինքնապաշտպանության ղեկավարները որոշեցին ժողովրդին տանել գյուղի մոտ գտնվող Եղեգնուտը (Շամբ)։ Շուտով գյուղի բնակիչները իրենց պարենով տեղավորվեցին լճի կղզիների վրա, ուր հավաքվեցին նաև Արտկոնք, Ղարս և այլ գյուղերի բնակիչները։ Թուրքական և քրդական ուժերը մի քանի անգամ ցանկացան մոտենալ Շամբին, սակայն հանդիպելով պաշտպանների ուժեղ կրակին, զոհեր տալով հեռացան։ Ինքնապաշտպանությունը տևեց 15 օր։ Շամբի պաշտպանները անընդհատ հարվածներ էին հասցնում թշնամուն։ Վերջապես հասնում են ռուսական զորքն ու հայ կամավորական ջոկատները և այստեղ կուտակված ժողովուրդը հնարավորություն է ունենում շարժվել դեպի Ախլաթ։ Այսպիսով ինքնապաշտպանությունը հնա-

---

1 Տե՛ս Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 917։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 924։

բավորություն տվեց Վարդենիսի շրջանից փրկել վեց հազար հոգի, որոնք և բռնեցին Արարատյան դաշտի ճանապարհը։

Հայտնի է, որ ս. Կարապետ վանքը պատերազմը սկսվելուց հետո վերածվել էր թուրքական զինվորների զորանոցի։ Երբ սկսվեց 1915 թ. կոտորածը, վանքի շրջակա Բաղլու, Զիարեթ, Սորտար և այլ գյուղերի զինված տղամարդիկ բարձրանում են լեռները և անտառները։ Գյուղերում մնացին կանայք, ծերունիները և երեխաները, որոնք երբ տեսան, որ թուրքերը ոչ ոքի չեն խնայում, իրենք էլ թողեցին գյուղը և հեռացան դեպի անտառները։ Նրանց մի մասը փրկվեց, իսկ մի մասն ընկավ թշնամու ձեռքը և սպանվեց։ Բաղլու գյուղի զինված ուժերը բարձրացան Սերկի լեռը։ Մեղտիի, Սորտարի և Զիարեթի բնակիչները թողեցին գյուղերը և բարձրացան ս. Կարապետ լեռն ու անտառը, որտեղ կուտակվեցին 15—20 հազար մարդ՝ կին, ծերունիներ և երեխաներ։ Կռվող մարտիկներն այստեղ ունեին ընդամենը 100 հրացան, այդքան էլ ատրճանակ և որսի հրացան[1]։ Քանա անմատչելի լեռան վրա հավաքվեցին Մշո դաշտից 20 հազար հոգի իրենց ընտանիքներով և անասուններով[2]։

Սերվեթին հաջողվեց համառ ջանքերի միջոցով ընկճել Մշո պաշտպաններին, որից հետո 2500 հոգի հայ կանայք և երեխաներ տեղափոխեց Սողգոմ գյուղը և կենդանի-կենդանի այրեց, մնացածներին տարավ այլ տեղեր ու սպանեց։ Այսպիսով, մինչև ռուսական բանակի Մուշ հասնելը, քաղաքում մնացին 25 արհեստավորական ընտանիքներ։ Մշո գաշտի և քաղաքի 180 հազար հայ բնակիչներից ազատվեցին միայն 20 հազարը, իսկ մնացածները ղոհ գնացին թուրքական ջարդարարներին։

Հայ ազգային-ազատագրական շարժման ամենակարևոր կենտրոններից մեկը աննկուն ոգի և հարատևելու կամք ունեցող Սասունը, որի գլխով շատ մահաբեր խորշակներ էին անցել, Մուշի և նրա շրջակա գյուղերի մեծ մասի անկումից հետո, նորից դարձավ կատաղի կռիվների բեմահարթակ։ Դարերի ըմբոստության ոգին նորից սավառնում էր Հավատորիկի, Միրինկատարի, Կուբտրկի, Դլավերի, Անդոքի և այլ լեռների վրա, որտեղից Սասունի քաջերը սկսեցին իրենց նոր հերոսամարտերը։ Լեռնականները կռվելով թուրքական ու քրդական զինված ուժերի դեմ, միա-

---

1 Տե՛ս Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 930։

2 Տե՛ս Եղիշե Պարսամյանի նշվ. աշխ., էջ 62։

ժամանակ պաշտպանում էին գավառի անզեն բնակչությանը։ Սկսած 1914 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներից Սասունը ապրում էր ինքնամփոփ կյանքով։ Այդ վիճակը շարունակվեց մինչև 1915 թ. ապրիլ ամիսը, երբ սկսեց Սասունի լեռներից կամաց-կամաց անհետանալ ձյան հաստ շերտը։ Զմեռը լեռնականների համար «հանգիստ» ապրելու վիճակ էր ստեղծել։ Սակայն նրանք ձեռքերը ծալած չէին նստել, այլ զգալով գարնան հետ եկող վտանգը, նախապատրաստվում էին ապագա ինքնապաշտպանական կռիվներին։ Զմռան ամիսներին լեռնականները վառոդ էին պատրաստում, կարգի էին բերում եղած զենքերը։ 1915 թ. սկզբներին թուրքական իշխանությունները պահանջեցին Սասունի մի շարք գյուղերի բնակիչներից հանձնել զենքերը։ Սասունցիները պատասխանեցին, որ զենքեր չունեն։ Իմանալով կառավարության այդ պահանջի մասին, զինված երիտասարդները սկսեցին բարձրանալ Տալվորիկի ուղղությամբ գտնվող Խիյանք, Իշխնձոր, Արտխոնք և Սեփ գյուղերը։ Օգտվելով այս հանգամանքից, թուրքական ուժերը մտնում են երիտասարդներից դատարկված այդ գյուղերը և 3000 ծերերի, կանանց, պատանիների տանում են Խարբերդից դեպի Բալու և ճանապարհին սպանում։ Այս զարհուրելի կոտորածից ազատվեցին միայն երեք հոգի, որոնք երկար ճանապարհ կտրելով հասան Տալվորիկ և այնտեղ գտնվող սասունցիներին պատմեցին կատարված այդ ողբերգության մասին։ Կառավարությունը անժամանակ էր համարում Սասունի վրա արշավելը։ Մշո կառավարիչը Վարդան վարդապետին և թուրքական մի քանի պաշտոնյաների ուղարկում է Սասուն-Շատախ Տափրկ, ապա Շենիկ գյուղերը։ Նրանք Սասունի ավագանուն ասում են. կառավարությունը ձեզանից զինվոր չի պահանջում, սակայն դուք պարտավոր եք թուրքական բանակին դրամ, շոռ, հաց, յուղ և ոչխար տալ։ Այս պատգամավորությունը միաժամանակ պահանջում է սասունցիներից հանձնել ունեցած զենքերը, լեռներում ապաստանած ռուս կազակներին և Ռուսաստանից եկած մարդկանց։ Սասունցիները պատասխանում են, որ նրանց վերջին պահանջը չի համապատասխանում իրականությանը, քանի որ այդպիսի մարդիկ չկան Սասնո լեռներում, իսկ ինչ վերաբերում է զենքերը հանձնելուն, ապա նրանք ունեն միայն շախմախլի հրացաններ, որով հեռացնում են իրենց արտերը տորող արջերին, և վերջապես ինչու՞ կառավարությունը զենքեր

հանձնելու պահանջ չի ներկայացնում Սասունի շրջակայքում գտնվող մինչև ատամները զինված քրդական բեկերին։

Այդ ժամանակ կառավարությունը առաջարկեց քրդական վերնախավին՝ կամ Սասունը մաքրել հայ ազգաբնակչությունից կամ մեկնել ռազմաճակատ մասնակցելու պատերազմին։ Քրդական վերնախավը ընդունում է առաջին առաջարկը, որից հետո նրանց զինված ուժերը օղակեցին Սասունը։ Կառավարությունը կասկածանքով էր վերաբերվում Դիարբեքիրի քրդական աշիրեթապետներին։ Ուստի, զինեց այնտեղ եղող քրդերին, որոնք պետք է հանդես գային միլիս (ոստիկան) անվան տակ և չենթարկվեին աշիրեթապետներին։

Լեռնական սասունցիների վիճակը շատ ծանր էր։ Տեղացիները մոտ 20 հազար հոգի էին, իսկ շրջակայքից հավաքվել էին 30 հազար ծերեր, երեխաներ, կանայք, որոնց կերակրելը անչափ գժվարին գործ էր։ Բայց սասունցիները չընկճվեցին և անցան ինքնապաշտպանության։ Նրանք այլ ելք չունեին, կամ պետք է հանձնվեին և ոչնչանային, կամ թե չէ անցնեին ինքնապաշտպանության։ Լեռնականները որոշեցին գործել— ավելի լավ է կռվում պատվով ընկնել, քան թե անպատիվ ապրելու կործանվել— նշանաբանով։ Սասունցիները 1915 թ. գարնանը ունեին 3000 հրացան և մի քանի հազար էլ անկանոն զենքեր[1]։

1915 թ. փետրվարի 4-ից մինչև հուլիսի 27-ը Սասունում մղված կռիվների մասին հավաստի և մանրամասն տեղեկություններ է պարունակում 1959 թ. Բեյրութում հրատարակված բժիշկ Գարեգին Երիցյանի «Լեռնաշխարհի գոյամարտը» գիրքը։ Հեղինակը Սասունի Շենիկ գյուղացի է և այդ ժամանակաշրջանի վիճակը բնութագրում է այսպես. «Արյունի ծովուն մեջ, լեռնաշխարհը ուժանակային կղզի մըն է և կուրծք կու տա շրջս կողմեն եկած դժոխային կոհակներուն, որ կոռնան կատաղությամբ իր կողերուն վրա...»[2]։

Թուրքական և քրդական ուժերը դարնան գալու հետ միասին սկսեցին իրենց հարձակումը լեռնականների գյուղերի վրա, նպատակ ունենալով ճզմել Սասունի քաջերին, որոնք որոշել էին արյան վերջին կաթիլի գնով պաշտպանել իրենց նախահայրերի հողն ու ջուրը։ Օրհասական այդ կռվին մասնակցում էին բոլորը,

---

[1] Տե՛ս Հարազատ պատմություն Տարոնի, էջ 443։

[2] Գարեգին Երիցյան, Լեռնաշխարհի գոյամարտը, Պեյրութ, 1959, էջ 1։

նույնիսկ անգեն մարդիկ, իսկ կանայք ուտելիք էին հասցնում դիրքերը և իրենց ներկայությամբ քաջալերում կռվողներին։ Ըստ հեղինակի, ստեղծված էր կանանց գաղտնի մի կազմակերպություն, որը հրահանգել էր իր կին անդամներին գնդակահարել այն տղամարդկանց, «որոնք բարձր չեն պահեր իրենց զենքի պատիվը կամ Թշնամիի ուժին առջև վախի զգացում կունենան, կը տատամսին ու բարոյալքում առաջ կը բերեն...»[1] Լեռնականները խնայում էին փամփուշտը և կրակում էին այն պահին, երբ Թշնամին մոտենում էր պ՚աշտպանական դիրքերին, այդ ժամանակ նրանց գլխին էին Թափում գնդակների հեղեղը և ստիպում էին հարձակվողներին հեռանալ։

Սովորաբար քրդական և Թուրքական ուժերը դեպի Սասուն էին արշավում երկու ուղղությամբ, առաջինը՝ Խուլբից դեպի Տալվորիկ և Անդոք, երկրորդը՝ Հազզոյի շրջանից դեպի Բգանաց գավառը, դեպի Անդոք, Սովասար։ Այս անգամ հարձակման համար Թշնամին ընտրեց առաջին ճանապարհը, որով Սասուն Թափանցելը ավելի դյուրին էր։ Թշնամու առաջին հարձակումը սկսվեց Սասունի Ահրոնք գյուղի վրա, որի բնակիչները դիմադրեցին դեպի իրենց գյուղը արշավող քրդական ուժերին։ Այնուհետև քրդական ջոկատները շարժվեցին դեպի Սպիտակ լեռը, դեպի Տալվորիկ։

Կարճ ժամանակամիջոցում Խուլբի գյուղերի մի մասը ավարի և ջարդի ենթարկվեցին, իսկ կենդանի մնացածները կռվելով շարժվեցին դեպի Տալվորիկ՝ դեպի Անդոք լեռը, որոնք և բազում անգամ եղել էին սասունցիների պաշտպանության վայրերը։ Այս անգամ Սասունի վրա հարձակվում էին քրդական մեծաքանակ ուժեր։ 1915 Թ. ամառը սկսվեց եռամսյա կռիվների և հերոսական դիմադրության մի շրջան, որի ժամանակ Խուլբը և Խիանքի ժողովուրդը համառ դիմադրություն էր ցույց տալիս իր վրա արշավող ուժերին։ 1916 Թ., երբ արդեն ռուսական զորքերը գտնվում էին Մուշում, այս երկու շրջաններից միայն մի քանի տասնյակ հոգի ազատվելով Մուշ հասան, մնացածները կամ ընկել էին անհավասար և ահեղ կռիվներում և կամ էլ ընկել բարբարոսների ձեռքը և հոշոտվել։

Թուրքական և քրդական ուժերը հարձակման անցան այն սասունցիների դեմ, որոնք ինքնապաշտպանական դիրքեր էին

---

1 Լեռնաշխարհի գոյամարտը..., էջ 13։

գրավել Կուրտըկ լեռան և լեռնաշղթայի վրա։ Սասունի ուժերը գանվելով ավելի նպաստավոր և բարձր դագաթների վրա սկսեցին դիմադրել թշնամուն, որը չկարողանալով լեռնաշղթան գրավել, իջավ լեռան ստորոտները և ամրացավ նախկին դիրքերում։ Կուրտըկի այս կռիվները ղեկավարում էր Սասունի Փեթար գյուղացի, հայդուկային կռիվների երկար ճանապարհ անցած Մանուկը։

Քրդական ուժերը ապրիլ ամսվա առաջին տասնօրյակին արդեն գրավել էին Սպիտակ լեռը և ձգտում էին ինչ գնով էլ լինի նվաճել Տալվորիկը։ Սակայն նրա բնակիչները Մուշեղի գլխավորությամբ շշմեցուցիչ հարվածներ հասցրին թշնամուն և թույլ չտվեցին մոտենալու իրենց գյուղին։ Խիանքի շրջանի զինված ուժերի մի մասը գլխավորում էր Սաղտուն գյուղի իշխան Հովհաննեսը, մյուսը՝ Հեղին գյուղից Վահան Վարդանյանը։ Անդոք լեռան լանջերին դիրքեր էին գրավել Իշխնձորի մարտիկները Արթինի և Կրպոյի գլխավորությամբ։

Այսպիսով, Սասունը 1915 թ. ապրիլ ամսի վերջերից չորս կողմից շրջապատված էր 150 կմ շրջագծով։ Սասունի զինված ուժերը շարունակում էին մարտերը միաժամանակ հուսալով, որ ահա ուր որ է դեպի Մուշ կարշավեն ռուսական բանակի զորագնդերը և հայ կամավորականները։ Մայիս ամսին քրդական ուժերը հարձակվեցին Բսանաց շրջանի վրա, որի ժողովուրդը դիմադրություն ցույց տալով, սկսեց շարժվել դեպի Տալվորիկ և Անդոք։ Մյուս մասը ամրացավ Գոմուց վանքում, դիրքեր պատրաստեց և սկսեց դիմադրել քրդական ուժերին։ Վերջիններս հաճախակի հարձակումներով ցանկանում էին գրավել վանքը, սակայն կռվողները դիմադրում էին՝ «հերոսաբար մեռնել, սակայն չհանձնվել» նշանաբանով[1]։ Այսպիսով, Բսանաց դավառակի ժողովրդի մի մասը, որն ամրացել էր Գոմուց վանքում Ստեփան վարդապետի և իշխան Շառոյի գլխավորությամբ, թույլ չտվեցին թշնամուն առաջ շարժվել դեպի Սասունի լեռները։ Մի ամսից ավելի տևեց Գոմուց վանքի կռիվը, որից հետո պաշտպանները զգալով քրդական ուժերի առավելությունը և իրենց ռազմամթերքի պակասը, ժողովրդին շարժեցին դեպի Անդոք և Տալվորիկ։ Վանքում մնացածները շարունակեցին կռիվները։ Քրդական ուժերը կտրեցին դեպի վանքը եկող ջրի խողովակները, սա-

---

[1] Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 960—691։

կայն պաշարվածներին այդ չբնկճեց, նրանք խնամքով օգտագործում էին վանքի հորի մեջ եղած ջուրը և դիմադրում։ Գոմուց վանքի պաշտպանները իմացան, որ դեպի Տալվորիկ տանող Մազե կամուրջը փակված է, համակերպվեցին իրենց վիճակի հետ և սկսեցին ավելի ուժեղ դիմադրել։

Չգալով, որ Գոմուց վանքում կռվող ուժերը կարող են ոչնչանալ, սասունցիների մի ջոկատ մեծ ջանքերի գնով գրավում է Մազե կամուրջը։ Գոմուց վանքի ուժերը թողնելով վանքը, անցնում են դեպի Տալվորիկ, նախապատրաստվում ապագա կռիվներին։

1915 թ. ապրիլից մինչև հունիս ամիսը սասունցիները բազմաթիվ ահեղ կռիվներ մղեցին։ Ուրիշ ելք չկար, կամ պետք էր կռվել, կամ էլ ժողովրդի պարանոցը դնել ջարդարարների սրի տակ։ Սասունցին վերջին ճանապարհը ընտրողը և նրանով ընթացողը չէր, նա հաստատապես որոշել էր ապավինել իր լեռներին, իր բազկին, իր զենքին։ Ինքնապաշտպանության ամբողջ պատմությունը ցույց է տալիս, որ Սասունի ժողովրդահատվածը պատվով ու արիությամբ կատարեց իր վճիռը։ Հերոսական կռիվների մի շրջան էր այդ, մի հերոսապատում, որը ճիշտ է, չվերջացավ Սասունի հաղթանակով, սակայն այն 1915 թ. հայ ժողովրդի մղած հերոսամարտերի մեջ իր փայլուն տեղը գրավեց։

1915 թ. հուլիսի 19-ին Շենիքի մեջ գտնվող Դլավների, Լաճքանի, Կուրտրկի կռվող ուժերը, չդիմանալով թուրքական և քրդական հսկայական ուժին, ստիպված թողեցին գյուղը։ Հայ մարտիկները Պոլեյի Մճոյի, Կորյունի, Մորուք Կարապետի, Փեթարա Մանուկի, Շենիքի Ղազարի, Ջոլոյի, Աբրեի Գրդոյի, Վարդանի, Թաթոյի և սեմալցիներ՝ Հախոյի, Իսրոյի, Ղութա Ղուկասի գլխավորությամբ որոշեցին հանկարծակի հարձակվել գյուղում գտնվող թուրքական ուժերի վրա։ Այդպես էլ արեցին։ Անակնկալի եկած թուրքական ուժերը ստիպված թողեցին գյուղը և խայտառակ կերպով փախան։ Հաջորդ օրը թուրքերը վերախմբավորելով իրենց ուժերը սկսեցին նոր հարձակումը Շենիքի վրա։ Շենիքցիները ստիպված թողնում են գյուղը և կենտրոնանում Անդոք լեռան վրա[1]։

Այսպիսով, մինչև 1915 թ. հունիս ամիսը սասունցիները կռիվներ էին մղում ավելի ընդարձակ ճակատներով, սակայն հունիսի կեսերին արդեն օղակը սկսեց նեղանալ և լեռնականները կա-

[1] Տես՝ Եղիշե Պարսամյանի նշվ. աշխ., էջ 74։

բողացան իրենց ձեռքը պահել 30 կմ խորությամբ և 40 կմ լայնությամբ մի տերիտորիա, որը 1200 քառակուսի կիլոմետր տարածություն էր ընդգրկում[1]։ Ժամանակակիցների հուշերից երևում է, որ ինքնապաշտպանության ելած լեռնագավառի ուժերի դեմ կանգնած էին հազարավոր կանոնավոր զորք և բաշիբոզուկներ, իսկ սասունցիները վերջին ճակատամարտին ունեին ընդամենը 1000 մարտիկներ, սակավ ռազմապաշարով և սննդամթերքով[2]։

Վերը նշված տերիտորիան մի փոքրիկ օազիս էր, սակայն այն լեռնային անանցանելի մի վայր էր, որի գրավումը հեշտ չէր։ Լեռնականներն այդ վայրերում պահում էին իրենց ընտանիքները, ուտելու պաշարը և անասունները։ Նրանց շարքերը օր օրի վրա համալրվում էին ցածրադիր գյուղերից եկող գաղթականներով։ Սասունցին ստիպված էր օգնել ու կերակրել իրենց ընտանիքների անդամներին կորցրած այդ անբախտներին։ Հարկավոր էր ուտելու պաշար ձեռք բերել։ Եվ լեռնականները սկսեցին հարձակումները թշնամու վրա։ Լաճքանի ճակատում և ապա Անդոքի ձորերում նրանք շեշտակի հարված հասցրին քրդական ուժերին, որոնք ստիպված 25 կիլոմետր նահանջեցին։ Այս կռիվներից հետո սասունցիների ձեռքն ընկավ հազարավոր սլիտարներ։ Եվ այսպես, Սասունը մի քանի ամիս անառիկ էր։ Քրդական աշիրեթապետները և խուժանը անընդհատ զեկուցում էին թուրքական իշխանություններին, որ միայն իրենց ուժերով հնարավոր չէ ընկճել Սասունը, և նրանք սպասում էին թուրքական բանակի նոր ուժերին։ Եվ այդ օրը եկավ։ Շուտով լեռնականները լսեցին թնդանոթների որոտները։ Սասունցիները ցնծության մեջ էին։ Նրանք կարծում էին, թե ռուսական բանակը արդեն հասել է Մուշ և հաշված օրեր են մնում իրենց ազատագրության համար։ Սակայն շատ չանցած նրանք իմացան, ու թուրքական զինված ուժերը թնդանոթների օգնությամբ իրենց հաշիվներն են մաքրում Տարոնի անզեն բնակչության հետ։ Մուշից Սասուն եկած հայ փախստականները Սասունի պաշտպաններին հաղորդեցին Մշո ինքնապաշտպանության ծանր և տխուր վախճանի մասին։ Այսպես թուրքական ուժերը Մուշի և նրա դաշտի բնակիչների հետ իրենց հաշիվները մաքրելուց հետո, բարձրացան դեպի Մերին-կատար, Կուրտիկ և Առաքելոց վանքի ձորերը։ Նրանք միանա-

---

1 Տե՛ս Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 966։

2 Տե՛ս Եղիշե Պարոնյանի նշվ. աշխ., էջ 77։

լով քրդական ուժերի հետ, շարժվեցին դեպի Սասուն, նպատակադրվելով կարճ ժամանակամիջոցում ոչնչացնել սասունցիներին և այնտեղ հավաքված Մշո դաշտի հայ հատվածի բեկորներին։

1915 թ. հուլիսի 19-ին թուրքական և քրդական միացյալ ուժերը շարժվեցին դեպի Շատախի հայ գյուղերը, Գելիեգուզան, Անդոք։ Քանի դնում, այնքան սեղմվում էր պաշարման օղակը և «չորս կողմեն խուժան, հեծելազորք և հետևակազորք կը հոսին դեպի լեռնաշխարհը՝ մարելու համար ըմբոստության այդ խարույկը... Գոյամարտի ուժերը, ինչպես ու ժողովուրդը Անդոքի փեշերուն վրա հավաքված են։ Ու Անդոքը հրաբուխի վրա է, չորս կողմեն կրակի տակ առնված պիտի պայթի...»[1]

Մի ուրիշ ճակատից Հազզոյի շրջանի թուրքական և քրդական ուժերը շարժվում են դեպի Տալվորիկ։ Այսպիսով, Սասունի լեռնականների շուրջը ստեղծվեց մահվան օղակ, որը օր օրի վրա սեղմվում էր։

Մի քանի տասնյակ հազար մարդ էր կուտակված Սասունի լեռնադագաթների վրա, որոնք անհավասար գոյամարտի էին ելել մոտ 30 հազար կանոնավոր բանակի և բաշիբոզուկների դեմ։ Թշնամին սկսեց իր հարձակումը 1915 թ. հուլիսի 19-ին։ Պաշարվածները նրանց դիմադրեցին «Մեռնել կամ ազատվել կռվելով» նշանաբանով։ Այդ օրերին «Տալվորիկի և Իշխնձորի լեռներն ու անդունդները կը դղրդային համազարկերեն, մթնոլորտը լեցուն էր հայերեն և քուրդերեն երգերով. զենքերու խլացուցիչ ձայներուն կը միանար սուրերու չկահյունը, ձիերու խրխինջը, վիրավորներու ոռնոցը, կանանց սգավոր երգը։ Ցեղապետական կռիվ մըն էր, ուր կիները դոտեմարտին մեջ կը նետվեին քաջալերական խոսքերով կամ սուդի անհուն լացով։ Դիրքերը անորոշության կը մատնվեին։ Մահ-պատերազմ մըն էր բոլորի համար։ Տալվորիկ կարծես երկրաշարժե մը բռնված էր։ Լեռները կը շարժեին, ժայռերը թավալգլոր դեպի ձորերը կիջնեին թշնամի ոհմակները ճղմելու, ժողովրդական բանակը փառքի պսակով մեռնելու գինովությամբ կը սավառներ Սպիտակ լեռան կիրճերու վրա»[2]։

Այս նկարագրությունը պարզ պատկերացում է տալիս այդ

---

[1] Լեռնաշխարհի գոյամարտը..., էջ 105։

[2] Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 975։

ճակատագրական կռվի մասին, որտեղ ամեն ինչ պետք է զոհվեր հայրենի հողը և ընտանիքը պաշտպանելու համար։ Ժողովրդի մոտ սարսափ տարածելու նպատակով Շենիքի ճակատում թշնամին թնդանոթներ էր տեղադրել։ Սասունցի քաջերը առաջին օրվա կռվից հետո որոշում են, ինչ գնով էլ լինի, լռեցնել այդ թնդանոթները։ Լեռնականների մի փոքրիկ ջոկատ գիշերը շարժվում է դեպի թնդանոթները, սառը զենքերով շարքից հանում է ճանապարհին եղած թշնամու պահակախմբերը։ Ջոկատի կռվողները վերջապես հասնում են իրենց նպատակին, գրավում են երեք թնդանոթ և ապա սկսում են կրակել թուրքական ուժերի վրա։ Թշնամու շարքերում սկսվում է խուճապը։ Նա թողնում է Շենիկ գյուղը։ Լեռնականները հանում են թնդանոթների մասերը և անօգտագործելի դարձնում։

Հուլիսի 23-ից մինչև օգոստոսի 2-ը ծանր օրեր էին Սասունի պաշտպանների համար։ Թուրքական բանակը նոր թնդանոթներ է ստանում։ Օգոստոսի սկզբին թշնամին սկսում է հարձակումը Շենիկի և Սեմալի վրա։ Շուտով վիճակը դառնում է օրհասական։ Անդոք լեռան վրա հավաքվածները ստիպված թողնում են իրենց դիրքերը և ցրվում Սասունի կիրճերի մեջ։ Անօրինակ սխրագործություններ են կատարում սասունցի կանայք։ Ականատեսի վկայությամբ՝ «լեռան դագաթներուն վրա գտնված սասունցի կիներ ահագին ժայռեր վայր կգլորեին իրենց վրա հարձակում գործող զորքերու և քուրդերու վրա. որոնք՝ գլորված քարերու հետ միասին դեպի անդունդը կանհետանային»[1]։ Ջնայած կիրճերի մեջ ցրվածները կռվում էին քաջաբար, սակայն դրությունը հուսահատական էր և սասունցիների ուժերը այլևս չէին կարող պաշտպանել իրենց հայրենի լեռները, չէին կարող փակել թշնամու մուտքը դեպի Սասուն։

Այս դեպքերից հետո դաշնակցական կուսակցության պարագլուխ Ռուբեն Տեր-Մինասյանը հավաքում է դիմադրողների ղեկավարներին և նրանց ներկայությամբ հայտարարում. «Կացությունը հուսահատական է։ Ձեզ կուտամ ազատություն ընելու ինչ որ կուզեք։ Կա Կովկաս մեկնելու հավանական հաջողությունը, կա պահվելու պարագան և կա նորեն դիրքեր մտնել ու կռվել մինչև մնացած 5—10 փամփուշտք և սպանվել տեղնուտեղը։

---

[1] Հարազատ պատմություն Ցարոնո, էջ 444—445։

Ուրեմն ազատ է ամեն ոք բնարել որն որ կուզե։ Ցրվեցեք, ան որ հաճելի է ձեզ»[1]։

Ռուբեն Տեր-Մինասյանից հետո խոսում է Վարդանը (Կողբեցի Տիգրանը) ասելով. «Եթե մենք հայրենիքը և ժողովուրդը սիրողներ ենք, պետք է որ մնանք իրենց հետ և մինչև վերջին շունչներնիս մեռնինք կամ ապրինք, բայց միշտ ժողովրդի հետ, անոր ճակատագրով։ Պ. Ռուբենը պետք չէր, որ այսպես խոսեր»[2]։

Ինչ խոսք, Ռուբեն Տեր-Մինասյանը իր վարքագծով, իր այս կոչով ժողովրդին թշնամուն հանձնելու և իր անձը փրկելու կոչ էր անում։ Նրա այս վարքագծի կապակցությամբ Ե. Պարսամյանը գրում է. «Բայց Ռուբենը իբրև պատասխանատու անձնավորություն, իր որոշումը կը պարտադրե և ինքը առանձին կը զատե ղենք ունեցողները, կարգ կը շարե և քալելու հրաման կուտա Կորշիկի, Կապլորի և Կեփիի ուղղությամբ»[3]։ Նույն հեղինակը գնահատելով նրա այս վարմունքը, այնուհետև գրում է. «Եվ այսպես, Ռուբեն եղավ առաջին անգամ լեռ ժողովուրդը»[3] (ընդգծումը հեղինակինն է.— Հ. Պ.)։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եթե շարունակվեր դիմադրությունը, հնարավոր է, որ ավելի շատ մարդիկ կենդանի մնային։ Այդ տեսակետից անարդարացի է Կ. Սասունին, նա պաշտպանում է իր կուսակցության անդամին, առանց որևէ փաստ ունենալու, երբ ասում է, որ Տիգրանի (Վարդան) ասածը Ռ. Տեր-Մինասյանի մասին ճիշտ չէ. «Կողբեցի Տիգրանի խոսքը— գրում է նա,— ավելորդ ժողովրդասիրություն կը թվի մեզի, նկատի առնելով այն պայմանները և զանազան վայրերը, որոնց մեջ ցրված ու պահված պիտի ըլլար ժողովուրդը, կորսնելով իր հավաքական միությունը։ Իրականությունը կը պարտադրեր խմբակներու վերածվիլ և պարտիզանական կռիվներ մղել ուր որ կարելի ըլլար»[4]։

Իսկական հայրենասերը ժողովրդի հետ պետք է լիներ, նրա բախտին բախտակից, նրա հետ պետք է նահատակվեր։ Ռ. Տեր-Մինասյանը իր վարքագծով փաստորեն տվեց Սասունի հերոսամարտը ավարտելու հրահանգը, առանց հասկանալու, թե ինչ սոսկալի կլիներ հատկապես Մուշի դաշտից դեպի Սասուն գաղ-

---

Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 983։

2 Եղիշե Պարսամյանի նշվ. աշխ., էջ 82։

3 Նույն տեղը, էջ 83։

4 Նույն տեղը։

թածների վիճակը, որոնք ամենևին ծանոթ չէին Սասունի լեռներին։ Այսպես ավարտվեց Սասունի 1915 թ. վերջին հերոսամարտը, որից հետո զինված ջոկատների կռիվները շարունակվեցին, որի մասին, դժբախտաբար, շատ քիչ տեղեկություններ են պահպանվել։ 1916 թ. գարնանը, երբ ռուսական զորքերը արդեն գրավեցին Մուշը, Սասունից Մուշ իջան շուրջ 10000 մարդ[1]։

1915 թ. ամռանը թուրքական կառավարությունը, կեղծ խոստումներ տալով, կարողանում է հավաքել 4000 հայ կին, որոնց միջոցով մի շարք գյուղերում քաղել ու կալսել է տալիս հացահատիկը։ Այնուհետև բոլորին քշում է Արածանիի ափը և սպանում[2]։

Ինչպես տսվեց, Մուշից և այլ վայրերից Քանա լեռան վրա էին հավաքվել թվով 15—20 հազար մարդ։ 1915 թ. հուլիսի երկրորդ կեսին ռուսական զորքերի մի ջոկատ հասնում է Մկրագոմ գյուղը։ Վարդենիսի շրջանի ժողովուրդը, որը ինքնապաշտպանական կռիվներ էր մղում Շամրում, թողնում է այն և Ախլաթում միանում կամավորական գնդերին։ Վահան Փափազյանը և նրա համախոհները, որոնք տնօրինում էին Քանա լեռան վրա հավաքվածների ճակատագիրը, չկարմակերպեցին ժողովրդի անցումը դեպի ռուսական բանակը։ Եթե այդ արվեր, ժողովուրդը կփրկվեր կոտորածից։ Եվ երբ ռուսական զորքը նահանջեց, Քանա սարի վրա հավաքվածները մնացին բախտի քմահաճույքին։

Թշնամին ամեն ինչ անում էր կենդանի մնացած սասունցիներին և Սասունում ապաստանած Մուշի բնակիչներին ոսվի մատնելու ուղղությամբ։ Չնայած դրան, նրանք 1915 թ. ամռան դեպքերից հետո էլ շատ դժվարությունների գնով պահպանում էին իրենց գոյությունը։ Սակայն շուտով սկսված սովն ու հիվանդությունները հնձում են հավաքվածների շարքերը։ Կառավարությունը լեռնականներին ոչնչացնելու նպատակով դիմեց խորամանկ մի միջոցի. մարդիկ ուղարկեց նրանց մոտ, խոստացավ լավ հացաստ և ուտելիք, ներել, եթե ցած իջնեն լեռներից։ Ժողովրդի մի մասը հավատալով կառավարությանը, իջավ լեռներից։ Սակայն գտնվեցին մարդիկ, որոնք չհավատացին Թուրքական իշխանավորների խոստումներին և ասացին. «Մի՛ երթաք, եղբա՛յրներ, կա-

---

1 Տե՛ս Վ. Ս. Պետրոյան, *Սասունի թարթառը*, էջ

2 Տես՝ Եղիշե Պարսամյանի նշվ. աշխ., էջ 118։

մովին մի՛ երթաք սպանդանոց. այս բոլոր խոսքերը, խոստումները, օժանդակությունները, անոր համար են, որ ձեզ ձեր սաքով դանակի բերան տանին։ Մի՛ երթաք...»[1] Գտնվեցին շատերը, որոնք հաստատապես որոշեցին. «Մեր լեռներուն մեջ անոթի ու ծարավ մեռնիլ ավելի լավ է, քան թե երթալ թշնամիի ոտքը և նախատինքի և անարգանքի մեջ մեռնիլ։ Այնտեղ մահը բարձր ու վսեմ է, որքան բարձր ու վսեմ են մեր լեռները։ Այստեղ մահը անկեղծ է և մաքուր, որքան մաքուր են մեր լեռներու օդն ու ձյունը»[2]։ Եվ այսպես էլ արեցին։ Նրանք դժվարությունների գնով ապրեցին մինչև այն պահը, երբ ռուսական զորքերը և հայ կամավորները գրավեցին Մուշը։

Ժողովրդի մեծ մասը չհավատաց կառավարության հորդորներին։ Սկսեցին մանր խմբերի կուվները՝ օղակից դուրս գալու և հարատևելու համար։ Իսկ նրանք, ովքեր հավատացին թուրքական պաշտոնյաներին և իջան Մուշ՝ ոչնչացվեցին։

1915 թ. աշնանը ռուսական զորքերը Նորից հարձակման անցան և գրավեցին Վանը։ Դրանից հետո նրանք շարժվեցին դեպի Մուշ, սակայն այնտեղ արդեն հայություն չկար։ Ռուսական զորքերը դեպի Տարոն էին շարժվում երկու ուղղությամբ՝ Ախլաթից դեպի Բիթլիս և Մանազկերտից դեպի Խնուս և Մուշ։ Ռուսական զորքերը 1916 թ. հունվարի 12-ին հայկական կամավորական ուժերի հետ միասին մտան Խնուս, իսկ 1916 թ. փետրվարի 5-ին՝ Մուշ (Եղիշե Պարսամյանը ռուսական բանակի մուտքը Մուշ դնում է փետրվարի 3-ին)։ Թուրքերը, քաղաքը թողնելու պահին, 300—400 հայերի ստիպում են բեռներ շալակել գնալ իրենց հետ, ճանապարհին Բոկլանա և Խուլբա կետուկներ կոչված տեղում սպանում։ Թուրքական ջարդարարների սրից ազատվելով Եղիշե Պարսամյանը անցավ Արևմտյան Հայաստանի գրված վայրերով և հասավ Էջմիածին։ Ամենայն հայոց կաթողիկոսին նա ներկայացնում է գրավոր տեղեկագիր կատարված ահավոր դեպքերի մասին։ Էջմիածնում կարդալով նրա կողմից գրված այդ փաստաթուղթը, մի պահ կարծում են, թե նա խենթացած է և հավատ չեն ընծայում ասածներին։ Մի քանի օր անց Ե. Պարսամյանին նորից կանչում են և ասում՝ նախկին փաստաթուղթը կորել է, անհրաժեշտ է նորը պատրաստել։ Երբ քահանան գրում

---

[1] Լևոն աշխարհի գոյամարտը..., էջ 241։

[2] Նույն տեղը, էջ 252։

է նոր փաստաթուղթը, այն համեմատում են նախկինի հետ, համոզվում, որ խեղված չէ և ընդունում են դեկուցագիրը[1]։

1916 թ. փետրվարի սկզբներին ռուսական զորքերը և նրանց հետ հայ կամավորական ջոկատներն արդեն Մուշում էին։ Փետրվարի 12-ին հայկական կամավորական ջոկատները շարժվեցին դեպի Սասուն, սակայն ձյան շերտը այնքան հաստ էր, որ նետ վերադարձան։ Մուշում գտնվող սասունցիները նրանց օգնելու նպատակով անցնում են Սասուն և իրենց հետ Մուշ են բերում կոտորածներից ազատված լեռնականների բեկորներին։ Մուշի գրավումից հետո ռուսական զորքերը և հայ կամավորները գրավեցին Բաղեշը (Բիթլիս)։ 1916 թ. հունիսին Մուշում կատարված հաշիվները պարզեցին, որ Սասունից ազատված է 2400, Խութ-Բռնաշենից և Մոտկանից՝ 11 հազար մարդ և Մշո դաշտից, Տիգրանակերտից՝ 400—500 հոգի[2]։ Եղեռնից ազատված այս բեկորները ռուսական զորքերի հաղթանակից հետո լի էին վճռականությամբ վերակենդանացնելու իրենց հայրենի երկիրը, սակայն ավա՜ղ...

Ռուսական զորքերի հաղթական արշավից հետո սկսվեց Կովկաս գաղթած վանեցիների, Բասենի և Ալաշկերտի, Բուլանըխ-Մանազկերտի բնակիչների վերադարձը հայրենի վայրերը։ Հայ ժողովրդի այս բեկորները հավաքվում էին իրենց հայրենիքում ապրելու և հարատևելու սուրբ ուխտով։ Սակայն այս անգամ քնած չէր ցարական իշխանությունը, որը սկսել էր Ալաշկերտի դաշտը բնակեցնել կազակներով։ Ռուսական զորքի կողքին կային հայկական կամավորական ջոկատներ, որոնք երկու տարի շարունակ կռվել էին ռուսական բանակի շարքերում թուրքերի դեմ։ 1916 թ. նրանք այլևս պետք չէին ցարիզմին և այդ ջոկատները լիկվիդացվեցին։ Այս դեպքից հետո հիասթափությունը ընդհանուր էր։ Կամավորներից շատերի կրծքին փայլում էին ռուսական ջքանշանները։ Միայն Անդրանիկի խմբից այդ տարիներին պարգևատրվեցին 350 կամավորներ։ Զորավարը շատ էր վշտացած իր վրա եղած ամբաստանություններից և ցարիզմի վարած քաղաքականությունից։ Նա պարգևատրված զինվորներին հայտարարեց. «Թող այս քաջության խաչերը ձեր կուրծքերը մնան իբր (տոգիվման) փաստ ռուս ժողովրդին և զինվորականներուն, որ

---

1 Տես՝ Եղիշե Պարսամյանի նշվ. աշխ., էջ 157։

2 Տե՛ս Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 1041։

դուք ծառայած եք հավատարիմ կերպով և տարած եք արժանաբ վայել հազթանակներ, արժանանալով Կեորկիևսկի (սբ. Գևորգի) քաջության խաչերուն»[1]։

Ձենք կարող չնշել, որ կամավորական ջոկատներում ընդգրկվածներից շատերը անվեհեր և խիզախ մարդիկ էին և կռիվների ժամանակ անահ մխրճվում էին թշնամու շարքերի մեջ, անձնուրացորեն անցնում նրա թիկունքը, ուսումնասիրում թուրքական զորքերի դասավորությունը և շատ դեպքերում վերադառնում էին «լեզուներով»։ Նրանցից շատերը, զոհաբերելով իրենց կյանքը հայ գատի խորանին, ընկան կռվում և մնացին անհայտ ու անդերեզման։

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կամավորների մեծ մասը այն հույսն ուներ, որ հազթանակի դեպքում կստեղծվի կամ անկախ Հայաստան և կամ էլ Ռուսաստանի հովանավորության տակ ինքնավար հայկական նահանգ։ Այդ հանգամանքը դեպի կամավորական խմբերն էին ձգում հազարավոր մարդկանց, որոնց մեծ մասը քաղաքականությունից հեռու, անգրագետ կամ հազիվ գրագետ էին։ Հավատալով վերը նշվածին, նրանք հազարավոր կիլոմետրեր ճանապարհ էին անցնում, մի մասը նավով, մյուսը՝ երկաթուղով, իսկ մոտ տեղերից նույնիսկ ոտքով։ Նրանք շտապում էին դեպի Թիֆլիս։

Հայկական կամավորական գնդերը ցրվեցին Ռուսական բանակում պետք է ստեղծվեին հայկական հրաձգային գումարտակներ։ Օտար երկրներից և Ռուսաստանից կամավորական գնդերի մեջ մտած արևմտահայերը հրաժարվեցին մտնել կազմակերպվող այդ գումարտակների մեջ, իսկ Արևելյան Հայաստանի այն հայերը, որոնք զորակոչի ենթակա չէին, հեռացան իրենց բնակավայրերը։

1916 թ. հոկտեմբերին վերջացան բանակցությունները դաշնակից պետությունների միջև Թուրքիայի մասնատման վերաբերյալ և այն բաժանվեց մի շարք մասերի։ Հայաստանից գրաված վայրերը ՝անցան Ռուսաստանին,՞ իսկ նրա հարավային մասը Կիլիկիայի հետ միասին՝ Ֆրանսիային։ Սկսվեց Պողոս Նուբար փաշայի գլխավորած հայ պատվիրակության բանակցությունները ֆրանսիական և անգլիական կառավարության ներկայա-

---

[1] Զորավար Անդրանիկի Կովկասյան ճակատի պատմական օրագրությունը, Պոսթոն, 1924, էջ 50։

ցուցիչների հետ՝ Հայաստանի ապագայի մասին։ Հաղթության հասած դաշնակիցները, ոչ մի խոսք չէին ասում Հայաստանին ինքնավարություն տալու մասին։ Զուր հույսեր և պատրանքներ։ Բախվեցին իմպերիալիստական երկու խմբերը, որի ժամանակ ղոհ գնաց մոտ երկու միլիոն հայ, էլ չենք խոսում ռուսական բանակում և դաշնակիցների ուժերի մեջ եղած հայերի և կամավորների թափած արյան մասին, որը հոսեց հանուն իմպերիալիստների ղավթողական պլանների և հայ ժողովրդի համար առանց արդյունքի։ Պողոս Նուբար փաշան պահանջում էր Կիլիկիայի ֆրանսիական գոտում մի քանի գավառներից կազմել հայկական ինքնավարություն։ Ֆրանսիացիները Կիլիկիան գրավելուց առաջ հայերին որոշ հույսեր էին տալիս։ Հայ կամավորները ֆրանսիական բանակի կազմում կռվեցին Արարայի բարձունքներում, ապա նրանց հետ անցան Կիլիկիա, որի գրավումից հետո միայն հասկացան իմպերիալիստական Ֆրանսիայի սուտ խաղերը։

Դաշնակցական կուսակցության պարագլուխները կարծում էին, որ դաշնակիցների հաղթանակից հետո կունենան աղատագրված հայրենիք։ Ս. Վրացյանը կարծում էր, որ ռուսական ցարիզմը գրավելով Հայաստանը, այն կբնակեցնի հայերով։ Այդ կապակցությամբ նա գրում է. «Պատերազմը, երևի, ամառը կը վերջանա և պատերազմից հետո կը մեկնիմ Ամերիկա, ուր հավանաբար, կը լինիմ սեպտեմբերի մեջ։ Այս անգամ կը դամ, որպեսզի ամերիկահայերին «քշեմ» դեպի ազատված հայրենիք (ընդգծումը մերն է։— Հ. Պ.)։ Ամերիկայում կը մնամ մի քանի տարի, մինչև որ բոլոր ամերիկահայերին վերադարձնենք հայրենիք»[1]։ Այնուհետև Ս. Վրացյանը, երաղելով հայկական վիլայեթներում և Կիլիկիայում ավտոնոմիա ստանալու մասին, վստահորեն գրում էր. «Հույս կա, որ թե Ռուսաստանը և թե Անգլիա ու Ֆրանսիան ուժ կտան մեր պահանջներին, և մոտիկ ապագայում կստեղծվի Ազատ Հայաստան»[2] (ընդգծումը մերն է։— Հ. Պ.)։

Բայց դաշնակցական դործիչը սխալվեց։ Դաշնակցական կուսակցությունը շնչեց ու ապրեց իմպերիալիստական պետություններից ազատ հայրենիք ստանալու հույսով և այդ մտածողությունն ու գործունեությունը տարան նրան սեփական ժողովրդի

---

1 Ս. Վրացյան, Հին թղթեր նոր պատմության համար, էջ 136։

2 Նույն տեղը։

ազատագրության և ապատ հայրենիք ունենալու հարցը իմպերիալիստների ցանկությունից և նրա ողորմածությունից կապելու կործանարար ուղին։

1916 թ. հուլիս ամսին Թուրքերը Դարդանելը պաշտպանող իրենց ուժերի մի մասը փոխադրեցին Սասունի շրջանը և նախապատրաստվեցին հարձակման։ Ըստ Մ. Բդեյանի, ընդամենը 200 հոգի ռուսական զորքեր կային այնտեղ և ամբողջ ճակատը պաշտպանում էին սասունցիները։ Թուրքերը շուտով ուժեղացրին իրենց հարձակումը։ Ռուսական փոքրաթիվ այդ ուժերը սասունցիների հետ միասին հինգ օր պաշտպանական կռիվներ մղեցին, սակայն ստիպված նահանջեցին։ Շուտով սկսվեց ընդհանուր նահանջը։ Բայց ռուսական զորքերը վերսկսեցին հարձակումը և վերագրավեցին Մուշի դաշտը։ Ժողովրդի մի մասը՝ 12 հազար հոգի, տեղափոխվեց Խնուս, մնացածները Վան-Իգդիրով անցան Արարատյան դաշտ և Շիրակ։

1916 թ. Մուշ են հասնում Գյուտ եպիսկոպոսը և Բահաթրյանը, որոնք բաց են անում Մշո ս. Կարապետ վանքի երեք թաքցրած պահեստները, հանում են վանքի գույքը, որի հետ ղգալի թվով մագաղաթյա ձեռագրեր, և տեղափոխում Էջմիածնի մատենադարանը։

Ռուսական զորքերի կողմից Տարոնի վերջնական գրավումից հետո տեղի հայության փրկված մասից մի հատված սկսեց ապրել իր հայրենիքում և շենացնել ավերված երկիրը։ Այդ ժամանակ միայն Խնուսի շրջանում կային 25 հազար, իսկ Բուլանըխում-Մանազկերտում՝ 15—20 հազար հայեր։

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո Կերենսկու ստորագրությամբ հրատարակվեց մի դեկրետ, որով Թուրքահայաստանը համարվեց Ռուսական երկրի նահանգներից մեկը։ Նոր կազմակերպված այս նահանգը բաժանված էր Տարոնի, Վասպուրականի, Էրզրումի և Տրապիզոնի վարչական ավելի փոքր միավորների։ Սկսեցին կազմակերպվել տեղական հայկական բնակչությունից զինվորական միավորումներ։ Այդ ժամանակ Խնուսում ստեղծվեց հայկական մի գունդ՝ ռասունցի Մուշեղի գլխավորությամբ։

Սակայն շուտով պայթեց ամբողջ հողագունդը ցնցող Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը, որը նոր դարագլուխ բաց արեց մարդկային հասարակության պատմության մեջ։ 1917 թ. դեկտեմբերին Վ. Ի. Լենինի ստորագրությամբ հրապարակ եկավ

«Թուրքահայաստանի մասին» հայտնի դեկրետը, որով պաշտպանվում էր Թուրքահայաստանի ազատ ինքնորոշման իրավունքը։ Շատ չանցած ռուսական զորքերը թողեցին Արևմտյան Հայաստանի դրավված տերիտորիաները և հեռացան։ Հսկայական այդ տերիտորիաները հարկավոր էր պաշտպանել և չհանձնել թուրքերին։ Սակայն հայկական ուժերը այնտեղ շատ վտիտ էին և մենակ չէին կարող առանց ռուսական ուժերի պաշտպանել այն։ 1917 թ. դեկտեմբերին հրավիրվեց թուրքահայերի համագումարը, որը որոշեց Արևմտյան Հայաստանը պաշտպանելու համար հավաքել մոտ 20000 զինվոր Անդրանիկի գլխավորությամբ։

Վանում այդ ամիսներին կազմակերպվեց մի գունդ բուլղարացի Գրիգորի, գնդապետ Տ. Բաղդասարյանի և Լևոն Շաղոյանի գլխավորությամբ։ Խնուս-Մուշում կար սասունցիների մի գունդ։ Մեկ ուրիշը կազմակերպվեց Խնուսում։ Այդ ուժերով, բնական է, ոչ Անդրանիկը և ոչ էլ որևէ մեկ ուրիշը կկարողանար դիմադրել թուրքական բանակին։ Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հայկական ուժերը հիմնականում կազմված էին հայ գյուղացիներից, որոնք ռազմական պատրաստականության ճանապարհ չէին անցել, իսկ թուրքական բանակը մարզված էր։ 1918 թ. փետրվարի 26-ին թուրքերը սկսեցին իրենց հարձակումը։ Շուտով Էրզրումը դրավվեց։ Մանր վիճակի մեջ ընկան Խնուսն ու Խլաթը։ Էրզրումի անկումից հետո սկսվեց Խնուսի և Խլաթի բնակչության դաղթը դեպի Բասեն, որին հաջորդեց Տարոնի բնակչության գաղթը։ Շատ չանցած, թուրքերը գրավեցին Սարիղամիշը։ Սկսվեց ժողովրդի գաղթը դեպի Արարատյան դաշտ։ Գեներալ Նազարբեկովի զորքը և հայերի փոքրիկ զորագնդերը անկարող էին պաշտպանել հսկայական այդ տարածությունները։ Եվ տասնյակ հազարավոր մարդիկ սկսեցին հեղեղի նման հոսել դեպի Արարատյան դաշտ։

Վերջացավ, այսպիսով, դարերի հերոսական պայքարը։ Սասունի խիզախ ժողովրդի մնացորդները, անգթաբար դուրս վռնդվելով իրենց հայրենիքից, տեղափոխվեցին Արևելյան Հայաստան։ Նրանք հաստատվեցին Սովետական Հայաստանում, առավելապես Թալինի շրջանում և կառուցում են իրենց նոր կյանքը։

ՑԱՆԿ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Մարքսիզմ-լենինիզմի կլասիկներ

К. Маркс и Ф. Энгельс, Соч., изд второе, т. 39.

Լենին Վ. Ի. Երկ, հատ. 17, «Հայաստան» հրատ., Երևան, 1978։

Լենին Վ. Ի. Երկ, հատ. 26, «Հայաստան» հրատ., Երևան, 1980

2. Ձեռագիր աղբյուրներ և արխիվային նյութեր

ա) Հայկական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ (ՊԿՊԱ)

Ֆոնդ 56, ց. 5, գ. 70, 5։

Ֆոնդ 56, ց. 4, գ. 152։

Ֆոնդ 57, ց. 1, գ. 458։

Ֆոնդ 57, ց. 2, գ. 1845, 2222։

Ֆոնդ 118, ց. 3, գ. 1172։

բ) Վրացական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ (ՊԿՊԱ)

Ֆոնդ 13, ց. 3, գ. 1592։

Ֆոնդ 480, ց. 1, գ. 1052, 1126, 1188, 1201, 1231, 1233, 1236, 1272, 1273։

գ) ՀՍՍՀ Մատենադարանի խորհրդային տարիներ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան)

Ձեռագիր № 4177, 4180, 5900, 8711, 9424.

Կաթողիկոսական գիրք, թղթ. 11, վավ. 245։

թղթ. 19, վավ. 193։

թղթ. 23, վավ. 32։

թղթ. 24. վավ. 16,96։

թղթ. 121 վավ. 81։

թղթ. 185, վավ. 48։

թղթ. 203, վավ 965, 998։

թղթ. 219, վավ. 130, 182։

թղթ. 228, վավ. 28։

թղթ. 234բ, վավ. 119։

թղթ. 237բ, վավ. 16։

թղթ. 237գ, վավ. 316։

թղթ. 243, վավ. 154։

Աշ. Հովհաննիսյան արխիվ, թղթ. 24420, վավ. 46։
Մ. Երիմյանի արխիվ, թղթ. 102, վավ. 545։
թղթ. 103, վավ. 2, 7, 20։
թղթ. 203, վավ. 259։
Լազարյանների արխիվ, թղթ. 105, գ. 11, վավ. 29։
Գյուտ եպիսկոպոսի արխիվ, թղթ. 3, վավ. 81, 48—87։
Կարապետ արքեպիսկոպոսի արխիվ, թղթ. 183 գ. վավ. 983, 967ա, 967բ, 967գ։
Ջանազան հեղինակների արխիվ, թղթ. 54, վավ. 13—8։

3. ՀՍՍՀ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվ

Գ. Սրվանձտյանցի ֆոնդ, վավ. № 4/5, 46/5, 40/5, 19/1։
Հ. Առաքելյանի ֆոնդ, վավ. № 165, 182, 1899, 1903։
Բ. Ազատյանի ֆոնդ, վավ. № 4/3, 48/3։

4. ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ

Գիտական մաս, գ. № 439։
Լեոյի ֆոնդ, ց. 1, գ. 131։
ց. 1, գ. 144։
ց. 1, գ. 182։

4. Գրականություն

ա) Հայերեն

Ազգապատում— Գրեց Մ. Օրմանյան, Ա հատ., Պեյրութ, 1953։
Ազգապատում— Գրեց Մ. Օրմանյան, Բ հատ., մասն Գ, Պեյրութ, 1960։
Ազգապատում— Գրեց Մ. Օրմանյան, Գ հատ., Գ գիրք, Պեյրութ, 1959։
Ա—Դ—Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներ, Երևան, 1912։
Ազգային հերոս Զոր. Անդրանիկ և իր պատերազմները, Փարիզ, 1953։
Ալիշան Ղ.— Տեղագիր հայոց մեծաց, Վենետիկ, 1356։
Աղայան Ղ.— Երկերի ժողովածու, հատ. IV, Հայպետհրատ, Երևան, 1953։
Ապստամբ Սասունը, մի էջ Սասունի նորագույն դեպքերից, նկարագրեց՝ Գլակ Տարոնացի, Ժընև, 1903։
Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, Պեյրութ, 1932։
Աճեմյան Հայկ— Հայոց հայրիկ, Նուազող վշտից, հայրենաց հոլոր։ Առաջին հատոր, կենսագրություն, Թավրիզ, 1928։
Առ ձեռն աշխարհագրութիւն, Կոստանդնուպոլիս, 1861։
Ավո— Գևորգ Չավուշ, Պեյրութ, 1972։
Առենագրութիւնք երեսփոխանական ընդհանուր ժողովոյ, Կ. Պոլիս, 1874։
Առաքելոց վանքի կռիվը, պատմեց Զոր. Անդրանիկ, գրի առավ Լ. Կ. Լեհյան, Պոսթըն, 1924։
Արամ Ռուբեն— Հայ հեղափոխականի մը հիշատակները, Բ հատոր, Լոս-Անճելես, 1952։

Արամը — Մահվան հիսնամյակի առթիվ, Լիբանան, 1969։

Արամայիս — Զարհուրելի ոճիրը, Մուշ-Սասուն, Բաքու, 1916։

Անտոնն Դ. — Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատ. երկրորդ (1901—1918), Վենետիկ, 1926։

Արզումանյան Մ. — Հայաստան 1914—1917, «Հայաստան» հրատ., Երևան, 1969։

Արմենուհի Տեր-Կարապետյան (Գևոնյան), Գյուլիզար, Փարիզ 1946։

Աղ-Տաղի քառամեայ գոյամարտը, Մարսել, 1932։

Ավագյան Էդուարդ — Անհանգիստ մարդը, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1979։

Ավչյան Հարություն — Վաթան և Սասուն, պատմավեպ, հ. առաջին, Վաղարշապատ, 1910։

Այվազյան Բագրատ — Սասունը այրվում է, դրամա հինգ գործողությամբ Թիֆլիս, 1913։

Բարախյան Ս. — Հայաստանի լեռներու ավանդությունները, Գահիրե 1931։

Բարսեղյան Բարսեղ — Հին հուշեր (907—908), հայ հեղափոխական կյանքեն, Կ. Պոլիս, 1913։

Բայբուրտյան Վ. Ա. — Թուրք-իրանական հարաբերությունները (1900—1914թթ.), ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1974։

Բուլանրիս կամ Հարք գաւառ, հաւաքեց Բենոէ, խմբագրեց և հրատարակեց Ե. Լալայան, Թիֆլիս, 1901։

Գիւտ քահանա Աղանեանց, Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ա—Բ, 1780—1834, Թիֆլիս, 1893։

Գիւտ քահանա Աղանեանց, Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ը, Թիֆլիս, 1908։

Գիւտ քահանա Աղանեանց, Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ժ—Գ, Թիֆլիս, 1908։

Գիւտ քահանա Աղանեանց, Դիւան Հայոց պատմութեան, գիրք Դ, Թիֆլիս, 1899։

Գիւտ քահանա Աղանեանց, Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ժ, Թիֆլիս, 1912։

Գոփամաճեան Սիմոն — Ամենապատիւ Մ. Մ. Մատթեոս ս. արքեպիսկոպոս Իզմիրլեան, Բարձրաշնորհ Մ. Նզիշէ ս. եպիսկոպոս Դուրեան, Կ. Պոլիս, 1911։

Գաւազանագիրք յաջորդութիւնք վանահարց ուխտիս ս. Կարապետի Տարօնոյ աշխատասիրեաց Կարապետ վրդ. Լուսարարեան միաբան ս. Կարապետի վանուց Տարօնոյ, Երուսաղեմ, 1912։

Գարեգին Օրիցյան — Լեռնաշխարհի գոյամարտը, Պեյրութ, 1959։

Գևորգյան Կարո — Ամենույն տարեցույցը, Պեյրութ, Լիբանան, 1965։

Դավթյան Սերիկ — Հայկական ասեղնագործություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1972։

Դարբինյան Արտակ — Հայ ազատագրական շարժման օրերեն (հուշեր 1890-էն 1940), Փարիզ, 1947։

Դիւան Հ. Ս. Դաշնակցութեան, հատոր առաջին, Պոսթըն, 1934։

Դիւան Հ. Ս. Դաշնակցութեան, հատոր երկրորդ, Պոսթըն, 1938։

Դաշտենց Խաչիկ— Ռանչպարների կանչը, վիպասք հայ շինականների կյանքից, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1979։

Դուբյան Գ.— Երկեր, Հայպետհրատ, Երևան, 1947։

Ցուշամատեան մեծ եղեռնի, 1915—1965, Պեյրութ, 1965։

Ջեյթելյան Սոնա— Հայ կնոջ դերը հայ հեղափոխական շարժման մեջ, Անթիլաս-Լիբանան, 1968։

Ջեյթունցի—Ջեյթունի անցյալեն և ներկայեն, Բ մասն, Փարիզ, 1903։

Զոր Անդրանիկ և իր պատերազմները, գրեց Արսեն Մարմարեան, 1920, Կ. Պոլիս։

Զորավար Անդրանիկի Կովկասյան ճակատի պատմական օրագրությունը 1914—1917, Պոսթոն, 1924։

Էվրիկյան Հ. Ս.— Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, պրակ երկրորդ, Վենետիկ —ռ. Ղազար, 1900։

Թառոյան Կ.— Ժողովրդական շարժումները Սասունում, «Հայաստան» հրատարակչություն, Երևան 1966։

Թիդիկ— Ամենայն տարեցույցը, 1922։

Թերզիպաշյան Ա.— Անդրանիկ, Փարիզ, 1924։

Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և անդրկովկասյան մյուս ժողովուրդների մասին, հատ. Բ, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Երևան, 1964։

Թուրքական աղբյուրներ, հ. Գ, էվլիա Չելեբի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967։

Թուրքական աղբյուրներ, թարգմանեց բնագրից Ա. Խ. Սաֆրաստյանի և Գ. Հ. Սանթրուչյանի, հատ. Դ, Երևան, 1972։

Թուրք սահմանադրություններ և երիտասարդ թուրք կուսակցությունները, կազմեց Տ. Զավեն, Թիֆլիս, 1908։

Ժամկոչյան Արսեն— Զորավար Անդրանիկ կը պատասխանե իր հակառակորդներուն, Հառաջարան Բ. Վարազդատի, Փարիզ, 1945։

Ժողովրդական տարեցույց, 1895, հրատարակիչ Նշան Պերպերյան, Կ. Պոլիս, 1894։

Ինճիճեան Ղ.— Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն առաջին, հ. Ա, Վենետիկ, 1806։

Լեո—Թուրքահայ հեղափոխության դաղափարաբանությունը, հատ. Բ, Փարիզ, 1935։

Լեո— Անցյալից, Թիֆլիս, 1925։

Լապտեր Լուսատու, յորինեալ ի տէր Մկրտիչ եպիսկոպոսէ Տիգրանեան, Կոստանդնուպոլիս, 1868։

Խուրշուդյան Տրդատ— Զապել Պոյաճյանի «Ծաթեր» վեպը, «Սովետական գրականություն», № 3, 1976, էջ 148—150։

Կարապետյան Ե.— Սասուն, Ազգագրական նյութեր, Երևան, Հայպետհրատ, 1962։

Կոստանդյան Է. Ա.— Գարեգին Սրվանձտյանց (կյանքը և գործունեությունը), ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1979։

Հայելի գործոց և աշխատութեանց Մկրտիչ վարդապետի Տիգրանեան, Կոստանդնուպոլիս, 1864։

Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923), պրոֆ. Հ. Ս. Կիրակոսյանի խմբ., «Հայաստան» հրատ., Երևան, 1972։

Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ 3, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1972

Հայրենասիրութիւն հայոց, խօսք Երեմիա վարդապետի վանեցւոյ Տէր Սարգսեանց եպիսկոպոսի Սոփոց աշխարհին, Կ. Պոլիս, 1872։

Հարազատ պատմութիւն Տարօնոյ, խմբագրեց Ազան Տարոնացի, հեղինակներ Սարգիս և Միսակ Բզեյան, Գահիրե, 1962։

Հովհաննիսյան Հ., Միքայել Վ.— Հայաստանի բերդերը, Վենետիկ, ս. Ղազար, 1970։

Համբարձում Երամեան— Ցուշարձան, հատոր Բ, Ազեքսանդրիա, 1929։

Համբարյան Ա. Ս.— Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1965։

Համբարյան Ա. Ս.— Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1979։

Հայաստան, ուղեգրություններ և ուսումնասիրություններ, հեղինակ Հ. Ֆ. Լինչ, թարգմանեց Լևոն Լարենց, Բ հատոր, Տաճկահայաստան, Կ. Պոլիս, 1914։

Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, գիրք 5, Երևան, 1973։

Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, գիրք 4, Երևան, 1973։

Հին օրեր. պուէտ Եաշատուր Միսաքեան և իրեն ժամանակակից իմաստասէրներ Ե. Գ. Մ., Կ. Պոլիս. 1907։

Հրանդ Գանգրունի— Հայ հեղափոխությունը օսմանյան բռնապետության դեմ (1890—1910), Պեյրութ, 1973։

Հիշատակներ Բաղեշի առաջնորդութենեն, ռազմական, ուղեգրական, տեղագրական և նամակներ, գրեց Եղիշե եպիսկ. Չիլինկիրյան, Երուսաղեմ, 1925, էջ 37—98։

Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները, թարգմանեց՝ Հ. Եաչմանյան, Պեյրութ, 1958։

Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հատ. չորրորդ, Երևան, 1972։

Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հատ. վեցերորդ, Երևան, 1961։

Հայրենի երգեր, Հայրիկ Մուրադյանի ձայնից, վերծանեց և կազմեց Ալինա Փահլևանյանը, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1980։

Ե. Կ. Ճանկյուլյան— Հիշատակներ հայկական ճգնաժամեն, մաս Գ., Կ. Պոլիս, 1913։

Ցուշարձան նուիրված ոգեկալ-դեմոկրատական՝ Հնչակեան կուսակցութեան քառասնամեակին, Փարիզ, 1930։

Տիանամեակ 1887—1997, ռոց. գեմոգրաս Հնչակեան կուսակցութեան, Փրիվիանէնս, 1938։

Տուշամատեան մեծ եղեռնի, հրատ. «Զարթոնք» օրաթերթի, Պեյրութ, 1965։

Տուշապատում Հ. Ս. Դաշնակցութեան, 1890—1950, Բոստոն, 1950։

Ղարիբջանյան Գ.— Կարլ Լիբկնեխտը և Ռոզա Լյուքսեմբուրգը հայ ժողովրդի մասին, «Հայաստան» հրատ., Երևան, 1971։

Ղազարյան Հայկ— Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967։

Մալխաս— Ապրումներ, Պոսթոն, 1931։

Մելիքեան Ե. Եղիշե-Հարք-Ենուս, Անթիլիաս-Լիբանան, 1964։

Միքայել Նալբանդյան— Երկերի լիակատար ժողովածու, հատոր երրորդ, Արմֆանի հրատարակչություն, Երևան, 1940։

Մեհրան Տամատեան (1863—1945), գրեց Պ. Ս. Տեփոեան, Գահիրէ, 1956։

Մուստաֆա Նեսիմ (նախկին քարտուղար սուլթան Համիդի), Հայ եղեռնը, (իմ վկայություններս), թարգմ. Արշակ Ս. Շալճյան, Սոֆիա, 1936։

Մուշեղ արքեպիսկոպոս— Հայկական մղձավանջը, քննական վերլուծումներ, Պոսթոն, 1916։

Մի թուրք սպայի հիշատակարանից, Թիֆլիս, տպարան «Աշխատավոր», 1917։

Նավասարդյան Վ.— Դաշնակցության քաղաքական ուղին, Գահիրե, 1925։

Ներսիսյան Մ. Գ.— Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, 1850—1870 թթ., Երևան, 1955։

Նկարագրական ուշադրություն ի հայարնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, մասն Ա, տեղագրեց Մանուել Կ. Միրախորեան, Կ. Պոլիս, 1884։

Նոր քնար, ձայնագրված և պատկերազարդ ընդարձակ երգարան, հրատ. և տպագր. «Հարիզոն» հրատարակչական թե Սաղոնիկ (Սալոնիկ), 1937։

Շահեն ի Սիպիր, գաղթական հայ (պատմական վեպ), գրեց Ս. Տեր-Մարգարենց, Կ. Պոլիս, 1911։

Շահպազեան Հակոբ—Քիւրդո—Հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911։

Շերենց Գ.— Ալթուն Դերեթ կամ մի գիշեր Բազեշի բանտում, 1895—96, Թիֆլիս, 1910։

Չամչեան Մ.— Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786։

Չարենց Եղիշե— Գիրք ճանապարհի, պոեմներ և բանաստեղծություններ, Հայպետհրատ., Երևան, 1933։

Պարոնյան Հ.— Երկերի լիակատար ժողովածու, հատ. 11։

Պարսամյան Վ. Ա.— Հայ ժողովրդի պատմություն, հատ. 3, Երևան, 1967։

Պատմութիւն Տարօնի աշխարհի, պատմագրեց Կարո Սասունի, Պեյրութ, 1956։

Պատմութիւն Հայոց Արարիչերի, կազմեց և գրաբարից Լ. Փոլատեան, Նիցեարդ, հրատ. Ամերիկայի Արարիչերի մեռութեան, 1969։

Պատմություն Ս. Գ. Հնչակյան կուսակցության, Ա հատ., Պեյրութ, 1962։

Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, 1890—1925, գրեց Մանուկ Գ. Ճիզմէճեան, Ֆրեզնո, 1930։

Պատմութիւն Եվդոկիոյ Հայոց, համադրուած Արշակ Ալպոյաճեանէ, Գահիրէ, 1952։

Պատմություն հայոց ազգի, Սանկտ Պետերբուրգ, 1863։

Պատմություն համաշխարհային պատերազմի և հայկական հարցը, պատրաստված «Թայմզ» լրագրի կողմե, թարգմանեց Վան-Միր, Կ. Պոլիս, 1919,

Պատկանյան Ռ.— Երկերի ժողովածու, հատ. առաջին, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1963։

Պերպերյան Ա.— Պատմութիւն Հայոց, Կոստանդնուպոլիս, 1871։

Պետոյան Վ. Ս.— Սասունի բարբառը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1954։

Պողոսյան Հ. Մ.— Զեյթունի պատմությունը, Երևան, 1969։

Ռամկական մրմունջներ, ժողովրդական երգեր, պարերգեր, խմբագրեց դպիր Արշակ Բրուտյան, երկրորդ տպագրություն, Ալեքսանդրապոլ, 1898։

Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Ա հատոր, Լոս Անճելես, 1952։

Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Գ. հատոր, Լոս Անճելես, 1951։

Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Դ հատոր, Լոս Անճելես, 1951։

Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հատոր Զ, Լոս Անճելես, 1951։

Դուրեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Ե հատոր, Լոս-Անճելես, 1951։

Սայաթ-Նովա— Հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու, կազմեց Մ. Ս. Հասրաթյան, Հայպետհրատ, Երևան, 1959։

Սասունի Կ., Սարերու ասլանը (Գևորգ Չավուշի կենսագրավեպը), Պեյրութ, 1966։

Սասունի Կ., Տաճկաստանը ռուսական տիրապետության տակ (1914—1918), Բոստոն, 1927։

Սիրված երգեր, երգարան առաջին, «Հայաստան» հրատ., Երևան, 1971։

Սմբատ Բյուրատ— Ինքնունվեց, արյունի միջեն, Կ. Պոլիս, 1911։

Սմբատ Բյուրատ (Տեր Ղազարենց),— Ելտրգե Սասուն, պատմական վեպ, Ա-Մ-Գ-Դ հատորներ, Կ. Պոլիս, 1910։

Սվաճյան Հ.— Հրապարակախոսություն, Հայպետհրատ, Երևան, 1960։

Սրվանձտյանց Գ.— Երկեր, հատ առաջին, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1978։

Սուրեն Բաբախեան— Հայաստանի լեռներու ավանդությունները, Գահիրե, 1931։

Վարդանյան Հ. Գ.— Արևմտահայերի ազատագրության հարցը և հայոց հասարակական քաղաքական հոսանքները XIX դ. վերջին քառորդում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967։

Վասպուրական, Վան-Վասպուրականի ապրիլյան հերոսամարտի տասնհինգ ամյակին առթիվ, 1915—1930, Վենետիկ, ո. Ղազար, 1930։

Վարսնդյան Մխիթար— Հ. Ե. Դաշնակցութեան պատմութիւն, առաջին հատոր, Պարիզ, 1932։

Վրացյան Ս.— Հին թղթեր նոր պատմության համար, Բեյրութ, 1962։

Տարոնի աշխարհ (Գեղամ Տեր-Կարապետյան), Փարիզ, 1931։

Տարոնի ժողովրդական երգեր, ձայնագրված Արմենուհի Գևոնյանի կատարումից, Երևան, 1978։

Տարոն-Տուրուբերանի վանքերը, գրեց Համազասպ Ոսկեան, Վիեննա, 1958։

Տարօնաշունչ, որբագրեց Գարեգին եպիսկ. Տրապիզոնի, տպարան «Արմենիի», Պուէնոս Այրես, 1945։

Տարօնոյ ինքնապաշտպանություն և շարժք 1914—1915, պատմեց Եղիշե քհնյ. Տեր-Պարսամեան, Ֆրեզնո, 1930։

Տէր Մկրտիչեան Երուանդ— Գանձեր Վասպուրականի, հատոր առաջին, Պոսթոն, 1966։

Տեղեկութիւնք ի Փոքր և Մեծ Հայս, Հ. Ներսեսի Մարգիսեան Մխիթարեան վարդապետի, Վենետիկ, 1864։

Տիգրան Մկունդ— Ամիտայի արձագանքներ, 1950։

Օսիպով Ա.— Մի ամիս Կ. Պոլսում, ամառվա հիշողություններ 1896 թ. հայկական սարսափներից, թարգմ. Ե. Ք. Նալբանդյան, Ալեքսանդրապոլ, 1905,

Ինիկի— Մասունի և Զեյթունի արշավանքները (հուլիս 25, 1904, արտատպված «Հայրենիք» շաբաթաթերթին, Բոստոն, 1905)։

Ծատուրյան Ալեքսանդր— Բանաստեղծություններ, երկրորդ հատոր, Մոսկվա 1898։

Ծոցիկեան Ս. Մ.— Արևմտահայ աշխարհ, Նիւ Եորք, 1947։

Բաֆֆի— Երկերի ժողովածու, չորրորդ հատոր, Հայպետհրատ, Երևան, 1956։

Բաֆֆի— Երկերի ժողովածու, իններորդ հատոր, Հայպետհրատ, Երևան, 1958։

Քալանթար Ա.— Սասուն, աշխարհագրական քարտեզով, երկրորդ տպագրություն, Թիֆլիս, 1895։

Չալխուշյան Գր.— Մտքեր, խոհեր, գեմքեր, Թիֆլիս, 1914։

Չորմիրեան Լևոն— Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմութեան, Բ հատոր, 1878—1908, Պեյրութ, 1974։

Չիլինկերյան Եղիշե— Արձագանք Բ, վերհուշեր անցյալեն և ազգային զանազան անցուդարձերու 1900—1918, Պեյրութ, 1927։

Փտուրյան օճախը կամ Օրմանյանի պատրիարքությունը, գրեց Ա. Գրիգորյան, Պոսթոն, 1908։

Փափազյան Վահան— Իմ հուշերը, հատոր առաջին, Պոսթոն, 1950։

Փափազյան Վահան— Իմ հուշերը, Բ հատոր, Պեյրութ, 1952։

Алиев Г. З. Турция в период правления младотурок (1908—1918) изд. «Наука», М., 1972.

Антология Болгарской поэзии, госиздат худ. литературы, М., 1956.

Армения, путевые очерки и этюды Х. Ф. Б Линча, перевод с английского Елизаветы Джунковской, т. II, Тифлис, 1910

Академия наук, институт восотоковедения, зарождение идеологии национально-освободительного движения (XIX—начало XX в), М., 1973.

Братская помощь пострадавшим в Турции армянам, М. 1898.

Ванский вилает — стр. описание, составитель Майевский, Тифлис, 1901

Веселовский. Ю. А., Очерки армянской литературы, истории и культуры, изд. «Айастан», Ереван, 1972.,
Всемирная история, т. III, госиздат пол. литературы. М., 1957.
Галоян Г. А., Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900—1922, изд. «Айастан», Е., 1969.
Геноцид армян в османской империи, сборник документов и материалов, под редакцией проф. М. Г. Нерсисяна. Е., 1966.
Косев Д.. Новая история Болгарии, курс лекции, М., 1952.
История Грузии, часть 1, под редакцией С. Джанашия, Тбилиси 1946.
История Болгарии т. 1, изд. АН СССР, М., 1954.
Иоаннисян А. Р., Иосиф Эмин, изд. Госунта, Ер., 1945.
Мегрелидзе Ш. В., Закавказье в русско-турецкой войне 1877—78 гг., Тбилиси, 1972.
Новичев А. Д., Турция, Краткая история, М., 1965.
Избранные произведения Болгарских революционных демократов, изд. соц. эк. литературы, М.; 1959.
Обозрение Армении в географическом, историческом и литературном отношениях, собрал и составил А. Худабашев, Санкт-Петербург, 1859.
Петросян Ю. А., Младотурецкое движение, изд., «Наука», М., 1971.
Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г., М., 1896.
Саркисян Е. К, политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв., изд. АН Арм. ССР, Е., 1972
«Русская мысль», 1895, т. 11, стр. 109 и 110.
«Кавказ», 1866, № 73, особое прибавление 18(30) сентября.
«Наблюдатель» с/п, 1895, стр. 3.

Պարբերականներ

«Ամենուն տարեցույց», 1965։
«Արարատ», 1914։
«Արարատակ», 1894, 1895։
«Արարատ», 1891, 1907, 1908, 1911, 1912, 1913։
«Հանդէս ամսօրեայ», 1906։
«Մուրճ», 1894, 1905։
«Արծուիկ Տարոնոյ», 1868։
«Մեղու Հայաստանի», 1858։
«Բազմավէպ», 1877։
«Արտակ», 1894։
«Արձագանգ», 1883, 1891, 1896։
«Մասյաց աղաւնի», 1856։
«Մշակ», 1896, 1906, 1908, 1910, 1913, 1914, 1915, 1916
«Ոստան», 1909։

«Հորիզոն», 1914։
«Հոսանք», Գահիրե, 1912։
«Կոհակ», 1909, 1912։
«Անահիտ», 1901։
«Հնչակ», 1889, 1892։
«Արաքս», 1894—95, գիրք Ա։
«Գաղափար», 1894։
«Երիտասարդ Հայաստան», 1906։
«Լումա», 1907։
«Հայուն տարեցույցը», 1913։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.— Մուշը և Սասունը հայ ազատագրական շարժման ոլորտներում (1750—1860-ական թվականներին) 5

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.— Մուշը և Սասունը Թանզիմաթի էպոխայում . 35

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.— Սասունի վարչական բաժանումը և սոցիալ-տնտեսական հարաբերությունները XIX դ. երկրորդ կեսին . . 82

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ.— Սասունի լեռնականների պայքարը թուրքական բռնակալության դեմ 1878—1894 թվականներին 132

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ.— 1895—1896 թթ. հայկական կոտորածները։ Սասունի 1904 թ. ինքնապաշտպանությունը։ 1908 թ. թուրքական հեղափոխությունը 229

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ.— Առաջին համաշխարհային պատերազմը (1914—1918 թթ.)։ Մուշի և Սասունի 1915 թ. հերոսամարտերը 293

Ցանկ օգտագործված աղբյուրների և գրականության 348

Պողոսյան Հայկազ Մանուկի
ՍԱՍՈՒՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
(1750—1918)

Погосян Айказ Манукович
ИСТОРИЯ САСУНА
(1750—1918)
(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван, 1985

Խմբագիր՝ Վ. Մ. Սահակյան
Նկարիչ՝ Ֆ. Գ. Աֆրիկյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ռ. Բ. Մարգարյան

ИБ—4079

Հանձնված է շարվածքի 17. 12. 1984 թ.։ Ստորագրված է տպագրության 16. 03. 1985 թ.։ Ֆորմատ 84×108 1/32։ Թուղթ տպագրական № 2։ Տառատեսակ՝ «Գրքի ռոմորական»։ Տպագրություն՝ բարձր։ 18,9 պայմ. տպագր. մամ., հրատ. 18,19 մամուլ։ Պատվեր՝ 3666։ ՎՖ 03150։ Տպաքանակ՝ 20000։ Գինը՝ 1 ռ. 50 կոպ.։

«Հայաստան» հրատարակչություն, Երևան-91, Երևան—9։

Издательство «Айастан» Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան Ալավերդյան 65։

Типография № 1 Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван, ул. Алавердяна, 65